ԷԴԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Երևան
ԵՊՀ հրատարակչություն
2013

Նվիրում եմ հորս՝ Գարեգին
Մինասյանի պայծառ հիշատակին

ՀՏԴ 941(479.25)
ԳՄԴ 63.3(2Հ)
Մ 710

Հրատարակության է երաշխավորել Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի գիտական խորհուրդը

Գլխավոր խմբագիր՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Հր. Ռ. Սիմոնյան

Խմբագիրներ՝	պրոֆեսոր	Պ. Հ. Հովհաննիսյան
	դոցենտ	Ռ. Լ. Ազիզբեկյան
Գրախոսներ՝	պրոֆեսոր	Հ. Մ. Աբրահամյան
	պրոֆեսոր	Վ. Հ. Վիրաբյան

Մինասյան Է. Գ.
Մ 710 Հայաստանի Երրորդ Հանրապետության պատմություն,
/ Է. Մինասյան Եր.: ԵՊՀ հրատ., 2013թ., - 624 էջ:

Մենագրությունում քննարկվում է Հայաստանում անկախ պետականության հաստատման և ամրապնդման գործընթացը, սոցիալ-տնտեսական վերափոխումների և հասարակական-քաղաքական կյանքի, արտաքին քաղաքականության երկու տասնամյակից ավելի ամբողջական պատմությունը: Արխիվային փաստերի և վիճակագրական տվյալների հիման վրա կատարված է պատմաքննական վերլուծություն:

Առաջին անգամ փորձ է արվում գիտականորեն ներկայացնել հայկական անկախ երկու հանրապետությունների՝ Հայաստանի երրորդ Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հասարակական-քաղաքական ու սոցիալ-տնտեսական ոլորտի ձեռքբերումները, բացթողումներն ու թերությունները:

Նախատեսված է Հայաստանի նորագույն պատմության, մասնավորապես, Հայաստանի Հանրապետության ու Արցախի ազատագրական պայքարի հարցերով զբաղվող մասնագետների, միջազգայնագետների, ուսանողների և ընթերցող լայն հանրության համար:

ՀՏԴ 941(479.25)
ԳՄԴ 63.3(2Հ)

ISBN 978-5-8084-1686-4

© ԵՊՀ հրատ., 2013
© Մինասյան Է., 2013

ՄԻՆԱՍՅԱՆ ԷԴԻԿ ԳԱՐԵԳԻՆԻ

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Երևանի պետական համալսարանի
պատմության ֆակուլտետի դեկան



Ծնվել է 1956 թ. ՀՀ Թալինի շրջանի Ոսկեթաս գյուղում:

1979 թ. գերազանցությամբ ավարտել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը և անմիջապես աշխատանքի անցել նույն ֆակուլտետում նախ՝ որպես դեկանի օգնական, այնուհետև՝ ԽՄԿԿ պատմության ամբիոնի դասախոս, ապա՝ դոցենտ, իսկ 1986-94թթ. ԵՊՀ արտասահմանյան քաղաքացիների ֆակուլտետի հասարակագիտական առարկաների ամբիոնի վարիչ: 1994թ.-ից տեղափոխվել է ԵՊՀ հայոց պատմության ամբիոն, 1985թ. պաշտպանել է թեկնածուական, 2003թ. դոկտորական ատենախոսություններ, իսկ 2005թ.-ին ստացել է պրոֆեսորի կոչում: Նույն ֆակուլտետում շուրջ 10 տարի աշխատել է դեկանի տեղակալ, իսկ 2009թ.-ին ընտրվել է դեկան:

Է. Մինասյանը երկար տարիներ ԵՊՀ իրավաբանական, միջազգային հարաբերությունների, տնտեսագիտական և այլ ֆակուլտետներում դասավանդել է «Հայոց պատմություն» և «Հայ դիվանագիտության պատմություն» առարկաները, իսկ պատմության ֆակուլտետում վարում է հայոց նորագույն պատմության ընդհանուր և հայ դիվանագիտության ու Հայաստանի երրորդ Հանրապետության պատմության մասնագիտական դասընթացները:

Է. Մինասյանը դպրոցական և բուհական մի շարք դասագրքերի, ուսումնական ձեռնարկների, ինչպես նաև 4 մենագրությունների ու 100-ից ավելի գիտական հոդվածների հեղինակ է, որոնց մեծ մասը նվիրված է Հայաստանի նորագույն պատմության հիմնախնդիրների լուսաբանմանը, հատկապես Հայաստանի երրորդ Հանրապետության ներքին և արտաքին քաղաքականության բարդ ու վիճահարույց հիմնահարցերին: Դրանցում հայ պատմագրության մեջ առաջին անգամ քննության է ենթարկել Հայաստանի երրորդ Հանրապետության անկախության քսանից ավելի տարիների ամբողջական պատմությունը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 7

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՎԱՂՈՐԴԱՅՆԻՆ (1985-1991 թթ.)
ԱՐՑԱԽՅԱՆ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

ա. Գորբաչովյան «Վերակառուցումը» և Հայաստանը
Արցախի հարցի վերաբացումը 55
բ. Սումգայիթյան ողբերգությունը 79
գ. Համազգային պայքարի վերելքը 81
դ. Բռնագաղթը 85
ե. 1988թվականի երկրաշարժը 86
զ. Ժողովրդական հուզումների նոր ալիքը Հայաստանում
Արցախահայության գոյամարտը
(1989թ. հունվար-1991թ. օգոստոս) 90

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՈՒՄԸ

ա. Հայաստանի անկախության հռչակագիրը 113
բ. Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան պետություն
ԽՍՀՄ-ի փլուզումը 119
գ. Պետականության կայացման գործընթացի սկիզբը 134
դ. 1995թ. ՀՀ Սահմանադրության ընդունումը 138
ե. Հայոց ազգային բանակի կազմավորումը 141

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ԱՐՑԱԽԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՈՒՄԸ

ա. ԼՂՀ անկախության հռչակումը և պետականության ձևավորումը 146
բ. Արցախի ազատագրական մարտերը.
Հայաստանի Հանրապետության ռազմա-քաղաքական և
դիվանագիտական աջակցությունը մարտնչող Արցախին 150
գ. Քարինտակի հերոսամարտը
Շուշիի ազատագրումը 151

դ. Պատերազմի հաղթական ավարտը 156
ե. Սփյուռքահայության մասնակցությունը Արցախյան պատերազմին ... 162
զ. Բանակցային գործընթացը Լեռնային Ղարաբաղի հարցի շուրջ 165

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՈՒՄԸ ՆԵՐՔԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ (1991-2012 թթ.):

ա. Սոցիալ-տնտեսական վիճակը 1990-ական թթ. սկզբին 168
բ. ԼՂՀ տնտեսության վերականգնումն ու զարգացումը 171
գ. Սոցիալական ոլորտը 182
դ. Հասարակական-քաղաքական կյանքը 185
ե. Կրթամշակութային կյանքը 188

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ՈՒ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ԴԺՎԱՐԻՆ ՈՒՂԻՆ (1991-2000 թթ.)

1. ՆԵՐՔԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ
ա. Տնտեսության ճգնաժամային երևույթները
Անցում շուկայական հարաբերություններին 191
բ. Արդյունաբերությունը 195
գ. Գյուղատնտեսությունը 201
դ. Ֆինանսավարկային և հարկային քաղաքականությունը 212
ե. Արտահանումն ու ներմուծումը 224
զ. Վերափոխումները սոցիալական ոլորտում
Բնակչության զբաղվածությունն ու սոցիալական վիճակը 237
է. Առողջապահությունը 252

2. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՍԿԻԶԲԸ
ա. Բազմակուսակցական համակարգի ձևավորումը
Կուսակցությունների գործունեությունը 258
բ. Սահմանադրական և դատական բարեփոխումները 266
գ. 1995թ. խորհրդարանական և 1996թ. նախագահական
ընտրությունները 269
դ. Քաղաքական ճգնաժամի խորացումը և
1998թ. իշխանափոխությունը 276
ե. 1999թ. խորհրդարանական ընտրությունները և ներքաղաքական
զարգացումները 1998-2000 թթ. 284

3. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ
ա. Գիտությունը 291
բ. Կրթությունը 295
գ. Գրականությունը 297
դ. Նկարչությունը և քանդակագործությունը 299
ե. Երաժշտությունը 302
զ. Թատրոնը և կինոն 304
է. Ֆիզիկական կուլտուրան և սպորտը 306

4. ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ 320

5. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ա. Հայաստանի Հանրապետության միջազգային ճանաչումը 322
բ. Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև հարաբերությունների ձևավորման և զարգացման նոր փուլը Հարաբերությունները ԱՊՀ մյուս երկրների հետ 332
գ. ՀՀ փոխհարաբերությունները հարևան երկրների հետ 342
դ. Հայ - ամերիկյան հարաբերությունները 360
ե. ՀՀ փոխհարաբերությունները Եվրամիության հետ 365

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ
ՀԱՅՐԵՆԻՔ- ՍՓՅՈՒՌՔ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ա. Կրթամշակութային կապերը 378
բ. Փոխներթափանցումներ արվեստի ոլորտում 384
գ. Գիտական կապերի ամրապնդումը 387
դ. Մշակութային միջոցառումները 389
ե. Սոցիալ-տնտեսական աջակցությունը Մայր Հայրենիքին 389
զ. Հայկական համայնքները արդի փուլում 399

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՐՐՈՐԴ ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ՍԿԶԲԻՆ (2001-2012 թթ.)

1. ՀՀ ՆԵՐՔԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ
ա. Տնտեսական վիճակը 410
բ. Տրանսպորտը և կապը 439

գ. Շինարարությունը 445
դ. Առևտուրը և ծառայությունները 449
ե. Դրամավարկային և հարկային քաղաքականությունը 454
զ. Մաքսային և ֆինանսաբանկային քաղաքականությունը 459
է. Համաշխարհային տնտեսական ճգնաժամի ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա և ձեռնարկված միջոցառումները 464
ը. Բնակչության սոցիալական վիճակը 467
թ. Առողջապահությունը 479
ժ. Կրթությունը 484
ժա. Գիտությունը 492
ժբ. Մշակույթը 497

2. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ

ա. Սահմանադրական և դատական նոր բարեփոխումներ 502
բ. Բարեփոխումներ պետական և հանրային կառավարման ոլորտում ժողովրդավարության գործընթացը 510
գ. Ներքաղաքական զարգացումները 514
դ. Կուսակցությունները 526
ե. Պատերազմի սպառնալիքը և բարեփոխումները հայկական բանակում 531

3. ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 546

ա. ՀՀ հարաբերությունները ՌԴ-ի հետ 547
բ. ՀՀ հարաբերությունները ԱՄՆ-ի հետ 552
գ. ՀՀ հարաբերությունները Եվրամիության հետ 555
դ. Հարաբերությունները հարևան երկրների հետ 561
ե. Ղարաբաղյան բանակցությունների նոր փուլը 572
զ. Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ուղղությամբ գործադրված ջանքերը 577

ՎԵՐՋԱԲԱՆ 583
ՀԱՎԵԼՎԱԾ 588

Минасян Эдик Гарегинович
Исстория третьей Республики Армения (Резюме) 591
Minasyan Edik Garegin
The History of the third Republic of Armenia (Rezume) 593

Սկզբնաղբյուրների և գրականության ցանկ 595

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Անկախ պետականության հաստատումը կամ վերականգնումը ամեն մի ժողովրդի բաղձալի ցանկությունն է, երազանքը: Հայ ժողովուրդը իր բազմադարյա պատմության ընթացքում բազմիցս կորցրել ու վերականգնել է իր պետականությունը: Այդպես եղավ նաև 20-րդ դարավերջին, երբ Հայաստանի առաջին Հանրապետության անկումից յոթանասուն տարի անց ժողովուրդը իրավունք նվաճեց կերտելու իր անկախ պետականությունը: 20-րդ դարավերջին Հայաստանի ազգային անկախության վերականգնումը և հայկական զույգ հանրապետությունների (ՀՀ և ԼՂՀ) ստեղծումը շրջադարձային իրողություն եղան մեր ժողովրդի պատմության մեջ: Ստեղծվեց Հայաստանի երրորդ Հանրապետությունը, որը կյանք առավ Հայաստանի առաջին (1918-1920) և երկրորդ (1920-1991) հանրապետությունների հիմքի վրա, դարձավ նրանց ժառանգորդն ու իրավահաջորդը: Ռուսական կայսրության փլուզման հետևանքով 1918 թ. մայիսի 28-ին, հինգդարյա ընդմիջումից հետո, Հայաստանը վերականգնեց իր անկախությունը: Հայոց ցեղասպանությունից, Առաջին համաշխարհային պատերազմից ու հեղափոխությունից հետո Հայաստանը հայտնվեց ծանր կացության մեջ՝ քայքայված տնտեսությամբ, փախստականներով ու գաղթականներով, առանց դաշնակիցների: Չնայած դրան՝ Հայաստանի առաջին Հանրապետությունը, իբրև պետական կառույց, կատարեց պատմական իր կարևոր դերը: Գոյատևելով ընդամենը երկու և կես տարի՝ դրեց նորագույն շրջանի հայոց պետականության հիմքերը՝ փաստորեն ապահովելով նրա՝ թեկուզ անկատար, գոյությունը, որին հաջորդեց Խորհրդային Հայաստանը, որը շատ չանցած մտավ Անդրֆեդերացիայի, իսկ մի փոքր անց՝ ԽՍՀՄ-ի մեջ:

ԽՍՀՄ-ի կազմում Խորհրդային Հայաստանը նշանակալից նվաճումներ ձեռք բերեց հասարակական և տնտեսական կյանքի գրեթե բոլոր բնագավառներում, ունեցավ զարգացած արդյունաբերություն, գյուղատնտեսություն և մշակույթ, սակայն չուներ և չէր կարող ունենալ քաղաքականապես ու տնտեսապես անկախ, ազգային ազատ պետություն ու պետականություն:

Հայաստանի խորհրդային հանրապետությունում ձևավորված նյութական ու մտավոր ներուժի հիման վրա կուտակվեց պետահասարակական կառավարման այնպիսի հարուստ փորձ, որը հետագայում օգտագործվեց նորանկախ պետականության հաստատման նախնական փուլում և նրա կայացման գործընթացում: Հարկ է նշել, որ արդեն 1918 թվականից ժողովրդական լայն զանգվածների գիտակցության մեջ աստիճանաբար ձևավորվում էր պետական մտածողություն, որը մեր նորանկախ հանրապետության հարատևության գլխավոր առհավատչյան էր:

1980-ական թվականների երկրորդ կեսին, հավատալով գորբաչովյան քվացյալ վերակառուցմանը, հայ ժողովուրդը փորձեց հասնել Արցախի ազատագրման ազգային իղձերի իրականացմանը: Սակայն երկու տարվա ծանր փորձություններից հետո համոզվելով, որ ամբողջատիրական վարչակարգը և ժողովրդավարությունը անհամատեղելի են, նա համազգային պայքարը միաժամանակ ուղղեց անկախ պետականության հաստատմանը: Այս պայքարի ընթացքում մեծ դժվարությամբ հաղթահարելով իր դեմ ուղղված դավերն ու ծանր փորձությունները՝ մեր ժողովուրդը վերստին նվաճեց իր անկախ պետականությունը:

1980-ական թթ. վերջերին և 1990-ական թթ. սկզբներին ԽՍՀՄ-ում տեղի ունեցած քաղաքական բուռն զարգացումների արդյունքում կազմալուծվեց այդ երկիրը, և Հայաստանը, ի թիվս նախկին խորհրդային մյուս հանրապետությունների, անկախացավ, որը իրավաբանորեն ձևակերպվեց 1991թ. սեպտեմբերի 21-ի համաժողովրդական հանրաքվեի արդյունքներով:

Անկախության հաստատման գործընթացը նորանկախ հանրապետության ներքին կյանքում նշանակում էր կառուցել ինքնիշխան ժողովրդավարական պետություն, ձևավորել ազգային ու համամարդկային արժեքների վրա հիմնված քաղաքացիական հասարակություն, սոցիալական կողմնորոշում ունեցող շուկայական տնտեսակարգ, իսկ արտաքին ոլորտում գլխավոր խնդիրը մնում էր ազգային շահերի պաշտպանությունը և համաշխարհային հանրության մեջ ինտեգրումը:

Անկախության հռչակումը և անցումը շուկայական հարաբերությունների 1990-ական թվականներին լուրջ և դժվար լուծելի խնդիրների առաջ կանգնեցրին գրեթե բոլոր հետխորհրդային հանրապետություններին: Հասկանալի է, որ Հայաստանի Հանրապետությունը բացառություն չկազմեց, և տնտեսապես արդարացված ու դեպի ժողովրդավարություն տանող նրա ճանապարհին քիչ չէին բացթողումներն ու չօգտագործված հնարավորությունները, ձախողումներն ու անհաջողությունները:

Հայաստանի երրորդ Հանրապետության քսանից ավելի տարիների պատմությունը ունեցել է կտրուկ ելևէջներ: Սպիտակի աղետալի երկրաշարժից դեռ ուշքի չեկած՝ ռազմաքաղաքական հակամարտությունների հետևանքով նորանկախ երկիրը կանգնեց հաղորդակցության ուղիների և տնտեսական շրջափակման ծանր իրողության առջև: Ավելին, տևական շրջափակման, սեփական էներգակիրների բացակայությամբ պայմանավորված էներգետիկ ճգնաժամի, արտաքին շուկային ինտեգրվելու տնտեսական քաղաքականության ուղենիշներով պարտադրված փոփոխությունների, նախկինում ձևավորված տնտեսական կապերի խզման հետևանքով խիստ վատթարացավ հանրապետության առանց այն էլ ծանր կացությունը, որն աստիճանաբար խորացավ սուբյեկտիվ գործոնների ազդեցությամբ:

Հանգամանքների բերումով իշխանության ղեկին հայտնված, մեծ մասամբ պետական կառավարման փորձ չունեցող քաղաքական ուժերն ու առանձին անձինք ստիպված էին հանրապետության համար դժվարին ժամանակներում կիրառել դառը փորձով ձեռք բերած կարողությունները: Անհրաժեշտ է ընդգծել, որ չնայած թույլ տված սխալներին ու թերություններին հատկապես անկախության հաստատման գործընթացում՝ Հայաստանի անկախության մասին հռչակագրի ընդունումից մինչև համաժողովրդական հանրաքվեով փաստացի քաղաքական անկախության ձևաճումը հայ հասարակությունն ու նրան ղեկավարող ուժերը ընդհանուր առմամբ կարողացան դիմագրավել ժամանակահատվածի հիմնական մարտահրավերներին՝ գործունեության ճիշտ դիրքորոշում և գործելաոճ ընտրելով պետական ինքնիշխանության ուղին

որդեգրած Հայաստանի նկատմամբ կենտրոնի կոշտ ու անբարյացակամ վերաբերմունքի պայմաններում:

Հանրապետության բարոյաքաղաքական մթնոլորտը հիմնականում պահպանեց իր կայունությունը՝ շատ դեպքերում պայմանավորված լինելով թուրք-աղրբեջանական հայաջինջ քաղաքականությամբ և Արցախի ազատագրական պայքարով, որոնք միավորեցին ամբողջ հայությանը: 1990-ական թվականների առաջին կեսը հանդիսացավ հայ հասարակության ներքին կայունության ու միասնության հիմնական ետնախորքը, որը հարկադրեց իշխանություններին վճռական միջոցների դիմելու: Առաջին հերթին անհրաժեշտ էր ամրապնդել պետաիրավական վարչակարգը, ինքնաբուխ մարտական ջոկատներից ձևավորել մարտունակ բանակ, ձեռք բերել ռազմատեխնիկական անհրաժեշտ միջոցներ և այլն:

1990-ական թվականներին Հայաստանի Հանրապետությունը որդեգրեց տնտեսակարգի փոփոխության քաղաքականություն՝ ուղղված ազատական տնտեսական հարաբերությունների ձևավորմանը: Երկար սպասված անկախությունն ու տնտեսական կյանքի ազատականացումը անհրաժեշտորեն առաջ բերեցին քաղաքական ու տնտեսական համակարգերի կտրուկ փոփոխություններ՝ խոսքի ազատություն, բազմակուսակցականություն, ժողովրդավարական հաստատությունների կայացում, հայոց ազգային բանակի ստեղծում, հոգևոր-մշակութային կյանքի գաղափարական սահմանափակումների վերացում, կառավարման համակարգի կայացում, հանրապետության ինտեգրում միջազգային կառույցներին ու գործընթացներին և այլն: Այս դրական փոփոխությունները ունեցան նաև բացասական հետևանքներ՝ բերելով աղքատություն և սոցիալական բևեռացում, գործազրկություն և արտագաղթ, օրինազանցություն, կոռուպցիա, կախվածություն արտաքին ֆինանսա-տնտեսական կենտրոններից և այլն: Բնակչության դժգոհությունը և արտագաղթը հստակ վկայում են, որ քաղաքական անկախության ձեռքբերումները ամբողջությամբ չեն հավասարակշռում տնտեսական ու սոցիալական կորուստները: Անցած տարիների ընթացքում առաջացած խնդիրները, թույլ տրված սխալներն ու թերությունները մասամբ և աստիճանաբար են համակարգվում ու լուծվում:

Սակայն այդ գործընթացը լիովին հունի մեջ դնելու համար անհրաժեշտ է կենսագործել կարևոր սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական, միջազգային ոլորտի մի շարք հիմնախնդիրներ, որոնց պատմաքննական հետազոտությունն ու արված առաջարկները կարևոր գիտագործնական նշանակություն ունեն պատմությունից դասեր առնելու առումով[1]:

Գիտապատմական և գործնական առումներով պահանջվում է խորապես վերլուծել և իմաստավորել կատարված պատմական իրադարձություններն ու երևույթները, գնահատել դրանք, գրել երրորդ հանրապետության ամբողջական պատմությունը:

Հայաստանի անկախ Հանրապետության հռչակման շեմին հայ քաղաքական միտքը ինքնիշխան պետությունը հիմնականում պատկերացնում էր որպես ազգային ժողովրդավարական գաղափարների և ներմուծված շուկայական ազատականության մեխանիկական համադրում: Սակայն շուտով պարզվեց, որ ազգային գաղափարախոսությունը գործնականում մշակված չէ, քաղաքական կառույցներն անկայուն են, իսկ տնտեսական վերափոխումների կտրուկ իրականացումը անչափ ծանր բեռ է շրջափակման ու պատերազմի մեջ գտնվող Հայաստանի Հանրապետության համար:

Պատմական այս շրջադարձային ժամանակահատվածի՝ նորանկախ Հայաստանի երրորդ Հանրապետության և Արցախի Հանրապետության քսանից ավելի տարիների պատմության հիմնախնդիրների համակողմանի լուսաբանմանն է նվիրված սույն աշխատությունը:

Ըստ էության առաջին անգամ է փորձ արվում հանգամանորեն և ամբողջական ներկայացնել հայկական երկու անկախ հանրա-

[1] Թեև թարմ հիմքերով պատմություն գրելը դժվարին գործ է, պարունակում է անխուսափելի սխալներ, սակայն դա չի նշանակում, թե այն չպետք է ձեռնարկել: Ավելին, ժամանակակից պատմական հետազոտությունն ունի դրական շատ կողմեր: Ընթացիկ երևույթների ու իրադարձությունների ականատեսը հնարավորություն ունի առավել ճիշտ արտացոլելու ժամանակի շունչն ու պատմական ոգին, ունի նաև գործնական մեծ արժեք: Ուստի զարմանալ կարելի է, թե ինչպես անտեսելով այս կարևոր հանգամանքը՝ ոմանք առաջարկում են հրաժարվել ժամանակակից պատմություն գրելուց, կամ գրել միայն 50, 100 տարի հետո:

պետությունների՝ ՀՀ-ի և ԼՂՀ-ի անցած քսանից ավելի տարիների պատմությունը: Հայտնի է, որ Հայոց նորանկախ պետականության հիմքերը և գործընթացի սկիզբը դրվեցին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի 1990թ. մայիս-հունիսյան այլընտրանքային ընտրություններով և հատկապես օգոստոսի 23-ի Հայաստանի անկախության հռչակագրի ընդունումով: Այս ծրագրային փաստաթղթով դրվեց ոչ միայն ազգային օրենսդրության, նոր Սահմանադրության ստեղծման հիմքը, այլև կյանքի բոլոր բնագավառներում սկսվեց պետական ինքնիշխանության ծավալման, անկախ պետականության հաստատման գործընթացը: Այս կարևոր հանգամանքը հաշվի առնելով՝ մեր նախորդ աշխատությունը «Սոցիալ-տնտեսական վերափոխումները Հայաստանի Հանրապետությունում» (1990-2003թթ., Երևան, 2003, 443 էջ) սկսել ենք հենց այդ թվականից: Սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության փաստացի անկախությունը ամրագրվեց 1991թ. սեպտեմբերի 21-ի համաժողովրդական հանրաքվեով և հաստատվեց ՀԽՍՀ Գերագույն խորհրդի սեպտեմբերի 23-ի որոշումով, սույն ուսումնասիրությունը սկսել ենք 1991 թվականից՝ միաժամանակ չմոռանալով առանձին ենթագլուխ նվիրել Անկախության գործընթացի սկզբի՝ 1990-1991թթ. պատմությանը, այն ժամանակահատվածին, երբ ծնունդ առավ Հայաստանի երրորդ Հանրապետությունը:

Հարկ համարելով ամբողջացնելու Հայաստանի երրորդ Հանրապետության և Արցախի Հանրապետության քսանից ավելի տարիների պատմությունը՝ որոշեցինք շարադրանքը հասցնել ներառյալ 2012 թվականը՝ նրանում ընդգրկելով ներքին և արտաքին քաղաքականության հիմնական ոլորտներն ու հիմնահարցերը:

Աշխատությունում վերոնշյալ հիմնահարցերը լուսաբանվել են համապատասխան արխիվային նյութերի, տպագիր սկզբնաղբյուրների, բազմաթիվ վիճակագրական, վերլուծական ժողովածուների, մամուլի հրապարակումների, գիտական գրականության և այլ նյութերի հիման վրա:

Աշխատության մեջ առաջին անգամ շրջանառության մեջ են դրվել Հայաստանի երրորդ Հանրապետության և Արցախի Հան-

րապետության քսանից ավելի տարիների պատմության, անկախության գործընթացից սկսած մինչև մեր օրերը ընդգրկվող տարաբնույթ խնդիրներին վերաբերող Հայաստանի Ազգային արխիվի (ՀԱԱ), Հայաստանի Հանրապետության հասարակական-քաղաքական կազմակերպությունների փաստաթղթերի կենտրոնական պետական արխիվի (ՀՀՀՔ ԿՓԿՊԱ), ՀՀ Արտաքին գործերի նախարարության ընթացիկ արխիվի բազմաթիվ նյութեր և փաստագրական վերլուծական բնույթի ժողովածուներ:

Շուրջ 22 տարի է անցել Հայաստանի Հանրապետության փաստական անկախության օրվանից, սակայն առ այսօր հրապարակի վրա չկա մի ամփոփ ուսումնասիրություն, որն նվիրված լինի երրորդ հանրապետության ամբողջական պատմությանը, ուր վերհանված ու վերլուծված լինեն հանրապետության 20-ից ավելի տարիների ներքին և արտաքին քաղաքականության հիմնախնդիրները, զարգացման պատմական փուլերն ու առանձնահատկությունները:

Իհարկե, դա չի նշանակում, թե ընդհանրապես ոչինչ չի արվել. կատարվել են որոշակի աշխատանքներ այդ ուղղությամբ և առկա են արդյունքները, սակայն դրանք դեռևս քիչ են, մեծ մասամբ տնտեսագիտական բնույթի, որոնք առնչվում են ներքին քաղաքականությանը, սոցիալ-տնտեսական հարաբերություններին, որոնցով հնարավոր չէ պատկերացում կազմել երրորդ հանրապետության ամբողջական պատմության մասին: Ահա թե ինչու խիստ անհրաժեշտ է սույն աշխատության հրապարակումը, որը կլրացնի պատմության ոլորտի այս կարևորագույն բացը: Երրորդ հանրապետության պատմության ուսումնասիրության վիճակը ճիշտ հասկանալու համար անհրաժեշտ է այն բաժանել մի քանի մասերի:

Առաջին՝ անկախ պետականության հաստատման գործընթացի վերաբերյալ հրապարակված փաստաթղթային նյութեր և ուսումնասիրություններ, ՀՀ ներքին քաղաքականության, հատկապես սոցիալ-տնտեսական ոլորտի վերաբերյալ կատարված հետազոտությունների հրապարակումներ և երկրորդ՝ ՀՀ արտաքին քաղաքականության վերաբերյալ հրատարակված փաստաթղթեր ու ուսումնասիրություններ:

Հարկ է նշել, որ Հայաստանի երրորդ Հանրապետության անկախ պետականության հիմնահարցի վերաբերյալ զուտ պատմագիտական բնույթի տպագիր սկզբնաղբյուրներ, ինչպես և այլ բնույթի գրականություն չափազանց քիչ են: Այս առումով թերևս բացառություն են կազմում պատմական գիտությունների թեկնածու Ռ.Ազիզբեկյանի և պատմական գիտությունների դոկտոր Է.Մինասյանի համապատասխան աշխատությունների[2] հավելվածներում զետեղված տպագիր սկզբնաղբյուրները՝ Հայաստանի անկախության մասին հռչակագրի, ՀՀ հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի 1991թ. սեպտեմբերի 21-ին կայացած ՀՀ հանրաքվեի արդյունքների, ՀԽՍՀ-ի վերանվանման, ՀՀ պետական դրոշի, զինանշանի մասին, ՀՀ հիմնական օրենքի, ՀՀ նախագահի, ՀՀ ԳԽ-ի, ՀՀ կառավարության կազմի և կառուցվածքի, Անկախ պետության հիմնադրույթների մասին և այլն:

Հատկապես տողերիս հեղինակի աշխատության հավելվածում 100 էջից ավելին կազմում են վերոնշյալ հիմնահարցի տպագիր սկզբնաղբյուրները: Հիմնահարցի հետազոտության առումով փաստագրական հարուստ նյութեր և գիտական լուրջ վերլուծություններ են պարունակում Հայաստանում ամենաբազմազան միջազգային կառույցների ծավալած գործունեությունն ու դրանց արդյունքները լուսաբանող ժողովածուները:[3] Վերոնշյալ հիմնախնդրի ուսումնասիրության տեսակետից սկզբնաղբյուրի արժեք ունեն ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի նախաձեռնությամբ ու անմի-

---

[2] Տե՛ս Ազիզբեկյան Ռ., Հայաստանը վերակառուցումից մինչև անկախություն, համառոտ ակնարկ, Երևան, 1992, էջ 102-128: Մինասյան Է., Սոցալ-տնտեսական վերափոխումները Հայաստանի Հանրապետությունում (1990-2003թթ.), Երևան 2003, էջ 236-430:

[3] Էլեկտրոնային զարգացումը և Հայաստանը, գլոբալ մարդկային զեկույց 2001, Երևան, 2001: Ազգային գնահատման զեկույց, Հայաստանի Հանրապետություն (կայուն զարգացման համաշխարհային գագաթնաժողով, Յոհաննեսբուրգ, 2002), Երևան, 2002: Հայաստանի Հանրապետության դատական համակարգը (Ք.Ինքերնեշնել ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության Հայաստանի դատաիրավական և տնտեսական օրենսդրության բարեփոխումների ծրագիր), Երևան, 2002, ՄԱԿ-ի հանրային տեղեկատվության վարչության Երևանյան գրասենյակ. Միավորված ազգերի կազմակերպությունը Հայաստանում, 15 տարի, Երևան, 2007, Հայաստան-ՆԱՏՕ՝ առաջընթացի 10 տարիներ 1999-2008թթ., Երևան, 2008:

ջական օգնությամբ հանրապետության անկախ փորձագետների կողմից մշակված և 1995 թվականից պարբերաբար հրապարակված «Մարդկային զարգացման ազգային զեկույցի» ամենամյա համարները[4]:

Բացի անկախ պետականության հաստատման գործընթացի առանձին հիմնահարցերի քննարկումից ու վերլուծությունից, վերոնշյալ ժողովածուներում ներկայացված են նաև ներքին քաղաքականության ոլորտի հիմնահարցերի, հատկապես հասարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական գործընթացների ամփոփ վերլուծությունները: Սկզբնաղբյուրի նշանակություն են ձեռք բերում նաև հետազոտվող խնդրի համար օգտագործվող մամուլը, Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումների ժողովածուները (1990-1996թթ.), ՀՀ պաշտոնական տեղեկագրերը՝ հրատարակված 1997 թվականից, ՀՀ գործող օրենքների ժողովածուները՝ սկսած 1995 թվականից, ինչպես նաև ՀԽՍՀ և ՀՀ Գերագույն խորհրդի տեղեկագրերը 1990 թվականից սկսած[5]:

---

[4] Մարդկային զարգացման զեկույց. Հայաստան 1995, Երևան, 1995, Մարդկային զարգացման զեկույց. Հայաստան 1996, Երևան: 1996, Մարդկային զարգացման զեկույց. Հայաստան 1997, Երևան, 1997, Մարդկային զարգացման զեկույց. Հայաստան 1998, Պետության դերը, Երևան, 1998, Մարդկային զարգացման զեկույց. Հայաստան 1999, Մարդկային զարգացման հինգ տարին Հայաստանում, Երևան: 1999, Մարդկային զարգացման ազգային զեկույց. Հայաստան 2000, Մարդու իրավունքները և մարդկային զարգացումը, գործողություն հանուն առաջընթացի, Երևան, 2000, Մարդկային զարգացման ազգային զեկույց. Հայաստան 2001, Անկախության և անցումային 10 տարիները Հայաստանում, Երևան, 2001: Մարդկային զարգացման հիմունքներ, Երևան, 2004, Մարդկային զարգացման ազգային զեկույց 2006, Կրթությունը Հայաստանում, Երևան, 2006:

[5] «Խորհրդային Հայաստան» օրաթերթ, 1990թ. հունվարի մեկից դեկտեմբերի 30-ը, «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ 1991թ. հունվարի 10-ից մինչև 2012թ. դեկտեմբերի 30-ը, ՀՀ կառավարության որոշումների ժողովածու N1, 1991թ.-ից մինչև 1996թ. դեկտեմբեր ներառյալ, ՀՀ պաշտոնական տեղեկագիր 1997թ. հունիսի 1-ից սկսած, ՀՀ գործող օրենքների ժողովածու (1995-1999թթ.), Երևան, 1995, ՀՀ գործող օրենքների ժողովածու (1995-1999թթ.), գիրք Ա, Երևան, 1999, ՀՀ գործող օրենքների ժողովածու (1995-1999թթ.), գիրք Բ, Երևան, 1999, ՀՀ գործող օրենքների ժողովածու (1995-1999թթ.), գիրք Գ, Երևան, 2000, ՀՀ գործող օրենքների ժողովածու (2001թ.), գիրք Դ, Երևան, 2001, ՀՀ գործող օրենքների ժողովածու (2002թ.), գիրք Ե, Երևան, 2003, ՀԽՍՀ գերագույն խորհրդի տեղեկագիր N15 (971), 23 օգոստոսի 1990, ՀՀ գերագույն խորհրդի տեղեկագիր N2 (982), 31 հունվարի 1991:

Հայաստանում անկախ պետականության հաստատման գործընթացի ուսումնասիրման ոլորտում մեծ կարևորություն և որոշ հարցերում սկզբաղբյուրի նշանակություն են ձեռք բերում այդ ժամանակահատվածում հանրապետությունում բարձրագույն պետական պաշտոններ զբաղեցրած անձանց՝ Լ.Տեր-Պետրոսյանի, Վ.Մանուկյանի, Ս.Հարությունյանի, Ա.Կիրակոսյանի, Հ.Բագրատյանի, Վ.Մովսիսյանի, Ֆ.Սարգսյանի հուշերն ու հրատարակված աշխատությունները[6]: Դրանք արժեքավոր են նաև ՀՀ ներքին և արտաքին քաղաքականության հիմնահարցերն ուսումնասիրելիս:

Հայաստանի երրորդ հանրապետության պատմության, հատկապես անկախ պետականության հաստատման սկզբնական գործընթացի ու ներքաղաքական կյանքի հիմնախնդիրների քննարկումը հաջողությամբ է կատարված Ռուսաստանի ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի Ե.Կոժոկինի խմբագրությամբ հրատարակված «Հայաստան. անկախության զարգացման հիմնախնդիրները» ռուսերեն (Մ. 1998թ.) աշխատության մեջ[7]: Այստեղ ներկայացված են Հայաստանի անկախության գործընթացի սկզբնական շրջանի դժվարություններն ու դրանց հաղթահարման ուղղությամբ իրականացված միջոցառումները:

Հայ պատմաբաններից առաջինը վերոնշյալ հիմնախնդրին անդրադարձել է Ռ.Ազիզբեկյանը 1992թ. հրատարակած իր «Հայաստանը վերակառուցումից մինչև անկախություն համառոտ ակնարկ» ուսումնասիրության մեջ: Այստեղ հեղինակին հաջողվել է

---

[6] Տեր-Պետրոսյան Լ., Ընտրանի (ելույթներ, հոդվածներ, հարցազրույցներ), Երևան 2006,.Հարությունյան Ս, Անցյալի և ներկայի մասին, Երևան, 2011, Մանուկյան Վ., Հայկական երազանքը գոյատևման փակուղում, Երևան, 2002, Նույնի՝ Գնացքից թռչելու ժամանակն է, հոդվածների ժողովածու, Երևան, 2002, Բագրատյան Հ., Հայաստանում առկա քաղաքական ու սոցիալ-տնտեսական իրավիճակի և դրանց դուրս գալու ելքերի մասին, Երևան, 2000, Նույնի՝ Հասարակությունը և պետությունը, Երևան, 1999, Багратян Г., "Земельная реформа вопросы теории и практики", Ереван, 2003, Մովսիսյան Վ., Հողի ճակատագրով, Երևան, 2001, Սարգսյան Ֆ., Կյանքի դասերը, Երևան, 2013, Նույնի՝ Հոդվածներ, Երևան, 2013, Կիրակոսյան Ա., Մայրամուտի շեմին, Երևան, 2002:

[7] Армения: проблемы независимого развития, под. ред. Е.М. Кожокина, Российский институт статических исследований, Москва, 1998.

բազմաթիվ փաստերով հիմնավորել 20-րդ դարավերջի հայ ժողովրդի կյանքում տեղի ունեցած բախտորոշ նշանակություն ունեցող անկախության հռչակմամբ սկիզբ առած անկախ պետականության հաստատման կարևորությունն ու նշանակությունը: Նա վերլուծել և ընդհանրացրել է երրորդ հանրապետության ստեղծման ու կայացման առաջին երեք տարիների փորձը և ներկայացրել Արցախյան ազատագրական պայքարի զուգակցումը անկախության համար պայքարի հետ՝ բացահայտելով Հայաստանի անկախացման օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառները:

Հայաստանի անկախության հաստատման գործընթացը լուսաբանվել է նաև պ.գ.թ. Ռ.Ազիզբեկյանի և պ.գ.դ. պրոֆեսոր Գ.Գեղամյանի հեղինակությամբ հրատարակված «Հայաստանը 1945-1990-ական թվականներին» հանրակրթական դպրոցի հայոց պատմություն առարկայի ուսումնասիրման նպատակով նախատեսված ուսումնաօժանդակ ձեռնարկում[8]: Նրանում հանրամատչելի ձևով ներկայացված են Գորբաչովյան վերակառուցման քաղաքականության էությունն ու ձախողման պատճառները, ղարաբաղյան շարժման պատճառներն ու սկիզբը, ԽՍՀՄ իշխանությունների վարած հակահայկական քաղաքականության պայմաններում ազատասեր հայ ժողովրդի նկատմամբ Ադրբեջանի իրագործած վայրագությունները: Ձեռնարկում վերլուծելով հայ ժողովրդի ազատագրական պայքարը՝ առաջին պլան է մղվում ազգային անկախ պետականություն ստեղծելու գաղափարը և այն կյանքի կոչելու միջոցառումները:

Այս հիմնահարցերին է անդրադարձել նաև պ.գ.դ., պրոֆեսոր Էդիկ Մինասյանը իր վերոնշյալ աշխատության մեջ[9]:

Նա առանձին գլուխ է նվիրել ՀՀ Անկախության հռչակմանը և պետականության կայացման գործընթացին, որտեղ քննարկվել են գործընթացի սկիզբը, Հայաստանի անկախության հռչակագիրը, ԽՍՀՄ փլուզման պատճառները, ՀՀ անկախության մասին հանրաքվեն, հայոց փաստացի ինքնիշխանության, քաղաքական ան-

---

[8] Ազիզբեկյան Ռ., Գեղամյան Գ., Հայաստանը 1945-1990-ական թվականներին, Երևան, 1994:

[9] Տե՛ս Մինասյան Է., Սոցիալ-տնտեսական վերափոխումները Հայաստանի Հանրապետությունում 1990-2003թթ., էջ 17-64:

կախության հռչակման և պետականության կայացման ընթացքը: Հեղինակը առաջիններից մեկն էր, որ ուսումնասիրելով անկախացման գործընթացի սկիզբը, կատարել է այն կարևոր եզրահանգումը, որ անկախացումը տեղի է ունեցել ԽՍՀՄ-ի կազմալուծման պայմաններում, որի պատճառներից մեկն էլ Խորհրդային Միությունում սկսված ազգային ազատագրական շարժումներն էին, այդ թվում արցախյան շարժումը: Հեղինակը առանձին ենթագլուխ է նվիրել պետականության կայացման գործընթացում պետաիրավական և վարչական բարեփոխումներին և անկախության ամենամեծ ձեռքբերումներից մեկին՝ անկախ Հայաստանի Հանրապետության անվտանգության գլխավոր երաշխավորը հանդիսացող Հայոց ազգային բանակի կազմավորմանը:

Անկախ պետականության հաստատման գործընթացը Հայաստանում հնարավորինս ամբողջական է փորձել ներկայացնել պ.գ.թ., դոցենտ Էդուարդ Պողոսյանը «Անկախ պետականության հաստատման գործընթացն Հայաստանում (1990-2001թթ.)» ծավալուն աշխատության մեջ:[10] Այստեղ արխիվային փաստերի, հրատարակված սկզբնաղբյուրների, համապատասխան գրականության, մամուլի հրապարակումների օգտագործմամբ Հայաստանի անկախ պետականության կայացման գործընթացը ուսումնասիրվել է որպես փոխկապակցված հասարակական-քաղաքական և տնտեսական բնույթի ձեռնարկումների համակարգ: Հեղինակը առավել հանգամանորեն է անդրադարձել Անկախության հռչակագրի ընդունման հանգամանքներին, Հայաստանի Հանրապետության փաստացի անկախացման գործընթացին և կատարել կարևոր ընդհանրացումներ: Սակայն հեղինակը սահմանափակվել է անկախության առաջին տասնամյակի քննարկումներով, այն դարձրել է ավելի ընդգրկուն՝ նրա մեջ ներառելով հատկապես արտաքին քաղաքականության և միջազգային ոլորտի բազմաթիվ հիմնահարցեր, որոնք ինչ-որ չափով շեղել են հետազոտվող հիմնախնդիրը բուն նպատակից:

ՀՀ ներքին քաղաքականության ուսումնասիրության ոլորտում ներառված են ՀՀ սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղա-

[10] Տե՛ս Պողոսյան Է., Անկախ պետականության հաստատման գործընթացը Հայաստանում (1990-2001թթ.), Երևան, 2013:

քական, բանակաշինության հիմնահարցերը: Հարկ է ընդգծել, որ վերը նշված հիմնախնդիրների վերաբերյալ կան բազմաթիվ տպագիր սկզբնաղբյուրներ, արխիվային նյութեր, վիճակագրական-վերլուծական տեղեկագրեր, զեկուցագրեր և բազմաթիվ այլ փաստաթղթեր:

Գործնականում աղբյուրագիտական նշանակություն են ձեռք բերում 1990-ական թվականներից հիմնախնդրի առանձին հարցերի շուրջ սոցիալական հարցումների միջոցով կատարված հետազոտությունները: Նման հետազոտություններ կատարվել ու շարունակում են կատարվել նաև ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությունում, ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության, փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտներում, Էկոնոմիկայի և Ֆինանսների նախարարության տնտեսագիտական հետազոտությունների ինստիտուտում, Երևանի պետական համալսարանի սոցիոլոգիայի և ազգագրության ամբիոններում, Երևանի պետական տնտեսագիտական համալսարանում և մի շարք հասարակական կազմակերպություններում: Դրանք լույս են տեսել 1991-2013 թթ. շուրջ երկու տասնյակից ավելի ժողովածուներով, գրքերով, գրքույկներով, հոդվածներով և այլն: Աշխատանքը գրելիս օգտագործել ենք ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից հրատարակված և հասարակական կյանքի տարբեր բնագավառներն ընդգրկող բազմաթիվ վիճակագրական ժողովածուներ,[11] 1991-2013թթ. հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակն արտացոլող տեղեկատվական-վերլուծական ամսական և տարեկան զեկույցներ,

[11] Պատմություններ աղքատության մասին, գիրք առաջին, Երևան, 2001, Պատմություններ աղքատության մասին, գիրք երկրորդ, Երևան 2007: Արտագաղթը Հայաստանից, Երևան, 2003: Հայաստանի ժողովրդագրական և առողջության հարցերի հետազոտություններ - 2000, Երևան, 2001: Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 1999 թ., Վիճակագրական վերլուծական ժողովածու, ՀՀ ազգ., վիճ. ծառայություն, Երևան 2001: Հայաստանի Հանրապետության սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան, 2001: Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Վիճակագրական վերլուծական զեկույց, Երևան, 2002: Զեկույց իրական ակտիվներում իրականացված ներդրումների, ընտրանքային հետազոտություն, Երևան, 2002: Հետազոտություն Հայաստանի Հանրապետությունում մասնավոր հատվածի զարգացման մասին, Վերջնական զեկույց (ամփոփագիր), Տոկիո, 1999:

Հայաստանի վիճակագրական տարեգրքեր, հարավկովկասյան երկրների վիճակագրական տարեգրքեր և ՀՀ Կենտրոնական բանկի տարեկան հաշվետվություններ: Որպես պաշտոնական տվյալներ, օգտագործվել են Անկախ պետությունների համագործակցության վիճակագրական տնտեսական ժողովածուները և ՀՀ վիճակագրական ռեգիստրի ու վերլուծության նախարարության նյութերը, ինչպես նաև ԵՊՀ Սոցիոլոգիայի ամբիոնի պատրաստած ՀՀ սոցիալական ոլորտի իրավական նորմատիվ ակտերի ժողովածուն[12]:

---

[12] Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 1991թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 1992, 1992թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 1993, 1993թ. հունվար-դեկտեմբեր, Երևան, 1994, 1994թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 1995, 1995թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 1996, 1996թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 1997, 1997թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 1998, 1998թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 1999, 1999թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 2000, 2000թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 2001, 2001թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 2002, 2002թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 2003, 2003թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 2004, 2004թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 2005, 2005թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 2006, 2009թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 2010, 2010թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 2011, 2011թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 2012, 2012թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 2013: Հայաստանի վիճակագրական տարեգիրք 1990թ., Երևան, 1991: Հայաստանի վիճակագրական տարեգիրք 1991թ., Երևան, 1994, Հայաստանը թվերով 1992թ., Երևան, 1994, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 1993-1994, Երևան, 1995, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 1995, 1996, Երևան, 1998, Հայաստանի վիճակագրական տարեգիրք (1997, 1998), Երևան, 2001, Հայաստանի վիճակագրական տարեգիրք (1999, 2000), Երևան, 2001: Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2005, Երևան, 2005, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2010, Երևան, 2010, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2011, Երևան, 2011, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2012, Երևան, 2012, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2013, Երևան, 2013: Содружество независимых государств: Десять лет спустя. 1991-2001. (Исполнительный комитет СНГ), Минск, 2001, Содружество независимых государств в 2002 году, Статистический ежегодник /Межгосударственный статистический комитет СНГ, Москва 2003, Հայաստանի Հանրապետության սոցիալական ոլորտի իրավական ակտերի ժողովածու, Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2001, Հայաստանի Հանրապետության միջազգային ներդրումային դիրքը 1997-2001 /Վիճակագրական ժողովածու, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան 2002, ՀՀ կենտրոնական բանկ Հայաստանի բանկային համակարգ: Հոդվածներ /խմբ., Լ. Դավթյան, Բ.Ասատրյան, Երևան 2002, Հայաստանը թվերով 2003,

Հանրապետության ներքին կյանքին վերաբերող վերոնշյալ տպագիր սկզբնաղբյուրների մեջ առանձնանում են այնպիսիները, որոնցում սոցիալ-տնտեսական իրավիճակային վերլուծությունները անմիջականորեն կապվում են հասարակական-քաղաքական կյանքի հետ: ՀՀ հասարակական հաստատություններից մեկի՝ «Մարդու իրավունքների և ժողովրդավարության ինստիտուտի» կողմից իրականացված հետազոտությունների արդյունքում հրատարակված «Աղքատությունը և ժողովրդավարությունը Հայաստանում» (Միժի, Երևան, 2000) ուսումնասիրությունում հանրապետությունում ժողովրդական արժեքների անկումը, հասարակության առավել անապահով մասի քանակական աճը, անմիջականորեն կապված են ազգաբնակչության մեծ չափերի հասնող աղքատության հետ: «Պատմություններ աղքատության մասին» երկհատորանի ազգաբանական հետազոտությունները կարևոր սկզբնաղբյուրներ են Հայաստանի Հանրապետության բնակչության 1994-2007թթ. հասարակական, տնտեսական և սոցիալ ու մշակութային հարաբերությունների առկա վիճակը վերլուծելու և գնահատելու առումով:

Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակն արտացոլող վիճակագրական ժողովածուները կարևոր տվյալներ են պարունակում կրթության, գիտության, առողջապահության, սոցիալական ապահովագրության, մանկատների, տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման, գրադարանների գործունեության, մշակույթի, սպորտի, արխիվային, արտոնագրային, նոտարական գործունեության և իրավական ոլորտի տարաբնույթ խնդիրների վերաբերյալ:[13]

Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան 2003:

[13] Ջեկույց առողջապահական կազմակերպությունների և դեղատների ու տնային տնտեսությունների կողմից առողջապահական ծառայությունների վրա կատարված ծախսերի ընտրանքային հետազոտության, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2002:

Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2001թ., վիճակագրական ժողովածու, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2003: Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը, 2002թ. վիճակագրական ժողովածու, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան 2003, Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2004թ., ՀՀ Ազ-

Նրանցից յուրաքանչյուրում առանձին ժամանակահատվածներով ներկայացված են ոչ միայն հանրապետության բնակչության ժողովրդագրական ցուցանիշները, այլև նրանց զբաղվածությունը, աշխատանքային պայմանները, կրթության, առողջապահության վիճակը, կացությունը ապրանքների և ծառայությունների սպառողական շուկայում, գների մակարդակն ու դինամիկան, հանրապետության ներքին և արտաքին առևտուրը և այլն: Նրանցում ներկայացված են նաև հանրապետության սոցիալ-տնտեսական կյանքում նկատվող դժվարությունները, բացասական այնպիսի երևույթներ, ինչպիսիք են աղքատությունն ու գործազրկությունը, պետական բյուջեի պակասուրդն ու արտաքին պարտքի աճման միտումները, ցույց են տրված դրանց առաջացման պատճառները և այլն: Հանրապետության բնակչության սոցիալական վիճակի, այդ ոլորտում իրականացրած բարեփոխումների արդյունքների, ժողովրդագրական քաղաքականության վերաբերյալ արժեքավոր սկզբնաղբյուրներ են ՀՀ մարդահամարի արդյունքներն ու Աշխատանքի ու Սոցիալական հարցերի նախարարության ամփոփ հաշվետվությունները, ՀՀ ժողովրդագրական ժողովածուները[14]:

գային վիճակագրական ծառայություն, Երևան 2004, Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2006թ., ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան 2006, Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը, 2010թ., ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2010, Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2012 թ., ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2013: Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, վիճակագրական վերլուծության զեկույց, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան 2004, Համաշխարհային բանկ, Երևան 2006, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, վիճակագրական վերլուծության զեկույց, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2008, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, վիճակագրական վերլուծության զեկույց, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2009, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, վիճակագրական վերլուծության զեկույց, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2010, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, վիճակագրական վերլուծության զեկույց, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2013: Առևտուր և մարդկային զարգացում, Միավորված ազգերի զարգացման ծրագիր, Երևան, 2011:

[14] Հայաստանի Հանրապետության Աշխատանքի և Սոցիալական հարցերի նախարարություն 2003-2006թթ. ամփոփ հաշվետվություն, Երևան, 2007:

Հանրապետության արդյունաբերության և գյուղատնտեսության վիճակի մասին լայն պատկերացումներ են տալիս դրանց վերաբերող հրատարակված վիճակագրական ժողովածուները, որտեղ վերլուծված են առկա վիճակն ու ցույց են տրված նրանցում տեղ գտած թերությունները, հանրապետության ազգաբնակչության զբաղվածությունն այդ ոլորտներում: Հանրապետության բնակչության սոցիալ-տնտեսական վիճակը արտացոլված է նաև ՀՀ մարզերին վերաբերող վիճակագրական ժողովածուներում, իսկ ներքին և արտաքին առևտրի ցուցանիշները ներկայացված են դրանց նվիրված վիճակագրական ժողովածուներում:[15]

Սոցիալական բարեփոխումները Հայաստանում, Երևան, 2011: Սոցիալական պետության հայեցակարգեր, հայկական իրողություններ և հեռանկարներ, Միջազգային գիտաժողովի նյութեր, փետրվար 2006թ., Երևան, 2007: Հայաստանի Հանրապետության պետական ժողովրդագրական քաղաքականության հայեցակարգ, Երևան, 2006, Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, Երևան, 2004, Հայաստանի ժողովրդագրական ժողովածու 2005թ., Երևան, 2005, Հայաստանի ժողովրդագրական ժողովածու 2009թ., Երևան, 2009: ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքները (ՀՀ Արագածոտնի մարզի ցուցանիշները), ՀՀ Ազգ. վիճ. ծառայություն, Երևան, 2003, ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքները (ՀՀ Արարատի մարզի ցուցանիշները), ՀՀ Ազգ. վիճ. ծառայություն, Երևան, 2003, ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքները (ՀՀ Արմավիրի մարզի ցուցանիշները), ՀՀ Ազգ. վիճ. ծառայություն, Երևան, 2003, ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքները (ՀՀ Գեղարքունիքի մարզի ցուցանիշները), ՀՀ Ազգ. վիճ. ծառայություն, Երևան, 2003, ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքները (ՀՀ Լոռու մարզի ցուցանիշները), ՀՀ Ազգ. վիճ. ծառայություն, Երևան, 2003, ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքները (ՀՀ Շիրակի մարզի ցուցանիշները), ՀՀ Ազգ. վիճ. ծառայություն, Երևան, 2003, ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքները (ՀՀ Վայոց ձորի մարզի ցուցանիշները), ՀՀ Ազգ. վիճ. ծառայություն, Երևան, 2003, ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքները (ՀՀ Տավուշի մարզի ցուցանիշները), ՀՀ Ազգ. վիճ. ծառայություն, Երևան, 2003, ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքները (ՀՀ Սյունիքի մարզի ցուցանիշները), ՀՀ Ազգ. վիճ. ծառայություն, Երևան 2003, ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքները (ՀՀ Կոտայքի մարզի ցուցանիշները), ՀՀ Ազգ. վիճ. ծառայություն, Երևան, 2003, ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքները (ք.Երևանի ցուցանիշները), ՀՀ Ազգ. վիճ. ծառայություն, Երևան 2003, ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքները (Հայաստանի Հանրապետության ցուցանիշները), ՀՀ Ազգ. վիճ. ծառայություն, Երևան, 2003:

[15] Արդյունաբերություն 1990-1997, Վիճակագրական ժողովածու, ՀՀ Ազգ. վիճ. ծառայություն, Երևան, 1999: Արդյունաբերություն 1998-2003, վիճակագրական ժողովածու, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան 2004: Գյուղատնտեսությունը Հայաստանի Հանրապետությունում 1990-1999,

Երրորդ հանրապետության տնտեսական քաղաքականության առանձին հարցերին անդրադարձել են տնտեսագետներ Վ. Խոջաբեկյանը, Հ. Սարգսյանը, Ա. Մարկոսյանը, Մ. Մկրտչյանը, Գ. Ավագյանը, Մ. Գևորգյանը, Թ. Մանասերյանը, Ս. Մելքումյանը, Գ. Կիրակոսյանը, Ս. Դավոյանը, Լ. Անանյանը և ուրիշներ:[16]

Վիճակագրական ժողովածու, ՀՀ Ազգ. վիճ. ծառայություն, Երևան, 2001: Սպառողական շուկան Հայաստանի Հանրապետությունում 1921-2000, Վիճակագրական ժողովածու, Երևան, 2001: Հայաստանի Հանրապետության բնակարանային ֆոնդը և կոմունալ տնտեսությունը 1999, Վիճակագրական վերլուծական ժողովածու, Երևան, 2001: Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 1999, Երևան, 2000: Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2000, Երևան, 2001: Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով՝ 1998-2001, Երևան, 2002, Հայաստան 2001, Վիճակագրական գրքույկ, Երևան, 2001, Հայաստան 2002, Երևան, 2002, Տնտեսական աճն արդարացի բաշխման պայմաններում, Աղքատության կրճատմանն ուղղված տնտեսական քաղաքականության ընտրություն, Երևան, 2002: Տնտեսական աճը, անհավասարությունը և աղքատությունը Հայաստանում, Երևան, 2002: Կրթությունը, աղքատությունը և տնտեսական ակտիվությունը Հայաստանում, Իրավիճակային վերլուծության զեկույց, Երևան, 2002, Հայաստանի ազգային մրցունակության զեկույց 2010, բարձրագույն կրթության մարտահրավերները, Երևան, 2010, Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով՝ 1999-2003, վիճակագրական ժողովածու, Երևան, 2004: Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով 2000-2004թթ. վիճակագրական ժողովածու, Երևան, 2005, Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով 2001-2005թթ., վիճակագրական ժողովածու, Երևան, 2006, Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով 2003-2007թթ. վիճակագրական ժողովածու, Երևան, 2008, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով 2005-2009թթ., վիճակագրական ժողովածու, Երևան, 2010:

[16] Խոջաբեկյան Վ., Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX-XX դարերում, 21-րդ դարի շեմին, Երևան, 2001, նույնի՝ Հայաստանի բնակչությունը և նրա զբաղվածությունը (1828-1978), Երևան, 1979, Հայկական ԽՍՀ բնակչությունը և աշխատանքային ռեսուրսների վերարտադրության արդի հիմնախնդիրները, Երևան, 1976, Ագրարային քաղաքականությունը և բնակչության տեղաշարժերը, Երևան, 1989, Արցախը փորձության ժամին, Երևան, 1991: Ходжабекян В., Асатрян Б., Демографические аспекты урбанизации в Армянской ССР, Ереван, 1991, Սարգսյան Հ., Տնտեսական քաղաքականությունը Հայաստանում, պետության դերը, Երևան, 2001: Մարկոսյան Ա., Սեփականաշնորհման և ապապետականացման գործընթացը, տեսության և պրակտիկայի հարցեր, Երևան, 1995, նույնի՝ Սեփականաշնորհման սերտիֆիկատների մասին, Երևան, 1995, Պետությունը և շուկան, գ. 1-ին, Երևան, 2000, Տնտեսագիտություն բոլորի համար, Երևան, 2001, Հայաստանը 21-րդ դարի մարտահրավերների առջև,

Հատկապես արժեքավոր ուսումնասիրություն է ակադեմիկոս Ա. Աղանբեգյանի խմբագրությամբ լույս տեսած «Տնտեսական վերափոխումներն անցումային շրջանում, տեսություն և արդյունքներ» ժողովածուն, որը հրատարակվել է ՀՀ տնտեսագիտական հետազոտությունների ինստիտուտի և ՀՀ Կառավարությանն առընթեր ժողովրդական տնտեսության ակադեմիայի համատեղ ջանքերով: Գրքում ամփոփված են Հայաստանի և Ռուսաստանի մի շարք տնտեսագետ-գիտնականների հետազոտությունների արդյունքները՝ նվիրված շուկայական տնտեսության անցման շրջանի տեսական, մեթոդական և գործնական առավել հրատապ ու արդիական հիմնախնդիրներին: Հատուկ ուշադրություն է դարձված Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության տնտեսական վերափոխումների առանձնահատկություններին և այդ գործընթացի արդյունքներին:

Անցումային երկրներում, այդ թվում և Հայաստանի Հանրապետությունում իրականացված տնտեսական քաղաքականության էության, առանձնահատկություններին ու բնորոշ գծերին է նվիրված Ս. Դավոյանի, Ա. Մարկոսյանի և Հ. Սարգսյանի հեղինակած «Վերափոխումները անցումային երկրների տնտեսություններում» աշխատությունը: Այստեղ տնտեսության իրական հատվածի և այլ ոլորտների հիմնական արդյունքների վերլուծության հետ առաջարկվում են նաև իրավիճակի բարելավմանն ուղղված հայեցակարգային լուծումներ:

Երևան, 2004, Տնտեսական անվտանգության հիմնախնդիրները, Երևան, 2005, Մարկոսյան Ա., Սաֆարյան Ռ., Շուկայական տնտեսության հիմունքները, Երևան, 2002, Մարկոսյան Ա., Մաթևոսյան է., Պետությունը և ձեռնարկատիրությունը, Երևան, 2005, Аналитический журнал, "Рынок капитала в Армении", № 7,8 (65,66), Երևան, 2001: Կիրակոսյան Գ., Անցումային տնտեսության վերափոխումները, տեսության հարցեր, Երևան, 2002: Դավոյան Մ., Մարկոսյան Ս., Սարգսյան Հ., Վերափոխումները անցումային երկրների տնտեսություններում, Երևան, 2003, Անանյան Լ., Տնտեսական պատմության ուրվագծեր, Երևան, 2003, Ավագյան Գ., Հայաստանի տնտեսությունը, անցած ուղին, այսօրը և զարգացման ուրվագիծը, Երևան, 1998: Մանասերյան Թ., Նոր տնտեսական քաղաքականության ուրվագծեր, Երևան, 2000, Մելքումյան Ս., Հայաստանի Հանրապետության արտաքին տնտեսական կապերը, Երևան, 2002:

Արժեքավոր ռաումնասիրություն է նաև Գ. Կիրակոսյանի «Անցումային տնտեսության վերափոխումները, տեսության հարցեր» ուսումնասիրությունը, որտեղ նույնպես անցումային փուլում գտնվող երկրների զարգացման արդյունքների վերլուծության հետ մեկտեղ ցույց է տրվում Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման ներկա վիճակը և նշվում հեռանկարային զարգացման միտումները:

Ուսումնասիրվող հարցերի քննարկման տեսանկյունից մեծ հետաքրքրություն է ներկայացնում Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոնի կողմից հրատարակված «Հայաստան 2020. զարգացման և անվտանգության ռազմավարություն» աշխատությունը, որտեղ փորձ է արվում ի մի բերելու հասարակական կյանքի ամենատարբեր ոլորտների վերաբերյալ տնտեսագիտական սկզբունքային մոտեցումները, որոնք կարող են դառնալ հանրապետության զարգացման ռազմավարության հիմքը: Ներկայացված են երկրի սոցիալ-տնտեսական անվտանգության ապահովման անհրաժեշտ նախադրյալները: Ա. Մարկոսյանի աշխատությունների մի մասը վերաբերում են արդյունաբերության ոլորտի վերափոխումներին: Նրա «Հայաստանը 21-րդ դարի մարտահրավերների առջև» ստվարածավալ ուսումնասիրության մեջ քննարկվում են ՀՀ անկախ պետականության կայացման նպատակով ձեռնարկված տնտեսական միջոցառումները, շուկայական վերափոխումների հիմնական ուղղություններն ու դրանց իրականացման գաղափարական ակունքները, բնակչության սոցիալական վիճակն ու հանրապետության հասարակական-քաղաքական կյանքը: Հ. Ֆահրադյանի, Հ. Մամիկոնյանի, Ա.Մարկոսյանի, Ն.Գեղամյանի, Լ.Զաքարյանի, Ն.Մանասերյանի և Մ. Գաբրիելյանի աշխատություններում քննարկվում են ագրարային վերափոխումներին վերաբերող առանձին հարցեր:[17] Հայաստանի

[17] Ֆահրադյան Հ., Ագրարային արմատական վերակառուցումներ Հայաստանի Հանրապետությունում. անհրաժեշտություն, արդյունքներ, հիմնախնդիրներ, Երևան, 2003: Մամիկոնյան Հ., ՀՀ գյուղատնտեսական արտադրության զարգացման հիմնախնդիրները, Երևան, 1997: Գաբրիելյան Մ., Հայաստանի Հանրապետության արդի գյուղացիությունը, Երևան, 2001: Մարկոսյան Ա., Գեղամյան Ն., Սոցիալական քաղաքականության պետական

երրորդ Հանրապետության ներքաղաքական կյանքին, հատկապես գիտակրթական և ագրարային վերափոխումներին են վերաբերվում պատմական գիտությունների թեկնածուներ՝ Ս.Չափարյանի, Մ.Գևորգյանի և Լ.Մկրտչյանի, Է.Մինասյանի ղեկավարությամբ պաշտպանած ատենախոսությունները[18]: Հանրապետության սոցիալական ոլորտին առնչվող մի խումբ հարցեր են արծարծված Ն. Մարգարյանի, Մ. Գաբրիելյանի, Ա. Մելքումյանի, Հ. Խառատյանի հեղինակած աշխատություններում:[19]

Անցումային տնտեսության և Ռուսաստանի սոցիալ-տնտեսական զարգացումների հիմնահարցերին են նվիրված մի խումբ ռուս գիտնականների հեղինակած աշխատությունները:[20]

կարգավորման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում, Երևան, 2006: Մանասերյան Ն., Ագրարային հարցը երեկ և այսօր, Երևան, 2005: Զաքարյան Լ., Խորհրդահայ գյուղի մայրամուտը, Երևան, 2007: Սարգսյան Հ., Հարությունյան Խ., Մանասյան Վ., Ագրարային հատվածի և գյուղի կայուն զարգացման սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները, Երևան, 2011:

[18] Չափարյան Ս., Գիտությունը Հայաստանում 1990-ական թվականներին, Ատենախոսություն պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար, Երևան 2010, Գևորգյան Մ., Ագրարային վերափոխումները ՀՀ-ում 1991-2000թթ., Ատենախոսություն պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար, Երևան, 2011, Մկրտչյան Լ., Կրթական վերափոխումների գործընթացը Հայաստանի Հանրապետությունում 1991-2005թթ., Ատենախոսություն պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար, Երևան, 2012:

[19] Մարգարյան Ն., Մարդու իրավունքների պաշտպանությունը և ժողովրդական արժեքների դերը աղքատության հաղթահարման գործում, Երևան, 2001: Գաբրիելյան Մ., Աղքատության հաղթահարման ուղիները գյուղում և քաղաքում, Երևան, 2001: Թադևոսյան Ա., Աղքատության համակարգային հիմքերը և հաղթահարման ուղիները Հայաստանում, Երևան, 2001: Մելքումյան Ա., Աշխատանքի շուկայի ձևավորման և զբաղվածության հիմնախնդիրներն ու աղքատության հաղթահարման ՀՀ ռազմավարությունը, Երևան, 2002: Արտագաղթը Հայաստանից (խմբ. Հ. Խառատյանի), հեղինակային հրատարակություն, Երևան, 2003:

[20] Курс переходной экономики (под редакцией академика Л.И. Абалкина), Москва, 1997. Манов В., Реформы в пост-социалистическом обществе, Москва, 2000. Социальная политика: Учебник (под общ. ред. Н.А. Волгина), М,, 2002. Серова Е., Хромова И., Карлова Н., Тихонова Т., Аграрная реформа в странах с переходной экономикой, Москва, 2000. Новая Евразия: Россия и страны ближнего зарубежья, сборник статей 11, (под редакцией Е.М. Кожокина), Москва, 2001. Иванов Э., Армения: особенности экономических отношений с Россией и перспективы их развития, Москва, 2001. Ильин С, БабановА.,

Հանրապետությունում հրատարակվել են Հայաստանի անկախ պետականության կայացման սկզբնական շրջանի գործընթացին վերաբերվող առանձին ուսումնասիրություններ, որոնցից են Հ. Բագրատյանի, Ժ.Լիպարիտյանի և Կ.Սարդարյանի աշխատությունները[21]:

Երրորդ հանրապետության ներքաղաքական կյանքի վերաբերյալ քննադատական մոտեցումներ են պարունակում լրագրողական, հրապարակախոսական մի շարք աշխատություններ[22]:

Հանրապետության հասարակական-քաղաքական կյանքի լուսաբանման առումով որոշակի գիտական արժեք են ներկայացնում պետական և հասարակական տարբեր մակարդակների գիտահետազոտական հաստատությունների, կազմակերպությունների կողմից հրատարակված, գործնականում նաև աբյուրագիտական նշանակություն ունեցող բազմաթիվ ուսումնասիրություններ ու քաղաքական հրապարակումներ[23]: Դրանցից կարելի է առանձ-

---

Крестьянское (фермерское) хозяйство и рынок, Москва, 1995. Аграрная политика в развивающихся странах Азии и Африки, Москва, 1975. Казакевич В., Аграрный вопрос в Южной Корее, Москва, 1964. Реструктуризация промышленности в европейских странах с переходной экономикой (накопленный опыт и перспективы), Москва, 2002:

[21] Բագրատյան Հ., Հայաստանը դարերի սահմանագծին, Երևան, 2003, Հայաստան 1998-2007, խմբագիր՝ Վարդանյան Ա., Երևան, 2008, Լիպարիտյան Ժ., Պետականության մարտահրավերը, հայ քաղաքական միտքը անկախությունից ի վեր, Երևան, 1999, Սարդարյան Կ., Պետական սկիզբ և ազգային շարունակություն, Երևան, 1999:

[22] Григорян В., История Армянского бесовства, Ереван, 2002: Հովսեփյան Ս., ՀՀՇ-ն և հայ ժողովրդի մեծ ողբերգությունը, Երևան, 2002, Դռնոյան Լ., Երրորդ Հանրապետության ողբերգությունը և աստեղային ժամը, Երևան, 2002:

[23] 1992թ. Հայաստանի Հանրապետության հասարակական-քաղաքական կազմակերպությունները, «Դեմոկրատիա» միություն, Երևան, 1996, Հայաստանը կայուն մարդկային զարգացման հայեցակարգի տեսանկյունից: Հասարակական կազմակերպությունների գնահատականը «Հանուն մարդկային հասարակության կայուն զարգացման» ասոցիացիա «Ռիո+5», Երևան, 1997: Հայաստանի զանգվածային լրատվության միջոցները: Գնահատականներ և ինքնագնահատականներ «Թիմ» հասարակական կազմակերպություն, Երևան, 1997: Հայաստանը և կենտրոնը, Ռազմավարական և ազգային հետազոտությունների կենտրոն, Երևան, 1999: Հայաստանի ազգությունները, Կոնֆլիկտների լուծման Հայաստանի կենտրոն, Հայաս-

նացնել քաղաքացիական և սոցիալական զարգացման հիմնադրամի հրատարակած «Հայաստանի Հանրապետության քաղաքական կուսակցություններ: 2007թ.տեղեկագիրը», «ՀՀ գերագույն խորհրդի 1990-1995 թթ»., և ՀՀ Ազգային ժողովի 1996 թվականից սկսած բոլոր գումարումներին նվիրված տեղեկատու գրքույկներ, ինչպես նաև ՀՀ հասարակական, քաղաքական կազմակերպությունների, զանգվածային լրատվամիջոցների գործունեությունն ներկայացնող ուսումնասիրությունները:

Հանրապետության հասարակական քաղաքական կյանքը վերլուծված է մի շարք աշխատություններում, որոնցից կարևորվում են Գ.Պողոսյանի, Տ.Թորոսյանի, Գ.Քեռյանի, Հ.Աբրահամյանի, Պ.Հայրիկյանի և այլոց աշխատությունները[24]: Նրանցում վերլուծ-

---

տանի Ազգությունների միություն, Երևան, 2000: Հայաստանի զարգացման ուրվագծեր, Սեմինարի նյութեր, նոյեմբեր 2000թ.- մարտ 2002թ., «Գերագույն խորհրդի պատգամավորական ակումբ», Երևան: 2002թ., Խորհրդարանական ընտրություններ, լրատվամիջոցների Կովկասյան ինստիտուտ, Հայաստան, 2003, Նախագահական ընտրություններ, լրատվամիջոցների Կովկասյան ինստիտուտ, Հայաստան 2003: Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը 1990-1995, Երևան, 1995, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով 1996, Երևան, 1996, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով: Երկրորդ գումարում, Երևան, 2001: Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի երրորդ գումարում, Երևան, 2004, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի չորրորդ գումարում, Երևան, 2007, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հինգերորդ գումարում, Երևան, 2012, «Հայաստանի Հանրապետության քաղաքական կուսակցություններ»: Տեղեկագիր, Քաղաքացիական և սոցիալական զարգացման հիմնադրամ, խմբ. Ս. Մխիթարյան, Մ. Անուշյան և ուրիշներ, Երևան, 2007: Հայաստան-Թուրքիա. բաց խոսակցություն, Հասարակական երկխոսություն և զարգացումների կենտրոն, Երևան, 2005, Հայաստանը փոխակերպվող աշխարհում, Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոն, Երևան, 2006:

[24] Պողոսյան Գ., Հայ հասարակությունը 21-րդ դարասկզբին, Երևան, 2006: Թորոսյան Տ., Հասարակական համակարգի հետխորհրդային տրանսֆորմացիա, Երևան, 2006: Քեռյան Գ., Հայաստանի երրորդ հանրապետության կուսակցության համակարգը և քաղաքական կուսակցությունները, Երևան, 1996, նույնի Քաղաքական կուսակցությունների տիպաբանությունը, Երևան, 2002: Հայրիկյան Պ., Անկախության ճանապարհի երեք վավերագրեր, Երևան, 1997, նույնի Սեպտեմբեր, Երևան, 1997, Ժողովրդավարությունը խոսքով և գործով, Երևան, 2002: Աբրահամյան Հ., Խորհրդային և հետխորհրդային հասարակությունը, Երևան, 2011, նույնի Ժողովրդավարությունը և քաղաքական կուսակցությունները, Երևան, 2009:

ված են նախագահական և խորհրդարանական ընտրությունները, դրանց արդյունքները, քաղաքական կուսակցությունների գործունեությունը, արված են անհրաժեշտ եզրակացություններ:

Հայաստանի երրորդ Հանրապետության բանակաշինության հիմնախնդիրների ուսումնասիրության ոլորտում սկզբնաղբյուրի նշանակություն ունեն ՀՀ պաշտպանական բարեփոխումների նյութերը, ՀՀ ռազմական դոկտրինի, ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության փաստաթղթերը, ՀՀ նախագահների և պաշտպանության նախարարների ելույթները, հրամանագրերը, պաշտպանության ոլորտի վերաբերյալ հարցազրույցները, ՀՀ զինված ուժերի անձնակազմին ուղղված պաշտպանության նախարարի ուղերձերը, պաշտպանության ոլորտի օրենքներն ու օրենսդրական ակտերը, որոնք ներկայացված են նաև «Հայկական բանակ» ամսագրի՝ 1995 թվականից հրատարակված տարեկան չորս համարներում:[25]

Այս ոլորտում իրականացրած բարեփոխումների և հայոց ազգային բանակի կազմավորման ու կայացման, նրա մարտական, հերոսական ուղին և բանակ-հասարակության կապի խնդիրներն են ներկայացված ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի «21-րդ դարի բանակը» (Երևան, 2007) և «Հայկական բանակի 20-ամյա տարեգրությունը» (Երևան, 2012) արժեքավոր աշխատություններում: Աշխատությունները ընթերցողին ամփոփ պատկերացում են տալիս հայկական բանակի այսօրվա նվաճումների հզորացման և հեռանկարի մասին:

Հայաստանի երրորդ Հանրապետության միջազգային դրության, արտերկրի հետ հարաբերությունների ձևավորման ու զարգացման, արտաքին քաղաքականության ուսումնասիրության առումով կարևոր սկզբնաղբյուրներ են դիվանագիտական բնույթի փաստաթղթերի ժողովածուները, որոնցից կարելի է առանձնացնել 2002թ. Երևանում հրատարակված ՀՀ միջազգային պայմանագրե-

[25] Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրին, Երևան, 2007, ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն, Հայկական բանակ, N1, Երևան, 2007, Հայկական բանակ, 1995թ., N1-ից մինչև 2012թ., N4 համարները:

րի ժողովածուների երեք հատորները, ինչպես նաև ԱՊՀ-ի և ՄԱԿ-ի շրջանակներում կնքված պայմանագրերի ժողովածուները, ՀՀ Արտգործնախարարության ամենամյա հաշվետվությունները ու նույն նախարարության 1999թ. հրապարակած «Դիվանագիտական ծառայությունը Հայաստանում» աշխատությունը, ինչպես նաև ՀՀ Ազգային ժողովի հրատարակած «Հայ-թուրքական հարաբերություններ». հիմնախնդիրներ և հեռանկարներ, խորհրդարանական լսումներ, 19-20 դեկտեմբերի, 2007թ. (Երևան, 2011) գիտական զեկուցումների և փաստաթղթերի ժողովածուն:[26] Հիմնախնդրի ուսումնասիրման տեսակետից արժեքավոր են ՀՀ արտգործնախարարներ Վ.Փափազյանի, Վ.Օսկանյանի, պատմաբան Ս.Մելիքյանի, արևելագետներ Վ.Բայբուրդյանի, Ն.Հովհաննիսյանի, Ռ.Սաֆրաստյանի, Հ.Չաքրյանի, Գ.Բադալյանի և այլոց ուսումնասիրություններն ու աշխատությունները:[27]

---

[26] Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի ժողովածու 1991-1995թթ., Երևան, 2002: Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի ժողովածու 1996-1998թթ., Երևան, 2002: Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի ժողովածու 1999-2001թթ., Երևան, 2002: Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի ժողովածու. Անկախ Պետությունների Համագործակցության շրջանակներում կնքված պայմանագրեր, Երևան, 2004, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի ժողովածու. Միավորված ազգերի կազմակերպության շրջանակներում կնքված պայմանագրեր, Երևան, 2004, «Դիվանագիտական բանբեր», Վենետիկ, 1993:

[27] Փափազյան Վ., ՀՀ արտաքին քաղաքականության հիմնական ուղղություններն ու գերակայությունները, տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 18 սեպտեմբերի, 1996, էջ 3-5: Օսկանյան Վ., Անավարտ տասնամյակ. ելույթների ընտրանի, Երևան, 2009, նույնի Անկախության ճանապարհով, Երևան, 2013: Մելիքյան Ս., Հայաստանի Հանրապետություն-Ամերիկայի Միացյալ Նահանգներ հարաբերությունները 1991-2000թթ., Երևան, 2010, Հովհաննիսյան Ն., Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունը Անդրկովկասյան-Մերձարևելյան աշխարհաքաղաքական տարածաշրջանում, Երևան, 1998, Սաֆրաստյան Ռ., Հնարավոր չէ 21-րդ դարում պատնեշներ ստեղծել հարևանների միջև, Երևան, 2003, Չաքրյան Հ., Ղարաբաղյան հիմնահարցը հայ-թուրքական հարաբերությունների համատեքստում, Երևան, 1998: Բայբուրդյան Վ., Իրանն այսօր, Երևան, 1999: Բադալյան Գ., Հայաստան-Իրան հարաբերությունները 20 տարեկան են, Երևան-Թեհրան, 2012:

Հայաստանի երրորդ Հանրապետության երկրորդ հիմնահարցին՝ ՀՀ արտաքին քաղաքականությանն ու միջազգային հարաբերությունների ոլորտին են անդրադարձել պ.գ.թեկնածուներ Վ.Ագլյանը, Տ. Բալյանը, Ա.Շահնազարյանը, Մ.Սողոմոնյանը, Ա.Կարապետյանը, Ց.Մալխասյանը, Ա.Անանյանը, Լ.Մալեքյանը, Տ.Մարտիրոսյանը, Ս.Մելիքյանը, Վ.Սարգսյանը, Հ.Սարգսյանը, Խ.Ադումյանը, Ա.Ջաքարյանը, Է.Գևորգյանը, Ռ.Կարապետյանը, Ժ. Մանուկյանը և պ.գ.դ. Վ.Տողանյանը իրենց պաշտպանած ատենախոսություններում: Նրանցում քննարկվում են ՀՀ հարաբերությունները Ռուսաստանի Դաշնության, Ֆրանսիայի, ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, ԱՊՀ-ի, Հունաստանի հետ, ինչպես նաև Ղարաբաղյան հիմնահարցը միջազգային դիվանագիտության մեջ և Հայոց ցեղասպանության գործոնը հայ-թուրքական հարաբերություններում:[28]

---

[28] Ագլյան Վ., Ղարաբաղյան ու տարածաշրջանային մյուս զինված հակամարտությունները Անդրկովկասում և Ռուսաստանի Դաշնությունը (1991-1994թթ.) ատենախոսություն պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար, Երևան, 2001: Բալյան Տ., Ղարաբաղյան հիմնահարցը և միջազգային դիվանագիտությունը 1991-1994թթ., ատենախոսություն պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար, Երևան, 2002: Շահնազարյան Ա., Հայ-վրացական հարաբերությունները հետխորհրդային շրջանում (1991-1999թթ.). ատենախոսություն պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար, Երևան, 2002: Կարապետյան Ս., Հայ-հունական հարաբերությունները 1991-1998թթ., ատենախոսություն պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար, Երևան, 2004: Մալխասյան Ց., Հայ-ֆրանսիական հարաբերությունները 1991-2001 թվականներին, ատենախոսություն պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար, Երևան, 2004: Անանյան Ա., Հայոց ցեղասպանության գործոնը հայ-թուրքական հարաբերություններում (1991-2004թթ.), ատենախոսություն պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար, Երևան, 2005: Մալեքյան Լ., Հայ-իրանական պատմամշակութային կապերն արդի էտապում, ատենախոսություն պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար, Երևան, 2005: Մարտիրոսյան Տ., Հայաստանի Հանրապետության տարածաշրջանային քաղաքականության ու ռազմավարության ձևավորման գործընթացը 1991-2002թթ., ատենախոսություն պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար, Երևան, 2006: Մելիքյան Ս., Հայաստանի Հանրապետություն - Ամերիկայի Միացյալ Նահանգներ հարաբերությունները 1991-2000 թթ., ատենախոսություն պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման

Այս վերջին հիմնահարցին, ինչպես նաև ՀՀ ժողովրդագրության և ներքին քաղաքականության այլ հիմնախնդիրներին է անդրադարձել նաև ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա.Մելքոնյանը իր «Հայոց պատմության դասերն ու պատգամները» (Երևան 2013թ.) արժեքավոր ու արդիական աշխատության մեջ: ՀՀ արտաքին քաղաքականության որոշ հիմնահարցերի և հատկապես հայոց ցեղասպանության հիմնախնդիրներին է անդրադարձել նաև Է.Մինասյանը իր մի շարք հոդվածներում և պատմական գիտությունների դոկտոր Լ.Քարսեղյանը իր աշխատություններում:[29]

համար, Երևան, 2007: Արշակյան Գ., Թուրքիայի քաղաքականությունը հարավային Կովկասում 1991-2001թթ., ատենախոսություն պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար, Երևան, 2008, Սարգսյան Վ., Սամցխե-Ջավախք-Թռեխքը Հայաստանի Հանրապետություն-Վրաստան հարաբերությունների համատեքստում (1980-ական թթ. վերջ - 2003թ.), պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Երևան, 2010, Սողոմոնյան Մ., Հայ-բրիտանական հարաբերությունները 1991-2000թթ., ատենախոսություն պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար, Երևան, 2007, Սարգսյան Հ., Հայաստանի Հանրապետության և Մեծ Բրիտանիայի միջպետական հարաբերությունները 1991-2005թթ., ատենախոսություն, պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար, Երևան, 2010, Ադումյան Խ., Հայաստանը և եվրոպական ու տարածաշրջանային ինտեգրումը (1992-2003թթ.), ատենախոսություն, պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար, Երևան, 2006, Ջաքարյան Ա., Հայ-հնդկական հարաբերությունները 1991-2008թթ., ատենախոսություն պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար, Երևան 2010, Գևորգյան Է., Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ուկրաինայի հետ 1991-2008թթ., ատենախոսություն, պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար, Երևան 2012: Տողանյան Վ., ԱՊՀ կազմավորումը և հայ-ռուսական հարաբերությունները (1991-1995թթ.), ատենախոսություն պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար, Երևան, 1996: Մանուկյան Ժ., Հայաստանի Հանրապետությունը ԱՊՀ ռազմաքաղաքական և սոցիալ-տնտեսական ոլորտներում (1995-2001թթ.), ատենախոսություն պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար, Երևան, 2006, Կարապետյան Ռ., Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Վրաստանի հետ 1998-2008թթ., ատենախոսություն պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար, Երևան 2012:

[29] Մինասյան Է., Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացները վերջին չորս տասնամյակում, Մեծ եղեռն-90, Հանրապետական

Հայաստանի Հանրապետության ինչպես ներքին սոցիալ-տնտեսական, այնպես էլ արտաքին քաղաքականության շատ հիմնահարցերի ուսումնասիրության համար լավագույն սկզբնաղբյուր կարող է հանդիսանալ «ՀՀ պատմության ամփոփ ժամանակագրություն» (ներքին, սոցիալ-տնտեսական և արտաքին քաղաքականություն 1996, 1997, 1998, 1999, 2000թթ.), Երևան, 2002, 5 հատորանի գրքույկները:

Արցախի ազատագրական պայքարի բազմակողմանի քննությունն ու ընդհանրացումը ևս կարևոր նշանակություն ունի ներառնկախ Հայաստանի պետականության հաստատման ու կայացման հետ կապված շատ խնդիրների լուսաբանման գործում:

Շուրջ քառորդ դար է անցել Արցախյան ազատագրական պայքարի ներագույն շրջանից, սակայն առ այսօր հրապարակի վրա չկան հատկապես օտարալեզու ամբողջական ուսումնասիրություններ, որտեղ քննության առնված լինեն Արցախյան ներօրյա ազատամարտի՝ 1988 թվականից սկսած բոլոր փուլերն ու առանձնահատկությունները, հաղթական ճակատամարտերի դերն ու նշանակությունը, ռազմական գործողությունները, հայերի հերոսական պայքարի առանձին կողմերը, 1994 թ. զինադադարի հաստատումը, համահայկական զորակցությունը Արցախին, ինչպես նաև՝ միջազգային հանրության ջանքերը արցախյան հիմնախնդրի քաղաքական կարգավորման ուղղությամբ: Մինչ այսօր չկա նաև օտարալեզու ամբողջական ուսումնասիրություն, որը

գիտական նստաշրջանի նյութեր, Գյումրի, 2005, էջ 66-74, նույնի՝ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը, Հայոց մեծ եղեռն 90, հոդվածների ժողովածու, Երևան 2005, էջ 285-301, Հայոց ցեղասպանության ճանաչման միջազգային նոր փուլի առանձնահատկությունները, «Պատմություն և մշակույթ», հայագիտական հանդես, Ա, Երևան, 2011, էջ 323-331, Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության հարաբերությունները (1991-2001թթ.), «Պատմություն և մշակույթ», հայագիտական հանդես, Ա, Երևան, 2011, էջ 3-22, Բարսեղյան Լ., Միջազգային հանրությունը դատապարտում է հայոց ցեղասպանությունը, Երևան, 1998, նույնի Ֆրանսիան հայոց ցեղասպանությունը օրենսդրությամբ ճանաչած առաջին պետությունն է աշխարհում, Երևան, 2002, Տարեգրություն հայոց ցեղասպանության պաշտոնական դատապարտման և ճանաչման (1915-2000թթ.), Երևան, 2004:

ննվիրված լինի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության հռչակմանը, պետականության ամրապնդմանը, ինչպես նաև ԼՂՀ կայացման գործընթացին, նրա ներքին ու արտաքին քաղաքականության բազմակողմանի վերլուծությանը:

Արցախյան (1988-2012 թթ.) հիմնախնդրի ուսումնասիրության վերաբերյալ հրապարակի վրա եղած գրականությունը, ուսումնասիրությունները կարելի է բաժանել մի քանի մասերի. *առաջին՝* Արցախյան շարժման վերաբերյալ եղած ուսումնասիրություններ, *երկրորդ՝* Ղարաբաղա-ադրբեջանական 1991-94 թթ. պատերազմի ռազմական գործողությունների վերաբերյալ հետազոտություններ, *երրորդ՝* Արցախյան հարցի միջազգայնացման ու միջազգային հարաբերությունների ոլորտում նրա քննարկումների մասին եղած փաստաթղթեր ու ուսումնասիրություններ, *չորրորդ՝* Արցախյան անկախ պետականության (ԼՂՀ) հռչակման, պետականության կայացման, նրա ներքին ու արտաքին քաղաքականության վերլուծության վերաբերյալ եղած ուսումնասիրություններ:

Առաջին մասի վերաբերյալ հարապարակի վրա կան Ղարաբաղյան հիմնախնդրին նվիրված բազմաթիվ աշխատություններ, վիճակագրական և փաստագրական ժողովածուներ, օրագրություններ, կինովավերագրեր, գիրք-հուշամատյաններ, տարեգրություններ և այլն, որոնք կարևոր դեր են խաղացել անհրաժեշտ եզրակացություններ անելու համար [30]:

Շարժման հենց սկզբից Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում տպագրվել են փաստաթղթերի և վավերագրերի ժողովածուներ[31], որոնցում շոշափված են արցախյան հիմնախնդրին

---

[30] Нагорный Карабах в девятой пятилетке, Степанакерт, 1976, Народное хозяйство Азербайджанской ССР в 1984 году, Баку, 1985 և այլն: Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն (1991 թ. օգոստոս-1992 թ. հունվար) փաստաթղթեր, կազմող պատմ. գիտությունների դոկտոր Հրանտ Աբրահամյան, Երևան, 2011: Հայության պայքարը ԼՂԻՄ-ը Խորհրդային Հայաստանի հետ միավորելու համար (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), կազմողներ Կ. Խաչատրյան, Հ. Աբրահամյան, Երևան, 2011: Арцах-Карабах, библография на русском языке (1988-2010 гг.), Составители Симонян А., Бабаян Э., Ереван, 2011.

[31] Թովմասյան Վ., Աթաջանյան Վ., Ներսիսյան Յու., Ղարաբաղյան հարց, Ստեփանակերտ, 1991, Մեղադրվում են, Երևան 1989, Нагорный Карабах в 1918-1923 гг., Нагорный Карабах, весна-осень 1990, Документы и материалы,

առնչվող բազմաթիվ հարցեր: Հապշտապ կազմված այդ ժողովածուները չնայած ժամանակին էական դեր են խաղացել Արցախ-Ղարաբաղի հիմնախնդիրը ճիշտ հասկանալու համար, զերծ չեն մի շարք թերություններից: Այդ ժողովածուներից դուրս են մնացել Արցախի հիմնախնդրին վերաբերող բազմաթիվ փաստաթղթեր՝ սկսած 1920-ական թվականներից մինչև 1980-ական թվականները: 1988 թ. ՀԽՍՀ Գիտությունների ակադեմիան ակադեմիկոս Գ. Գալոյանի և Կ. Խուդավերդյանի խմբագրությամբ հրատարակեց «Լեռնային Ղարաբաղ» պատմական տեղեկանքը,[32] որտեղ հավաստի սկզբնաղբյուրների և վավերագրերի հիման վրա տրված է Արցախի համառոտ պատմությունը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը: Նրանում հիմնավորված է արցախյան հիմնախնդիրն ազգերի ինքնորոշման իրավունքի հիման վրա լուծելու անհրաժեշտությունը: Աղբյուրագիտական առանձնակի նշանակություն ունի Վահան Հարությունյանի կազմած ժամանակագրական ստվարածավալ ժողովածուն[33], որը բաղկացած է 6 մասից և նրանում ընդգրկված են 1988-1997 թթ. Արցախի հիմնախնդրի վերաբերյալ մամուլում հրապարակված բազմաթիվ նյութեր ու մեկնաբանություններ:

Արցախյան շարժման վերաբերյալ բազմաթիվ գրքերով ու հոդվածներով հանդես է եկել Բագրատ Ուլուբաբյանը, ով զգալի ներդրում ունի Ղարաբաղյան հիմնախնդրի բարձրացման հարցում: Նրա «Արցախյան գոյապայքարը» (Երևան, 1994), «Արցախյան գոյապայքարի տարեգրություն» (Երևան, 1997) և մամուլում տպագրած տասնյակ հոդվածներն ու հրապարակումները կարևոր ու խիստ անհրաժեշտ ուսումնասիրություններ են, նաև ականատես-

---

Ереван, 1990, Статус Нагорного Карабаха в политико-правовых документах и материалах, Ереван, 1995: Азербайджанская аргументация и ее опровержение, Ереван, 1989. Нагорный Карабах и вокруг него. Глазами независимых наблюдателей, Ереван, 1991. Чальян М., Освещение Арцахского движения в армянской англоязычной прессе США (февраль 1988-август 1990 гг.), Ереван, 2006, Составитель Агабабян А.С., Всесоюзные газеты о проблеме Нагорного Карабаха, библиография на русском языке (1988-1991 гг.), Ереван, 2010.

[32] Нагорный Карабах. Историческая справка, Ереван, 1988.

[33] Арутюнян В. Б., События в Нагорном Карабахе, ч. 1-6, Ереван, 1990-1997.

ների վկայություններ, դեպքերի ու իրադարձությունների վերլուծություններ, ընդհանրացումներ և գնահատականներ: Բ. Ուլուբաբյանի գրքերը սկզբնավորելով Արցախյան շարժման ուսումնասիրությունը՝ համակարգված ու ընդհանրացված տեղեկություններ են հաղորդում խնդրո առարկա թեմայի մասին: Սակայն նրանցում հպանցիկ են ներկայացված պատերազմական գործողությունները: Մեծ է գրող-հրապարակախոս Զորի Բալայանի դերը, ում գրքերն ու հոդվածները, չնայած ունեն ավելի շատ քաղաքական-հրապարակախոսական, քան պատմագիտական ուղղվածություն, բայց օրագրային գրառումների, վավերագրական ակնարկների ու գծանկարների մի յուրօրինակ հավաքածու են, որոնք նոր շունչ են տվել արցախյան պայքարին ու էական դեր խաղացել Արցախ-Ղարաբաղի հիմնախնդրի միջազգայնացման գործում[34]: Տարեգիր-հրապարակախոսների այս շարքը լրացնում է Բակուր Կարապետյանը ոչ միայն գրքով ու հոդվածներով, այլև փաստավավերագրական նկարահանումներով[35]: Նա առաջիններից մեկն էր, որ փորձեց վեր հանել Արցախի հիմնախնդիրը և նկարագրել պայքարի սկզբի իրադարձությունները: Արցախյան հիմնահարցը միջազգային իրավունքի տեսանկյունից դիտարկելու ուղղությամբ առաջին լուրջ փորձն արեց Յու. Բարսեղովը[36]: Նրա ուսումնասիրություններում բերված կարևոր փաստարկներն ու հիմնավորումներն անվիճելի են դարձնում, որ Արցախի հիմնահարցի արդարացի լուծմանը կարելի է հասնել ազգերի ազատ ինքնորոշման իրավունքի համաձայն: Արցախյան շարժման 1988-89թթ. շրջափուլի առաջին ուսումնասիրողներից է Վլադիմիր Գրիգորյանը: Սակայն նա ամեն կերպ փորձել է գերագնահատել Արցախյան ազատամարտում «Հայոց համազգային շարժում» կազմակերպության դերը,

---

[34] Բալայան Զ., Դժոխք և դրախտ, Երևան, 1995, նույնի՝ Բժիշկ Մարությանը և նրա «Պատերազմի հետքը երկար է մնում», Երևան, 1999 և այլն:

[35] Կարապետյան Բ., Եվ նրա շուրջ, Երևան, 1990, նույնի՝ Անգլուհու արցախյան ողիսականը, Երևան, 1994:

[36] Барсегов Ю. Народ Нагорного Карабаха-субъект права на самоопределение, Москва, 1993. Բարսեղով Յու., Ինքնորոշման իրավունքը ազգամիջյան պրոբլեմների դեմոկրատական լուծման հիմքն է, Երևան, 1990:

ինչի հետ չենք կարող համաձայնել[37]: Արցախյան գոյապայքարի արդարացիությունը գիտականորեն հիմնավորող առաջին հեղինակներից է նաև ակադեմիկոս Վլադիմիր Խոջաբեկյանը[38]: Նրա գրքում կարևոր տեղ է հատկացված Ադրբեջանական ԽՍՀ հայ բնակչության նկատմամբ իրագործված բռնագաղթի ու սպանդի, ինչպես նաև Հայաստանից ադրբեջանցիների արտագաղթի պատճառների բացահայտմանը: Այս ուղղությամբ արժեքավոր ուսումնասիրություններ է կատարել նաև ակադեմիկոս Գրիգոր Ավագյանը: Նա իր գրքում, որն, ըստ էության, արցախյան հիմնահարցին նվիրված նախկինում նրա հրատարակած տարաբնույթ ուսումնասիրությունների ամփոփումն է, ցույց է տվել Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի վրա գործադրած բռնաճնշումների ընթացքը և դրանց բացասական հետևանքները[39]: Վերակառուցումից մինչև անկախություն ընկած ժամանակաշրջանում Հայաստանում տեղի ունեցած իրադարձությունների վերլուծությանն է նվիրված Ռ. Ազիզբեկյանի գիրքը[40], որում լուսաբանված են հայ ժողովրդի 1985-1991 թթ. պատմության շրջադարձային էջերը՝ Արցախ-Ղարաբաղի ազատագրական շարժման ծավալումը և դեպի ազգային անկախ պետականություն տանող դժվարին ուղին: Հեղինակն առանձնահատուկ ուշադրություն է դարձրել արցախյան շարժման ղրղապատճառներին:

Հյուսիսային Արցախի գոյապայքարի պատմությանը նվիրված Կիմ Ղահրամանյանի արժեքավոր աշխատությունը[41] անդրադառնում է ԼՂԻՄ մարզխորհրդի 1988 թ. փետրվարի 20-ի պատմական որոշումից հետո Լեռնային Ղարաբաղում ծավալված իրադարձություններին, որոնք լայն արձագանք գտան Շահումյանի շրջանում և Գետաշենի ենթաշրջանում: Խիկար Բարսեղյանի գրքում զետեղված են մամուլում տպագրված նրա հոդվածները և փաս-

---

[37] Григорян В., Армения 1988-1989, Ереван, 1999:
[38] Խոջաբեկյան Վ., Արցախը փորձության ժամին, Երևան, 1991:
[39] Авакян Г., Нагорный Карабах. Ответ фальсификаторам, Ереван, 1991.
[40] Ազիզբեկյան Ռ., Հայաստանը վերակառուցումից մինչև անկախություն. Համառոտ ակնարկ, Երևան, 1992:
[41] Ղահրամանյան Կ., Հյուսիսային Արցախ, գոյության պայքար, գիրք Բ, Երևան, 1993:

տաքղթերը, վերլուծվել են 1988-1990 թթ. տեղի ունեցած իրադարձությունները և գնահատվել Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրին ներկված բազմաթիվ հարցեր[42]:

Արցախ-Ղարաբաղյան հիմնահարցի ակունքների բացահայտմանն ու վերլուծության, ինչպես նաև Արցախի ամբողջական կամ նրա առանձին ժամանակահատվածների պատմությանն են նվիրված Վահրամ Բալայանի ու Հրանտ Աբրահամյանի մի շարք աշխատություններ,[43] ինչպես նաև Ն. Սարումյանի «Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը 1960-1988 թվականներին», (Երևան, 2008), Ա. Արշակյանի «Արցախյան գոյապայքար (1985-1992 թթ.)», (Երևան, 2004) գրքերը: Նշված հեղինակներն իրենց առջև խնդիր են դրել, հենվելով հիմնականում նորահայտ փաստաթղթերի, վիճակագրական տվյալների, պարբերական մամուլի, ժամանակակիցների հրատարակած և չհրատարակած հուշագրությունների և այլ պատմագիտական նյութերի վրա, ուսումնասիրել և գիտականորեն ընդհանրացնել Արցախի ազատագրական պայքարի նախադրյալների, դրա սկզբնավորման, այդ պայքարի շուրջ Հայաստանի, Արցախի և Սփյուռքի հայության համախմբման, ինչպես նաև պատերազմում հայ ժողովրդի հերոսամարտի և ծանր պայմաններում տարած փայլուն հաղթանակների առաջին փուլի արդյունքները: Հրապարակի վրա են նաև մի շարք այլ հեղինակների աշխատություններ[44] ու հուշագրություններ[45], որոնք աղբյու-

---

[42] Барсегян Х., Истина дороже. К проблеме Нагорного Карабаха-Арцаха, Ереван, 1992.

[43] Բալայան Վ., Արցախի պատմությունը, Երևան, 2002: Աբրահամյան Հ., Արցախյան գոյամարտ, Երևան, 1991, նույնի՝ Երբ հայրենիքը վտանգի մեջ է, Երևան, 1997, Ճակատագրին ընդառաջ, Երևան, 2001, Արցախյան շարժումը և հայ քաղաքական ու հասարակական ուժերը, «Կրթությունը և գիտությունը Արցախում», 1-2, Երևան, 2004, էջ 119-126, նույնի՝ Մարտնչող Արցախը (1985-2000), գիրք Գ, Ստեփանակերտ, 2007: Առուստամով Ս., Ճշմարտությունը Լեռնային Ղարաբաղի մասին (ռուսերեն լեզվով), Երևան, 1999:

[44] Մելքումյան Ս., Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, Երևան, 1997, Մկրտչյան Շ., Արցախ, Երևան, 1991, Հակոբջանյան Ա., Արցախյան ազատամարտի ակունքների մոտ, Երևան, 2001., Մկրտչյան Լ., Արցախ-Ղարաբաղը իր անցյալով և ներկայով, Աթենք, 1988, Բեգլարյան Հ., Արցախ-Նամե. Ղարաբաղյան շարժում, գիրք 3-րդ, Ստեփանակերտ, 2006, Манасян А., Карабахский конфликт: ракурсы правового подхода, Ереван, 1997, Бабаян

րագիտական արժեք ունեն: Ս. Չոբանյանի կազմած փաստավավերագրական ժողովածուն ներկայացնում է արցախահայության նկատմամբ Ադրբեջանում նախապես ծրագրված ու իրագործված վանդալիզմի և հակահայկական ուղղվածության տարաբնույթ դեպքերի բազմաթիվ ապացույցներ[46]:

Ադրբեջանահայության ցեղասպանությանը և բռնագաղթին են նվիրված մի շարք գրքեր ու հրապարակումներ[47], որոնցում բացահայտվել են տեղի հայության նկատմամբ Ադրբեջանի իշխանությունների իրագործած բռնությունները, դաժանություններն ու ջարդերը: Արցախյան խնդրին նվիրված բազմաթիվ գրքեր ու ժողովածուներ են հրատարակվել նաև Ադրբեջանում[48]: Դրանց հեղինակները, առանց բացառության, ենթագիտակցորեն փոխում են պատմական ճշմարտությունը և դեպքերն ու իրադարձությունները ներկայացնում իրենց համար շահեկան կտրվածքով[49]:

Игорь, Воеводский Константин, Карабахский кризис, Санкт-Петербург, 1992, Сахаров А., О Нагорном Карабахе, Ереван, 1996, Золян С., Нагорный Карабах: проблема и конфликт, Ереван, 2002.

[45] Գրիգորյան Գ., Ղարաբաղյան օրագիր (1988-1992), Երևան, 2005, Պետրոսյան Ա., Արթուր Սկրտչեան, Երևան, 2004:

[46] Чобанян С., Государственный терроризм, Геноцид армян 1988-1991 гг., Ереван, 1992.

[47] Մոսեսովա Ի., Հովնանյան Ա., Բաքվի ջարդերը, Երևան, 1992, Մելիք-Շահնազարյան Լ., Ադրբեջանի ռազմական հանցագործությունները Լեռնային Ղարաբաղի Հանրապետության խաղաղ բնակչության դեմ, Երևան, 1988., Кокс Керолайн, Айбнер Джон, Этническая чистка продолжается. Вайна в Нагорном Карабахе, Ереван, 1998., Улубабян Г., Золян С., Аршакян А., Сумгаит... Геноцид...Гластность, Ереван, 1989, Вермишева С., Депортация населения армянских сел НКАО и прилегающих районов: апрель-июнь 1991 года, Ереван, 1995, Заключение комитета Верховного Совета РСФСР по правам человека по итогам слушаний, посвещенных конфликтам в ряде районов Азербайджанской республики и республики Армения (конец апреля-мая 1991 года), Ереван, 1992. Геноцид армян в Азербайджане, Степанакерт, 1998. Анексия и депортация, Степанакерт, 1998. Дневник судебного процесса о преступлениях против армянского населения Сумгаита, Степанакерт, 1998.

[48] Хроника НКАО февраль -1988- февраль 1990, Баку, 1990, Конфликт в Нагорном Карабахе, Баку, 1990, К истории образования Нагорно-Карабахской области Азербайджанской ССР 1918-1925, документы и материалы, Баку, 1989, Алиев И., Нагорный Карабах. История, факты, события, Баку, 1989 և այլն:

[49] Կազմող Ալվրցյան Հ., Ընդդեմ՝ Ադրբեջանի հայատյաց քաղաքականության, Երևան, 2007, Գալչյան Ռ., Հորինված պատմություն, Ադրբեջան և

Երկրորդ մասի՝ 1991-94 թթ. ազատամարտի ռազմական գործողությունները, պաշտպանության բանակի կազմավորման և անցած մարտական ուղու, պատերազմի առանձին դրվագները մի ամբողջության մեջ առաջին անգամ ներկայացրել է Ս. Հասրաթյանը իր «Գոյամարտը, ԼՂՀ պաշտպանության բանակի մարտական ուղու պատմության համառոտ ուղեցույց» (Ստեփանակերտ, 1998), «Ղարաբաղյան պատերազմ» (Երևան, 2001) և «ՊԲ զորատեսակները, ծառայությունները և առաջին ստորաբաժանումները Ղարաբաղյան պատերազմի գլխավոր ռազմագործողություններում» (Ստեփանակերտ, 2010) աշխատություններում: Վերը թվարկած առաջին երկու աշխատություններում պատերազմը ներկայացված է ընդհանուր գծերով: Խոշոր ռազմական գործողությունները վերլուծության չեն ենթարկվել, դրանց անցկացման անհրաժեշտությունը, պատմական նշանակությունը և նման խնդիրներ դուրս են մնացել հեղինակի ուշադրությունից: Հատկապես բանակի կազմավորման գործընթացը ներկայացված է դրվագներով, իսկ ԼՂՀ ԳԽ նախագահության 1992 թ. փետրվարի 24-ի հրամանագիրը՝ ինքնապաշտպանական ուժերի մասին և Պաշտպանության պետական կոմիտեի նախագահի 1993 թ. նոյեմբերի 10-ի հրամանագիրը՝ ԻՊՈՒ-ն ՊԲ-ի (Պաշտպանության բանակի) վերակազմավորելու մասին, վրիպել են նրա ուշադրությունից: Նրա աշխատություններում չի զանազանվում Արցախյան շարժման քաղաքական փուլը պատերազմական փուլից, դեռ ավելին՝ չի ուրվագծվում, թե երբ է սկսվել պատերազմը: Նրա հրատարակած վերջին աշխատության մեջ հանգամանորեն ներկայացված է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության զինված ուժերի անցած մարտական ուղին:

Արցախյան պատերազմի ընթացքի ու Պաշտպանության բանակի կազմավորման, մարտական գործողությունների ու դրանց

Հայաստան. կեղծիքներ ու փաստեր, Երևան, 2010, Ադրբեջանի հակահայկական տեղեկատվական համակարգը, Երևան, 2009, Դահիրամանյան Կ., Արցախ. Խեղաթյուրված և անտեսված հարցեր, Երևան, 2013: Կարևոր նշանակություն ունեցավ ԼՂՀ Ազգային Ժողովը, որն իր մեջ ամփոփում է ամբողջությամբ ԼՂՀ պատմությունը (ռուսերեն, հայերեն, անգլերեն լեզուներով, հրատ. 2009 և 2010 թթ.):

հետ կապված քաղաքական և դիվանագիտական ձեռնարկումների մասին փաստական հարուստ նյութեր կան Վ. Հարությունյանի վերը նշած «Իրադրությունը Լեռնային Ղարաբաղում» ժամանակագրության 4-րդ և 5-րդ մասերում: Սակայն նրա տեղեկությունները ամբողջական չեն: Առանձին մարտական գործողությունների մասին տեղեկություններ է պարունակում Ռազմիկ Պետրոսյանի հուշերի գիրքը[50], որը զերծ չէ թերություններից ու անճշտություններից, մասնավորապես բացակայում է Մարտակերտի ճակատամարտում մարտական գործողությունների ժամանակագրությունը: Շահումյանի շրջանում ընթացող ռազմական գործողությունների, նրա անկման վերլուծությանն ու Շահեն Մեղրյանի հերոսական գործունեությանն է նվիրված Աշոտ Պետրոսյանի «Մեծն Շահեն» (Երևան, 2011 թ.) գիրքը: Ուշագրավ են նաև Ս. Քամալյանի գրքերը[51], մանավանդ Մարտունու շրջանում ընթացած մարտական գործողությունների և այդ ուղղությամբ ստորաբաժանումների կազմավորման ու մարտական ուղու լուսաբանման տեսակետից: Գանձակում 1988 թ. հայերի ինքնապաշտպանության մասին են ականատես Լ. Մելիք-Շահնազարյանի հուշերը[52]: Փաստական հարուստ նյութեր է պարունակում նրա մյուս ծավալուն աշխատությունը[53], ուր դիտարկվում են արցախահայության ազգային-ազատագրական պայքարը ճնշելու՝ Ադրբեջանի որդեգրած բոլոր ձևերն ու եղանակները: Հեղինակը Ադրբեջանի ագրեսիայի սկիզբը համարում է ԼՂՀ-ի հռչակումից հետո (1991 թ. սեպտեմբերի 2): Իրականում ԼՂՀ-ի հռչակումը Ադրբեջանի ագրեսիային դիմադրելու կարևորագույն ձեռնարկումներից էր: Հեղինակի ուշադրությունից վրիպել են Գետաշենի, Մարտունաշենի և մյուս հայկական

---

[50] Պետրոսյան Ռ., Արցախի պաշտպանության դիրքերում, Երևան, 1997, Գրքի լրամշակված տարբերակը Արցախ, պատերազմ, զինադադար, Երևան, 2001:

[51] Камалян С., Карабах на пути к бессмертию, Краснодар, 1994, նույնի՝ Ավոն մեր աչքերով, Երևան, 1994:

[52] Мелик-Шахназарян Л., Гандзак неутраченный мир (воспоминания очевидца), Степанакерт, 1996.

[53] Мелик-Шахназарян Л., Военные преступления Азербайджана против мирного населения Нагорно-Карабахской республики. факты и комментарии, Ереван, 1992.

բնակավայրերի բռնատեղահանության իսկական պատճառները, սոցիալ-քաղաքական հիմքերը, ներքին խնդիրները:

1991թ. ամռանը տխրահռչակ «Կոլցո» ռազմական գործողության ընթացքում Հադրութի շրջանի սահմանամերձ գյուղերի հայաթափման անմիջական ու թարմ տպավորության տակ ԼՂՀ ԳԽ անդրանիկ նախագահ ընտրված Ա. Սկրտչյանը փորձել է վերհանել ողբերգության պատճառները, ներկայացնել իրադարձությունների ճիշտ պատկերը[54]: «Կոլցո» ռազմական գործողության մասին է նաև Նվարդ Սողոմոնյանի փաստագրությունը («Կոլցո» I, II, III մասեր, Ստեփանակերտ, 1994-2000թթ.): Նախկին խորհրդային սպա Դ. Բաղդասարյանի հուշերի գիրքը, որը կոչվում է «Դիմակայություն. հուշագրություններ» (Երևան, 1998), ընդգրկում է միայն 1989-92թթ. տեղի ունեցած այն դեպքերն ու գործողությունները, որոնց անմիջական մասնակիցը կամ կազմակերպիչն է եղել հեղինակը: Նա փորձել է ցույց տալ Արցախյան ազատամարտի գլխավոր հերոսի՝ ժողովրդական կամավորական աշխարհազորի դերը Արցախի ու Հայաստանի անվտանգության համար մղված պայքարում: Ռազմաքաղաքական ընդհանրացումներում արտահայտել է իր մարտական փորձից ու աշխարհայացքից բխող անձնական տեսակետներ: Դ. Բաղդասարյանի գրքում առաջին պլան է մղված ինքը՝ հեղինակը, որոշ դեպքերում գերագնահատված է նրա դերակատարությունը:

Ռազմաբժշկական ծառայության ստեղծման, պատերազմում բուժաշխատողների գործունեության ու մարտական ուղու մասին է Վ. Մարությանի գրառումների հիման վրա ստեղծված գիրքը[55]: Հեղինակը լինելով ռազմաբժշկական ծառայության հիմնադիրներից մեկը՝ ականատեսի քաջատեղյակությամբ ու հավաստի ներկայացնում է ինչպես պաշտպանության բանակի կազմավորման, այնպես էլ պատերազմի առանձին դրվագներն ու մանրամասները: 1988-1995 թթ. Արցախյան ազատամարտում գրականության, մշակույթի, գիտության, սպորտի, զոհված գործիչների գործունեության մասին է պատմում ռազմական պատմաբան Սասուն Գրիգորյանն իր «Մուսաները չլռեցին քեզ համար Արցախ» գրքի 3-րդ մասում:

---

[54] Սկրտչյան Ա., Ի՞նչ է տեղի ունեցել Հադրութում, Երևան, 1992:
[55] Марутян В., У войны долгий след (Записи военврача), Ереван, 1996.

Վիրաբույժ-լրագրող Ա. Բունիաթյանի գիրքն[56] ընդգրկում է Ար ցախյան պատերազմի 1992 թ. ապրիլի 24-ից մինչև հոկտեմբեր 10-ն ընկած ժամանակահատվածը: Հետաքրքիր մանրամասնութ յուններ կամ Մարտակերտի ռազմաճակատում տեղի ունեցա իրադարձություններից: Արձակագիր Կ. Դանիելյանը, դրվագ ա դրվագ ներկայացնելով արցախահայության վեցամյա պայքարի պատկերը, անդրադարձել է նաև ՊԲ կազմավորմանը, հատկա պես Ասկերանի, և շրջանի ինքնապաշտպանական կազմավորում ների մղած մարտական գործողություններին: Ի. Բաբանովը և Կ Վոյեվոդսկին Արցախի ազատագրական պայքարին նվիրված ի րենց աշխատություններում անաչառ են ներկայացրել Արցախում տեղի ունեցող իրադարձությունները, մանավանդ Գետաշենի ող բերգությունը՝ հիմնավորելով, որ խաղաղ բնակչության դեմ բռնութ յունները գործադրել են ԽՍՀՄ ղեկավարության ցուցումով: Լրագ րող Ս. Մարգարյանի կազմած փաստագրական ժողովածուն[57], ուր զետեղված է Մարտակերտի շրջանում ծավալված մարտական գործողությունների լուսանկարային և տեղեկատվական քրոնիկոնը, արժևորվում է Արցախյան գոյամարտի մասնակից զորահրամանատարների հուշերով ու իրադարձությունների գնահատականներով:

Ուշագրավ ու արժեքավոր ուսումնասիրություն է Մեր Հարությունյանի «Արցախյան պատերազմի սկիզբը և Շուշիի ազատագրումը» (Երևան, 2000) աշխատությունը, որտեղ ոչ միայն ներկայացրել է պատերազմի սկզբի ռազմական գործողությունները, այլև Արցախյան պատերազմի գլխավոր դերակատարի՝ պաշտպանության բանակի կազմավորման փուլերն ու մարտական ուղին, ինչպես նաև Շուշիի և Լաչինի ազատագրումն ու դրա նշանակությունը պատերազմի ընդհանուր ելքի վրա: Արցախյան ազատամարտի ռազմական գործողությունների նկարագրությանն է վերաբերվում Փաշա Օհանջանյանի «Ղարաբաղի ազատագրման պատերազմը» (Երևան, 2000) աշխատությունը: Փաստավավերագրա-

[56] Բունիաթյան Ա., Արյունոտ օրեր. Մարտակերտ. վավերագրություն, գիրք 1, Երևան, 2000:

[57] Մարգարյան Ս., Մարտակերտը չհայտարարված պատերազմի կիզակետ (փաստագրություն), Ստեփանակերտ, 1999:

կան նյութերի հիման վրա գրված «Հաղթանակներն ինչպես եղել են» գրքում (հեղինակներ Հ. Խաչատրյան, Գ. Ղազարյան, Ս. Մարգարյան, Երևան, 2008) արտացոլված է ԼՂՀ պաշտպանության բանակի և նրա հրամանատար ԼՂՀ ազգային հերոս Սամվել Բաբայանի (1991-94 թթ.) մարտական ուղին: Արցախյան ազատամարտի 1988-1994թթ. պատմությունը առանձին գլխով է ներկայացրել պատմաբան Ռ. Թադևոսյանը 2012թ. հրատարակած «Դրվագներ հայոց ռազմական պատմությունից XIX-XX դարեր» աշխատության մեջ:

Մի շարք հեղինակներ հուշամատյաններ, հուշագրեր, արցախյան հերոսներին նվիրված աշխատություններ, գրքույկներ են հրատարակել, որտեղ նկարագրված են մարտական գործողությունները և ազատագրական պայքարում զոհված ազատամարտիկների հերոսապատումը[58]: Պատմաբան Հ. Դեմոյանը իր աշխատություններում անդրադարձել է Արցախյան ռազմական գործողություններին և հատկապես 1992 թ. փետրվարի Խոջալուի դեպքերին[59]:

---

[58] Ղարիբյան Գ., Արթուրը: Արծվի թռիչք էր նա, Երևան, 1999, Արշակյան Ա., Մահ չիմացյալ՝ մահ, մահ իմացյալ՝ անմահություն, Երևան, 1993, Աբրահամյան Հ., Սկրտչյան Շ., Արցախի համար զոհված դիզակցիներ, Երևան, 2000, Առուստամյան Գ., Իմ սերը քեզ հետ է, ողջեր և նահատակներ, Երևան, 1998, Մարտիկյան Գ., Ապրելու բանածև, գիրք 1-6, Երևան, 2012, 2013, Նույնի Սա Հայաստանն է, և վերջ. Լեոնիդ Ազգալդյան, Երևան, 2012, Նանագուլյան Ս., Արծիվները բարձունք են տենչում, գիրք Ա, Բ, Գ, Երևան, 1992, 1993, Նույնի Շահեն, Երևան, 1993, Եսայան Է., Բույլ նահատակաց, Երևան, 1996, Մուսայելյան Բ., Հանուն Արցախի և հայրենի Մարտունու, Ստեփանակերտ, 1998, Առաքելյան Վ., Ազիզյան Գ., Նրանք փառքով անմահացան, Երևան, 1996., Աթայան Ի., Ընդմիշտ քեզ հետ, Ստեփանակերտ, 1995, Միրզոյան Վ., Սարգսաշեն, Ստեփանակերտ, 1997, Բաժին N 9-12, Պեյրութ, 1993, N 1-6, Պեյրույթ, 1996, Սահակյան Ռ., Արծվապաշտ երկիր, Փաստագեղարվեստական, Երևան, 2004, 2011, Երևանի պետական համալսարանը Արցախյան գոյապայքարում, կազմեց Ժ. Մանուկյանը, Երևան, 2011, Հակոբյան Թ., Կանաչ ու սև, Արցախյան օրագիր, Երևան-Ստեփանակերտ, 2000-2008:

[59] Демоян Г., Мелик-Шахназарян Л., Ходжалинское дело: Особая папка, Ереван, 2003. Демоян Г., Карабахская драма: Скрытые действия, Ереван, 2003. Demoyan H., Melik-Shahnazaryan L., The KHOJALU CASE: A SPECIAL DOOSSIER, Yerevan, 2004, Этническая принадлежность в политическом и общественном дискурсе современного Азербайджана, по примеру антиармянских материалов, Ереван, 2004, ...prepared by Hayk Demoyan, Yerevan, 2004.

Արցախյան ազատագրական պայքարի և նրա մարտական գործողությունների մասին պաշտպանվել են նաև թեկնածուական և դոկտորական ատենախոսություններ: Դրանցից են Կ. Ղահրամանյանի «Հյուսիսային Արցախ (պատմական քննական վերլուծություն)»՝ պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, (Երևան, 2000), Մ. Հարությունյանի «Արցախյան պատերազմը և պաշտպանության բանակի մարտական ուղին», 1991-1994 թթ. թեկնածուական ատենախոսության սեղմագիր (Երևան, 2001), Ա. Արշակյանի «Արցախյան գոյապայքարը 1985-1992 թթ.». թեկնածուական ատենախոսության սեղմագիր (Երևան, 2003), Մ. Չալյանի «Արցախյան շարժման լուսաբանումը Ամերիկահայ անգլալեզու մամուլում». թեկնածուական ատենախոսության սեղմագիր (Երևան, 2005), Տ. Հակոբյանի «ԼՂՀ-ի հռչակումը և պետական շինարարության գործընթացը (1991 թ. սեպտեմբեր-1994 թ. մայիս)». թեկնածուական ատենախոսության սեղմագիր (Երևան, 2008), Ա. Առստամյանի «Սոցիալ-տնտեսական վերափոխումները ԼՂՀ-ում (1991-2002 թթ.)». թեկնածուական ատենախոսության սեղմագիր (Երևան, 2010), Հայկ Դեմոյանի «Ղարաբաղյան հակամարտությունը և Թուրքիան, պատմահամեմատական վերլուծություն (ռուսերեն)» դոկտորական ատենախոսության սեղմագիր (Երևան, 2012), Վահրամ Բալայանի «Ազատագրության և պետականության համար պայքարի պատմական և գաղափարական դրսևորումները Արցախում (17-րդ դարի երկրորդ կես-2007 թվական)», դոկտորական ատենախոսության սեղմագիր (Երևան 2013) և այլն: Հատկապես արժեքավոր ու ամփոփ ուսումնասիրություն է «Ղարաբաղի ազգային-ազատագրական պատերազմը 1988-1994 թթ.» հանրագիտարանը (Երևան, 2004 թ.), որտեղ ոչ միայն տրված են Արցախյան հերոսամարտի մասնակիցների և հատկապես զոհվածների կենսագրականները, այլև ռազմական գործողությունների ընդհանուր նկարագիրը: Նույնիսկ առանձին դրվագներով ներկայացված է բժիշկների, արվեստագետների, գրողների և այլ ոլորտների մասնագետների մասնակցությունն Արցախյան ազատամարտին: Անշուշտ, աշխատությունն առաջին փորձն է և կարող է օգտակար լինել հետագա ամփոփ ուսումնասիրությունների համար, սակայն այն զերծ չէ թե-

րությունններից, հատկապես բացակայում են մարտական գործողությունների ամբողջական ընթացքի նկարագրությունը, զինադադարի հաստատումը, շատ մասնակիցների անունները, չկա շարժման սկզբնավորման ամբողջական պատմությունը և այլն:

Երրորդ խմբի գրականությունը ավելի սակավ է: Արցախյան հարցի միջազգային քննարկումները ներկայացված են ավելի շատ ՀՀ Արտաքին գործերի նախարարության հաշվետվություններում և ԵԱՀԿ և մյուս միջազգային ատյաններում ու մամուլում: Արցախյան հարցի քննարկումներին արդրադարձել է ՀՀ-ում Ռուսաստանի նախկին դեսպան Վ. Ստուպիշինը[60]: Նա փորձել է վերլուծել իրադարձությունները, քննադատաբար է մոտեցել հակամարտության նկատմամբ Ռուսաստանի քաղաքական որոշ ուժերի, մանավանդ արտաքին գործերի նախարարության սխալ դիրքորոշմանը: Բացահայտել է մի շարք ռազմական գործողությունների քաղաքական-դիվանագիտական աստառը: Ուշագրավ աշխատանք է ներկայացրել Արմեն Այվազյանը: Նա իր «Ղարաբաղյան հակամարտության կարգավորումը և Հայաստանի ռազմավարական անվտանգությունը» (Երևան, 1998) աշխատության մեջ ներկայացնում է Ղարաբաղյան հակամարտության զարգացման փուլերը և հարցի ուսումնասիրության վիճակը, ներկայացնում է հակամարտության ռազմավարությունը, Ադրբեջանի և Թուրքիայի նկատմամբ Հայաստանի անվստահության պատճառները, ԵԱՀԿ-ի բանակցությունների ընթացքը, Ղարաբաղի և Հայաստանի Հանրապետության անվտանգության միջազգային երաշխիքները՝ ԵԱՀԿ-ի ծրագրի լույսով, փոխզիջումային հնարավոր տարբերակները և այլն:

Հարցի քննարկումների ներկայացման տեսակետից կարևոր նշանակություն ունեցավ «Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման ուղիները խորհրդարանական լսումներ, 29-30 մայիսի 2005 թ.» (ՀՀ Ազգային ժողով, Երևան, 2006) հոդվածների ժողովածուի հրատարակումը: Այս հոդվածներում արտացոլված են ԼՂՀ հարցի քննարկումներն ու դրանց լուծման ուղիները: Արժեքավոր աշխատություն է նաև փիլիսոփա Ա. Մանասյանի «Ղարա-

[60] Ступишин В., Карабахский конфликт, 1992-1994, Москва, 1998.

բաղյան ազատամարտը հայոց քաղաքական գիտակցության հայելում» (Երևան, 2003) հոդվածների ժողովածուն: Այստեղ հեղինակը ներկայացրել է Արցախյան հարցի միջազգայնացման ուղղությամբ կատարված աշխատանքները, նաև հարցի քննարկումները միջազգային ատյաններում և դրա լուծման օրինական ճները: Այդ հարցերին անդրադարձել է նաև պատմաբան Է. Մինասյանը իր մի շարք հոդվածներում՝ «Կրթությունը և գիտությունը Արցախում» (հ. 5, 6 ..., էջ 120-125) և «Պատմություն և կրթություն» (հ. 1-2, 2005 թ., էջ 168-178) և այլն:

Չորրորդ մասի վերաբերյալ նույնպես գրականությունը սակավաթիվ է, չնայած գրվում են նոր գրքեր ու հոդվածներ, բայց մի ամբողջական աշխատություն այս ուղղությամբ դեռևս չկա: Լևոն Մելիք-Շահնազարյանը իր վերը նշված աշխատություններում անդրադարձել է ԼՂՀ-ի ներքին և արտաքին քաղաքականության հարցերին, հատկապես 1991-96 թվականների ժամանակահատվածում:

Արցախի ներքին կյանքի հարցերի վերլուծությանն է վերաբերում «Լեռնային Ղարաբաղի մշակութային և հոգևոր ժառանգությունը» (Երևան, 1998) աշխատությունը, որտեղ ներկայացված են ԼՂՀ-ի արդի մշակութային արժեքները: Հ. Աբրահամյանն ու Վ. Բալայանը իրենց վերը նշված աշխատություններում առանձին գլուխներ են նվիրել Արցախի 1991-2000 թթ. պատմությանը: ԼՂՀ-ի ներքին քաղաքականությանն է անդրադարձել պրոֆ. Է. Մինասյանը «ԼՂՀ սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական վիճակը անկախության տարիներին՝ 1991-2008 թթ.» հոդվածում («Լրատու», գիտական հոդվածների ժողովածու, Մ. Մաշտոց համալսարան, Ստեփանակերտ, 1(8), 2010, էջ 3-19: Ա. Դաբաղյանի և Մ. Գաբրիելյանի «Շուշին 1992-2002 թթ. և հայերի վերադարձը ազատագրված քաղաք» (ազգագրական ակնարկ, Երևան, 2004) աշխատությունում արժեքավոր փաստագրական նյութեր են ամփոփված վերջին տասնամյակում քաղաք վերադարձող հայ բնակչության ժողովրդագրական կազմի վերաբերյալ: Այստեղ շարադրված են Շուշիի բնակչության կենսապահովման համակարգի, հասարակական հարաբերությունների, քաղաքական մշակույթի

ձևավորման ընթացքի հիմնական առանձնահատկությունները: Բազմաթիվ հոդվածներ են հրատարակվել Հայաստանի Հանրապետության ու Լեռնային Ղարաբաղի մամուլում և ամսագրերում, որոնք վերաբերում են ավելի շատ ԼՂՀ-ի ներքին կյանքի, սոցիալ-տնտեսական վերափոխումների վերլուծությանը: Սակայն դեռևս չի ստեղծվել մի ամբողջական աշխատություն ԼՂՀ-ի անկախ պետության ստեղծման ու կայացման մասին, որն ընդգրկի մինչև մեր օրերը: Թերևս Տարոն Հակոբյանի «ԼՂՀ հռչակումը և պետական շինարարութաև գործընթացը (1991-1994 թթ.)» (Երևան, 2011) աշխատությունը մասամբ լրացնում է այս ասպարեզում եղած բացը:

ՀՀ-ում որոշակի աշխատանք է տարվել նաև ադրբեջանական կեղծարարության դեմ պայքարում: Այդ ուղղությամբ կարևոր նշանակություն ունեցավ «Պատմություն և մշակույթ. ընդդեմ կեղծիքի և ոտնձգության» հանրապետական գիտաժողովը, որի նյութերը հրատարակվեցին հայերեն և ռուսերեն լեզվով 2011 թ.: Նրանում ընդգրկված հոդվածները պատասխան են ադրբեջանական ամեն տեսակի կեղծարարության: Ադրբեջանական պետական մակարդակի բարձրացված կեղծարարությունը արժանի հակահարված ստացավ հայ պատմաբաններ ՀՀԳԱԱ թղթակից անդամներ Բ. Հարությունյանի, Ա. Մելքոնյանի, պ.գ.թ. Ա. Շահնազարյանի, պրոֆեսորներ Է. Մինասյանի, Է. Դանիելյանի և այլոց կողմից[61]:

---

[61] Տե՛ս Հարությունյան Բ., «Ադրբեջանի նախագահի աշխատակազմի ղեկավար Ռ. Մեհթիևի «Գորիս, 2010. աբսուրդի թատրոնի տարեշրջանը». գիտաքաղաքական ամսագրությունը «Վեմ», 2010 հոկտեմբեր-դեկտեմբեր, թիվ 4(32), էջ 24-58)», «Այսպես կոչված Աղվանքի էթնիկ և քաղաքական պատմության մի քանի հարցեր», մաս առաջին, «Վեմ», ապրիլ-հունիս 2011, թիվ 2(34), էջ 30-65), նույնի մաս երկրորդ, «Վեմ», 2011 հուլիս-սեպտեմբեր, թիվ 3(35), էջ 34-74), Շահնազարյան Ա., Մարտահրավեր գիտությանը. Ռ. Մեհթիևի «Գլուխգործոցի մասին», «Վեմ», 2011, թիվ 2 (34) էջ 164-184), Մինասյան Է., Արցախյան շարժման և ԼՂՀ պատմության կեղծարարությունն ու նենգափոխումը ադրբեջանական դասագրքերում, Միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, 2011, էջ 319-333, Մելքոնյան Ա., պատմության կեղծարարության թուրք-ադրբեջանական պատմագրության մեթոդաբանական հիմքը, «Պատմություն և մշակույթ, ընդդեմ կեղծիքի և ոտնձգության», հանրապետական գիտաժողովի հիմնադրույթներ, Երևան, 2011, էջ 11-13, Դանիելյան Է., Արցախյան հաղթանակի գաղափարական նշանակությունը տեղեկատվական պատերազմում՝ ընդդեմ թուրք-ադրբեջանական կեղծարա-

Նկատի ունենալով Արցախյան ազատամարտի նորագույն շրջանի (1988-2012 թթ.) պատմության ողջ կարևորությունն ու ազգային-հայրենասիրական, գիտական և քաղաքական նշանակությունը անհրաժեշտություն համարեցինք շարադրել Արցախի անկախ հանրապետության ամբողջական պատմությունը Հայաստանի երրորդ Հանրապետության պատմության հետ միասին, որպես մեր ժողովրդի երկու անկախ պետություններ:

Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների ուսումնասիրության համար սկզբնաղբյուրի նշանակություն ունեն ՀՀ Սփյուռքի նախարարության կողմից հրատարակված «Հայկական Սփյուռք» հայերեն-անգլերեն երկլեզու տարեգրքի երեք հատորները (Երևան 2009, 2010 և 2011թթ.): Այստեղ ներկայացված են համահայկական կազմակերպությունների հոգևոր կառույցների, հայ համայնքների, ՀՀ պետական կառավարման մարմինների, այդ թվում՝ ՀՀ Սփյուռքի նախարարության կողմից Հայաստանի Հանրապետությունում և Սփյուռքում 2008-2011թթ. ընթացքում իրականացված ծրագրերը, միջոցառումները և հիշատակման արժանի իրագործությունները: Այստեղ տեղեկություններ կան ՀՀ նախագահի, վարչապետի և այլ պետական այրերի հայ համայնքներ կատարած այցելությունների մասին: «Սփյուռքահայ կազմակերպություններ» (Երևան, 2002) աշխատությունում ներկայացված են Սփյուռքում գործող խոշոր հասարակական-քաղաքական, մշակութային, բարեգործական, հայրենակցական ու եկեղեցական կազմակերպությունները, որոնք անկախության տարիներին Հայաստանի զույգ հանրապետություններում հիմնելով իրենց մասնաճյուղերը՝ արդյունավետ աշխատանք ծավալեցին՝ ձեռք բերելով համահայկական նշանակություն: Ավելի քան 70 երկրների հայկական համայնքների պատմությունն է ներկայացված «Հայ Սփյուռք» (Երևան, 2003) հանրագիտարանում: Այստեղ համայնքային պատմությունները սկսվում են նրանց սկզբնավորումից մինչև 2003 թվականը: Ժամանակակից հայ սփյուռքի պատմությունն է ներկայացված Կ.Դալաքյանի «Հայ Սփյուռքի պատմութ-

---

րության, «Պատմություն և մշակույթ, ընդդեմ կեղծիքի և ոտնձգության», հանրապետական գիտաժողովի հիմնադրույթներ, Երևան, 2011, էջ 32-34:

յուն» (համառոտ ակնարկ, Երևան, 2004) աշխատության մեջ: ՀԲԸՄ-ի (Հայկական բարեգործական ընդհանուր միություն) Սփյուռքում իրագործած ծրագրերին է անդրադարձել Սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեի երկարամյա նախագահ Վ.Համազասպյանը իր «Հայկական բարեգործական ընդհանուր միությունը և Հայաստանը», Երևան, 2001, աշխատության մեջ: Մեր կողմից ուսումնասիրվող ժամանակահատվածի համար արժեքավոր ուսումնասիրություն է պ.գ.դ. Էդ.Մելքոնյանի «Հայկական բարեգործական ընդհանուր միության պատմություն» (Երևան, 2005) աշխատությունը, որտեղ ներկայացված է ՀԲՄ-ի հարյուրամյա ամբողջական պատմությունը, ցույց են տրված նաև անկախության տասնհինգ տարիներին կազմակերպության գործունեության առանձնահատկությունները:

Ռուսաստանի հայկական համայնքների ժամանակակից պատմությանն են անդրադարձել Ա.Տեր-Սարգսյանցն ու Վ.Խուդավերդյանը, Ժ.Անանյանը, Վ.Խաչատրյանը, Յու. Հարությունյանը, Վ.Գրիգորյանցը, իսկ արաբական երկրների և Իրանի հայ համայնքներինը՝ Ա.Փաշայանը, Լ.Հարությունյանը և Վ.Բայբուրդյանը[62]: Արևելյան Եվրոպայի ժամանակակից հայ համայնքներին է անդրադարձել Աննա Ժամկոչյանի ղեկավարությամբ ստեղծված հեղինակային խումբը «Արևելյան Եվրոպայի հայ համայնքների խնդիրները» Երևան 2011, աշխատության մեջ:

ՀՀ անկախության առաջին տասից ավելի տարիների հայրենիք- Սփյուռք հարաբերությունների ամբողջական պատմությունն է ներկայացված Ք.Պետրոսյանի «Հայրենիք - Սփյուռք հարաբերությունները 1988-2001թթ.», Երևան, 2011, արժեքավոր աշխա-

---

[62] Տես՝ Тер-Саркисян А., Худавердян В., Армянская диаспора Юга России, Москва, 1993, Ананян Ж., Хачатрян В., Армянские общины России, Ереван, 1993, Григорянц В., Возрождение армянской общины Крыма: достижения и проблемы, Симферополь, 2004, Григорянц В., Армяне Средней Азии, История, современное положение, перспективы, Ереван, 1994, Арутюнян Ю. Об армянской диаспоре в России, Ереван, 2011, Բայբուրդյան Վ., Իրանի հայ համայնքը. Արդի հիմնախնդիրներ, Երևան, 2013, Փաշայան Ա., Հարությունյան Լ., Սիրիայի հայ համայնքը. Արդի հիմնախնդիրներ, Երևան, 2011, Նույնի, Ծոցի արաբական երկրների հայ համայնքները. Արդի հիմնախնդիրներ, Երևան, 2012:

տության մեջ: Այստեղ լուսաբանված է Սփյուռքահայ կազմակերպությունների գործունեությունը Հայրենիք-Սփյուռք բազմակողմանի կապերի ամրապնդման ու զարգացման գործում: Վերոնշյալ հիմնախնդրի ուսումնասիրության գործում առանձնակի կարևորություն ունի Է.Մինասյանի և Ա.Վարդանյանի համահեղինակությամբ հրատարակած «Հայրենիք-Սփյուռք առնչությունները. ՀՀ անկախության տարիներին (1991-2009թթ.)» աշխատությունը, որտեղ քննարկված են Սփյուռքի տարբեր կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետությանն ու ԼՂՀ-ին ցույց տրվող բազմաբնույթ օգնությունն ու երկկողմանի կապերի ամրապնդումը: ՀՀ անկախության շրջանի մշակութային կյանքի ներկայացման ու վերլուծության համար արժեքավոր աշխատություններ են Ա. Աղասյանի «Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում», (Երևան, 2009), Ա. Ասատրյանի «ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ -50» (Երևան, 2010), և Ս. Գալստյանի «Հայացք մեր կինոյի պատմությանը և ներկան» (Երևան, 2011), ուսումնասիրությունները: Նրանցում քննարկված են արվեստի ճյուղերի ձեռքբերումները և նկատված թերություններն ու դժվարությունները: Գիտակրթական ոլորտում իրականացված բարեփոխումների, ձեռքբերումների և թերությունների մասին են պատմում Ս. Համբարձումյանի «Մտորումներ Հայաստանի գիտության մասին» (Երևան, 2005), «ՀՀ Գիտությունների ակադեմիան 70 տարում» (Երևան, 2013), աշխատությունները: ՀՀ ազգային կրթության ինստիտուտի հրատարակած «Բարձրագույն կրթության» տեղեկագրի 5 պրակները (Երևան, 2012): Այստեղ տպագրված ՀՀ կրթության և գիտության վերաբերյալ օրենքները սկզբնաղբյուրի նշանակություն ունեն: ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի հրատարակությունները և տեղեկատվական կայքը արժեքավոր տեղեկություններ են պարունակում հայագիտության զարգացման վերաբերյալ: Ֆիզկուլտուրայի և սպորտի ոլորտի ուսումնասիրման համար կարևոր աշխատություն է Մ. Իսպիրյանի «Հայաստանի ֆիզկուլտուրայի և սպորտի պատմություն» (Երևան, 2002) գիրքը:

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության արդի պատմության ուսումնասիրության կարևորությունն ու ազգային, գիտական ու քաղաքական նշանակությունը՝ մենք ձեռնամուխ եղանք սույն աշխատությունը գրելուն:

Աշխատության մեջ առաջին անգամ արխիվային փաստաթղթերի, տպագիր սկզբնաղբյուրների, գիտական գրականության և մամուլի օգտագործմամբ հնարավորինս ամբողջական ու համակարգված պատմաքննական վերլուծության է ենթարկվում անկախություն ստացած հայկական զույգ հանրապետությունների (ՀՀ և ԼՂՀ) քսանից ավելի տարիների ներքին և արտաքին քաղաքականության պատմությունը:

Աշխատությունը առաջին փորձն է ի մի բերելու հասարակական կյանքի ամենատարբեր ոլորտների վերաբերյալ սկզբունքային մոտեցումները, ցույց տալու հանրապետության անցումային տնտեսության զարգացման հիմնական գործընթացները: Աշխատության գլուխներում քննարկվում են Հայաստանի անկախության հռչակման և պետականության կայացման գործընթացը, պետաիրավական և վարչական բարեփոխումները, տնտեսական և սոցիալական վերափոխումները, շուկայական հարաբերություններին անցնելու գործընթացի առանձնահատկությունները: Ուսումնասիրության մեջ առանձնահատուկ ուշադրություն է դարձվել պետաիրավական և վարչական բարեփոխումներին, գյուղատնտեսության և արդյունաբերության ոլորտներում կատարվող վերափոխումներին, մասնավորեցման գործընթացներին, դրանց առանձնահատկություններին և հետևանքներին: Կարևոր տեղ է հատկացվել նաև ֆինանսաբանկային համակարգին, դրամավարկային և հարկային-բյուջետային քաղաքականությանը, անցումային տնտեսության ծնած առավել ցավագին սոցիալական հիմնախնդիրներին, սոցիալական բարեփոխումների տեղին ու դերին, սոցիալական առաջնությունների ընտրությանը, բնակչության տեղաշարժերին, զբաղվածության, գործազրկության, հասարակության սոցիալական շերտավորման հարցերին, բնակչության կենսամակարդակի բարձրացման մոտեցումներին, առողջապահության ոլորտին, մշակութային կյանքին և գիտակրթական բարեփոխում-

ներին: Առանձին գլխով ներկայացված է հայ առաքելական եկեղեցու գործունեությունը, ՀՀ մշակութային կյանքը, ֆիզկուլտուրան և սպորտը անկախության տարիներին: Վերլուծվել են Հայկական զույգ հանրապետությունների հասարակական-քաղաքական կյանքը, նախագահական և խորհրդարանական ընտրությունների արդյունքները, կուսակցությունների գործունեությունը, ՀՀ արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները, Հայաստանի Հանրապետության հարաբերությունները հարևան երկրների, Ռուսաստանի և ԱՊՀ մյուս երկրների, Եվրամիության և ԱՄՆ-ի հետ: Ներկայացվել է հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը: Առանձին գլուխ է նվիրված հայրենիք-սփյուռք կապերին ու առնչություններին: Նաև առանձին գլխով ներկայացվում է արցախյան շարժման, ազգային ազատագրական պայքարի սկիզբն ու ընթացքը, հայ ժողովրդի ռազմաքաղաքական օգնությունը մարտնչող Արցախին, Արցախյան հերոսամարտի արդյունքները, ԼՂՀ հռչակումն ու կայացումը, ԼՂՀ հարցի քննարկումը միջազգային կառույցներում ու բանակցություններում:

Յուրաքանչյուր գլխում տրվում են գիտականորեն հիմնավորված և գործնական տեսանկյունից իրատեսական առաջարկներ, որոնք բխում են տվյալ բնագավառի կամ հիմնահարցի համակողմանի վերլուծությունից:

Աշխատության մեջ փորձ է արվում սոցիալ-տնտեսական գործընթացների վերլուծություններով և ՀՀ արտաքին քաղաքականության հիմնախնդիրների քննարկմամբ, հիմնավորելու Հայաստանի տեղն ու դերը տարածաշրջանում, միջազգային կառույցներում:

Որպես առաջին փորձ, բնական է, որ աշխատությունը զերծ չէ թերություններից: Մենք շնորհակալությամբ կընդունենք դրանց վերաբերյալ ընթերցողների դիտողությունները և հաշվի կառնենք մեր հետագա աշխատանքներում:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՎԱՂՈՐԴԱՅՆԻՆ

(1985-1991 թթ.)

ԱՐՑԱԽՅԱՆ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

ա. Գորբաչովյան «Վերակառուցումը» և Հայաստանը Արցախի հարցի վերաբացումը

ԽՍՀՄ-ը 1980-ական թվականների երկրորդ կես թևակոխեց աստիճանաբար հասունացող սոցիալ-տնտեսական և քաղաքական ճգնաժամի պայմաններում: Արտադրանքի քանակական աճի միջոցով զարգացող խորհրդային տնտեսությունն աստիճանաբար սպառում էր իր առաջընթացի հնարավորությունները: Տնտեսության ոլորտում նվազում էին աշխատանքի արտադրողականության տեմպերը: Կառավարման վարչահրամայական ուռճացած համակարգը, փաստորեն, սպառել էր իրեն: Այն չկարողանալով խթանել արտադրողական ուժերի զարգացումը, խոչընդոտում էր գիտատեխնիկական առաջընթացին: Քնակչության սոցիալական ապահովության ոլորտում ևս լուրջ դժվարություններ էին ստեղծվել, որը հանգեցնում էր նրա կենսամակարդակի անկմանը:

Դրա հետ միասին ընդլայնվում էին կուսակցական, պետական, տնտեսական ղեկավար մարմինների, պաշտոնյաների արտոնությունները: Խախտվում էին օրենքները, ոտնահարվում էր սոցիալական արդարության սկզբունքները: Այս ամենի հետևանքով ԽՍՀՄ ազգաբնակչության շրջանում խորանում էր անվստահությունը երկրի ղեկավարության նկատմամբ, նկատվում էր համընդհանուր անտարբերություն: Պետական ունեցվածքի հափշտակումները դառնում էին համատարած: Աշխատանքն աստիճանաբար արժեզրկվում էր, մարում էր հավատը սոցիալական արդարության նկատմամբ: Ներքին հիմնախնդիրներին ավելանում էր «սառը պատերազմի» թելադրանքով իրականացվող արտաքին քաղաքա-

կանության սխալները: Նման իրավիճակը պահանջում էր դրանից դուրս գալու ուղիներ որոնել:[63]

Ահա թե ինչու 1985 թ. մարտին ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար ընտրված Միխայիլ Գորբաչովը համեմատաբար երիտասարդ լինելով՝ լավ էր հասկանում, որ երկիրը տնտեսական և քաղաքական լուրջ բարեփոխումների անհրաժեշտության առաջ է կանգնած, ուստի անմիջապես ձեռնամուխ եղավ տնտեսությունը վերափոխելուն և կառավարման ձևերը կատարելագործելուն[64]:

ԽՄԿԿ Կենտկոմի 1985 թ. ապրիլյան պլենումը հասարակության արմատական վերակառուցման քաղաքականություն ընդունեց, որն ամրապնդվեց կուսակցության 27-րդ համագումարի (1986 թ.) որոշումներով[65]: Սակայն, ինչպես կյանքը ցույց տվեց, «վերակառուցումը» փաստորեն առկա քաղաքական համակարգի գեղահարդարման, արտաքուստ նորացման փորձ էր: Այն, ըստ էության, բարեփոխումների՝ «վերևից» կարգավորվող ծրագիր էր, որն իրականացվում էր կոմունիստական վերահսկողությամբ[66]: Ուստի, պատահական չէ, որ «վերակառուցման» սկզբնական շրջանում (1985-1986 թթ.) շեշտը դրվեց ոչ թե քաղաքական բարեկորոգումների իրականացման, այլ գիտատեխնիկական առաջընթացի և երկրի սոցիալ-տնտեսական զարգացումն արագացնելու վրա: Սակայն այս ուղղությամբ ձեռնարկված՝ հիմնականում քարոզչական միջոցառումները չնպաստեցին և չէին կարող նպաստել տնտեսական ճգնաժամից երկրի դուրսբերմանը:

Չունենալով տնտեսական հստակ ծրագիր՝ «վերակառուցման» նախաձեռնողները «արագացման» ձախողումից հետո՝ 1987 թ., ձեռնամուխ եղան տնտեսական բարեկորոգումների իրագործմանը՝ որոշ ինքնուրույնություն տալով ձեռնարկություններին, որոնք անցան տնտհաշվարկի և ինքնաֆինանսավորման: Վերափոխվե-

---

[63] Ազիզբեկյան Ռ., Գեղամյան Գ., Հայաստանը 1945-1990-ական թթ., Երևան, 1994, էջ 85

[64] Տե՛ս նույն տեղում:

[65] Խորհրդային Միության Կոմունիստական կուսակցության 27-րդ համագումարի նյութերը, Երևան, 1986թ.:

[66] Ազիզբեկյան Ռ., Գեղամյան Գ., նշված աշխ., էջ 86:

ցին տնտեսության կենտրոնացված կառավարման ու պլանավորման ձևերը, կիրառվեցին կառավարման համեմատաբար ժողովրդավարական սկզբունքներ, լայն տարածում ստացավ ինքնակառավարումը: Սակայն դա համակարգի կառույցները կատարելագործելու թեթև ու անհեռանկարային փորձ էր, քանի որ ընդունված նույնիսկ առաջադիմական օրենքներն ու որոշումները հնարավորություն չունեին կենսագործվելու, քանզի դրանք իրականացնելու էին իրենց անարդյունավետությամբ վաղուց հայտնի կառույցները: Բարեփոխումների նախաձեռնողները, ձևավորվելով և աճելով կուսակցական բյուրոկրատական միջավայրում, չէին կարող հրաժարվել տարիների ընթացքում արմատավորված տնտեսավարման վարչահրամայական գործելակերպից: Ուստի տնտեսական բարեփոխումները ձախողվեցին: Ձեռնարկված միջոցառումները ոչ միայն չբարելավեցին ԽՍՀՄ-ի տնտեսական վիճակը, այլև 1980-ական թվականների վերջերին երկրի սոցիալ-տնտեսական կացությունն ավելի վատթարացավ: Ստեղծված իրավիճակից դուրս գալու նպատակով 1988թ. առաջ քաշվեց քաղաքական բարեփոխումների՝ թվացյալ ժողովրդավարացման ծրագիրը, որը ևս շատ շուտով ձախողվեց: 1988 թ. ԽՄԿԿ 19-րդ համամիութենական համաժողովում հասարակության ժողովրդավարացման որոշումներ ընդունվեցին[67]: Սակայն ժողովրդավարությունն անհամատեղելի էր ամբողջատիրության հետ, ուստի շրջանառվեցին «հրապարակայնություն», «ժողովրդավարություն», կարգախոսները, որոնց ոգուն համապատասխան էլ որոշ քայլեր կատարվեցին: Մասամբ դադարեցվեցին այլախոհների հետապնդումները, կալանավայրերից ազատ արձակվեցին մեծ թվով քաղբանտարկյալներ: Լայն թափ ստացավ երկրի պատմության մինչգորբաչովյան ժամանակաշրջանի «սպիտակ էջերի» լրացումը և համակողմանի լուսաբանումը: Որոշ ազատություններ տրվեցին զանգվածային լրատվության միջոցներին:

1989 թ. սկզբներին, երկրի պատմության մեջ առաջին անգամ, այլընտրանքային սկզբունքով ԽՍՀՄ ժողովրդական պատգամա-

[67] Տե՛ս ԽՄԿԿ 19-րդ համամիութենական կոնֆերանսի որոշումները (28 հունիս-1 հուլիսի, 1988թ.), Երևան, 1988:

վորների ընտրություններ անցկացվեցին: 1989 թ. մայիսին ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների առաջին համագումարը Մ. Գորբաչովին ընտրեց երկրի Գերագույն խորհրդի նախագահ, իսկ 1990 թ. մարտին՝ երրորդ արտահերթ համագումարում, նա ընտրվեց ԽՍՀՄ առաջին և վերջին նախագահ[68]:

Ըստ էության, իշխանության վերին օղակներում գտնվողների մեջ արմատավորված ամբողջատիրական մտածողությունը նրանց թույլ չտվեց ամբողջությամբ իրականացնել բարեներոգումները ու հիմնովին վերափոխել կոմունիստական կուսակցության միջոցով ամրապնդված քաղաքական համակարգը:

Խորհրդային Միության տարբեր վայրերում պաշտոնական իշխանությունների կողքին առաջացան զանազան հասարակական կազմակերպություններ, միություններ ու ընկերություններ, որոնք, առանձին հանրապետություններում վերածվելով լայն սոցիալական շարժումների, դարձան եթե ոչ ընդդիմադիր, ապա առնվազն այլընտրական ժողովրդական իշխանություններ: Կարճ ժամանակահատվածում այդ շարժումները երկրի ժողովրդավարացման ուղղությամբ արձանագրեցին շատ ավելի նշանակալից նվաճումներ, քան ձեռք էին բերվել «վերակառուցման» շրջանի նախորդ տարիների ընթացքում: Այդ շարժումների առաջացման համար ազդակ հանդիսացան տվյալ հասարակական-քաղաքական միջավայրի առջև ծառացած ամենակենսական խնդիրները: Ժողովրդական շարժումներն աստիճանաբար խորացրին կայսրությունից ազատագրվելու միտումները՝ ընդգրկելով նաև Արևելյան Եվրոպայի սոցիալիստական երկրները, որտեղ մեկը մյուսի հետևից տապալվեց կոմունիստական վարչակարգը, և նրանք դուրս եկան ԽՍՀՄ ազդեցությունից: Դա հանգեցրեց սոցիալիստական երկրների տնտեսական փոխօգնության համակարգի քայքայմանը, որի հետևանքով էլ ավելի վատթարացավ Խորհրդային Միության տնտեսական վիճակը:

Այնուհետև Մերձբալթյան հանրապետություններն առաջ քաշեցին տնտեսական ինքնիշխանության գաղափարը, որը շատ շու-

[68] Տե՛ս Ազիզբեկյան Ռ., Գեղամյան Գ., նշված աշխ., նույն տեղում:

տով վերածվեց լիակատար անկախության գաղափարի՝ դառնալով նրանց պետական քաղաքականության հիմնական ուղենիշը: Վերջինս որդեգրեցին նաև մի շարք միութենական և ինքնավար հանրապետություններ, մարզեր, որոնք, մեկը մյուսի հետևից ընդունելով «ինքնիշխանության» կամ «անկախության» հռչակագրեր, սկսեցին վարել սեփական շահերից բխող քաղաքականություն: Սկսվեց ԽՍՀՄ-ի քաղաքական քայքայման գործընթացը, որն աստիճանաբար կազմալուծեց կենտրոնացված տնտեսական համակարգը[69]:

Այսպիսով՝ կիսատ-պռատ բարեվորոգումները ոչ միայն չնպաստեցին ԽՍՀՄ տնտեսության կայունացմանը, այլև հանգեցրին միության փլուզման գործընթացի ծավալմանը: Կենտրոնական իշխանությունների անկարողությունը՝ լուծելու սոցիալ-տնտեսական, քաղաքական, ազգամիջյան հարաբերությունների ոլորտներում կուտակված հիմնախնդիրները, խորացրեց Խորհրդային Միության ժողովուրդների անվստահությունը նրանց հանդեպ: Դրան հակառակ՝ մի շարք հանրապետություններում (Լիտվա, Լատվիա, Էստոնիա, Հայաստան, Մոլդովա, Ռուսաստան) ժողովրդի կողմից ընտրված նոր ժողովրդավարական իշխանությունները վայելում էին իրենց ազգաբնակչության մեծ մասի վստահությունը: ԽՍՀՄ-ում գրեթե համատարած բնույթ ընդունեց անկախության ձգտումը, որն էլ ավելի սրեց ազգամիջյան հարաբերությունները: Երկրի մի շարք տարածաշրջաններում (ԼՂԻՄ, Աբխազիա, Հարավային Օսիա, Մերձդնեստր) բռնկվեցին իսկական միջէթնիկական պատերազմներ: «Վերակառուցման» ժամանակաշրջանում ազգամիջյան արյունալի ընդհարումների լայն ծավալումը հիմնականում հետևանք էր տարիների ընթացքում իրականացված բոլշևիկյան ազգային արատավոր քաղաքականության՝ որի մի մասն էր կազմում վարչատարածքային կամայական բաժանումը: Ձգտելով արդարացնել այդ քաղաքականությունը՝ շուրջ յոթանասուն տարի կոմունիստական կուսակցությունը փորձում էր ԽՍՀՄ-ում բնակվող հարյուրից ավել ազգություններին համոզել, թե երկրում ազգային հարցը հաջողությամբ ու վերջնա-

[69] Ազիզբեկյան Ռ., Հայաստանը վերակառուցումից մինչև անկախություն, համառոտ ակնարկ, Երևան, 1992, էջ 8:

կանապես լուծված է: Այս սկզբունքով առաջնորդվելով՝ իշխող վարչակազմը, առանց խորամուխ լինելու առկա հիմնախնդիրների մեջ, հետևողականորեն ճնշում էր ազգային ձգտումներին ուղղված ամեն մի փորձ: Այդ դիրքորոշմանը հավատարիմ մնացին նաև «վերակառուցման» քաղաքականության «նախաճեռնողները», որոնց պատկերացմամբ այն հիմնվում էր չորս գլխավոր սկզբունքների վրա՝ տնտեսության արդիականացում, քաղաքական նորացում, ժողովրդավարացում և հրապարակայնություն:

Ինչպես 1989 թ. սեպտեմբերին ազգային հարցին նվիրված ԽՄԿԿ կենտկոմի պլենումում ընդունված կոմկուսի «Կուսակցության ազգային քաղաքականությունը արդի պայմաններում» փաստաթուղթը, այնպես էլ ազգային հարցի մասին հետագայում ընդունված կուսակցական ու պետական բազմաթիվ փաստաթղթեր հիմնականում հռչակագրային բնույթ ունեին, որոնցում ոչ միայն չէին հստակեցվում այս կարևոր խնդրի լուծման ուղիները, այլև առավել սրությամբ դրսևորվող ազգամիջյան հիմնահարցերը համահարթեցվում կամ էլ մղվում էին երկրորդական պլան:

Նման մոտեցումները ավելի բորբոքեցին երկրում ծավալված ազգամիջյան հակամարտությունները:

Հայաստանի համար «վերակառուցման» ժամանակաշրջանը չափազանց բարդ էր ու դժվար: ԽՍՀՄ-ի տնտեսության և հասարակական-քաղաքական կյանքի ճգնաժամի հետևանքները դրսևորվեցին նաև հանրապետությունում: Սակայն եղած դժվարություններին գումարվեցին նաև Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը, ավերիչ երկրաշարժի ծանր հետևանքները, շրջափակումները, բազմահազար փախստականների առկայությունը: Դրանք Հայաստանի՝ առանց այն էլ ծանր սոցիալ-տնտեսական կացությունը դարձրին աղետալի: Այդ իրավիճակի համար մեղքի իրենց բաժինն ունեին նաև հանրապետության ղեկավար մարմինները, որոնք իրենց անվճռականությամբ և ոչ ճկուն քաղաքականությամբ նպաստեցին առկա ծանր կացության վատթարացմանը[70]: Եվ բնավ էլ պատահական չէր, որ «վերակառուցում» կարգախոսը հենց սկզբից Հայաստանում խոչընդոտների հանդիպեց:

[70] Ազիզբեկյան Ռ., նշված աշխ., էջ 9:

Հանրապետության ուռճացած կուսակցական-պետական բյուրոկրատիան (եթե 1980-ականների կեսերին Ռուսաստանում հանրապետական նախարարությունների ենթակայության տակ գտնվող ձեռնարկություններում ու կազմակերպություններում աշխատող յուրաքանչյուր 10 հազար մարդուն ընկնում էր այդ նախարարությունների կառավարման ապարատի 9 աշխատակից, Ուկրաինայում՝ 19, Ուզբեկստանում և Ղազախստանում՝ 30, իսկ Բելոռուսում՝ 31, ապա Հայաստանում՝ 68 աշխատակից), վախենալով իշխանության իր լծակները կորցնելուց, ամեն կերպ պայքարում էր թեկուզև քվացյալ ժողովրդավարության ու հրապարակայնության արմատավորման դեմ: Նա ջանում էր խնամքով թաքցնել տնտեսության մեջ ու հասարակական կյանքում խորացող լճացման երևույթները, չնկատել աստիճանաբար հասունացող ակնհայտ ճգնաժամը[71]:

Այսպես՝ 1986-1988 թթ. Հայաստանում ազգային եկամտի աճի և աշխատանքի արտադրողականության բարձրացման միջին տարեկան տեմպերը՝ 1981-1985 թթ. համեմատությամբ, համապատասխանաբար իջան 2,4 և 2,1 անգամ, արդյունաբերական արտադրանքի 65 կարևորագույն տեսականիներից գրեթե յուրաքանչյուր երկրորդի պլանը չէր կատարվում: 1987 թ. վնասով փակեցին արդյունաբերական 74 միավորում ու ձեռնարկություն, 96 շինարարական կազմակերպություն, 170 կոլտնտեսություն ու սովխոզ: Պայմանագրային մատակարարումներով հանրապետությունը 1988 թ. վերջին տեղն էր գրավում երկրում և մատակարարներին ու բանկերին պարտք էր ավելի քան 600 մլն ռուբլի[72]: 1986-1987 թթ. արդյունաբերության մեջ խոտանի պատճառով առաջացած կորուստները 27 %-ով աճել էին 1981-1985 թթ. ժամանակահատվածի տարեկան միջինի համեմատությամբ, նոր տեխնիկայի ներդրումից ստացված տարեկան տնտեսական արդյունքը կրճատվել էր 13 մլն ռուբլով, թեև այդ նպատակով կատարված ծախսերն աճել էին 238 մլն ռուբլով: 1980-ական թթ. ընթացքում

[71] Տե՛ս նույն տեղում:
[72] Տե՛ս նույն տեղում:

(մինչև 1989 թ.) նախատեսվածից պակաս էին իրացվել մոտ 440 մլն ռուբլի հիմնարար ներդրումներ: Պարենային ապրանքների արտադրությամբ հանրապետությունը միութենական միջին մակարդակին զիջում էր 1,8 անգամ, ընդհանուր միութենական հիմնադրամներից կատարվող հատկացումների հաշվին էր ապահովվում կաթի պահանջարկի երկու երրորդը և մսի՝ ավելի քան 40 %-ը: 1987 թ. հանրապետությունում աշխատունակ բնակչության շուրջ 18 %-ը ընդգրկված չէր հանրային արտադրության մեջ, որը մեկուկես անգամ բարձր էր միութենական միջինից[73]:

Աստիճանաբար վատթարանում էին Հայաստանի բնակչության սոցիալ-կենցաղային պայմանները: Հանրապետության իշխանությունները, զրկված լինելով ինքնուրույնությունից, հարկադրված կենսագործում էին կենտրոնի կողմից սահմանված բաշխման մնացորդային սկզբունքը, ըստ որի՝ սոցիալական կարիքների բավարարումը հիմնականում իրականացվում էր արտադրության միջոցների ավելացման համար նախատեսված հիմնարար ներդրումների հաշվին: Դրա հետևանքով հանրապետության պետական բյուջեից սոցիալ-մշակութային կարիքների համար նախատեսված ծախսերի տեսակարար կշիռն աստիճանաբար նվազում էր: 1980-ականների կեսերին, 1970-ականների կեսերի համեմատ, այն կրճատվել էր շուրջ 2 տոկոսով[74]: Բարդություններ էին առաջանում բնակչության բնակարանային պայմանների բավարարման, մշակութային, կենցաղային և բուժսպասարկման ապահովման ասպարեզներում: Աստիճանաբար սկսեց զգացվել հիվանդանոցների, պոլիկլինիկաների, մանկապարտեզների և նման այլ հաստատությունների պակաս, իսկ գոյություն ունեցողների մեծ մասն էլ հարմարություններով ու տեխնիկական հագեցվածությամբ հեռու էր ժամանակի պահանջները բավարարելուց: Այսպիսով, հանրապետության բնակչության սոցիալական ապահովության ոլորտում զգալի դժվարություններ էին կուտակվել, որոնք հանգեցնում էին նրա կենսամակարդակի անկմանը:

---

[73] Տե՛ս նույն տեղում:
[74] Տե՛ս նույն տեղում:

Սրվել էին նաև բնապահպանական խնդիրները, որոնք հիմնականում քիմիական և լեռնամետալուրգիական արդյունաբերությունների զարգացման հետևանք էին:

Երկար տարիներ, ինչպես ամբողջ ԽՍՀՄ-ում, այնպես էլ Հայաստանում, առաջնորդվելով նվազագույն ծախսերով տնտեսական առաջընթաց ապահովելով և սոցիալական հիմնահարցեր լուծելու սկզբունքով, հաշվի չառնելով տեղական առանձնահատկությունները, միակողմանիորեն զարկ էր տրվել վերոնշյալ ճյուղերի զարգացմանը: Չնայած դրանք զգալիորեն նպաստել էին հանրապետության սոցիալ-տնտեսական առաջընթացին, սակայն անտեսվել էին այդ արտադրությունների էներգատարությունն ու ջրատարությունը, սահմանափակ հողային, բնակլիմայական պայմանները, ջրային պաշարների սակավությունը, ժողովրդագրական ու բնապահպանական գործոնները: Հայաստանում ծանր բնապահպանական իրավիճակ էր ստեղծվել, որը բացասաբար էր անդրադառնում ազգաբնակչության առողջության վրա և լրջորեն սպառնում ոչնչացնել կենսական նշանակություն ունեցող բնական հարստությունները: Տագնապալի էր Սևանա լճի վիճակը: Տնտեսության կարիքների բավարարման նպատակով տարիներ շարունակ լճի ջրային պաշարների չհիմնավորված ու անխնա շահագործման միջոցով հանրապետության ջրային պաշարների վերացման լուրջ սպառնալիք էր առաջացել, որը կարող էր խախտել առանց այն էլ սակավաջուր հանրապետության ջրային հաշվեկշիռն ու կլիման: Չնայած նախորդ տարիներին զգալի միջոցառումներ էին իրականացվել Սևանի մակարդակը պահպանելու համար (կառուցվել էին հզոր ջերմաէլեկտրակայաններ, հիդրոտեխնիկական կառույցներ, Արփա-Սևան ջրատար թունելը, շահագործման էր հանձնվել հայկական ատոմակայանը, սահմանափակվել էին լճից ջրի բացթողումները և այլն), սակայն ակնհայտ էր դառնում, որ զուտ լճի մակարդակի պահպանմամբ անհնար էր այն փրկել, քանի դեռ լուծված չէր նրա աղտոտումը դադարեցնելու խնդիրը: Թեև Սևանա լճի մաքրության ու նրա բնական հարստությունների պահպանման վերաբերյալ կառավարական (այդ թվում՝ միութենական) մի շարք որոշումներ էին ընդունվել, այնուամենայնիվ, դրանք թերի էին իրականացվում, և լճի աղտոտումը շա-

րուցակվում էր: Ուստի Սևանի հիմնախնդիրը շարունակում էր մտահոգել հանրապետության ազգաբնակչությանը:

Չնայած հանրապետության ղեկավար մարմինների կողմից որոշակի քայլեր ձեռնարկվում էին բնապահպանական խնդիրների լուծման ուղղությամբ, ընդունվում էին բազմաթիվ որոշումներ, մշակվում տարաբնույթ ծրագրեր, սակայն հիմնականում դրանց ոչ լիարժեք իրականացման և անհրաժեշտ տեխնիկական միջոցներով ոչ բավարար հագեցվածության պատճառով բնապահպանական լարվածությունը չէր նվազում: Միայն 1987 թ. հանրապետության օդային ավազան էին արտանետվել 246 հազար տոննա վնասակար նյութեր: Գոյապահպանության վիճակը հատկապես անմխիթար էր Երևանում, ուր կենտրոնացված էին հանրապետության արդյունաբերության համախառն արտադրանքի շուրջ 50 %-ը, ամբողջ ավտոմոբիլային շարժակազմի 40 %-ը (որը մթնոլորտ էր արտանետում տարեկան 220 հազար տոննա վնասակար նյութեր)[75]:

Մայրաքաղաքի մթնոլորտի աղտոտման հիմնական աղբյուրներն էին Երևանի ջէկը, «Պոլիվինիլացետատ» արտադրական միավորումը, քիմռեակտիվների, ավտոդողերի, ձեթ-օճառի, ասֆալտ-բետոնի գործարանները, «Նաիրիտ» գիտաարտադրական միավորումը և այլն:

Սոցիալ-տնտեսական ճգնաժամի խորացմանը զուգընթաց ընդլայնվում էին հանրապետության կուսակցական-պետական մարմինների ղեկավար պաշտոնյաների արտոնությունները: Իրենց դիրքն ու արտոնությունները պահպանելու համար նրանց մի մասը դառնում էր վերադաս իշխանավորների հլու կամակատարը և ջանում արժանանալ վերջիններիս բարեհաճությանը: Ծաղկում էին կաշառակերությունը, հովանավորչությունն ու հավելագրումները: Ջարգանում էր «ստվերային տնտեսությունը»: 1977-1987 թթ. Հայաստանում պետական ունեցվածքի հափշտակումներն աճեցին շուրջ վեց անգամ[76]:

---

[75] Տե՛ս նույն տեղում, էջ 11, նաև Սարգսյան Ֆ., Կյանքի դասերը, Երևան, 2013, էջ 156, 157:

[76] Տե՛ս նույն տեղում:

Այսպիսի պայմաններում հանրապետության կուսակցական ղեկավարությունը հանդես էր բերում ոչնչով չարդարացված հանգստություն և չէր ընդունում իր հասցեին արված որևէ քննադատություն: Այդպես եղավ ՀԿԿ Կենտկոմի 1987 թվականի հուլիսյան և դեկտեմբերյան պլենումների ժամանակ, երբ որոշ կոմունիստներ «համարձակվեցին» քննադատել հանրապետության բարձրագույն ղկավարության գործելակերպը: Այս ամենը հանգեցնում էր իշխող կոմունիստական վարչակարգի հեղինակազրկմանը, նրա նկատմամբ հասարակայնության լայն խավերի անվստահության խորացմանը[77]:

«Վերակառուցման» քաղաքականության հռչակման սկզբնական շրջանում Հայաստանի բնակչության համընդհանուր դժգոհությունը հիմնականում արտահայտվում էր աշխատավորական կոլեկտիվների և հասարակական կազմակերպությունների ժողովներում ու հավաքներում, որոնց ժամանակ ստեղծված իրավիճակի համար մեղադրվում և քննադատվում էին հանրապետության ղեկավար մարմինները, շեշտվում էր սոցիալական արդարության հաստատման ու բնապահպանական խնդիրների լուծման հրատապությունը: Այդ ընդվզումներն աստիճանաբար վերաճեցին զանգվածային հանրահավաքների: Առաջին նման հանրահավաքը կազմակերպվեց «Քնապահպանություն» ընկերության ներկայացուցիչների կողմից 1987 թ. սեպտեմբերի 17-ին Երևանի Թատերական (այժմ՝ Ազատության) հրապարակում, որին բավականին հոծ բազմություն էր մասնակցում, այդ թվում՝ գիտնականներ, գրողներ, արվեստագետներ, ուսանողներ: Հանրահավաքի մասնակիցները մասնավորապես պահանջում էին փակել «Նաիրիտ» գիտաարտադրական միավորումը (նման պահանջով պիկետներ էին կազմակերպվում նաև գործարանի մուտքերի մոտ), որի վերաբերյալ խնդիրների լուծմանը նպատակաուղղված շարժումը հետզհետե ավելի էր ծավալվում[78]: 1988 թ. փետրվարի 18-ին տեղի ունեցավ Աբովյանի կենսաքիմիական պրեպարատների գործա-

[77] Տե՛ս նույն տեղում, էջ 13:
[78] Տե՛ս նույն տեղում:

րանի բանվորների բողոքի ցույցը: Մի քանի հարյուր մարդ ոտքով ճանապարհ ընկան դեպի Երևան[79]: Նրանք բողոքում էին գործարանում տեխնոլոգիական վատթար վիճակի համար՝ պահանջելով գործարանի փակումը: Ցուցարարները հավաքվեցին մայրաքաղաքի Թատերական հրապարակում և հանրապետության կառավարությունից պահանջեցին բանակցել: Մասնագիտական հանճաժողովի եզրակացության հիման վրա հանրապետության կառավարությունը ԽՍՀՄ Նախարարների խորհրդի առջև գործարանը վերապրոֆիլավորելու հարց բարձրացրեց:

Շուտով միութենական կառավարությունը այդ մասին ընդունեց համապատասխան որոշում:

Այսպիսով, «վերակառուցման» քաղաքականության իրականացման առաջին տարիներին ԽՍՀՄ-ում զարգացող գործընթացները Հայաստանում հիմնականում դրսևորվեցին բնապահպանական խնդիրների լուծմանն ու սոցիալական արդարության հաստատմանը նպատակաուղղված ժողովրդական շարժման սկզբնավորմամբ: Սակայն երբ արցախահայությունը, առաջնորդվելով «ժողովրդավարություն» և «հրապարակայնություն» կարգախոսներով, արտահայտեց ինքնորոշման իր իրավունքը, ծավալված շարժման գլխավոր նպատակը դարձավ Ղարաբաղյան հիմնախնդրի արդարացի լուծման հասնելը: Հայ ժողովուրդը, առաջիններից մեկը վստահելով գորբաչովյան ժողովրդավարությանը՝ փորձեց իրականացնել իր ազգային ձգտումները: «Վերակառուցման» տարիները փաստորեն շրջադարձային եղան նրա պատմության մեջ: Այդ ժամանակաշրջանն առաջին հերթին նշանավորվեց արցախահայության ազգային-ազատագրական պայքարի նոր փուլով: Այն ԽՍՀՄ քաղաքական կյանքում կատարվող փոփոխությունների անխուսափելի հետևանք էր, և ի տարբերություն նախորդ տարիների պայքարի, բացահայտ էր ու հստակ առաջադրում էր ազգային ու քաղաքական նպատակներ, հանդես էր բերում ինքնորոշման սեփական իրավունքը մինչև վերջ պաշտպանելու վճռականություն: Այդ պայքարի հիմնական առանձնահատ-

[79] Տե՛ս նույն տեղում:

կությունը նրա աննախադեպ համաժողովրդական բնույթն էր ու միջազգային լայն արձագանքը: Այն, ըստ էության, դարձավ խորհրդային կայսրության փլուզումն արագացնող գործոններից մեկը: Ն. Ռիժկովը գրում է. «.... Միության փլուզումն աստիճանաբար սկսվեց, երբ Կենտրոնը չցանկացավ կամ այնուամենայնիվ չկարողացավ լսել Ղարաբաղյան «զանգը»»[80]:

Փաստորեն, «Վերակառուցման» շրջանում ԽՍՀՄ բոլոր հանրապետություններում լայն պայքար սկսվեց ազգային ինքնուրույնության համար: Դրա հիմնական պատճառն այն էր, որ չէին ձեռնարկվում միջոցառումներ՝ ազգամիջյան հարաբերությունները կարգավորելու, տեղական պահանջներն ու առանձնահատկությունները հաշվի առնելու միջոցով բարձրացված ցավոտ հարցերին ինչ-որ չափով լուծում տալու համար: Ուստի հանրապետություններում անխուսափելիորեն ձևավորվեցին ազգային ժողովրդական ճակատներ, որոնք սկզբնական շրջանում պայքարում էին ԽՍՀՄ կազմում ավելի շատ արտոնություններ ձեռք բերելու համար: Պայքարի բովում իր ուրույն ուղին անցավ Հայաստանը և նրա հետ՝ նենգությամբ իրենից բաժանված հայության հազարամյակների ոստան Արցախը:

Արցախը միշտ իր ուրույն տեղն է ունեցել հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարում: Դարեր շարունակ Արցախն ու Սյունիքը Արևելյան Հայաստանում ծավալված ազատագրական շարժումների հիմնական կենտրոններ են եղել: Մեր ժողովրդի պատմության բախտորոշ պահերին արցախցիները թշնամու դեմ պայքարի առաջին շարքերում՝ իրենց հայրենասիրությամբ ու արիությամբ նորանոր սխրանքների են կոչել սերունդներին:

Դեռևս անցած դարի 20-ական թթ. սկզբներին, խորհրդային իշխանության ջանքերով Արցախի լեռնային մասը, առանց նրա հիմնական բնակչության՝ հայության կամքը հաշվի առնելու, կուսակցության Կովկասյան բյուրոյի 1921թ. հուլիսի 5-ի անօրինական որոշմամբ, բռնակցվել էր Խորհրդային Ադրբեջանին: Դրանից հե-

[80] Տե՛ս նույն տեղում, նաև Рыжков Н., Перестройка, История предательств. Москва,, 1992, с. 197:

տո Ադրբեջանի խորհրդային իշխանությունները ծրագրված աշխատանքներ էին սկսել Արցախը հայաթափելու համար: Այդ քաղաքականությունը նրանք կարողացան իրականացնել հայկական Նախիջևանում, որը բոլշևիկյան ղեկավարության որոշմամբ նույնպես մտցվել էր Խորհրդային Ադրբեջանի կազմի մեջ: Նախիջևանի այդ ինքնավար հանրապետությունը ընդամենը մի քանի տասնամյակի ընթացքում լիովին հայաթափվեց և բնակեցվեց «ադրբեջանցի» անունը ստացած թուրքերով:

Լեռնային Արցախի բնակչությունը շուրջ 70 տարի անընդմեջ պայքարել էր ադրբեջանական իշխանությունների հայավեր քաղաքականության դեմ: Արցախն այդ երկարատև ու դաժան գոյամարտի տարիներին շատ անմեղ զոհեր է տվել, բայց կնճիռը մնացել էր անլուծելի:

Խորհրդային կենտրոնական իշխանությունների անտարբերության և թողտվության պայմաններում Ադրբեջանի ղեկավարները սանձարձակորեն բռնադատում էին մարզի հայության մարդկային տարրական իրավունքները, բիրտ ճնշումներ էին կիրառում հայ դպրոցի ու մշակույթի նկատմամբ: Միաժամանակ, փորձված և խորամանկ միջոցներով, դիվանագիտորեն վարում էին մարզը հայաթափելու, այն թուրքացնելու հետևողական քաղաքականություն, որի պատճառով բնակչության ընդհանուր թվաքանակում արագորեն իջնում էր հայության բաժինը: Այդ ամենը չէր կարող առաջ չբերել ժողովրդի, մտավորականության, նույնիսկ կուսակցական աշխատողների և պետական ծառայողների մեծ մասի բացահայտ դժգոհությունը: Ինչ խոսք, կային նաև Բաքվի հլու կամակատարներ, որոնք ոչ միայն չէին միանում ընդհանուր դժգոհությանը, այլև դատապարտում էին իրենց հայրենակիցների ազնիվ պոռթկումները: Եթե 1920-1950-ական թվականներին Արցախյան ընդվզումները առանձին անհատների դժգոհության արտահայտություն էին, ապա 1960-1970-ական թվականների պայքարն արդեն թևակոխել էր նոր հանգրվան՝ զանգվածային ընդվզումների շրջանը: Արցախահայության հետագա պայքարի շահերը հրամայաբար պահանջում էին հրապարակ բերել վստահելի ու աննկուն ղեկավարի, գաղափարական առաջնորդի, որի նկատմամբ հավատ տածեին, բոլորը և որն ունակ լիներ կազմակերպելու ժողովրդի դի-

մաղրական ուժն ընդդեմ աղրբեջանական տմարդի և ագրեսիվ իշխանությունների: Այդ դժվարին ու վտանգավոր դերակատարությունը վիճակված էր նշանավոր գրող, պատմաբան ու հրապարակախոս, Արցախի գրողների միության ղեկավար Բագրատ Ուլուբաբյանին: Նա իր նորագույն ազատագրական պայքարի համախոհների հետ կազմակերպում էր գաղտնի ժողովներ, համախմբում մարզի մտավորականությանը, Մոսկվա՝ բարձրագույն ատյաններին էր ուղարկում բողոքագրեր:

Բ. Ուլուբաբյանի կազմած և մեծ աղմուկ հանած նամակի տակ հեղինակի անվան կողքին իրենց ստորագրություններ էին դրել նաև մարզի ուրիշ 12 գործիչներ՝ Ստեփանակերտի Քաղխորհրդի գործկոմի նախագահ Սերգեյ Շաքարյանը, «Խորհրդային Ղարաբաղ» մարզային թերթի խմբագիր Լազր Գասպարյանը, մարզային ռադիոհաղորդումների խմբագիր Գրիգոր Ստեփանյանը, Ստեփանակերտի N 2 պետտնտեսության տնօրեն Արամ Բաբայանը, Սոսի Ս. Շահումյանի անվան կոլտնտեսության նախագահ Արսեն Մուքանյանը, մշակույթի մարզային վարչության պետ Գուրգեն Գաբրիելյանը, բանաստեղծ Բոգդան Ջանյանը, հանրապետության ժողովրդական դերասան Միքայել Կորգանյանը, Ստեփանակերտի N 59 շինվարչության պետ Արկադի Մանուչարյանը, Ստեփանակերտի էլեկտրատեխնիկական գործարանի տնօրեն Ալբերտ Սեյրանյանը, Ստեփանակերտի ռադիոհաղորդումների ավագ խմբագիր Մաքսիմ Ավանեսյանը և N 59 շինվարչության գլխավոր ինժեներ Սերգեյ Գրիգորյանը[81]:

Նամակի հեղինակները շեշտել էին, որ ԼՂ բնակչության 85%-ը հայեր են, որոնք այդտեղ ապրում են անհիշելի ժամանակներից և հույս էին հայտնել, որ ԽՄԿԿ Կենտկոմն ու խորհրդային կառավարությունը կաջակցեն մարզի միավորմանը Հայկական ԽՍՀ-ի հետ:

1965 թ. հունիսին «13-ի նամակը» ուղարկվեց Մոսկվա՝ կուսակցական և պետական ղեկավար մարմիններին: Այն երկրի ղեկավարությանն անձամբ հանձնեց Բ. Ուլուբաբյանը: Նրան ընդունել և զրույցներ էին ունեցել ԽՄԿԿ Կենտկոմում:

---

[81] Աբրահամյան Հ., Մարտնչող Արցախը (1917-2000), գիրք Բ, Երևան, 2005, էջ 216:

Ադրբեջանում կատաղի թշնամանքով ընդունեցին Արցախից Մոսկվա ուղարկված դիմումները ու բողոքները, դրանց հեղինակները մեղադրվեցին ահաբեկչական գործունեություն ծավալելու մեջ: Բաքվից հետևեցին անընդհատ սպառնալիքներ, բայց հայրենասերները չընկրկեցին: Բ. Ուլուբաբյանը կազմում և ԽՄԿԿ Կենտկոմ է ուղարկում մի նոր բողոքագիր, որի տակ նրանից բացի, ստորագրել էին ևս երեք մարդ:

1966 թ. Երևանում հայտնվեց 150 էջանոց անստորագիր մի մեքենագիր տեքստ, որի հեղինակը դարձյալ Բ. Ուլուբաբյանն էր: Այն բազմացվեց և տարածվեց: Տեքստում խոսք էր գնում Ադրբեջանի տիրապետության տակ հեծող հայության դժվարին կյանքի մասին: Շուտով դրան հաջորդեցին դաժան հալածանքներ Արցախում: Տասնյակ մարդիկ բանտ նետվեցին, որտեղ մի քանիսը մեռան՝ չդիմանալով կտտանքներին, ծեծ ու ջարդին: Մարզի մի խումբ մտավորականներ ենթարկվեցին անողոք հետապնդումների և արտաքսվեցին հայրենի երկրամասից: Մյուս կողմից՝ Արցախի մի քանի ստրկամիտ պաշտոնյաներ (Կևորկով, Մելքումով և նրանց աջակիցները) ամեն կերպ հաճոյանում և իլու-ինազանդ ծառայում էին Բաքվի իշխանություններին՝ հավատարմությամբ կատարելով նրանց հակահայ հրահանգները և կարգադրությունները:

Պետական մակարդակով Արցախում սկսված դաժան տեռորը զայրույթի ուժգին ալիք առաջ բերեց Հայաստանում: Պատահական չէ, որ 1966 թ. օգոստոսին ՀԿԿ Կենտկոմի քարտուղար Ա. Քոչինյանի ստորագրությամբ բողոքի նամակ ուղարկվեց ԽՄԿԿ Կենտկոմ, որով պաշտպանվում էր Արցախը Հայաստանին միավորելու պահանջը:

Հետագա տարիներին Հայաստանից ու Արցախից շարունակվում էր նամակ-բողոքների հոսքը Մոսկվա: Երևանից հայ գրողների ու գիտնականների մի խումբ երկրի ղեկավարությունից պահանջեց՝ վերջապես ուշադրություն դարձնել արցախահայության վիճակի վրա և անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել: Հայաստանում, Արցախում և Սփյուռքում մեծ արձագանք գտավ խորհրդային ղեկավարությանն ուղղված մեծանուն գրող, սոցիալիստական աշ-

խատանքի հերոս Սերո Խանզադյանի նամակ-բողոքը, որով նա իր զայրույթն էր արտահայտել այն անտարբերության հանդեպ, որ կենտրոնը ցուցաբերում էր ամբողջ հայ ժողովրդին հուզող խնդրի, նրա արդարացի պահանջի նկատմամբ:

Հիշատակության են արժանի մոսկվաբնակ արցախցի նշանավոր գիտնական Հրանտ Եպիսկոպոսյանի, Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի դասախոս Սուրեն Բաղդասարյանի և այլոց բողոքներն ու կազմած տեղեկագրերը, որ նրանք ուղարկում էին կուսակցական և խորհրդային վերադաս մարմիններին՝ չստանալով որևէ հիմնավորված պատասխան:

Արցախյան ազատագրական ոգորումները նոր թափ ստացան 1970-ական թվականների վերջերին և 80-ական թվականների սկզբին: Այդ շրջանում աչքի ընկան պայքարի մի ամբողջ շարք նոր գործիչներ: Նրանց թվում էր գրող ու հրապարակախոս Զորի Բալայանը, որն իր գրքերով ու հոդվածներով, հրապարակախոսական ելույթներով, ստորագրահավաքներ կազմակերպելով, Մոսկվայի մամուլի օրգաններում տպագրած ակնարկներով մեծապես նպաստում էր արցախահայության պայքարի վերելքին: Ռուս մտավորականության մի շարք լավագույն ներկայացուցիչների հետ նա հաստատել էր սերտ հարաբերություններ և նրանց ներգրավել արցախյան շարժման պաշտպանության գործին:

1986 թ. փետրվարին տեղի ունեցած ԽՄԿԿ 27-րդ համագումարի նախօրյակին Մ. Գորբաչովին և ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Ա. Գրոմիկոյին Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ ներկայացվել էր նամակ՝ հայ հինգ ակադեմիկոսների, երեք գեներալների և ԽՍՀՄ երեք ժողովրդական արտիստների ստորագրությամբ: Նրանց թվում էր Աբել Աղանբեգյանը, որն այդ ժամանակ Մ. Գորբաչովի խորհրդականն էր: Բայց Մոսկվան շարունակում էր լուռ մնալ, իսկ շարժումը գնալով արմատական բնույթ էր ստանում[82]:

1986 թ. հուլիսին Արկադի Կարապետյանի ղեկավարությամբ Ստեփանակերտում հիմնվեց ընդհատակյա մի կազմակերպութ-

[82] Ուլուբաբյան Բ., Արցախյան գոյապայքար, Երևան, 1994, էջ 292:

յուն, որը ստացավ «Արցախյան միություն» անունը: 1987 թ. ամռանն ու աշնանը «Միությունը» կատարեց իր ծրագրի նվազագույն մասը՝ անցկացրեց ԼՂԻՄ-ը Հայաստանի հետ միավորելու ոչ պաշտոնական հանրաքվե, որի արդյունքում հավաքվեց ավելի քան 80 հազար ստորագրություն: Նույն թվականի նոյեմբերի վերջին Մոսկվա մեկնեց մի պատվիրակություն, որը ԽՄԿԿ Կենտկոմ ներկայացրեց հավաքված ստորագրությունների փաթեթը: Դարձյալ ոչ մի արձագանք[83]:

Բայց արցախահայության պայքարի թափը չէր պակասում: Որոշվեց ԼՂԻՄ-ից նոր պատվիրակություն ուղարկել երկրի մայրաքաղաք: Պատվիրակությունը Երևանից մեկնեց 1988 թ. հունվարի 5-ին՝ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր Վազգեն Բալայանի գլխավորությամբ: Պատվիրակները Մոսկվա տարան Լեռնային Ղարաբաղի բոլոր մակարդակների պատգամավորների և ղեկավար աշխատողների 260 ստորագրությամբ հանրագիր և մարզի ստեղծման ու Աղդբեջանի կազմում նրա բացարձակ մեծամասնությունը կազմող հայ բնակչության անտանելի վիճակի վերաբերյալ 80-ից ավելի փաստաթուղթ[84]: Մոսկվայում պատվիրակության գործունեությանը աջակցում էին Զորի Բալայանը և Իգոր Մուրաղյանը: Հունվարի 8-ին պատվիրակությանն ընդունում է ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նախագահի առաջին տեղակալ, ԽՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյի անդամ Պ. Դեմիչևը, որին էլ հանձնվում են տարած փաստաթղթերն ու հանրագիրը: Նա հուսադրում է պատվիրակության անդամներին՝ ասելով, որ անպայման կստեղծվի ԽՍՀՄ Գերագույն խորհրդի հատուկ հանձնախումբ՝ հարցը հանգամանորեն ուսումնասիրելու համար: Նաև հավաստիացումներ եղան, որ պատվիրակության անդամները չեն ենթարկվի հետապնդումների ու հալածանքների: Ամբողջ Արցախը անհամբեր բաղձալի լուրի էր սպասում Մոսկվայից, բայց Կրեմլը շարունակում էր լռել: Արցախցիները ստիպված Մոսկվա ուղարկեցին նոր պատվիրակություն՝ Վաչե Սարուխանյանի և մի

[83] «Հայոց աշխարհ», 22. 01. 1998:
[84] Ուլուբաբյան Բ., նշված աշխ., էջ 293:

քանի այլ գործիչների մասնակցությամբ: Պատվիրակությունն ընդունվեց ԽՄԿԿ Կենտկոմի ազգային հարաբերությունների սեկտորի վարիչ Վ. Միխալկովի կողմից, որը նույնպես հուսադրող, բայց դատարկ խոստումներ տվեց[85]:

Ոգևորված Գորբաչովյան վերակառուցման քաղաքականությունից և հավատալով Մոսկվայի խոստումներին՝ արցախցիները 1988 թ. սկզբներից դուրս եկան բացահայտ պայքարի՝ «Լենինկուսակցություն-Գորբաչով» լոզունգներով: Սկզբում շարժումը, ըստ էության, չէր ղեկավարվում որևէ կազմակերպության կամ ընտրված որևէ պատասխանատու անձի կողմից: Այն ընթանում էր տարերային հուժկու պոռթկումներով: Արցախահայությունը վերջնականապես համոզվել էր, որ ազատությունը կարող է ձեռք բերվել ոչ թե վերադասին ուղղված խնդրանք-պաղատանքներով, այլ միայն ու միայն հետագա անձնուրաց պայքարով ընդդեմ աղրբեջանական դաժան գաղութատիրության: Ստեղծված ծայրահեղ լարված իրավիճակում արցախահայությունը կա՛մ պետք է հեռանար հայրենի երկրամասից, կա՛մ պայքարեր իր հողն ու պատիվը պաշտպանելու համար: Արցախցին ընտրեց երկրորդ ուղին:

Ոտքի ելած մարզի բովանդակ հայության ազատագրական շարժումն աստիճանաբար առաջ քաշեց մի ոչ պաշտոնական կոլեկտիվ ղեկավարություն, որի մեջ էին Արկադի Մանուչարյանը, Համլետ Գրիգորյանը, Վարդան Հակոբյանը, Ռոբերտ Քոչարյանը, Գուրգեն Գաբրիելյանը, Հրաչյա Բեգլարյանը, Մաքսիմ Միրզոյանը, Վասիլի Աթաջանյանը, Մուրադ Պետրոսյանը, Ռոլես Աղաջանյանը, Արկադի Կարապետյանը, Բորիս Առուշանյանը և ուրիշներ[86]: Նրանց կոչերով մարզի բոլոր ձեռնարկություններում, կոլտնտեսություններում, ուսումնական հաստատություններում և մշակույթի օջախներում տեղի էին ունենում ժողովներ, կոմերիտական և կուսակցական կազմակերպությունների նիստեր, գյուղական, ավանային, քաղաքային և շրջանային խորհուրդների նստաշրջաններ, որտեղ քննարկվում էին Լեռնային Ղարաբաղը

[85] «ԼՂ Հանրապետություն», 22. 01. 1998:
[86] Արշակյան Ա., Արցախյան գոյապայքար (1985-1992), Երևան, 2004, էջ 18:

Հայաստանի հետ վերամիավորելու հարցը: Ընդունված որոշումներն ու առաջարկություններն արժանացան Ստեփանակերտի կուսքաղկոմի և Մարտակերտի, Ասկերանի, Մարտունու ու Հադրութի կուսշրջկոմների հավանությանը: Մոսկվան ու Բաքուն օրօրի ուժեղացնում էին շարժման դեմ ճնշումը: Փետրվարի 15-ին ԼՂԻՄ Կուսմարզկոմի առաջին քարտուղար Բորիս Կևորկովը, հանդիպելով շարժման ակտիվիստներին, ընթերցում է Մոսկվայից ստացված փաստաթուղթ, որտեղ «Ղարաբաղյան շարժման առաջնորդները ճանաչվում են որպես էքստրեմիստներ և խստագույնս պիտի պատժվեն»: Շարժումը գլխատելու համար կազմվում է «էքստրեմիստների» ցուցակ, որի մեջ մտցվում են 27 հոգու անուն, որոնց նկատմամբ նախատեսվում էր կիրառել տարբեր բնույթի պատիժներ[87]: 1988 թ. փետրվարի 16-ից սկսած՝ ցուցարարներից շատերը օր ու գիշեր գտնվում էին Ստեփանակերտի քաղաքային հրապարակում մնալով վրանների տակ և վառելով խարույկներ: Գյուղերից ցուցարարների համար բերում էին փայտ, հաց, սննդամթերք: Քանի որ շարժումը ընթանում էր տարերայնորեն, և չկար ընդհանուր ղեկավարություն, ուստի հրամայական պահանջ դարձավ ունենալ ղեկավար մարմին: Ստեղծվեց նախաձեռնող խումբ Արկադի Մանուչարյանի ղեկավարությամբ: Նախաձեռնող խմբի շտաբը դարձավ «Խորհրդային Ղարաբաղ» թերթի խմբագրությունը: Շուտով նախաձեռնողներին փոխարինեց մարտի 2-ին ստեղծված 11 հոգուց բաղկացած խորհուրդը կամ կոմիտեն՝ «Կոռունկ» անունով: Խորհրդի նախագահ ընտրվեց Արկադի Մանուչարյանը, տեղակալ՝ Վարդան Հակոբյանը: Հենց առաջին նիստում ստեղծվեցին 10 հանձնաժողովներ, որոնցում ընդգրկվեցին մոտ 50 հոգի: Կոմիտեի քաղաքական գծով հանձնաժողովի կազմի մեջ ընգրկվեցին Ռոբերտ Քոչարյանը (նախագահ), Սերժ Սարգսյանը և ուրիշներ[88]: «Կոռունկ» կոմիտեն մեծ աշխատանք կատարեց շարժումը կազմակերպված հունով տանելու և բնակչության անվտանգությունն ապահովելու ուղղությամբ:

---

[87] Нагорный Карабах и вокруг него. Глазами независимых наблюдателей, Ереван, 1991, с. 77., «Եղիցի լույս», N5, 2000:
[88] Արշակյան Ա., նշված աշխ., էջ 21:

Որոշվեց իրավական բոլոր նորմերը պահպանելով՝ պաշտոնապես բարձրացնել Արցախի ժողովրդի համար բախտորոշ հարցը և այդ նպատակով գումարել մարզխորհրդի արտահերթ նստաշրջան: Հրավեր ստացան բոլոր, այդ թվում աղրբեջանցի, պատգամավորները: Բաքվի իշխանություններն ամեն ջանք գործադրեցին, բայց չկարողացան ձախողել նստաշրջանի հրավիրումը:

Աղրբեջանական իշնախությունների կողմից հարուցված մեծ դժվարությունները հաղթահարելով 1988 թ. փետրվարի 20-ին հրավիրվեց ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների մարզխորհրդի արտահերթ նստաշրջան: Մարզխորհրդի արտահերթ նստաշրջանը սկսվեց երեկոյան ժամը 20 անց 20 րոպեին, և հայտնի դարձավ, որ մարզխորհրդի 149 պատգամավորներից ներկայացել էին 110-ը: Մարզխորհրդի արտահերթ նստաշրջանին հրաժարվեցին մասնակցել աղրբեջանցի պատգամավորները[89]: Հենվելով իր սահմանադրական իրավունքի վրա՝ Մարզային խորհուրդն ընդունեց պատմական որոշում, որի արձանագրային մասում ասված էր. «Եկել է վերակառուցման ու ժողովրդավարության ժամանակը: Մեր երկիրը լծվել է ստալինյան դաժան պատմաշրջանում կատարված հակաժողովրդական ամեն տեսակ սխալների ու զանցառությունների վերացմանը: Վաղուց ժամանակն է, որ մարզի հայության ճակատագրի վրա դրված խարանը ևս ջնջվի, և մենք՝ Լեռնային Ղարաբաղի հայերս, ձեռք բերենք մեր երկրամասը տնտեսապես զարգացնելու, մեր ազգային-մշակութային նվաճումներին լիիրավ տեր դառնալու հնարավորություններ»[90]: Նստաշրջանի բոլոր մասնակիցները, Լեռնային Արցախի ամբողջ հայ բնակչությունը խորապես համոզված էին, որ այլևս բացառվում է Աղրբեջանի կազմում մնալը և որ հարցի միակ և սահմանադրական լուծումը Խորհրդային Հայաստանի հետ վերամիավորումն է: Ուստի Մարզխորհրդի նստաշրջանը որոշեց. «Ընդառաջելով ԼՂԻՄ-ի աշխատավորների ցանկություններին, խնդրել Աղրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդին և Հայկական ԽՍՀ Գերա-

[89] Տե՛ս նույն տեղում, էջ 21:
[90] Арутюнян В.Б., События в Нагорном Карабахе, Ереван, с. 37.

գույն խորհրդին՝ խորին ըմբռնման զգացում դրսևորել Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության իղձերի նկատմամբ և լուծել ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ԽՍՀ կազմից ՀԽՍՀ կազմ հանձնելու հարցը, միաժամանակ միջնորդել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի առջև՝ ԼՂԻՄ-ն Ադրբեջանական ԽՍՀ կազմից Հայկական ԽՍՀ կազմ հանձնելու հարցի դրական լուծման համար»[91]: Հաջորդ օրն այս որոշումը տպագրվեց «Սովետական Ղարաբաղ» թերթում:

Ադրբեջանի իշխանությունները սվիններով դիմավորեցին այդ որոշումը և բռնեցին արցախահայության բացահայտ մարտահրավերը բռնի ուժով խեղդելու ուղին:

Արցախահայության ազատագրական պայքարին զորավիգ լինելու վճռականությամբ հաջորդ օրը Հայաստանում սկսվեցին հանրահավաքներ: Փետրվարի 21-ին Երևանի Թատերական հրապարակում տեղի ունեցավ առաջին զանգվածային հանրահավաքը: Շուտով միտինգների ու ցույցերի ալիքը տարածվեց հանրապետության բոլոր քաղաքներում ու գյուղերում: Բազմամարդ ժողովներում աշխատավորներն իրենց համերաշխությունն էին հայտնում Արցախի ազատագրական շարժմանը, երդվում էին աջակից լինել իրենց եղբայրներին ու քույրերին, միաժամանակ կենտրոնական իշխանություններից պահանջում էին արդարացի լուծել Լեռնային Ղարաբաղի հարցը: Աննախադեպ աճում էր հանրահավաքների մասնակիցների թիվը: Փաստորեն ԽՍՀՄ պատմության մեջ առաջին անգամ Լեռնային Ղարաբաղում և Հայաստանում տեղի ունեցան հարյուր հազարանոց հանրահավաքներ ու ցույցեր: Երևանի Թատերական հրապարակում, Մատենադարանի առջև, գլխավոր պողոտաներում տեղի ունեցող հանրահավաքներում ու ցույցերում ելույթներ էին ունենում գիտության ու արվեստի նշանավոր գործիչներ, բանվորներ, ծառայողներ, պատերազմի ու աշխատանքի վետերաններ: Դրանց թվում էին ՀԽՍՀ ԳԱ նախագահ, աշխարհահռչակ աստղագետ, ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանը, ճանաչված արձակագիր Սերո Խանզադյանը, ժողովրդական դերասան Սոս Սարգսյանը, սիրված երաժիշտ Հով-

[91] «Խորհրդային Ղարաբաղ», 21.02.1988:

հանձնես Չեքիջյանը, բանաստեղծ Ռազմիկ Դավոյանը և շատ ուրիշներ: Հայաստանում բնակվող ռուսները, եզդիները, ասորիները, ուկրաինացիները, քրդերը և տարբեր ազգերի մարդիկ սատար կանգնեցին արցախցիների արդար պահանջին, իրենց համայնքների, միությունների անունից պաշտպանեցին արցախահայության օրինական պահանջը, հրապարակեցին դիմումներ ու կոչեր:

ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունները, չնայած իրենց կողմից վերակառուցման ու հրապարակայնության հռչակմանը, արցախյան արդարացի շարժման հանդեպ դիտնորեցին կատաղի անհանդուրժողականություն: Երկրի բարձրագույն ղեկավարությունը աներկբա կանգնեց աղրբեջանական գաղութարարների կողքին: Ազգերի ինքնորոշման սահմանադրական իրավունքի իրագործումը կարող էր լուրջ վտանգ սպառնալ կոմունիստական համապարփակ տիրապետությանը: Պատահական չէր, որ Աղրբեջանի ղեկավարության առաջարկությամբ փետրվարի 21-ին ԽՄԿԿ ԿԿ քաղբյուրոն հապշտապ ընդունեց «Լեռնային Ղարաբաղի իրադարձությունների մասին» որոշումը, որով արցախահայության ազատագրական շարժումը որակվեց որպես «ծայրահեղական», մի խումբ անջատողականների գործողությունների արդյունք[92]: Հարցն ըստ էության լուծելու փոխարեն կենտրոնական իշխանությունները փորձում էին պայքարը դադարեցնել հայ անվանի մտավորականների միջոցով:

Փետրվարի 25-ին ԽՄԿԿ կենտկոմի գլխավոր քարտուղար Մ. Գորբաչովը հանդիպեց Զ. Բալայանի և Ս. Կապուտիկյանի հետ: Նա կեղծ խոստումներով փորձեց հանգստացնել ալեկոծ հայ ժողովրդին, հետո սպառնաց, որ եթե շարժումը շարունակվի, ապա դա կործանարար կլինի Աղրբեջանում ապրող շուրջ կես միլիոն հայերի համար[93]: Դրանով նա փաստորեն հուշեց աղրբեջանցի վանդալներին անել այն, ինչ արեցին հետագայում: Գորբաչովը նաև աղրբեջանցիներին հասկացնել տվեց, որ կարող են փակել Հայաստան տանող ճանապարհները, հանրապետությունը կտրել արտաքին աշխարհի հետ հաղորդակցվելուց և տնտեսական բոյ-

[92] «Правда», 22. 02. 1988.
[93] Ուլուբաբյան Բ., նշված աշխ., էջ 72:

կոտի միջոցով բնակչությանը սովի մատնել: ԽՍՀՄ կենտրոնական մարմինները շարժման առջև պատնեշ կանգնեցրին նրա սկսման առաջին օրերից և մինչև վերջ հավատարիմ մնացին արցախյան հարցի նկատմամբ որդեգրած անհանդուրժողական կարծատես քաղաքականությանը:

Արցախյան շարժման հենց սկզբից լիովին բացահայտվեց Խորհրդային Հայաստանի իշխանությունների կտրվածությունը ժողովրդական զանգվածներից, նրանց զգուշավորությունն ու անկարողությունը: Հանրապետության ղեկավարության ոչ մի օղակ չկարողացավ ազդեցություն գործել ծավալվող իրադարձությունների վրա: Հայաստանի կոմկուսի ղեկավարությունը ոչ միայն չկարողացավ ուղղորդել զանգվածային շարժումը, այլև արգելափակեց ծավալվող իրադարձությունների ճիշտ լուսաբանումը: Տարիներ շարունակ իրեն հեռու պահելով արցախյան հիմնահարցերից և անտեսելով այդ մասին ստացված ահազանգերը՝ հանրապետության կուսակցական, պետական բյուրոկրատիան արցախյան շարժման նկատմամբ դրսևորեց ծայրահեղ զգուշավորություն և վախկոտություն: Դա թելադրված էր Արցախի մասին վերադաս մարմինների պաշտոնական դիրքորոշումն ամեն գնով պահպանելու ձգտմամբ: Փետրվարի 21-ին շտապ հրավիրված ՀԿԿ կենտկոմի բյուրոյի նիստը հավանություն տվեց ԽՄԿԿ կենտկոմի որոշմանը, որովհետև Հայաստանի մի շարք իշխանավորներ ձգտում էին հարաբերությունները չբարդացնել վերադասի հետ[94]: Հաջորդ օրը տեղի ունեցավ ՀԿԿ կենտկոմի բյուրոյի հերթական նիստը, որը նպատակահարմար գտավ խնդրել ԽՄԿԿ կենտկոմին ապագայում ազգային հարցը քննարկելիս չմոռանալ Լեռնային Ղարաբաղի հարցը[95]: Հանրապետության ղեկավարությունը չկարողացավ որևէ կերպ ազդել իրադարձությունների ընթացքի վրա: Եվ ժողովրդի ազգային ցավերի նկատմամբ անտարբերությունը Հայաստանի իշխանություններին, ի վերջո, հասցրեց ինքնամեկուսացման:

Արցախյան հարցի հետ մեկտեղ հանրահավաքներում բացա-

---

[94] Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև ՀԱԱ), Ֆ. 1, ց. 82, գ.21, թ.2-3:
[95] Տե՛ս նույն տեղում, թ.13:

հայտվում և քննարկվում էին հանրապետության սոցիալ-տնտեսական ու հասարակական-քաղաքական կյանքում տեղ գտած թերություններն ու սխալները, որոնց մասին իշխանությունները լռում էին: Փաստորեն ժողովուրդն իր ձեռքն էր վերցրել շարժումը և ինքն էր տոն տալիս հանրապետության հասարակական-քաղաքական կյանքին:

Իսկ շարժումը գնալով ծավալվում էր: 1988 թ. փետրվարին ստեղծվեց շարժման կազմկոմիտե, որի մեջ մտան Իգոր Մուրադյանը, Վաչե Սարուխանյանը, Վազգեն Մանուկյանը, Աշոտ Մանուչարյանը, Համբարձում Գալստյանը, Ալեքսան Հակոբյանը, Սամսոն Ղազարյանը, Սամվել Գևորգյանը, Վանո Սիրադեղյանը, Արմեն Հովհաննիսյանը, Հենրիկ Իգիթյանը և ուրիշներ[96]: Մարտի սկզբներին Իգոր Մուրադյանի նախաձեռնությամբ ստեղծվեց «Ղարաբաղ» անվանումով կոմիտե, որը ղեկավարում էր բազմահազարանոց ցույցերն ու միտինգները: Բոլոր քաղաքներում և հիմնարկ-ձեռնարկություններում ստեղծվեցին «Ղարաբաղ» կոմիտեներ, որոնք քննարկում էին պայքարի հետագա զարգացման, շարժմանն օժանդակելու խնդիրներ:

բ. Սումգայիթյան ողբերգությունը

ԽՍՀՄ կենտրոնական մարմինները և ադրբեջանական իշխանությունները համոզվելով, որ քաղաքական միջոցներով հնարավոր չէ կասեցնել հայերի օրըստօրե ծավալվող ազատագրական շարժումը, որոշեցին ոտնահարել համամարդկային իրավունքի բոլոր չափանիշները, ժողովրդական շարժմանը հակադրել բիրտ ուժն ու բռնությունը:

1988 թ. փետրվարի 26-ին ԽՄԿԿ ԿԿ գլխավոր քարտուղար Մ. Գորբաչովը հատուկ կոչով դիմեց Ադրբեջանի և Հայաստանի աշխատավորներին՝ հորդորելով դադարեցնել ցույցերն ու հանրահավաքները՝ խոստանալով առաջիկայում լուծել բարձրացված հարցերը: Նույն օրը տեղի ունեցավ ՀԿԿ կենտկոմի պլենում, որի աշ-

[96] Ազիզբեկյան Ռ., նշված աշխ., էջ 21:

խատանքներին մասնակցեցին ԽՄԿԿ կենտկոմի քարտուղարներ Վ. Դոլգիխը և Ա. Լուկյանովը: Պլենումում ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Կ. Դեմիրճյանը պաշտպանեց Մ. Գորբաչովի կոչը՝ ավելացնելով, որ պետք է «Կարգ հաստատենք և իրագործենք Գորբաչովի առաջ քաշած պահանջները»[97]:Հայ ժողովուրդը մեկ անգամ ևս հավատաց կենտրոնական իշխանություններին և դադարեցրեց գործադուլներն ու հանրահավաքները: Իսկ աղրբեջանցիներն ընդհակառակը, ոչ միայն չդադարեցրին, այլև նոր թափ հաղորդեցին հակահայկական ելույթներին և դիմեցին վայրագ գործողությունների:

Բաքվից 35 կմ հեռավորության վրա գտնվող Սումգայիթ քաղաքում 1988 թ. փետրվարի 26-ից սկսած հակահայկական հանրահավաքներ կազմակերպվեցին, որոնց գլխավորում էին քաղաքի Կոմունիստական կուսակցության շրջկոմների քարտուղարները: Հետագայում Սումգայիթի պաշտոնանկ արված քաղկոմի քարտուղարը հայտարարեց, որ այդ բոլորը կազմակերպվել է Աղրբեջանի կոմկուսի կենտկոմի և նրա առաջին քարտուղարի ցուցումով: Դրան հավանաբար տեղյակ էին նաև Մ. Գորբաչովը և նրա շրջապատը[98]:

Փետրվարի 27-ին աղրբեջանական խուժանը «մա՜հ հայերին» կոչով տեղական իշխանությունների աչքի առաջ կատարեց հայ ազգաբնակչության կոտորած, որը տևեց մինչև փետրվարի 29-ը: Պաշտոնական տվյալներով տանջամահ էին արվել 32 մարդ, խոշտանգվել ու ծանր վիրավորվել ավելի քան 200 հոգի[99]: Ո՛չ Սումգայիթի հանրահավաքները, ո՛չ կոտորածները պատահական չեն եղել, ինչպես հետագայում փորձում էին ներկայացնել աղրբեջանական իշխանությունները: Նախօրոք կազմել էին հայերի բնակարանների ցուցակները, անջատել հեռախոսները, պահեստավորել ինքնաշեն զենքեր: Փետրվարի 26-29-ին Սումգայիթի միլիցիան չի գործել: Քաղաքը խուլ շրջափակված էր, ճանապարհներն ու եր-

---

[97] ՀԱԱ, Ֆ. 1, ց. 82, գ.21, թ.4-5:

[98] Улубабян Г., Золян С., Аршакян А., Сумгаит... Геноцид... Гластность?, Ереван, 1989, с.55.

[99] Տե՛ս նույն տեղում, էջ 18, 19:

կաթուղին գտնվում էին զինված ջոկատների հսկողության տակ: Գազազած խուժանը հայերին սպանում էր բնակարաններում, տանջամահ անում փողոցներում ու հրապարակներում, այրում կենդանի մնացած մարդկանց: Այդ հանցագործության նպատակն էր փակել Արցախի հիմնահարցի քննարկման հեռանկարները, նոր ջարդերի կազմակերպման սպառնալիքով ահաբեկել հայերին և նրանց հարկադրել հրաժարվել ազատագրական պայքարից: Երեք օր տևած ջարդերից հետո միայն, փետրվարի 29-ի գիշերը խորհրդային զորքը մտավ Սումգայիթ, որին մեծ դժվարությամբ հաջողվեց դադարեցնել վայրագությունները և քաղաքից դուրս հանել կենդանի մնացած հայերին: Ավելի քան երեք հազար սումգայիթաբնակ հայեր, կորցնելով իրենց բնակարանները և ունեցվածքը, հրաշքով փրկվելով սպանդից, պատսպարվեցին Հայաստանում, իսկ մնացածները Աղրբեջանից փախան տարբեր ուղղություններով: Ըստ որում նրանց թույլ չէին տալիս փոխադրվել Ղարաբաղ:

Կենտրոնական իշխանությունները ձգտում էին հասարակությունից թաքցնել սումգայիթյան ողբերգությունը՝ այն ներկայացնելով որպես խուլիգանական տարրերի գործողություն: Ավելին, կենտրոնական մամուլն ու հեռուստատեսությունը դատապարտում էին «պրոլետարական միասնությունը խաթարող հայ անջատականներին», հակահայկական թույն սփռում ամբողջ երկրով մեկ: Մոսկվայի աղրբեջանամետ քաղաքականության պատճառով սումգայիթյան ոճրագործները մնացին անպատիժ: Դա աղրբեջաներ հայերի նկատմամբ լայնածավալ հալածանքների և բռնի տեղահանումների ազդակ հանդիսացավ: Ամբողջ Աղրբեջանում ծայր առավ վայրենի խրախճանք: Ամենուր ջարդարարների գործողություններն ուղեկցվում էին հայերի սպանություններով, բնակավայրերի ավերումով ու թալանով:

գ. Համազգային պայքարի վերելքը

Սումգայիթյան ոճրագործությունը ոչ միայն չընկճեց հայ ժողովրդին, այլ, ընդհակառակը, նրան ավելի համախմբեց համազ-

գային նպատակների իրագործման գաղափարի շուրջ: 1988 թ. մարտին Արցախ-Հայաստանում ավելի մեծ թափով վերսկսվեցին բողոքի բազմահազարանոց ցույցերն ու հանրահավաքները: Հիմնական պահանջներն էին. արդարացի լուծել ղարաբաղյան հիմնահարցը, քաղաքական գնահատական տալ սումգայիթյան եղեռնագործությանը և պատժել հանցագործներին: Բայց կենտրոնական իշխանությունները բացահայտորեն շարունակում էին վարել հայության արդարացի պայքարը բռնի ուժով ճնշելու քաղաքականություն: Նրանք փորձում էին նույնացնել Հայաստանում և Ադրբեջանում տեղի ունեցող իրադարձությունները: Մամուլի կենտրոնական օրգանները անհամար կեղծ նյութեր հրապարակելով փորձում էին ցույց տալ, որ, իբր, Հայաստանում բռնություններ են գործադրվում ադրբեջանցիների նկատմամբ:

Շուտով Երևանի փողոցներում հայտնվեցին խորհրդային զորքեր ու զրահատեխնիկա, որոնք իրենց հսկողության տակ վերցրեցին կառավարական շենքերը, ռադիոտունը, հեռուստակենտրոնը, փոստատունն ու հիմնական ճանապարհները: Ցույցերն ու հանրահավաքները արգելվեցին: Բայց ժողովուրդը վճռական էր և անկոտրում:

Այս պայմաններում կենտրոնը փորձեց արցախյան պայքարի իմաստը հանգեցնել զուտ տնտեսական պայքարի և ապակողմնորոշել լայն հասարակայնությանը: Պատահական չէր, որ 1988 թ. մարտին ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի որոշմամբ ԼՂԻՄ-ին հատկացվեց 400 միլիոն ռուբլի՝ մարզի սոցիալ-տնտեսական հրատապ հարցերը լուծելու համար[100]: Ադրբեջանի ղեկավարությունն այդ գումարի մի մասը յուրացրեց, իսկ մյուս մասը տրամադրեց Արցախի ադրբեջանաբնակ գյուղերի բարեկարգմանը: Այդ բոլորին քաջատեղյակ Մոսկվան բավարարվում էր ժողովուրդների բարեկամության քարոզներով: Մայիսի վերջին «Ղարաբաղ» կոմիտեն համալրվեց նոր անդամներով՝ Լևոն Տեր-Պետրոսյան, Բաբկեն Արարքցյան, Դավիթ Վարդանյան և ուրիշներ: Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի պլենումը 1988թ.-ի մայիսի 21-ին իր զբաղեցրած պաշտոնից ազատեց Ք. Բաղիրովին

[100] Арутюнян В., События в Нагорном Карабахе, с. 73, 135.

և կենտկոմի առաջին քարտուղար ընտրեց Ա. Վեզիրովին, իսկ Հայաստանի կոմկուսի կենտկոմի պլենումը Կ. Դեմիրճյանին ազատեց ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղարի պաշտոնից և նրա փոխարեն ընտրեց Ս. Հարությունյանին[101]:

Չնայած բռնաճնշումներին՝ շարունակվում էին հանրահավաքները, որոնց մասնակիցներն այժմ պահանջում էին հրավիրել Հայաստանի Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջան և ընդունել Արցախը մայր հայրենիքին միավորելու մասին որոշում: Բայց նստաշրջանն անընդհատ հետաձգվում էր: Սկսվեցին նստացույցեր, հացադուլներ, նույնիսկ կազմակերպվեցին անցանկալի գործադուլներ: Վերջապես, 1988 թ. հունիսի 15-ին Հայաստանի իշխանությունները հարկադրված հրավիրեցին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջան, որը որոշեց համաձայնություն տալ մարզը Հայաստանի կազմի մեջ ներառելու մասին ԼՂԻՄ-ի Մարզխորհրդի խնդրանքին: Միաժամանակ նստաշրջանը դիմեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդին՝ հարցը քննարկելու և դրականորեն լուծելու խնդրանքով[102]: Սա ԽՍՀՄ պատմության մեջ եզակի դեպք էր, երբ տեղական մարմինները տարածքային փոփոխություններ կատարելու մասին որոշում էին ընդունել առանց կենտրոնի նախնական հրահանգավորման: Ուստի զարմանալի չէ, որ մոսկովյան իշխանությունները հայ ժողովրդի ազատագրական շարժումը որակեցին վերակառուցման դեմ ուղղված ինքնագլուխ ներսահմանային վերածնումներ կատարող քայլ և մերժեցին հարցի քննարկումը:

1988 թ. հուլիսի 18-ին Արցախի իշխանությունների խնդրանքով ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը Հայաստանի, Ադրբեջանի և ԼՂԻՄ-ի ներկայացուցիչների մասնակցությամբ քննարկեց Լեռնային Ղարաբաղի հարցը: Հայաստանի ներկայացուցիչներ Վ. Համբարձումյանը, Ս. Համբարձումյանը, Վ. Պետրոսյանը, ԼՂԻՄ-ի ներկայացուցիչ Հ. Պողոսյանը և ուրիշներ իրենց ելույթներում դատապարտեցին սումգայիթյան ոճրագործությունը, ցույց տվեցին արցախյան շարժման օրինականությունն ու Լեռնային Ղարաբաղի՝ մայր հայրենիքին միանալու անհրա-

---

[101] ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.19, թ. 102, գ. 14, թ. 156, 157:
[102] «Խորհրդային Հայաստան», 16. 06.1988:

ժեշտությունը[103]: Բայց ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունը մերժեց ԼՂԻՄ-ի և Հայաստանի վերամիավորման մասին որոշումները: Ավելին, Մ. Գորբաչովի գլխավորած կուսակցական վերնախավը փորձեց հավասարության նշան դնել հակամարտող կողմերի միջև: Մերժելով արցախահայության օրինական պահանջը, վերնախավը ամեն կերպ պաշտպանում էր Ադրբեջանի շահերը և դատապարտում շարժումը:

Հոկտեմբերյան հեղափոխության հերթական տարելիցի (1988 թ. նոյեմբերի 7) նշումը Հանրապետության հրապարակում վերածվեց բազմահազարանոց բողոքի ցույցի, որի մասնակիցները շարունակում էին համառորեն պահանջել Արցախի միացումը մայր հայրենիքին: 1988 թ. ԽՍՀՄ Գերագույն խորհրդի մասնակի ընտրությունների ժամանակ առաջին անգամ այլընտրանքային կարգով պատգամավորներ դարձան ղարաբաղյան շարժման մի քանի ղեկավարներ, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչներ:

1988 թ. նոյեմբերին, հակառակ իշխանությունների համառ դիմադրությանը, ժողովրդի պահանջով գումարվեց ՀԽՍՀ Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջան, որը որոշում ընդունեց այն մասին, որ Հայաստանում կարող են կենսագործվել կենտրոնական իշխանությունների միայն այն որոշումները, որոնք հանրապետության Գերագույն խորհուրդը կհամարի նպատակահարմար: Մոսկովյան իշխանությունները հակասահմանադրական և ապօրինի համարեցին ինչպես այդ նստաշրջանի գումարումը, այնպես էլ նրա ընդունած որոշումը: Ինքնուրույնության ամենաթույլ արտահայտությունն անգամ զայրացնում էր կենտրոնին, ուստի 1988 թ. նոյեմբերի վերջերին Երևանում մտցվեց հատուկ դրություն և պարետային ժամ[104]: Արգելվեցին ցույցերն ու հանրահավաքները, իշխանությունը փաստորեն հանձնվեց զինվորականներին:

---

[103] «Խորհրդային Ղարաբաղ», 24.07. 1988:
[104] Արշակյան Ա., նշված աշխ., էջ 70:

դ. Բռնագաղթը

Հայաստանի վիճակն ավելի ծանրացավ 1988 թ. կեսերին Ադրբեջանից հայերին զանգվածաբար արտաքսելու հետևանքով: Օգտվելով գորբաչովյան կենտրոնական իշխանության թուլությունից ու խրախուսանքից, վայրենի ձևեր ընդունած հակահայկական քարոզչության պայմաններում, ադրբեջանական իշխանությունների կազմակերպած զինված ավազակային բանդաները հարձակումներ սկսեցին Ադրբեջանի հայկական բնակավայրերի վրա՝ կատարելով թալան, հրկիզումներ, սպանություններ: 1988թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին Կիրովաբադից ու Բաքվից, Շամխորի, Խանլարի շրջաններից և այլ հայաշատ վայրերից սկսվեց հայ բնակչության արտաքսումը, որն ուղեկցվում էր բռնություններով ու խոշտանգումներով: Բռնագաղթվածները ադրբեջանական հրոսակներին էին թողնում ամեն ինչ՝ տները, կայքը, անասունները: Դա ավելի էր ոգևորում անպատժելիության մթնոլորտում գործող խուժանին: Իրենց հանցագործությունները քողարկելու նպատակով Ադրբեջանի իշխանությունները հայերին հարկադրում էին ստորագրել կեղծ պայմանագրեր, որ, իբր, նրանք կամավոր են մեկնում Հայաստան: Միաժամանակ, համաշխարհային հասարակության թյուրիմացության մեջ գցելով՝ Ադրբեջանի իշխանությունները 1988 թ. դեկտեմբերին, կենտրոնի հավանությամբ և ադրբեջանցի հրահրիչների կոչերով կազմակերպեցին հայաստանաբնակ 120 հազար ադրբեջանցիների արտագաղթ[105] (ըստ ադրբեջանական կեղծ տվյալների՝ 160-200 հազար): Մոսկվան շտապեց «հավասարակշռել» արտագաղթերը: Մ. Գորբաչովի մերձավորները հաշվի չէին առել մի «մանրուք». Ադրբեջանի հայերը թալանվել, խոշտանգվել և իրենց ունեցվածքը, բնակարաններն ու խնայողությունները թողել փախել էին, իսկ հայաստանաբնակ

[105] Բալայան Վ., Արցախի պատմություն, Երևան 2002, էջ 358, Ազիզբեկյան Ռ., նշված աշխ., էջ 31: Խոջաբեկյան Վ., Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX-XX դարերում, XXI դարի շեմին, Երևան, 2001, էջ 289, 290, "ЗСФСР в цифрах", с. 4-7, 1989 թ. մարդահամարի նյութերը, "Бакинский рабочий", 09.08, 1989, 07. 10. 1990, "Союз", N 38, 09, 1990.

աղրբեջանցիներին ոչ միայն հնարավորություն տրվեց վաճառելու կամ փոխանակելու իրենց բնակարանները, այլև նրանց ունեցվածքը փոխադրելու համար տրամադրվեցին մեքենաներ և նույնիսկ ինքնաթիռներ: Նրանց ճնշող մեծամասնությունը կարողացան տեղափոխել ունեցվածքի հիմնական մասը: Հայաստանից արտագաղթած աղրբեջանցիներն առանց դժվարությունների տեղավորվեցին Աղրբեջանից հեռացված հայերի բնակարաններում: Աղետի գոտում բնակվող աղրբեջանցիներին, ըստ պաշտոնական վիճակագրության, տրվեց մոտավորապես 80 միլիոն ռուբլու փոխհատուցում: 1988 թ. սումգայիթյան եղեռնագործությունից հետո մինչև տարեվերջ շուրջ 200 հազար բռնագաղթված հայեր ապաստանեցին Հայաստանում և ԽՍՀՄ տարբեր վայրերում[106]: Բռնագաղթված աղրբեջանաբնակ հայերը հանգրվանեցին Երևանում, Մասիսի, Արարատի, Վարդենիսի, Հրազդանի, Աբովյանի, Կրասնոսելսկի շրջաններում, հանրապետության հյուրանոցներում, հանրակացարաններում, առողջարաններում, հանգստյան տներում և այլուր: Նրանց մի մասն ապաստանեց ԽՍՀՄ տարբեր տարածաշրջաններում, և հատկապես Հյուսիսային Կովկասում: Բռնագաղթվածներին տեղավորելը, նրանց կարիքները հոգալը շատ ծանր էր ճգնաժամային պայմաններում գտնվող Հայաստանի համար, հատկապես այն պատճառով, որ Աղրբեջանից Հայաստան ներգաղթածները հիմնականում քաղաքաբնակներ էին: Այդ վիճակը ավելի ծանրացավ աղետալի երկրաշարժի պատճառով, որը նոր զոհեր ու ավերումներ բերեց հայ ժողովրդին:

ե. 1988 թվականի երկրաշարժը

1988 թ. դեկտեմբերի 7-ին Հայաստանում տեղի ունեցավ ավելի քան 9 բալ հզորությամբ ավերիչ երկրաշարժ: Այն ընդգրկեց հանրապետության տարածքի 1/3 մասը՝ մեկ միլիոն 130 հազար բնակչությամբ: Րոպեների ընթացքում լրիվ կամ մասնակի ավերվեցին

[106] Մինասյան Է., Սումգայիթյան և Բաքվի ջարդերի իրավաքաղաքական գնահատականը, «Մեծ Եղեռն, դատապարտումից հատուցում» հոդվածների ժողովածուն, Երևան 2011, էջ 40:

Լենինականը, Սպիտակը, Կիրովականը, Ստեփանավանը, հարյուրից ավելի ավաններ ու գյուղեր: Ավերվեց հանրապետության ամբողջ բնակֆոնդի մոտ 17%-ը: Երկրաշարժի գոտում շարքից դուրս եկան ջերմամատակարարման, էներգամատակարարման բոլոր համակարգերը, կապի, տրանսպորտի և կենցաղսպասարկման ծառայությունները: Ավերվեց ավելի քան 170 արդյունաբերական ձեռնարկություն: Ծանր վնաս կրեց գյուղատնտեսությունը, քանդվեցին անասնապահական շինությունները, ոչնչացավ անասունների մեծ մասը: Շարքից դուրս եկավ գյուղատնտեսական մթերքներ վերամշակող 80 ձեռնարկություն: Տարերային աղետը հանրապետության ժողովրդական տնտեսությանը հասցրեց ավելի քան 13 մլրդ ռուբլու վնաս: Պաշտոնական նվազեցված տվյալներով զոհվեց ավելի քան 25 հազար մարդ, 530 հազարը դարձավ անօթևան[107]:

Աղետի լուրը Հայաստանի վրա բևեռեց համայն մարդկության ուշադրությունը: Դեկտեմբերի 8-ին Երևան ժամանեց ԽՍՀՄ Նախարարների խորհրդի նախագահ Ն. Ռիժկովը, իսկ երկու օր անց աղետի գոտի եկավ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահ Մ. Գորբաչովը: Չխնայելով իրենց ուժերը՝ տևական ժամանակ աղետի գոտում էին գտնվում ԽՍՀՄ նախարարների խորհրդի նախագահի տեղակալներ Բորիս Շչերբինան, Յուրի Բատալինը, Լև Վորոնինը, Իվան Սիլաևը և ուրիշներ: Նրանք գիշեր ու զօր դադար չունենալով, մեկնում էին տեղեր, խորամուխ լինում բոլոր գործերի ու խնդիրների մեջ: Նրանցից յուրաքանչյուրն արժանի է հայ ժողովրդի երախտագիտությանը: Երկրաշարժի առաջին ժամերից Հայաստանում գտնվող Բորիս Շչերբինան գլխավորում էր Լենինական (Գյումրի) քաղաքի հատուկ շտաբը: Ավերված քաղաքում չէին գործում ջեռուցման, ջրամատակարարման, էլեկտրամատակարարման համակարգերը: Իր ողջ եռանդով Շչերբինան ձեռնամուխ եղավ այդ առաջնահերթ խնդիրների լուծմանը: Չնայած 15 աստիճան սառնամանիքին, նա կարողացավ կազմակերպել շեն-

[107] Տե՛ս Մանուկյան Մ., Երկրաշարժ, Երևան, 1989, էջ 3, 4, 5, 6, Հայոց պատմություն, դասագիրք բուհերի համար, խմբ. պրոֆ. Հ. Սիմոնյանի, Երևան, 2012, էջ 722:

քերի փլատակների տակ մնացած մարդկանց փրկությունը: Շչերբինաև շուտով ցրտից ծանր հիվանդացավ: Բժիշկները նրան առաջարկեցին շտապ մեկնել Մոսկվա՝ բուժվելու, բայց նա կտրականապես մերժեց՝ շարունակելով աջակից լինել կործանված քաղաքի աղետյալներին: Միայն մահամերձ վիճակում նա տեղափոխվեց Մոսկվա, որտեղ էլ կնքեց իր մահկանացուն: Երախտապարտ լենինականցիները իրենց քաղաքում փողոցներից մեկը կոչեցին Բորիս Շչերբինայի անունով, ինչպես նաև կանգնեցրին նրա կիսանդրին[108]:

Երկրաշարժից անմիջապես հետո տարբեր երկրներից հումանիտար օգնության բեռներով Հայաստան էին գալիս օդանավեր, գնացքներ, ավտոմեքենաների շարասյուներ: Համակողմանի օգնությանը մասնակցում էին աշխարհի 113 երկրներ, բազմաթիվ միջազգային կազմակերպություններ: Վրաստանից, Ռուսաստանից, Ուկրաինայից, Ղազախստանից և ԽՍՀՄ մյուս հանրապետություններից Հայաստան ժամանեցին հազարավոր փրկարարներ, բժիշկներ, շինարարներ և այլ մասնագետներ: Նրանք աղետյալներին օգնելու համար բերում էին սննդամթերք, բժշկական սարքավորումներ, դեղորայք, վրաններ, շինարարական տեխնիկա և այլն: 1989 թ. սկզբում աղետի գոտում աշխատում էին այլ հանրապետություններից ժամանած ավելի քան 40 հազար մասնագետներ, զինծառայողներ, որոնք ԽՍՀՄ կառավարության ընդունած որոշման համաձայն մեծ աշխատանք ծավալեցին: Որոշվել էր ավերվածը վերականգնել երկու տարում: Աղետի գոտուց շուրջ 170 հազար մարդ տեղավորվեց Կովկասի առողջարաններում ու հանգստյան տներում: Հազարավոր խեղված երեխաներ բուժման նպատակով տեղափոխվեցին Խորհրդային Միության և արտասահմանի բուժարաններ:

Ողջ աշխարհը անշահախնդիր օգնություն էր ցույց տալիս ծանր կացության մեջ հայտնված հայ ժողովրդին: 1990 թ. հունվարի 1-ի դրությամբ Հայաստանի օգնության հիմնադրամ էր փոխանցվել արտասահմանյան երկրներում հանգանակված շուրջ 35

[108] Հարությունյան Ս., Անցյալի ու ներկայի մասին, Երևան, 2011, էջ 202, 203, 220:

մլն դոլար[109]: Շատ պետություններ ու կազմակերպություններ աղետի գոտում ձեռնարկեցին կառուցելու բնակելի թաղամասեր, հիվանդանոցներ, դպրոցներ: 1989 թ. իտալացիները Սպիտակում կառուցեցին բնակելի թաղամաս՝ «Իտալական գյուղը», Գյումրիում թաղամաս կառուցեցին ավստրիացիները: Նորվեգացիների կողմից Սպիտակում կառուցված ժամանակակից հիվանդանոցը կրում է մեծ մարդասեր, հայ ժողովրդի բարեկամ Ֆրիտյոֆ Նանսենի անունը: Գյումրիում անգլիացիների հիմնադրած դպրոցի հանդիսավոր բացմանը ներկա էր Անգլիայի վարչապետ Մարգարետ Թետչերը:

Հայ ժողովուրդը երբեք չի մոռանա աղետի գոտի օգնության շտապող հարավսլավացի 7 օդաչուներին, որոնք Երևանի մատույցներում զոհվեցին օդային աղետից, ինչպես նաև Գյումրիի մոտակայքում ավիավթարից զոհված խորհրդային զինծառայողներին: Հայ ժողովուրդը երախտագիտությամբ ընդունեց աշխարհի մարդասիրական օգնությունը:

Մայր հայրենիքին լայն աջակցության ձեռք մեկնեց սփյուռքահայությունը: Այդ ծանր օրերին նա համախմբվեց և ստեղծեց «UOU Արմենիա», «Ազնավուրը Հայաստանին» և տասնյակ այլ կազմակերպություններ, որոնք նյութական ու բարոյական մեծ օգնություն էին ցույց տալիս հայրենաբնակ իրենց եղբայրներին ու քույրերին: Բազմաթիվ սփյուռքահայեր շտապեցին իրենց հետ մայր հայրենիք բերել դեղորայք, հագուստ, վրաններ, սննդամթերք և այլն: Նրանցից շատերը մնացին Հայաստանում և անմիջական մասնակցություն ունեցան փրկարարական ու վերականգնողական աշխատանքներին: Նրանց թվում էր նաև Շարլ Ազնավուրը, որը հետագայում նույնպես մեծ եռանդով շարունակեց իր ազգանվեր գործունեությունը:

Աղետի գոտում ծավալված շինարարական աշխատանքներին մեծապես արգելակում էր Ադրբեջանի կողմից իրականացվող տրանսպորտային ու տնտեսական շրջափակումը, որի հետևանքով անհրաժեշտ շատ շինանյութեր ու ապրանքներ տեղ չէին հաս-

[109] Տե՛ս Հայոց պատմություն, նշված աշխ., էջ 723, Մանուկյան Մ., նշված աշխ., էջ 20:

նում: Աղետի գոտու վերականգնման գործում մեծ դեր խաղացին ԽՍՀՄ այլ հանրապետություններեց օգնության եկած շատ շինարարական կազմակերպություններ, որոնք 1990 թ.-ին մի շարք պատճառներով դադարեցրին իրենց աշխատանքները և հեռացան[110]: 1989-1990 թթ. ընթացքում աղետի գոտում իրականացվեց նախատեսված բնակելի շենքերի կառուցման միայն 14,8 %-ը և հանրակրթական դպրոցների 5,5%-ը:

Չնայած դրսից եկած անշահախնդիր մեծ օգնությանը, բայց աղետի գոտու բնակչության մեծ մասը շարունակում էր մնալ անօթևան և առանց աշխատանքի: Դա ավելի էր սրում հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը[111]:

գ. Ժողովրդական հուզումների նոր ալիքը Հայաստանում Արցախահայության գոյամարտը (1989 թ. հունվար - 1991թ. օգոստոս)

Թեպետ օրավուր ծանրացող վիճակին, հանրապետության բնակչությունը շարունակում էր իր արդարացի ազատագրական պայքարը: Աղետի գոտի ժամանած Մ. Գորբաչովից նա վճռակոնորեն պահանջեց լուծում տալ հարցին: Բայց ԽՍՀՄ ղեկավարը ոչ միայն չընդառաջեց, այլև կարգադրեց հաշվեհարդար տեսնել շարժման կազմակերպիչների ու ղեկավարների հետ: 1988 թ. դեկտեմբեր - 1989 թ. հունվար ամիսներին կալանավորվեցին և մոսկովյան բանտերում արգելափակվեցին «Ղարաբաղ» կոմիտեի անդամները և մի քանի տասնյակ երիտասարդներ՝ Հայաստանից ու Արցախից: Մոսկվայի աղրբեջանամետ իշխանությունները փորձում էին օգտագործել երկրաշարժի ծանր հետևանքները, գլխատել հայերի ազատագրական պայքարը և դաժան միջոցներով վերջնականապես ճնշել այն[112]: Բայց դա հակառակ արդյունք տվեց: Չնայած գործող հատուկ դրությանն ու պարետային ժա-

---

[110] Տե՛ս նույն տեղում:

[111] Աղետի գոտին երեկ և այսօր (շինարարական-վերականգնողական աշխատանքներ), 1989-2008, Երևան, 2008, էջ 11, 14:

[112] Տե՛ս Գալստյան Հ., Չուղարկված նամակներ, Երևան, 2013, էջ 42, 43:

մին, թեև երկրաշարժի ավերումներին ու շրջափակումներին՝ Հայաստանում ու Արցախում նոր թափով բորբոքվեցին բազմահազարանոց ցույցերն ու հանրահավաքները: Ղարաբաղյան հարցի արդարացի լուծման պահանջին ավելացավ նաև շարժման ղեկավարներին ազատ արձակելու պահանջը: Այդ ճակատագրական օրերին հայ ժողովրդի արդարացի ընդվզմանը պաշտպան կանգնեցին ռուս առաջավոր մտավորականության փայլուն մի կոհորտա՝ Անդրեյ Սախարովը, նրա կինը՝ Ելենա Բոնները, Գալինա Ստարովոյտովան, Միխայիլ Դուդինը, Անդրեյ Նույկինը, Վիկտոր Շեյնիսը, Լեոնիդ Բատկինը, Անդրեյ Զուբովը, Յուրի Աֆանասևը, Անատոլի Պրիստավկինը, Բուլատ Օկուջավան, Տատյանա Լիխանովան, Ինեսա Բուտկովան, Վալենտին Օսկոցկին և ուրիշներ: Նրանք պարբերաբար դիմումներ էին հղում ԽՍՀՄ ժողովրդավարական ուժերին և համաշխարհային հասարակայնությանը՝ հայ ժողովրդի արդարացի պայքարին պաշտպան կանգնելու կոչերով: Սանկտ-Պետերբուրգից ընտրված պատգամավորներ Ա. Սոբչակը և Ա. Դենիսովը ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների առաջին համագումարում (1989թ. մայիս) անգամ հայտարարեցին, որ իրենք հրաժարվում են ԽՍՀՄ Գերագույն խորհրդում իրենց մանդատներից՝ հօգուտ Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչների:

Արցախյան ազատագրական պայքարի օրերից մեր ժողովրդի կողքին էր, նրա արդարացի պահանջի մշտական աջակիցն ու ջերմ պաշտպանը՝ Մեծ Բրիտանիայի Լորդերի պալատի փոխխոսնակ Քերոլայն Քոքսը: Նա 1991թ. մայիսից սկսած Արցախ է այցելել ավելի քան 50 անգամ: Լինելով ակադեմիկոս Ա. Սախարովի համախոհը՝ Քոքսը մշտապես հետևել է նրա մարդասիրական սկզբունքներին՝ հայտարարելով. «Ես այնտեղ եմ, որտեղ ցավ կա»[113]: Նրա անմիջական նախաձեռնությամբ ու ղեկավարությամբ ԱՄՆ-ի, Ճապոնիայի, Անգլիայի, Նորվեգիայի, Իտալիայի և այլ երկրների գիտնականներից, գրողներից, հասարակական գործիչներից կազմավորվեց 13 հոգանոց խումբ, որը 1991թ. մայիսին ուղևորվեց Հայաստանի Հանրապետություն: Գորիսի

[113] Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988-1994, հանրագիտարան, Երևան, 2004, էջ 670:

շրջանի Տեղ գյուղում խումբը հանդիպելով հայ փախստականներին՝ արձանագրեց նրանց նկատմամբ աղրբեջանցիների կողմից գործադրված անկարագրելի բռնությունների փաստերն ու ներկայացրեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդին ու Պաշտպանության նախարարությանը: Նա բազմիցս ռազմական ուղղաթիռով շրջել ու նկարահանել է ԼՂՀ հրդեհվող ու ավերված գյուղերը և դրանք ցուցադրել է Եվրոպայի ու Ամերիկայի տարբեր հեռուստաալիքներով: Քոքսը Մեծ Բրիտանիայի Լորդերի պալատում ներկայացրել է Ղարաբաղյան հիմնախնդրի էությունը: Արցախյան պատերազմի ընթացքում նա նյութական ու բարոյական անգնահատելի օգնություն է ցույց տվել շրջափակման մեջ գտնվող արցախահայությանը: Զինադադարից հետո նրա ակտիվ աջակցությամբ և գերմանացի մասնագետների համագործակցությամբ Ստեփանակերտում ստեղծվեց պրոթեզավորման մասնագիտացված կլինիկա, իր իսկ միջոցներով նույն քաղաքում ողնաշարի վնասվածքներով հիվանդների համար հիմնադրվեց վերականգնողական կլինիկա: Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինը գնահատելով Քոքսի ծառայությունները հայ ժողովրդի հանդեպ՝ նրան անվանել է «հրեշտակ՝ իջած մեր ազգի համար»[114]: Հայ ժողովրդի հիշողության մեջ ընդմիշտ կմնա բուղար ժողովրդի ազնիվ զավակ, կինովավերագրող Ցվետանա Պասկալևայի պայծառ անունը: Նա առաջին արտասահմանցի լրագրողն էր, որը 1991-1994թթ. լինելով Լեռնային Ղարաբաղում, լայնորեն լուսաբանել է Ղարաբաղի հիմնախնդիրը և այն ներկայացրել միջազգային հանրությանը: «Օղակ» գործողության ժամանակ լինելով Գետաշենի ենթաշրջանում և Շահումյանի շրջանում՝ նա հայ բնակչության դեմ կատարվող բռնարարքներն ու տեղահանությունը ռեպորտաժներով ներկայացնում էր միջազգային հանրությանը: Ռազմական թեժ կետերից նա բազմիցս հեռուստահաղորդումներ է պատրաստել *CNN*, *NBC*, բուլղարական ազգային, ռուսական, գերմանական, ֆրանսիական հեռուստաընկերությունների, Ռոյթեր գործակալության համար: Լինելով ռազմական կետերում՝ «Ղարաբաղի վերքերը» ընդհանուր խորագրով Ց. Պասկալևան նկարահանել է պատերազ-

[114] Տե՛ս նույն տեղում:

մական իրադարձություններին և Արցախյան ազատագրական պատերազմին նվիրված 6 վավերագրական ֆիլմ (հայերեն, ռուսերեն ու անգլերեն)[115]: 1993-99 թթ. ԱՄՆ-ի կոնգրեսում, Կանադայի խորհրդարանում, ՄԱԿ-ում, «Միջազգային համաներում» և այլ կազմակերպություններում նա ցուցադրել է իր ֆիլմերը, ելույթներ է ունեցել ի պաշտպանություն արցախահայության ազատագրական պայքարի: Պատերազմից հետո երկար տարիներ ՀՀ ազգային հեռուստատեսությամբ վարել է «Իմ թանկագին ողջեր ու մահացածներ» և Արցախի անցյալին և ներկային վերաբերող հեղինակային հրապարակախոսական ու վերլուծական հաղորդումներ՝ նվիրված Շուշիի ազատագրմանը, ԼՂՀ խնդիրներին:

1989 թ. հունվարի 12-ին ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը որոշում ընդունեց Լեռնային Ղարաբաղում կառավարման նոր ձև մտցնելու մասին: Նախատեսվում էր ստեղծել 8 հոգուց (մեծ մասը Մոսկվայից) կազմված Հատուկ կառավարման կոմիտե՝ ԽՄԿԿ Կենտկոմի բաժնի վարիչ Ա. Վոլսկու գլխավորությամբ[116]: Կոմիտեն անմիջականորեն ենթարկվելու էր կենտրոնին: Նույն որոշմամբ դադարեցվեց Արցախի աշխատավորների կողմից ընտրված ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների 20-րդ գումարման Մարզխորհրդի գործունեությունը: Վերացվեց մարզի կուսակցական մարմինը՝ մարզկոմը: Այս վերջինն արվում էր նաև մարզկոմի առաջին քարտուղար, ազատագրական շարժման նշանավոր ղեկավարներից մեկից՝ Հ. Պողոսյանից ազատվելու համար: Շուտով Ա. Վոլսկու գլխավորած կոմիտեն սկսեց աշխատանքները:

Հայ ժողովուրդը ի սկզբանե մեծ հույսեր չկապեց այդ որոշման հետ, որտեղ հատուկ ընդգծված էր, որ Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի մի մասն է: Այդ կոմիտեի գոյության մի քանի ամիսները ցույց տվեցին, որ մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով և, առաջին հերթին, Ադրբեջանի սադրանքների հետևանքով այն ի վիճակի չէ կատարելու իր առաքելությունը: Հայաստանի ու Արցախի միջև տնտեսական կապեր ստեղծելու նրա ջանքերն ապարդյուն անցան: Փոխարենը Հատուկ կոմիտեի լուռ համաձայ-

[115] Տե՛ս նույն տեղում, էջ 557:
[116] «Правда», 15.01.1989.

նությամբ Ադրբեջանի իշխանությունները ուժեղացրին Լեռնային Ղարաբաղի շրջափակումը և խորացրին բռնությունները հայերի նկատմամբ: Գնալով Արցախի և Հայաստանի հայության մեջ խորացավ անվստահությունը Հատուկ կոմիտեի և ընդհանրապես կենտրոնական իշխանությունների նկատմամբ:

Հայ բնակչության հետևողական պայքարի շնորհիվ և ԽՍՀՄ առաջադեմ մտավորականության օժանդակությամբ ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեի անդամները 1989 թ. մայիսին ազատ արձակվեցին, որոնք նոր թափով շարունակեցին ղեկավարել ազատագրական շարժումը: Այժմ հանրահավաքներում առաջ էին քաշվում դեմոկրատական ազատությունների, հանրապետության ինքնուրույնության ընդլայնման, կենսոլորտի բարելավման, պատմական անցյալի վերագնահատման և այլ հարցեր:

1989 թ. ամռանը Ադրբեջանում հակահայկական հիստերիան հասավ իր գագաթնակետին: Դրա համար առիթ ծառայեցին ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների առաջին համագումարում հայ պատգամավորների ելույթները, որոնք, ապացուցելով ղարաբաղյան պայքարի արդարացի լինելը, կրկին պահանջեցին մարզը վերամիավորել Հայաստանին: Ադրբեջանական մամուլը վայնասուն բարձրացրեց, իսկ հանրապետության իշխանությունները դիմեցին նոր զինված վայրագությունների: Ամենուր սկսվեցին լայնածավալ բռնություններ: Հայաշատ վայրերում նոր ուժով բորբոքվեցին հալածանքները, խոշտանգումներն ու սպանությունները: Տասնյակ հայկական բնակավայրեր թալանվեցին ու հրկիզվեցին: Հուլիս-օգոստոսին սկսվեց նոր, է՛լ ավելի ծավալուն՝ երրորդ մեծ բռնագաղթը, որի հետևանքով լիովին հայաթափվեցին Կիրովաբադը, Մինգեչաուրը, Խանլարը, Շահումյանը և այլ շրջաններ: Հուլիսին Ադրբեջանի կողմից փակվեցին Հայաստան և Արցախ տանող երկաթուղիներն ու ավտոճանապարհները:

Իրենց բնակավայրերը լքեցին թալանված ադրբեջանաբնակ շուրջ 30 հազար հայեր, որոնցից 20 հազարը պատսպարվեց Հայաստանում, ուր փախստականների ընդհանուր թվաքանակը հասավ 220 հազարից ավելի[117]:

---

[117] Տե՛ս Խոջաբեկյան Վ., Արցախը փորձության ժամին, Երևան, 1991, էջ 119-126:

1989 թ. հուլիսին Բաքվում կազմակերպվեց Աղրբեջանի ժողովրդական ճակատը: Շուտով ճակատը զինված ջոկատներ ստեղծեց և առանձին շրջաններում զավթեց իշխանությունը: Դեկտեմբերին աղրբեջանցիները ավերեցին Իրանի և Թուրքիայի հետ ունեցած պետական սահմանային կառույցները՝ ղրսից Նախիջևան առատորեն զենք և զինամթերք ներկրելու համար: Դաժան շրջափակումը սոցիալական ծանր հետևանքներ ունեցավ:1989 թ. ամռանից Հայաստանում դադարեց գործելուց արդյունաբերական ձեռնարկությունների մեծ մասը, ձախողվեցին ադետի գոտու վերականգնման և գյուղատնտեսական կուլտուրաների բերքահավաքի աշխատանքները: Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի շրջափակումով Աղրբեջանը փաստորեն չհայտարարված պատերազմի սկիզբը դրեց: Հայաստանի Գերագույն խորհրդի նստաշրջանը դատապարտեց Աղրբեջանի կողմից Հայաստանի և ԼՂԻՄ-ի շրջափակումը և կենտրոնական իշխանություններից պահանջեց ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների արտահերթ համագումար հրավիրել՝ հարցը քննարկելու համար, բայց դա տեղի չունեցավ: Իսկ ավելի ուշ ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների երկրորդ համագումարն անդրադառնալով հարցին՝ նույնիսկ խուսափեց շրջափակում բառը արձանագրության մեջ մտցնելուց և հավասարապես մեղադրեց երկու հանրապետությունների ղեկավարությանը: Դա, անշուշտ, ոգևորեց աղրբեջանցիներին և շրջափակումը կազմակերպված ու մշտական բնույթ ընդունեց: Շուտով Աղրբեջանի իշխանությունները փակեցին նաև ՌՍՖՍՀ-ից Հայաստան եկող գազատարը: Դա մեծ վնաս հասցրեց Հայաստանին և շուրջ երկու տարի շրջափակման մեջ գտնվող Արցախի տնտեսությանը: Ձմռան դաժան պայմաններում նվազեցին էներգիա արտադրելու հնարավորությունները, խաթարվեցին կենսագործունեություն ապահովող օբյեկտների աշխատանքները, փակվեցին դպրոցները և բուհերը: Սկսվեցին էներգիայի մատակարարման հովհարային անջատումները:

Շրջափակումը ծանր անդրադարձավ Արցախի վրա, որը լիովին կտրվել էր արտաքին աշխարհից, ուր զգացվում էր սննդամթերքի, դեղորայքի և առաջին անհրաժեշտ այլ ապրանք-

ների խիստ կարիքը: Մարզի տնտեսական ու բարոյահոգեբանական վիճակը կարգավորելու նպատակով 1989 թ. օգոստոսի 16-ին Ստեփանակերտում հրավիրվեց ԼՂԻՄ լիազոր ներկայացուցիչների համագումար: Այն գտավ, որ մարզի կառավարման հատուկ ձևը ոչնչով չի օգնում հրատապ հարցերի լուծմանը, որ Հատուկ կոմիտեի գոյության ամիսներին ոտնահարվել են մարզի ինքնավարության չնչին մնացորդները, ուստի նպատակահարմար է ընտրությունների միջոցով վերականգնել ապօրինաբար վերացված կուսակցության մարզկոմն ու մարզխորհուրդը: Միաժամանակ որոշվեց՝ մինչև իշխանության սահմանադրական գործառույթների վերականգնումը, մարզը կառավարելու համար ընտրել Ազգային խորհուրդ: Համագումարը հավանություն տվեց նաև Շահումյանի շրջխորհրդի նստաշրջանի որոշմանը՝ շրջանը ԼՂԻՄ-ի հետ վերամիավորելու վերաբերյալ և հանձն առավ վերջնական լուծում տալ այդ հարցին: Նորընտիր Ազգային խորհուրդը կոչով դիմեց ժողովրդին՝ դադարեցնելու մի քանի ամիս տևած գործադուլը[118]:

Աղրբեջանի և Մոսկվայի իշխանությունների կողմից Ազգային խորհուրդը անօրինական համարվեց, որի բնական հետևանքը հանդիսացավ Արցախի դեմ ահաբեկչական քաղաքականության ուժեղացումը: Ջենք որոնելու նպատակով Արցախի հայկական բնակավայրերում զինվորականներն ամենուրեք խուզարկություններ էին կատարում: ԽՍՀՄ Ներքին գործերի նախարարության զինվորները 1989 թ. սեպտեմբերին Ստեփանակերտում զենք գործադրեցին խաղաղ բնակչության նկատմամբ: Եղան զոհեր և վիրավորներ: Բացի այդ զորքից, հայկական գյուղերի վրա հարձակումներ էին գործում աղրբեջանական զինված հրոսակախմբերը: 1989 թ. նոյեմբերի 28-ին ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը «Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզում իրադրության կարգավորման միջոցառումների մասին» որոշումով անհապաղ նպատակահարմար համարեց Հատուկ կառավարման կոմիտեի գոյությունը: Նախատեսվեց մար-

[118] «Խորհրդային Ղարաբաղ», 17.08.1989, Աբրահամյան Հ., Արցախյան գոյամարտ,Երևան, 1991, էջ 165-167:

զը կառավարելու համար ԼՂԻՄ-ի հետ հավասարության հիմունքներով ստեղծել Հանրապետական կազմկոմիտե, հիմնել վերստուգիչ-ղիտորդ հանձնաժողով, մարզում շարունակել պահել ԽՍՀՄ ՆԳՆ զորքերը և այլն: Միաժամանակ, հանձնարարվեց վերականգնել ԼՂԻՄ-ի մարզխորհուրդը և նրա գործադիր կոմիտեն՝ վերջիններիս ենթակա բոլոր մարզային մարմիններով հանդերձ, որն Ադրբեջանի իշխանությունների կողմից այդպես էլ չկատարվեց[119]:

Ազատագրական պայքարին ընվիրված բոլոր ուժերը Հայաստանում համախմբելու համար ձևավորվեց Հայոց համազգային շարժում (ՀՀՇ) կազմակերպությունը, որի հիմնադիր համագումարը տեղի ունեցավ 1989 թ. նոյեմբերին: Սակայն ՀՀՇ-ն չկարողացավ ամբողջությամբ իր շուրջը համախմբել ազգային շարժման բոլոր ուժերը և երբեք համազգային չդարձավ, քանզի գործնականում անհնար էր միավորել հասարակության բոլոր խավերի շահերն ու ձգտումները: Միաժամանակ առաջադրված խնդիրների իրականացման ճանապարհին ՀՀՇ-ի կողմից թույլ տրվեցին նաև վրիպումներ ու սխալներ, որոնք ուղեկցվում էին հաճախ դրսևորվող անհանդուրժողականությամբ: Վերջիններս թերևս պայմանավորված էին ամեն գնով իշխանության գալու ՀՀՇ ղեկավարների բուռն ձգտումով: Առաջնորդվելով քաղաքական նկատառումներով՝ նրանք իրենց գործելակերպով, կամա թե ակամա, փաստորեն, նպաստեցին հանրապետությունում տնտեսական ճգնաժամի խորացմանը: Մասնավորապես միակողմանի ու անհեռատես մոտեցում ցուցաբերվեց կենսոլորտը աղտոտող արդյունաբերական ձեռնարկությունների փակման խնդրում: ՀՀՇ-ի՝ մեկը մյուսին հետևող ձեռնարկումները ծանր հետևանքներ ունեցան ժողովրդական տնտեսության և լայն առումով ժողովրդի համար: Այսպես, ՀՀՇ-ի համառ ջանքերով շրջակա միջավայրի մաքրությունը հոգալու պատճառաբանությամբ 1989 թ. դեկտեմբերի 30-ին փակվեց «Նաիրիտ» գիտաարտադրական միավորումը: «Նաիրիտը» ոչ միայն բանկարժեք կաուչուկ էր արտադրում, որի պահանջարկը

[119] Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 30.11. 1989:

մեծ էր միջազգային շուկայում, այլև հումք էր մատակարարում Հայաստանի շուրջ 350 ձեռնարկությունների[120]: Փակվելուց հետո նրա հետ սերտորեն կապված բոլոր գործարանները դադարեցին աշխատելուց, իսկ հազարավոր մարդիկ մնացին առանց աշխատանքի: Հանրապետության տնտեսությունը ծանր հարված ստացավ: Իշխանությունը վերցնելուց հետո նույն ՀՀԾ-ի ղեկավարությունը 1991 թ. հուլիսի 1-ից հարկադրաբար վերագործարկեց «Նաիրիտը»՝ մոռանալով նրա «վնասակար հետևանքները»: Նույն ճակատագրին արժանացան Ալավերդու լեռնաքիմիական կոմբինատը, որը փակվեց 1989 թ. հուլիսին, իսկ Վանաձորի քիմիական կոմբինատը, նույն թվականի սեպտեմբերին: Հայկական ատոմակայանի փակումը, որի առաջին բլոկը կանգնեցվել էր նույն թվականի փետրվարի 25-ին, իսկ երկրորդը մարտի 18-ին, աղետաբեր եղավ հանրապետության տնտեսության համար և ծանր անդրադարձավ բնակչության սոցիալական պայմանների վրա[121]:

Արցախահայության ազատագրական պայքարին նոր ուժով սատար կանգնելու նպատակով 1989 թ. դեկտեմբերի 1-ին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի համատեղ նիստում հռչակվեց Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի Հանրապետության վերամիավորումը[122]: Մեկ ամիս անց ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը չեղյալ հայտարարեց այդ որոշումը՝ այն որակելով հակասահմանադրական: Մոսկվան մեկ անգամ ևս հաստատեց իր նպատակը՝ բոլոր միջոցներով հայ ժողովրդին հետ պահել ազատագրական պայքարից: Որքան կենտրոնը ուժեղացնում էր ճնշումը արցախյան շարժման դեմ, այնքան համարձակ էին դառնում աղրբեջանական հրոսակները:

Օգտվելով իր համար կենտրոնի խիստ նպաստավոր քաղաքականությունից՝ Աղրբեջանի ժողովրդական ճակատը 1990 թ. հունվարին Բաքվում սանձազերծեց հայերի զանգվածային ջարդեր: Հունվարի 13-ի բազմահազարանոց հանրահավաքից հետո «հա-

---

[120] ՀԱԱ, ֆ. 113, ց. 163, գ. 185, թ. 1-2, 12-14:
[121] Տե՛ս նույն տեղում, ց. 164, գ. 669, թ. 1,4, գ. 717, թ. 1,2, գ. 323, թ. 1,4:
[122] «Խորհրդային Հայաստան», 03.12.1989:

յությունը ոչնչացնելու» կոչ արվեց: Մոտ 5 հազար մարդուց բաղկացած զինված ամբոխը, նախօրոք մշակված ծրագրով և նախապես կազմված հասցեներով, հարձակվեց հայերի բնակարանների վրա՝ նրանց սպանելու և ունեցվածքը թալանելու նպատակով: Հայերը ենթարկվեցին անմարդկային խոշտանգումների: Այդ օրը վայրագություններին զոհ գնաց մոտ 400 մարդ[123]: Թաղից թաղ անցնելով՝ յոթ օր անընդհատ խուժանը հայերի նոր ջարդեր էր կատարում: Կազմակերպված համատարած կոտորածների պատճառով մեկ շաբաթվա ընթացքում Բաքուն, որի կառուցման ու զարգացման համար հայերը հսկայական ներդրում էին ունեցել, լիովին հայաթափվեց: Գազազած ամբոխը բռնություններ էր գործադրում նաև ռուսների և մյուս ազգերի ներկայացուցիչների նկատմամբ: Ի վերջո, հայերի արյամբ արբեցած Աղրբեջանի ժողովրդական ճակատը բացահայտորեն անցավ խորհրդային կարգերի տապալմանը: Միայն այդ ժամանակ ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը Բաքվում արտակարգ դրություն հայտարարեց և մեծ ուշացումով զորք մտցրեց քաղաք: Զինվորականներին դժվարությամբ հաջողվեց դադարեցնել վայրենի սպանդը:

1990 թ. հունվարյան վանդալիզմի հետևանքով հարյուր հազարավոր հայեր, հազիվ փրկվելով աղրբեջանական յաթաղանից, հեռացան Բաքվից և Աղրբեջանի մյուս հայաբնակ բնակավայրերից: Աղրբեջանից փախած և միայն Հայաստանում ապաստանած հայերի թիվը հասավ 300 հազարի[124]:

1990թ. հունվարի 15-ին, երբ Բաքվում մոլեգնում էին հակահայկական բռնությունները, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը որոշում ընդունեց Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի տարածքում արտակարգ դրություն հայտարարելու մասին: Դրանից երեք օր առաջ՝ հունվարի 12-ին, Աղրբեջանի Գերագույն խորհրդի նախագահությունը ելնելով 1989թ. ԽՍՀՄ ԳԽ նոյեմբերի 28-ի որոշումից, ստեղծեց Հանրապետական կազմկոմիտե՝ օժտված լայն լիազորություններով: Այն գլխավորում էր Աղրբեջանի

[123] Մինասյան Է., Բաքվի 1990թ. հունվարյան ջարդերը և դրանց իրավաքաղաքական գնահատականը, «Տարեգիրք Բ», Երևան, 2010, էջ 12,13:
[124] Տե՛ս Մոսեսովա Ի., Հովնանյան Ա., Բաքվի ջարդերը, Երևան, 1992, էջ 15:

Կոմկուսի կենտկոմի երկրորդ քարտուղար հայատյաց Վ. Պոլյանիչկոն: Կազմկոմիտեի գործունեությամբ Լեռնային Արցախում սկսվեց հակահայկական հիստերիայի նոր փուլ: Այն իր գործողություններով հսկայական չարիքներ պատճառեց Արցախի ժողովրդին: Պոլյանիչկոյի գլխավորած կազմկոմիտեի խնդիրը մարզի ժողովրդագրական իրավիճակը հօգուտ աղրբեջանցիների փոխելն էր:

Հայկական բնակավայրերը մեկուսացնելու նպատակով Կազմկոմիտեի ցուցումով քանդվում էին միջշրջանային և գյուղամիջյան առանց այն էլ անմխիթար վիճակում գտնվող ճանապարհները. նոր ջարդերի սպառնալիքով կատարվում էին աներևակայելի բռնաճնշումներ, գործադրվում էին հարկադրանքի այնպիսի տմարդի ձևեր, որոնց հետևանքով աշխարհից կտրված գյուղերի հայ բնակիչներին ոչինչ չէր մնում անելու, քան թողնել իրենց բնակավայրերը և հեռանալ անվտանգ վայրեր: 1990 թ. փետրվարի վերջին լիովին հայաթափվեցին Շահումյանի շրջանի Ազատ և Կամո գյուղերը: Նույն թվականին Աղրբեջանի Գերագույն խորհրդի որոշմամբ լուծարվեցին մարզի բոլոր չորս հայկական վարչական շրջանները: Փաստորեն ստեղծված իրավիճակը մեծ նահանջ էր Ա. Վոլսկու գլխավորած Հատուկ կոմիտեի համեմատությամբ: Աղրբեջանի ժողովրդական ճակատը, օգտվելով հանրապետության իշխանությունների հովանավորությունից, կեղծ լուրեր տարածելով, ամեն ինչ արեց, որպեսզի հակահայկական մոլուցքը տարածվի նաև Կենտրոնական Ասիայում, Հյուսիսային Կովկասում: Այս ամենի հետևանքով նշված վայրերից սկսվեց հայ բնակչության որոշ մասի արտագաղթ: 1990 թ. Հայաստանում փախստականների թիվն արդեն հասնում էր ավելի քան 450 հազարի, որից 217 հազարը միայն Բաքվից[125]: Չնայած սոցիալ-տնտեսական ծանր կացությանը՝ հանրապետության իշխանություններն ու ողջ հայ ժողովուրդը հնարավոր ամեն ինչ արեցին փախստականների օրհասական վիճակը թեթևացնելու համար: Սինչդեռ կենտրոնական մարմիններն ոչ մի աջակցություն չցուցաբերեցին: Նրանք

[125] Տե՛ս Մովսիսյան Վ., Հողի ճակատագրով, Երևան, 2001, էջ 115-116:

հրաժարվեցին նաև երկրում մտցնել ողջ աշխարհում ընդունված «Փախստականի կարգավիճակ», ինչը բռնագաղթվածներին հնարավորություն կընձեռեր օգտվելու որոշակի արտոնություններից:

Հունվար-փետրվար ամիսներին աղրբեջանական զինված բանդաները հարձակումներ սկսեցին նաև Հայաստանի սահմանների ամբողջ երկայնքով: Ինքնապաշտպանական աշխարհազորային ջոկատներն արժանի հակահարված տվեցին թշնամուն: Այդպիսի ջոկատներից էին «Սասունցի Դավիթը», «Մուշը», «Սասունը», «Մալաթիան», «Արաբոն», «Մեծն Տիգրանը», «Զորավար Անդրանիկը», «Մխիթար սպարապետը», «Սասնա ծռերը», «Հայոց ազգային բանակը» (ՀԱԲ), «Անկախության բանակը» և այլն: Նրանք անձնվիրաբար կասեցրին Երասխավանի, Վայքի, Մեղրու, Գորիսի, Կապանի, Նոյեմբերյանի, Տավուշի, Իջևանի, Վարդենիսի և սահմանամերձ այլ շրջանների վրա կատարված հարձակումները: Այդ մարտերում թշնամու գնդակից ընկան հայ ժողովրդի արժանավոր զավակներ Մովսես Գորգիսյանը, Յուրի Խասապետյանը, Երվանդ Սաղումյանը, Էդիկ Մնացականյանը, Կամո Աբովյանը և ուրիշներ: Հենց ինքնապաշտպանական ջոկատների անձնազոհության, նրանց խիզախ հրամանատար Վազգեն Սարգսյանի քաջագործության շնորհիվ էր, որ թշնամին նշված շրջաններում չկարողացավ դեպքերին Սումգայիթի կամ էլ Բաքվի նման ընթացք տալ[126]: Հավատարիմ իր դիրքորոշմանը՝ կենտրոնը միանման գնահատական տվեց աղրբեջանցի գրոհայիններին և ինքնապաշտպանության դուրս եկած հայ կամավորներին՝ երկուստեք անվանելով անօրինական զինված կազմավորումներ: Թերևս հենց այդ կեղծ տեսակետը հիմնավորելու նպատակով էր, որ 1990 թ. մայիսի 27-ին Երևանի երկաթուղային կայարանում և Նուբարաշենում կազմակերպվեց նոր սադրանք: Այդ օրը զինված ընդհարումներ տեղի ունեցան հայկական ինքնապաշտպանական որոշ ջոկատների և խորհրդային զինվորական ստորաբաժանումների միջև: Թեև մայրաքաղաքի իշխանությունների, աշխարհազորային ջոկատների և հասարակական կազմակերպությունների ներկայա-

[126] Տե՛ս Ազիզբեկյան Ռ., նշված աշխ., էջ 65-66:

ցուցիչների ջանքերով հաջողվեց կասեցնել միջադեպը, սակայն այն հանգեցրեց մարդային զոհերի: Այդ սադրանքի կազմակերպմամբ փաստորեն փորձ էր արվում ներկայացնել, թե իբր Հայաստանում գործում են խորհրդային իշխանության դեմ տրամադրված «ահաբեկչական» խմբեր: Վերջինիս հավաստմանն էին նպատակաուղղված նաև կենտրոնական ՋԼՄ-ների կողմից այդ դեպքերի միակողմանի մատուցումն ու հակահայկական մեկնաբանությունները: Ըստ էության, կենտրոնն այդ քայլով նպատակ ուներ ծնկի բերել հայ ժողովրդին և նրան հետ կանգնեցնել իր սահմանադրական արդար պահանջներից, իսկ ձախողման դեպքում նրան ներքաշել քաղաքացիական պատերազմի մեջ՝ պատրվակ ստեղծելով շատ ավելի լուրջ բռնությունների դիմելու համար[127]: Սակայն հայ ժողովուրդն, ավելի քան երկու տարվա փորձություններով լի ազգային-ազատագրական ծանր պայքարի ընթացքում, չկորցրեց իր ողջամտությունը և դուրս չեկավ պայքարի սահմանադրական շրջանակներից: Նա համախմբվեց դաճնալով ավելի միասնական, սեփական բախտը կռելու վճռականությամբ:

Աղրբեջանն ուժեղացրեց մեկուսացման մեջ հայտնված Հայաստանի շրջափակումը, որի պատճառով ավելի խորացավ տնտեսական ճգնաժամը: Հայ ժողովրդի բազում բողոքներն այս անգամ էլ Մոսկվայի կողմից մնացին անպատասխան:

Աղրբեջանի կազմկոմիտեի և ԼՂԻՄ-ի ու Աղրբեջանական ԽՍՀ հարակից շրջանների արտակարգ դրության շրջանի պարետ, դահիճ-գեներալ Վ. Սաֆոնովի անօրեն գործողությունների դեմ պայքարը հետզհետե լայն բնույթ էր ստանում: Չնայած 1990 թ. մայիսի 15-ից հետո գեներալ Վ. Սաֆոնովը նոր զորամասեր էր մտցրել մարզի տարածք և ամեն կերպ փորձում էր ձախողել Լեռնային Ղարաբաղից ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավորների ընտրությունը, բայց դա նրան չհաջողվեց: Արցախի 100 հազար ընտրողների 94%-ը մասնակցեց ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավորների ընտրություններին: Մարզից ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավորներ ընտրվեցին Սերժ Սարգսյանը,

[127] Տե՛ս նույն տեղում, էջ 37:

Գեորգի Պետրոսյանը, Համլետ Գրիգորյանը և ուրիշներ[128]: ՀԽՍՀ Չարենցավան քաղաքի 143-րդ ընտրատարածքից պատգամավոր ընտրվեց դեռևս աղրբեջանական բանտում գտնվող Արկադի Մանուչարյանը, իսկ Կիրովականի 199-րդ ընտրատարածքից՝ Ռոբերտ Քոչարյանը: Կենտրոնական իշխանություններն անվավեր համարեցին մայիսի 20-ին Արցախում անցկացված ընտրությունները: Բաքուն որոշեց ավելի խիստ պատժի ենթարկել արցախահայությանը: Մայիսի վերջերին աղրբեջանցիները մի շարք նոր վայրագ գործողություններ կատարեցին Մաճկալաշեն, Քարինտակ և տասնյակ այլ գյուղերում: Ռեժիմի ստուգման և զենք առգրավելու պատրվակով 1990 թ. գարնանն ու ամռանը ավերեցին բազմաթիվ բնակարաններ, պետական ու հասարակական շինություններ, շատ կոլտնտեսություններ զրկվեցին հազարավոր հեկտար տարածություններ մշակելու հնարավորությունից, տասնյակ հազարավոր գլուխ անասուններից:

Հայաստանի և Արցախի վրա ճնշումն ուժեղացնելու նպատակով գեներալ Սաֆոնովի հրամանով հրկիզվեց Մարտակերտի օդանավակայանը, որպեսզի այնտեղ վայրէջք չկատարի Հայաստանից եկող որևէ ինքնաթիռ:

Արցախի հարցում, մի կողմից, ԽՍՀՄ ղեկավարության միտումնավոր քաղաքականության, մյուս կողմից, հանրապետության կուսակցական ղեկավարության ազգային շահերը անտեսող, չափից ավելի զգուշավոր գործունեության հետևանքով հայ ժողովուրդը կորցրեց հավատը կոմունիստական կուսակցության հանդեպ: Դրա հետ մեկտեղ լայն թափ ստացած, ազգային շահերի իրականացմանն ուղղված ժողովրդավարական շարժումը վայելում էր ժողովրդի լայն զանգվածների վստահությունը: Այդ ամենը հանգեցրեց հանրապետության քաղաքական կյանքի արմատական ու շրջադարձային փոփոխությունների: Դրանք սկսվեցին Հայաստանի Գերագույն խորհրդի 1990 թ. մայիսի 20-ի և հունիսի 3-ի ընտրություններով, որոնք տեղի ունեցան մեծամասնական ընտրակարգով: Ավելի քան 70 տարիների ընթացքում հանրապետութ-

[128] Արշակյան Ա., նշված աշխ., էջ 131:

յունում առաջին անգամ անցկացվեցին ժողովրդավարական, այլընտրանքային ընտրություններ Արցախի հայ բնակչության մասնակցությամբ: Ընտրական պայքարը հիմնականում ընթացավ ՀՀԾ-ի և ՀԿԿ-ի միջև: Վերջինիս պատգամավորների թեկնածուների ցուցակներում, նախկինի պես, նախապատվությունը տրված էր կուսակցական նոմենկլատուրայի ներկայացուցիչներին: ՀՀԾ-ի առաջադրած և պաշտպանած թեկնածուների ճնշող մեծամասնությունը, այդ թվում Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեի գրեթե բոլոր անդամները ընտրվեցին հանրապետության Գերագույն խորհրդի կազմում: Նորընտիր պատգամավորների թվում էր նաև ԱԻՄ-ի հիմնադիր-նախագահ, Հայաստանի անկախացման գաղափարի քարոզչության համար երկար տարիներ խորհրդային բանտերում արգելափակված և վերակառուցման ժամանակաշրջանում ԽՍՀՄ-ից վտարված Պարույր Հայրիկյանը, որը վերադարձավ հայրենիք: Խորհրդարանի անդամ դարձավ նաև անկախության գաղափարի մեկ այլ նվիրյալ, կոմունիստական վարչակարգի կողմից այլախոհության մեղադրանքով բազմիցս ազատազրկման դատապարտված, Հայաստանի հանրապետական կուսակցության հիմնադիր Աշոտ Նավասարդյանը: Պատգամավորներ ընտրվեցին նաև մի շարք այլ նախկին քաղբանտարկյալներ[129]:

Նորընտիր խորհրդարանը, որը կազմված էր 260 պատգամավորներից, սկսեց գործել 1990 թ. հուլիսի 20-ից[130]: Թեև այստեղ կոմունիստները թվային գերակշռություն ունեին (պատգամավորների 60%-ը կոմկուսի անդամ էր), սակայն նրանք հիմնականում ՀՀԾական պատգամավորների ազդեցության ներքո հենց սկզբից տարանջատվեցին և չկարողացան մեծամասնություն կազմել: Դա մասնավորապես դրսևորվեց Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահի ընտրությունների ժամանակ, երբ քվեարկության դրվեցին ՀՀԾ վարչության նախագահ, Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեի անդամ Լևոն Տեր-Պետրոսյանի և ՀԿԿ

[129] Տե՛ս Ազիզբեկյան Ռ., նշված աշխ., էջ 38:
[130] Տե՛ս ՀՀ Գերագույն խորհուրդ, 1990-1995, Երևան, 1995, էջ 115:

կենտկոմի առաջին քարտուղար Վլադիմիր Մովսիսյանի թեկնածությունները: Երկար վիճաբանություններից, մի քանի փուլ քվեարկությունից հետո, խորհրդարանը 1990 թ. օգոստոսի 4-ին Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահ ընտրեց Լևոն Տեր-Պետրոսյանին: Օգոստոսի 13-ին հանրապետության նախարարների խորհրդի նախագահ նշանակվեց ՀՀԾ վարչության և Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեի անդամ Վազգեն Մանուկյանը: Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեի մյուս անդամներն ու ՀՀԾ-ի այլ ներկայացուցիչներ աստիճանաբար զբաղեցրին հանրապետության օրենսդիր և գործադիր մարմինների գրեթե բոլոր կարևորագույն պաշտոնները: Դրանով փաստորեն Հայաստանում վերջ դրվեց կոմունիստական կուսակցության ավելի քան 70-ամյա մենատիրությանը, և իշխանությունն անցավ Հայոց համազգային շարժման ձեռքը:

Հայաստանի նորընտիր իշխանությունները ձեռնամուխ եղան անկախ պետականության կերտմանը:

1990 թ. օգոստոսի 23-ին Հայաստանի Գերագույն խորհրդի առաջին նստաշրջանն ընդունեց «Հռչակագիր Հայաստանի անկախության մասին», որով դրվեց հանրապետության անկախության գործընթացի սկիզբը: «Հռչակագրով» ՀԽՍՀ-ն վերանվանվեց Հայաստանի Հանրապետություն:

Իսկ արցախահության վրա ճնշումները գնալով ուժեղանում էին: 1990թ. սեպտեմբերի 4-ին Ստեփանակերտի օդանավակայանում ԽՍՀՄ ներքին զորքերը բռնագրավեցին Հայաստանի քաղաքացիական ավիացիային պատկանող հինգ «Յակ-40» տիպի ինքնաթիռ, իսկ հաջորդ օրը՝ ևս վեցը[131]:

Ելնելով Լեռնային Ղարաբաղում տիրող լարված իրադրությունից՝ սեպտեմբերի 5-ին Հայաստանի Հանրապետության նորընտիր խորհրդարանը հանդես եկավ հայտարարությամբ, որով իրադրությունը կայունացնելու նպատակով կենտրոնին առաջարկվում էր ԽՍՀՄ ՆԳՆ զորքերի և խորհրդային բանակի ստորաբաժանումները տեղակայել ԼՂԻՄ-ի, Շահումյանի շրջանի և

[131] Արշակյան Ա., նշված աշխ., էջ 135:

Գետաշենի ենթաշրջանի վարչական սահմանների երկայնքով, վերացնել Աղրբեջանի կազմկոմիտեն և վերականգնել Լեռնային Ղարաբաղի մարզային ու տեղական խորհուրդները, վճռական միջոցներ ձեռնարկել ԼՂԻՄ-ի, Շահումյանի շրջանի և Գետաշենի ենթաշրջանի շրջափակումը վերացնելու համար: Բայց, ի պատասխան այդ առաջարկի, միութենական իշխանությունները ոչ միայն դրականորեն չարձագանքեցին, այլև լիովին սատարեցին Ղարաբաղի ու նրա վարչական սահմաններից դուրս գտնվող, բայց Աղրբեջանին ենթակա հայաբնակ տարածքները հայաթափելու Բաքվի տենդորեն շարունակվող քաղաքականությանը:

Կենտրոնի նման վերաբերմունքը հայ ժողովրդի մի շարք ներկայացուցիչների հարկադրեց դիմել բողոքի ծայրահեղ միջոցի: 1990 թ. սեպտեմբերին Մոսկվայի «Մոսկվա» հյուրանոցում քաղաքական հացադուլ հայտարարեցին ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորներ՝ Հայաստանի Գիտությունների ակադեմիայի նախագահ, ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանը, հրապարակախոս Զորի Բալայանը, ԽՍՀՄ ժողովրդական դերասան Սոս Սարգսյանը, Լեռնային Արցախի Ազգային խորհրդի նախագահ Վաչագան Գրիգորյանը, ԼՂԻՄ լուծարված մարզխորհրդի նախագահ Սեմյոն Բաբայանը: Ինչպես նաև տաջիկ և ուզբեկ գիտնականներ Ռոստոմ Շուքուրովն ու Սուրաբ Շարաֆուտդինովը[132]: Հացադուլավորներին համերաշխություն ու աջակցություն հայտնեցին երկրի գիտության, մշակույթի և գրականության շատ գործիչներ, միջազգային գիտական, հասարակական կազմակերպություններ և այլն: 1990 թ. սեպտեմբերի 17-ին ՀՀ Գերագույն խորհուրդը դիմում հղեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նստաշրջանին, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համաժողովին, աշխարհի երկրների և միութենական հանրապետությունների խորհրդարաններին, որում ներկայացվում էր Լեռնային Արցախում կենտրոնի կողմից իրականացվող հակահայկական քաղաքականությունը և հացադուլավորների պահանջը: Սեպտեմբերի 21-ին Ռուսաստանի խորհրդարանում հրապարակվեց նրա 30 անդամների դիմումը՝

[132] Նույն տեղում, էջ 137:

հասցեագրված ԽՍՀՄ նախագահ Մ. Գորբաչովին, որով ՌԽՖՍՀ ժողովրդական պատգամավորներն անհանգստություն հայտնելով հացադուլավորների առողջական վիճակի համար՝ պահանջում էին ապահովել ԼՂԻՄ-ի հայ ազգաբնակչության անվտանգությունը, վերականգնել մարզի իրավունքներն ու ազատությունները: Բայց երկրի բարձրագույն ղեկավարությունը, ցուցաբերելով քար անտարբերություն, հետևողականորեն շարունակում էր որդեգրած քաղաքականությունը:

Համաշխարհային հասարակայնության ներկայացուցիչների և հատկապես Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի հորդորներից հետո միայն երեք շաբաթ անց՝ սեպտեմբերի 29-ին, հացադուլավորները դադարեցրին բողոքի ցնցող ակտը: Թեև այն ոչ մի ազդեցություն չունեցավ կենտրոնի դիրքորոշման վրա, բայց երկրի և աշխարհի հասարակայնության ուշադրությունը բևեռեց Արցախի հիմնախնդրի վրա, նպաստեց նրա միջազգայնացմանը:

Շրջափակման մեջ գտնվող Լեռնային Ղարաբաղում իրադրությունը գնալով ավելի էր սրվում: Ադրբեջանի ղեկավարությունը միութենական իշխանությունների աջակցությամբ հետևողականորեն շարունակում էր փոխել տարածաշրջանի ժողովրդագրական պատկերը: 1991 թ. հունվարին Ադրբեջանի Գերագույն խորհրդի նախագահությունը որոշում ընդունեց ԼՂԻՄ-ին հարակից ավելի քան 80%-ով հայաբնակ Շահումյանի անվան շրջանը ադրբեջաներնակ Կասում-Իսմայիլի շրջանին միավորելու մասին: Նպատակը մեկն էր՝ վերացնելով Շահումյանի շրջանը, այն լիովին հայաթափել: Արցախում գտնվող ԽՍՀՄ ներքին զորքերի անձնակազմը, ենթարկվելով Ադրբեջանի հանրապետական կազմկոմիտեին, փաստորեն կատարում էր պատժիչ դեր՝ բռնի տեղահանելով հայ ազգաբնակչությանն իր պատմական հայրենիքից: Զանգվածային բռնությունների ալիքը իր գագաթնակետին հասավ 1991 թ. ապրիլին, երբ խորհրդային և ադրբեջանական զինված ուժերը սկսեցին Լեռնային Ղարաբաղի հյուսիսային մասի հայաբնակ գյուղերի էքսիկ զտումները, որով հակամարտությունը, ըստ էության, մտավ պատերազմական փուլ:

Օգտվելով Մոսկվայի բացարձակ աջակցությունից՝ ադրբեջա-

նական իշխանությունները շարունակում էին զավթել հայկական նորանոր գյուղեր և բնակիչներին արտաքսել իրենց հազարամյա բնակավայրերից: 1991 թ. ապրիլ-մայիս ամիսներին աղրբեջանական օմոնը (միլիցիայի հատուկ նշանակության ջոկատներ) խորհրդային բանակի աջակցությամբ բացահայտ պատերազմ սկսեց Հյուսիսային Արցախի զուտ հայաբնակ Շահումյանի շրջանի և Գետաշենի ենթաշրջանի հայ բնակչության դեմ՝ իրականացնելով նախօրոք մշակված «Կոլցո» («Օղակ») օպերացիան: Այդ գործողությունը սկսվեց ապրիլի 30-ին, որին մասնակցում էին խորհրդային «Վիրաժ» և «Օբրիվ» ռազմական միավորումները[133], աղրբեջանական օմոնի «Դոզոր» ստորաբաժանումը, ինչպես նաև տասնյակ ավարառու հրոսակախմբեր: Նրանք նախապես գրավել էին Գետաշենի շրջակա բարձունքները, շրջափակել գյուղը: Հրաման ստանալուն պես այդ բազմաքանակ զորախումբը զրահամեքենաներով, հրասայլերով և զենքերի տարբեր տեսակներով հարձակում սկսեց հայկական գյուղերի վրա: Կատաղի մարտեր տեղի ունեցան Գետաշեն և Մարտունաշեն գյուղերում, որտեղ քաջաբար զոհվեցին հայ ժողովրդի ազատագրական պայքարի նորագույն շրջանի հերոսներ Թաթուլ Կրպեյանը, Սիմոն Աչիկգյոզյանը, Արթուր Կարապետյանը, Վալերի Նազարյանը, Զարգանդ Դանիելյանը և ուրիշ խիզախներ[134]: Ուժերը խիստ անհավասար էին, և զավթիչները գրավեցին ու հիմնովին ավերեցին նշված երկու գյուղերը: Ոգևորված այդ «հաղթանակով»՝ աղրբեջանցիները համատարած հարձակումներ սկսեցին Հաղրութի և Շահումյանի հայկական գյուղերի վրա: Մայիսի կեսերին բռնագաղթվեցին 24 հայկական գյուղերի բնակիչներ, սպանվեցին ավելի քան 100 հայեր, մի քանի հարյուր մարդ պատանդ վերցվեց[135]: Փաստորեն 1991 թ. մայիս-հունիս ամիսներից Աղրբեջանը սկսեց ազգամիջյան պատերազմ, որն աստիճանաբար ավելի ծավալվեց:

Պատերազմն ընդհուպ մոտեցավ Հայաստանի սահմաններին:

---

[133] Դահրամանյան Կ., Հյուսիսային Արցախ. գոյության պայքար, գիրք բ, Երևան, 1993, էջ 66-69:
[134] Բաղդասարյան Դ., Դիմակայություն, Երևան, 1998, էջ 58:
[135] «Հայաստանի Հանրապետություն», 21.05.1991, "Голос Армении" 30.04.2005:

Հանրապետության սահմանամերձ բնակավայրերն անընդհատ գնդակոծվում էին Ադրբեջանի տարածքում տեղակայված խորհրդային բանակի ստորաբաժանումների և տեղի հատուկ նշանակության ջոկատայինների կողմից: Դրանով չբավարարվելով՝ պատժիչները հաճախ ներխուժում էին հայկական բնակավայրեր, ավերում և թալանում դրանք, բռնություններ կիրառում խաղաղ բնակչության հանդեպ: Բարբարոսության ցայտուն դրսևորում էին մայիսին Հայաստանի Նոյեմբերյանի շրջանի Ոսկեպար գյուղում կատարված դեպքերը, երբ խորհրդային զինծառայողները գնդակահարեցին սահմանը հսկող 15 հայ միլիցիոներների[136]:

1991 թ. հունիսին ԼՂՀ ժողովրդական պատգամավորների խորհրդի նիստում մշակվեց արցախահայության գոյապահպանման ծրագիր: Մոսկվայի կողմից մարզային և տեղական իշխանությունների կազմալուծման պատճառով բնակչությունը չէր կարողանում ինչպես հարկն է դիմադրություն ցույց տալ ադրբեջանական հրոսակախմբերին, որոնք սպառնում էին մեկ ամսում բռնի տեղահանել Արցախի հայությանը: Նստաշրջանը պահանջեց վերականգնել մարզային և տեղական իշխանությունները, գլխավորել բնակչության ազատագրական պայքարը: Հուլիսի վերջերին ստեղծվեց ինքնապաշտպանության ընդհատակյա կոմիտե և ինքնապաշտպանական ուժերի շտաբ: Դրանք մարզի բոլոր շրջաններում կազմակերպեցին զինված ջոկատներ:

Նույն ժամանակաշրջանում՝ 1991 թ. հուլիս-օգոստոս ամիսներին, խորհրդային զինված ուժերի հետ սերտ համագործակցությամբ Արցախում շարունակվում էր ադրբեջանական գրոհայինների կողմից հայկական խաղաղ գյուղերի տեղահանությունը, բնակչության կողոպուտն ու գերեվարումը: Օգոստոսի 13-ին անօրինակ սխրագործությամբ աչքի ընկավ Մարտակերտի շրջանի Հաթերք գյուղի կանանց «Փառանձեմ» ջոկատը, որը գերի վերցրեց ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերի 30 հոգանոց մի դասակ, որը գյուղում զբաղվում էր թալանով ու բնակիչների գերեվարությամբ: Կենտրոնի հետ տեղի ունեցած երկարատև բանակցություններից հետո (ան-

[136] Տե՛ս Ազիզբեկյան Ռ., նշված ախ., էջ 77:

ձամբ ԽՍՀՄ ՆԳ նախարար Բ. Պուգոյի հետ), դասակը փոխանակվեց հայ պատանդների հետ[137]:

Այս օրհասական պայմաններում էլ ավելի հուժկու էր հնչում երկրի մարդասեր հասարակայնության բողոքի ձայնը ի պաշտպանություն ծանրագույն վիճակում հայտնված Արցախի հայության ազատագրական պայքարի: Դարձյալ հայության կողքին էին նրա ջերմ բարեկամները՝ ակադեմիկոս Անդրեյ Սախարովի գլխավորությամբ: Բայց հայ ժողովրդի ազնիվ բարեկամների տագնապները հանդիպում էին ոչ միայն բարձրագույն իշխանությունների, այլև մեծապետական գաղափարներով սնուցված բազմաթիվ գործիչների արհամարհանքին, որոնք շարունակում էին բացահայտ թշնամանք տածել հայության ազատագրական պայքարի նկատմամբ: Դրանց թվում էին աղրբեջանական մարդասպան ռեժիմների ջերմ պաշտպան, հայության ազատագրական գործի նպատակամետ հակառակորդ Վիկտոր Իլյուխինը, մեծ ու փոքր ուրիշ պաշտոնյաներ՝ Անատոլի Լուկյանովը, Սերգեյ Բաբուրինը, Ամանգելդի Իմանովը, Եվգենի Պրիմակովը, գեներալ Լև Ռոխլինը և այլոք:

Այսպիսով, 1988 թ. սումգայիթյան ցեղասպանությամբ սկիզբ առած բռնագաղթը ժամանակի ընթացքում ընդունեց ավելի ու ավելի ահագնացող չափեր: Դրանով սկսվեց բռնագաղթի առաջին փուլը: Աղրբեջանում հայ բնակչության ցեղասպանությունն ու զանգվածային բռնագաղթը շարունակվեց իրար հաջորդող բազմաթիվ փուլերով[138]: Ցեղասպանության բռնկման ամեն մի նոր փուլ սկսվում էր զանգվածային ջարդերով ու մեծ բռնագաղթով: Եվ եթե բռնկման ամեն մի նոր փուլի համար բնորոշը կարմիր ջարդն էր, ապա հարաբերական դադարի փուլերում բռնագաղթը ջարդով էր ուղեկցվում մերթ ընդ մերթ:

1988 թ. նոյեմբերի 21-22-ին սկսվեց Աղրբեջանում հայ բնակչության ցեղասպանության երկրորդ փուլը: Ցեղասպանության ալիքը ոլորապտույտի մեջ ներքաշեց Աղրբեջանի գրեթե ամբողջ հայ բնակչությանը:

---

[137] Արշակյան Ա., նշված աշխ., էջ 165:

[138] Տե՛ս Խոջաբեկյան Վ. Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX-XX դարերում, XXI դարի շեմին, էջ 274, 283, 284:

1989 թ. հուլիս-օգոստոսյան օրերից սկսած սկիզբ առավ երրորդ մեծ բռնագաղթը:

1990 թ. հունվարին Բաքվում ժողովրդական ճակատի և Ադրբեջանի կառավարող իշխանությունների ձեռնարկած ցեղասպանությունը դարձավ Ադրբեջանից հայերի արտաքսման չորրորդ՝ ամենավճռական փուլը:

Ադրբեջանից հայ բնակչության բռնագաղթի և ցեղասպանության հինգերորդ փուլը սկսվեց 1991 թ. գարնանը: Ադրբեջանի և խորհրդային զինված միավորումների բացահայտ համատեղ գործողությունները սկսվեցին «Օղակ» օպերացիայով: Ուստի 1991 թ. գարնանը, գրեթե ավարտին է հասցվում Ադրբեջանի տարածքում բոլոր հայաշատ վայրերից հայ բնակչության հայաթափության ընթացքը և ուժգնորեն ոլորապտույտի մեջ է ներքաշվում Լեռնային Ղարաբաղի տարածաշրջանը:

Փաստորեն, 1988 թ. սկիզբ առած ցեղասպանությունն Ադրբեջանում վերջնականապես դարձավ բացահայտ պետական քաղաքականություն: 1991 թ. Ադրբեջանը ձեռնարկեց լայնամասշտաբ պատերազմ՝ Լեռնային Ղարաբաղի ամբողջ տարածաշրջանի երկայնքով: 1991 թ. ամռանը սկիզբ դրվեց ցեղասպանության և բռնագաղթի վեցերորդ փուլին: Այս փուլի բնորոշ կողմը ոչ միայն թշնամի կողմերի միջև մղվող իսկական պատերազմն էր, այլ բուն Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության ցեղասպանության ու զանգվածային բռնագաղթի կազմակերպումը: Բռնագաղթը ոլորապտույտի մեջ ներքաշեց փախստականների նորանոր քարավաններ Մարդակերտի, Ստեփանակերտի, Ասկերանի, Հադրութի, Մարտունու շրջանների մի քանի տասնյակ բնակավայրերից:

Ընդհանուր առմամբ, 1988-1995 թթ. Ադրբեջանից բնավեր եղան 419 հազար փախստականներ և հարկադիր վերաբնակեցվածներ, որոնցից 360 հազարը՝ Ադրբեջանական ԽՍՀ-ից, 48 հազարը՝ Լեռնային Ղարաբաղից, 8 հազարը՝ Աբխազիայից, 1,5 հազարը՝ Չեչնիայից, 900-ը՝ Ուզբեկստանից, 600-ը՝ Տաջիկստանից և այլ վայրերից: Նրանցից Հայաստանում ապաստանեցին 381,5 հազարը,

այդ թվում՝ Աղրբեջանի հետ սահմանակից տարածքներից հարկադրաբար վերաբնակեցվածները կազմեցին 72 հազար մարդ[139]:

1992 թ. փախստականներից և բռնագաղթվածներից 72 հազարը մշտապես գնացել էին այլ երկրներ:

1998 թ. Հայաստանում հաշվվում էր 316 հազար փախստական ու բռնագաղթված Աղրբեջանից և Լեռնային Ղարաբաղից (18 հազար): Դրանից 64 հազարը ժամանակավորապես արտագաղթել էր այլ երկրներ. այսինքն՝ Հայաստանում մնացել էին 252 հազարը[140]:

Այդուհանդերձ, սեփական տունը, ունեցվածքն ու կայքը հարկադրաբար թողած, սպանդից մազապուրծ հարյուր հազարավոր բռնագաղթված տնավեղ հայեր, դեռ այսօր էլ, վերջնական հանգրվան չեն գտել, չունեն տուն, աշխատանք, ապրուստի կայուն և հուսալի աղբյուր:

[139] Տե՛ս նույն տեղում:
[140] Տե՛ս նույն տեղում:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՈՒՄԸ

ա. Հայաստանի անկախության հռչակագիրը

1990 թ. օգոստոսի 23-ին Հայաստանի Գերագույն խորհրդի առաջին նստաշրջանը հանգամանալի քննարկումներից հետո, ընդունեց «Հռչակագիր Հայաստանի անկախության մասին», փաստաթուղթը, որով դրվեց Հայաստանի անկախացման գործընթացի սկիզբը[141]:

ՀԽՍՀ Գերագույն խորհրդի օգոստոսի 4-ի որոշմամբ պատգամավորներից ստեղծվեց Հայաստանի անկախության հռչակագրի նախապատրաստման 15 մարդուց բաղկացած հանձնաժողով: [142] Հռչակագրի մշակման հանձնաժողովի գործունեության առաջին օրերից սկսած Հայաստանի տարբեր քաղաքական ուժերից Գերագույն խորհրդին ներկայացվեց հռչակագրի 5 տարբերակ: Հանձնաժողովի նախաձեռնությամբ փաստաթղթի կազմման աշխատանքներին ներգրավվեցին հումանիտար ոլորտի մասնագետներ: Շուտով քաղաքական տարբեր ուժերի կողմից ներկայացված տարբերակների թիվը հասավ մեկ տասնյակի[143]: Գերագույն խորհրդի հանձնաժողովի քննարկմանը ներկայացվեցին ՀԿԿ կենտկոմի, «Սահմանադրական իրավունք» միության խորհրդի, Հայաստանի Հանրապետական կուսակցության և մի շարք այլ քաղաքական կազմակերպությունների մշակած հռչակագրի նախագծերը[144]: Ներկայացված բոլոր նախագծերն էլ ունեին որոշակի ընդհանրություններ, որոնք կարելի է բաժանել երկու խմբի:

---

[141] «Խորհրդային Հայաստան», 25 օգոստոսի, 1990:
[142] «Հայաստանի Հանրապետություն», 9.10. 1990:
[143] Պողոսյան Է., Անկախ պետականության հաստատման գործընթացը Հայաստանում (1990-2001թթ.), Երևան, 2013, էջ 31, «Խորհրդային Հայաստան», 3,5,9 08. 1990:
[144] Տե՛ս նույն տեղում:

Առաջին խմբի տարբերակները մեծամասամբ կազմված էին հուզական հենքով, անցյալի հրապարակախոսական վերլուծության հիման վրա և առաջարկում էին պետահիրավական բնույթի միջոցառումներ:

Երկրորդ խմբի տարբերակները աչքի էին ընկնում իրավագիտական ընկատելի մակարդակով, քաղաքական կոռեկտությամբ և առաջարկվող վերափոխումների հիմնավորվածությամբ ու արմատական բնույթով[145]:

Հանրապետության հանրության լայն շրջաններում ավելի մեծ հեղինակություն էին վայելում Հայաստանի քաղաքական կարգավիճակի մասին ավելի իրատեսական ու ժամանակակից պահանջներին ավելի համապատասխանող երկրորդ խմբի տարբերակները, որոնք այնպես էին կազմված, որ ԽՍՀՄ-ում քաղաքական իրավիճակի ցանկացած կտրուկ ու անկանխատեսելի փոփոխության դեպքում անգամ հանրապետության իշխանություններին հնարավորություն կտային վարելու անկախացման գծից չշեղվող ճկուն քաղաքականություն[146]:

Հայաստանի լիակատար քաղաքական ինքնորոշումը հիմնականում պաշտպանում էր Հայաստանի Գերագույն խորհրդի արմատական ժողովրդավարական թևը՝ իշխանության համար պայքարում արդեն առաջին հաղթանակները տարած ՀՀՇ-ի գլխավորությամբ: Նրանք բացառում էին ամենաչնչին զիջումներն անգամ կենտրոնին:

1990թ. օգոստոսի 7-ին հռչակագիրը կազմող Գերագույն խորհրդի հանձնաժողովը հիմք ընդունելով հիմնական խնդիրների շուրջ, առանձին դեպքերում նույնիսկ իրար հակասող 8 տարբերակները, մշակեց, ամբողջացրեց ու Գերագույն խորհրդի քննարկմանը ներկայացրեց հռչակագրի երեք նոր տարբերակ[147]: Դրա հիման վրա էլ կազմվեց հռչակագրի վերջնական տարբերակը:

1990թ. օգոստոսի 20-ին հանձնաժողովը Գերագույն խորհրդին

---

[145] Տե՛ս նույն տեղում, «Խորհրդային Հայաստան», 10.08.1990:
[146] Տե՛ս Պողոսյան Է., նշված աշխ., էջ 33:
[147] Տե՛ս նույն տեղում, էջ 35:

ներկայացրեց միասնական տարբերակը[148]: Քննարկման ընթացքում բանավեճ ծավալվեց Հայաստանի անկախ պետականության հռչակման փաստի իրավաբանական ձևակերպման շուրջ: Տեսակետների բախումն այն խնդրի վերաբերյալ էր, արդյոք Գերագույն խորհուրդը հռչակում է անկախ պետականության հաստատման, թե՞ վերականգնման գործընթացի սկիզբը, կամ թե ճանաչո՞ւմ է Հայաստանի ինքնիշխանությունը նորացված ֆեդերացիայի կազմում, թե՞ ոչ, և այլն[149]:

Գերագույն խորհրդի 1990թ. օգոստոի 23-ի նիստում, երբ ընդամենը հաշված ժամեր էր մնացել հռչակագրի պաշտոնական ընդունմանը, բանավեճեր էին ընթանում փաստաթղթի վերջնական անվանման հարցի շուրջ: Շրջանառվում էր վերնագրի 5 տարբերակ, որոնց քվեարկության արդյունքում ձայների մեծամասնությամբ (159 կողմ) հայ ժողովրդի համար բախտորոշ այդ փաստաթուղթը անվանվեց «Հռչակագիր Հայաստանի անկախության մասին»[150]:

Անհրաժեշտ է նշել, որ հռչակագրի քննարկումների ընթացքում բավական վիճահարույց հարց էր համաշխարհային հանրությանը հասցեագրված փաստաթղթում հայերի ցեղասպանության ճանաչման ու դատապարտման մասին դրույթը ներառելու խնդիրը: Պատգամավորները տարակարծիք էին որոշ ձևակերպումների կապակցությամբ: Կային ուժեր՝ ՀՀԾ-ն ներկայացնող պատգամավորները՝ Լ. Տեր-Պետրոսյանի ղեկավարությամբ, որոնք ելնելով իրենց քաղաքական սկզբունքներից, ընդհանրապես դեմ էին հռչակագրում ցեղասպանության հարցը որևէ կերպ արծարծելուն: Սակայն մի ստվար պատգամավորների խումբ՝ Ա. Նավասարդյան, Ի. Մուրադյան, Հ. Բաբուխանյան, Ռ. Համբարձումյան և այլն՝ Հ. Սիմոնյանի ղեկավարությամբ պահանջում էին բացառիկ պատմական նշանակության այդ փաստաթղթում անպայման արձանագրել ցեղասպանության փաստը: [151]

---

[148] «Խորհրդային Հայաստան», 22.08.1990:
[149] Տե՛ս նույն տեղում, Պողոսյան Է., նշված աշխ., էջ 37:
[150] Պողոսյան Է., նշված աշխ., էջ 38, «Խորհրդային Հայաստան», 24.08.1990:
[151] Տե՛ս նույն տեղում, 21.08.1990:

Ի վերջո, Հայաստանի Գերագույն խորհրդի նիստում հայոց ազգային արժեքներին հավատարիմ քաղաքական ուժերի ճնշման տակ, որոշվեց ցեղասպանության մասին դրույթն ընդգրկել հռչակագրում: Ձայների մեծամասնությամբ հավանության արժանացած այս դրույթն իր տեղը գտավ հռչակագրի 11-րդ կետում, որտեղ արձանագրված է. «Հայաստանի Հանրապետությունը սատար է կանգնում 1915թ. Օսմանյան Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում հայերի ցեղասպանության միջազգային ճանաչման գործին»[152]: Այս փաստը հանրապետությունում իշխանության եկած ՀՀԾ-ի դեմ Գերագույն խորհրդում ընդդիմության առաջին դրսևորումն էր:

1990թ. օգոստոսի 23-ին Գերագույն խորհրդի հերթական նիստում հռչակագիրը վերջնական տեսքով դրվեց քվեարկության, որի արդյունքում 183 կողմ, 2 դեմ, 2 ձեռնպահ ձայներով այն ընդունվեց[153]:

Հայաստանի Գերագույն խորհրդի քարտուղար Ա. Սահակյանը հռչակագրի ընդունումից անմիջապես հետո արտահայտելով իր տեսակետը՝ նշեց, որ «հռչակագիրը, իրոք, պատմական, քաղաքական մեծ նշանակություն ունեցող փաստաթուղթ է, որն ընդունվեց սուր բանավեճի պայմաններում»[154]:

Հաջորդ օրը ՀՀ առաջին գումարման Գերագույն խորհրդի նիստում պատգամավորները կրկին անդրադառնալով հռչակագրին, վերջնական խմբագրումից հետո դրեցին նոր քվեարկության, որն ընդունվեց 192 կողմ, 2 ձեռնպահ ձայներով: Հենց այդ նիստում տեղի ունեցավ խորհրդանշական հայտնի իրադարձություն, երբ Հայաստանի անկախության մասին հռչակագրի վերջնական տեքստը մեծ հանդիսավորությամբ հրապարակեց Գերագույն խորհրդի պատգամավոր Արամ Մանուկյանը՝ Հայաստանի առաջին Հանրապետության հիմնադրի անվանակիցը: Խորհրդարանը արտահայտելով Հայաստանի ժողովրդի միասնական կամքը, ել-

---

[152] «Խորհրդային Հայաստան», 24.08.1990:

[153] Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, 16 (972), 31.08.1990, էջ 5-6:

[154] «Խորհրդային Հայաստան», 24.08.1990:

ելով Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի սկզբունքներից և միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերից, կենսագործելով ազգերի ազատ ինքնորոշման իրավունքը, հիմնվելով 1989 թվականի դեկտեմբերի 1-ի «Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին» Հայաստանի Գերագույն խորհրդի և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի համատեղ որոշման վրա, զարգացնելով 1918 թվականի մայիսի 28-ին ստեղծված անկախ Հայաստանի Հանրապետության ժողովրդավարական ավանդույթները և խնդիր դնելով ժողովրդավարական, իրավական հասարակարգի ստեղծումը, հռչակում էր անկախ պետականության հաստատման գործընթացի սկիզբը:

Հռչակագիրը, որ կարևոր իրավական փաստաթուղթ էր դեպի անկախություն տանող ճանապարհին և նախանշում էր Հայաստանի քաղաքական, տնտեսական, մշակութային զարգացման ուղիները, բաղկացած էր 12 կետից:

Հռչակագրի քաղաքական բաժնում նշվում էր, որ ՀԽՍՀ-ն վերանվանվում է Հայաստանի Հանրապետություն (կրճատ՝ Հայաստան, այսինքն այնպես, ինչպես հանրապետությունը կոչվել էր 1918 թվականին): Այսպիսով, Հայաստանի պատմության մեջ սկսվում էր երրորդ հանրապետության շրջանը (առաջինը՝ 1918-1920, երկրորդը՝ 1920-1991): Կարևոր է նշել, որ թեև Խորհրդային Հայաստանը դեռևս ԽՍՀՄ կազմում էր և չէր օգտվում իրական պետական անկախությունից, բայց այդ շրջանում ձեռք բերված հաջողությունների հիմքի վրա էր, որ հնարավոր եղավ կյանքի կոչել երրորդ հանրապետությունը:

Հռչակագրի հատուկ հողվածով ընդունվում էր հանրապետության օրենքների գերակայությունը ԽՍՀՄ օրենքների նկատմամբ: Եթե ԽՍՀՄ տվյալ օրենքը չէր հաստատված Հայաստանի Գերագույն խորհրդի կողմից, ապա այն չէր կարող գործել հանրապետությունում:

Փաստաթղթում ամրագրվում էր, որ Հայաստանն ինքնիշխան պետություն էր՝ օժտված պետական իշխանության գերակայությամբ, անկախությամբ, լիիրավությամբ: Նրա ամբողջ տարածքում գործելու էին միայն Հայաստանի Հանրապետության Սահմանա-

դրությունը և օրենքները: Այստեղ բնակվող բոլոր քաղաքացիների համար սահմանվում էր Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն, որի իրավունքը պետք է ունենար նաև արտերկրի հայությունը: Պետությունն ապահովելու էր իր քաղաքացիների ազատ ու իրավահավասար զարգացումը՝ անկախ ազգությունից, ռասայական պատկանելությունից և դավանանքից:

Պետական խորհրդանիշներ հաստատվեցին Հայաստանի առաջին հանրապետության դրոշն ու զինանշանը: Հայաստանը պետք է վարեր անկախ ու ակտիվ արտաքին քաղաքականություն, ունենար իր դիվանագիտական ներկայացուցչությունները տարբեր երկրներում:

Փաստաթղթի տնտեսական բաժնում նշվում էր, որ Հայաստանի տարածքում հողը, նրա ընդերքը, օդային տարածությունը, ջրային և այլ բնական պաշարները համարվում են հայ ժողովրդի սեփականությունը: Երկրի տնտեսության հիմքում պետք է ընկած լինեն մասնավոր սեփականատիրական և ազատ շուկայական հարաբերությունները: Հողը, իբրև մասնավոր սեփականություն պետք է տրվեր գյուղացուն: Ձեռնարկությունների մի մասը ենթակա էր սեփականաշնորհման:

Հայաստանը սեփականության բազմաձևության հիման վրա որոշելու էր իր տնտեսավարման սկզբունքները և կարգը, հիմնելու էր սեփական դրամ, ազգային բանկ, ֆինանսավարկային համակարգ, հարկային և մաքսային ծառայություններ:

Հատուկ կետով արձանագրվում էր, որ Հայաստանի Հանրապետությունն իր անվտանգությունը և սահմանների անձեռնմխելիությունն ապահովելու նպատակով ստեղծելու էր սեփական զինված ուժեր, ներքին զորքեր, պետական և հասարակական անվտանգության մարմիններ: Նա պետք է ունենար ԽՍՀՄ սպառազինության իր մասնաբաժնի իրավունքը, և ինքն էր որոշելու իր քաղաքացիների զինվորական ծառայության կարգը:

Մշակութային բաժնում հատուկ ուշադրություն էր հատկացվում հայերենի, իբրև պետական լեզվի կիրառման հարցին: Հանրապետությունում ներքին ամբողջ գործավարությունը պետք է կատարվեր միայն հայերենով:

Հռչակագիրն արտոնում էր մարդու իրավունքների հարգում, խղճի, կուսակցությունների, ժողովների, մամուլի ազատություն: Վերականգնվում էին Հայ Առաքելական եկեղեցու իրավունքները: Հռչակագիրը հաստատում էր Հայաստանի վճռականությունը՝ Արցախն իր տարածքի անբաժանելի մասը ճանաչելու վերաբերյալ: Մինչև նոր սահմանադրության (հիմնական օրենքի) ընդունումը հռչակագիրը ծառայելու էր իբրև ծրագրային փաստաթուղթ:

Հռչակագիրը միաժամանակ հիմք էր նոր օրենսդրության, ՀՀ Սահմանադրության մշակման, ինչպես նաև Խորհրդային Հայաստանի գործող Սահմանադրության մեջ փոփոխությունների ու լրացումների կատարման համար:

բ. Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան պետություն ԽՍՀՄ-ի փլուզումը

1989-91 թվականներին Խորհրդային Միության ծայրամասերում առաջացան ճգնաժամի, ազգամիջյան հակասությունների, լարվածության մի շարք օջախներ, որոնք գնալով վերածվեցին անկախության համար պայքարի կենտրոնների: Դրանցից առաջիններից մեկը Հայաստանի և Ադրբեջանի միջև առաջացած հակասություններն էին՝ կապված Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի հետ: Մյուսները Մերձբալթյան հանրապետություններն էին՝ Լատվիան, Լիտվան և Էստոնիան, ինչպես նաև Հարավկովկասյան տարածաշրջանը՝ գլխավորապես Վրաստանի, Աբխազիայի ու Հարավային Օսեթիայի միջև եղած հակասություններով: Այս ամենի և մի շարք այլ պատճառներով 1991 թ. գարնանը ԽՍՀՄ-ը գտնվում էր փլուզման եզրին: Երկրի ղեկավարությունը ջանքեր էր գործադրում Միությունը փրկելու համար:

Կանխազգալով ԽՍՀՄ մոտալուտ փլուզման վտանգը՝ Խորհրդային Միության առաջին նախագահ Մ. Գորբաչովը դեռևս 1990թ. ապրիլի 3-ին ստորագրեց «ԽՍՀՄ-ի կազմից միութենական հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի լուծման կարգի մասին» օրենքը[155], որը միութենական հանրապետությունների

[155] «Известия» советов Народных депутатов СССР, 7, 04. 1990.

հնարավոր անկախացումը կանխելու փորձ էր, քանզի ԽՍՀՄ սահմանադրության 72-րդ հոդվածով, թեկուզ անորոշ, տեսականորեն ընդունելով միութենական հանրապետությունների անջատման իրավունքը,[156] չսահմանելով դրա գործնականում կիրառման մեխանիզմներ, ավելի մեծ հնարավորություններ էր ընձեռում անկախանալու ձգտող հանրապետություններին, քան գորբաչովյան օրենքը: Դրա գլխավոր առանձնահատկությունն այն էր, որ ժամանակային առումով հնարավորինս ձգձգվում էր անկախացման գործընթացը: Նախատեսվում էր անկախացման հարցով հանրաքվեի մասին որոշումն ընդունելուց ոչ շուտ քան վեց ամիս հետո իրականացնել հանրաքվեն, որի ընթացքը գտնվելու էր ԽՍՀՄ Գերագույն խորհրդի վերահսկողության տակ: Ըստ օրենքի 9-րդ հոդվածի ԽՍՀՄ-ից անջատվող հանրապետությունը կարող էր անկախանալու թույլտվությունը ակնկալել միայն հանրաքվեից 5 տարի անց: Այդ հնգամյա անցման շրջանում պետք է լուծվեին ԽՍՀՄ-ից անկախանալու հանդգնություն ունեցող հանրապետության միությունից դուրս գալու հետ կապված հարցերը: Ավելի ճիշտ կլիներ ասել, որ դա մի տևական ժամանակահատված էր, երբ անկախության ձգտող կողմը ստիպված էր լինելու հաղթահարել կենտրոնի կողմից հարուցած բազմաթիվ խոչընդոտները, այդ թվում ֆինանսա-տնտեսական հսկայական սանկցիաներ, եթե ընդհանրապես դրանք հնարավոր էր հաղթահարել:[157] Հայաստանը առաջիններից մեկն էր, որ պատրաստակամություն հայտնեց անկախացման գործընթացում ղեկավարվել բացառապես վերոնշյալ օրենքով: Հանրապետությունների անկախացումը թույլ չտալու, ԽՍՀՄ-ի փլուզումը կանխելու նպատակով Մ. Գորբաչովի ղեկավարությամբ մշակվեցին և կիրառության մեջ մտան մի շարք այսպես կոչված «հակաանկախացման» օրենքներ՝ «Հասարակական կարգը պահպանելիս ԽՍՀՄ ներքին գործերի մինիստրության ներքին զորքերի պարտականությունների և իրավունքների մասին»[158],

---

[156] Конституция (Основной закон) Союза Советских Социалистических Республик, Ташкент, 1978., с. 63.
[157] Պողոսյան Է., նշված աշխ., էջ 48, 49:
[158] «Известия» советов Народных депутатов СССР, 31 03, 1990.

«Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին»[159] և այլն: Կենտրոնի կամայականությունների դեմ պայքարող ազգերի և մասնավորապես հայ ժողովրդի կենսական շահերի դեմ էր ուղղված, անկախության մասին հռչակագրի ընդունումից ընդամենը օրեր անց, ԽՍՀՄ նախագահի «ԽՍՀՄ օրենսդրությամբ չնախատեսված սպառազեն կազմավորումների ստեղծումն արգելելու և անօրինական զենք պահելու դեպքում այն առգրավելու մասին» հրամանագիրը:[160] Ստեղծված իրավիճակում Հայաստանի Գերագույն խորհուրդը կայացրեց բացառապես Հայաստանի շահերից բխող ինքնիշխան վճիռ, որով կասեցվում էր ԽՍՀՄ նախագահի հրամանագրի կիրարկումը ինչպես Հայաստանում, այնպես էլ Արցախում[161]:

Այդ կապակցությամբ ընդունվեց Հայաստանի իշխանությունների ինքնուրույն գործելաոճն արտահայտող «Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահի հայտարարության մասին» որոշումը, որում մասնավորապես ընդգծվում էր, «Հայաստանի իշխանությունները ի վիճակի են կարճ ժամանակի ընթացքում սեփական ուժերով լուծելու հանրապետության ներքին կյանքին վերաբերող, նրա քաղաքական-հասարակական վիճակի կայունացմանն ուղղված բոլոր խնդիրները, պայմանով, որ բացառված լինի արտաքին միջամտությունը»[162]:

Հայաստանի նկատմամբ կենտրոնի ճնշումները առանձնապես ուժեղացան անկախության մասին հռչակագրի ընդունումից հետո: Հայաստանին անկախացման ուղուց շեղելու նպատակով ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունները դիմում էին ամեն տեսակի միջոցների, գործի էին դրվում իշխանական լծակները, սադրիչ քայլերի էին դիմում Լեռնային Ղարաբաղի հարցում և այլն: Ուժեղացել էին Արցախում և Հայաստանի սահմանամերձ շրջաններում անճնագրային ռեժիմի ստուգման անվան տակ ԽՍՀՄ զինված ուժերի

---

[159] Նույն տեղում, 10. 04. 1990r.
[160] «Խորհրդային Հայաստան», 27.07, 1990, Պողոսյան Է., նշված աշխ., էջ 52:
[161] Նույն տեղում, 2.08. 1990:
[162] ՀԽՍՀ Գերագույն խորհրդի տեղեկագիր, N 15(971), 23. 08.1990, էջ 13:

և ադրբեջանական միլիցիայի հատուկ ստորաբաժանումների, հատկապես ՕՄՕՆ-ի կողմից իրականացվող պատժիչ գործողությունները: Կենտրոնը ԽՍՀՄ փլուզումը կանխելու նպատակով բռնաճնշումներ էր գործադրում նաև անկախության ձգտող մյուս հանրապետությունների նկատմամբ: Այդ ուղղությամբ 1990-1991թթ. կենտրոնական իշխանությունների կողմից շարունակվում էին ընդունվել օրենքներ ու որոշումներ ուղղված ԽՍՀՄ-ի ժողովրդավարական ազատական շարժումների ճնշմանը: Սակայն այս շրջանում ազատական սկզբունքներ որդեգրած քաղաքական ուժերը, հատկապես անկախության ձգտող ազգային հանրապետություններում, սկսել էին ավելի ու ավելի վճռականորեն ընդդիմանալ միութենական կենտրոնի կողմից հրամցվող այդ անկենդան փաստաթղթերին: Միութենական կենտրոնի նման վճիռ-որոշումների դեմ ընդվզումները տեղերում հանուն ինքնիշխանության պայքարի առաջին դրսևորումներն էին: Արդեն այդ փուլում ժողովրդավարական ուժերի պայքարը դարձել էր ավելի կազմակերպված, հագեցել ներքին տրամաբանությամբ, գործողությունները դարձել էին ավելի կանոնակարգված հաջորդական ու նպատակամղված:[163] Անկախացող հանրապետությունների, բնույթով արդեն ժողովրդավարականացած իշխանությունները վարում էին ազգային ինքնիշխանության հաստատմանը միտված կանխամտածված, ծրագրավորված քաղաքական կուրս: Նրանցից առավել հետևողականները, արդեն, աստիճանաբար անցում էին կատարում կենտրոնի նկատմամբ, իրավական առումով, հարձակողական գործելաոճին: [164]

Դրա լավագույն վկայությունն են այդ շրջանում հատկապես Հայաստանում ծավալված քաղաքական իրադարձությունները: Այսպես, ՀՀ Գերագույն խորհրդի նախագահությունը՝ 1991թ. հունվարի 31-ի որոշմամբ, ուղղակիորեն, կասեցրեց Հայաստանի Հանրապետության տարածքում ԽՍՀՄ պաշտպանության և ներքին գործերի նախարարների 1990թ. դեկտեմբերի 29-ի «Ներքին գոր-

[163] Տե՛ս Պողոսյան Է., նշված աշխ., էջ 54:
[164] Տե՛ս նույն տեղում:

ծերի մարմինների աշխատակիցների, խորհրդային բանակի ու ռազմածովային նավատորմի զինծառայողների համատեղ պարեկություն կազմակերպելու մասին» հրամանի գործունեությունը, այն որակելով որպես հակասահմանադրական և ստեղծված իրավիճակում սադրիչ փաստաթուղթ:[165] Հենց նույն օրը՝ հունվարի 31-ին, Հայաստանում փաստորեն բարձրագույն իշխանական կարգավիճակ վայելող, ՀՀ Գերագույն խորհուրդն իր ընդունած մեկ այլ որոշմամբ կասեցրեց Հայաստանի տարածքում ԽՍՀՄ նախագահի 1991թ. հունվարի 26-ի մեկ այլ «Տնտեսական սաբոտաժի և տնտեսական հանցագործություններին» վերաբերվող հրամանագրերի գործողությունը:

ԽՍՀՄ կործանման և Խորհրդային հանրապետությունների անկախացման օրավուր ահագնացող գործընթացները կանգնեցնելուն էր միտված նաև ԽՍՀՄ պահպանման վերաբերյալ 1991թ. մարտի 17-ին անցկացվելիք հանրաքվեն, որի մասին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի որոշումն ընդունվել էր 1991թ. հունվարի 16-ին:[166]

Խորհրդային Հայաստանը անկախացման ուղին ընտրած միութենական վեց հանրապետությունների թվում էր: Դրանք էին Վրաստանը, Լատվիան, Լիտվան, Էստոնիան, Մոլդովան և Հայաստանը, որոնց տարածքում նշված հանրաքվեն չանցկացվեց: Կենտրոնի այդ նախաձեռնության դեմ ՀՀ Գերագույն խորհուրդը նախ 1991թ. հունվարի 30-ին հանդես եկավ հատուկ հայտարարությամբ[167], իսկ ապա մարտի 1-ին ընդունեց հանրաքվեն Հայաստանի տարածքում արգելելու մասին որոշում, որում մասնավորապես արձանագրված էր. «Հաշվի առնելով, որ ԽՍՀՄ-ի պահպանման վերաբերյալ 1991թ. մարտի 17-ի ԽՍՀՄ հանրաքվեն հակասում է ազգերի ազատ ինքնորոշման իրավունքին, Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության տարածքում չանցկացնել

[165] Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, N 2 (982), 31.01.1991, էջ 72-73:
[166] Տե՛ս նույն տեղում, էջ 52:
[167] Նույն տեղում:

ԽՍՀՄ-ի պահպանման վերաբերյալ 1991 թվականի մարտի 17-ի ԽՍՀՄ հանրաքվեն:

2. Համարել, որ ԽՍՀՄ-ի պահպանման վերաբերյալ 1991 թվականի մարտի 17-ի ԽՍՀՄ հանրաքվեի արդյունքները Հայաստանի Հանրապետության համար իրավական ուժ չունեն»: [168]

ՀՀ Գերագույն խորհուրդը 1991թ. մարտի 1-ին ընդունեց մեկ այլ որոշում «Հայաստանի Հանրապետության տարածքում ԽՍՀՄ-ի կազմից դուրս գալու վերաբերյալ հանրաքվե անցկացնելու մասին»: Այդ պատմական կարևոր որոշման մեջ մասնավորապես ասված էր. «Ելնելով Հայաստանի անկախության մասին հռչակագրի դրույթներից ու նպատակներից և հիմնվելով Հայաստանի Հանրապետության սահմանադրության 98 հոդվածի 5 կետի վրա, Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության տարածքում անցկացնել հանրաքվե ԽՍՀՄ-ի կազմից դուրս գալու վերաբերյալ, քվեարկության դնելով հետևյալ հարցը «Համաձայն եք, որ Հայաստանի Հանրապետությունը լինի անկախ ժողովրդավարական պետության ԽՍՀՄ-ի կազմից դուրս»:
2. Հանրաքվեն անցկացնել 1991թ. սեպտեմբերի 21-ին:
3. Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահությանը իրավունք տալ իրադրության կտրուկ փոփոխության դեպքում որոշում կայացնել հանրաքվեն ավելի վաղ ժամկետում անցկացնելու մասին:
4. Հանրաքվեի անցկացման հետ կապված ծախսերը կատարել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից»[169]:

Հարկավոր է նշել, որ անկախության հանրաքվեի մասին որոշման ընդունմանը նախորդել էին Գերագույն խորհրդում այդ հարցի հանգամանալի քննարկումները, որոնցից հատկանշական է ՀՀ Գերագույն խորհրդի 1991թ. փետրվարի 28-ի նիստը, որտեղ ելույթ ունեցավ ՀՀԳԽ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը: Նա նշեց.

---

[168] Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, N 5 (985), 15.03.1991, էջ 3:

[169] Նույն տեղում, էջ 4:

«ԽՍՀՄ-ը և նրա տիպի ցանկացած նոր միությունը դատապարտված է լինելու ոչնչացման: Ցանկալի և հնարավոր է, որ Միության քայքայումը կատարվի բնական, անարյուն, քաղաքակիրթ ձևով, և սա վերածվի ժողովուրդների մի համերաշխ համագործակցության, ինչպիսին է, օրինակ, Եվրոպական երկրների համերաշխ համագործակցությունը,- ապա հատուկ շեշտեց միութենական հանրաքվեի մերժման անհրաժեշտությունը և անկախացման հանրաքվեի անցկացման անխուսափելիությունը,- չպետք է բացառել, որ Հայաստանը անկախության հանրաքվեից հետո էլ, կենտրոնի հարկադրանքի պարագայում, ստիպված կլինի կնքել միութենական պայմանագիրը, որքան էլ ստրկական լինի այն»:[170] Փաստորեն, քաղաքական չափանիշներով ինքնիշխանություն վայելող Հայաստանի ղեկավարության վարած ղիվանագիտական ճկուն քաղաքականությունը, ըստ էության, նպատակ ուներ հնարավորինս ապահովագրել հանրապետությունում անկախացման հանրաքվեի գործընթացը կենտրոնի պահպանողական ուժերի հնարավոր արգելափակման փորձերից: Հայաստանի ինքնիշխանության ճանապարհին կարևոր քայլ էր ՀՀ Գերագույն խորհրդի կողմից 1991թ. ապրիլի 2-ին «Հանրաքվեի մասին» օրենքի ընդունումը,[171] որտեղ արձանագրված էր, որ համաժողովրդական հանրաքվեով պետք է լուծվեին նաև Հայաստանի Հանրապետության կարգավիճակի փոփոխման վերաբերյալ հարցերը:[172]

1991թ. ապրիլի 12-ին Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահության և նախարարների խորհրդի կողմից ընդունված որոշմամբ հավանություն տրվեց ՀՀ Գերագույն խորհրդի անկախ պետականության հաստատման և տեղական ինքնակառավարման հարցերի մշտական հանձնաժողովների կողմից հանրաքվեի հանձնաժողովի կազմի վերաբերյալ ներկայացված առաջարկությանը: 1991թ. մայիսի 23-ին Հայաստանի

---

[170] Տե՛ս Տեր-Պետրոսյան Լ., Ընտրանի (ելույթներ, հոդվածներ, հարցազրույցներ), Երևան, 2006, էջ 176,177:
[171] Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու (1990-1995թթ.), Երևան, 1995, էջ 119-130:
[172] Նույն տեղում, էջ 120:

Հանրապետության Գերագույն խորհուրդը ընդունեց հանրաքվեի կենտրոնական հանձնաժողով կազմելու մասին որոշում, որով հաստատվեց հանձնաժողովի կազմը: Հայաստանի Հանրապետության հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի նախագահ դարձավ ՀՀ Գերագույն խորհրդի նախագահի առաջին տեղակալ Ք. Արարքցյանը[173]: Մայիսի 25-ին տեղի ունեցավ ԽՍՀՄ կազմից դուրս գալու վերաբերյալ հանրաքվեի անցկացման կենտրոնական հանձնաժողովի անդրանիկ նիստը, որում քննարկվեցին և համապատասխան որոշումներ ընդունվեցին կազմակերպական բնույթի մի շարք հարցերի մասին[174]:

Հայաստանի Հանրապետության հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի օգոստոսի 16-ի հերթական նիստում ընդունվեց սեպտեմբերի 21-ի հանրաքվեի Ռ. Արուտչյանի և Կ. Փաշայանի հեղինակած խորհրդանիշը[175], հաստատվեց քվեաթերթիկների նմուշը[176]:

ՀՀ Գերագույն խորհրդի 1991թ. հունիսի 24-ի որոշմամբ նախատեսվեց հանրաքվեի անցկացման նպատակներով ՀՀ պետական բյուջեից հատկացնել 1,8 մլն ռուբլի: [177]

1991թ. Խորհրդային Միության ներքին քաղաքական բոլոր կարգի իրադարձություններն ու երևույթները այսպես թե այնպես ծավալվում էին միութենական նոր դաշնագրի վավերացման և նորոգված ֆեդերացիայի ստեղծման հարցի շուրջը: Մի կողմից թափ էր առնում կենտրոնի կողմից դաշնագրի նոր տարբերակների մշակման գործընթացը (միայն 1991թ. հունիսի 14-ին և 18-ին հապճեպորեն կազմվել և հանրությանն էին ներկայացվել դաշնագրի երկու տարբերակ), մյուս կողմից էլ ուժեղանում էր միութենական նոր դաշնագրի գաղափարը ընդհանրապես մերժող և արդեն խոռվարարի պիտակավորում ստացած Հայաստանի, Վրաստանի, Մոլդովայի, Լիտվայի, Լատվիայի ու Էստոնիայի նկատմամբ

---

[173] Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, N 10(990), 31.05.1991, էջ 12-13:
[174] Նույն տեղում:
[175] Նույն տեղում, N 16 (996), 31.08.1991, էջ 8:
[176] Նույն տեղում, էջ 27-28:
[177] ՀՀ Գերագույն խորհրդի տեղեկագիր, N 16 (996), 31.08.1991, էջ 11:

կենտրոնի բիրտ ճնշումների քաղաքականությունը՝ նրանց ապագա ֆեդերացիայի մեջ մտցնելու նպատակով: [178] Ընդսմին, եթե Լատվիայի, Էստոնիայի և Մոլդովայի նկատմամբ այդ ճնշումը դեռևս դրսևորվում էր միայն պաշտոնական հայտարարությունների ձևով[179], ապա Լիտվան, Հայաստանն ու Վրաստանը վաղուց էին վերածվել խորհրդային զորքերի տարբեր պատժիչ օպերացիաների մշակման դաշտի: Կենտրոնական իշխանությունները շատ լավ էին հասկանում, որ միայն նոր դաշնագրի ստորագրմամբ կարելի կլիներ պահպանել Խորհրդային կայսրությունը: Եվ ահա 1991թ. հունիսի 18-ին ԽՍՀՄ իշխանությունները ներկայացրեցին 26 կետից բաղկացած միութենական դաշնագրի նախագիծը «Դաշնագիր ինքնիշխան պետությունների մասին» վերնագրով[180]: Սակայն Հայաստանի ազգաբնակչության գերակշռող մասը, հանրապետության ամենաազդեցիկ քաղաքական ուժերը անվերապահորեն պաշտպանում էին Հայաստանի լիակատար անկախացման գաղափարը:[181]

Խոսելով հիշատակված դաշնագրի, որպես ԽՍՀՄ-ը փրկելու վերջին փորձերից մեկի մասին, հարկ է նշել, որ այն աչքի էր ընկնում խորհրդային շրջանի քաղաքական բնույթի բոլոր փաստաթղթերին հատուկ դեկլարատիվ բնույթով: Դաշնագիրը այնպես էր կազմված, որ իրավական առումով նախկին ԽՍՀՄ-ի կազմից ինչ-որ կերպ դուրս գալու միակ տարբերակը դա նոր միության մեջ մտնելու համաձայնագիրը ստորագրելն էր: Պարզապես նոր դաշնագրի նախագծում ևս նախատեսվում էր, որ ԽՍՀՄ-ի կազմավորման մասին 1922 թ. պայմանագիրը դադարում էր գործել միայն այն հանրապետությունների համար, որոնք կստորագրեին միութենական նոր դաշնագիրը: [182]

1991թ. գարնանից կենտրոնական իշխանությունների գործունեությունը ուղղված էր Նովո-Օգարյովոյում միութենական նոր

---

[178] Տես Պողոսյան Է., նշված աշխ., էջ 59:
[179] «Известия советов Народных депутатов СССР», 1, 2, 3, 15. 04, 7, 16, 21 мая, 1990г.
[180] Հայաստանի Հանրապետություն, 2.07.1991:
[181] Հայաստանի Հանրապետություն, 9.07.1991:
[182] Տե՛ս Պողոսյան Է., նշված աշխ., էջ 61:

պայմանագրի վերջնական մշակման խնդրի կենսագործմանը, որի համար Մերձմոսկովյան այդ բնակավայր պետք է ժամանեին առագորեն փլուզվող ԽՍՀՄ-ի հանրապետությունների ներկայացուցիչները: Հայաստանի Հանրապետության իշխանությունները հնարավորինս խուսափում էին նոր պայմանագրի նախապատրաստական կոմիտեի աշխատանքներին մասնակցելուց և այդպես էլ չներկայացան ապրիլ և մայիս ամիսներին Նովո-Օգարյովոյում կայացած երկու հանդիպումներին:[183] Նույն 1991թ. հուլիսի 23-ին նախատեսված էր դաշնային նոր պայմանագրի վերջնական մշակման նպատակով նախապատրաստական կոմիտեի հերթական նիստը, որին մասնակցելուն հրավիրված էր ՀՀ Գերագույն խորհրդի նախագահը:[184] Ելնելով ստեղծված կացությունից, ՀՀ Գերագույն խորհրդի նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը մասնակցեց Նովո-Օգարյովյան հուլիսի 23-ի նիստին: Սակայն դա ավելի շուտ դիվանագիտական բարեկրթության այց էր և ոչ երբեք նոր միության «կերտման» մտահոգությամբ իրականացված գործնական ուղևորություն:[185] Հայաստանը այլևս անդառնալիորեն ընտրել էր իր ուղին:

Փաստորեն, Հայաստանը մինչև սեպտեմբերի 21-ը չմասնակցեց նաև կենտրոնի և հանրաքվեին մասնակցած ինը հանրապետությունների (Ուկրաինա, Բելառուս, Ղազախստան, Ուզբեկստան, Ղրղզստան, Տաջիկստան, Թուրքմենստան, Ադրբեջան) (9+1) կողմից մշակվող միութենական նոր պայմանագրի նախապատրաստման աշխատանքներին, որի ստորագրմամբ Կրեմլը հույս ուներ անկախացող հանրապետությունները պահպանել միության կազմում: Չնայած տվյալ հարցում կենտրոնի ակնհայտ շտապողականությանը՝ առանձին հանրապետություններ, մասնավորապես Ռուսաստանն ու Ուկրաինան, լրջորեն խոչընդոտում էին այդ պայմանագրի ստորագրմանը, որի հետևանքով այն հետաձգվեց մինչև 1991թ. սեպտեմբերի կեսերը: Միութենական նոր

[183] Տե՛ս Պողոսյան Է., նշված աշխ., էջ 62:
[184] Հայաստանի Հանրապետություն, 19.07. 1991:
[185] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 11.08.1991,Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, N 14 (994), 31.07.1991, էջ 13:

դաշնագրի ստորագրման փակուղի մտնելն էլ ավելի թուլացրեց կենտրոնի դիրքերը, որոնց ամրապնդման միակ ուղին խորհրդային ղեկավարության պահպանողական թևի ներկայացուցիչները տեսնում էին երկրում ռազմական բռնապետություն հաստատելու մեջ:

Հայաստանի անկախացման և ընդհանրապես ԽՍՀՄ-ի վերջնական փլուզման գործում վճռորոշ դերակատարություն ունեցավ 1991թ. օգոստոսի 19-ին ԽՍՀՄ-ում հետաղիմական ուժերի նախաձեռնած հեղաշրջման անհաջող փորձը:[186]

Մ. Գորբաչովի նախաձեռնությամբ խորհրդային ինքնիշխան հանրապետությունների նորացված Միություն ստեղծելու համար նախատեսված պայմանագրի ստորագրումը նշանակվեց օգոստոսի 20-ին:

1991 թ. օգոստոսի 19-ին ԽՍՀՄ-ի հետաղիմական ուժերը կազմակերպեցին խռովություն՝ երկիրը կանգնեցնելով ռազմական բռնապետություն հաստատելու սպառնալիքի առջև: Օգոստոսի 19-ի առավոտյան օգտվելով այն հանգամանքից, որ երկրի նախագահը արձակուրդը անցկացնում էր Ղրիմում, հայտարարվեց, թե Մ. Գորբաչովը վատառողջության պատճառով չի կարող կատարել երկրի նախագահի պարտականությունները, և դրանք անցնում են փոխնախագահ Գ. Յանաևին: Երկրի կառավարման համար ստեղծվեց Արտակարգ դրության պետական կոմիտե (ԱԴՊԿ): Օգոստոսի 19-ին զորքը մտավ Մոսկվա: Ռուսաստանի Դաշնության նախագահ Բորիս Ելցինը երկրի քաղաքացիներին ուղղված դիմումի մեջ կատարվածը համարեց «հակասահմանադրական հեղաշրջում»: Օգոստոսի 21-ին խռովարարները ձերբակալվեցին: Մ. Գորբաչովը Ղրիմից վերադարձավ Մոսկվա:

Փաստորեն ժողովրդավարների վճռականության շնորհիվ պահպանողական ուժերի հեղաշրջման փորձը ձախողվեց: Մոսկվայում ժողովրդավարական ուժերի հաղթանակը կարևոր նշանակություն ունեցավ՝ արագացնելով կոմունիստական կուսակցության միանձնյա իշխանության և խորհրդային կայսրության փլուզումը: Օգոստոսյան դեպքերից հետո ՌԽՍՖՀ նախագահ Բ. Ել-

[186] «Հայաստանի Հանրապետություն», 20 օգոստոսի, 1991:

ցինի հրամանագրով արգելվեց ԽՄԿԿ-ի գործունեությունը Ռուսաստանի տարածքում: 1991 թ. սեպտեմբերի 7-ին Հայաստանի կոմունիստական կուսակցության XXIX համագումարը որոշեց դադարեցնել ՀԿԿ-ի գործունեությունը[187]:

Ելնելով Հայաստանի անկախության մասին Հռչակագրի դրույթներից ու նպատակներից, ինչպես նաև բացահայտ հակահայկական քաղաքականություն վարող կենտրոնից ձերբազատվելու և ազգի շահերից բխող քաղաքականություն վարելու համար հայոց խորհրդարանը որոշեց 1991 թ. սեպտեմբերի 21-ին հանրապետության տարածքում անցկացնել հանրաքվե՝ ԽՍՀՄ-ի կազմից դուրս գալու և անկախանալու հարցով:

Սեպտեմբերի 21-ի հանրաքվեին մասնակցեց քվեարկությանը մասնակցելու իրավունք ունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների 95,05 տոկոսը: Հայաստանի անկախության օգտին իր ձայնը տվեց 2 մլն 43 հազար մարդ կամ քվեարկության իրավունք ունեցողների 94,39 տոկոսը[188]: Համապատասխանաբար անկախությանը դեմ էին քվեարկել մոտ 0,47 տոկոսը և անվավեր ճանաչված քվեաթերթիկների քանակը կազմում էր քվեարկության իրավունք ունեցող քաղաքացիների 0,19 տոկոսը[189]: Հանրաքվեի ընթացքին հետևեցին աշխարհի 25 երկրներից՝ Մեծ Բրիտանիայից, Շվեյցարիայից, Բելգիայից և այլն ժամանած 117 դիտորդներ: [190] Հանրաքվեի նախօրյակին դիտորդական առաքելությամբ Հայաստան էին ժամանել ԱՄՆ-ի 10 կոնգրեսականներից բաղկացած պաշտոնական պատվիրակությունը՝ կոնգրեսական Վ. Օուենսի գլխավորությամբ:[191] Սեպտեմբերի 23-ին տեղի ունեցած ՀՀ հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի անկախության հանրաքվեի արդյունքների ամփոփիչ նիստում արձանագրվեց, որ բոլոր

---

[187] Տե՛ս ՀԱԱ, ֆ1, ց 84, գ 1, թ. 68, 69, ց 128, գ. 3, թ. 1

[188] Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, N 18(998), 30.09.1991, էջ 21:

[189] «Հայաստանի Հանրապետություն», 24 սեպտեմբերի, 1991թ:

[190] Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, N 18(998), 30.09.1991, էջ 15:

[191] Նույն տեղում, N 17(997), 15.09.1991, էջ 25: «Հայաստանի Հանրապետություն», 21 սեպտեմբերի, էջ 29:

դիտորդները միահամուռ էին իրենց տեսակետում, որ հանրաքվեն իրականացվել էր նորմալ մթնոլորտում և այդ ընթացքում «Հայաստանի Հանրապետության հանրաքվեի մասին» օրենքի խախտման վերաբերյալ ոչ մի բողոք չէր արձանագրվել:[192] Հանրաքվեի ընթացքում Հայաստանում գտնված ԱՄՆ-ի կոնգրեսականների կողմից Միացյալ Նահանգների նախագահին ներկայացրած զեկուցագրում մասնավորապես ասվում էր. «Մենք կարող ենք հավաստել, որ Հայաստանի ժողովրդին հնարավորություն էր ընձեռվել դրսևորելու իր ազատ ընտրության իրավունքը, և բացարձակ մեծամասնությունը քվեարկեց Խորհրդային Միության կազմից դուրս գալու օգտին:

Մենք միասնաբար պահանջում ենք, որպեսզի Միացյալ Նահանգները ճանաչեն Հայաստանի նոր Հանրապետությունը»[193], - վերջում ավելացրել էին զեկուցագրի հեղինակները:

1991թ. սեպտեմբերի 23-ին ՀՀԳԽ-ի հատուկ նիստը նվիրված էր հայ ժողովրդի համար կարևորագույն հարցի՝ անկախության հանրաքվեի արդյունքների հաստատմանը, որը վարեց Խորհրդարանի նախագահի տեղակալ Գ. Հարությունյանը:

1991թ. սեպտեմբերի 23-ին Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը հիմնվելով համաժողովրդական հանրաքվեի արդյունքների վրա ընդունեց Հայաստանը անկախ պետություն հռչակելու մասին պատմական որոշումը[194]: Հայ ժողովրդի համար մեծ կարևորություն ունեցող որոշման մեջ ասված էր. «Հավատարիմ մնալով Հայաստանի անկախության մասին հռչակագրին, հենվելով մարդու իրավունքների և ազգերի ազատ ինքնորոշման միջազգային նորմերի վրա, նպատակ ունենալով ստեղծել ժողովրդավարական, իրավական հասարակարգ, հիմք ընդունելով 1991թ. սեպտեմբերի 21-ի՝ ԽՍՀՄ կազմից դուրս գալու մասին անցկացված հանրաքվեի արդյունքները, Հայաստանի Հանրապետության

[192] Նույն տեղում, N 18(998), 30.09.1991, էջ 29:
[193] «Հայաստանի Հանրապետություն», 2. 10, 1991թ.:
[194] Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, N 18 (998), 30.09.1991, էջ 21:

Գերագույն խորհուրդը հռչակում է Հայաստանի Հանրապետությունը անկախ պետություն»:[195]

Որոշման ընդունմանը հաջորդած Հայաստանի օրհներգն ու Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի տերունական օրհնությունը մի առանձնակի հանդիսավորություն հաղորդեցին ԽՍՀՄ կազմից դուրս գալու մասին որոշման պահպանմամբ իրականացված գործընթացի տրամաբանական ավարտին[196]: Փաստորեն, Հայաստանը ԽՍՀՄ հանրապետություններից առաջինն ու ըստ էության միակն էր, որը անկախացման հանրաքվեն անցկացրեց Խորհրդային Միության սահմանադրության և «ԽՍՀՄ-ի կազմից միութենական հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի լուծման կարգի մասին» օրենքին լիակատար համապատասխանությամբ. այն է՝ հանրաքվե իրականացնելու որոշման ընդունումից 6 ամիս անց և անկախացման մասին որոշումը կայացրեց հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող ազգաբնակչության ոչ պակաս քան երկու երրորդի համաձայնությամբ:[197]

Սեպտեմբերի 24-ին ՀՀ Գերագույն խորհրդի որոշմամբ սեպտեմբերի 21-ը հայտարարվեց տոնական, ոչ աշխատանքային օր:[198]

Այսպիսով, 70-ամյա ընդմիջումից հետո կրկին վերականգնվեց Հայաստանի ազգային անկախությունը:

Նախկին խորհրդային հանրապետությունների օրինակով Հայաստանում ևս մտցվեց նախագահական կառավարման համակարգ: 1991 թ. հոկտեմբերի 16-ին Հայաստանում առաջին անգամ անցկացվեցին նախագահական այլընտրանքային ընտրություններ՝ վեց թեկնածուների մասնակցությամբ: Արդյունքում ձայների ճնշող մեծամասնությամբ (83 տոկոս) հանրապետության նախագահ ընտրվեց Գերագույն խորհրդի նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը, իսկ փոխնախագահ՝ Գագիկ Հարությունյանը:[199]

---

[195] Նույն տեղում:
[196] Նույն տեղում:
[197] «Հայաստանի Հանրապետություն», 2.10. 1991թ.:
[198] Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, N 18(998), 30.09.1991, էջ 5:
[199] «Հայաստանի Հանրապետություն», 12. 11. 1991թ.:

Անկախության ուղին բռնած հանրապետությանը ծանր փորձություններ էին սպասում: Այն փաստորեն կտրվել էր նախկին միութենական տնտեսական համակարգի բոլոր օղակներից: 1991 թ. նոյեմբերին հերթական անգամ փակվեց Աղրբեջանից եկող գազամուղը: Հայաստանի էներգետիկ շրջափակումը գնալով ավելի մեծ չափեր ընդունեց: Կանգ առան հանրապետության գրեթե բոլոր ձեռնարկությունները, ուսումնական հաստատություններում դադարեցին պարապմունքները, բնակչությունը զրկվեց ջեռուցումից: Գազամուղի փակումից բացի ընդհատվեց նաև երկաթուղային կապը: Հայաստանի տնտեսությունը կանգնեց կազմալուծման լուրջ վտանգի առաջ: Օրըստօրե ծանրանում էր ազգաբնակչության սոցիալական վիճակը: Իսկ տարածաշրջանում լարվածությունը գնալով ավելի էր սրվում:

Հանրապետության համար այսպիսի ծանր պայմաններում, 1991 թ. դեկտեմբերի 8-ին, Մինսկի մոտակայքի Բելովեժսկ բնակավայրում երեք սլավոնական հանրապետությունների՝ Ռուսաստանի, Ուկրաինայի և Բելոռուսի ղեկավարները ստորագրեցին համաձայնագիր՝ ԽՍՀՄ-ի գոյությունը դադարեցնելու մասին՝ որպես միջազգային սուբյեկտ և աշխարհաքաղաքական իրողություն: Դրանով իրականացավ ԽՍՀՄ-ի փլուզումը: Միաժամանակ հայտարարվեց միջազգային համագործակցության նոր սուբյեկտի՝ Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) կազմավորման մասին[200]: Միութենական նախկին հանրապետություններից Մինսկի համաձայնագրին առաջինն արձագանքեց Հայաստանի Հանրապետությունը, որը ողջունեց ԱՊՀ-ի ստեղծումը՝ հայտնելով նրան միանալու իր պատրաստակամությունը:

1991 թ. դեկտեմբերի 21-ին Ղազախստանի նախկին մայրաքաղաք Ալմա-Աթայում 11 ինքնիշխան պետություններ՝ Ռուսաստանը, Ուկրաինան, Բելոռուսը, Ղազախստանը, Ուզբեկստանը, Տաջիկստանը, Ղրղզստանը, Թուրքմենստանը, Աղրբեջանը, Մոլդովան և Հայաստանը ստորագրեցին համաձայնագիր ԱՊՀ ստեղծման մասին[201]: Այլևս գոյություն չունեցող երկրի նախագահ Մ.

[200] Հայաստանի Հանրապետություն, 24.12, 1991թ.:
[201] Տե՛ս նույն տեղում:

Գորբաչովին մնում էր հրաժարական տալ: Հրաժարականից մեկ օր անց, դեկտեմբերիմ 26-ին, նորաստեղծ ԱՊՀ-ի անդամ երկրներից առաջիններից մեկը ՀՀ ԳԽ-ն վավերացրեց ՀՀ-ն ԱՊՀ-ին անդամակցելու մասին արձանագրությունը: Անհրաժեշտ է նշել, որ Աղրբեջանը ԱՊՀ-ին անդամագրվեց միայն 1993թ. սեպտեմբերին, իսկ Հայաստանի Հանրապետության մյուս հարևանը՝ Վրաստանը, միայն 1994թ. մարտին վավերացրեց հանրապետության անդամակցությունը ԱՊՀ-ին:[202]

գ. Պետականության կայացման գործընթացի սկիզբը

Անցումային դժվարին փուլում գտնվող Հայաստանի Հանրապետությունն իր անկախության հաստատման համար պետական շինարարությունն իրականացրեց ըստ էության պատերազմական պայմաններում: Մինչդեռ պետական կառավարման խորհրդային համակարգից անցումը նրանից էապես տարբերվող միանգամայն նոր համակարգի՝ զգալի նյութական և ֆինանսական միջոցներ էր պահանջում: Իշխանության նոր մարմինների ձևավորման գործընթացը սկսվել էր 1990 թ. մայիս-հունիսին կայացած Գերագույն խորհրդի ընտրություններից հետո, երբ խորհուրդներից անցում կատարվեց դեպի խորհրդարանական հանրապետություն: Ընդ որում, եթե Հայաստանի Հանրապետության օրենսդիր իշխանությունը կենտրոնացած էր խորհրդարանի ձեռքում, ապա գործադիր իշխանությունը բաժանված էր վարչապետի, նրա կաբինետի և Գերագույն խորհրդի նախագահության միջև: Փաստորեն, հանրապետությունում առկա էր պետական կառավարման համակարգի նախկին և նոր կառույցների զուգորդում՝ կառավարման մարմինների անարդյունավետ կառուցվածքներով և հնից ժառանգած ավանդույթներով: Իշխանության թևերի տարբեր մարմիններին բնորոշ էին միմյանց գործառույթների կրկնությունը, անհրաժեշտ տեղեկատվության փոխանակման բացակայությունը և այլն:

Հայաստանի Հանրապետության առաջին գումարման Գերա-

[202] «Հայաստանի Հանրապետություն», 2.03. 1994:

գույն խորհուրդը անկախ պետականության գործընթացի ու հանրապետության ինքնիշխանության ամրապնդման ուղղությամբ առաջին քայլերն իրականացրեց ՀՀ պետականության խորհրդանիշների մասին օրենքների ընդունումով:

ՀՀ Գերագույն խորհուրդը 1990թ. օգոստոսի 24-ին ընդունեց ՀՀ պետական դրոշի մասին օրենքը, որով ի լուր բոլորի հայտարարվեց, որ այսուհետ «Հայաստանի Հանրապետության դրոշը եռագույնն է»[203]: Նույն օրը Գերագույն խորհրդի որոշմամբ հայտարարվեց նորանկախ Հայաստանի պետական զինանշանի և հիմնի ստեղծման մրցույթ, որի կազմակերպումն ու ղեկավարումը հանձնարարվեց ՀՀ Մինիստրների խորհրդին և խորհրդարանի համապատասխան մշտական հանձնաժողովներին:[204]

Այդ պատմական որոշումներով սկիզբ դրվեց Հայաստանի անկախության հռչակագրով սահմանված անկախացման գործընթացին:

1990թ. օգոստոսի 25-ին Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի շենքի (այժմ ՀՀ կառավարության շենք) վրա հանդիսավոր կերպով բարձրացվեց հայոց եռագույնը: Այս արարողությանը ներկա էին հազարավոր մարդիկ: ՀՀ ԳԽ նորընտիր նախագահի ելույթից հետո դրոշակաձողից իջեցվեց հայ ժողովրդի անցած 70-ամյա ուղու ժամանակահատվածը խորհրդանշող Խորհրդային Հայաստանի դրոշը և Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի կողմից կատարվող «Մեր հայրենիք»-ի հանդիսավոր հնչյունների ներքո բարձրացվեց հայոց անկախ պետության խորհրդանիշը հայոց եռագույնը: Նույն օրը կառավարական տան (այժմ ՀՀ նախագահի նստավայր) վրա ևս ծածանվեց ինքնիշխան Հայաստանի խորհրդանիշը[205]: Սակայն ՀՀ մյուս խորհրդանիշների՝ հիմնի ու զինանշանի ընդունման գործընթացը երկարաձգվեց:

---

[203] Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր,[1] 16 (972), 31.08.1990, էջ 6:
[204] Նույն տեղում, էջ 7:
[205] «Խորհրդային Հայաստան», 26.08.1990:

ՀՀ կառավարության 1990թ. սեպտեմբերի 28-ի որոշմամբ հայտարարվեց ՀՀ զինանշանի և հիմնի ստեղծման մրցույթ, որի համաձայն, ստեղծվեց բարձրաստիճան պաշտոնյաներից, գիտության, արվեստի, գրականության բնագավառի հեղինակավոր ներկայացուցիչներից կազմված 15 հոգանոց կազմկոմիտե՝ հանրապետության Մինիստրների խորհրդի նախագահ Վ. Մանուկյանի գլխավորությամբ:[206] ՀՀ կառավարության 1990թ. հոկտեմբերի 10-ի որոշմամբ էլ ստեղծվեցին Հայաստանի պետական զինանշանի մրցութային հանձնաժողով ՀՀԳԱԱ թղթակից անդամ Հր. Ռ. Սիմոնյանի նախագահությամբ և պետական օրհներգի մրցութային հանձնաժողով՝ Հայաստանի կոմպոզիտորների միության վարչության նախագահ, երգահան Է.Մ. Միրզոյանի ղեկավարությամբ:[207]

Խորհրդարանի 1991թ. հուլիսի 1-ի նիստում քննարկման դրվեցին օրհներգի երկու տարբերակներ՝ հանրահայտ «Մեր հայրենիքը» և 1944 թվականին կոմպոզիտորներ Ա. Բաբաջանյանի ու Ա. Հարությունյանի կողմից գրված օրհներգը: ՀՀԳԽ նիստերի դահլիճում հնչեցին այդ երկու ստեղծագործությունների ձայնագրությունները: Քվեարկությանը մասնակցած 158 պատգամավորներից 146-ը նախապատվությունը տվեցին «Մեր հայրենիքին»: Որոշվեց ՀՀ օրհներգի հիմք ընդունել «Մեր հայրենիք» ստեղծագործությունը՝ երգի խոսքերը հետագայում հանձնաժողովում վերջնականապես խմբագրելուց հետո:[208] Նույն օրը քննարկման դրվեց նաև զինանշանի ընդունման հարցը: ՀՀ վարչապետի տեղակալ Կ. Սարդարյանը կազմկոմիտեի անունից քննարկման ներկայացրեց Մ. Սարյանի ստեղծած ՀԽՍՀ պետական զինանշանի նորոգված տարբերակները և 1918-1920թթ. ՀՀ պետական զինանշանը: Զինանշանի հարցը հանվեց օրակարգից այն բանից հետո, երբ զինանշանի ստեղծման մրցութային հանձնաժողովի նախագահ Հր. Ռ. Սիմոնյանը տեղեկացրեց, որ իր ղեկավարած օղակում հավա-

---

[206] ՀԱԱ, ֆ. 113, ց. 163, գ. 418, թ.1-3:
[207] Նույն տեղում, գ. 417, թ. 1-5:
[208] Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր,[1] 13 (993), 15.07. 1991, էջ 7:

նության չի արժանացել ներկայացված 150 տարբերակներից և ոչ մեկը:[209] Այդ հարցը իր վերջնական լուծումը ստացավ միայն հաջորդ տարում՝ ՀՀ ԳԽ 1992թ. մարտի 25-ին կայացրած հերթական նիստի որոշմամբ: Հայաստանի պետական զինանշան ընդունվեց 1920 թվականի հուլիսին հաստատված Հայաստանի առաջին Հանրապետության հերալդիկան[210]:

Անկախության հռչակումից կարճ ժամանակ անց ՀՀ-ն ստացավ համընդհանուր միջազգային ճանաչում: Սկսվեց հայոց անկախ հանրապետության պետական շինարարությունը: «Անկախ պետության հիմնադրույթների մասին» ՀՀ սահմանադրական նոր օրենքով սահմանվում էր իշխանության պետական կարգը, ապահովվում էր օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատումը:

Ելնելով պետական կառավարման նոր՝ արդյունավետ համակարգի ձևավորման անհրաժեշտությունից և առաջնորդվելով օրենսդիր, գործադիր ու դատական իշխանությունների տարանջատման վերաբերյալ Անկախության հռչակագրի դրույթներով՝ ՀՀ Գերագույն խորհուրդը 1991 թ. հունիսի 25-ին հիմնեց հանրապետության նախագահի պաշտոնը, որով հաստատեց նախագահական կառավարման համակարգ վերջինիս զիջելով իր լիազորությունների մի մասը[211]: Նույն թվականի օգոստոսի մեկին ընդունվեց «Հայաստանի Հանրապետության նախագահի մասին» օրենքը, համաձայն որի՝ ՀՀ նախագահը հանրապետության բարձրագույն պաշտոնատար անձն է և գլխավորում է հանրապետության գործադիր իշխանությունը[212]: Դրանով, ըստ էության, ուրվագծվեց անկախության ուղիով ընթացող Հայաստանի Հանրապետության պետական կարգը:

1991 թ. նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին «ՀՀ Գերագույն խորհրդի» և «Կառավարության կառուցվածքի մասին» օրենքնե-

---

[209] Նույն տեղում 13 (993), 15.07. 1991, էջ 75-76:
[210] Նույն տեղում, 8 (1012), 30.04.. 1992, էջ 3:
[211] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 165, գ. 415, թ. 42:
[212] Տե՛ս Հայաստանի գործող օրենքների ժողովածու, 1990-1995թթ., էջ 158, 162:

րով սահմանվել էին իշխանության պետական բարձրագույն մարմինների գործունեության շրջանակները[213]:

Հանրապետությունում պետական կառավարման համակարգը ներառում էր պետական գործադիր մարմինները, իսկ ՀՀ գործադիր իշխանությունն իրականացվում էր ՀՀ կառավարության կողմից, որը կազմված էր վարչապետից ու նախարարներից: Կառավարությունը 1991-1992 թթ. գործադիր իշխանությունն իրականացնում էր 22 նախարարությունների, 8 պետական վարչությունների և վարչապետի ու փոխվարչապետի միջոցով[214]: Հետագայում կառավարության կառուցվածքային կազմը բազմիցս փոփոխությունների ենթարկվեց: Այսպիսով, Հայաստանի անկախության մասին հռչակագրի ընդունումից մեկ տարի հետո հանրապետության իշխանությունների կողմից տնտեսական, քաղաքական, պետաիրավական և վարչական ոլորտներում հետևողականորեն իրականացված արմատական վերափոխումների շնորհիվ հայոց Անկախ պետականության կայացման գործընթացի սկիզբը դրվեց:

դ. 1995թ. ՀՀ Սահմանադրության ընդունումը

Հանրապետության պետական-քաղաքական կյանքի կարևոր իրադարձություններից էր պետության հիմնական օրենքի՝ ՀՀ Սահմանադրության ընդունումը: Քանի որ գործող սահմանադրությունը հակասում էր Անկախության մասին հռչակագրի սկզբունքներին, ուստի ՀՀ խորհրդարանը ստիպված էր այնտեղ անընդհատ կատարել սահմանադրական փոփոխություններ ու շտկումներ: Օրենսդրական փակուղուց դուրս գալու նպատակով խորհրդարանը 1990 թ. դեկտեմբերին ընդունեց «Հայաստանի անկախության մասին» առաջին սահմանադրական օրենքը, որի համաձայն մինչև նոր Սահմանադրության ընդունումը դադարեցվում էր սահմանադրական այն դրույթների գործողությունը, որոնք հակասում էին Հռչակագրի հիման վրա ընդունված օրենքներին:

---

[213] Տե՛ս նույն տեղում, էջ 189-196:
[214] Տե՛ս նույն տեղում, էջ 195:

Ակնհայտ էր, որ միայն փոփոխություններով հնարավոր չէր լիովին բարեփոխել նախորդ սահմանադրությունը: Ուստի անհրաժեշտ էր ունենալ նոր Սահմանադրություն: Այդ նպատակով 1990 թ. նոյեմբերի 15-ին ստեղծվեց սահմանադրական հանձնախումբ՝ 20 մարդուց բաղկացած, նոր Սահմանադրության նախագծի մշակման համար: 1993թ. հունիսի 24-ին սահմանադրական հանձնաժողովը հավանություն տվեց ՀՀ սահմանադրության նախագծի առաջին տարբերակին և այն ներկայացրեց համաժողովրդական քննարկման, որը տևեց ինը ամիս: Նախագծի վերաբերյալ մտցվեց ավելի քան 1000 դիտողություն և առաջարկ: Հատկանշական է, որ 6 կուսակցությունների ներկայացրած նախագծի վերաբերյալ ստացվեց 72 առաջարկություն և դիտողություն, որոնցից 17-ը ընդհանուր բնույթի էին:[215] 1994թ. ապրիլի 20-ին սահմանադրական հանձնաժողովը հավանություն տվեց նախագծի լրամշակված տարբերակին և այն ներկայացրեց ՀՀԳԽ-ին: Ներկայացվեցին նաև ՀՀ սահմանադրության այլընտրանքային նախագծեր: 1994թ. մայիսի 1-ին Գերագույն խորհուրդը որոշում ընդունեց սահմանադրական հանձնաժողովի կազմի ընդլայնման մասին: ՀՀԳԽ նախագահ Բ. Արարքցյանը ընտրվեց հանձնաժողովի համանախագահ: 1995թ. մայիսի 12-ին ՀՀԳԽ-ն ընդունեց հիրավի պատմական որոշում «ՀՀ Սահմանադրության նախագծի մասին», որով ՀՀ Գերագույն խորհուրդը որոշեց.

1. Հավանություն տալ ՀՀ ԳԽ սահմանադրական հանձնաժողովի ներկայացրած ՀՀ սահմանադրության նախագծին.
2. ՀՀ սահմանադրության ընդունման նպատակով 1995թ. հուլիսի 5-ին անցկացնել հանրաքվե, քվեարկության դնելով հետևյալ հարցը. «Համաձա՞յն եք արդյոք, ընդունել ՀՀ ԳԽ-ի հավանության արժանացած ՀՀ սահմանադրությունը»:

ՀՀ պատմության ողջ ընթացքում առաջին անգամ 1995թ. հուլիսի 5-ին անցկացվեց սահմանադրական հանրաքվե:[216] Հան-

[215] Խաչատրյան Հ., Հայաստանի Հանրապետության առաջին սահմանադրությունը, Երևան, 1997, էջ 23:

[216] Տե՛ս Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, հոդված 13-14, Երևան, 1995:

րաքվեին մասնակցեցին մեկ մլն. 217 հազար 531 քաղաքացի, այսինքն՝ քվեարկության իրավունք ունեցողների 55,66 %-ը: ՀՀ Հիմնական օրենքի (սահմանադրության) օգտին կողմ արտահայտվեց ընտրողների ճնշող մեծամասնությունը՝ 68,04 %-ը:[217]

Նոր Սահմանադրությունը, իր թերություններով հանդերձ, կարևոր երևույթ էր: ՀՀ սահմանադրությունը կազմված էր ներածությունից և 117 հոդվածներից, որոնք շարադրված էին ինը գլուխներում: Սահմանադրությունը դրեց ամբողջատիրական համակարգից դեպի ժողովրդավար պետություն անցնելու իրավական հիմքը: Սկսեցին ձևավորվել պետաիրավական նոր կառույցներ: ՀՀ Սահմանադրությունը նախատեսում էր նախագահական հանրապետության մոդելը՝ գործադիր, օրենսդիր և դատական իշխանությունների տարանջատումով: Բարձրագույն օրենսդիր մարմինը՝ Գերագույն խորհուրդը, վերանվանվեց Ազգային ժողով:

Սահմանադրությունը իրավական ձևակերպում տվեց քաղաքական նոր համակարգին, հռչակեց սեփականության բոլոր ձևերի հավասարություն, սահմանեց Հայաստանի քաղաքացիների իրավունքներն ու պարտականությունները: Նա հռչակում էր, որ Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետություն է:

ՀՀ Սահմանադրությամբ հաստատվեցին Հայաստանի երրորդ Հանրապետության խորհրդանիշները՝ դրոշը, զինանշանը և օրհներգը: Պետական դրոշ ճանաչվեց եռագույնը՝ կարմիր, կապույտ և նարնջագույն՝ հորիզոնական հավասար շերտով, որն առաջին հանրապետության դրոշն էր: Այնուհետև ընդունվեց ՀՀ զինանշանը, որի կենտրոնում վահանը պահող արծիվն ու առյուծն են. պատկերված է Արարատ լեռը՝ Նոյյան տապանով և պատմական Հայաստանի չորս թագավորությունների զինանշաններով, սուր, ճյուղ, հասկերի խուրձ, շղթա և ժապավեն: Որպես օրհներգ ընդունվեց առաջին հանրապետության պետական հիմնը՝ «Մեր Հայրենիքը»: 2010 թ. հունիսի 15-ին, երիտասարդության նախաձեռնությամբ, ՀՀ-ում առաջին անգամ նշվեց ՀՀ պետական խորհրդանիշների օրը:

---

[217] Տե՛ս Խաչատրյան Հ., նշված աշխ., էջ 22:

Հետագայում հանրապետության քաղաքական և սոցիալ-տնտեսական կյանքի զարգացումն առաջացրեց Սահմանադրության մեջ բարեփոխումներ կատարելու անհրաժեշտություն:

ե. Հայոց ազգային բանակի կազմավորումը

Առաջնահերթ նշանակություն ստացավ ազգային պետության անվտանգության և անկախության պահպանման հարցը, որի երաշխիքը կարող էր լինել մարտունակ բանակը: Իր կարճատև պատմության ընթացքում հաղթահարելով պատերազմի ու բանակաշինության ծանրագույն փորձությունները՝ հայոց բանակը կոփվեց և դարձավ մեր անկախ պետականության կարևորագույն երաշխիքը: Իր կայացման ճանապարհին այն անցավ երեք դժվարին ու կարևոր փուլեր:

Առաջին փուլը ընդգրկում է 1988 թվականի փետրվարից մինչև 1992թ. մայիսը, երբ Ղարաբաղյան շարժման ակտիվացման և հայ-ադրբեջանական հարաբերությունների ծայրաստիճան սրման պայմաններում Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի բնակչության ռազմական անվտանգության ապահովումը դարձավ հրատապ խնդիր:

Երկրորդ փուլը ներառում է 1992թ. հունիսից մինչև 1994թ. մայիսն ընկած ժամանակահատվածը, երբ անկախ Հայաստանի Հանրապետությունը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հետ միասին, գտնվելով չհայտարարված, բայց փաստացի պատերազմի մեջ, ձեռնամուխ եղավ Ազգային բանակի ստեղծմանը:

Երրորդ փուլն ընդգրկում է 1994թ. հունիսից մինչև օրս ընկած ժամանակահատվածը: Այս փուլն անվանվում է բանակաշինության, զորքերի մարտունակության բարձրացման, անհրաժեշտ ստորաբաժանումների ստեղծման, խաղաղ պայմաններում բանակի, որպես ռազմապաշտպանական համակարգի, վերջնական ձևավորման շրջան: Առաջին փուլի առանձնահատկությունն այն էր, որ հայ հասարակության մտածողության մեջ հասունացավ այն գիտակցությունը, որ միայն սեփական զինված ուժերը կարող են լինել ժողովրդի ու հասարակության անվանգության երաշխիքը: Այս ժամանակահատվածում «բանակ» էին համարվում իրարից

անջատ գործող շուրջ 80 կամավորական ջոկատները, որոնք ռազմականացված հիմնարկություններից, հակակարկտային հրետանու կրակակետերից, ռազմագիտության դասարաններից ու բոլոր հնարավոր այլ վայրերից զենք հայթայթելով, կամավոր, հայրենասիրական ու բարոյական մղումներից դրդված, մեկնում էին սահմանի ամենաթեժ կետերը՝ պաշտպանելու հանրապետության սահմանները: Այդպիսի ջոկատներից էին «Վրիժառուներ»-ը, «Սասունցի Դավիթ»-ը, «Սասնա ծռեր»-ը, «Մուշ»-ը և այլն[218]: Չնայած հայ կամավորական ջոկատների գործողությունները տարերային էին, չկոորդինացված և տեղի էին ունենում ՀՀ ու Արցախի պաշտպանությունը համակարգող միասնական կենտրոնկառույցի բացակայության պայմաններում, դրանք այն կենսունակ սաղմերն էին, որոնցից անկախության հռչակումից անմիջապես հետո պիտի ծնվեին հայոց փառապանծ բանակի ստորաբաժանումները[219]:

Հայկական բնակավայրերի պաշտպանությունը կազմակերպելու նպատակով ստեղծված կամավորական ջոկատները պետական կառույցում ընդգրկելու համար ՀԽՍՀ նախարարների խորհուրդը 1990 թ. օգոստոսի 21-ին ընդունեց «ՀԽՍՀ ներքին գործերի նախարարությանն առընթեր հատուկ ստորաբաժանումներ ստեղծելու մասին» որոշումը[220]: Իրավական այս հիմքի վրա էլ 1990 թվականի սեպտեմբերին կազմավորվեց ՀՀ ներքին գործերի նախարարությանը կից Հատուկ գունդը, որի կազմի մեջ ընդգրկվեցին Արարատի, Գորիսի, Վարդենիսի, Իջևանի, Մեղրու և այլ շրջանների 26 ինքնապաշտպանական վաշտերը[221]: Այդ վաշտերը կռվեցին ՀՀ և ԼՂՀ գրեթե բոլոր ռազմաճակատներում: Հայրենիքի սահմանների պաշտպանության համար մղված մարտերում զոհվեցին 159 մարտիկներ, այդ թվում նաև գումարտակի հրամանա-

---

[218] Տե՛ս ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի ելույթը ՀՀ զինված ուժերի կազմավորման 10-րդ տարելիցին նվիրված հանդիսավոր նիստում, «Հայկական բանակ», 1, 2 (31-32), Երևան, 2002, էջ 12:
[219] Նույն տեղում:
[220] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 165, գ. 298, թ. 1:
[221] Օհանյան Ս., Հայկական բանակի 20-ամյա տարեգրությունը, Երևան, 2012, էջ 40, ՀԱԱ, ֆ. 113, ց. 163, գ. 406, թ. 8,9:

տար, Հայաստանի ազգային հերոս Ջիվան Աբրահամյանը[222]: Կամավորական ջոկատների տարերայնորեն կազմավորման և բնակչության ձեռքին մեծաքանակ զենք հայտնվելու արդյունքում ի հայտ եկան նաև չվերահսկվող զինված խմբավորումներ, որոնց գործունեությունն ապակայունացնում էր Հայաստանի ներքին դրությունը: Այդպիսի մի զինված անհնազանդության ժամանակ դեպքերի հետագա սրումն արգելելու նպատակով բանակցությունների մեկնելիս, օգոստոսի 29-ին զոհվեցին Վիտյա Այվազյանն ու Գեղազնիկ Միքայելյանը՝ իրենց կյանքի գնով սթափեցնելով բոլորին ու կանխելով հնարավոր արյունահեղությունը: Նրանց հետմահու շնորհվեց Ազգային հերոսի կոչում[223]: 1991 թ. ապրիլի 26-ին ՀՀ նախարարների խորհուրդը հաստատեց «ՀՀ երկրապահ զինապարտի ժամանակավոր կանոնակարգը», որը տարածվում էր մինչև 50 տարեկան, կամավորական սկզբունքով հանրապետության պաշտպանության գործին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիների վրա: ՀՀ կառավարության որոշմամբ ստեղծվեց ՀՀ նախարարների խորհրդին առընթեր պաշտպանության պետական կոմիտեն, որի հիմքի վրա էլ ավելի ուշ ստեղծվեց պաշտպանության նախարարությունը[224]:

1992-1993 թթ. երկրապահ կամավորական ջոկատների և բանակ զորակոչված զինակոչիկների միավորումով ստեղծվեց շարժունակ և կարգապահ բանակ[225]: 1992 թվականի հունվարի 28-ին կառավարությունն ընդունեց «ՀՀ պաշտպանության նախարարության մասին» պատմական որոշումը, որով ազդարարեց ազգային բանակի ստեղծման սկիզբը: Նորաստեղծ նախարարության ենթակայությանը հանձնվեցին ընդամենը զինվորական չորս միավորներ՝ ՆԳՆ պարեկապահակային գունդը, հատուկ նշանակութ-

---

[222] Տե՛ս ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի ելույթը ՀՀ զինված ուժերի կազմավորման 10-րդ տարելիցին նվիրված հանդիսավոր նիստում, «Հայկական բանակ», 1, 2 (31-32),էջ 13-14:

[223] Տե՛ս Օհանյան Ս., նշված աշխ., էջ 41:

[224] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 165, գ. 317, թ. 1,2:

[225] Մանրամասն տե՛ս Մինասյան Է., Սոցիալ-տնտեսական վերափոխումները Հայաստանի Հանրապետությունում (1990-2003 թթ.), էջ 54-64:

յան գունդը և հանրապետական զինկոմիսարիատը[226]: Պաշտպանության նախարարության կենտրոնական ապարատը՝ գլխավոր շտաբը, վարչություններն ու առանձին բաժինները ստեղծվեցին ավելի ուշ: Դեռևս 1991 թ. դեկտեմբերի 5-ին Հայաստանի Հանրապետության պաշտպանության առաջին նախարար էր նշանակվել Վազգեն Սարգսյանը (1959-1999)[227], որն արդեն լինելով խորհրդարանի պաշտպանության հանձնաժողովի նախագահ՝ կամավորների մեծ մասի սիրված հրամանատարն էր: Ազգային բանակի ստեղծման գործում մեծ էր նրա ներդրումը: «Հայաստանի Հանրապետության Ազգային հերոս Վազգեն Սարգսյանը կանգնած է եղել հայոց պետականության և հատկապես հայոց բանակի. որպես պետության առանցքային բաղադրիչի ստեղծման ակունքներում: Դժվար է պատկերացնել, թե ինչպիսին կլիներ հայոց բանակը, եթե այն չունենար Վազգենի հաղթելու կամքը, վճռականությունը, ամենադժվարին պահերին ամենաբարդ տեղում հայտնվելու քաջությունը, անսահման սերը հայրենիքի ու զինվորի նկատմամբ»,- ընդգծել է ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը: Վ. Սարգսյանի անմիջական նախաձեռնությամբ հայոց բանակաշինության գործում զգալի աշխատանք կատարվեց: 1992 թ. մայիսին պաշտպանության նախարարությունը «Զինապարտության մասին» օրենքով հիմք դրեց բանակը ժամկետային զինծառայողներով համալրելու կայուն ավանդույթին: Նոր կազմավորված զորամասերի անձնակազմը 1992 թ. մայիսի 28-ին Հանրապետության հրապարակում հանդիսավոր պայմաններում տվեց առաջին զինվորական երդումը:

Անկախ Հայաստանի զորամիավորումներն ու զորատեսակները, ինչպես նաև սպայական կազմը ձևավորվեցին գերազանցապես խորհրդային բանակի կազմակերպական հիմքի վրա: Նորաստեղծ հայկական բանակի սպառազինությունը և ռազմական տեխնիկան ժառանգություն էր մնացել նույն խորհրդային բանակից: Աստիճանաբար ածեց բանակի թվաքանակը: Հաշվի առնելով

[226] ՀԱԱ, ֆ. 113, ց. 163, գ. 406, թ. 6-9:
[227] Տե՛ս նույն տեղում, ֆ. 113, ց. 165, գ. 298, թ. 1:

Հայաստանի տարածքում ձևավորված ռազմաարդյունաբերական համալիրի գիտատեխնիկական և տեխնոլոգիական բարձր մակարդակը՝ աշխատանքներ ծավալվեցին դրա պահպանման ու զարգացման ուղղությամբ: Առանձնահատուկ ուշադրություն էր դարձվում բանակի մարտական պատրաստականության կատարելագործմանը: Հայաստան վերադարձան հարյուրավոր հայազգի սպաներ, որոնք մինչ այդ ծառայում էին խորհրդային բանակի տարբեր զորամիավորումներում: Նրանք լծվեցին բանակաշինության, հայրենիքի անվտանգության ապահովման գործին: Նրանց թվում էին գեներալներ Գ. Դալիբալթայանը, Մ. Հարությունյանը, Ն. Տեր-Գրիգորյանցը, Ք. Իվանյանը, Յու. Խաչատուրովը, Ա. Տեր-Թադևոսյանը (Կոմանդոս) և շատ ուրիշներ[228]: Հետագայում կազմակերպվեց նաև սպայական կադրերի պատրաստման բարձրագույն դպրոցը, ամրապնդվեց նյութատեխնիկական բազան: Հայոց ազգային բանակի ստեղծման գործում մեծ եղավ պաշտպանության նախարարներ Վ. Սարգսյանի, Վ. Մանուկյանի և Ս. Սարգսյանի դերը: Բանակը աստիճանաբար զինվեց ժամանակակից ռազմական տեխնիկայով և ամուր պատվար դարձավ անկախության պաշտպանության գործում: Հայոց բանակը կազմավորվեց մեր անկախ պետականության վերականգնման գործընթացում և հանդիսացավ նրա ամենամեծ ձեռքբերումը: Լավ կազմակերպված հայոց բանակում ծառայելը դարձավ յուրաքանչյուր հայ երիտասարդի պատվի գործը:

1994թ. զինադադարից հետո աղրբեջանական իշխանությունների կողմից բազմիցս հնչեցրած ռազմատենչ հայտարարությունները, ԼՂՀ-ի և ՀՀ-ի դեմ ռազմական գործողություններ վերսկսելու սպառնալիքներն ու ագրեսիվ նկրտումները ՀՀ զինված ուժերից պահանջում են մշտապես ապահովել բարձր մարտական պատրաստվածություն, մարտունակություն և զգոնություն:

[228] Օհանյան Ս., 21-րդ դարի բանակը, Երևան, 2007, էջ 11:

ԳԼՈՒԽ ԵՐԲՈՐԴ

ԱՐՑԱԽԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՈՒՄԸ

ա. ԼՂՀ Անկախության հռչակումը և պետականության ձևավորումը

Սոցիալ-տնտեսական ծանր կացության մեջ հայտնված Հայաստանի Հանրապետությունն իր ունեցած բոլոր հնարավոր միջոցներով օգնում էր Արցախին Ադրբեջանի դեմ մղվող ազատագրական պայքարում:

Օգտվելով ԽՍՀՄ ղեկավարության բացարձակ աջակցությունից՝ ադրբեջանական իշխանությունները շարունակում էին զավթել հայկական գյուղերը և բնակիչներին արտաքսել իրենց բուն հայրենիքից:

1991 թ. ապրիլ-մայիս ամիսներին ադրբեջանական միլիցիայի հատուկ նշանակության ջոկատները (ռուս. ՕՄՕՆ) խորհրդային բանակի աջակցությամբ բացահայտ պատերազմ սկսեցին Շահումյանի շրջանի և Գետաշենի ենթաշրջանի հայ բնակչության դեմ:

Փաստորեն 1991 թ. մայիսին Ադրբեջանի կողմից հրահրվեց ղարաբաղա-ադրբեջանական պատերազմ:

1991 թ. հուլիսին ստեղծվեցին ինքնապաշտպանության ընդհատակյա կոմիտե և ինքնապաշտպանական ուժերի շտաբ: Մարզի բոլոր շրջաններում կազմակերպվեցին զինված ջոկատներ, որոնք հետագայում համախմբվեցին մեկ միասնական հրամանատարության ներքո:

Երբ ակնհայտ դարձավ ԽՍՀՄ փլուզման անխուսափելիությունը, 1991 թ. օգոստոսի 30-ին Քաքվում հրավիրված Ադրբեջանի Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջանն ընդունեց անկախության վերականգնման մասին հռչակագիր[229]: Դա նշանակում էր, որ Ադրբեջանը դուրս էր գալիս ԽՍՀՄ կազմից, նպատակ

[229] Տե՛ս НКР, История и современность, Степанакерт, 1998, с 9.

ունենալով իր հետ տանել նաև Լեռնային Ղարաբաղին: Հռչակագրում ասված էր, որ Ադրբեջանի Հանրապետությունը ընդգրկված է լինելու 1918-1920 թթ. մուսավաթական Ադրբեջանի Հանրապետության սահմաններում: Փաստորեն Բաքուն հրաժարվում էր Խորհրդային Ադրբեջանի իրավահաջորդը լինելուց: Դա նշանակում էր, որ նրա կազմում չէին կարող լինել ո՛չ Նախիջևանը, ո՛չ Լեռնային Ղարաբաղը: Ուստի անհրաժեշտ էր շտապել և ձեռքից բաց չթողնել հարմար պատմական պահը, հատկապես որ 1990 թ. ապրիլի 3-ից գործող «ԽՍՀՄ կազմից միութենական հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի լուծման կարգի մասին»[230] ԽՍՀՄ օրենքով Խորհրդային Միությունից դուրս եկող հանրապետության սահմանների մեջ գտնվող ինքնավար հանրապետություններին ու ինքնավար կազմավորումներին և տվյալ տարածքում բնակչության մեծամասնությունը կազմող համահավաք բնակվող ազգային խմբերին իրավունք էր տրվում ինքնուրույնաբար վճռելու իրենց պետական-իրավական կարգավիճակի խնդիրը: Ուստի այդ օրենքը Լեռնային Ղարաբաղի հայությանը թույլ էր տալիս օրինական ճանապարհով բաժանվել Ադրբեջանից և դառնալ սեփական ճակատագրի տերը, մանավանդ որ 1918-1920 թթ. Ղարաբաղը երբեք այդ պետության մաս չի կազմել:

Առաջնորդվելով ԽՍՀՄ սահմանադրությամբ և նշված օրենքով՝ 1991 թ. սեպտեմբերի 2-ին Ստեփանակերտում տեղի ունեցավ Լեռնային Ղարաբաղի մարզային և Շահումյանի շրջանային, բոլոր մակարդակների խորհուրդների պատգամավորների մասնակցությամբ համատեղ նստաշրջանը: Ընդունվեց «Հռչակագիր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման մասին» որոշումը: Նախկին ԼՂԻՄ և Շահումյանի շրջանի տարածքում հռչակվեց անկախ հայկական պետություն՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը (ԼՂՀ)[231]:

Նրա տարածքում մինչև ԼՂՀ սահմանադրության և օրենքների ընդունումը գործելու էին ԽՍՀՄ Սահմանադրությունն ու օրենս-

---

[230] Տե՛ս Золян С., Нагорный Карабах: Проблема и конфликт, Ереван, 2001, с 111.
[231] «Հայաստանի Հանրապետություն», 3 սեպտեմբերի, 1991:

դրությունը, ինչպես նաև նշյալ Հռչակագրի նպատակներին ու սկզբունքներին և հանրապետության առանձնահատկություններին չհակասող գործող մյուս օրենքները:

Փաստորեն Աղրբեջանի անկախության հռչակումից հետո ԼՂԻՄ-ը՝ որպես ինքնավար կազմավորում, և Շահումյանի շրջանը՝ իբրև ազգային փոքրամասնությամբ համահավաք բնակեցված տարածք, մինչև ԽՍՀՄ իրավաբանական գոյության ավարտն իրականացրին իրենց պետա-իրավական կարգավիճակների որոշմանը նպատակաուղղված Խորհրդային Միության գործող օրենսդրությամբ սահմանված իրավական քայլեր: Հետևաբար, Աղրբեջանի հավակնությունները Լեռնային Ղարաբաղի նկատմամբ ԽՍՀՄ օրենսդրության շրջանակներում զուրկ են իրավական հիմքերից:

Միջազգային իրավունքի տեսանկյունից ևս նման հիմքեր գոյություն չունեն, քանի որ Աղրբեջանը, անկախություն հռչակելով, իրեն հայտարարել է 1918-1920 թթ. գոյություն ունեցած Աղրբեջանական Հանրապետության իրավահաջորդը, որը չի ճանաչվել Ազգերի լիգայի կողմից այդ հանրապետության մեջ մտնող տարածքների հստակ սահմանների որոշման դժվարության պատճառով:

Աղրբեջանի հավակնությունները Լեռնային Ղարաբաղի նկատմամբ զուրկ են նաև պատմական հիմքերից, քանզի վերջինս անկախ Աղրբեջանի մաս երբևէ չի եղել:

Տասնամյակներ շարունակ ազգերի ինքնորոշման իրավունքից օգտվելու՝ արցախահայության բոլոր խաղաղ նախաձեռնություններին ի պատասխան՝ Աղրբեջանը կիրառել է բռնություններ, ոտնահարել հայ բնակչության իրավունքներն ու շահերը: Ուստի Աղրբեջանի հավակնությունները Լեռնային Ղարաբաղի նկատմամբ չունեն նաև բարոյական հիմքեր:

Այսպիսով Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշումը իրականացվում է մի տարածքի վրա, որի նկատմամբ Աղրբեջանն իրավական, պատմական և բարոյական հավակնություններ ունենալ չի կարող:

Սակայն Աղրբեջանը ոչ մի կերպ չի ցանկանում ընդունել այս իրողությունը: Ուստի պատահական չէր, որ Լեռնային Ղարաբաղի

Հանրապետության հռչակումից անմիջապես հետո Աղրբեջանի Գերագույն խորհրդի նախագահությունն ընդունեց որոշում, որով տեղի ունեցածը համարեց դավադրություն Աղրբեջանի ամբողջականության ու անկախության դեմ և հանրապետության ուժային գերատեսչություններին հանձնարարեց խափանել այդ հռչակագրի իրականացման ցանկացած փորձ՝ պատասխանատվության ենթարկելով դրա հեղինակներին: Միաժամանակ հանրապետական կազմկոմիտեին հանձնարարվեց լրացուցիչ միջոցառումներ ձեռնարկել ԼՂԻՄ-ի բնակչության զինաթափումն արագացնելու ուղղությամբ: Սակայն այս հանձնարարականները գործնականում անհնար էր իրականացնել, քանի որ մարզի մեծ մասը, գտնվելով հայկական ուժերի վերահսկողության ներքո, անհասանելի էր Աղրբեջանի պաշտոնական անձանց: Ուստի Աղրբեջանը սաստկացրեց ռազմական գործողությունները Լեռնային Ղարաբաղում:

1991 թ. դեկտեմբերի 10-ին տեղի ունեցավ անկախության հանրաքվե, որը հաստատեց Լեռնային Ղարաբաղի անկախությունը: Այդ օրը, չնայած պատերազմական դժվարին վիճակին, ԼՂՀ-ի բնակչության ձայնի իրավունք ունեցողների 80 %-ը մասնակցեց հանրաքվեին, իսկ քվեարկողների 99 %-ից ավելին ձայն տվեց անկախության օգտին[232]:

1991 թ. դեկտեմբերի 28-ին կայացան Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն խորհրդի (հետագայում՝ Ազգային ժողով) պատգամավորների ընտրություններ:1992 թ. հունվարի 6-ին կայացավ հանրապետության առաջին գումարման Գերագույն խորհրդի առաջին նստաշրջանը, որն ընդունեց ԼՂՀ անկախության հռչակագիրը:

Հունվարի 8-ին ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահ ընտրվեց 33-ամյա պատմաբան Արթուր Մկրտչյանը: Ստեղծվեց ԼՂՀ նախարարների խորհուրդ՝ Օլեգ Եսայանի վարչապետությամբ[233]:

1992 թ. հունիսի 2-ին ԼՂՀ Գերագույն խորհուրդը հաստատեց պետական դրոշը, իսկ նոյեմբերի 17-ին՝ երկրի զինանշանն ու օրհ-

[232] Արշակյան Ա., նշված աշխ., էջ 209:
[233] Աբրահամյան Հ., ճակատագրին ընդառաջ, Երևան, 2001, էջ 151:

ներգը: ԼՂՀ դրոշը եռագույն է՝ կարմիր, կապույտ, նարնջագույն՝ սպիտակ գույնի հնգատամ սանդղանման զարդանախշով: Աստիճանաբար կազմավորվեց դատական համակարգը՝ Հայաստանի Հանրապետության օրինակով: Մարտերի բովում կազմավորվեց ԼՂՀ բանակը, որն ազատագրական պայքարում իրեն պսակեց հաղթանակների փառքով: Առաջնային համարվեց ղարաբաղյան հակամարտության գոտում խաղաղ բանակցությունների գործընթացը: Վերջինս դարձավ Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) քննարկման առարկա: Բայց Ադրբեջանի իշխանությունները մերժում էին Լեռնային Ղարաբաղի խնդրի քաղաքական մեթոդներով կարգավորմանն ուղղված ամեն մի առաջարկ՝ առաջ քաշելով Արցախը կրկին իրենց ենթարկելու անիրական պահանջներ: Ավելին, Թուրքիայի հովանավորությամբ ու աջակցությամբ ադրբեջանցիները իրենց ռազմական բազաներից սկսեցին անընդհատ ռմբակոծել Արցախի բնակավայրերը: Խոջալուից, Շուշիից և Ադդամից ամեն օր ռմբակոծվում էր Ստեփանակերտը՝ պատճառելով ավերածություններ և բազում մարդկային զոհեր: Համապարփակ շրջափակումն ու շուրջօրյա հրետակոծություններն ավերում ու կաթվածահար էին անում Արցախի տնտեսությունը: Առանց հակառակորդի ռազմական հենակետերի ու կրակակետերի վերացման հնարավոր չէր ապահովել բնակչության անվտանգությունը:

բ. Արցախի ազատագրական մարտերը. Հայաստանի Հանրապետության ռազմաքաղաքական և դիվանագիտական աջակցությունը մարտնչող Արցախին

Կազմակերպական լուրջ աշխատանքներ տանելուց հետո ԼՂՀ-ի ինքնապաշտպանական ուժերը 1992 թ. հունվարից ձեռնամուխ եղան Ստեփանակերտի քաղաքամերձ աղրբեջանական կրակակետերի ոչնչացմանը: Փետրվարին ԼՂՀ Գերագույն խորհուրդը հատուկ որոշում ընդունեց ինքնապաշտպանության ուժերի մասին և հանձնարարեց զինված ջոկատները դիտել որպես ԼՂՀ ինքնապաշտպանական ուժեր և դրանք համախմբել մեկ միասնա-

կան հրամանատարության ներքո: Զինված ուժերի ընդհանուր հրամանատար նշանակվեց գնդապետ Արկադի Տեր-Թադևոսյանը (Կոմանդոս)[234]: Կազմակերպվեց նաև ԼՂՀ պաշտպանության խորհուրդ՝ Արթուր Մկրտչյանի նախագահությամբ: Այդ կարևոր ձեռնարկումը անմիջապես ունեցավ դրական մեծ արդյունքներ: Սկսեց գրվել ազգային բանակին մարտական փայլուն կենսագրությունը, որի առաջին էջը դարձավ Ստեփանակերտը շրջապատող կրակակետերի վերացման ռազմական գործողությունների հաջող իրականացումը:

1992 թ. հունվարի 11-ին հայկական մարտական ուժերը լուրջ հարված հասցրին Մալիբեյլուին և Ղուշչուլարին, որտեղի կրակակետերից ոչ միայն Ստեփանակերտն էին ռմբակոծում, այլև Ասկերանի շրջանի մի շարք գյուղեր: Ստեփանակերտը ռմբակոծվում էր հատկապես Կրկժան թաղամասից, որտեղի կրակակետը լռեցնելու համար կենտրոնացվեցին մի քանի կամավորական ջոկատներ: Հայ մարտիկները փոքրաթիվ ուժերով 1992 թ. հունվարի 19-20-ը լիովին ազատագրեցին Կրկժանը: Այդ հաղթանակը քաղաքական և հոգեբանական կարևոր նշանակություն ունեցավ:

գ. Քարինտակի հերոսամարտը Շուշիի ազատագրումը

1992 թ. հունվարին թեժ մարտեր տեղի ունեցան Քարինտակի մատույցներում: Շուշիի բարձունքից աղրբեջանցիները գրոհում էին, բայց ներքևում գտնվող հերոսական գյուղը մնում էր անառիկ: Կարծես կրկնվում էր 1905-1906 թթ. պատմությունը, երբ աղրբեջանցիները, չնայած մեծ ջանքեր գործադրելուն, չկարողացան գրավել Քարինտակը: Այդ գյուղի ինքնապաշտպանական ջոկատի հրամանատարն էր ԼՂՀ Գերագույն խորհրդի պատգամավոր Վ. Առուշանյանը: Աղրբեջանի ազգային բանակն այդ ուղղությամբ նոր լայնածավալ հարձակում սկսեց 1992 թ. հունվարի 25-ի լույս 26-ի գիշերը: Երբ մինչև ատամները զինված 250 աղրբեջանցիներ զրահամեքե-

[234] Օհանյան Ս., Հայկական բանակի 20-ամյա տարեգրությունը, էջ 58:

նաներով մոտեցան բնակավայրի մատույցներին, գյուղի պաշտպանները ստիպված նահանջեցին առաջավոր դիրքերից[235]: Քարինտակին օգնության հասավ Շոշի ինքնապաշտպանական ջոկատը՝ Ս. Հայրյանի հրամանատարությամբ: Ի վերջո, ադրբեջանցիները 12-ժամյա արյունահեղ մարտում պարտություն կրեցին և մարտադաշտում թողնելով 74 սպանված ու 70 վիրավոր՝ նահանջեցին: Քարինտակում հայերի հաղթանակը ահ ու սարսափ առաջ բերեց ադրբեջանցիների շրջանում: Քարինտակը հետագայում կարևոր հենակետ դարձավ Շուշիի կրակակետերը լռեցնելու գործում:

ԼՂՀ պաշտպանական ուժերը փետրվարի 11-ին և 12-ին անցնելով հարձակման՝ վնասազերծեցին Ստեփանակերտի մոտակա ադրբեջանական հենակետերը: Կրակակետերի ոչնչացմանը ակտիվորեն մասնակցեցին նաև Երևանի, Պռոշյան գյուղի և Աբովյանի ազատամարտիկները:

Թշնամին շարունակում էր ռմբակոծել Ստեփանակերտը հրթիռային կայանքներից: Միայն 1992 թ. փետրվարի 19-ին ԼՂՀ մայրաքաղաքի վրա արձակվեց 300 հրթիռ[236]:

Ստեփանակերտի համար ամենավտանգավորը Խոջալուն էր, որը փակում էր Ստեփանակերտ-Ասկերան մայրուղին: ԼՂՀ ինքնապաշտպանական ջոկատները 1992 թ. փետրվարի 15-ին դիրքավորվելով Խոջալուի արևմտյան մասի երկարությամբ՝ ադրբեջանական կողմից պահանջեցին թողնել և հեռանալ: Ի պատասխան ադրբեջանցիները սկսեցին ռմբակոծել Ստեփանակերտը:

Ադրբեջանում ներքին քաղաքական անկայունություն էր տիրում: Ժողովրդական ճակատը, ձգտելով տապալել Ա. Մութալիբովի իշխանությունը, գործում էր հաշվենկատ ու նպատակասլաց: Նա մտածում էր Խոջալուն հանձնել, դրա համար մեղադրել Ա. Մութալիբովին ու զրկել իշխանությունից:

Խոջալուի կրակակետերը լռեցնելու համար ԼՂՀ ռազմական ուժերը որոշեցին առաջին հերթին հսկողության տակ վերցնել օդա-

---

[235] Թադևոսյան Ռ., Դրվագներ հայոց ռազմական պատմությունից, XIX-XX դարեր, Երևան, 2012, էջ 232, 234, 236:

[236] Խաչատրյան Հ., Ղազարյան Գ., Մարգարյան Ս.,Հաղթանակներն ինչպես եղել են. «Ազդակ»ն 44», Երևան, 2008, էջ 23-24:

նավակայանը, որտեղ վաղուց իշխում էին հատուկ ջոկատայիններ-ը: 1992 թ. փետրվարի 25-ի լույս 26-ի գիշերը հայկական ջոկատները Աշոտ Ղուլյանի (Քեկոր) գլխավորությամբ հասան առաջավոր դիրքերին: Անակնկալի եկած հակառակորդը նահանջեց[237]:

Առանց զոհերի հայ ազատամարտիկներն առաջացան դեպի օդանավակայան: Նրանք գլխավոր ճանապարհի կողմից միջանցք էին թողել, որպեսզի Խոջալուի բնակիչները հեռանային Աղդամ: Փետրվարի 26-ին մի քանի ժամվա ընթացքում հայ ինքնապաշտպանական ուժերը, տալով 8 զոհ և 20 վիրավոր, լիովին ջախջախեցին Խոջալուում տեղակայված ադրբեջանական ուժերը և լռեցրին նրանց կրակակետերը: Ադրբեջանի Ազգային ճակատի կողմից իշխանությունը գրավելու նպատակով կազմակերպվեց և իրականացվեց Խոջալուի խաղաղ բնակչության կոտորածը: Իրենց իսկ ձեռքով իրականացրած այդ գործողության մեղքն ադրբեջանական իշխանությունները փորձեցին բարդել հայկական կողմի վրա: Խոջալուն ադրբեջանցիների առաջին խոշոր պարտությունն էր: Հաջորդը Շուշին էր: 1992 թ. ապրիլին Ստեփանակերտի մատույցներում տեղի ունեցավ արյունահեղ ճակատամարտ: Հակառակորդը խոշոր համալրում ստանալով, զրահատեխնիկայի առաջակցությամբ ապրիլի 29-ին գրոհեց Ստեփանակերտի հարավարևմտյան դիրքերը, բայց հակահարված ստանալով՝ նահանջեց:

Այդ օրերին՝ 1992 թ. ապրիլի 14-ին, չբացահայտված հանգամանքներում ողբերգական մահով կյանքից հեռացավ Արցախի Գերագույն խորհրդի նախագահ Արթուր Մկրտչյանը:

1992 թ. մայիսի սկզբին ԼՂՀ մայրաքաղաքում և այլ բնակավայրերում օրհասական դրություն էր: Մայրաքաղաքը սովի եզրին էր: Բնակիչներից յուրաքանչյուրը միջին հաշվով օրական ստանում էր 11 գ ալյուր և 2,5 գ շաքարավազ: Քաղաքում չկար հեղուկ վառելիք, իսկ մայիսի 1-ից լրիվ անջատվել էր էլեկտրաէներգիան: Ստեփանակերտի և հարակից բնակավայրերի անվտանգության ապահովման համար Շուշին պետք է ազատագրվեր[238]:

---

[237] Օհանյան Ս., նշված աշխ., էջ 51:
[238] Օհանյան Ս., նշված աշխ., էջ 54-55:

Մեծ դեր ուներ ոգու ուժը: Ամբողջ հայ ժողովուրդը պատրաստ էր ազատագրելու Շուշին: Շուշիի ազատագրման գործողությունների ծրագիրը մշակվել էր խիստ գաղտնի պայմաններում: Ծրագիրը կազմելու և իրագործելու պատասխանատվությունը դրված էր ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերի հրամանատար Արկադի Տեր-Թադևոսյանի (Կոմանդոս) վրա: Նրա գերխնդիրն էր Շուշիի ազատագրման միջոցով ՀՀ-ի հետ ճանապարհային ուղիղ կապ ապահովելը:

1992 թ. մայիսի 4-ին որոշվեց իրագործել Շուշիի գրավման «Հարսանիք լեռներում» գործողությունը: Ռազմական գործողությունները ղեկավարում էր գնդապետ Ա. Տեր-Թադևոսյանը, նրա կողքին էին գեներալ Գ. Դալիբալթայանը, շտաբի պետ Ֆ. Գզոլյանը և ուրիշներ[239]:

Թշնամին ուներ 2300 զինյալ, իսկ գրոհող հայկական ուժերի թիվը հասնում էր 1700-ի: Շուշիի ազատագրման գործողություններին մասնակցում էր մոտ 60 ջոկատ: Մանրամասն հաշվի էին առնվել յուրաքանչյուր ջոկատի հնարավորությունները: Գլխավոր ուղղությունների պատասխանատուներ էին նշանակվել քաջարի հրամանատարներ Սեյրան Օհանյանը, Վիտալի Չիթչյանը, Արկադի Կարապետյանը, Աշոտ Ղուլյանը, Դուշմանը (Վարդան), Սամվել Բաբայանը, Յուրա Հովհաննիսյանը, Վալերի Բալայանը, Նվեր Չախոյանը և ուրիշներ: Հարձակումը կազմակերպվեց չորս ուղղություններով[240]:

Մայիսի 8-ի գիշերը՝ 2-ն անց 30-ին, հրետանային կրակի ներքո բոլոր չորս ուղղություններով սկսվեց ընդհանուր գրոհը: Հակառակորդը դիրք էր գրավել Շոշի կամրջից ոչ հեռու: Աշոտ Ղուլյանը վիրավոր էր, բայց մնում էր առաջին գծում: Առավոտյան ժամը 6-ն անց 30-ին նա Ա. Տեր-Թադևոսյանին հաղորդեց, որ նստած է Շուշիի բերդի պատին և շուտով կմտնի քաղաք[241]:

Մայիսի 8-ի կեսօրին Շուշիի պաշտպանությունը ճեղքված էր

---

[239] Խաչատրյան Հ. և ուրիշներ, նշված աշխ., էջ 25-44:
[240] Հարությունյան Ս., Չիթչյան Վ., Հաղթական հրամանատարը, Երևան, 2012, էջ 33-34:
[241] Թադևոսյան Ռ., նշված աշխ., էջ 552-553:

հյուսիսից և արևելքից: Քաղաք մտած ջոկատները կռվում էին շուկայի շրջակայքում և կենտրոնական թաղամասերում: Ժամը 18-ին հայ ազատամարտիկներն ազատագրեցին քաղաքի կենտրոնը և աղրբեջանցիների հսկողության տակ թողեցին միայն հարավային հատվածը: Նրանք փողոցային մարտերով մոտենում էին Ս. Ամենափրկիչ (Ղազանչեցոց) եկեղեցուն, որը թշնամու կողմից վերածվել էր զինապահեստի: Մայիսի 9-ի կեսօրին մարտերը մղվում էին միայն հենակենտրոնի մոտ: Թշնամին դիմեց խուճապահար փախուստի: Շուշիում կռիվների ժամանակ հակառակորդը տվեց 300 զոհ, 600-700 վիրավոր, 13 գերի: Թշնամուց առգրավվեցին կամ ոչնչացվեցին մոտ 10 զրահատեխնիկա, հարյուրավոր հրթիռներ ու արկեր: Հայկական կողմն ունեցավ 70 զոհ և 120 վիրավոր[242]: Երկու օրում թշնամու դիմադրությունը կոտրվեց: Շուշիի ազատագրումով և հակառակորդի մյուս կրակակետերի լռեցումով Ստեփանակերտը և հարևան բնակավայրերը շունչ առան:

Շուշիի ազատագրումից հետո ռազմական գործողություններն ընդունեցին ԼՂՀ-ի և Ադրբեջանի միջև սահմանային պատերազմի բնույթ, իսկ ԼՂՀ անկախությունը դարձավ ամբողջական ու անշրջելի: Շուշիի ռազմական գործողությունները լուրջ մարտական մկրտություն էին ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերի համար և իրենց արժանի տեղը գտան հայ ազգային-ազատագրական պայքարի պատմության տարեգրություններում:

Արցախի հինավուրց մայրաքաղաքի ազատագրումն ամրապնդեց հայ ժողովրդի հավատը հաղթանակի հանդեպ, բարոյահոգեբանական հարված հասցրեց թշնամուն, որը հետագայում չկարողացավ ազատվել պարտվողի հոգեբանությունից: Խոսելով Շուշիի հաղթանակի կարևորության մասին՝ Ա. Տեր-Թադևոսյանը հպարտությամբ նշում է, որ դա հնարավոր եղավ մեր մարտիկների սխրանքների ու ոգու արիության շնորհիվ:

[242] Տե՛ս նույն տեղում, էջ 555:

դ. Պատերազմի հաղթական ավարտը

ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերի առջև խնդիր դրվեց մի քանի օրվա ընթացքում բացելու կենսական հույժ կարևորություն ունեցող Շուշի-Լաչին-Գորիս ճանապարհը, որը հնարավորություն կտար վերացնելու Արցախի շրջափակումը և ապահովելու հանրապետության բնակչության նորմալ կենսագործունեությունը: Հայ ազատամարտիկները մայիսի 15-ին ազատագրեցին Լիսագորսկը, իսկ մայիսի 17-ին՝ Բերդաձորի ենթաշրջանը[243]:

Հետապնդելով խուճապահար հակառակորդին ու զարգացնելով ռազմական գործողությունները՝ ղարաբաղյան ուժերն առաջ շարժվեցին և մայիսի 18-ին մտան Լաչին: Դրանով իսկ ճեղքվեց շրջափակման օղակը, և Արցախը ցամաքային ճանապարհով միացավ Հայաստանի Հանրապետությանը: Լաչինի հումանիտար միջանցքով սկսվեց Արցախին սննդամթերքի, վառելանյութի, դեղորայքի և այլ անհրաժեշտ ապրանքների առաքումը: Բացվեց «կյանքի ճանապարհը», և Արցախը հավերժ կապվեց մայր հայրենիքին: Այս հաղթանակները խթանեցին ԼՂՀ պաշտպանության բանակի կազմավորման գործընթացը:

1992 թ. ամռանը՝ հունիսի 12-ից աղրբեջանական բանակը օտարերկրյա վարձկանների աջակցությամբ և քալանչիական ջոկատների ուղեկցությամբ լայնածավալ հարձակում սկսեց ԼՂՀ հյուսիսային մասում և գրավեց Շահումյանի շրջանն ու Մարտակերտի շրջանի մեծ մասը, Ասկերանի շրջանի մի քանի գյուղեր: Մարտունու շրջանի Մարաղա գյուղում թուրք բարբարոսները գազանաբար սպանեցին 57 մարդ: Ռազմակալված տարածքներում սկսվեցին հայ բնակչության կողոպուտը, խոշտանգումները, սպանությունները, բնակավայրերի ավերումները[244]:

Այս շրջաններից մազապուրծ փախստականների ևոր հոսք ուղղվեց դեպի Հայաստանի Հանրապետություն: Աղրբեջանցիների գրաված տարածքներում սկսվեց պարտիզանական շարժում: 1992

[243] Բալայան Վ., Արցախի պատմություն, Երևան 2002, էջ 368:
[244] Բալայան Զ., Դժոխք և դրախտ, Երևան, 1995, էջ 134:

թ. օգոստոսի 13-ից ռազմական դրություն և զորահավաք հայտարարվեց ԼՂՀ ողջ տարածքում: Օգոստոսի 15-ին ստեղծվեց Պաշտպանության պետական կոմիտե՝ Ռոբերտ Քոչարյանի գլխավորությամբ, որին վերապահվեց ոչ միայն ռազմաքաղաքական, այլ նաև տնտեսական իշխանությունը[245]: Սկսեց կարգավորվել տնտեսական վիճակը: Ձեռնարկված միջոցառումները շուտով տվեցին դրական արդյունքներ: Վերամիավորելով ուժերը՝ ԼՂՀ ինքնապաշտպանական բանակը կարողացավ կանգնեցնել թշնամու բազմահազարանոց ուժերը Կիչան գյուղի ռազմական բնագծում և անցնել կտրուկ հակահարձակման: 1992 թ. սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին ազատագրվեցին Ասկերանի և Մարտունու մի շարք գյուղեր[246]: 1993 թ. ապրիլին հայկական զորքերն ազատագրեցին ռազմավարական նշանակություն ունեցող Քելբաջարի (Քարվաճառ) շրջանը, իսկ մայիս-հունիս ամիսներին՝ Մարտակերտի շրջանի՝ գրավված տարածքները: Աղրբեջանական Լաչին-Քելբաջար խմբավորման ջախջախման շնորհիվ ապահովվեց անվտանգ երթևեկություն «կյանքի ճանապարհով»[247]: Հունիսի 12-ին Աղդամի ուղղությամբ Մարզիլուի մարտերում զոհվեց Մարտունու պաշտպանական շրջանի հրամանատար, Հայաստանի ազգային հերոս, Արցախի հերոս, փոխգնդապետ Մոնթե (Ավո) Մելքոնյանը[248]:

1993 թ. առաջին կիսամյակի մարտական գործողությունների եզրափակիչ փուլը Մարտակերտ քաղաքի ազատագրումն էր: 1993 թ. հուլիսի 23-ին հայկական ուժերին հաջողվեց թշնամուն պարտության մատնել Աղդամի մոտ: Աղդամի խմբավորման ջախջախումից հետո թշնամին ուժ ու միջոցներ կուտակեց Ֆիզուլիի (Դիզակ) և Ջաբրաիլի շրջաններում: Հակահարձակման անցնելով՝ ԼՂՀ ԻՊՈՒ ստորաբաժանումները 5-րդ կամավորական բրիգադի (հրամանատար, այժմ գեներալ-լեյտենանտ Մանվել Գրիգորյան)

---

[245] Աբրահամյան Հ., Մարտնչող Արցախը 1917-200, գիրք Գ, 1985-2000, Ստեփանակերտ, 2007, էջ 412, 413:
[246] Օհանյան Ս., նշված աշխ., էջ 119-121:
[247] Խաչատրյան Հ. և ուրիշներ, նշված աշխ., էջ 109-110, 132, 133:
[248] Օհանյան Ս., նշված աշխ., էջ 135:

հետ միասին ջախջախեցին թշնամուն և ազատագրեցին Ֆիզուլիի (օգոստոսի 22), Ջաբրաիլի (օգոստոսի 23), Կուբաթլիի (օգոստոսի 31) և Ջանգելանի (Կովսական) (նոյեմբերի 1) շրջանները[249]: Իսկ նույն թվականի հոկտեմբերի 24-ին մի քանի ուղղություններով սկսված հարձակման արդյունքում ոչնչացվեցին Հորադիզի երկաթուղային հանգույցի կրակակետերը, և ազատագրվեց Հորադիզի շրջանը: Ադրբեջանական ստորաբաժանումները խուճապահար փախչում էին ռազմական գործողությունների շրջաններից՝ մեծ թվով զոհեր տալով և ռազմադաշտում թողնելով բազմաքանակ տեխնիկա: Ազատագրական այդ հաղթական երթի ժամանակ հերոսաբար զոհվեցին հայ քաջորդիներ Լեոնիդ Ազգալդյանը, Սամվել Շահմուրադյանը, Յուրա Հովհաննիսյանը, Աշոտ Ղուլյանը (Բեկոր), Վարդան Բախշյանը, Մոնթե Մելքոնյանը (Ավո), Շահեն Մեղրյանը և շատ ուրիշներ[250]: ԼՂՀ ռազմական հաջողությունները Ադրբեջանում հանգեցրին հերթական իշխանափոխության: Ադրբեջանի նախագահ դարձավ Հ. Ալիևը: Նա սաստկացրեց հակահայկական քարոզչությունը, արտասահմանից նոր վարձկաններ հավաքագրեց: 1993 թ. դեկտեմբերի կեսերին Ադրբեջանը լայնածավալ հարձակում սկսեց ռազմաճակատի ամբողջ երկայնքով՝ փորձելով վերադարձնել կորցրած տարածքները, բեկում մտցնել պատերազմում: Ադրբեջանական բանակը համալրվեց օտարերկրյա ժամանակակից տեխնիկայով: Նրանց բանակի շարքերում կռվում էին աֆղան, թուրք, ուկրաինացի, չեչեն և հյուսիսկովկասցի այլ վարձկաններ:

1993-ի ամռանը ԱՀ ներքին գործերի փոխնախարար Ռ. Ջավադովը բանակցել էր Աֆղանստանի վարչապետ Գ. Հեքմաթիարի հետ և վարձկաններ հավաքագրելու համար ստացել նրա համաձայնությունը: Հավաստի տվյալներով՝ Արցախում տեղաբաշխվել էին 1000-1500 վարձկաններ հիմնականում «Հեղբ ի էսլամի» (Գ. Հեքմաթիարի ենթակայության) խմբավորումից: Վարձկանները

[249] Տե՛ս նույն տեղում, էջ 126-128, 139, 143:
[250] Մարտիկյան Գ., Սա Հայաստան է՝ և վերջ. Լեոնիդ Ազգալդյան, Երևան, 2012, էջ 111, Օհանյան Ս., նշված աշխ., էջ 135:

գործել են Ֆիզուլիի, Ջաբրայիլի և Ալի Բայրամլիի շրջաններում[251]: Վարձկանների կազմում մեծ թիվ են կազմել «արաբ աֆղանները», որոնց մեջ է եղել հետագայում Չեչնիայում կռվող հայտնի ահաբեկիչ Խաթաբը: Վարձկանները ղեկավարել են խառը կազմ ունեցող զորամիավորումներ, ստեղծել նաև արգելափակիչ ջոկատներ: Նրանց մեջ է եղել նաև չեչենական գումարտակը (հրամանատար՝ Ծ. Բասաև), որը մտել է աղրբեջանական «Դ» խումբ կոչվող դիվերսիոն զորամիավորման մեջ: Ուկրաինայի վարձկանները հայտնի էին կրիվիչներ անունով: Վերսկսվեց Ռուսաստանից, Ուկրաինայից, Բելոռուսից և ԱՊՀ այլ պետություններից աղրբեջանցի (ոչ միայն) կադրային սպաների Աղրբեջան տեղափոխման գործընթացը: Մեծ թվով սպաներ ու ռազմական հրահանգիչներ հրավիրվեցին Թուրքիայից: Դեռևս 1993-ի նոյեմբերի 2-ին ձեռնարկվել էր վարձկանների հավաքագրում: Միայն 1993-ի հոկտեմբերից մինչև 1994-ի մայիսը անցկացվել էր չորս զինակոչ: Արտասահմանում գնվել էին ռազմական տեխնիկայի և սպառազինության մեծ խմբաքանակներ: Միայն 1993-ի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին ԱՆ-124 «Ռուսլան» տրանսպորտային ինքնաթիռով Ուկրաինայից 40 միավոր S-55 տանկ է տեղափոխվել Աղրբեջան[252]: Ընդլայնվել է ազգային զինվորական կադրերի պատրաստումը Թուրքիայի ռազմաուսումնական հաստատություններում: Այս ամենը հիմք է հանդիսացել Աղրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարության համար մշակելու ԼՂՀ-ի վրա լայնածավալ հարձակողական գործողությունների նոր պլան: Սկսած 1993-ի դեկտեմբերի 15-ից՝ աղրբեջանական զորքերը հարձակումներ գործեցին Ֆիզուլիի, Մարտունիի, Աղդամի, Մարտակերտի, Քելբաջարի ուղղություններով: Խախտելով Ռուսաստանի միջնորդությամբ մինչ այդ հաստատված տասնօրյա երկկողմ զինադադարը՝ հակառակորդը մեկօրյա հրետանային նախապատրաստությունից հետո, դեկտեմբերի 22-ին, տանկերի ՀՄՄ-ների աջակցությամբ, 30 կմ ճակատային

[251] Խաչատրյան Հ. և ուրիշներ, նշված աշխ., էջ148-149, Օհանյան Ս., նշված աշխ., էջ 145, Ղարաբաղյան ազատագրական պատերազմ 1988-1994, հանրագիտարան, էջ 464:
[252] Տե՛ս Աբրահամյան Հ., նշված աշխ., էջ 469, 470, 482

գծով վերսկսեց հարձակումը Ֆիզուլիի շրջանի ուղղությամբ[253]:

Ազատատենչ արցախցիները կարողացան կասեցնել հակառակորդի բոլոր հարձակումները և առանձին վայրերում հակահարձակման անցնելով՝ հսկողության տակ վերցնել նոր տարածքներ: Ավելի քան մեկամսյա համառ մարտերի ընթացքում հակառակորդը չկարողացավ որևէ հաջողության հասնել:

1994 թ. փետրվարի 18-ին Քելբաջարի (Քարավաճառ) շրջանի հյուսիսային մասի և Օմարի բարձրադիր լեռնանցքի ազատագրումով, երբ մարտական գործողություններն ընթանում էին 3000 մ և ավելի բարձրլեռնային շրջաններում՝ - 30^0 սառնամանիքի պայմաններում, ապահովվեց Մարտակերտի շրջանում ազատագրական մարտեր մղող պաշտպանական ուժերի թիկունքը: Աղդամի շրջանի և Միրբաշիրի (Թարթառի) ուղղությամբ ձեռնարկված լայնածավալ գործողությունները լիակատար խուճապի մատնեցին աղրբեջանցիներին: Ազատագրվեցին Մարտակերտի և Ասկերանի շրջանների բնակավայրերը: Շուրջ երեքամսյա թեժ մարտերի ընթացքում թշնամին կորցրեց 5 հազարից ավելի զինվոր և սպա, 72 միավոր տեխնիկա[254]:

Չկարողանալով ռազմական ուժի օգնությամբ իր օգտին լուծել ղարաբաղյան հիմնահարցը և հետագա խայտառակությունից խուսափելու համար՝ աղրբեջանական իշխանությունները հարկադրված էին Ռուսաստանի միջնորդությամբ և Մինսկի խմբի օգնությամբ 1994 թ. մայիսին հրադադար խնդրել: Մայիսի 5-ին Բիշքեկում Ռուսաստանի, Ղրղզստանի և ԱՊՀ միջնորդական խորհրդաժողովի միջնորդությամբ Աղրբեջանի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության խորհրդարանների ղեկավարները (Յ. Մամեդով, Կ. Բաբուրյան և Բ. Արարքցյան) ստորագրեցին արձանագրություն կրակի դադարեցման վերաբերյալ: Բիշքեկյան արձանագրությանը Աղրբեջանը միացել է ավելի ուշ, մայիսի 8-ին[255]: ՌԴ պաշտպանության նա-

---

[253] Տե՛ս նույն տեղում, էջ 497, 499:

[254] Բալայան Վ., նշված աշխ., էջ 403-404:

[255] Տե՛ս Ղարաբաղյան ազատագրական պատերազմ, 1988-1994, հանրագիտարան, էջ 28:

խարար, բանակի գեներալ Պավել Գրաչովի միջնորդական ջանքերով ՀՀ, ԱՀ պաշտպանության նախարարները (Ս. Սարգսյան, Մ. Մամեդով և ԼՂՀ պաշտպանության բանակի հրամանատար Ս. Բաբայան) մայիսի 11-ին համաձայնագիր ստորագրեցին կրակը դադարեցնելու վերաբերյալ[256]: 1994 թ. մայիսի 12-ին համաձայնագիրը ուժի մեջ մտավ: Հաջորդ օրը աղրբեջանական բանակն այն խախտեց: Վերջապես մայիսի 16-ին Պավել Գրաչովի նախաձեռնությամբ ու առաջարկությամբ ՀՀ պետնախարար Վ. Սարգսյանը, ՀՀ ԱՀ պաշտպանության նախարարները և ԼՂՀ ՊԲ հրամանատարը Մոսկվայում համաձայնության եկան մայիսի 17-ի 00 ժամից դադարեցնել կրակը, որին Ադրբեջանը մեկ ամիս անց տվեց իր համաձայնությունը[257]:

Դադարեցվեցին ռազմական գործողությունները, և սկսվեց ԼՂՀ հակամարտության կարգավորման բանակցային փուլը, որը 2012 թ. դրությամբ դեռ շարունակվում էր:

ԼՂՀ նախագահի հրամանագրով 1996 թ. սահմանվեց պետական բարձրագույն պարգև՝ Արցախի հերոսի կոչում: Հերոսներին հանձնվեց «Ոսկե արծիվ» շքանշանը:

Արցախի հերոսի կոչմանն են արժանացել՝ Սամվել Բաբայանը, Ջորի Բալայանը, Վիտալի Բալասանյանը, Քրիստափոր Իվանյանը, Սամվել Կարապետյանը, Ժորա Գասպարյանը, Մանվել Գրիգորյանը, Մովսես Հակոբյանը, Արշավիր Ղարամյանը, Աշոտ Ղուլյանը, Պետրոս Ղևոնդյանը (հետմահու), Մոնթե Մելքոնյանը (հետմահու), Յուրի Պողոսյանը (հետմահու), Սերժ Սարգսյանը, Վազգեն Սարգսյանը, Վահագն Վարդևանյանը, Արկադի Տեր-Թադևոսյանը (Կոմանդոս), Ռոբերտ Քոչարյանը, Սեյրան Օհանյանը:

ԼՂՀ Կառավարության որոշմամբ ինքնապաշտպանական ուժերի 197 մարտիկներ ու սպաներ հայրենիքի պաշտպանության գործում ցուցաբերած ակնառու խիզախության և արիության համար պարգևատրվեցին «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանով, իսկ 705 մարտիկներ «Մարտական խաչ» 2-րդ աստի-

[256] Տե՛ս նույն տեղում:
[257] Տե՛ս նույն տեղում:

ճանի շքանշանով: Շուրջ 4500 ազատամարտիկներ պարգևատրվել են «ՀՀ Արիության», ԼՂՀ «Արիության համար», «Շուշիի ազատագրման համար» և այլ մեդալներով[258]: 1996 թ. սեպտեմբերի 20-ին ՀՀ նախագահի հրամանագրով հետմահու Հայաստանի ազգային հերոսի կոչում շնորհվեց 7 ազատամարտիկների: Նրանց հարազատներին հանձնվեց «Հայրենիքի» շքանշան և ՀՀ նախագահի պատվոգիր: ՀՀ ազգային հերոսին կոչման արժանացան՝ Ջիվան Աբրահամյանը, Գեղազնիկ Միքայելյանը, Վիտյա Այվազյանը, Մովսես Գորգիսյանը, Թաթուլ Կրպեյանը, Մոնթե Մելքոնյանը և Յուրի Պողոսյանը:

Պատերազմում զոհվեցին շուրջ 6500 ազատամարտիկ[259]:

Հայ ժողովուրդը խորին երախտագիտությամբ և ակնածանքով է հիշում Արցախյան ազատամարտի բոլոր զոհվածներին ու մասնակիցներին:

ե. Սփյուռքահայության մասնակցությունը Արցախյան պատերազմին

Արցախյան ազատագրական պատերազմին մասնակցից նաև սփյուռքահայությունը: Նրանց օգնությունը դրսևորվեց ռազմական, տնտեսական ու բարոյական բնագավառներում: Սփյուռքի մեր հայրենակիցների ավանդը մեծ էր նաև ազատամարտիկների մարտավարական ու բարոյահոգեբանական մակարդակը բարձրացնելու առումով:

Սփյուռքահայերից ոմանք ոչ միայն մասնակցեցին ռազմական գործողություններին, այլև ծանրակշիռ ներդրում ունեցան զինվորական կադրերի պատրաստման, մարտական ջոկատների և պաշտպանական շրջանների ձևավորման գործում: Սփյուռքահայ քաջերի մի մասը՝ Վիգեն Չաքարյանը, Մհեր Ջուլհաճյանը, Մոնթե Մելքոնյանը, Կարո Քահքեջյանը և այլք, զոհվեցին:

Ջոկատի քաջարի հրամանատար Կարապետ Քահքեջյանը

---

[258] Տե՛ս նույն տեղում, էջ 701:
[259] Տե՛ս նույն տեղում:

ծնվել է Հալեպում 1962 թ.-ին: Ավարտել է Ֆրանկֆուրտի ճարտարագիտական համալսարանը, մասնակցել Բեյրութի հայկական թաղամասի ինքնապաշտպանությանը: 1991-1993 թվականներին եղել է ՀՀ Արարատի (Երասխ), Տավուշի և ԼՂՀ Ասկերանի, Մարտակերտի ու Քելբաջարի պաշտպանական մարտերի գործուն մասնակիցը: 1992 թ. մայիսին կազմավորվել է խաչակիրների ջոկատը, որի հրամանատարն էր Կարո Քահքեջյանը: Խաչակիրների ջոկատը հաղթական մարտեր է մղել Դրմբոնում, Քելբաջարում, Ասկերանի և Մարտակերտի շրջաններում:

Ջոհվել է 1993 թ. հունիսի 26-ին Մարտակերտի շրջանի «Պուշկենյալ» բարձունքի վրա[260]:

Հայ ազատամարտի նվիրյալ, ՀՀ Ազգային հերոս Մոնթե Մելքոնյանը (Ավոն) ծնվել է 1957 թ. Վայսիլիայում՝ Ֆրեզնոյի մոտ (Կալիֆոռնիա, ԱՄՆ): Նա ավարտել է Բերկլիի (Կալիֆոռնիա) համալսարանի հին ասիական ժողովուրդների պատմության և հնագիտության բաժինը (1978 թ): Նույն թվականին ընդունվել է Օքսֆորդի համալսարան, սակայն չէր ավարտել, մեկնել է Լիբանան, 3 տարի մասնակցել քաղաքացիական պատերազմին, Բեյրութի հայկական թաղամասի պաշտպանությանը[261]:

1990 թ. հոկտեմբերից զինվորագրվել է Արցախի պաշտպանությանը: 1991 թ. սկզբին հիմնել է «Հայրենասիրական» ջոկատը: Մոնթեն մասնակցել է ՀՀ Իջևանի, Ճամբարակի, ԼՂՀ Շահումյանի, Մարտակերտի, Մարտունու, Քարվաճառի շրջանների ինքնապաշտպանությանը և ազատագրական մարտերին: 1992 թ. սեպտեմբերին, 1993 թ. ղեկավարել է Մարտունու ուղղությամբ մարտնչող հայկական զորամասերը: 1993 թ. հունիսի 12-ին զոհվել է Մարզիլու գյուղում (Աղդամի մոտ)[262]:

Սփյուռքահայ ազատամարտիկներից մուսալեռցի Լևոն Թաշճ-

---

[260] Սինասյան Է., Արցախյան ազատագրական շարժումը և «դեպի երկիր» կարգախոսը, ՀՅԴ հիմնադրման 115 և 120-ամյակներին նվիրված գիտաժողովների նյութեր, Երևան, 2011, էջ 159:

[261] «Դեպի երկիր»-ի գաղափարապաշտը, ՀՅԴ, Ջավարյան ուս. միության մատենաշար, բ. շրջան, թիվ 7, մարտ, 2001, էջ 8-11:

[262] Սինասյան Է., նշված աշխ., էջ 159:

յանը 1993 թվականի սեպտեմբերից մինչև 1994 թ. հունվար մասնակցել է Ֆիզուլիի, Ջանգելանի, Ջաբրաիլի, Մարտակերտի, Կուբաթլիի շրջանների ազատագրական մարտերին:

Շուշիի առանձնակի գումարտակը միավորում էր Արցախից ու Սփյուռքի տարբեր օջախներից, աշխարհի տարբեր մասերից եկած հայության քաջակորով զավակներին: Գումարտակը ճանաչվել է լավագույններից մեկը Արցախի բանակի հրամանատարության կողմից:

Գումարտակը ստեղծվել էր 1992 թ. սեպտեմբերի 1-ին՝ մինչ այդ կազմավորված ՀՅԴ կուսակցության կամավորական ջոկատների հիմքի վրա: Գումարտակը պարբերաբար համալրվել է կամավորներով (շուրջ 1600 ազատամարտիկ), որոնցից 11-ը ԱՄՆ-ից, 7-ը Կանադայից, 6-ը՝ Սիրիայից, 23-ը՝ Լիբանանից, 1-ը՝ Իտալիայից, 7-ը՝ Ֆրանսիայից, 9-ը՝ Իրանից, 6-ը՝ Վրաստանից, 3-ը՝ Ռուսաստանից, 45-ը՝ Ջավախքից և այլն: Գումարտակի ընդհանուր հրամանատարը եղել է Ժիրայր Սեֆիլյանը, որը ծնվել է 1967 թ. Բեյրութում: 1986 թ. ավարտել է Բեյրութի «Գևորգ Չաթալբաշյան» հայկական քոլեջը, մասնակցել է Լիբանանի քաղաքացիական պատերազմին (1983-1990 թ.), Բեյրութի հայկական թաղամասի ինքնապաշտպանությանը: 1991 թվականից կամավորական ջոկատի, 1992 թ.՝ վաշտի, նույն թվականի սեպտեմբերից Շուշիի առանձնակի գումարտակի հրամանատարն էր[263]:

Արցախյան հերոսամարտի տարիներին ցուցաբերած քաջության համար պարգևատրվել է ԼՂՀ «Մարտական Խաչ» 1-ին աստիճանի շքանշանով: 1991-1994 թթ. Շուշիի գումարտակը աչքի է ընկել ԼՂՀ Շահումյանի, Ստեփանակերտի (Կրկժան), Շուշիի, Մարտակերտի, Ասկերանի, Աղդամի, Մարտունու, Ջանգելանի, Ջաբրայիլի, Ֆիզուլու շրջանների ինքնապաշտպանական մարտերին: Գումարտակի մարտական գործողությունների ժամանակ հրամանատարներ են եղել ընդհանուր հրամանատար՝ Ժիրայր

---

[263] Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988-1994, հանրագիտարան, էջ 591:

Սեֆիլյանից բացի, Պետրոս Ղևոնդյանը, Հ. Հովհաննիսյանը, Ա. Մխիթարյանը, Ս. Կիրակոսյանը, Ա. Եղյանը, իսկ շտաբի պետեր՝ Ռոմիկ Մարգարյանն ու Կ. Ավետյանը: Զորամիավորումից զոհվել են 56 ազատամարտիկներ, որոնցից 2-ը՝ սփյուռքահայ, վիրավորվել են 157-ը՝ որից 6-ը՝ սփյուռքահայ, անհայտ կորել է 3 ազատամարտիկ: Ցուցաբերած քաջության համար ԼՂՀ «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանով պարգևատրվել են բացի Ժ. Սեֆիլյանից և Հ. Հովսեփյանից, Ա. Ղարիբյանը՝ հետմահու (նաև ՀՀ 1-ին աստիճան), Վ. Ստեփանյանը, Պ. Ղևոնդյանը (նաև «Ոսկե արծիվ»), արժանացել է Արցախի հերոսի կոչման: Մարտական խաչ 2-րդ աստիճանի մեդալով պարգևատրվել են Ռ. Մարգարյանը, Մ. Ավուշյանը, Մ. Կալոյանը, Բ.Ղուկասյանը, Պ. Մանուկյանը և ուրիշներ, ԼՂՀ «Արիության համար» մեդալով՝ 168-ը՝ 12-ը՝ հետմահու: «Մարտական ծառայության համար»՝ 40 (13-ը՝ հետմահու), «Շուշիի ազատագրման համար» մեդալով՝ 168 (12-ը՝ հետմահու), «Մայրական երախտագիտություն Արցախի քաջորդիներին» հուշամեդալով՝ 46 (31-ը՝ հետմահու) ազատամարտիկ[264]:

Այսպիսով, հայ ժողովուրդն իր միասնության և աննկուն ոգու շնորհիվ իրեն պարտադրված պատերազմից հաղթականորեն դուրս եկավ և ստեղծեց ազգային երկրորդ պետությունը Հայաստանի ազատագրված հատվածում:

գ. Բանակցային գործընթացը Լեռնային Ղարաբաղի հարցի շուրջ

Զինադադարի կնքումից հետո շարունակվեցին բանակցային գործընթացները, որոնք դարձան Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) քննարկման առարկա: Սակայն Աղրբեջանի իշխանությունները մերժում էին Լեռնային Ղարաբաղի խնդրի քաղաքական կարգավորմանն ուղղված ամեն մի առաջարկ՝ առաջ քաշելով Արցախը կրկին իրենց ենթարկելու անիրական պահանջներ:

[264] Տե՛ս նույն տեղում, էջ 701:

ԵԱՀԿ Մինսկի խմբի հովանու ներքո ընթացող բանակցություններում Հայաստանը որդեգրել էր հետևյալ սկզբունքը. «Հայաստանի Հանրապետությունը կվավերացնի յուրաքանչյուր փաստաթուղթ, որն ընդունելի կլինի Ղարաբաղի ժողովրդի համար և ստորագրված ԼՂՀ ղեկավարության կողմից»[265]: Իսկ Լեռնային Ղարաբաղի ղեկավարությունը բացառում էր որևէ ուղղակի ենթակայություն Ադրբեջանին և կախվածություն նրանից: ԼՂՀ-ն հանդես էր գալիս միմյանց նախապայմաններ չքելադրելու դիրքերից՝ առաջարկելով բանակցություններ սկսել կարգավիճակի սկզբունքային հիմքերի ճշտումից հետո: Միայն Ադրբեջան-Ղարաբաղ ուղղակի բանակցությունների միջոցով կարելի էր սահմանել հակամարտող կողմերի փոխզիջումների շրջանակը և քննել խնդրի քաղաքական կարգավորման երկուստեք ընդունելի տարբերակ: Հակառակ սրան՝ Ադրբեջանը համառորեն չէր ճանաչում ԼՂՀ-ն որպես հակամարտող կողմ:

ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներին ներկայացվեցին հայկական կողմի հայեցակարգային նոր սկզբունքները, որոնցով նախապատվությունը տրվում էր հակամարտության կարգավորման փաթեթային տարբերակին՝ վերջինիս հիմքում դնելով Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման իրավունքը, նրա ոչ անկլավային վիճակը, անվտանգության միջազգային երաշխիքները: Նույն թվականի նոյեմբերին ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները կողմերի քննարկմանը ներկայացրեցին «Լեռնային Ղարաբաղի զինված հակամարտության համապարփակ կարգավորման սկզբունքները» փաստաթուղթը, որի հիմքում ընկած էր ընդհանուր պետության գաղափարը[266]:

Փաստորեն 1995-1996 թթ. որոշակի ձեռքբերումներ չեղան: 1996 թ. վերջին Լիսաբոնի ԵԱՀԿ-ի գագաթնաժողովում փորձ արվեց Արցախյան խնդրի լուծումը կապել Ադրբեջանի տարածքային ամբողջականության հետ, որը չընդունվեց և բանակցությունները

---

[265] Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն, պատմությունը, գործունեությունը և հեռանկարները, Երևան 2006, էջ 58, 62, 63:

[266] Տե՛ս նույն տեղում:

մտան փակուղի: 1997թ. մի քանի անգամ գումարված ԵԱՀԿ-ի համաժողովներում քննարկումները արդյունք չտվեցին[267]:

1998 թ. սկսվեց ղարաբաղյան բանակցությունների նոր փուլը: Այս փուլում ԵԱՀԿ Մինսկի խումբն ակտիվացրեց գործունեությունը՝ նոր առաջարկներ ներկայացնելով կողմերին: Փաստորեն միջնորդները եկան, այսպես կոչված, «ընդհանուր պետության» գաղափարին: Նոր՝ «ընդհանուր պետությունը», ըստ համանախագահների պետք է ստեղծվեր նախկին Ադրբեջանական ԽՍՀ սահմաններում, ինչը թույլ էր տալու, ըստ նրանց, համատեղել սահմանների անձեռնմխելիությունը և ազգերի ինքնորոշման սկզբունքը[268]:

Հայաստանն ու Ղարաբաղը սկզբունքորեն համաձայնվեցին «ընդհանուր պետության» գաղափարն ընդունել որպես բանակցությունների հիմք, իսկ Ադրբեջանը մերժեց այն: Բանակցությունների գործընթացը դարձյալ հայտնվեց փակուղում:

Ադրբեջանի ղեկավարությունը համառորեն հրաժարվում էր բանակցությունների վերսկսումից: Սակայն ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների ջանքերով, այնուամենայնիվ, 1999 թ. սկսվեցին Հայաստանի և Ադրբեջանի նախագահների ուղղակի շփումները: Դրանք որոշակի ընդհատումներով շարունակվում են մինչև այժմ, սակայն շոշափելի արդյունք չեն տալիս: Հայաստանի Հանրապետության և Արցախի ղեկավարները բոլոր միջոցներն օգտագործում են նորանոր ուղիներ փնտրելով տարածաշրջանում կայուն վիճակ ստեղծելու, հակամարտությունը կարգավորելու համար:

---

[267] Օսկանյան Վ., Անկախության ճանապարհով, փոքր երկրի մեծ մարտահրավերները, նախարարի օրագրից, Երևան, 2013, էջ 169, 170, 171, 173, 175, 176, 177, 178, 179, 183:

[268] Օսկանյան Վ., նշված աշխ., էջ 180, 183, 184, 187:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՈՒՄԸ

ՆԵՐՔԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ (1991-2012 թթ.)

ա. Սոցիալ-տնտեսական վիճակը 1990-ական թթ. սկզբին

Արցախահայությունը դժվարին իրավիճակում պետք է ձեռնամուխ լիներ հանրապետության տնտեսության վերականգնման ու զարգացման, սոցիալական և հասարակական-քաղաքական կյանքի բազմաթիվ խնդիրների լուծման գործին: Խորհրդային տարիներին Ադրբեջանի կողմից Ղարաբաղում տարվող կողմնակալ վերաբերմունքը արտահայտվում էր առաջին հերթին տնտեսության ոլորտում:

Ադրբեջանի կազմում Լեռնային Ղարաբաղի տնտեսությունը զրկված էր համաչափ զարգացման հնարավորությունից և լիովին կախված էր Բաքվի քմահաճույքից: Կապիտալ ներդրումները մարզում երկու անգամ պակաս էին Ադրբեջանական ԽՍՀ մնացած տարածքներում կատարվող համանման ներդրումներից:

Լեռնային Ղարաբաղի տնտեսության զարգացման արգելակումը Ադրբեջանի կազմում նրա գտնվելու տարիներին արտացոլվել է բնակչության սոցիալ-կենցաղային կացության մեջ և եղել է հայ բնակչության արտագաղթը խթանող հիմնական գործոններից մեկը: 1913-1973 թթ. Ադրբեջանում արդյունաբերությունը աճել էր 40, իսկ ԼՂԻՄ-ում՝ հազիվ 15 անգամ: 12 տարվա ընթացքում (1968-1979) պետական կապիտալ ներդրումները ԼՂԻՄ-ում մնացել էին նույն մակարդակին (տարեկան 24-ից 26 մլն ռուբլի), այն պարագայում, երբ Ադրբեջանում ընդհանուր առմամբ աճել էր երկու անգամ[269]: Թեև Սարսանգի ջրամբարը կառուցվել էր ԼՂԻՄ-ի և Ադրբեջանի սահմանագլխին, բայց ինքնավար մարզին բաժին էր ընկ-

[269] Սարումյան Ն., Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը 1960-1988 թթ., Երևան, 2008, էջ 21-25:

նում ջրամբարի միջոցով ոռոգվող 130 հազար հեկտար հողատարածությունների մոտ 1,5%-ը[270]: Պատահական չէ, որ ԼՂԻՄ-ում 1926-1976 թթ. բնակչության արտագաղթի հետևանքով հայկական բնակավայրերը 85-ով պակասել էին, իսկ աղրբեջանականը 17%-ով ավելացել[271]: Այդ նույն ժամանակահատվածում ԼՂԻՄ-ից միջին հաշվով արտագաղթում էր շուրջ 2 հազար հայ, որի հետևանքով հայերի թվաքանակը նշյալ ժամանակահատվածում 111.7 հազարից հասել էր միայն 123.1 հազարի (աճել էր ընդամենը 10.2%-ով), իսկ աղրբեջանցիները՝ 12.8 հազարից՝ 37.2 հազարի, ավելացել էր գրեթե 3 անգամ[272]: Արդյունքում, եթե 1923 թ. մարզի բնակչության ընդհանուր թվաքանակում հայերի մասնաբաժինը կազմում էր 94.4%, ապա 1979 թ. այն նվազեց՝ կազմելով 75.9%, դրան հակառակ՝ աճում էր աղրբեջանցիների մասնաբաժինը՝ 1923 թ. 3%-ից հասնելով 1988 թ. 24%-ի[273]: Այս ամենին քաջատեղյակ լինելով՝ Մոսկվան փաստորեն ոչինչ չարեց իրավիճակը շտկելու համար: Աղրբեջանը կտրուկ ուժեղացրել էր տնտեսական ճնշումը ինքնավար մարզի վրա:

Արդեն 1988 թ. Լեռնային Ղարաբաղը հայտնվել էր Աղրբեջանի թշնամական օղակում: Հափշտակվում էին Լեռնային Ղարաբաղ ուղղվող ժողովրդատնտեսական ապրանքներով բեռնված գնացքները: Շրջափակման նպատակով կատարված հանցագործ գործողություններով Աղրբեջանը տիրացավ Լեռնային Ղարաբաղի համար նախատեսված բեռներով տասնյակ հազարավոր վագոնների: Մարզի հայկական գյուղերից կատարված բռնագաղթի հետևանքով նա յուրացրեց մեծ քանակությամբ գյուղատնտեսական տեխնիկա, ցանքատարածություններ, ընտանի կենդանիներ:

ԼՂՀ անկախության հռչակումից հետո Աղրբեջանի սանձազերծած ռազմական գործողությունների հետևանքով ավերվել էին մի

---

[270] Մելիք-Շահնազարյան Լ., Աղրբեջանի ռազմական հանցագործությունները Լեռնային Ղարաբաղի հանրապետության խաղաղ բնակչության դեմ, Երևան, 1998, էջ 123:

[271] Տե՛ս Մելիք-Շահնազարյան Լ., նշված աշխ., էջ 123:

[272] Տե՛ս Մինասյան Է., ԼՂՀ սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական վիճակը անկախության տարիներին 1991-2008, «Լրատու» 1, (8), Ստեփանակերտ, 2010, էջ 3:

[273] Տե՛ս նույն տեղում:

քանի տասնյակ գյուղեր, գրեթե բոլոր արդյունաբերական ձեռնարկությունները, կրթամշակութային բազմաթիվ հիմնարկներ: Նորաստեղծ հանրապետությունը ենթարկվել էր տրանսպորտային շրջափակման, որը շարունակվում է առ այսօր: Տնտեսությունը գրեթե ամբողջությամբ կազմալուծվել էր, բնակչության զգալի մասը՝ արտագաղթել: Առավելապես գյուղատնտեսական բնույթ ունեցող Լեռնային Ղարաբաղի տնտեսության վրա հատկապես ծանր անդրադարձան անասունների՝ պետական մակարդակով կազմակերպված գողությունն ու հացահատիկային դաշտերի հրկիզումները: 1991 թ. մայիս-հունիս ամիսներին Հադրութի շրջանի բոնագաղթի ենթարկված 13 հայկական գյուղեր հարկադրաբար թշնամուն թողել էին ընդհանուր հաշվով 2716 հա աշնանացանի արտեր, իսկ շրջանի ամբողջ բնակչությունը զրկվել էր 4055 հա հացահատիկային կուլտուրաների ցանքատարածությունների բերքը հավաքելու հնարավորությունից: Պատերազմի ընթացքում Մարտունու շրջանում այրվել էին 3279, իսկ Շահումյանի շրջանում՝ 4091 հա հացահատիկային արտեր[274]:

Շրջափակումը, բոնագաղթերը, հողահանդակների անօրինական առգրավումները, հացահատիկային դաշտերի հրդեհումները, էլեկտրաէներգիայի անջատումները, ջրատար խողովակների պայթեցումներն ու թունավորումները, անասունների հափշտակությունները վիթխարի վնաս հացրին երկրամասի տնտեսությանը: 1991 թ. ջրահավաք կայանների պայթեցումներից և նույն թվականի դեկտեմբերից էլեկտրաէներգիայի լրիվ անջատումից հետո մայրաքաղաք Ստեփանակերտը զրկվեց նաև ջրամատակարարումից, որը սպառնալիք էր ստեղծել տարափոխիկ հիվանդությունների բռնկման համար: 1992 թ. մայիսից դադարեցվեց ԼՂՀ-ի բնական գազի մատակարարումը:

[274] Տե՛ս Մելիք-Շահնազարյան Լ., նշված աշխ., էջ 176:

բ. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսության վերականգնումն ու զարգացումը

Պատերազմի ընթացքում ԼՂՀ տնտեսությունը վերակառուցվել էր ռազմական պահանջներին համապատասխան:

Տնտեսական կյանքի վերականգնումն սկսվեց 1994 թ. հրադադարից հետո:

Զինադադարի կնքումը հնարավորություն տվեց զբաղվելու տնտեսության վերականգնման ու զարգացման հարցերով: Լաչին-Գորիս մայրուղով միանալով Հայաստանի հետ՝ Արցախը փաստորեն ճեղքեց շրջափակումը և զգալիորեն կարգավորեց անկախության գոյատևման գործընթացը:

Արցախյան պատերազմի տարիներին ավելի քան 80 տոկոսով ավերվել էր հանրապետության տնտեսությունը: Ներկայիս դրությամբ ԼՂՀ տարածքի ավելի քան 15 տոկոսը մնում է հակառակորդի տիրապետության տակ:

Աղրբեջանի ռմբակոծությունների և հրետակոծությունների հետևանքով ավերվել էին արդյունաբերական ձեռնարկությունների մեծամասնությունը, հազարավոր բնակարաններ, մեծ թվով ճանապարհներ և այլն: 1994 թ. մայիսին կնքված հրադադարից հետո հանրապետությունում շատ թե քիչ հզորությամբ գործում էին 26 ձեռնարկություն, որոնց համախառն արտադրանքի ծավալը 1996-ին կազմել է ընդամենը 1.4 մլրդ դրամ[275]: Մարտական գործողությունների տարիներին հակառակորդի կողմից Արցախ-Ղարաբաղին հասցվել էր 2.5 մլրդ ամերիկյան դոլարի վնաս, ըստ որում պայթեցվել և ոչնչացվել էր 167 եկեղեցի, 8 վանքային համալիր, 123 պատմական գերեզմանոց, 47 բնակավայր, ջարդվել և չինանյութի էին վերածվել գեղարվեստական բարձր արժեք ունեցող 2500 խաչքար և վիմագիր, ավելի քան 10 հազար տապանաքար: Հանրապետության 18 հազար հեկտար խաղողի այգիներից 16 հազար 700 հեկտարը լիովին ոչնչացվել էր: Ավերվել էին գրեթե 8000 արդյունաբերա-

[275] Տե՛ս նույն տեղում, էջ 186:

կան, գյուղատնտեսական, սոցիալական օբյեկտներ, շուրջ 7000 բնակելի շինություն, 172 կրթօջախ, 47 բուժհիմնարկ[276]:

1994 թ. վերջին մշակվեցին հանրապետության տնտեսական բարեփոխումների հիմնադրույթները: Առաջ քաշվեց Հայաստանի և Արցախի տնտեսությունների միասնականացման հարցը, որը բխում էր Արցախի հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացումն արագացնելու, նրա ռեսուրսները համալիր ու արդյունավետ օգտագործելու, արտադրական ուժերը ռացիոնալ տեղաբաշխելու և զարգացնելու, խոշոր տնտեսական ու սոցիալական հիմնահարցերը համատեղ լուծելու, ԼՂՀ պաշտպանության և լայն առումով, հայկական պետականությունը ամրապնդելու ու ազգային անվտանգությունը ապահովելու խնդիրների կենսագործման շահերից:

Շուտով կառուցվեց էլեկտրահաղորդման նոր գիծ, որով Սարսանգի ջրէկ-ը ուղիղ գծով կապվեց հանրապետության էներգասպառողների հետ: Բացի այդ, ԼՂՀ-ն էլեկտրահաղորդման բարձր լարման գծով միացավ Հայաստանի էներգահամակարգին: Դրանով վերականգնվեց ԼՂՀ էներգետիկ համակարգը:

Ավելացավ էլեկտրաէներգիայի թողարկումը: Վերագործարկվեցին արդյունաբերական մի շարք ձեռնարկություններ: Ստեփանակերտի էլեկտրատեխնիկական գործարանը ընդգրկվեց ՀՀ «Հայէլեկտրալույս» արտադրական միավորման, գյուղմեքենաշինական գործարանը՝ «Հայգյուղմեքենայացում» գիտատեխնիկական միավորման մեջ: Համագործակցության շնորհիվ ավելացավ այդ ձեռնարկությունների աշխատանքի արտադրողականությունը, թողարկված արտադրանքը: Մեքենաշինության արտադրանքը 1995 թ., 1991 թ. համեմատությամբ, ավելացավ 4,1 անգամ, էլեկտրոնային արդյունաբերության արտադրանքը՝ 3,5 անգամ, թեթև արդյունաբերությանը՝ 9,3, սննդի արդյունաբերությանը՝ 3,6 անգամ: Արդյունաբերության ողջ արտադրանքը, 1990 թ. համեմատ, 1995 թ. աճել էր շուրջ 115 տոկոսով, իսկ 2005 թ.՝ 150 տոկոսով[277]:

---

[276] Տե՛ս նույն տեղում, էջ 192,193:

[277] Տե՛ս Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, N 25(34), 18.10.2006, 13, 15:

Կարևոր էր այն, որ ԼՂՀ ղեկավարությունը չհրապուրվեց սեփականաշնորհման արագ կենսագործմամբ, որի ժամանակ սխալներն անխուսափելի կլինեին: Պետությունը հատուկ ուշադրություն դարձրեց արդյունաբերական ձեռնարկությունների ունեցվածքի հաշվառման ու պահպանման վրա, որի շնորհիվ դրանք սեփականաշնորհվեցին, բայց ավերումների չենթարկվեցին: Եթե 1995 թ. անհատական ձեռնարկությունների քանակը 74-ն էր, ապա 2000 թ. դրանց թիվը հասավ 253-ի[278]:

Համաձայն ԼՂՀ-ի ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ վերջին տարիներին Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արձանագրվել է շարունակական տնտեսական աճ՝ միջինը 10 տոկոս, որը բարելավել է երկրի կայուն զարգացումը և բնակչության կենսապայմանները:

2010 թվականին, երբ համաշխարհային տնտեսությունը ապրում էր հետճգնաժամային, մասամբ վերականգնողական ժամանակաշրջան, ԼՂՀ-ում նախորդ տարվա՝ 13.1 տոկոս աճի բազայի վրա հաջողվեց պահպանել տնտեսական աճի 5.5 տոկոս ցուցանիշ[279]:

Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն կազմել է 2203.1 ԱՄՆ դոլար կամ 1659.6 եվրո: Տնտեսական աճն ապահովվել է տարբեր ոլորտներում արձանագրված աճի հաշվին, մասնավորապես շինարարության ոլորտում այն կազմել է 24%, արդյունաբերության ոլորտում՝ 5.3% և ծառայությունների ոլորտում՝ 7.4%: 2010 թվականին սպառողական գների ինդեքսը կազմել է 110.6 տոկոս[280]:

2008 թ. տարեվերջին նկատելի եղավ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցությունը ԼՂՀ-ի տնտեսության վրա: Այն հատկապես նկատելի էր հանքագործական արդյունաբերությունում, որի արդյունքում, 2007 թ. համեմատ, այդ ճյուղի արտադրության ծավալը նվազել է 2.2 տոկոսով, որը հիմնականում կապված էր համաշխարհային շուկաներում թանկարժեք մետաղ-

[278] ԼՂՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2000 թ. հունվար-դեկտեմբերին, Ստեփանակերտ, 2001, էջ 53:
[279] Տե՛ս Մինասյան Է., նշված աշխ., էջ 18:
[280] ԼՂՀ վիճակագրական տարեգիրք. 2002-2010, Երևան 2010, էջ 18:

ների գների անկման հետ: 2009 թ. նկատմամբ արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծախսի ինդեքսը հանքագործության ոլորտում 2010 թ. կազմել է 99.3 տոկոս[281]:

Տնտեսական ոլորտում առաջնահերթությունը տրվում էր ԼՂՀ-ի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացմանը: Հաշվի էր առնվում նման ձեռնարկությունների նշանակալի դերը նոր աշխատատեղերի ստեղծման, բնակչության միջին խավի ձևավորման և երկրում կայունության ապահովման գործում: Տնտեսության զարգացման պլանի համաձայն՝ նախատեսվեց բարեփոխումներն իրագործել երեք փուլով՝ 2000-2002 թթ. ակտիվ բարեփոխումների տարիներ, 2003-2005 թթ. տնտեսական կտրուկ աճի տարիներ և 2006-2011 թթ.՝ տնտեսության հետագա զարգացման տարիներ:

Հանրապետության իշխանությունների կողմից ձեռնարկված մի շարք միջոցառումների հետևանքով հաջողվեց բարեփոխումների առաջին փուլում հաղթահարել ճգնաժամային երևույթները և արձանագրվեց համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) 11,3 տոկոս աճ, ընդ որում՝ արդյունաբերության գծով՝ 36,2, գյուղատնտեսության՝ 15 տոկոս, իսկ արտահանման գծով՝ 2,5 անգամ: Առաջընթաց արձանագրվեց հատկապես արդյունաբերության բնագավառում: Օրինակ՝ 2001 թ. հանրապետության արդյունաբերական արտադրանքը կազմել է 5903.8 մլն դրամ, կամ 2000 թ. համեմատ աճը կազմել է 20.6 տոկոս, իսկ գյուղատնտեսության արտադրանքը կազմել է 13905.6 մլն դրամ, կամ 2.3 տոկոս աճ: Սեփականաշնորհման արդյունքում առկա գյուղական բնակչության մեկ շնչին ընկավ 3,1 հա գյուղատնտեսական նշանակության, այդ թվում՝ շուրջ 1,5 հա մշակելի հող, այսինքն՝ վարելահող և այգի: Մեկ ընտանիքի հաշվով այդ թիվը կազմեց 3,5-5 հեկտար: Հայաստանի ցուցանիշի հետ համեմատած այն առնվազն 3 անգամ բարձր է Արցախում:

Ի տարբերություն Հայաստանի՝ սկզբնական շրջանում Արցախում նպատակահարմար համարվեց կոլեկտիվ տնտեսությունները չքայքայել, չսեփականաշնորհել գյուղատնտեսական տեխնիկան և անասնապահական ֆերմաները: Դրանք նպաստեցին Ար-

[281] Տե՛ս նույն տեղում:

ցախի տնտեսական կյանքի և պաշտպանունակության բարելավմանը: ԼՂՀ-ում իրականացվող ագրարային վերափոխումների շնորհիվ գյուղատնտեսությունը բռնեց վերելքի ուղին: Եթե 1995-1999 թթ. տարեկան միջին հաշվով արտադրվել է մոտ 29 հազար տոննա ցորեն, ապա 2000-2008 թվականներին այդ թիվը հասել է 63 հազարի: Առաջին դեպքում 5 տարվա միջին բերքատվությունն հեկտարից կազմել է 11,1, իսկ երկրորդ դեպքում 9 տարում՝ 15.5 ցենտներ, ասել է թե երկրորդ դեպքում միջին բերքատվությունը հեկտարից բարձրացել է 4.4 ցենտներով[282]: Նման առաջընթաց նկատվում է նաև բուսաբուծության մյուս բնագավառներում: Օրինակ՝ կարտոֆիլի արտադրության ոլորտում 1995-1999 թվականներին միջին բերքատվությունը մեկ հեկտարից կազմել է 69.5 ց, իսկ հաջորդ 9 տարում 94.5 ց, որը 25 ցենտներով բարձր է նախորդ 5 տարիների միջինից[283]:

ԼՂՀ-ում գյուղատնտեսության ոլորտը 2010 թ. ապահովել է ՀՆԱ-ի ավելի քան 27 տոկոսը: Գյուղատնտեսական արտադրանքի 60 տոկոսը բաժին է ընկնում բուսաբուծությանը, 40 տոկոսը՝ անասնապահությանը: 2010 թ. գյուղատնտեսության համախառն արտադրանքի կառուցվածքում գերակշռող բաժինը պատկանում է հացահատիկի (23 տոկոս), կաթի (20 տոկոս) և մսի (15 տոկոս) արտադրությանը: ԼՂՀ տնտեսության համար շինարարությունը հանդիսանում է տնտեսական աճի հիմնական շարժիչ ուժերից մեկը: Ուստի պատահական չէ, որ 2008-2010 թթ. ընթացքում այդ ճյուղում միջին տարեկան աճը կազմել է 27 տոկոս[284]:

Բնակչության օրեցօր աճող պահանջարկը նոր շունչ է հաղորդում շինարարության ոլորտին՝ ընդլայնելով նրա ծավալները, ինչը լայն հնարավորություններ է ստեղծում շինարարական նյութերի արտադրության կազմակերպման, մասնավորապես՝ տեղական քարերի արդյունահանման և վերամշակման համար, ինչպես նաև

---

[282] Աբրահամյան Հ., Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական և մշակութային կյանքը (2000-2008), Երևան, 2013, էջ 51:
[283] ԼՂՀ վիճակագրական տարեգիրք. 1995-1999, Երևան 1999, էջ 123:
[284] Աբրահամյան Հ., նշված աշխ., էջ 63:

առևտրային նպատակով հասարակական շինությունների կառուցապատման, հատկապես բնակարանաշինարարության զարգացման համար:

2010 թ. իրականացված շինարարության ծավալը կազմել է 42.8 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 24 տոկոսով:

Մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը կազմել է 81.3 մլրդ դրամ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ աճելով 8.2 տոկոսով:

2010 թվականներին արտահանման ծավալի աճը կազմել է 30.5%, իսկ ներմուծմանը՝ 15,5%: ԱՊՀ երկրների հետ արտաքին առևտրաշրջանառության ծավալը 2010 թ. կազմել է ընդհանուրի 94.7%-ը:[285]

ԼՂՀ-ի համար կենսական նշանակություն ունի հուսալի տրանսպորտային հաղորդակցությունը Հայաստանի Հանրապետության և արտաքին աշխարհի հետ, հատկապես Գորիս-Քերծոր (նախկին Լաչին-Ստեփանակերտ) ավտոխճուղին, որը հիմնովին վերակառուցվեց և բարեկարգվեց սփյուռքահայության ֆինանսավորման միջոցներով: Այսօր մեծ ծավալի շինարարական աշխատանքներ են ընթանում Արցախի հյուսիսը հարավի հետ կապող մայրուղում:

Արցախի հանրապետությունում անկախության տարիներին թափ առան լեռնարդյունաբերությունը, էլեկտրաարդյունաբերությունը, շինարարությունը, մեծացան մասնավոր կապիտալ ներդրումները, որոշ առաջընթաց գրանցվեց բնակչության սոցիալական կյանքում և այլն: Այդ տարիներին հանրապետությունում ՀՆԱ-ն հասավ 51379.4 մլն դրամի, կամ գրանցվեց 114.1 տոկոս աճ: Չնայած դրան, հանրապետությունում 2005 թ. 2004 թ. համեմատ 806.1 մլն դրամով պակաս արտադրանք արտադրվեց: Դա հիմնականում բաժին էր ընկել գյուղատնտեսությանը, որը բնական անբարենպաստ պայմանների հետևանք էր: 2003 թ. արձանագրվել էր սեփական եկամուտների 41.5 % աճ, որը աննախադեպ ցուցանիշ էր: ԼՂՀ կառավարության 2003-2005 թթ. ծրագրե-

[285] Տե՛ս նույն տեղում, էջ 101:

րում նախանշվել էր մակրոտնտեսական ցուցանիշների բարձր աճ, որը ոչ միայն կատարվել է, այլև իրագործվել գրեթե բոլոր ուղղություններով[286]:

ԼՂ Հանրապետությունում դրական տեղաշարժ է արձանագրվել նաև հետագա տարիներին: Օրինակ՝ 2007 թ. հանրապետությունում ՀՆԱ-ն կազմել է 70791.0, իսկ 2008-ին՝ 87148.1 մլն դրամ: 2006 թ. ԼՂՀ-ում ստեղծվել է 1800 նոր աշխատատեղ, իսկ մեկ աշխատողի միջին ամսական աշխատավարձը կազմել է 56 հազար 683 դրամ, ինչը նախորդ տարվա համեմատ աճել է 109 տոկոսով: Գյուղատնտեսական արտադրանքը 2007 թվին 3077.0 մլն-ով գերազանցել է 2006 թ. մակարդակը: 2008 թ. հանրապետությունում արտադրվել է 25345.5 մլն-ի արդյունաբերական և 31157.2 մլն-ի գյուղատնտեսական արտադրանք, որոնք, մանավանդ գյուղատնտեսական արտադրանքը, բավականին գերազանցել են նախորդ տարվա մակարդակը[287]:

Հայաստանի օրինակով 1995 թ. փետրվարի 14-ին ԼՂՀ ԳԽ ընդունեց «Պետական ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհման և ապապետականացման մասին» օրենքը, որի հիման վրա էլ սկսվեցին մասնավորեցնել առանձին ձեռնարկություններ[288]:

Վերոհիշյալ օրենքի պահանջների համաձայն ստեղծվեց ԼՂՀ կառավարությանն առընթեր պետական ունեցվածքի հաշվառման և ապապետականացման վարչություն, որի վրա էլ դրվեց սեփականաշնորհում իրականացնող մարմնի լիազորությունները: Նույն թվականի օգոստոսի 10-11-ին ԳԽ-ն ընդունեց ԼՂՀ առևտրի, հասարակական սննդի, բնակչության կենցաղային սպասարկման, վարձակալված տարածքների և անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհման և ապապետականացման 1995-1996 թվականների ծրագրեր: Փաստորեն՝ 1995 թ. Արցախի հանրապետությունում կատարվել են սեփականաշնորհման առաջին քայլերը:

---

[286] Տե՛ս նույն տեղում, էջ 20:
[287] Տե՛ս նույն տեղում, էջ 21:
[288] Տե՛ս նույն տեղում:

ԼՂՀ-ում մասնավորեցման գործընթացը կարելի է բաժանել երկու փուլի: Առաջինն ընդգրկում է 1995-1998 թվականները: Այդ շրջանում սեփականաշնորհվել են փոքր՝ առևտրի, հասարակական սննդի, կենցաղային սպասարկման ձեռնարկությունները, ինչպես և վարձակալված տարածքներն ու անավարտ շինությունները: 1997 թ. հունվարի 1-ի դրությամբ հանրապետությունում սեփականաշնորհվել էր 230 ձեռնարկություն: ԼՂՀ կառավարության 1997 թ. դեկտեմբերի որոշմամբ՝ ստեղծվել է ԼՂՀ սեփականաշնորհման և ներդրումների պետական վարչություն, որը պետք է Արցախի հանրապետությունում վերահսկեր ապապետականացման գործընթացը: 1998 թ. ընդունվեց «Պետական գույքի մասնավորեցման մասին» ԼՂՀ օրենքը, ըստ որի սկսվեց սեփականաշնորհման երկրորդ փուլը: Համաձայն այդ որոշման՝ 1998-2000 թվականներին պետք է սկսվեր խոշոր ձեռնարկությունների մասնավորեցումը: Նախատեսվեց այդ փուլում սեփականաշնորհել էներգետիկայի, արդյունաբերության, շինարարության, տրանսպորտի, կապի, կոմունալ տնտեսության և այլ ճյուղերի 107 ձեռնարկություն, որից 48-ը բաժնետոմսերի ազատ բաժանորդագրության ձևով, իսկ մնացածները կառավարության կողմից սահմանված կարգով: Այդ շրջանում հանրապետությունում գրանցված 721 փոքր ձեռնարկություններից մասնավորեցվեց 578-ը, որից 168-ը աշխատավորական կոլեկտիվների անդամների կողմից, 146-ը՝ աճուրդով, 264-ը՝ վարձակալների, երկուսը՝ ուղղակի վաճառքի, իսկ 4-ն էլ՝ անհատույց տրամադրման ձևով: Այդ ընթացքում սեփականաշնորհումից պետական բյուջեի մուտքերը կազմեց 266.2 մլն դրամ: Մինչև 2006 թ. հունվարի 1-ը հանրապետությունում սեփականաշնորհվեց 905 ձեռնարկություն[289]:

Արցախի հանրապետությունում խոշոր ձեռնարկությունների սեփականաշնորհումը կատարվել է աստիճանաբար, քայլ առ քայլ, ոչ թե հախուռն: Ըստ վիճակագրական տվյալների 2006 թ. հունվարի 1-ի տվյալներով՝ Արցախում պետական գույքի մասնավորեցումից ստացվել է 1մլրդ 385 մլն դրամ: Բացվել են նոր աշխա-

[289] Աբրահամյան Հ., Մարտնչող Արցախը (1985-2000), գիրք Գ, էջ 698:

տատեղեր: Նոր սեփականատերերը պարտավոր են կատարել պայմանագրով ստանձնած պարտավորությունները: Հակառակ դեպքում տվյալ սեփականատիրոջ նկատմամբ ձեռք են առնվում օրենքով նախատեսված միջոցներ՝ ընդհուպ մինչև սեփականաշնորհված օբյեկտի բռնագանձումը դատարանի միջոցով: Օրինակ՝ 1995-1996 թթ. Արցախում գրանցվել են 2.5 տասնյակից ավելի նման դեպքեր: Գոյություն ունի վերահսկիչ պալատ, որը զբաղվում է այդ հարցերով[290]:

2008-2011 թթ. արդյունաբերության ճյուղի աճի ցուցանիշը միջին հաշվով կազմել է 17.6 տոկոս: Հանրապետության արդյունաբերական արտադրանքի ծավալի գերակշռող մասն են կազմում հանքագործության և մշակող արդյունաբերության ծավալները, որոնց տեսակարար կշիռները միջինը կազմում են համապատասխանաբար 45.7 տոկոս և 33.1 տոկոս:

2010 թ. արդյունաբերությունը հանրապետությունում, փաստացի գներով, իրացրել է 42.5 մլրդ դրամի պատրաստի արտադրանք: 2009 թ. նկատմամբ արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը կազմել է 105.3 տոկոս, ընդ որում՝ մշակող արդյունաբերության ծավալը աճել է 13.7 տոկոսով, էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրության և բաշխման ճյուղի ծավալը՝ 7.0 տոկոսով, իսկ հանքագործական արդյունաբերության ոլորտում արձանագրվել է անկում 0.7 տոկոս[291]:

Հետպատերազմյան շրջանում և հատկապես 21-րդ դարասկզբին արդյունաբերության ոլորտում նոր ձեռնարկություններ հիմնվեցին: Դրանցից կարելի է առանձնացնել 2000 թ. երկրորդ կեսին Ստեփանակերտում գործարկված Երևանի կաբելի գործարանի մասնաճյուղը: Դեռևս 2000 թ. հունիսին ստեղծվեց «Հավկիթ» պետական փակ բաժնետիրական ընկերությունը (ՊՓԲԸ): Մարտակերտի շրջանի Վանքի «Արթա-Վանքլես» կոմբինատի արտադրության պահանջարկի աճը ստիպում էր օր օրի մեծացնել արտադրության ծավալը: Նույն շրջանի «Էրա» ՍՊԸ-ի ուժերով գործարկվեց ժամանակակից սարքավորումներով հագեցված՝ տեսա-

[290] Աբրահամյան Հ., նշված աշխ., էջ 24:
[291] Տե՛ս Սինասյան Է., նշված աշխ., էջ 9

կավոր ալյուրի և հացամթերքների արտադրության ձեռնարկությունը: Ընդհանրապես նկատվում էր Մարտակերտի շրջանի արդյունաբերական արտադրանքի ծավալի աճ: Շրջանի արդյունաբերական արտադրության մեջ ներգրավվել էր 150 մարդ: 2001 թ. Արցախում բացվեց Հայաստանում գործող «Մաքսվուդ» կոնցեռնի մի ճյուղը, որը զբաղվում է փայտամշակմամբ: Ստեփանակերտում բացվեց «Միկա Ղարաբաղ» ՓԲԸ ոսկերչական իրերի արտադրամաս: 2000-ական թթ. Արցախում կառուցվեց ժամացույցի գործարան, սկսվեց սննդամթերքների վերամշակում, խմիչքների արտադրություն, հիմնվեցին ալրաղացներ, տպագրական արտադրամասեր և այլն[292]:

«Մանեքս-Վալեքս» ընկերությունների խմբի մեջ մտնող «Բեյզ Մեթըլս» փակ բաժնետիրական ընկերությունը (ՓԲԸ) 2002 թ. օգոստոսին նախաձեռնեց Դրմբոնի ոսկու և պղնձի հանքավայրի շահագործումը[293]: Ընկերությունը գործում էր այն հաշվարկով, որ 2003 թ. ապրիլին արդյունահանվի առաջին ապրանքային հանքաքարը: Այն առաքվեց Ալավերդի՝ «Վալեքս» ընկերությունների խմբի հարստացուցիչ ֆաբրիկայի հզորությունների վրա արտադրական փորձարկման: Մի քանի ամիս անց՝ 2003 թ. հոկտեմբերի 1-ին, գործարկվեց լեռնահարստացուցիչ կոմբինատը՝ ունենալով աշխատող ստորգետնյա հանք ու հարստացուցիչ ֆաբրիկա:

Այսպիսով՝ լեռնամետալուրգիական արդյունաբերություն չունեցող Արցախ-Ղարաբաղում բացվելով այդ ճյուղը՝ ներկայումս տարեկան միջին հաշվով արդյունահանվում է ավելի քան 250 հազար տոննա ապրանքային հանքաքար, որից ստացվում է 17 հազար տոննա պատրաստի խտանյութ: Միայն 2005 թվականին «Բեյզ Մեթըլսի» կողմից մշակվել է ավելի քան 13 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ արտադրանք[294]:

Հանքում աշխատում են մոտ 1200 մարդ, որից 150-ը Հայաստանի Հանրապետությունից, իսկ մնացածը՝ Ստեփանակերտ քաղաքից և հարևան 9 գյուղերից, 25 կմ շառավիղով:

---

[292] Աբրահամյան Հ., նշված աշխ., էջ 35,36:
[293] Տե՛ս նույն տեղում:
[294] Աբրահամյան Հ., նշված աշխ., էջ 35:

ԼՂՀ արդյունաբերության ամենակարևոր հատվածը մնում է էներգետիկան, որը տնտեսության կայուն զարգացման համար ունի մեծագույն նշանակություն: Էներգետիկայի բնագավառում իրագործված բարեփոխումները հնարավորություն տվեցին արտադրության և մատակարարման ոլորտներում կրճատել էլեկտրաէներգիայի տեխնիկական ու գերնորմատիվային կորուստները:

Արցախի հանրապետությունում էլեկտրաէներգիայի ընդհանուր պահանջը կազմում է շուրջ 150-160 մլն կՎտ/ժ: Էլեկտրաէներգիայի արտադրության հիմնական աղբյուրը Սարսանգի հիդրոէլեկտրակայանն է, որը տարեկան արտադրում է 60-65 մլն կՎտ/ժ էլեկտրաէներգիա: Հանրապետությունում արտադրվում է պահանջվող էլեկտրաէներգիայի մոտ 38 տոկոսը: Մինչդեռ հանրապետության էլեկտրաէներգիայի ներուժը հնարավորություն է տալիս ունենալու մինչև 700 մլն կՎտ/ժ էլեկտրաէներգիա[295]:

2000 թ. հոկտեմբերի 21-ին ԼՂՀ կառավարությունում տեղի ունեցած խորհրդակցությունում, քննարկելով հանրապետության ջրային և էներգետիկ ռեսուրսների արդյունավետ օգտագործման խնդիրները, առաջ քաշվեց նոր հիդրոկայաններ կառուցելու հարցը: Այստեղ խոսակցություն գնաց Թարթառ գետի վրա 11.5 կՎտ/ժ հզորությամբ նոր հէկի կառուցման մասին: Քննարկվեց նաև Թրղե գետի վրա հէկ կառուցելու հարցը: Քննարկման ժամանակ անհրաժեշտ գտան վերագործարկել Մատաղիսի էլեկտրակայանը: Խոսվեց նաև Կարկառ, Խաչենագետ, Իշխանագետ, Քաղարա գետերի ջրերը ոռոգման նպատակով կիրառելուց բացի, օգտագործել նաև էլեկտրաէներգիա ստանալու համար: 840 մլն դրամ հավաքելով՝ 2008 թ. սկսվեց «Թրղե-1» հէկի շինարարությունը, որը 3 մվտ հզորություն ունի և տարեկան ավելի քան 15 մլն կվտ/ժամ էլեկտաէներգիա կարող է արտադրել: 2009 թ. 1 մլրդ - 400 մլն դրամ ներդնելով սկսվեց 6 մվտ հզորությամբ «Թրղե-2» հիդրոէլեկտրակայանի շինարարությունը: Այն գործարկվեց 2011 թ.: Հիշյալ հէկերը Սարսանգի հետ մեկտեղ տարեկան կթողարկեն 150-160 մլն կվտ ժամ էներգիա, որը երկրի պահանջարկի գրեթե 70%-ն է կազ-

[295] Աբրահամյան Հ., նշված աշխ., էջ 34:

մում: 2012 թ. գարնանը «Արցախ հէկ»-ը ձեռնամուխ եղավ «Մատաղիս-1»-ի և «Մատաղիս-2»-ի շահագործմանը, որոնցից առաջինը 4.8, իսկ երկրորդը՝ 3 մվտ հզորություն կունենա[296]: Դրան կհաջորդի «Թղղե-3»-ի շինարարությունը:

Դեռևս 2001 թ. մարտի 6-ին ԼՂՀ կառավարությունը հաստատեց 2001-2010 թվականների ԼՂՀ Էներգահամակարգի ծրագիրը[297]: ԼՂՀ-ն ՀՀ-ից էներգիա է ստանում «Շինուհայր-Ստեփանակերտ» 110 կմ օդային գծով: 1977 թ. սկսեց էներգիա արտադրել Սարսանգի հէկը: Այն գործում է տարեկան 6 ամիս (հոկտեմբեր-մարտ): Արցախի էներգետիկ ոլորտում ստեղծվել են գործարարների համար ամենաշահավետ և գրավիչ պայմաններ: Էներգետիկական հեռանկարային ոլորտ է լայնածավալ ներդրումների համար, որոնց հավանական ծավալները կազմում են մոտ 100 մլն դրամ: Պատահական չէ, որ ԼՂՀ վարչապետը հայտարարել է. «Հեռու չէ այն օրը, երբ Լեռնային Ղարաբաղը էլեկտրաէներգիա ներկրող երկրից կվերածվի արտահանող երկրի»: Ըստ վարչապետի հայտարարության՝ 2012 թվականին հանրապետությունում արտադրվել է 300 մլն կՎտ/ժ էլեկտրաէներգիա, Արցախում ամեն ինչ արվում է ստանալու այլընտրանքային էներգիա: Նա նաև այն կարծիքն է հայտնել, որ հանրապետությունում էլեկտրաէներգիայի սակագինը 30 դրամից չպետք է բարձրանա[298]:

գ. Սոցիալական ոլորտը

ԼՂՀ-ում իրականացվում են նաև սոցիալական բարեփոխումներ: Սոցիալական հիմնախնդիրները լուծելու նպատակով մշակվել ու ընդունվել են մի շարք օրենքներ սոցիալական ապահովագրության, սոցիալական աջակցության, կենսաթոշակային, բնակչության զբաղվածության ապահովման, աշխատանքի և աշխատավարձերի համակարգերի կատարելագործման վերաբերյալ:

ԼՂՀ սոցիալական քաղաքականությունը նպատակաուղղված է

---

[296] «Հայաստանի Հանրապետություն», 12.12.2013:
[297] Աբրահամյան Հ., նշված աշխ., էջ 32:
[298] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 12.12.2012:

զբաղվածության ապահովմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը, բնակչության եկամուտների ավելացմանը:

ԼՂՀ կառավարությունը որոշակի միջոցառումներ է իրականացնում նաև առողջապահության ոլորտի խնդիրները կարգավորելու ուղղությամբ: Այստեղ մասնավոր բուժօգնության հետ միասին պետության աջակցությամբ իրականացվում է անվճար բուժօգնություն:

Պետական նպաստների համակարգը ԼՂՀ-ում գործում է 1997 թվականից: Վերջին երկու տարիներին ԼՂՀ պետական բյուջեում հավելում է կատարվել՝ պայմանավորված նպաստառուների թվաքանակի ավելացման և նպաստների չափի բարձրացման հետ: Երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը 2004 թվականի հունվարի 1-ից բարձրացել է՝ 2008 թվականին հասնելով 35000 դրամի՝ 2003 թվականի 10 հազար դրամի փոխարեն[299]: ԼՂՀ զբաղվածության քաղաքականությունը նպատակաուղղված է լրիվ և արդյունավետ զբաղվածության ապահովմանը, աշխատանքի խթանմանը, նոր աշխատատեղերի ստեղծման ու բնակչության եկամուտների ավելացմանը: Այս ուղղությամբ տարվող աշխատանքները հանրապետությունում դեռևս գոհացուցիչ չեն: Գործազուրկների թվաքանակը հանրապետությունում անցնում է 5 հազարից[300]: Գործազուրկների թվի 92 տոկոսը կանայք են: Աշխատանք է տարվում բարելավելու պետական և մասնավոր հատվածների աշխատանքի վարձատրության համակարգը: Հանրապետությունում պատերազմական գործողությունները դադարեցվելուց հետո ընդունվեցին մի շարք օրենքներ բնակչությանը սոցիալական ծանր վիճակից դուրս բերելու համար:

1995-ի հունիսի 19-ին ԼՂՀ կառավարությունը որոշում ընդունեց՝ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում աշխատանքի վարձատրության նվազագույն չափի, բյուջետային հիմնարկների աշխատողների աշխատավարձի, կենսաթոշակների, նպաստների և կրթաթոշակների չափերի բարձրացման մասին»: Նույն թվականի նոյեմբերի 21-ին՝ «Միայնակ մայրերի պետական նպաստի

[299] Տե՛ս Մինասյան Է., նշված աշխ., էջ 9:
[300] Նույն տեղում:

նշանակման և վճարման կարգի մասին», 1996թ. փետրվարի 6-ին՝ «ԼՂՀ աշխատանքային վարձատրության նվազագույն չափի, բյուջետային հիմնարկների աշխատողների աշխատավարձի, նպաստների և կրթաթոշակների չափերի բարձրացման մասին» և այլն որոշումներով բարձրացվեցին կենսաթոշակների, նպաստների, կրթաթոշակների, աշխատավարձերի չափերը: Հանրապետությունում 1998թ. հունվարի 1-ից սկսեց գործել պետական նպաստների համակարգը, ըստ որի, ամենամյա նպաստներ նշանակվեցին հաշմանդամ երեխաներին՝ 4000 դրամ, երկկողմանի ծնողազուրկ երեխաներին՝ 3000 դրամ, չորս և ավելի անչափահաս երեխաներ ունեցող ընտանիքների երեխաներին՝ 2000-ական դրամ: Նպաստներ սահմանվեցին նաև միայնակ մայրերին և գործազուրկի կարգավիճակ ունեցող անձանց: Մինչ այդ՝ 1996թ. նոյեմբերի 6-ին, ընդունվել էր «ԼՂՀ քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» օրենքը, ըստ որի, հինգ տարվա աշխատանքային ստաժի առկայության դեպքում, իսկ կանայք՝ 63 տարեկանը լրացած, հիմնական կենսաթոշակային չափը սահմանվեց 2860 դրամ, ապահովագրական ստաժի մեկ տարվա արժեքը՝ 30-60 դրամ:[301] 1999 թ.-ի հունիսի 1-ին կենսաթոշակներին սահմանվեց հավելում 2000 դրամի չափով: Արդեն 2001թ. հանրապետությունում վճարվող կենսաթոշակները միջին չափով հավելավճարի հետ միասին կազմել են ավելի քան 9000 դրամ[302]:

2005 թվականի հունվարի 1-ից ԼՂՀ օրենքով նվազագույն աշխատավարձը սահմանվեց 15 հազար դրամ, իսկ 2009 թվականից՝ 30 հազար դրամ[303]: Սոցիալական հիմնախնդիրների լուծման գործում ԼՂՀ-ին էական աջակցություն են ցուցաբերում «Հայաստան» համահայկական հիմնադրամը, տարբեր մարդասիրական կազմակերպություններ՝ Լիբանանի «Արցախի օգնության մարմինը», «Վիտա» ընկերությունը, Համաշխարհային քրիստոնեական կազմակերպությունը և այլն:

---

[301] «ԼՂ Հանրապետություն», թիվ 27, 12.03.1998:
[302] Տե՛ս Մինասյան Է., նշված աշխ., էջ 9:
[303] Նույն տեղում:

դ. Հասարակական-քաղաքական կյանքը

Ազատագրական պատերազմից հետո աշխուժացավ ԼՂՀ հասարակական-քաղաքական կյանքը: 1991-1994 թթ. Արցախյան ազատագրական պատերազմի տարիներին հանրապետությունում գործող բոլոր կուսակցությունները միակամ էին հաղթանակի հասնելու գործում, ուստի, անկախ գաղափարական տարաձայնություններից, գործեցին միասնաբար և հաղթանակի հասնելու վճռակամությամբ:

Անցում կատարվեց բազմակուսակցական համակարգին: Սկսեցին գործել Հայ հեղափոխական դաշնակցություն և Արցախի արմենական կուսակցությունները: Առաջացան նոր կուսակցություններ ու քաղաքական միավորումներ՝ «Ազատ հայրենիք», «Սոցիալական արդարություն», «Մեր տունը Հայաստանն է», «ՀՀԴ Շարժում-88 դաշինք», «Արցախի ժողովրդավարական կուսակցություն»:

Հասարակական-քաղաքական կյանքը հանրապետությունում աշխուժացավ ԼՂՀ ազգային ժողովի պատգամավորների երկրորդ ընտրությունների ժամանակ, որը տեղի ունեցավ 1995 թ. հունիսի 23-ին՝ մեծամասնական ընտրակարգով՝ 33 ընտրատարածքներում: Ընտրություններն անցան ընտրողների ակտիվ մասնակցությամբ՝ 80 տոկոս մասնակցության ցուցանիշով: ԼՂՀ Ազգային ժողովի պատգամավոր ընտրվեց 33 մարդ[304]:

1996 թ. նոյեմբերին կայացան ԼՂՀ առաջին նախագահական ընտրությունները: Հանրապետության նախագահ ընտրվեց Ռոբերտ Քոչարյանը: Հաջորդ տարի Ռ. Քոչարյանը նշանակվեց Հայաստանի Հանրապետության վարչապետ, ուստի 1997 թ. սեպտեմբերին ԼՂՀ-ում տեղի ունեցան արտահերթ նախագահական ընտրություններ, և ԼՂՀ նախագահ ընտրվեց Արկադի Ղուկասյանը:

Աննախադեպ ակտիվությամբ ընթացան նաև ԼՂՀ երրորդ գումարման Ազգային ժողովի պատգամավորների ընտրությունները, որոնք տեղի ունեցան 2000 թ. հունիսի 18-ին՝ 33 ընտրատարածքներում: Այս ընտրություններին մասնակցեցին 51267 ընտրողներ,

---

[304] Տե՛ս նույն տեղում, էջ 10, Մինասյան Է., ԼՂՀ Ազգային ժողովի ընտրությունները, «ԼՂՀ ատլաս», Երևան, 2009, էջ 74-75:

որոնք կազմեցին ընտրողների ընդհանուր թվի 60%-ը: Ազգային ժողովի պատգամավորության թեկնածուներ գրանցվեցին 113 հոգի, որոնցից 88-ը առաջարկվել էին քաղաքացիական նախաձեռնությամբ, իսկ 25-ը կուսակցությունների կողմից[305]: ԼՂՀ տարածքում գործող կուսակցությունները և հասարակական-քաղաքական կազմակերպությունները Ազգային ժողովում ներկայացված էին հետևյալ կերպ. Հայ հեղափոխական դաշնակցությունը՝ 9 պատգամավոր, Արցախի Արմենական կուսակցությանը՝ 1 պատգամավոր, Արցախի Սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը՝ 1 պատգամավոր, իսկ ժողովրդավարական Արցախ միությունը ստացավ ավելի շատ մանդատ՝ 20 պատգամավոր:

2002 թ. օգոստոսի 11-ին կայացած նախագահական երրորդ ընտրությունների արդյունքում ԼՂՀ նախագահ վերընտրվեց Ա. Ղուկասյանը: Ընտրություններին մասնակցած միջազգային դիտորդներից շատերը նշեցին ընտրությունների ազատ և թափանցիկ լինելու հանգամանքը. ընդգծելով, որ «Ժողովրդավարական գործընթացը բոլորի կողմից չճանաչված ԼՂՀ-ում անցկացված ընտրությունների ժամանակ պահպանված ու պաշտպանված էր: Արևմտյան երկրները կարող են հետևել Ղարաբաղի օրինակին»[306]:

ԼՂՀ չորրորդ գումարման Ազգային ժողովի պատգամավորների ընտրությունները տեղի ունեցան 2005 թ. հունիսի 19-ին՝ 22 ընտրատարածքներում մեծամասնական և համամասնական ընտրակարգերով: Մեծամասնական ընտրակարգով ընտրվեց 22 պատգամավոր, 10-ը՝ անկուսակցականներ, 7-ը՝ «Ազատ հայրենիք» կուսակցության, 5-ը՝ «Արցախի ժողովրդավարական կուսակցության» անդամներ: Համամասնական ընտրակարգով անցկացված ընտրություններում առաջին անգամ ամենաշատ ձայներ ստացավ «Արցախի ժողովրդավարական կուսակցությունը»՝ 37,4 %, որին հետևում էին «Ազատ հայրենիքը»՝ 26,9 %, «ՀՀԴ-Շարժում-88 դաշինք» կուսակցությունը՝ 24,6 %, ԼՂՀ կոմունիստական կուսակցությունը՝ 4,1 % և այլն[307]:

---

[305] Տե՛ս նույն տեղում, էջ 11:
[306] Տե՛ս նույն տեղում, էջ 12:
[307] Տե՛ս նույն տեղում:

2007 թ. հուլիսի 20-ին տեղի ունեցան ԼՂՀ նախագահական հերթական ընտրությունները: Առաջադրված էին չորս թեկնածուներ: ԼՂՀ նախագահ ընտրվեց Բակո Սահակյանը: Այս ընտրությունները ևս վկայեցին ԼՂՀ-ում ժողովրդավարության սկզբունքների վրա խարսխված պետականության կայացման մասին:

2010 թ. մայիսի 23-ին տեղի ունեցան ԼՂՀ հինգերորդ գումարման Ազգային ժողովի ընտրությունները 33 ընտրատարածքներում[308]՝ համամասնական և մեծամասնական ընտրակարգով: Մեծամասնական 16 տեղի համար հավակնել են 44 թեկնածուներ, իսկ համամասնական 17 տեղի համար պայքարել են 4 կուսակցություններ[309]:

Մեծամասնական և համամասնական ընտրակարգերում հաղթեց վարչապետ Արա Հարությունյանի ղեկավարած «Ազատ հայրենիք» կուսակցությունը (46.4%), որին հաջորդեցին Արցախի ժողովրդավարական կուսակցությունը (28.6%) և Հայ հեղափոխական դաշնակցությունը (20.2%): Համամասնական ընտրակարգով առաջադրված 4 կուսակցություններից Արցախի կոմկուսը (ստացավ 4.8%) չհաղթահարեց 6 տոկոսի շեմը[310]:

Մեծամասնական ընտրակարգով ընտրվեցին «Ազատ հայրենիք» կուսակցության 6 անդամներ, Արցախի ժողովրդավարական կուսակցությունից՝ 3 հոգի, ՀՅԴ-ից 2 հոգի, իսկ 5 հոգին անկուսակցականներ: Աշխարհի 16 երկրներից ժամանած միջազգային դիտորդները ԼՂՀ խորհրդարանական ընտրությունները համարեցին միջազգային չափանիշներին համապատասխան:

2012թ. հուլիսի 19-ին տեղի ունեցած ԼՂՀ նախագահական հերթական ընտրություններում նախագահ վերընտրվեց Բակո Սահակյանը:

Խորհրդարանական ընտրությունների նմանությամբ նախագահական բոլոր ընտրությունները ևս համարվել են միջազգային չափանիշներին համապատասխան:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հասարակական-

---

[308] Տե՛ս նույն տեղում:
[309] Տե՛ս նույն տեղում:
[310] Աբրահամյան Հ., նշված աշխ., էջ 169:

քաղաքական կյանքի կարևոր իրադարձություններից էր Սահմանադրության ընդունումը, որը հաստատվեց 2006 թ. դեկտեմբերի 10-ին համաժողովրդական հանրաքվեի միջոցով: Դեռևս միջազգային ճանաչում չստացած, սակայն փաստացի անկախ հանրապետության հիմնական օրենքը իրավական ձևակերպում տվեց հասարակական կյանքի բոլոր բնագավառներում կատարված փոփոխություններին, սահմանեց ԼՂՀ քաղաքացիների իրավունքները, ազատությունները ու պարտականությունները: Սահմանադրության առաջին հոդվածն ազդարարում է, որ ԼՂՀ-ն ինքնիշխան, ժողովրդավարական, իրավական, սոցիալական պետություն է, որ ԼՂՀ և Արցախի Հանրապետություն անվանումները նույնական են: ԼՂՀ Սահմանադրությունն ամրագրեց հայկական երկրորդ պետության իրավական հիմքերը:

ե. Կրթամշակութային կյանքը

Լեռնային Ղարաբաղում ստեղծվեց կրթական ու մշակութային նոր համակարգ: ԼՂՀ հռչակումից հետո սկսվեցին հանրակրթության ոլորտի բարեփոխումները: Մշակվեցին ազգային դպրոցի ստեղծման սկզբունքները, կազմվեցին ուսումնական նոր ծրագրեր ու դասագրքեր: ԼՂՀ ԱԺ-ն օրենք ընդունեց, որով հայ երեխաների ուսումնառությունը պետք է կատարվի հայկական դպրոցներում: 2005-2006 ուսումնական տարում ԼՂՀ-ում գործում էր 182 հանրակրթական դպրոց[311]: Առաջնահերթ ուշադրություն է տրվում տվորողների ազգային դաստիարակությանը, հասարակական ակտիվությանը, գիտելիքների, կարողությունների, ստեղծագործական ունակությունների ձևավորմանն ու զարգացմանը:

2004-2005 ուսումնական տարվանից ԼՂՀ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսուցումն իրականացվում է երկաստիճան համակարգով՝ բակալավրի և մագիստրոսական ծրագրերով: 1992 թ. վերակազմավորվեց Լեռնային Ղարաբաղի պետական համալսարանը (1995 թ-ից՝ Արցախի պետա-

[311] Միևնույն է., նշված աշխ., էջ 14:

կան համալսարան), որը հանրապետության կրթության և գիտության մայր հաստատությունն է: Արցախում գործում են մեկ տասնյակից ավելի մասնավոր բուհեր[312]:

Բնակչության կրթվածության մակարդակը բարձր է: 2010/2011 ուսումնական տարվա սկզբի դրությամբ բարձրագույն ուսումնական հաստատությունների թիվը հասնում է յոթի, որոնցից երկուսը՝ պետական, հինգը՝ ոչ պետական: Ուսանողների թիվը բուհերում կազմում էր 6096: Պետական միջին մասնագիտական հաստատությունների թիվը կազմում էր 5, որում սովորողների քանակը 2010/2011 ուսումնական տարվա սկզբի դրությամբ հասնում էր 1619-ի:

ԼՂՀ-ում զարգանում են նաև գրահրատարակչությունը և մամուլը: «Խորհրդային Ղարաբաղ» թերթը վերանվանվեց «Արցախ», «ԼՂ Հանրապետություն», այնուհետև «Ազատ Արցախ»: Հանրապետությունում սկսեցին լույս տեսնել նոր թերթեր: Հրատարակվում են «Արցախ», «Գիտությունը և կրթությունը ԼՂՀ-ում», «ԱրՊՀ գիտական տեղեկագիր» հանդեսները: Հրատարակչական գործի զարգացման հետ ընդլայնվում է գրադարանների ցանցը, ավելանում՝ գրքային ֆոնդը: Լուրջ ուշադրություն է դարձվում թանգարանների ստեղծմանը, արվեստի՝ թատերարվեստի, երաժշտության և պարարվեստի զարգացմանը, ինչպես նաև պատմամշակութային հուշարձանների պահպանության գործին[313]:

ԼՂՀ-ում գործում են 18 թատերահամերգային կազմակերպություններ: Արցախի արվեստի վարպետները ելույթներով հանդես են գալիս ԱՊՀ և արտասահմանյան բազմաթիվ այլ երկրներում՝ Հոլանդիայում, Ֆրանսիայում, ԱՄՆ-ում, Հունաստանում և այլուր:

Միջազգային մշակութային համագործակցության կարևոր մասն են կազմում Հայաստանի Հանրապետություն-Սփյուռք-Արցախ մշակութային կապերը, որոնք իրականացվում են, օրինակ, «Մեկ ազգ, մեկ մշակույթ» համահայկական փառատոնի և շատ այլ ծրագրերի շրջանակներում:

---

[312] Տե՛ս նույն տեղում, էջ 14:
[313] Նույն տեղում, էջ 15:

Ստեփանակերտին առանձին վեհություն է հաղորդում հայտնի քանդակագործ Սարգիս Բաղդասարյանի «Մենք ենք, մեր սարերը» կոթողը, որը դարձել է Արցախ աշխարհի խորհրդանիշը:

Հանրապետության տարածքում հաշվվում են բազմահազար հուշարձաններ, որոնց զգալի մասը եկեղեցիներ ու խաչքարեր են: Վերջին տարիներին հայ հնագետների կատարած պեղումների շնորհիվ բացվեց Տիգրան Մեծի հիմնադրած Տիգրանակերտը (Արցախի Տիգրանակերտ), որը մեկ անգամ ևս փաստեց հայերի վաղնջական ներկայությունը, բնիկությունը Արցախում:

Անկախ Արցախի մշակույթը զարգացման փուլում է՝ արձանագրելով նորանոր ձեռքբերումներ, որոնք նրա պետականության կայացման լավագույն վկայություններն են:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ՈՒ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ԴԺՎԱՐԻՆ ՈՒՂԻՆ (1991-2000 թթ.)

1. ՆԵՐՔԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ա.Տնտեսության ճգնաժամային երևույթները Անցում շուկայական հարաբերություններին

Խորհրդային պետության փլուզումից հետո նախկին հանրապետությունները ներքաշվեցին հակամարտությունների մեջ, և Հայաստանը, բացի առանձին երկրներից շարունակվող ոչ մեծ օգնությանը, մնաց միայնակ իր ծանրագույն հոգսերի հետ: Եթե սրան ավելացնենք հանրապետության լիակատար շրջափակումը, որին 1990-ական թվականների սկզբներից փաստորեն մասնակցում էր նաև Թուրքիան, ինչպես նաև պատերազմը Լեռնային Ղարաբաղում և 1990 թվականից Հայաստան բռնագաղթված փախստականների օրհասական դրությունն ու էներգետիկ ճգնաժամը, ապա հանրապետությունում ստեղծված սոցիալ-տնտեսական անմխիթար վիճակի պատկերը կամբողջանա:

Սկզբնական շրջանում, տրանսպորտային շրջափակման պայմաններում, կարևորագույն խնդիրը տնտեսության արտադրական ներուժի առավելագույն օգտագործումն էր և այս ճանապարհով բնակչության կենսապահովման նվազագույն պայմանների ստեղծումը: Խնդրի լուծումն ավելի էին դժվարացնում տնտեսական ճգնաժամը խորացնող արտաքին գործոնները, հատկապես նախկին տնտեսական կապերի խզումը, նորանկախ պետությունների կողմից հովանավորչական առևտրային պայմանների սահմանափակումը, ֆինանսական հաշվանցումների վատթարացումը, պայմանագրային պարտավորությունների զանգվածային խախտումները, միջպետական տնտեսական հարաբերությունների կանոնակարգման օրենսդրական դաշտի բացակայությունը:

Նման իրավիճակում Հայաստանի ղեկավարության առջև ծառացած հիմնական հարցը մնում էր շրջափակման վերացման միջոցով տնտեսական դրության բարելավումը: Այս ծանր պայմաններից դուրս գալու նպատակով հանրապետությունում մի շարք բարեփոխումներ իրագործվեցին: Հայաստանի անկախության Հռչակագրի դրույթներից ելնելով՝ ծրագրվեց տնտեսությունը ենթարկել արմատական վերափոխումների: Հիմնականում նախատեսվում էր, հասարակական-քաղաքական ու տնտեսական նոր պահանջներին համապատասխան, անցում կատարել դեպի շուկայական հարաբերությունները: Հանրապետությունում տնտեսական բարեփոխումների և անկախության աստիճանական կայացման գործընթացը հայտարարվեց «անցումային ժամանակաշրջան»:

1990-1991 թթ. Հայաստանի Գերագույն խորհուրդը մի շարք որոշումներ ընդունեց, որոնք ուղղված էին տնտեսական հարաբերությունները կարգավորելուն: Այս առումով կարևոր նշանակություն ուներ խորհրդարանի 1990 թ. սեպտեմբերի 10-ին ընդունած «Հայաստանի Հանրապետության պետական սեփականության մասին» օրենքը, ըստ որի հանրապետության տարածքում գտնվող բոլոր պետական ձեռնարկությունների, միավորումների, հիմնարկների և կազմակերպությունների ունեցվածքը հայտարարվեց Հայաստանի Հանրապետության սեփականություն: Հոկտեմբերի 31-ին ընդունվեց «Հայաստանի Հանրապետությունում սեփականության մասին» օրենքը: Սրանք պետական մենատիրության վերացմանը և շուկայական հարաբերությունների ձևավորմանն ուղղված առաջին քայլերն էին[314]:

Հարկ է նշել, որ հանրապետության շուկայական տնտեսության հետևողական անցումն ապահովելու, ձեռներեցության հիմքեր ստեղծելու համար ՀՀ առաջին կառավարությունը 1990 թ. հոկտեմբերին որոշում ընդունեց՝ ստեղծել «ՀՀ կառավարության տնտեսական բարեփոխումների և սեփականաշնորհման գծով պետական

[314] ՀԱԱ, ֆ 113, ց 165, գ. 259, թ. 1, 2:

հանձնաժողով»[315]: Այդ հանձնաժողովի նախագահն էր հանրապետության վարչապետ Վազգեն Մանուկյանը, իսկ տեղակալը՝ ՀՀ էկոնոմիկայի պետական կոմիտեի նախագահ Հրանտ Բագրատյանը: Հանձնաժողովի գլխավոր խնդիրը տնտեսական արմատական վերափոխումների գիտական հիմունքների ու սկզբունքների մշակումն էր, բազմակացութաձև տնտեսության անցնելու, ձեռներեցության և սեփականության բոլոր ձևերը զարգացնելու, մոնոպոլ երևույթները վերացնելու մեխանիզմների ապահովումը: 1992 թ. հուլիսին Վ. Մանուկյանի հրաժարականից հետո նրան փոխարինած Խ. Հարությունյանը 1993 թ. փետրվարին նույնպես հրաժարվեց այդ պաշտոնից՝ չհամաձայնելով տնտեսական արմատական վերափոխումների ծրագրի իրագործման հետ: Նրան փոխարինած Հ. Բագրատյանն իր վրա վերցրեց շուկայական տնտեսական բարեփոխումները կենսագործելու պատասխանատվությունը՝ ստանալով համաշխարհային միջազգային ֆինանսական կազմակերպությունների օգնությունը: Այդ ծրագիրը, սակայն, լայն մասշտաբով կենսագործվեց միայն 1994 թ. դեկտեմբերին, ԼՂՀ-ում պատերազմը դադարելուց 7 ամիս անց:

Տնտեսական բարեփոխումների ամենասկզբից պետությունը ձգտում էր կտրուկ կրճատել արտադրության մեջ իր դերը և մասնավոր բաժինը դարձնել տնտեսական զարգացման հիմնական աղբյուր: Այս բնագավառում իրականացվող հետևողական քաղաքականությունը հանգեցրեց նրան, որ արդեն 1995 թ. համախառն ներքին արտադրանքի կեսից ավելին անցավ մասնավոր անձանց ձեռքը: Դա կատարվեց ի հաշիվ ձեռնարկությունների զանգվածային սեփականաշնորհման և մասնավոր գործարարության շուկա թափանցելով:

Հանրապետությունում վարվող սոցիալ-տնտեսական քաղաքականության մշակման ժամանակ թույլ տրվեցին կոպիտ սխալներ: Շուկայական տնտեսությանն անցնելու հիմնական բաղադրիչը հանրապետության ղեկավարությունը համարեց գների ազատականացումը: Բայց այդ գործընթացը հանգեցրեց ապրանքների

[315] ՀԱԱ, ֆ 113, ց 163, գ. 426, թ. 12, 13:

գների կտրուկ աճին, հետևապես՝ բնակչության սոցիալական դրության խիստ վատթարացմանը: Խորհրդային Միությունում հաստատագրված գների գործող համակարգը Հայաստանի համար ապահովում էր արտաքին առևտրի բարենպաստ պայմաններ: Խորհրդային կարգերի պայմաններում հանրապետությունը հնարավորություն ուներ ծեռք բերել վառելիքաէներգետիկ և հումքային էժան պաշարներ և փոխարենը ավելի քանկ գներով արտահանել պատրաստի արտադրանք: Բայց անկախությունից հետո նախկին միութենական հանրապետությունները սկսեցին արտահանվող արտադրանքի գներն արագորեն մոտեցնել միջազգային գներին: Այս պայմաններում էապես կրճատվեցին հանրապետության ներմուծվող ապրանքների ծավալները: Ներմուծվող էներգակիրների և կարևորագույն հումքատեսակների գների կտրուկ աճի պայմաններում խիստ նվազեցին հանրապետության արդյունաբերական արտադրանքի մրցակցության հնարավորությունները ավանդական շուկաներում և առաջին հերթին՝ Ռուսաստանի Դաշնությունում: Գների և առաջարկի անհամապատասխանության հետևանքով պետական ձեռնարկությունների զգալի մասը հայտնվեց կաթվածահար վիճակում և կանգնեց փակման եզրին: Ապրանքների և ծառայությունների մեծ մասի գների ու սակագների ազատ արձակման պատճառով, օրինակ՝ 1992 թ. դեկտեմբերին, 1991 թ. դեկտեմբերի համեմատությամբ, սպառողական ապրանքների գներն աճեցին 13,4 անգամ[316]: 1991-1995 թթ. աստիճանաբար բարձրացան նաև հեղուկ գազի, օդային փոխադրումների, արտաքին հեռախոսային և փոստային կապի ծառայությունների, հացի և էլեկտրաէներգիայի ազատ արձակված սակագները: Ազատ գների՝ վերևից վարչական ռեժիմով ներդրումը փոխեց բոլոր մակարդակներում գործընկերների միջև փոխհարաբերությունների և վճարումների սկզբունքները: Գների ազատականացումը համահունչ չէր տնտեսության նախկինում գոյություն ունեցող պետական-մենաշնորհային համակարգին, ինչը հանգեցրեց ոչ թե բարեփոխման, այլ գործող համակարգի կործանման:

[316] Սինասյան Է., Սոցիալ-տնտեսական վերափոխումները Հայաստանի Հանրապետությունում (1990-2003թթ.), էջ 73:

Եթե 1988-1990 թթ. ՀՆԱ-ում պետական ձեռնարկությունների բաժինը գերակշռող էր (ավելի քան 90%), ապա 1993 թվականից մասնավոր ոլորտի արտադրանքի ծավալը սկսեց գերազանցել պետականին: ՀՀ-ում շուկայական, ազատական տնտեսության անցման սկզբնական էտապում տեղի ունեցան կառուցվածքային էական տեղաշարժեր: Ժամանակագրական առումով այն բաժանվեց երկու փուլի: Առաջին փուլն ընդգրկում է 1990-1993 թվականները: Այն կարելի է անվանել վաղ անցումային ժամանակաշրջան, որը բնութագրվում է տնտեսական խոր ճգնաժամով՝ էներգետիկ տագնապ, արդյունաբերության ճյուղերի կտրուկ անկում, բնակչության եկամուտների և խնայողությունների նվազում, տնտեսության կառուցվածքային փոփոխություններ: Երկրորդ փուլը ընդգրկում է 1994-1997 թվականները, որը կայունության հաստատման և մասնավոր հատվածի ձևավորման ժամանակաշրջան էր և աչքի էր ընկնում կոշտ դրամավարկային, հարկաբյուջետային քաղաքականության իրականացումով, բանկային համակարգի ձևավորումով, գների ազատականացումով, արտադրական միջոցների լայնածավալ մասնավորեցումով կամ սեփականաշնորհման գործընթացներով:

բ. Արդյունաբերությունը

Ծանր վիճակ ստեղծվեց Հայաստանի նորաստեղծ հանրապետության արդյունաբերության բնագավառում: Խորհրդային Միության պայմաններում Հայաստանի արդյունաբերությունը հանդիսանում էր ԽՍՀՄ ընդհանուր արդյունաբերական համալիրի մի մասը և հիմնականում մասնագիտացված էր էլեկտրամեքենաշինության, քիմիայի, էլեկտրոնիկայի, թեթև ու սննդի արդյունաբերության բնագավառներում: Թողարկվող արտադրանքը գլխավորապես արտահանվում էր խորհրդային տնտեսական տարածք և մեծապես կախված էր Ռուսաստանից ցածր գներով ներկրվող վառելիքից, հումքից և կիսապատրաստուկներից: Փաստորեն մինչև անկախացումը երկրի ամբողջ արդյունաբերությունը հանդիսանալով պետական սեփականություն՝ աչքի էր ընկնում իր հա-

մակենտրոնացման բարձր աստիճանով և ներկայացված էր միութենական ու հանրապետական ենթակայության 109 արտադրական ու գիտաարտադրական հզոր միավորումներով, ինքնուրույն հաշվեկշռով աշխատող հազարավոր ձեռնարկություններով: Արդյունաբերության ճյուղի ապրանքային արտադրության ծավալի 62%-ը և արդյունաբերական-արտադրական անձնակազմի 70%-ը բաժին էր ընկնում արտադրական ու գիտաարտադրական միավորումներին, որոնք հիմնականում բաղկացած էին խոշոր և գերխոշոր ձեռնարկություններից: Փոքր և միջին արդյունաբերական ձեռնարկությունները համեմատաբար փոքր թիվ էին կազմում և համեստ բաժին ունեին արտադրության ծավալում[317]:

Խզվեցին միջհանրապետական տնտեսական ավանդական կապերը, դադարեց հումքի ստացումը: ԽՍՀՄ հումքային մատակարարման, արտաքին առևտրական և տնտեսական այլ ենթակառուցվածքների կենտրոնացված համակարգի կազմալուծման հետևանքով Հայաստանի տնտեսությունը, հատկապես արդյունաբերությունը, որն անհամեմատ մեծ կախվածության մեջ էր այլ հանրապետություններից, հայտնվեց ճգնաժամային վիճակում: ԽՍՀՄ փլուզման, շրջափակման և այլ պատճառներով Հայաստանի արդյունաբերությունը հայտնվեց խոր ճգնաժամի մեջ: Զրկվելով հումքից և էլեկտրաէներգիայից, արդյունաբերության մի շարք ճյուղեր դադարեցին գործելուց: Մեծ տերության մի մասը կազմող և նրա հարստություններից ու առավելություններից լիուլի օգտվող հանրապետությունից Հայաստանը դարձավ սեփական վառելիքաէներգետիկ պաշարներից զուրկ, հանքահումքային սուղ պաշարներ ու ոչ մեծ տարածք ունեցող անկախ երկիր: 1992 թ. արդյունաբերական արտադրանքի ծավալը կազմեց նախորդ տարվա 51,8%-ը: Անկում ապրեցին հատկապես մետալուրգիան, շինանյութերի արտադրությունն ու մեքենաշինությունը: Անկախ պետությունը այժմ արդեն ինքնուրույն պետք է լուծեր ծառացած սոցիալ-տնտեսական խնդիրները:

---

[317] Տե՛ս Սարգսյան Ֆ., հոդվածներ, հ. 2, Երևան, 2013, էջ 11:

Մեծ դժվարություններ առաջացան արդյունաբերական արտադրանքի իրացման գործում: Օրինակ՝ 1994 թ. իրացվեց ամբողջ արդյունաբերական արտադրանքի միայն 50%-ը[318]: Դա, անշուշտ, պայմանավորված էր նրանով, որ հայկական արտադրանքը միջազգային շուկայում դեռևս մրցունակ չէր: Լավագույն դեպքում հանրապետության արդյունաբերական արտադրանքը կարող էր սպառվել ԱՊՀ երկրներում, որին, սակայն, խանգարում էր շրջափակումը:

Անբավարար էր օգտագործվում արդյունաբերական, գիտահետազոտական և նախագծային-փորձարարական ներուժը: ՀՀ ԳԱ ակադեմիայի մի խումբ գիտնականներ, որոնք անմիջականորեն կապված էին արդյունաբերական արտադրության հետ, ՀՀ կառավարությանն առաջարկ արեցին վերագործարկել սեփականաշնորհված ռազմական խոշոր նշանակության ավելի քան 700 գործարանների գոնե մի մասը, որոնք չէին աշխատում, և դրանով իսկ հնարավորություն չէին ստեղծում գիտական նորարարությունները ներդնել արտադրության մեջ: Բայց, ինչպես մյուս, այս առաջարկը նույնպես անպատասխան մնաց: Այդ ամենի հետևանքով արդյունաբերական արտադրության կեսից ավելին արդեն բաժին էր ընկնում ոչ թե գիտատար ճյուղերին, այլ սննդի արդյունաբերությանը:

Արդյունաբերության և ամբողջ ժողովրդական տնտեսության անկման հիմնական պատճառներից մեկը էներգետիկ ճգնաժամն էր, որն արդյունք էր Հայկական ատոմակայանի փակման, շրջափակման հետևանքով մազութի ու բնական գազի մատակարարման ընդհատումների: Ճգնաժամի առաջին ձմեռվա ընթացքում (1991-1992 թթ.) խափանվեց բնակչության ջերմամատակարարումը, հատկապես՝ բնակարանային ջեռուցումը: Որպես հետևանք՝ անտառների և զբոսայգիների ամբողջ զանգվածներ անհսկելիորեն հատվեցին ու օգտագործվեցին իբրև վառելափայտ: Տրանսպորտը փաստորեն դադարեց գործելուց: 1992-1993 թթ. կենցաղային կարիքների համար միայն 2-3 ժամ էր էներգիա տրվում: Ազգաբնակչության նկատմամբ, ըստ էության, իրականացվեց էներ-

[318] Տե՛ս Սինասյան Է., նշված աշխ., էջ 106:

գետիկ տեռոր: Անհրաժեշտ ֆինանսական միջոցներ չլինելու պատճառով բազմաթիվ ենթակայաններ և բաշխիչ ցանցեր ենթարկվեցին քայքայման: Էլեկտրաէներգիայի դեֆիցիտի պայմաններում էներգիայի գողությունը դարձավ համատարած երևույթ:

Անկախ պետականության հաստատումը տեսականորեն պետք է նախադրյալներ ստեղծեր Հայաստանի տնտեսության վերակազմման, հասարակական հարաբերությունների դեմոկրատացման ու զարգացման համար; Բայց հակառակը կատարվեց: Գնալով դանդաղեցին ժողովրդավարական գործընթացները, քանի որ հանրապետության կառավարող քաղաքական ուժը՝ ՀՀՇ-ն, հետևապես նաև երկրի ղեկավար մարմիններն աստիճանաբար հեռացան ժողովրդական շարժման իդեալներից: Կարճ ժամանակում կառավարման տարբեր օղակներում ընդգրկվեցին կրթական և մասնագիտական պատրաստություն և աշխատանքային փորձ չունեցող պաշտոնատեներ, մարդիկ, որոնք հայրենիքին, ժողովրդական շահերին ազնվորեն ծառայելու փոխարեն տոգորված էին հարստանալու կրքով[319]: Կառավարման համակարգում տիրապետող դարձավ շահամոլությունը, գլուխ բարձրացրին նաև այլ բացասական երևույթներ: Սկսվեց հասարակության մի փոքր մասի մոտ երկրի հարստությունների կենտրոնացման և ժողովրդի վիթխարի զանգվածների սեփականազրկման, աղքատացման ու թշվառացման գործընթացը:

1992 թ. օգոստոսին ընդունվեց «Պետական ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբեկտների սեփականաշնորհման և ապապետականացման մասին» օրենքը, որով սկիզբ դրվեց հանրապետությունում արդյունաբերական ոլորտի սեփականաշնորհման գործընթացին[320]: Օրենքն ամեն տարի լրացվում էր նոր որոշումներով: Համաձայն այդ օրենքի սահմանված կարգի ՀՀ քաղաքացիներին տրվելու էին այսպես կոչված սեփականաշնորհման սերտիֆիկատներ (վաուչերներ), իսկ պետական ձեռնարկության գույքի արժեքի 20 տոկոսը անհատույց տալով՝ սեփակա-

[319] Տե՛ս Հովսեփյան Ս., ՀՀՇ-ն և հայ ժողովրդի մեծ ողբերգությունը, Երևան, 2002, էջ 32, 58, 89, 94, 116, 888:
[320] ՀԱԱ, ֆ 113, ց 165, գ. 41, թ. 1,3:

նաշնորհվելու էր տվյալ ձեռնարկության աշխատակիցներին:

Արդյունաբերական ձեռնարկությունների սեփականաշնորհումն իրականացվեց երկու փուլով: 1992-1993 թթ. սկսվեց փոքր ձեռնարկությունների, իսկ 1995 թվականից միջին ու խոշոր ձեռնարկությունների զանգվածային սեփականաշնորհումը: Այդ գործընթացները գլխավորելու նպատակով 1996 թ. նոյեմբերին կառավարության կազմում ստեղծվեց սեփականաշնորհման և օտարերկրյա ներդրումների նախարարություն, որը 2000 թ. փետրվարից անվանվեց Պետական գույքի կառավարման նախարարություն:[321] Նշված օրենքի հիման վրա 1993 թ. հանրապետությունում սեփականաշնորհվեց 500 ձեռնարկություն, իսկ 1994-1995 թթ. մոտ 800[322]:

Սերտիֆիկատների (վաուչերների) միջոցով արդյունաբերական ձեռնարկությունների զանգվածային սեփականաշնորհման արդյունքում նախկին պետական ձեռնարկությունները հիմնականում վերածվեցին բաց և փակ բաժնետիրական ընկերությունների: Իրականացվեցին վաճառքի տարբեր սխեմաներ՝ բաժնետոմսերի բաժանորդագրություն, աճուրդ, մրցույթով վաճառք, ունեցվածքի վաճառք վարձակալին, բաժնեմասերի հատկացում կոլեկտիվի անդամներին:

Սեփականաշնորհման գործընթացում շեշտը դրված էր շտապողականության վրա, որը հանգեցրեց բազմաթիվ բացասական երևույթների: Եկամուտների կտրուկ անկման պայմաններում բնակչության ճնշող մեծամասնությունը իր սերտիֆիկատները վաճառեց շատ ցածր գներով՝ ընթացիկ կենցաղային հոգսերը հոգալու համար: Գործընթացին մասնակցեց ազգաբնակչության միայն 7%-ը: Պետությունը փաստորեն ինքնակամ հեռացավ սեփականաշնորհման գործընթացի խելացի, ծրագրավորված կառավարումից: Բնակչության շրջանում չիրականացվեց բացատրական աշխատանք, չստեղծվեցին ներդրումային հիմնադրամներ, բացակայում էր սերտիֆիկատների՝ որպես արժեթղթերի շուկան, նոր տնօ-

[321] Տե՛ս ՀՀ պաշտոնական տեղեկագիր, հ 23, 28 փետրվարի, 2000, էջ 8:
[322] Տե՛ս Սինասյան Է., նշված աշխ., էջ 113:

րինողներից չէր պահանջվում ո՛չ երաշխիքներ, ո՛չ էլ գործառույթի ծրագրեր, ինչը տեղի տվեց նոր խախտումների: Չարդարացան նաև սեփականաշնորհումից բյուջեի մուտքերն ապահովելու հույսերը, պետության իրական դրամական եկամուտները սպասվածից առնվազն 10 անգամ ցածր էին: Այս բոլորի հետևանքով խիստ սահմանափակվեցին ՀՀ տնտեսության զարգացման հնարավորությունները:

Արդյունաբերական ձեռնարկությունների ապապետականացումը, որը շարունակվեց նաև հետագա մի քանի տարիներին, ուղեկցվեց օբեկտիվ դժվարություններով և հատկապես սուբեկտիվ բնույթի սխալներով ու չարաշահումներով: Առաջացած քաոսի և ձեռնարկությունների փաստացի սնանկացման պայմաններում սկսված արդյունաբերական օբեկտների զանգվածային «սեփականաշնորհումը» գործնականում մարդկանց մի փոքր խմբի օգտին պետական սեփականության վերաբաժանում հանդիսացավ: Սեփականաշնորհման անվան տակ իրականացվեց համաժողովրդական ունեցվածքի կողոպուտ[323]:

Արդյունաբերական ձեռնարկությունները, ինչպես և առողջապահական, կրթական ու այլ հաստատություններ հապճեպ սեփականաշնորհվեցին և աներևակայելի ցածր գներով «վաճառվեցին» երկրի նորաթուխ կառավարողներից շատերին ու նրանց բարեկամներին[324]:

Սեփականաշնորհված ձեռնարկությունների մեծագույն մասը դադարեց աշխատելուց: Հազարավոր բանվորներ և մասնագետներ դարձան գործազուրկ: Ապապետականացման գործընթացում ամեն ինչ թողնվեց մասնավորի ձեռներեցությանը, իսկ պետությունը շատ դեպքերում մնաց դիտողի դերում[325]:

Ձեռնարկությունների արտադրական հիմնական ու շրջանառու միջոցների յուրացումը հասցրեց արդյունաբերության քայքայմանը, գործազրկության աճին ու արտագաղթին: Գործարանների մե-

---

[323] Տե՛ս Հովսեփյան Ս., նշված աշխ., էջ 53:
[324] Տե՛ս նույն տեղում:
[325] Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս Մինասյան Է., նշված աշխ., էջ 113-226:

ծագույն մասը դադարեց աշխատելուց: Փոխվեց արդյունաբերության նախկին ծրագրավորված կառուցվածքը: Այդպիսով, երբեմնի հզոր համապետական, համաժողովրդական ունեցվածքը, բաժան-բաժան արվելով՝ յուրացվեց[326]:

Եվ դա այն դեպքում, երբ արցախյան ռազմաճակատներում իրենց արյան գնով ու թափած ջանքերով ազգի պատիվն ու հպարտությունը վերականգնած տասնյակ հազարավոր իսկական հերոս-հայորդիների գլխավոր հոգսը շարունակում է մնալ հայրենիքի պաշտպանությունը:

Արդյունաբերական ձեռնարկությունները սեփականաշնորհելուց հետո դրանց ունեցվածքի պահպանման ուղղությամբ գոնե բավարար չափով հոգ չտարվեց, չսահմանվեց անհրաժեշտ վերահսկողություն, որի հետևանքով մետաղյա թանկարժեք, այդ թվում նորագույն, սարքավորումները ջարդոնի անվան տակ վաճառվեցին արտասահմանյան երկրներում, հատկապես Իրանում և Թուրքիայում: Դրանով մի նոր ծանր հարված հասցվեց արդյունաբերությանն ու ամբողջ տնտեսությանը:

գ. Գյուղատնտեսությունը

Որպես շուկայական հարաբերություններին անցնելու գլխավոր պայման Հայաստանի կառավարությունը ձեռնամուխ եղավ գյուղատնտեսական հողերի, պետական կամ հանրային բնակարանային ֆոնդի, պետական ձեռնարկությունների ու անավարտ շինարարական օբյեկտների մասնավորեցման ծրագրի իրականացմանը: Հարկ է ընդգծել, որ 1993-1996 թթ. ՀՀ վարչապետ Հ. Բագրատյանը ագրարային վերափոխումներ սկսելու անմիջական պատճառ էր համարում ներքին և արտաքին մի շարք հիմնախնդիրներ, որոնցից մասնավորապես նշում էր 1988 թ. Սպիտակի երկրաշարժը, որի հետևանքները, ըստ նրա, դրսևորվեցին ոչ միայն և ոչ այնքան նրանում, որ արտադրության ծավալները զգալիորեն նվազեցին, այլ նաև նրանում, որ տնտեսական նախկին

[326] Տե՛ս Հովսեփյան Ս., նշված աշխ., էջ 54:

կառույցները 1989-1990 թթ. գյուղատնտեսական արտադրության վերականգնման հարցում հայտնվեցին լիակատար անգործունյա վիճակում: Դրանով էլ, ուղղակի սրվեց գյուղում արմատական վերափոխումներ կատարելու հասարակական պահանջը:

Խորհրդային տնտեսական համակարգի ճգնաժամը, արտաքին աշխարհի հետ կապող ճանապարհների շրջափակումը, գործազուրկների հսկայական բանակը, էներգետիկ ճգնաժամը և գազի անջատումները զգալի վնասեցին բնակչության գյուղմթերքների պահանջմունքի բավարարմանը ու գյուղատնտեսական արտադրանքի արդյունավետ մշակմանը:[327]

Հետխորհրդային շատ պետություններում տնտեսական քաղաքականության բաղկացուցիչ մասը կազմում էին ագրարային վերափոխումները: Այդպիսի վերափոխումների անհրաժեշտությունը բացատրվում էր երկու հիմնական պատճառով. նախ ժողովրդական տնտեսության մեջ ագրոարդյունաբերական համալիրի ունեցած կարևոր դերով և նախկինում ձևավորված համակարգի անհամապատասխանությամբ նոր մակրոտնտեսական իրավիճակին, ինչպես նաև արտադրության անարդյունավետությամբ, ապա սպառման չուկաների կորուստով սոցիալիստական ճամբարի երկրներում, առաջին հերթին՝ ԽՍՀՄ-ում:

Հայաստանը նախկին ԽՍՀՄ հանրապետություններից առաջինն էր, որ 1991 թ., կարճ ժամանակամիջոցում, սեփականաշնորհեց հողը:

ՀՀ Նախարարների խորհրդի 1991 թ. հունվարի 22-ի N 43 որոշմամբ ստեղծվեց ՀՀ նախարարների խորհրդի հողային վերափոխման և սեփականաշնորհման պետական հանձնաժողով, որի կազմում էր 37 պաշտոնյա: Հանձնաժողովի նախագահն էր ՀՀ Նախարարների խորհրդի նախագահ Վ. Մանուկյանը, իսկ հանձնաժողովի նախագահի տեղակալները չորսն էին՝ ՀՀ Գերագույն Խորհրդի նախագահի տեղակալ Գ. Հարությունյանը, ՀՀ նախարարների խորհրդի նախագահի առաջին տեղակալ, ՀՀ էկոնոմի-

[327] Багратян Г., Земельная реформа: вопросы теории и практики,Ереван, 2003, с. 258.

կայի պետական խորհրդի նախագահ Հ. Բագրատյանը, ՀՀ Նախարարների խորհրդի նախագահի տեղակալ Մ. Գրիգորյանը, ՀՀ Գերագույն խորհրդի պատգամավոր Տեր-Հուսիկ Լազարյանը[328]:

ՀՀ Նախարարների խորհրդի հողային վերափոխման և սեփականաշնորհման պետական հանձնաժողովն ուներ կանոնադրություն, որը սահմանում էր հանձնաժողովի աշխատանքի ընդհանուր դրույթները, նրա հիմնական խնդիրները, իրավունքները, աշխատակարգը, նաև հստակեցնում էր կենտրոնական և շրջանային հանձնաժողովների անելիքները:

Փաստաթղթում նշվում էր, որ Հայաստանի Հանրապետության հողային ռեֆորմի և սեփականաշնորհման պետական կենտրոնական հանձնաժողովը հանդիսանում էր Հայաստանի Հանրապետությունում հողային ռեֆորմը և գյուղատնտեսության (ագրարային) ոլորտում սեփականաշնորհումը կազմակերպող և վերահսկող մարմին[329]:

Հողը մշակողին վերադարձնելու և նրա մասնավոր սեփականատիրությունը խրախուսելու նպատակով հանրապետության խորհրդարանը 1991 թ. հունվարի 29-ին ընդունեց «Գյուղացիական և գյուղական կոլեկտիվ տնտեսությունների մասին» օրենքը, որով 1991-1992 թթ. լուծարվեցին հանրապետությունում եղած 865 կոլտնտեսություններն ու պետական տնտեսությունները, որոնք թողարկում էին ճյուղի արտադրանքի ավելի քան 90%-ը[330]: Դրանց փոխարեն ձևավորվեցին 320 հազարից ավելի անհատական տնտեսություններ: Իբրև սեփականություն ղրանց փոխանցվեց հողերի 66%-ը, անասունների 80%-ը, ինչպես նաև մնացած հիմնական միջոցները՝ գրեթե ամբողջությամբ[331]:

1991 թ. հողի սեփականաշնորհումը ՀՀ-ում իրականացվեց՝ ելնելով հետևյալ սկզբունքներից.

1. Հողը բաժանվեց գյուղի մշտական բնակիչներին՝ ելնելով առկա ընտանիքների քանակից և գյուղի հողային ռեսուրսներից: Այս-

[328] ՀԱԱ, ֆ. 113, ց. 163, գ. 426, թ. 12-13, ց. 165, գ. 42, թ. 4:
[329] Տե՛ս նույն տեղում, թ. 59-64:
[330] Հայաստանի գործող օրենքների ժողովածու (1990-1995թթ.), էջ 80-96:
[331] Տե՛ս Սինասյան Է., նշված աշխ., էջ 81:

տեղ ունենք, որ խոսքը մշակելի հողատարածությունների մասին է, հետևաբար պարզ է դառնում, որ մեկ հողաբաժնի չափը յուրաքանչյուր գյուղի համար տարբեր մեծություն կարող էր ունենալ: Հայաստանի յուրաքանչյուր գյուղական ընտանիք սեփականաշնորհման արդյունքում ստացավ միջին հաշվով 1.5 հեկտար գյուղատնտեսական հողատարածք, այդ թվում 1.1 հեկտար վարելահող:

2. Հողամասերի բաժանումը կատարվեց վիճակահանության սկզբունքով՝ ելնելով յուրաքանչյուր ընտանիքում ընդգրկված ծխերի քանակից: Ցանկության դեպքում մի քանի ընտանիք կարող էր հող ստանալ միևնույն դաշտից, որը հետագայում կդյուրացներ նրանց համատեղ աշխատանքների կազմակերպումը:

3. Հողը տրվեց գյուղացուն վճարովի, փոխհատուցումը սահմանվեց երկու տարում, այսպես կոչված կաղաստրային զուտ եկամտի 70%-ի չափով, որը հաշվարկված էր ըստ հողերի տեսակների (ոռոգելի, անջրդի, այգի և այլն): Այս փոխհատուցման գումարն այնքան չնչին էր, որ կարելի է ասել՝ հողը գյուղացուն տրվեց անվճար կամ խորհրդանշական վճարով:

4. Գյուղատնտեսական մշակովի հողերի 20%-ը միջին հաշվով չսեփականաշնորհվեց՝ նկատի ունենալով գյուղի հետագա զարգացումը: Այդ տարածքները կարող էին տրվել վարձակալությամբ օգտագործելու կամ այլ հանրային կարիքների համար: Շուկայական հարաբերությունների պայմաններում այդ հողերի արդյունավետ օգտագործումը պահանջում էր ածուրդային սկզբունքով դրանց վարձակալում:

5. Նոր օրենսդրությունը թույլատրում էր սեփականաշնորհված հողի ազատ տնօրինում նրա տիրոջ կողմից, այդ թվում՝ օտարում, վաճառք, ժառանգելու իրավունք, վարձակալությամբ տալ կամ վերցնել, օրինական այլ գործարքներ կատարել, որոնք նախկինում արգելված էին:

Վերջապես, օրենքով նախատեսվում էր տեղական իշխանության կողմից հողը հետ վերցնելու իրավունք, հատկապես այն դեպքում, երբ մի քանի տարվա ընթացքում այն չէր օգտագործվում կամ

նրա տերը չէր վճարում օրենքով սահմանված հողային հարկը[332]: Այս կապակցությամբ նշենք, որ իրականում այս դրույթը չէր գործում, քանի որ գյուղացիների մեծ մասը անվճարունակ էր, չէր վճարում հարկը:

Հողի սեփականատեր դարձան բոլոր գյուղաբնակները և այլ վայրերում ապրող նախկին գյուղացիները, որոնք նման ցանկություն էին հայտնել:

Հողի սեփականաշնորհմամբ հաղթահարվեց հողի սեփականության պետական մենաշնորհը և սկիզբ դրվեց հողային նոր համակարգի ձևավորմանը:

Հողի սեփականաշնորհման հետևանքով հանրապետության բնակչության զգալի մասը դարձավ հողի սեփականատեր[333]:

Հողի սեփականաշնորհումը նպաստում էր նաև գյուղական բնակչության զբաղվածության աճին: Օրինակ, 1980-ական թթ. վերջին Հայաստանում գյուղատնտեսության մեջ զբաղված էր 275 հազար մարդ, իսկ 1990- ական թթ. սկզբներին, սեփականաշնորհումից հետո, այդ թիվը սկսեց աճել: 1991-1998 թթ. գյուղատնտեսության մեջ ներգրավված էին 567,8 հազար մարդ[334]: Կարելի է եզրակացնել, որ հողային վերափոխումները նպաստեցին շրջանառության մեջ ազատ աշխատուժի հոսքին:

Հողի սեփականաշնորհման մասին օրենքը, որն ընդունվեց տնտեսական ճգնաժամի ծանր պայմաններում, գյուղական բնակչությանն ապահովեց աշխատանքով և նպաստեց նրա գոյության պահպանմանը, մեղմեց սովի վտանգը: Որոշ չափով բարձրացավ գյուղացիության նյութական շահագրգռվածությունը: Նորաստեղծ գյուղացիական տնտեսությունները փոփոխությունների ենթարկեցին ցանքերի կառուցվածքը, սկսեցին տվյալ պայմաններին համապատասխան բույսեր մշակել և անասուններ պահել: Հողով բավա-

---

[332] Տե՛ս ՀԱԱ, ֆ 123, ց 77, գ.2, թ. 52, 54:

[333] Տե՛ս Մկրտչյան Հ., Հողային հարաբերությունները և արդի ագրարային քաղաքականության հիմնական ուղղությունները ՀՀ-ում, Երևան, 1997, էջ 18:

[334] Տե՛ս Գևորգյան Մ., Ագրարային վերափոխումները ՀՀ-ում, 1991-2000 թթ., է. 00. 01- Հայոց պատմություն մասնագիտությամբ, պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Երևան, 2011, էջ 20:

րարվեց նաև փախստականների մի մասը: Այդ ամենի շնորհիվ գյուղատնտեսական արտադրությունը սկզբնական շրջանում թեև զգալիորեն նվազեց, բայց այնպիսի խոր ճգնաժամ չապրեց, ինչպես արդյունաբերությունը կամ շինարարությունը[335]:

Տնտեսական վերափոխումների սկզբնական փուլում թվում էր, թե գյուղատնտեսությունը հեշտությամբ կհարմարվի շուկայական հարաբերություններին, և փոփոխությունները կարող են գյուղատնտեսության և գյուղի սոցիալ-տնտեսական առաջընթացի արագացման կարևոր կռվան դառնալ: Բայց փաստորեն այդպես չեղավ՝ թույլ տրված մի շարք սխալների պատճառով:

Առաջին, մասնավոր սեփականատիրական հողօգտագործման անցնելը բարդ և տևական գործընթաց լինելով՝ չէր կարելի լուծել մեկ հարվածով: Բայց գործընթացը կատարվեց առանց հողի անհատական մշակման պայմանների, գյուղատնտեսական տեխնիկայի և նրա օգտագործման հնարավորությունների ու այլ խնդիրների խոր քննության: Պատահական չէ, որ մեծ կորուստներ եղան: Հանրապետությունում արձանագրվեց գյուղատնտեսական արտադրանքի, մասնավորապես հացահատիկի և պտղի արտադրության ծավալների կտրուկ նվազում: Ագրարային արմատական վերակառուցումների գործընթացը հանրապետությունում սկսվել էր ոչ թե գյուղացիների պահանջով, այլ իշխանության բարձրագույն մարմինների որոշումներով: Դա ըստ էության գյուղատնտեսության նամենկլատուրային «բարեփոխում» էր: Իշխանությունները ժամանակ ունեին վերափոխումների գործընթացին ըստ հարկի նախապատրաստվելու, անհրաժեշտ պայմաններ ստեղծելու, մեխանիզմներ մշակելու, որոնք ուղղված լինեին գյուղատնտեսության արդյունավետության բարձրացմանը: Գործնականում, սակայն, ագրարային վերափոխումները Հայաստանում սկսվեցին գարնանային աշխատանքներին զուգահեռ, որն անգամ թույլ չտվեց կոլեկտիվ և պետական գյուղատնտեսական ձեռնարկությունների ունեցվածքը, ինչպես հարկն է, գույքագրել և վերագնահատել: Կոլտնտեսությունների և պետական տնտեսությունների

[335] Մանրամասն տե՛ս Մինասյան Է., նշված աշխ., էջ 79-106:

համատարած լուծարումն իրականացվեց հապշտապ, շատ սեղմ ժամանակահատվածում, անկազմակերպ ու վարչահրամայական եղանակով: Գյուղատնտեսական բոլոր գոտիներում տնտեսությունների լուծարումը և հողի սեփականաշնորհումը իրականացվեցին միևնույն ձևով, առանց որևէ տարբերակման, հաշվի չառնվեցին տարբեր գոտիների առանձնահատկությունները:

Երկրորդ, սեփականաշնորհման ընթացքում թույլ տրվեցին աղաղակող անարդարություններ: Համաժողովրդական և կոլտնտեսային ունեցվածքը չնչին գներով հաճախ անցնում էր մարդկանց ձեռքը, որոնք քիչ կամ ընդհանրապես մասնակցություն չէին ունեցել դրա ստեղծմանը: Մեծ չարաշահումներ եղան հատկապես կոլտնտեսությունների և պետական տնտեսությունների անասնագլխաքանակը «քաշխելիս»: Ստեղծված իրադրության մեջ հնարավոր դարձավ նաև հանրային ունեցվածքի մի մասի յուրացումը ֆերմաներում, պահեստներում և այլն:

Վերափոխումների 10 տարվա ընթացքում (1991-2000 թթ.) խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը 690 հազարից նվազել էր 211,3 հազարով կամ 31,2 %-ով: Առանձնապես վատթար վիճակում հայտնվեցին հանրապետության խոզաբուծությունն ու թռչնաբուծությունը: Խոզերի գլխաքանակը այդ նույն ժամանակահատվածում 329,3 հազարից իջավ մինչև 67,9 հազարի, իսկ թռչուններինը՝ 11244,7 հազարից իջավ մինչև 2907,4 հազարի կամ նվազեց 3,9 անգամ: Միայն պետական թռչնաբուծական տնտեսություններում 1992 թ. թռչունների գլխաքանակը կրճատվեց մոտ 18 անգամ[336]: Ճգնաժամային իրավիճակը անասնաբուծության բնագավառում գնալով խորանում էր:

Շատ տեղերում օրենքի լուրջ խախտումներով և պաշտոնական դիրքի չարաշահումներով էր տեղի ունենում անասնապահական շենքերի, գյուղմեքենաների սեփականաշնորհումը, որն «օրինականացվում» էր համապատասխան ակտերով: Ինչ խոսք, նման սեփականաշնորհումը, որը շատ դեպքերում ծառայում էր առան-

[336] Տե՛ս Ֆահրադյան Հ., Ագրարային արմատական վերակառուցումներ Հայաստանի Հանրապետությունում. անհրաժեշտություն. արդյունքներ-հիմնախնդիրներ, Երևան 2003, էջ 165:

ձին մարդկանց, այդ թվում նախկին կուսակցական և խորհրդային ղեկավար գործիչների հարստացմանը, ամենևին ձեռներեցության խթանում չէր:

Երրորդ, կոլտնտեսությունների և պետական տնտեսությունների լուծարման հետևանքով հանրապետությունում մշակվող, առանց այն էլ փոքր մակերես ունեցող հողակտորներն էլ ավելի մանրատվեցին: Յուրաքանչյուր անհատական տնտեսությանը միջին հաշվով հատկացվեց 1,3-1,5 հեկտար հողաբաժին, ըստ որում առավել բնակեցված և պտղաբեր շրջաններում (Արարատյան դաշտ) տնտեսության միջին հողատարածքը կազմում էր մինչև 0,75 հեկտար, երկրի հյուսիս-արևելքում և հարավ-արևելքում՝ 2,5 հեկտարից մի քիչ ավելի: Հող ստանալով՝ գյուղացիությունը սկզբում ոգևորվեց, բայց հետագայում հանդիպելով մեծ դժվարությունների, հրաժարվեց մշակել հողային շատ տարածքներ: Դրան նպաստում էր գյուղացիական տնտեսություններին հատկացված առանձին հողակտորների միջև հեռավորությունը, որ հաճախ հասնում էր 15-20 կիլոմետրի: Այդ պայմաններում մեծապես ընկավ հողային, ջրային և նյութական մյուս միջոցների օգտագործման, ինչպես նաև գյուղատնտեսական վնասատուների և հիվանդությունների դեմ պայքարի արդյունավետությունը, նվազեցին հողերի բերրիության վերականգնման ու բազմապատկման, ածեցրած բերքի փոխադրման, պահպանման և իրացման տնտեսական հնարավորությունները: Տնտեսությունների մասնատման պատճառով խափանվեց գյուղատնտեսության մեջ գիտության և տեխնիկայի նորագույն նվաճումները ներդնելու գործընթացը: Չկարգավորված շուկայական հարաբերություններին անցնելիս, խիստ բարձր գների պայմաններում, գյուղացիական տնտեսությունների զգալի մասը վերածվեց ձեռքի աշխատանքի վրա հիմնված բնատնտեսության և սկսեց առաջնորդվել սեփական սպառման համար մթերքներ արտադրելու պահանջով: Գյուղացիության մեծ մասը զրկվեց գյուղտեխնիկա օգտագործելու հնարավորությունից՝ դրա բազայի փոշիացման պատճառով: Գյուղատնտեսության մեջ շահագործվող մեքենատրակտորային հավաքակազմի շուրջ 90 տոկոսն էլ օգտագործվում էր նորմատիվային ժամկետից 10-15

տարով ավելի[337]: Գյուղում տեխնիկան կենտրոնացվեց առանձին մարդկանց ձեռքում, որոնք այնպիսի գներ էին առաջարկում, որ գյուղացին հնարավորություն չէր ունենում մշակել իր հողը: Հանրապետությունում չկար նույնիսկ պարզունակ գյուղգործիքների արտադրություն:

Չորրորդ, հողը գյուղացուն բաժանելուց հետո պետությունն իր գործը համարեց ավարտված ու մի կողմ քաշվեց՝ թողնելով նրան մեն-մենակ իր հոգսերի հետ: Պետության սուղ միջոցները, արտաքին աշխարհի նյութական ու ֆինանսական օգնությունը հիմնականում օգտագործվում էին ոչ թե գյուղատնտեսության զարգացման, մասնավոր տնտեսությունների արտադրական հնարավորությունների խթանման, այլ պարենի ներմուծման վրա: Ագրարային ճգնաժամի հաղթահարումը պահանջում էր պետության գործուն աջակցությունը (ֆինանսների ու վարկերի տրամադրում, պարարտանյութերի ու վնասատուների դեմ պայքարելու միջոցների հատկացում և այլն), որը չկար: Իսկ առանց դրա գյուղացիական տնտեսությունների մեծ մասը չէր կարողանում կազմակերպել ապրանքային արտադրություն:

Հինգերորդ, հողի սեփականաշնորհումը կենսագործվեց համատարած, այլ ոչ թե մաս առ մաս: Շրջափակման ու պատերազմի պայմաններում ժամանակավորապես կարելի էր պահպանել միայն այն կոլեկտիվ տնտեսությունները, որոնք շահութաբեր էին ու դեռևս կարող էին ապահովել բարձր արտադրողականություն:

Հանրապետության տնտեսական կյանքում իրականացվող կառուցվածքային բուռն փոփոխությունների հետևանքով լրջորեն փոխվեցին գյուղատնտեսությանը ներկայացվող պահանջները: Հողի սեփականաշնորհումից հետո թվում էր, թե գյուղմթերքների արտադրությունը կավելանա կամ գոնե կմնա նույն մակարդակին: Բայց ստացվեց հակառակը:

Հայաստանի Հանրապետության ղեկավարությունն այն կարծիքին էր, որ հողը գյուղացուն վերադարձնելով՝ կլուծվեն բոլոր հարցերը և սեղմ ժամկետում ֆերմերային տնտեսություններ

[337] Տե՛ս Մովսիսյան Վ., Հողի ճակատագրով, Մտորումներ տքնության, էջ 248:

կստեղծվեն: Այդ կանխատեսումը չիրականացավ: Գյուղատնտեսությունն ընկավ դժվարին դրության մեջ: Անասնագլխաքանակի խիստ անկման, գյուղատնտեսական մեքենայական բազայի փոշիացման հետ շարքից դուրս եկավ նաև ոռոգման համակարգը, որը հայտնվեց կատարյալ փլուզման եզրին, կտրուկ նվազեց պարարտանյութերի օգտագործումը: Այդ ամենի հետևանքով 1990-ական թվականների երկրորդ կեսին գյուղացիներից շատերն սկսեցին հրաժարվել իրենց տրված հողերից: Հայաստանի Հանրապետության սակավահողության պայմաններում չէր մշակվում 50-60 հազար հեկտար հողատարածություն[338]:

Այդ ամենով հանդերձ, այնուամենայնիվ, գյուղատնտեսության ոլորտում կատարվեցին որոշ շինարարական աշխատանքներ: 1995 թ. վերակառուցվեցին Հերհերի և Երևանի ջրանցքները, իսկ 1999-2000 թթ.՝ Արզնի-Ծամիրամի, Կոտայքի, Արտաշատի, Հրազդանի մայր և Արմավիրի ու Նալբանդյանի երկրորդ կարգի ջրանցքները, ինչպես նաև ներտնտեսային ոռոգման ցանցերը մի շարք բնակավայրերում[339]:

Մշակվեց Հայաստանի Հանրապետության ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման ծրագիր, որի շրջանակներում գնահատվեցին ջրային պաշարները, մշակվեցին ջրային քաղաքականության հիմունքները, ուրվագծվեցին ջրի առաջարկի և պահանջարկի կառավարման սկզբունքները: Լուրջ կառուցվածքային փոփոխություններ կատարվեցին ոռոգման համակարգում: Հողերի արհեստական ոռոգման կազմակերպումը դարձավ տնտեսական գործունեության ինքնուրույն բնագավառ, որով զբաղվում էին հատուկ ստեղծված «Հայ ոռոգում» միավորման մեկ տասնյակ փակ բաժնետիրական ընկերություններ (ՓԲԸ) և 15 ջրօգտագործողների միություններ (ՋՕՄ):

Այսպիսի պայմաններում անխուսափելի էր Հայկական ատոմային էլեկտրակայանի (ԱԷԿ) վերագործարկումը 1996 թ. և Հրազդանի ջեկի 5-րդ բլոկի շահագործումը: ԱԷԿ-ի վերագործարկումը տեղի ունեցավ Ռուսաստանի Դաշնության տնտեսատեխնիկա-

[338] Տե՛ս Մինասյան է., նշված աշխ., էջ 99:
[339] Նույն տեղում:

կան օգնությամբ: Բարելավվեց էլեկտրամատակարարումը, բայց բնակչության անվճարունակության պատճառով նրա մեծ մասը ի վիճակի չէր վճարել էլեկտրավարձը:

Այսպիսով, չնայած ՀՀ-ում 1991-2000 թթ. իրականացված ագրարային վերափոխումները դրական արդյունքների հետ մեկտեղ թողեցին բացասական հետևանքներ ոչ միայն տնտեսության, այլ նաև սոցիալական ու քաղաքական ոլորտներում, սակայն դրանց իրականացումը պատմական անհրաժեշտություն էր՝ պայմանավորված ժամանակի քաղաքական և տնտեսական առանձնահատկություններով: Ագրարային վերափոխումների հեղինակ Հրանտ Բագրատյանը այն կարծիքին է, որ հողային վերափոխումները միանշանակ դրական էին: Իր «Земельная реформа: вопросы теории и практики» աշխատության մեջ նա գրում է, որ «բարեփոխումների հայկական ուղին ավելի արդյունավետ եղավ, քան ռուսաստանյանը»[340]: Այն լայն ճանաչում ստացավ ոչ միայն հետխորհրդային երկրներում, այլև նրա սահմաններից դուրս: Այն այցելուն դարձավ ԱՊՀ երկրների և միջազգային ֆինանսական կազմակերպությունների համար: Բարեփոխումների նկատմամբ հետաքրքրությունը այնքան մեծ էր, որ ագրոարդյունաբերական հարցերին նվիրված միջկառավարական Խորհրդի մասնակից երկների ներկայացուցիչների հանդիպումներից մեկը տեղի ունեցավ 1995 թ. ամռանը Երևանում, որտեղ ընդունված որոշման մեջ ընդգծվեց այդ փորձի փոխանակման կարևորությունը, «որը ՀՀ-ում կենսագործվելով տանում էր գյուղատնտեսական ֆերմերային տնտեսության զարգացմանը: Այդ փորձի կիրառումը կարևորվում է նաև Բելոռուսիայի, Վրաստանի, Ղազախստանի, Մոլդովայի, Ռուսաստանի Ֆեդերացիայի, Ուկրաինայի հանրապետությունների համար, նրանց ներկայացուցիչների հավաստմամբ և փորձի փոխանակման փաստաթղթերի ստորագրմամբ»[341]:

[340] Տե՛ս Багратян Г., указ.соч., с. 255, 256.
[341] Տե՛ս Багратян Г., указ.соч., с. 255, 256.

դ. Ֆինանսավարկային և հարկային քաղաքականությունը

Արդյունաբերության և գյուղատնտեսության ակնման հետևանքով ծանր կացության մեջ էր հայտնվել նաև Հայաստանի ֆինանսավարկային համակարգը: Միասնական դրամական համակարգի առկայության պայմաններում մինչև 1993 թ. հանրապետությունը կրում էր Ռուսաստանի տնտեսական քաղաքականության ազդեցությունը: Դա հատկապես արտահայտվում էր գների համընդհանուր ազատականացման, դրամավարկային և հարկային քաղաքականության բնագավառներում: Չնայած այս ուղղությամբ հանրապետության իշխանությունների գործադրած ջանքերին՝ Հայաստանն այդպես էլ ամբողջությամբ չընդգրկվեց ռուսական ռուբլու գոտու մեջ: 1993 թ. նոյեմբերին հանրապետության կառավարությունը շրջանառության մեջ դրեց հայկական ազգային դրամը: Ազգային արժույթի կիրարկումից հետո Հայաստանը հնարավորություն ձեռք բերեց ինքնուրույն տնօրինելու տնտեսական բոլոր լծակները: Ազգային դրամի գործածումը անկախ պետականության դրսևորման ձևերից մեկն է: Բայց համապատասխան երաշխիքների բացակայության պայմաններում դրամն արագ արժեզրկվեց: Սղաճի մակարդակն արագորեն աճեց, տեղի ունեցավ ժողովրդի խնայողությունների և ավանդների յուրացում: Ժողովրդի ներդրած գումարները խնայդրամարկղներում փոշիացան: Միլիոնավոր ռուբլիներ կազմող գումարների փոխարեն ազգաբնակչությունը ստացավ դրանց նախկին արժեքից շատ ավելի չնչին արժեզրկված դրամներ, որոնց գների աճի պայմաններում հնարավոր չէր հոգալ անգամ ամենատարրական կարիքները:

Սեփական դրամը շրջանառության մեջ դնելը կառուցվածքային լուրջ տեղաշարժեր առաջ բերեց հանրապետության ֆինանսական համակարգում: Ստեղծվեց Հայաստանի կենտրոնական բանկ, ձևավորվեցին շուրջ 60 առևտրային դրամատներ ու մասնավոր բանկեր: Բանկային վերափոխումները Հայաստանում սկսվեցին 1993 թ. և 1996 թ. ՀՀ «Կենտրոնական բանկի մասին», ՀՀ «Բանկե-

րի և բանկային գործունեության մասին» օրենքների ընդունմամբ[342] ու կիրառմամբ և ազգային արժույթը շրջանառության մեջ մտցնելով:

Բայց գնալով մեծացավ բնակչության անվստահությունը բանկերի հանդեպ: Տասնյակ հազարավոր ավանդատուներին խաբելը, ֆինանսական շուկայում տեղի ունեցող տատանումները բանկերին զրկեցին ազգաբնակչության միջոցները առավելագույնս ներգրավելու հնարավորությունից:

Տնտեսության վրա բացասական խոր ազդեցություն էին գործում նաև արտաքին ցնցումները և հատկապես Ռուսաստանի 1998 թ. ֆինանսական ճգնաժամը, որոնց հետևանքով մի կողմից՝ կրճատվեց կամ լրիվ վերացավ ՀՀ ձեռնարկությունների զգալի մասի արտադրանքի նկատմամբ պահանջարկը, մյուս կողմից՝ նվազեցին մասնավոր դրամական փոխանցումները:

Հանրապետությունում ֆինանսավարկային քաղաքականությունը իրականացվում էր միջազգային ֆինանսական կազմակերպությունների օժանդակությամբ: 1993-1994 թթ. հանրապետությանը տրամադրված արտասահմանյան վարկերի պայմանագրային գումարը կազմեց 1250 մլն դոլար, որի հիմնական մասը հատկացվեց բյուջեի դեֆիցիտի փակմանը, իսկ մի մասը՝ ազգային արժույթի ամրապնդմանը և ուրիշ ոչ արտադրական նպատակների: Փոխանակ վարկերը օգտագործվեին արտադրական ենթակառուցվածքների, արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացման համար, սակայն տեղի ունեցավ դրանց ոչ նպատակային օգտագործում ու փոշիացում: Արդյունքում զարգացավ ստվերային տնտեսությունը և կլանային համակարգը:

Պատահական չէ, որ Ազգային ժողովը ստեղծեց օտարերկրյա վարկերի և փոխառությունների օգտագործման արդյունավետությունն ուսումնասիրող հանձնաժողով, որը 1999 թ. հրապարակեց իր պաշտոնական եզրակացությունը՝ բացահայտելով հսկայական չափերի հասնող գումարների անարդյունավետ օգտագործման, փոշիացման և մսխման աղաղակող փաստեր:

---

[342] Տե՛ս Հայաստանի գործող օրենքների ժողովածուն (1990-1995 թթ.), էջ 480-504:

Հայաստանի վարկավորումը հիմնականում կատարվում էր Համաշխարհային բանկից և Արժույթի միջազգային հիմնադրամից: Այս կազմակերպությունները շատ հաճախ հանդես էին գալիս թելադրողի դերում և իրենք էին որոշում հանրապետության այս կամ այն ճյուղի զարգացումը: Այսպես, Արժույթի միջազգային հիմնադրամի ղեկավարությունը հայտարարում էր, որ Հայաստանը ծանր արդյունաբերություն չպետք է ունենա: Նրան ձեռնտու էր ոչ թե մեքենաշինության զարգացումը, որն ավելի մեծ կապիտալ ներդրում է պահանջում, այլ՝ թեթև և սննդի արդյունաբերության զարգացումը, որը կարող էր կարճ ժամանակում մեծ շահույթ ապահովել:

Հայաստանի արտաքին պարտքը 1991 թ. զրոյական մակարդակից 5 տարի անց կազմեց 850 մլն ԱՄՆ դոլար: Արտասահմանյան վարկերից որոշակի գումարներ հանգրվանեցին կոռուպացված պաշտոնյաների գրպաններում: Հանրապետության արտաքին հիմնական պարտատերերն էին միջազգային ֆինանսական կազմակերպությունները, իսկ երկկողմանի վարկային պայմանագրերով՝ նաև Ռուսաստանի Դաշնությունը, Եվրոպական միությունը, Թուրքմենստանը: Գնալով հանրապետության արտաքին պարտքը ձեռք բերեց ինքնաաճման միտում. երբ պետությունը ստիպված վերցնում էր նոր վարկեր՝ հները մարելու համար[343]:

Պետությունն իր ֆինանսական-տնտեսական վիճակի կայունացումը իրականացնում էր ունեզրկվածներին ևս մեկ անգամ ունեզրկելու, մանր ու միջին առևտուրը խեղդելու հաշվին: Նման քաղաքականության արդյունքում բնակչության հսկայական մեծամասնության համար ստեղծվել էր ծանրագույն կացություն:

Ֆինանսավարկային ոլորտում վճռորոշ տեղ է զբաղեցնում հարկային քաղաքականությունը, որը հիմնականում ուղղված է բյուջեի համալրմանը և մասնավոր հատվածի զարգացմանը: Հայաստանի Հանրապետությունը սկսել էր իրականացնել իր անկախ հարկային քաղաքականությունը՝ 1992 թվականից, սկզբում նմանօրինակելով Ռուսաստանին, հետագայում վարելով ավելի ինք-

[343] Մանրամասն տե՛ս Մինասյան Է., նշված աշխ., էջ 133-144:

նուրույն քաղաքականություն: ՀՀ-ում հարկային հարաբերությունները կարգավորվում են հարկերի, շահութահարկի, եկամտահարկի, գույքահարկի, հողի հարկի (ուղղակի հարկեր), ավելացված արժեքի հարկի, ակցիզային հարկի, պարզեցված հարկի մասին օրենքներով, ինչպես նաև հաստատագրված վճարների մասին օրենքներով, որը հանդիսանում է շահութահարկը և ավելացված արժեքի հարկը փոխարինող վճար:

Հանրապետության անկախության առաջին տարիներին հարկային քաղաքականությունն ուղղված է եղել հարկային բազայի ընդլայնմանն ու հարկային բեռի հավասարաչափ բաշխմանը, սակայն հաշվի չի առնվել հարկային բեռի ազդեցությունը տնտեսավարող սուբյեկտների գործունեության վրա: Ճիշտ է 1997-2000թթ. վերանայվեց հարկային քաղաքականությունը. հարկային օրենսդրությունն էական բարեփոխումների ենթարկվեց, երբ ընդունվեցին հարկային հիմնական նոր օրենքները՝ հիմնված առավելապես միջազգային չափանիշների վրա: Բայց դա չթեթևացրեց հարկային բեռը եկամտահարկի և սոցիալական պարտադիր վճարումների գծով, այն հարկատեսակների, որոնք ուղղակիորեն կապված են արտադրողների և բնակչության եկամուտների հետ: 1997թ. ընդունվեցին «Շահութահարկի մասին», «Եկամտահարկի մասին», «Սոցիալական ապահովման պարտադիր վճարների մասին», իսկ 1998թ. «Տեղական տուրքերի մասին», «Մաքսատուրքերի մասին», 2000թ. «Պարզեցված հարկի մասին» և այլ օրենքներ[344]:

Չնայած այս օրենքներով որոշակի փոփոխություն մտցվեց նախկինում բացառապես ձևական բնույթ ունեցող հարկային օրենսդրության մեջ և գործող համակարգում տեղի ունեցավ հարկային բեռի թեթևացում ի հաշիվ շահութահարկի դրույքաչափերի բացարձակ նվազեցման, այնուամենայնիվ օրենսդրական ոլորտում մնում էին բազմաթիվ չլուծված խնդիրներ. մասնավորապես օրենքով բոլորովին կարգավորված չէին սոցիալական նպաստնե-

[344] Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու (1995-1999) գ. Բ, էջ 202-232, 359-380, 761-790, 304-310, (1999-2000) գ. Գ, էջ 223-229, ՀՀ Սոցիալական ոլորտի իրավական նորմատիվ ակտերի ժողովածու, Երևան 2001, էջ 270, 271:

րի ոլորտը, ոչ բանկային ֆինանսական հաստատությունների գործունեությունը և այլն:

Դեռևս տնտեսության կայուն ու բարձր տեմպերով աճի խթանումը չէր վերածվել այնպիսի հարկային քաղաքականության, որը լուծում կտար ընթացիկ խնդիրներին: Եթե 1998թ. հունվարի 1-ից ավելացված արժեքի հարկի չհարկվող շեմը 1 մլն. դրամի փոխարեն սահմանվեց 2 մլն. դրամ, իսկ 1999թ. հունվարի 1-ից՝ 3 մլն. դրամ, ապա 2001թ. հունվարի 1-ից սահմանվեց 10 մլն. դրամ, իսկ 2002թ. հունվարի 1-ից՝ 30 մլն. դրամ: Նշված շեմից ցածր շրջանառություն ունեցողները համարվեցին պարզեցված հարկ վճարողներ[345]: 1999թ. հունվարից չհարկվող եկամտի ամսական նվազագույն շեմը կազմեց 17 հազար դրամ, իսկ 2001թ.՝ 20 հազար դրամ[346]: Հարկային համակարգը դեռևս ուներ ազատականացման և տնտեսության ստվերայնության կրճատման հնարավորություններ: Մասնավորապես, ավելացված արժեքի հարկի դրույքաչափը բավականաչափ բարձր էր (20%)[347]: Հարկման հարաբերություններում կարևոր նշանակություն ունեցավ 2000թ. օգոստոսին ՀՀ «Ակցիզային հարկի մասին» նոր օրենքի ընդունումը[348], որով այս հարկատեսակի գծով կատարվեցին սկզբունքային մի շարք փոփոխություններ: Մասնավորապես, ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների ցանկից հանվեցին այն ապրանքները, որոնք այս հարկատեսակի եկամուտների կազմում էական նշանակություն չունեին (ոսկերչական իրեր, մորթեղեն, կաշվե արտադրանք և այլն):

Հարկային օրենսդրության փոփոխությունների արդյունքում 2000թ. վերջում հաջողվեց տնտեսավարողներին տրոհել հարկման երկու խոշոր խմբերի՝ հաստատագրված և պարզեցված հարկ վճարողների ու շահութահարկը նախընտրող խոշոր հարկատուն-

---

[345] «Ֆինանսներ և էկոնոմիկա», Հայաստան 1(21), հունվար, 2003, էջ 66:

[346] Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2000 թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 2001, էջ 100-102: Մարդկային զարգացման զեկույց, «Հայաստան», 1999, էջ 27, 107:

[347] Նույն տեղում, էջ 107:

[348] Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու (1999-2000) գ. 9, էջ 343-347:

քի: Ընդ որում, հարկատուի՝ նշված խմբերից որևէ մեկում հայտնվելը կախված էր նաև նրա կամքից:

Վերը նշված գործընթացը հանգեցրեց անուղղակի հարկերի փաստացի գերակայությանը: Հարկային մուտքերի կառուցվածքում անուղղակի հարկերի տեսակարար կշիռը 2000թ., 1994թ. համեմատ, եռապատկվեց և կազմեց շուրջ 70 տոկոս[349]: Նշված գերակայությունը ի վերջո նշանակում էր, որ հարկման ծանրությունը տեղափոխվում է վերջնական սպառողների, այսինքն, առաջին հերթին, քաղաքացիների վրա: Այս երևույթը նպաստում էր չնչին ներդրումներով մասնավորեցված ընկերությունների կապիտալացմանը և ներքին ներդրումների աճին:

1999-2000թթ. հարկային քաղաքականության խստացումը և դրա միջոցով տնտեսության ստվերայնության հաղթահարմանն ուղղված միջոցառումները կրեցին տարերային և անհետևողական բնույթ, ինչպես անկախության առաջին հինգ տարիներին կատարվող պարզունակ հարկահանությունը, որից ստվերային տնտեսությունը գրեթե չտուժեց, այլ փոխարենը կազմալուծվեց գործարար ակտիվության հիմքը հանդիսացող մանր ու միջին առևտուրը: Ուղղակի և անուղղակի տարաբնույթ հարկերն այնպես խեղդեցին մանր ու միջին արտադրողներին, որ վերջիններս, զանգվածաբար սնանկանալով, հեռացան հանրապետությունից: Փակվեցին սննդի, սպասարկման, շինարարության և այլ ոլորտներում գործող հսկայական քանակությամբ ձեռնարկություններ: Ուժեղացավ դրամագլխի արտահոսքը առանց այդ էլ ֆինանսական և նյութական աղքատ պաշարներ ունեցող հանրապետությունից: Դրա փոխարեն մեծացավ ծայրահեղ ունևորներին ծայրաստիճան չքավորներից բաժանող հսկայական անդունդը: Տնտեսական կյանքը հանրապետությունում սկսեց կանգ առնել, և աղքատացած ժողովրդից նորանոր հարկեր հավաքելը դարձավ մշտական զբաղմունք: Հարկային այս ծանր բեռը ավելի ծանրացրեց բնակչության սոցիալական վիճակը:

---

[349] ՀՀ ԿԲի 2000 թ. տարեկան հաշվեկշիռը, Բանկային լրատու, ՀՀ ԿԲ, Երևան 2000, էջ 15:

1998թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտավ ՀՀ «Գույքահարկի մասին» օրենքը[350], որով հարկվող օբյեկտի կազմից հանվեցին հիմնական միջոցների մի զգալի խումբ մեքենաներ ու սարքավորումներ: 2003թ. սկզբից «Գույքահարկի մասին» օրենքով վերանայվեց հատկապես թանկարժեք գույքի հարկման կարգը՝ առանձնատների և շքեղություն համարվող ավտոմեքենաների համար սահմանելով հարկման ավելի բարձր դրույքաչափեր: Դեռևս 1991թ. օգոստոսի 1-ից գործողության մեջ մտավ ՀՀ «Հաստատագրված վճարների մասին» օրենքը[351], որով օրենսդրական կարգավորում ստացան մինչ այդ ՀՀ կառավարության որոշումներով կանոնակարգվող գործունեության առանձին տեսակների համար հաստատագրված վճարների գանձման հարաբերությունները, և միասնականացվեց մինչ այդ կիրառվող բոլոր հաստատագրված վճարների հաշվարկման ու վճարման կարգը:

Հարկ է նշել, որ հարկային բեռի հաշվեկշռվածության առումով հարկային եկամուտների կառուցվածքում ընդունելի չէ գույքահարկի խիստ նվազ տեսակարար կշիռը (այն դասվում է ուղղակի հարկերի թվին), քանզի այդ հարկի արդյունավետությունը չնչին է, միևնույն ժամանակ տնտեսական ներգործության արդյունավետությունը՝ զրոյական: Մինչդեռ այս պարագայում այն պետք է ունենար հստակ տնտեսական խթանիչ դեր:

Հարկային քաղաքականության արդյունավետության առանցքային հիմնախնդիրներից էր կարգազանց հարկատուների նկատմամբ տույժերի ու տուգանքների կիրառումը բացառապես դատարանների իրավասությանը փոխանցելու հարցը, որով վերջապես կվերականգնվեր գործող Սահմանադրության պահանջը, ըստ որի անձը սեփականության իրավունքից կարող էր զրկվել միայն դատարանի վճռով: Այդ հարաբերությունների կարգավորման համար կարևոր նշանակություն ունեցավ ստուգումների մասին համապատասխան օրենքի ընդունումը, որով խստիվ սահմանափակվեցին

[350] Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու (1995-1999) գ. Բ, էջ 429-440:
[351] Նույն տեղում, էջ 648-677:

կրկնակի ստուգումները, բացի դրանից արգելվեց կազմակերպության համալիր ստուգումը որևէ պետական մարմնի կողմից:

1990-ական թթ. հարկային ոլորտում կիրառվող տուգանքային կարգը շատ հաճախ հանգեցնում էր հարկատուի համար ֆինանսական ծանր ու անելանելի վիճակների: Ելքը հաճախ հանգեցնում էր պետության կողմից համաներումների կիրառմանը, որն ստեղծելով արդարության պատրանք՝ միաժամանակ օրինականացնում էր երկակի ստանդարտների կիրառումը: Արդյունքում՝ հարկային պարտքեր կուտակած անձինք, ըստ էության, պետությունից ստացել են անուղղակի վարկավորում, իսկ օրինապահ հարկատուները, չօգտվելով մնացած հարկային արտոնություններից, օրենքի շրջանակներից դուրս պարտադրվող կանխավճարների հաշվին ստիպված էին փակելու անբարեխիղճ հարկատուների ապառքների կուտակումից առաջացող բյուջեի մուտքերի չնախատեսված ճեղքվածքի մի մասը՝ փաստորեն իրականացնելով բյուջեի անտոկոս վարկավորում: 1997թ. վերջում և ամբողջ 1998թ. ընթացքում կիրառված համաներումը նախ, հանգեցրեց ապառքների նվազած գումարի նկատմամբ հաշվանցումների կրկնապատկմանը, իսկ 1998թ. վերջում գրեթե կրկնապատկեց ապառքների գումարը: 2001թ. հունվարին պետական բյուջեի ապառքները կազմել են 134 մլն դրամ, որը հավասար է 2000թ. բյուջեի հարկային եկամուտներին[352]:

2000թ. հարկային օրենսդրության մեջ կատարված փոփոխությունները առավելապես վերաբերում էին շահութահարկի և եկամտահարկի սկզբունքներին: Շահութահարկի միասնական սանդղակի սահմանումը հավասար պայմաններ ստեղծեց ներդրողների համար և նպաստեց մրցունակ ձեռնարկությունների կապիտալացման մակարդակի բարձրացմանը: Եկամտահարկի հարկման մեխանիզմում պրոգրեսիվ հարկման սկզբունքից հրաժարվելը նպաստեց տնտեսության ստվերայնացման ամենատարածված դրսևորումներից մեկի՝ աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցների ոչ լրիվ հայտարարագրման նվազեցմանը: 1998-2002թթ. ՀՀ-ում իրականացված հարկային քաղաքականությունը

[352] ՀՀ գործող օրենքների ժողովածու (1999-2000), գ. Գ, էջ 128, 130:

հիմնականում բնորոշվեց հարկային խոչընդոտների առավելագույն վերացմամբ: Տնտեսության ստվերային հատվածի, ինչպես նաև հարկման փաստացի բազայի ընդլայնման շնորհիվ ՀՆԱ-ի նկատմամբ հարկման մակարդակը, 1997թ. համեմատությամբ, 2002 թվականին աճեց ավելի քան 1,8 տոկոսով[353]: Այդ ժամանակահատվածում ներդրումների և զբաղվածության խրախուսման նպատակով շարունակաբար նվազեցվում էին հարկային դրույքաչափերը:

Հարկային հարաբերություններում վերջնականապես պարզություն մտցնելու նպատակով անհրաժեշտ էր ընդունել այն իրողությունը, որ ապահովագրության պարտադիր վճարներն իրենց տնտեսական բովանդակությամբ առնչություն չունեին սոցիալական ապահովագրության հետ: Աշխատողը կամ նրա գործատուն, փաստացի, առանց որևէ պայմանագրային հարաբերության և կոնկրետ շահի վճարում էր ոչ թե ապահովագրավճար, այլ՝ սոցիալական հարկ: Այս դեպքում աշխատողի համար միևնույն էր, թե որքան կվճարի գործատուն իր համար, քանի որ այդ վճարն իր հետագա կենսաթոշակի հետ որևէ կապ չուներ և կոչված էր լուծելու կենսաթոշակառուների և սոցիալապես այլ անպաշտպան խմբերի սոցիալական նվազագույն ապահովման խնդիրը: Նպատակահարմար էր նշված վճարը փոխարինել սոցիալական հարկով և դրա գանձման վարձատրությունը ամբողջովին փոխանցել հարկային մարմիններին, որը կնպաստեր գանձումների մակարդակի բարձրացմանը, պետական ապարատի զգալի կրճատմանը և միաժամանակ կպահպանվեր սոցիալական հարկի վճարումը գործատուների կողմից: Դրա ներդրմամբ երկրում տարանջատվեցին սոցիալական ապահովագրության համակարգերը:

1998թ. սկսած դրական ձեռքբերումներ նկատվեցին հանրապետությունում իրականացվող մաքսային քաղաքականության բնագավառում: Այն նպատակ ուներ ապահովելու մաքսային սահմանով և տարածքում ապրանքաշրջանառության նկատմամբ մաքսային արդյունավետ հսկողությունը, արտաքին տնտեսական գոր-

---

[353] Հինգ տարի անց, նախագահ Ռ. Քոչարյանի հաշվետվությունը, Երևան, 2003, էջ 5:

ծունեությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների համար միասնական և մրցակցային պայմանների ձևավորումը, ներքին շուկայի պաշտպանությունը:

1998-2002թթ. հանրապետությունում իրականացված տնտեսական բարեփոխումների շրջանակներում մաքսային օրենսդրությունը բազմիցս ենթարկվեց լրամշակումների, մաքսային հարաբերությունների և հիմնախնդիրների օրենսդրական կարգավորման՝ Առևտրի համաշխարհային կազմակերպությանը ՀՀ անդամակցության շրջանակներում ստանձնած պարտավորությունները կատարելու, մաքսային քաղաքականությունը տնտեսական դինամիկ աճին ներդաշնակելու, միջազգային ինտեգրացիոն գործընթացներին ՀՀ մասնակցությունն ապահովելու նպատակով:

1999թ. հունվարի 1-ից գործողության մեջ մտած «Մաքսատուրքերի մասին» ՀՀ օրենքով սակագնային կարգավորման համակարգում պահպանվեց վերջնական սպառման ապրանքների համար արժեքային մեթոդով հաշվարկվող ներմուծման մաքսատուրքերի 10 տոկոսը, իսկ արտադրական նշանակության ապրանքների և արտահանվող ապրանքների մաքսատուրքերի 0 տոկոս դրույքաչափերի համակարգը:

2001թ. հունվարի 1-ից գործողության մեջ մտավ ՀՀ նոր մաքսային օրենսգիրքը, որով լուծում ստացան մի շարք կարևորագույն հիմնահարցեր՝ մաքսային գործի կատարելագործման և արտաքին տնտեսական գործունեությամբ զբաղվող սուբյեկտների արդյունավետ աշխատանքի կազմակերպման համար: Օրենսգրքով հստակեցվում էին մաքսային արժեքի որոշման կարգը, ապրանքների ծագման երկրի որոշման կանոնները, մտավոր սեփականության իրավունքի պաշպանության գործում մաքսային մարմինների գործառույթները կանոնակարգող նորմերը և այլ հիմնահարցեր: Առավելագույնս կարգավորվեցին և հստակեցվեցին հայտարարագրման, մաքսային ձևակերպումների, հսկողության և մի շարք այլ գործառույթների ու մաքսային գործի բաղադրիչների դրույթներն ու ընթացակարգերը: Օրենսդրությամբ ամրագրվել են մաքսային սահմանով ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխող անձանց իրավունքներն ու դրանց սահմանափա-

կումների հիմքերը: Սակագնային կարգավորման արդյունավետության բարձրացման նպատակով, մաքսատուրքերի 0 և 10 տոկոս դրույքաչափերի համակարգին զուգահեռ, որոշ ապրանքների համար սահմանվեցին մաքսատուրքերի հաստատագրված դրույքաչափեր, որոնք կազմեցին այդ ապրանքների մաքսային արժեքի 10-12 տոկոսը: Ոչ սակագնային կարգավորման համակարգում հստակ սահմանվեցին մաքսային սահմանով որոշ ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխման արգելքներ և սահմանափակումներ, որոնք հիմնականում վերաբերում էին այն դեպքերին, երբ ապրանքներն ու տրանսպորտային միջոցները վտանգ էին ներկայացնում պետական և ազգային անվտանգության, հասարակական կարգի, մարդու կյանքի և առողջության, կենդանական և բուսական աշխարհի, ներքին սպառողական շուկայի պաշտպանության համար և այլն: Մաքսային քաղաքականության շրջանակներում կատարվեցին նաև տարածաշրջանում ազատ առևտրի պայմանագրերի կնքմանն ու վավերացմանն ուղղված միջոցառումներ, որոնց շնորհիվ հնարավոր եղավ ընդլայնել արտաքին շուկան և կարգավորել արտաքին առևտրի կառուցվածքը:

Չնայած ձեռք բերված դրական տեղաշարժերին՝ հանրապետությունում դեռևս թույլ էր ֆինանսավարկային և հարկային համակարգը: Անցման շրջանի սկզբում հանրապետությունում առանց սահմանափակման ֆինանսական շուկա մուտք գործելու հնարավորությունն ու թույլ վերահսկողությունը վտանգեցին որոշ բանկերի հուսալիությունը և տեղի տվեցին տարբեր չարաշահումների՝ մեծ վնաս հասցնելով ֆինանսական կառույցի նկատմամբ երկար ժամանակ գոյություն ունեցող վստահությանը:

Խոշոր բանկերը գտնվում էին վերակառուցման գործընթացում: Ֆինանսական համակարգի կարևոր հիմնախնդիրներից էին կապիտալի շուկայի թերզարգացածությունը, երկարաժամկետ վարկավորման համար անհրաժեշտ ինստիտուտների բացակայությունը (ապահովագրական ընկերություններ, կենսաթոշակային և ներդրումային մասնավոր հիմնադրամներ և այլն): Այդ առումով ռազմավարական լուրջ բացթողում էր դրամատնային համակարգի նկատմամբ բնակչության և զանազան կազմակերպությունների

անվստահության մթնոլորտի ձևավորումը, ինչը նախկին ԽՍՀՄ խնայդրամատան և այնուհետև 1990-ական թթ. սկզբում սնկի պես աճող ֆինանսադրամատնային կազմակերպություններում ավանդների փոշիացման ու կորստի հետևանք էր:

Այդ երևույթի անուղղակի դրսևորումներից էր ստվերային դրամատնային տնտեսությունը, երբ բնակչության առանձին խավերի բարձր տոկոսադրույքներով տրամադրեցին ավանդավարկեր, որոնք չէին արտացոլվում վարկերի վերաբերյալ վիճակագրական հաշվետվություններում, բայց սպասարկում էին ազգաբնակչության զգալի մասին:

ՀՀ բանկային համակարգի զարգացման աստիճանը չէր համապատասխանում տնտեսական աճի պահանջներին: Հաշվարկված է, որ երկրում եղած խնայողությունների 10-20%-ն է մտնում բանկային ոլորտ: Ընդհանուր բանկային ակտիվները ՀՀ-ում կազմում էին ՀՆԱ-ի 22%-ը (Վրաստանում 13,5%, Ադրբեջանում՝ 28%), իսկ բանկային համակարգի կողմից տրամադրված վարկերի հարաբերությունը ՀՆԱ-ին 11,2% էր (Վրաստանում՝ 7,5%, Ադրբեջանում 10%): ՀՀ բանկային համակարգը բնութագրվում էր արտասահմանյան կապիտալի համեմատաբար մեծ տեսակարար կշռով՝ 41,5% (Վրաստանում՝ 32%, Ադրբեջանում 10%): Իհարկե, պետք է նկատի ունենալ, որ Ադրբեջանում, ի տարբերություն Հայաստանի ու Վրաստանի, կան պետական երկու խոշոր բանկեր: Դեպոզիտներ/ՀՆԱ հարաբերակցությունում ՀՀ-ն առջևում էր՝ 9,3% (այդ թվում բնակչության մասնաբաժինը՝ 4,7%: Վրաստանում այն կազմում էր 5% (1,7%), իսկ Ադրբեջանում՝ 6,4% (1,9%)[354]: 1990-ական թթ. ՀՀ բանկային համակարգի զարգացման՝ վերը բերված ցուցանիշները հարևան երկրների համեմատությամբ ավելի բարենպաստ էին, սակայն տնօրինած պաշարամիջոցներով դեռևս չէին ապահովում տնտեսության իրական հատվածի անհրաժեշտ վարկավորումը: Երկրի ընդհանուր բյուջեի հարկային եկամուտների տեսակարար կշիռը 1994 թվականից սկսած ՀՆԱ-ի

[354] 10 лет содружества независимых государств (1991-2000), стат. сборник, Москва, 2001, ст. 39-43, 150, 199, 200, 301:

նկատմամբ շարունակում էր նվազել մինչև 1996թ. ներառյալ՝ 1994թ.-11,5%, 1995թ.-10,7%, 1996թ.-10,6% (երբ գրեթե չէր փոխվել ՀՆԱ-ի ճյուղային կառուցվածքը, տեղի էր ունեցել հարկային բազայի ընդլայնում) և հետագայում, մինչև 2001թվականը աստիճանաբար բարձրացել էր 3-6%-ով: Սակայն մտահոգիչ էր, որ այդ տարիներին անընդհատ նվազել է շահութահարկը՝ 1995թ.- 4,6%-ից մինչև 2000թ.- 2,0%, բացառություն է 1999թ.- 2,2%, իսկ եկամուտը 1995թ.-1,3%-ից հաջորդ տարիներին չէր հասել 2%-ի[355]:

Այսպիսով, պետությունն իր ֆինանսատնտեսական վիճակի կայունացումն իրականացնում էր մանր ու միջին առևտուրը սահմանափակելու հաշվին: Չստեղծվեց միջին խավը: Բնակչության մեծամասնության համար ստեղծվել էր ծանր կացություն:

ե. Արտահանումն ու ներմուծումը

Խորհրդային համակարգի փլուզումով հանրապետությունը կորցրեց խորհրդային վիթխարի շուկան, որտեղ նա բնութագրվում էր տնտեսական հզորությամբ, քանի որ ներմուծվող ռեսուրսների մի զգալի մասը ՀՀ-ում վերամշակվում էր, և ստեղծված նոր ապրանքները ածած արժեքներով, հակադարձ հոսանքով թափանցում էին Միության այլ վայրեր: Նման պայմաններում հանրապետության հանքահումքային ռեսուրսների ներմուծման և արտահանման հաշվեկշռում 1980-ական թվականներին գերակշռում էր ներմուծումը, մինչդեռ ներմուծման ու արտահանման ընդհանուր հաշվեկշռում արժեքային արտահայտությամբ գերակշռում էր արտահանման բաժինը: Հանրապետության մեքենաշինության, քեթև և մասամբ սննդի արդյունաբերության վերամշակող շատ ճյուղեր, շինարարության մեջ օգտագործվող մետաղե կոնստրուկցիաներ խարսխված էին ներկրովի հումքի վրա: Արդյունաբերության այդ ճյուղերի կենսագործունեությունն ապահովելու համար, սկսած 1980-ական թթ. յուրաքանչյուր տարի, միջին հաշվով, ԽՍՀՄ

---

[355] Սարգսյան Հ., Տնտեսական քաղաքականությունը Հայաստանում, պետության դերը, Երևան, 2001, էջ 47:

տնտեսական շրջաններից, մասնավորապես Ռուսաստանից և Ուկրաինայից, հանրապետություն է ներկրվել շուրջ 1մլն տոննա սև մետաղ: Հանրապետությունում մշակվող գունավոր և հազվագյուտ մետաղների մի զգալի մասը, ամբողջ պողպատե և գունավոր մետաղների գլանվածքը, խողովակները,, թեթև արդյունաբերության ճյուղերի մեծ մասը՝ տեքստիլ, կաշվի, կոշիկի և այլն, հիմնված էին ներկրովի հումքի վերամշակման և դրանից պատրաստի արտադրանք ստանալու վրա: Ամբողջությամբ ներմուծվել են բնական գազն ու նավթամթերքները: Տարեկան ներկրվել է մեծ քանակությամբ պարենային և ոչ պարենային արտադրանք. այդ թվում հանրապետությունում սպառվող ալյուրը, շաքարը, թեյը՝ ամբողջությամբ, կաթնամթերքի 80 և մսամթերքի 60 տոկոսը[356]:

1990-ական թվականների սկզբներին արտաքին աշխարհի հետ ապրանքաշրջանառությունը հիմնականում ընդգրկում էր բնակչության սպառման ապրանքներ՝ հացահատիկ ու հացամթերք, կաթնամթերք, մսամթերք, շաքարավազ և այլն, ինչպես նաև էներգակիրներ՝ նավթամթերք ու գազ: Այդ ներմուծումն ուղեկցվում էր պարբերական ընդհատումներով: Խստորեն փոխվեց ներմուծվող ու արտահանվող ապրանքների տեսականին: Այլևս անհնար էր արտաքին աշխարհ արտահանել առավել խոշոր արդյունաբերության և Հայաստանին բնորոշ՝ մեքենաշինության, քիմիական, գունավոր մետաղածուլության, մասամբ նաև շինանյութերի և թեթև արդյունաբերության բազմազան արտադրատեսակներ, որոնք նախկինում մեծ ծավալներով արտահանվում էին աշխարհի շատ երկրներ, մասնավորապես խորհրդային հանրապետություններ[357]: Պատճառը ոչ միայն վերամշակվող հումքի գների տասնապատիկ աճն էր, արտաքին աշխարհի կողմից մեր արտադրատեսակների նկատմամբ պահանջարկի բացակայությունը, այլև բեռնափոխադրումների անհնարինությունը՝ պայմանավորված դրանց բարձր քաշի, ծավալների մեծության, անմրցունակության, փոխադրման բարձր գների հանգամանքներով և այլ: Առ այսօր էլ

[356] Տե՛ս Խոջաբեկյան Վ., Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX-XX դարերում XXI դարի շեմին, էջ 392:
[357] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. 113, ց. 165, գ. 346, թ.2,3:

շրջափակված ՀՀ-ն իր բեռնափոխադրումները նշանակալից չափով իրականացնում է օդային ուղիներով: Շատ քանկ է նստում նաև Վրաստանի տարածքով բեռները Բաթումից Հայաստան տեղափոխելը:

1995-2000թթ. արտաքին աշխարհի հետ ապրանքաշրջանառության ծավալը կայունացման միտում էր դրսևորել, բայց դա տեղի էր ունենում արտահանվող ապրանքների ծավալների համեմատությամբ ներմուծվող ապրանքների ծավալների ավելացման պայմաններում: Դիտարկվող ժամանակահատվածում հանրապետության արտաքին ապրանքաշրջանառությունը ավելացել էր շուրջ 2,5 անգամ: Արտահանման 2000թ. մակարդակը՝ 297,5 մլն ԱՄՆ դոլարով, մոտ 13 անգամ զիջում էր 1988թ. մակարդակը (երբ այդ տարում 1 ռուբլին հավասարեցվում էր 1 դոլարի) և կազմում ՀՆԱ-ի 15,5%-ը[358]: Ինչ վերաբերում է արտահանման և ներմուծման կառուցվածքներին, ապա դրանք արդյունավետ համարել չէր կարելի, քանի որ արտահանման հիմնական մասը ավելացված փոքր արժեք ունեցող ապրանքներն էին: 2000թ. արտահանվող ապրանքների երկու երրորդը կազմել են թանկարժեք քարերը և մետաղները (40,8%), ոչ թանկարժեք մետաղները (14,9%), հանքահումքային արտադրանքը (11,5%)[359]:

Ներմուծվում էին էներգակիրներ, սննդամթերք, կիսաֆաբրիկատներ և այլն: Ներմուծմանը փոխարինող արտադրանքի դրական միտումներ են զգացվում գյուղատնտեսական մթերքներ վերամշակող որոշ արտադրություններում: Այդ մասին են վկայում թիվ 6 աղյուսակի տվյալները:

---

[358] Տե՛ս Հայաստանի Հարապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2000 թ. հունվար-դեկտեմբերին, էջ 121:
[359] Տե՛ս նույն տեղում, էջ 124:

Աղյուսակ 6

Հայաստանի Հանրապետության արտահանման և ներմուծման ծավալները 1997-2000թթ. ըստ արտադրանքի խոշոր խմբերի (մլն ԱՄՆ դոլար)[360]

Արտադրանքի խմբեր	1997	տես. կշիռ %	1998	տես. կշիռ %	1999	տես. կշիռ %	2000	տես կշիռ %
I. ԱՐՏԱՀԱՆՈՒՄ								
Սննդամթերք՝ խմիչք	27.9	12	15.7	7.1	15.9	5.6	26.2	8.9
Արդ. պաշար, հումք, կիսաֆ. պատր. արտ,տրանսպորտ. միջոց.	136.2	58.53	173.5	78.7	171.3	76.2	219.5	74.7
Վառելիք, վառելանյութ	0.17	0.07	10.2	4.9	19.2	8.5	20.6	7
Լայն սպառման ապրանքներ	68.3	29.4	20.3	9.2	24.1	9.8	27.7	9.4
ԸՆԴԱՄԵՆԸ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ	232.5	100	220.5	100	231.7	100	300.5	100
II. ՆԵՐՄՈՒԾՈՒՄ								
Սննդամթերք՝ խմիչք	245.1	31.1	201.2	22.3	128.7	15.9	175.2	20.9
Արդ. պաշար,հումք, կիսաֆ. պատր. արտ,տրանսպորտ. միջոց.	222.3	42.5	286.1	31.7	338.7	41.8	373.6	44.5
Վառելիք,վառելանյութ	208.3	23.3	223.8	24.8	170.2	21	172.6	20.5
Լայն սպառման ապրանքներ	215.3	26.4	173.3	19.2	165.9	20.4	118.7	14.1
ԸՆԴԱՄԵՆԸ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ	892.3	100	902.4	100	811.2	100	840.2	100

[360] Տե՛ս «Ֆինանսներ և էկոնոմիկա», հ. 6, Երևան, 2001, էջ 26:

Հանրապետության արտաքին ապրանքաշրջանառության պատկերն ավելի է պարզորոշվում, երբ այն դիտարկվում է մեզ սահմանակից մի շարք երկրների շարքում: Տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՀ արտաքին ապրանքաշրջանառության և մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի ցուցանիշով 2000թ. մենք դեռևս զիջող դիրքերում էինք:

Արտաքին աշխարհի հետ առևտրաշրջանառությունը մեծ մասամբ կատարվում էր հեռավոր արտասահմանի հետ:

Արտասահմանյան երկրների բաժինն ավելացել է թե՛ արտահանման և թե՛ ներմուծման ընդհանուր ծավալում, իսկ ԱՊՀ երկրների բաժինը խստորեն նվազել է: Եթե 1995թ. հեռավոր արտասահման է առաքվել ՀՀ արտահանության 37,4%-ը, ապա 2000թ.՝ 75,5%-ը, իսկ ՀՀ ընդհանուր ներմուծման մեջ դրա բաժինը 50,4%-ից բարձրանալով դարձել էր 80,9%[361]: Բավական է նշել, որ արտաքին առևտրաշրջանառության հաշվեկշռի բացասական մնացորդը արագ թափ էր հավաքել և 1995 թ. 403 մլն դոլարից 2000թ. դարձել էր 587,6 մլն դոլար: 1995թ. հեռավոր արտասահմանին բաժին էր ընկնում այդ մնացորդի 59,2%-ը, իսկ 2000թ. 83,7%-ը: Այսինքն՝ դրա մեջ չէին մտնում էներգակիրների, մասամբ նաև հացահատիկի և ալյուրի ծախսերը, որոնք հիմնականում ներմուծվում էին ԱՊՀ երկրներից[362]: Այդ նույն ժամանակահատվածում ԱՊՀ երկրներից ներմուծումը նվազել է 50,4%-ով: ԱՊՀ երկրների բաժինն արտաքին ապրանքաշրջանառության մեջ կազմում էր արտահանման 24,46 և ներմուծման 19,01%-ը[363]: ԱՊՀ երկրներից, արտահանման և ներմուծման ամենամեծ բաժինն ընկնում էր Ռուսաստանի Դաշնությանը՝ 15-ական տոկոս, Վրաստանին համապատասխանաբար՝ 5,19 և 2,21, Ուկրաինային՝ 1,10 և 1,39, Թուրքմենստանին՝ 1,86 և 0,12%-ը և մնացած հանրապետություններին՝ 1,31 և 0,29%[364]:

Հայաստանի Հանրապետությունն առևտրական կապեր ուներ աշխարհի 55 երկրների հետ: Հանրապետությունից արտադրանք էր արտահանվում 36 երկիր, իսկ ներմուծվում էր 55 երկրներից: Այդ հա-

---

[361] ՀՀ Սոցիալ-տնտեսական վիճակը 1996 թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 1997, էջ 29-30, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2000 թ. հոկտեմբերին, էջ 121:
[362] Նույն տեղում:
[363] ՀՀ արտաքին առևտուրը 2000 թ., Երևան, 2001, էջ 13:
[364] Նույն տեղում:

մակարգում ծավալի տեսակետից 10 երկրներ ունեին բարձր տեսակարար կշիռ: Այդ են վկայում թիվ 7 աղյուսակի տվյալները:

Աղյուսակ 7

Հայաստանի Հանրապետության արտաքին ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում համեմատաբար խոշոր տեղ զբաղեցնող 10 երկրների 1997-2000 թթ. ցուցանիշները (հազ. ԱՄՆ դոլար)[365]

Երկիր (կազմակերպութ.)	Արտահանում				Ներմուծում			
	1997	1998	1999	2000	1997	1998	1999	2000
Ռուսաստան	63000.0	40000.0	33855.5	44559.9	196749.1	191403	149877.7	137157.5
Իրան	42601.8	31392.3	34160.8	30089.0	88671.4	63912.5	78450.4	82324.4
ԱՄՆ	7110.0	11566.9	16008.4	37861.1	116145.5	96301.2	85669.3	102675.1
Բելգիա	46966.1	49838.9	84226.8	75051.4	49673.2	54631	85192.1	84372.2
ԱՄԷ	2938.4	3696.2	2612.4	5479.1	71731.4	54480.7	40195.8	41728.2
Թուրքմենստան	13751.9	22726.4	6068.5	5544.2	48512.3	553.5	777.4	1109.3
Վրաստան	10726.9	9573.3	11100.1	15989.3	38248.3	26830.2	26855.7	19801.1
Թուրքիա	7152.7	2987.8	1128.49	1527.9	38396	56779.8	40152.15	40462.4
Իտալիա	368.7	421.6	1442.8	2683.2	36244.2	34583.1	23725.1	25710.6
Գերմանիա	9281.6	9303.1	10200.8	12917.9	26221.1	34037	34244.2	36486.9

Ինչ վերաբերում է հեռավոր արտասահմանյան այլ երկրներին, ապա նրանց արտահանության բաժինը կազմում էր 75,54%, իսկ ներմուծմանը՝ 80,99%: Ընդ որում, բավականին մեծ էր Եվրոպական միության բաժինը, որը կազմում է արտահանման 35,97% և ներմուծման 34,19%-ը[366]: Հիմնականում արտահանվում էին թանկարժեք մետաղներ, աղամանդ և այլն: Բելգիային բաժին էր ընկնում համապատասխանաբար 25,23 և 9,53, ԱՄՆ-ին՝ 12,73 և 11,6, Շվեյցարիային՝ 2,97 և 2,59, Իրանին՝ 9,32 և 9,37, Մեծ Բրիտանիային՝ 3,39 և 6,72, Գերմանիային՝ 4,34 և 4,10, Հունաստանին՝ 1,84 և 4,7, Իտալիային՝ 0,9 և 2,9, Թուրքիային՝ 0,51 և 4,46%[367] (Աղյուսակ 8):

---

[365] «Ֆինանսներ և էկոնոմիկա», հ. 6, էջ 24:
[366] Նույն տեղում:
[367] Նույն տեղում, էջ 13, 14, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2000 թ., էջ 122-123:

Աղյուսակ 8

Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 1997-2000թթ. - ըստ երկրների (հազ. ԱՄՆ դոլար)[368]

Երկրի անվանումը	Արտահանում				Ներմուծում			
	1997	1998	1999	2000	1997	1998	1999	2000
1	2	3	4	5	6	7	8	9
Ընդամենը, այդ թվում	223495,4	220516,0	231669,1	300487,4	892321,5	902389,2	811267,7	884733,3
ԱՊՀ երկրներ, ներառյալ	*94671,7*	*80536,3*	*56359,5*	*73363,2*	*299136,7*	*230204,9*	*187154,8*	*173613,0*
Աղրբեջան	-	-	-	-	62,7	1,5	-	-
Բելոռուս	1147,7	820,6	1060,9	903,2	3320,7	1754,6	641,9	624,5
Վրաստան	10726,9	9573,3	11100,1	15989,3	38248,3	26830,2	26855,7	19801,1
Ղազախստան	856,0	366,5	518,9	1268,8	2073,5	456,0	572,1	872,7
Ղրղզստան	44,8	37,3	44,4	13,9	7,2	7,1	1,3	1,5
Ռուսաստան	62898,5	39986,3	33855,5	44559,9	215862,0	191403,2	149877,7	137157,5
Տաջիկստան	41,1	-	-	0,1	3,0	16,2	-	-
Թուրք-մենստան	13751,9	22726,4	6068,5	5544,2	27671,4	553,5	777,4	1109,3
Ուզբեկստան	152,4	444,2	242,9	157,5	202,8	70,2	362,6	707,6
Ուկրաինա	3491,8	3971,8	2096,3	3271,0	11560,2	8932,3	7926,3	12341,9
Մոլդովա	150,3	36,6	207,4	131,6	84,2	68,1	70,5	927,0
Արցախ	1410,3	2573,3	1164,5	1523,9	13,4	111,9	69,2	69,9
Ոչ ԱՊՀ երկրներ, ներառյալ	*137823,6*	*139979,7*	*175309,7*	*227124,2*	*593184,8*	*672184,3*	*624112,9*	*711201*
ԵՄ երկրներ, այդ թվում	66370,1	76276,3	106542,6	107014,4	176763,8	259090,9	252843,6	302828,7
Ավստրիա	765,9	50,0	4,1	8,6	2263,7	2755,6	2891,2	2554,7
Բելգիա	46966,1	49838,9	84226,8	75051,4	49673,1	54631,0	85192,1	84372,2
Ֆինլանդիա	-	0,1	32,6	9,0	2096,4	1756,2	2024,9	1599,6
Ֆրանսիա	42,4	66,2	520,9	466,3	19460,7	27413,5	12339,8	17558,7
Գերմանիա	9281,6	9303,1	10200,8	12917,9	26222,2	34037,0	34244,2	36486,9
Նիդերլանդ-ներ	6236,5	7912,3	438,1	2632,0	15437,8	9647,8	5122,6	12426,9
Իռլանդիա	75,8	322,0	0,8	0,3	801,7	8054,0	1256,7	1026,9
Մեծ Բրիտանիա	1160,9	8097,8	9443,9	1099,2	1450,5	69136,0	6703,3	59480,7
Իտալիա	368,3	421,6	1442,8	2683,2	36244,3	34583,6	27725,1	25710,6
Հունաստան	157,9	249,0	167,8	2963,2	10223,2	9131,3	13029,0	54003,0
Շվեդիա	0,5	-	5,8	94,6	662,2	521,2	1926,6	1551,0
Դանիա	0,9	0,3	23,2	-	2488,1	4360,1	1718,8	1416,5
Լյուքսեմբուրգ	56,2	-	-	-	177,1	800,1	212,8	2366,0
Իսպանիա	1256,1	0,2	34,4	79,5	471,7	1814,4	1709,8	2035,4
Պուրտուգա-լիա	1,0	4,8	0,5	9,2	91,1	448,9	418,8	280,6
Արևելյան Եվրոպայի երկրներ, ներառյալ	*525,1*	*1349,3*	*1318,5*	*1839,3*	*34720,9*	*29331,3*	*20139,1*	*19026,2*
Չեխիա	24,1	3,1	16,0	73,0	1250,5	3756,6	2476,8	1850,0
Սլովակիա	10,2	216,4	181,1	3,1	2105,0	1481,2	223,7	527,3

[368] Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2000թ., էջ 5-42:

Սլովենիա	-	-	0,4	12,8	354,4	620,1	630,9	981,5
Բուլղարիա	464,4	1028,5	881,8	655,9	25443,3	16186,1	12081,8	7216,4
Լեհաստան	-	24,2	36,4	34,7	1634,1	3154,3	2722,8	2068,1
Ռումինիա	-	-	0,5	399,9	1224,0	981,3	451,7	266,7
Հունգարիա	-	47,9	104,4	391,3	2470,2	2961,9	1480,9	1848,9
Մակեդոնիա	26,5	29,2	-	-	-	63,6	0,2	33,1
Հարավսլավիա			98,0	268,5	39,5	129,1	70,4	153,6
Խորվաթիա	-	-	-	-	-	-	-	80,6
Մերձբալթյան երկրներ, ներառյալ	*522*	*707,2*	*485,5*	*596,0*	*1399,2*	*3995,2*	*2433,9*	*1741,1*
Լատվիա	143,2	435,7	311,9	346,6	448,1	1660,0	1028,4	913,5
Լիտվա	318,0	269,1	50,6	89,1	777,7	2102,7	1317,7	598,4
Էստոնիա	60,8	2,4	113,1	160,4	173,4	232,5	87,8	229,2
Այլ երկրներ, ներառյալ	*70406,3*	*61646,9*	*66973,0*	*117674,4*	*380300,9*	*379767,0*	*348696,3*	*391523,2*
Նորվեգիա	5,8	-	0,2	1,1	578,77	1556,6	642,3	108,9
Շվեյցարիա	1572,0	2481,8	3748,8	8829,9	22635,9	25634,9	16415,2	22920,3
Կիպրոս	449,3	223,5	349,7	1640,9	2966,6	5240,8	5730,7	5797,8
Իրան	42583,6	31392,2	34160,8	30089,0	88671,4	63912,5	78450,4	82328,4
ԱՄՆ	7110,0	11569,9	16008,4	37861,1	116086,6	96301,2	85669,3	102675,1
Թուրքիա	7152,7	2987,5	1128,5	1527,9	38395,9	56779,8	40152,2	40462,4
Սիրիա	2754,1	1295,5	112,1	145,1	4981,9	3925,3	1755,5	1752,5
ԱՄԷ	2938,4	3696,2	2612,4	5479,1	71731,5	54480,7	40195,8	41728,2
Լիբանան	4219,0	1345,4	223,2	287,0	1993,3	8237,9	9355,3	4572,2
Հարավային Կորեա	2,0	2,8	20,9	2,0	690,3	807,0	1412,2	669,7
Հնդկաստան	21,8	264,2	3,8	361,2	1333,4	3672,8	3896,9	5474,9
Ճապոնիա	-	61,1	61,6	211,9	2988,6	6189,3	2349,7	3822,2
Չինաստան	-	123,9	66,9	573,1	7296,3	9960,4	4888,2	5413,3
Կանադա	73,2	367,7	1129,5	983,6	6585,1	5629,3	10023,5	5396,0
ՀԱՀ	-	4,5	0,5	5,0	1130,0	85,6	105,5	56,7
Եգիպտոս	30,6	0,1	71,5	11,7	13,5	124,8	0,7	2,1
Նոր Զելանդիա			1,8	21,4	21,2	94,8		202,3
Պանամա	187,2	-	-	-	302225,6	22083,1	23580,7	20957,1
Սինգապուր	-	-	-	0,1	534,0	848,7	594,8	352,3
Հորդանան	-	-	-	41,8	147,9	-	1,7	13,1
Այլ երկրներ	1306,7	5833,5	7272,5	29601,5	3284,3	13801,3	23475,6	46817,6

Ըստ որում, Արաբական Էմիրություններից և այլ երկրներից ներմուծվող ապրանքների մեջ հաճախ մեծ բաժին էին կազմում էժան, անորակ ապրանքները: Հարկավոր էր այդ ներմուծումը փոխարինել տեղական ապրանքների արտադրությամբ, որը կբարձրացներ բնակչության զբաղվածությունը, կենսամակարդակը և կիջեցներ արտագաղթը: Այսպես, օրինակ, Իրանում պատրաստված արդյունաբերական էժանագին և անորակ շատ ապրանքներ՝ սոսինձ, ներկեր, պլաստմասսայից պատրաստված բազմաթիվ տարաներ վաճառվում էին ՀՀ-ում: Իրանից անարգել

ներմուծվող ճակնդեղի սպիրտի, չամիչի, բանջարաբոստանային մշակաբույսերի՝ ձմերուկ, սեխ, վարունգ, լոլիկ, կարտոֆիլ, սխտոր և այլն, մրգերից՝ խնձոր, նուռ, տանձ, կեռաս և այլն, այլ երկրներից՝ Ֆրանսիայից, Հոլանդիայից հավի մսի, իր ժամանակին Թուրքիայից ու Իրանից հավի ձվի ներմուծումը հանգեցրել էր հանրապետությունում այդ մթերքների արտադրության ոլորտում զբաղվածության կրճատմանը:

Գյուղացին ի վիճակի չլինելով վերականգնել նույնիսկ գյուղատնտեսական մթերքների ինքնարժեքը՝ դադարել էր դրանք մշակելուց: Վերջիններս հիմնականում էժան գներով վաճառում էին վերավաճառողներին, որոնք քաղաքներում վաճառում էին բարձր գներով: Նույնիսկ այս պայմաններում 2000թ. ընթացքում կարտոֆիլը, կաղամբը և որոշ մթերքներ ամբողջությամբ չվաճառվեցին: Դրանց մեծ մասը փչացավ և չօգտագործվեց: Դա վնասում էր ներքին շուկայի զարգացմանը: Բանն այն է, որ ներմուծվող այդ մթերքներն ավելի էժան էին, քան հանրապետությունում արտադրվող որոշ համանուն արտադրատեսակները: Երկրի գլխավոր շարժիչ ուժը պետական ազգային շահերն էին, հայրենական արտադրողների շահերի պաշտպանությունը: Պետության ակտիվ միջամտությամբ ապրանքաշրջանառության ոլորտը պետք է զարգանար ոչ միայն ներկրովի պատրաստի արդյունքների, այլև առաջին հերթին, սեփական արտադրության հիման վրա:

Շուկան իր հակադարձ ազդեցությունն էր ունենում արտադրության զարգացման ընթացքի և ուղղությունների ձևավորման վրա: Մեծ մասամբ դրսից բերվող ապրանքներով բնակչության ապրանքաշրջանառության ոլորտի կեղծ աշխուժացումը միայն օժանդակ դեր կարող էր խաղալ: Այդ ճանապարհով շուկան մշտապես գործել, իսկ ժողովուրդը կերակրվել չէր կարող: Ինչպես մասնավոր, այնպես էլ պետական միջոցներով արտասահմանյան երկրներից ներմուծվող ապրանքատեսակների ներհոսքը պետք է ուղեկցվեր հանրապետությունում այդ պահին ստեղծված սեփական արտադրության ապրանքատեսակների արտահանության ընդլայնմամբ՝ հիմքում ունենալով աշխատանքի միջազգային բաժանմանը ՀՀ մասնակցությունը: Այդ պայմաններում արտա-

հոսում էին նախորդ տասնամյակներում ստեղծված և արդեն կուտակված պատրաստի արժեքները՝ ոսկին, արդուզարդը, պղինձը, մետաղյա զանգվածը և այլն՝ աղքատացնելով երկիրն ու հասարակությանը:

Ի տարբերություն ՀՀ-ի՝ զարգացող երկրներում առևտրի ոլորտում զբաղվածության աճն ուղեկցվում էր առևտրի ձեռնարկությունների կտրուկ աճով: Խոշոր առևտրական ֆիրմաներն իրենց ուժերը կենտրոնացնում էին արտաքին առևտրի մեջ: Ներքին շուկայում իշխում էր մանրավաճառությունը: Մինչդեռ ՀՀ-ում մանրավաճառներն արտամղեցին առևտրի կենտրոնացված օբյեկտները: Մանրավաճառների ձեռքին էր սննդի արդյունաբերության ապրանքների մեծ մասը: Սննդի ապրանքատեսակների վաճառքով էին զբաղված փողոցներում, մայթերի վրա, ուր պատահեր: Չէին ապահովվում անհրաժեշտ հիգիենիկ պայմանները: Սննդի մասնավոր վաճառքի շատ ապրանքատեսակներ՝ պանիր, միս, մսամթերք, թխվածքներ, ամառվա ընթացքում՝ բանջարեղենը և մրգերը հիվանդությունների տարածման աղբյուր էին: Ուստի այն պետք էր վերցնել խիստ հսկողության տակ:

Հանրապետության շուկայում բազմաթիվ մթերքների, ապրանքների վաճառքով զբաղված էին նաև օտարերկրյա քաղաքացիներ: Շատ երկրներում, այդ թվում ԱՄՆ-ում, Գերմանիայում, Ճապոնիայում, Ֆրանսիայում, Իտալիայում, Սկանդինավյան երկրներում ազատ աշխատատեղերում առաջին հերթին ընդգրկում էին իրենց քաղաքացիներին[369]: Դա ամրագրված էր օրենսդրությամբ: Այլ երկրների քաղաքացիներին աշխատանքի էին ընդունում միայն այն ժամանակ, երբ ազատ տեղերի համար իրենց քաղաքացիները հայտ չէին ներկայացրել:

Հանրապետության աշխատանքային շուկայում տեղեր էին զբաղեցնում նաև Իրանի և այլ երկրների քաղաքացիներ: Նրանք զբաղեցնում էին առևտրական կետերը, խանութները, պահեստները, այն դեպքում, երբ շրջապատը լեցուն էր որևէ զբաղմունք ակնկալող Հայաստանի քաղաքացիներով: Դրանց մի մասը,

[369] Խոջաբեկյան Վ., նշված աշխ., էջ 397:

թերևս վերավաճառողներ էին: Այս հարցադրումը չի հակասում այլ երկրների հետ բարիդրացիական տնտեսական կապերի սկզբունքներին: ՀՀ-ում մասնավոր ձեռներեցության միջոցներով արտահանության համար համապատասխան օրենսդրական դաշտ ապահովելու, դրա նկատմամբ պետական հովանավորչություն իրականացնելու հետ մեկտեղ անհրաժեշտ էր ընդլայնել երկկողմանի պետական համաձայնագրերի մակարդակով առևտրական շրջանառության ծավալները, որոնք իրական պայմաններ կստեղծեին երկու երկրների տնտեսության առանձին ճյուղերի փոխսերտաճման համար:

Անկախ Հայաստանի պատմության ընթացքում տնտեսական ամենամեծ հաջողություններից էր հանրապետության անդամակցությունը Առևտրի համաշխարհային կազմակերպությանը, որը տեղի ունեցավ 2002թ. դեկտեմբերի 10-ին: ՀՀ-ն դարձավ ԱՀԿ-ի 145-րդ լիիրավ անդամը: Սա վկայում էր, որ երկրի օրենսդրությունը համապատասխանել էր միջազգային նորմերին: ԱՀԿ-ին ՀՀ անդամակցությամբ միջազգային կորպորացիաների համար բացվում էր հանրապետությունում ներդրումներ կատարելու ճանապարհ: Այն իրական երաշխիք էր ստեղծում աշխարհում ընդունված կանոններով գործել մեր երկրում, անսակարկ ներդրումներ անել՝ վստահ լինելով կապիտալի զարգացման, շահույթի ապահովման առումով: Միջազգային այդ կազմակերպությանն անդամակցելու հաջորդ կարևոր երաշխիքն այն էր, որ հայաստանյան արտադրողը երրորդ երկրների արտադրողների պես նույն պայմաններով կարող էր ազատ մտնել այդ երկրների շուկա: Այսինքն՝ հանրապետությունում ներդրվել էր մի համակարգ, որտեղ գործում էին բոլորի համար նույն օրենքները: Սա ապահովում էր և՛ արտահանման, և՛ ներքին արտադրողի, և՛ ներդրումների շահավետությունը, միաժամանակ ստեղծելով քաղաքական կայունության երաշխիքներ, քանի որ ԱՀԿ պահանջների շրջանակներում ընդունված օրենքների, օրենսդրության փոփոխությունը շատ դժվար գործ էր: Կազմակերպության անդամ բոլոր երկրները հենց սկզբից պարտավոր էին պահպանել գոյություն ունեցող բոլոր ռեժիմները:

ԱՀԿ-ին ՀՀ անդամակցությունը տրամաբանական շարունակությունն էր լճացման ու ճգնաժամային տնտեսությունից զարգացմանը միտված տնտեսության հիմքերի ստեղծման: Հանրապետությունն աստիճանաբար լուծում էր իր համար բարդ խնդիր՝ մուտք է գործում նոր տնտեսական կառուցվածք՝ համաշխարհային տնտեսություն և միջազգային շուկա: Ընդհանուր առմամբ ազգային տնտեսական կապերի աշխուժացման համար Հայաստանի Հանրապետությունում ստեղծված էր բարենպաստ մթնոլորտ: ՀՀ-ն զգալիորեն բարելավել է իր դիրքերը գործարար աշխարհում: Աշխարհահռչակ «Հորիքիջ» հիմնադրամի և «Ուոլ Սթրիթ Ջորնալ» թերթի հրապարակած 2002թ. «Տնտեսական ազատականության ինդեքսի» համաձայն նորանկախ հանրապետություններից ամենաբաց տնտեսությունն ուներ Հայաստանը, որը 1996թ. զբաղեցրած 115-րդ տեղից 2002թ. զեկույցում բարձրացել էր 44-րդ տեղը՝ այն կիսելով Հունգարիայի և Հարավային Կորեայի հետ և նկատելիորեն առաջ էր անցել անմիջական հարևան երկրներից[370]: Նույն զեկույցի համաձայն 156 երկրների շարքում Թուրքիան զբաղեցնում էր 119-րդ, Վրաստանը՝ 113-րդ, Ադրբեջանը՝ 104-րդ, Իրանը՝ 146-րդ, իսկ Ռուսաստանը՝ 135-րդ տեղը: Իսկ զուտ միջազգային առևտրային քաղաքականության առումով, ըստ նույն զեկույցի, ՀՀ-ն Հոնկոնգի, Սինգապուրի և Էստոնիայի հետ միասին գնահատվում էր որպես աշխարհի ամենաբաց տնտեսություն ունեցող երկրներից մեկը:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետությունը անկախություն հռչակելուց հետո դարձավ ինքնուրույն, արտաքին լիիրավ տնտեսական սուբյեկտ, իսկ միջազգային տնտեսական հարաբերությունները դարձան հանրապետության զարգացման կարևորագույն գործոններից մեկը:

ԱՊՀ երկրներից վճռական դերը պատկանում էր Ռուսաստանին, որը բնական գազից բացի, ապահովում էր Հայկական ատոմակայանը միջուկային անհրաժեշտ վառելիքով: Անկախության հռչակումից հետո Ռուսաստանի Դաշնության հետ Հայաստանի

[370] «Ֆինանսներ և էկոնոմիկա», 1(21) հունվար, 2003, էջ 60, 61:

Հանրապետությունը կնքել էր 40-ից ավելի պայմանագրեր տնտեսության տարբեր բնագավառներում համագործակցելու համար: Հայաստանը բնական գազ ներմուծում էր Ռուսաստանից՝ օրական 5,2 մլն մ^3: 2001թ. վերջերին գազի ներմուծման դիմաց կուտակված ՀՀ պարտքը կազմում էր մոտ 100 մլն. դոլար: 2002թ. հոկտեմբերին հայ-ռուսական բանակցությունների արդյունքում Հայաստանի Հանրապետության արդյունաբերական որոշ ձեռնարկություններ՝ Երևանի «Մարս», «Էլեկտրոն» և այլ խոշոր մեքենաշինական համալիրների բաժնետոմսերի մեծ մասը, Հրազդանի ջեկը տրամադրվեց Ռուսաստանին: Այս ձեռնարկություններում ռուսական կողմը պարտավորվել էր իրականացնել ներդրումներ, ստեղծել մեծ թվով աշխատատեղեր: Համատեղ ձեռնարկությունների ստեղծման նպատակով համաձայնագրեր էին ստորագրվել նաև Մեծ Բրիտանիայի, Չինաստանի, Իրանի և այլ երկրների հետ, պայմանագիր էր կնքվել Երևանի «Նաիրիտ-1» ՓԲԸ-ի և բրիտանական «Ռանտաս» ընկերության միջև: Ըստ այդ պայմանագրի՝ բրիտանական կողմը պետք է կատարեր ներդրումներ, տեղադրեր ժամանակակից սարքավորումներ, զգալի միջոցներ հատկացներ այս խոշոր ձեռնարկության տեխնիկական վերազինման համար, մարեր նրա պարտքերն ու ապահովեր անխափան աշխատանքը: Բրիտանական կողմն արդեն 2001թ. այդ նպատակներով ներդրել էր 30 մլն. դոլար: Երևանի «Նաիրիտ» ձեռնարկության տեխնոլոգիայով կաուչուկի արտադրության համատեղ ձեռնարկություն ստեղծվեց նաև Չինաստանում: Չինաստանի մասնագետները վերակառուցել, մոնտաժել և շահագործման էին հանձնել Հրազդանի ջեկի 5-րդ էներգաբլոկը:

Գյուղատնտեսության բնագավառում ևս համագործակցությունն ակնհայտ էր: Հայ մասնագետների ջանքերով Չինաստանում Հայաստանից տարված տնկիներով հիմնադրվել էին հայկական անուշահամ ծիրանի այգիներ, որոնք բերքատու էին դարձել:

Տնտեսական լայն համագործակցության պայմանագրեր էին կնքվել նաև Իրանի հետ: Հայաստանում և Իրանում գործում էին հայ-իրանական բազմաթիվ ձեռնարկություններ: Միայն 2001թ.

երկու երկրների ապրանքաշրջանառությունը հասել էր 80 մլն. դոլարի[371]:

Փաստորեն, Հայաստանի Հանրապետության արտաքին տնտեսական կապերի ռազմավարական հիմնական ուղղությունը նրա տնտեսական բազմակողմանի ինտեգրացումն էր համաշխարհային տնտեսությանը:

Այսպիսին էին հանրապետության տնտեսական վերափոխումների արդյունքները անցած տասից ավելի տարիների ընթացքում:

գ. Վերափոխումները սոցիալական ոլորտում
Բնակչության զբաղվածությունն ու սոցիալական վիճակը

ՀՀ սահմանադրությամբ ամրագրված է, որ Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետություն է: Այս դրույթը ենթադրում է, որ պետությունը ժողովրդի առջև պարտավորություն է ստանձնում պայմաններ ստեղծել անհատի համար՝ կազմակերպելու նրա կենսագործունեությունը ընտանիքում, աշխատանքային կոլեկտիվում և հասարակության մեջ:

Սոցիալական ոլորտում բարեփոխումների իրականացումն անհնար է առանց հասարակական կյանքի բոլոր կողմերի արմատական փոփոխությունների, իսկ հաջողությունների մասին հնարավոր է դատել բնակչության կենսամակարդակի աստիճանով և գործընթացի նկատմամբ բնակչության տարբեր խավերի ունեցած վերաբերմունքով:

Անկախության տասից ավելի տարիներին ՀՀ-ում վարվող սոցիալական քաղաքականությունը վերլուծելու նպատակով պայմանականորեն այն կարելի է բաժանել երկու փուլի:

Առաջին փուլը (1990-1995 թթ.) հանրապետությունում չուկայական նոր հարաբերությունների ձևավորման սկիզբն էր: Այս փուլում Հայաստանում սոցիալական քաղաքականությունն իրակա-

[371] Մելքումյան Ս., Հայաստանի Հանրապետության արտաքին տնտեսական կապերը, Երևան, 2002, էջ 261:

նում դիտվում էր որպես ընդհանուր տնտեսական ռազմավարության բաղկացուցիչ մաս:

Անկախության հռչակումից հետո Հայաստանի իշխանությունների առջև ծառացան բազմաթիվ խնդիրներ, որոնց թվում էին կարիքավորների և գործազուրկների պաշտպանությունը, որոնք բնակչության գերակշիռ մասն էին կազմում, նաև հասարակության բոլոր խավերի շահերը և նախասիրությունները հաշվի առնող ամբողջական սոցիալական քաղաքականության մշակումը: Դա Հայաստանի համար բավական բարդ խնդիր էր՝ անկախ պետության սոցիալական քաղաքականության իրականացման մեխանիզմների և սովորույթների բացակայության պատճառով: Խորհրդային Հայաստանի սոցիալական քաղաքականությունը համապատասխանում էր այն երկրի (ԽՍՀՄ) սկզբունքներին, որի կազմի մեջ էր նա գտնվում: Միաժամանակ, Հայաստանում գործում էին սոցիալական պաշտպանության սեփական մեխանիզմներ, որոնք հիմնված էին ազգային սովորույթների վրա:

Խորհրդային պետության սոցիալական հզոր քաղաքականությունը զուրկ էր հարուստների, միջին խավի և կարիքավորների շահերի պաշտպանությունն ապահովելու գաղափարախոսությունից, նորմերից և մեխանիզմներից այն պարզ պատճառով, որ նման բաժանումը խորթ էր այդ հասարակարգին: Սոցիալիստական հասարակարգը, բոլոր թերություններով հանդերձ, իր սոցիալական քաղաքականությունը հիմնում էր համընդհանուր սոցիալական ապահովման և առավելագույն սոցիալական երաշխիքների սկզբունքների վրա: Պետությունն ապահովում էր անվճար կրթություն, բուժում, կացարան, հանգիստ, ծերության կենսաթոշակ, հաշմանդամության թոշակներ, անչափահաս երեխաների նպաստ, միաժամանակ իրագործում էր երկրում համընդհանուր զբաղվածության խնդիրը: Սոցիալական քաղաքականության կարևորագույն տարր էր նաև առաջին անհրաժեշտության ապրանքների դոտացիան, սպառողական գների կայունությունը, որոնք անփոփոխ էին մնում տասնամյակների ընթացքում: Սոցիալիզմի իրական նվաճումների թվին կարելի է դասել աշ-

խատանքի և հասարակական ֆոնդերի միջոցով սպառման ու բաշխման հարաբերությունների համակարգի ստեղծումը, որն ապահովագրում էր աղքատությունից և երաշխավորում բնակչության լայն շերտերի համար անձնական սպառման բավական բարձր մակարդակ:

Իր բոլոր թերություններով հանդերձ արտադրության կառավարման և պլանավորման կենտրոնացված մեթոդների շնորհիվ ստեղծվել էին պայմաններ, որոնք թույլ էին տալիս տևական ժամանակամիջոցում իրականացնել խոշոր բյուջետային հատկացումներ սոցիալական ոլորտի զարգացման համար: Սոցիալական կարիքների համար զգալի միջոցներ էին հատկացվում արդյունաբերական ձեռնարկությունների և այլ կազմակերպությունների ֆոնդերից, ինչպես նաև արհեստակցական միությունների միջոցներից: Խորհրդային հասարակության էական, բնութագրիչ կողմերից մեկն էր նաև բևեռացման ցածր աստիճանը:

Այսպես, 1976 թ. բարձր վարձատրությամբ աշխատողների 10%-ի եկամուտների հարաբերակցությունը ցածր վարձատրությամբ աշխատողների 10%-ի եկամուտների նկատմամբ կազմում էր 3,35, իսկ 1986 թվին՝ 3,38[372]: ԽՍՀՄ փլուզումից հետո իրադրությունը սոցիալական ոլորտում կտրուկ փոխվեց: Ակնհայտ դարձավ, որ

Առաջին, կրթության, գիտության և մշակույթի, ինչպես նաև բնակչության անապահով խավերի նկատմամբ հավասարաչափ պետական աջակցության քաղաքականությունը, ըստ էության չլուծելով ոչ մի սոցիալական խնդիր, բերում էր բյուջետային սուղ միջոցների փոշիացում:

Երկրորդ, ապրուստի համար անհրաժեշտ նվազագույն սահմանից (մոտ 50-60 ԱՄՆ դոլար, ըստ փորձագետների հաշվարկների) կրկնակի ցածր միջին աշխատավարձի պայմաններում քաղաքացիները չէին կարող լուրջ հատկացումներ կատարել սոցիալական ապահովագրության ֆոնդերին, այդ թվում՝ մաս-

[372] Տե՛ս Труд в СССР. Финансы и статистика. 1988, էջ 146:

նավոր: Նույնը վերաբերում էր նաև գործատուների հնարավորություններին: Այս փաստը քիչ հավանական էր դարձնում գործազրկության, հիվանդությունների ապահովագրման գործուն համակարգի կազմակերպումը, արդյունավետ կենսաթոշակային ֆոնդերի ստեղծումը:

Երրորդ, սոցիալական լարվածության տեսակետից դրությունը արդարացնում էր նաև այն հանգամանքը, որ պետությունը շարունակում էր հավակնել սոցիալական դաշտում գլխավոր գործող անձի դերին, իսկ բնակչությունն առաջվա նման պետությունից սպասում էր համընդհանուր պարտականությունների կատարում, որն իրական չէր:

Չորրորդ, արդյունավետ սոցիալական քաղաքականություն իրականացնելու տնտեսական հնարավորությունների կտրուկ անկումը տեղի էր ունենում այն պայմաններում, երբ սոցիալական աջակցության կարիք ուներ բնակչության մոտ մեկ երրորդը: Չարդարացվեցին նաև սեփականաշնորհումից բյուջեի մուտքերն ապահովելու հույսերը, պետության իրական դրամական եկամուտները սպասվածից առնվազն 10 անգամ ցածր էին: Այս սխալները խիստ սահմանափակեցին հանրապետության տնտեսական զարգացման հնարավորությունները, որոնք բացասաբար անդրադարձան բնակչության սոցիալական վիճակի վրա: Պետք է ընդգծել, որ դրանք նաև անցման շրջանի դժվարությունների բնական հետևանքներ էին:

Հինգերորդ, պարզորոշ երևաց, որ մասնավոր հատվածում աշխատանքային հարաբերությունները դեռևս կանոնակարգված չէին, արհմիություններն անգործության էին մատնվել: Տեղի էր ունեցել մարդկային կապիտալի փոշիացում, փաստորեն լրջորեն վտանգվել էր միջին խավը՝ ժողովրդավարության, քաղաքացիական հասարակության և կայուն զարգացման խթանիչ ուժը:

Վեցերորդ, դրությունը բարդանում էր նաև նրանով, որ դեռևս լուծումներ էին պահանջում բազմաթիվ փախստականների և երկրաշարժի գոտու բնակչության հիմնահարցերը:

Երկրորդ փուլը (1996 թվից հետո, ցայսօր) կազմակերպական առումով սոցիալական ապահովության, համակարգը ինքնուրույն և ֆինանսավորման տարբեր աղբյուրներ ունեցող, այսինքն՝ սոցիալական աջակցության և սոցիալական ապահովագրության համակարգի տարանջատման սկիզբն էր: Անկախության տասը տարիներին ՀՀ-ում իրական սոցիալական քաղաքականության ցուցանիշների դինամիկայի վերլուծությունը ցույց է տրված թիվ 9 աղյուսակում[373]:

Աղյուսակից երևում է, որ սոցիալական ոլորտի բարեփոխումները չեն բխել հստակ մշակված սոցիալական քաղաքականությունից և ունեցել են ավելի շատ մարտավարական, քան ռազմավարական բնույթ: ՀՀ-ում իրականացվող սոցիալական բարեփոխումները համարժեք չէին բնակչության կենսական հիմնախնդիրներին: Հանրապետության բնակչության 68,3%-ը բավարարված չէր ստեղծված իրավիճակով, իսկ 74,3%-ը անբավարար էր գնահատում իրականացվող տնտեսական բարեփոխումների ընթացքը[374]: Կենսամակարդակի և կյանքի որակի խիստ անկման հետևանքով նկատվում էր հանցագործությունների, հիվանդությունների, հաշմանդամության, մահացության աճ: Ինչ վերաբերում էր սոցիալական զարգացման որոշ ցուցանիշներում նկատվող դրական տեղաշարժերին, ապա դրանք այդպես էլ զարգացման կայուն միտումներ չունեցան:

---

[373] Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2000 թ. հունվար-դեկտեմբերին, էջ 89-103: Հայաստանի վիճակագրական տարեգիրք (1999, 2000), Երևան, 2001, էջ 56-86:

[374] Տե՛ս Պողոսյան Գ., Բնակչության վերաբերմունքը Հայաստանում ընթացող տնտեսական բարեփոխումների նկատմամբ: «Հայաստանի տնտեսությունը» 2000 թ., 20 մարտի, էջ 7:

ՀՀ հիմնական սոցիալ-տնտեսական ցուցանիշները անկախության 10 տարիներին (1991-2000 թթ.)*

Ցուցանիշները	1991	1992	1993	1994	1995	1996	1997	1998	1999	2000
Տնտեսության մեջ զբաղվածների թվաքանակը (հազ. մարդ) (բանվոր-ծառայող)	1672	1578	1543	1488	1476	1436	1372	1337	1298	1283
Գործազրկության մակարդակը (%)		1,8	5,3	6,6	6,7	9,3	10,8	9,4	11,2	10,9
Բնակչության դրամական եկամուտները. մլդ. դրամ	14,7	41,7	395,0	93,7	289,3	434,3	514,4	581,.3	627,1	698,4
Բնակչության դրամական ծախսերը. (մլդ դրամ)	12,6	27,5	250,1	84,9	274,5	423,6	519,8	578,9	631,7	682,0
Միջին ամսական անվանական աշխատավարձը (դրամ)	337	1395	12173	174,8	7680	9469	13581	18000	20157	21330
Նվազագույն աշխատավարձը	130-140	1200	7350	375	540	830	1000	1000	5000	5000
Միջին ամսական կենսաթոշակը. (տոկոս/դրամ)	167	1497	9024	1509	2584	3114	3673	3793	4921	4481
Բնակչության դեպոզիտները խնայբանկի հիմնարկներում (մլդ դրամ)	2111	2284	10300	148	952	2148	3124	5524	8073	12282

* Տե՛ս Մարդկային զարգացման ազգային զեկույց, Հայաստան, 2001, էջ 93:

Սոցիալական ոլորտում որպես դրական տեղաշարժ կարելի էր նշել իրականացված կառուցվածքային բարեփոխումները, բնակչության սոցիալական ապահովության նոր կառուցակարգերի ստեղծումը, ոլորտը կանոնակարգող բազմաթիվ իրավական ակտերի առկայությունը, սոցիալական աշխատողների պատրաստման և վերապատրաստման ծրագրերը, կայուն համագործակցությունը միջազգային կառույցների հետ, սոցիալական ոլորտի կառավարման համակարգի որոշակի տեխնիկական զինումը և, իհարկե, ոլորտի բարեփոխումներին ուղղված բազմաթիվ ծրագրերի առկայությունը: Ոլորտի հետագա զարգացումը հիմնականում կախված էր այդ ծրագրերի հետևողական իրագործումից:

ՀՀ սոցիալական քաղաքականությունը դեռևս կայացման փուլում էր, իսկ առկա բացթողումները պայմանավորված էին ՀՀ-ում տնտեսական իրական հնարավորությունների վրա հիմնված սոցիալական քաղաքականության միասնական հայեցակարգի բացակայությամբ, սոցիալական ապահովության, ինչպես նաև սոցիալական գործընթացների համակարգերի անկատարությամբ:

Կառավարության տնտեսական բարեփոխումների ծեռնարկումներում, հատկապես 1992 թվականին, անտեսվեցին սոցիալական կողմնորոշումների հիմնահարցերը:

Հանրապետությունում ընթացող սոցիալ-տնտեսական, քաղաքական իրավիճակում խոսք լինել չէր կարող հասարակության ամենալայն շրջանների կենսապայմանների բարելավման մասին: Չնայած տարեցտարի պաշտոնապես արձանագրվող 5-6%-անոց տնտեսական աճին, չէր հաջողվել այն ուղղել բնակչության լայն շերտերի վիճակի բարելավմանը: Շուկայական բարեփոխումների պտուղներից օգտվում էր բնակչության չնչին փոքրամասնություն կազմող ունևորների խավը: Կարելի էր պնդել, որ տնտեսական աճը հիմնված է երկրի արտաքին պարտքի անընդհատ աճի և եկամուտների ու հարստության անթույլատրելի բևեռացման վրա: ՄԱԿ-ի ազգային փորձագետների դիտարկումներով հախուռն ու հապճեպ սեփականաշնորհման արդյունքում հանրապետության ընտանիքների միայն 8%-ը տիրացավ մասնավորեցված գույքի

ավելի քան 90%-ին[375]: Առավել հարուստ և առավել աղքատ բնակչության 20%-ի ծախսերի տարբերությունը կազմեց 6,6 անգամ, իսկ եկամուտը՝ 32,2 անգամ: Եվրոպայի, Կենտրոնական Ասիայի, Լատինական Ամերիկայի հարավ-արևելյան երկրների շարքում Հայաստանը դեռևս առաջին տեղում էր եկամուտների անհավասար բաշխվածության առումով[376]:

Ավելին, առավել հարուստ ընտանիքների 4-5%-ը տնօրինում էր ողջ ազգային հարստության առնվազն կեսից ավելիին: Տնտեսապես ակտիվ բնակչության տեսակարար կշիռը բնակչության ընդհանուր թվաքանակում տարեցտարի նվազելով՝ 1998 թ. կազմել էր ընդամենը 35,6%: Միևնույն ժամանակ, 1992 թ. համեմատ, ավելի քան 220 հազարով կրճատվել էր տնտեսության մեջ զբաղվածների թվաքանակը[377]: Տնտեսական վերափոխումները որոշակի փոփոխություններ առաջացրին աշխատուժի վերաբաշխման բնագավառում: Եթե 1991 թ. զբաղվածությունը մասնավոր հատվածում կազմել էր տնտեսության մեջ զբաղվածների 30,1 %-ը, իսկ պետական հատվածում՝ 67,2%-ը, ապա 1998 թ. այն կազմում էր համապատասխանաբար՝ 66,2% և 32,6%, իսկ 1999 թ. 70,6% և 28,9%[378]:

Տնտեսության ճյուղային կառուցվածքում նույնպես կատարվեցին փոփոխություններ, որոնք հանգեցրին զբաղվածության կրճատմանը արդյունաբերության, շինարարության, առողջապահության, կրթության ու գիտության բնագավառներում և միաժամանակ նպաստեցին դրա ավելացմանը գյուղատնտեսության և առևտրի ոլորտում: Տնտեսության մասնավոր հատվածում զբաղվածության մի զգալի մասը բաժին էր ընկնում գյուղացիական տնտեսություններին, որոնցում աշխատում էր տնտեսության մեջ զբաղվածների մեկ երրորդը:

---

[375] Մարդկային զարգացման զեկույց, «Հայաստան», 1999, էջ 39, 176:

[376] Տե՛ս 10 лет содружества независимых государств (1991-2000), стат. сборник, Москва, 2001, էջ 101-149: Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան 2001, էջ 95:

[377] ՀԱԱ, ֆ. 119, ց. 15, գ. 80, թ. 2, 3, 20:

[378] Տե՛ս նույն տեղում, գ. 82, թ. 1, 3, 12:

Տնտեսության մեջ նման վերափոխումները, սեփականության զանգվածային մասնավորեցումը, անկայուն տնտեսական իրավադաշտը և, ի վերջո, ընթացիկ տնտեսական հաճախ չհիմնավորված ու սխալ քաղաքականությունը ու այլ գործոններ պատճառ դարձան, որ բազմաթիվ ձեռնարկություններ փակվեն կամ աշխատեն խիստ թերբեռնված: Աշխատողների մեծ մասն անցավ հարկադիր պարապուրդների, ձևական զբաղվածության ու ցածր արտադրողական աշխատանքի: Ամեց գործազրկությունը: Աննշան աշխատավարձը և անարդյունավետ զբաղվածությունը փոխհատուցվում էին պետության թողտվությամբ անլեգալ զբաղվածություն ունենալու և սև շուկայում ձեռներեցությամբ զբաղվելու հնարավորությամբ:

Տասնյակ տարիների ընթացքում երաշխավորված աշխատատեղին և աշխատավարձին սովոր, աշխատասերի համբավ ունեցող մեր ժողովրդի մի գործուն մասը հանկարծակի հայտնվեց գործազուրկի կարգավիճակում: Տնտեսության ազատականացման գործընթացի հետևանքով տեղի ունեցավ նաև աշխատուժի տեղաշարժ պետական սեկտորից դեպի մասնավորը: Հայաստանի իշխանությունների կողմից աշխատանքային պայմանագրերի կարգավորում և գործարար-վարձու աշխատող հարաբերությունների վերահսկում գրեթե գոյություն չուներ: Այս ամենի հետևանքով հանրապետությունում տարեցտարի ավելանում էր գործազուրկների թիվը: Ըստ ՀՀ վիճակագրության, պետական ռեգիստրի և վերլուծության նախարարության տվյալների 1992 թ. հանրապետության տնտեսության մեջ զբաղվածների թիվը կազմել էր 1.550 հազար մարդ, գործազուրկներինը՝ 54,5 հազար, 1996 թ. համապատասխանաբար՝ 1.436 հազար և 1.159 հազար 254, 1999 թ. 1.320.1 հազար և 164,2 հազար, իսկ 2000 թ. 1.283 հազար և 169,5 հազար:[379] Վերլուծությունը ցույց է տալիս, որ գործազրկության մակարդակը 1992 թ. 1,6%-ից աճել և 1999 թ. հասել էր 11,1%-ի, իսկ

[379] Հայաստանի վիճակագրական տարեգիրք (1997, 1998), Երևան, 2001, էջ 42, 43, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2000 թ. հունվար-դեկտեմբերին, էջ 84:

2000 թ. 11, 7%-ի[380]: ՀՀ-ում գրանցված գործազրկությունը բնութագրող տվյալները ըստ տարածաշրջանների ցույց են տալիս, որ 2000 թ. գործազրկության ամենաբարձր մակարդակը գրանցվել էր երկրաշարժի գոտում՝ Շիրակում (23,3%), Լոռիում (17%), ինչպես նաև Սյունիքի մարզում (20,8%): Գրանցված գործազրկության մակարդակը Երևանում եղել է 12,2%[381]:

Եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ զբաղվածության ծառայություններում գրանցված չէր փախստականների մեծ մասը, որոնք քաղաքաբնակ լինելով՝ հաճախ հրաժարվում էին գյուղաբնակ կյանքից՝ համալրելով գործազուրկների շարքերը, ինչպես նաև պաշտոնապես գործազուրկի կարգավիճակ չէին կարող ստանալ (հիմնականում աշխատանք չունենալու պատճառով) Հայաստանը լքած հարյուր հազարավոր քաղաքացիները, ապա պատկերն առավել ամբողջական կդառնա: Հանրապետությունում երկար ժամանակ աշխատանք չունենալով՝ գործազուրկները 2000 թ. կազմեցին ամբողջ գործազուրկների թվի 75%-ը, որոնց մեծ մասը մինչև 50 տարեկան էր և չէր աշխատում 1992 թվից ի վեր[382]: Շատ գործազուրկներ չէին գրանցվում: Ավելի դժվար էր կանանց աշխատանքի տեղավորման խնդիրը: Գործազուրկ կանանց 85%-ը չէր աշխատում վեց տարուց ավելի: Առաջին անգամ աշխատանք փնտրողները կազմում էին գործազուրկների թվի 23%-ը, որոնց 54%-ը ուներ միջնակարգ կրթություն[383]: Հատկապես դժվար էր այս կարգի գործազուրկներին աշխատանքի տեղավորելու հարցը, քանի որ, որպես կանոն, գործատուները խուսափում էին նրանցից՝ փորձ և հմտություն չունենալու պատճառով: Զբաղվածության վրա ազդող գործոններից վճռորոշը, իհարկե, տնտեսականն էր: Նախկինում գործող, իսկ այժմ չգործող բազմաթիվ խոշոր ու միջին ձեռնարկությունները չձևավորեցին աշխատանքի իրական շուկա: Նման պայմաններում չձևավորվեց սոցիալական ապահովագրության (այդ թվում և գործազրկության) համակար-

[380] Տե՛ս Մարդկային զարգացման զեկույց, «Հայաստան», 2000, էջ 7:
[381] Հայաստան, 2001, վիճակագրական գրքույկ, էջ 16:
[382] Տե՛ս Մարդկային զարգացման զեկույց, «Հայաստան», 2000, էջ 78:
[383] Տե՛ս նույն տեղում:

գը[384]: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ աշխատուժի շուկայում շարունակվում է առաջարկի և պահանջարկի անհամապատասխանության խորացումը: Հաճախ գործազուրկները հրաժարվում էին ցածր աշխատավարձով աշխատելուց, իրենց մասնագիտությանը և որակավորմանը չհամապատասխանող աշխատանքից:

Հատկապես ծանր էր զբաղվածության խնդիրը հանրապետության այն տարածքներում և քաղաքներում, որտեղ մարդը հողի սեփականատեր չէր, և չէին գործում նախկին միջին և մեծ ձեռնարկությունները: Խոսքը Գյումրիի, Վանաձորի, Արթիկի, Չարենցավանի, Հրազդանի, Կապանի և այլ քաղաքների մասին է: Այս վայրերում գործազրկության մակարդակը միջինից 2-3 անգամ բարձր էր:

Իրավիճակի վրա դեռևս ազդեցություն չէին գործում փոքր և միջին առևտրի զարգացմանն ուղղված միջոցառումները: Ինքնազբաղվածությունը խրախուսելու համար պետության կողմից գործազուրկին տրվող անհատույց դրամական միջոցները սպասվելիք արդյունքներ չէին տալիս: Նոր ստեղծվող աշխատատեղերն աթող դառնում էին անարդյունավետ, տնտեսության մեջ «սեղանիկ»-ի մակարդակի առևտուրը և սպասարկումը մնում էին հիմնական եկամուտի միջոցը: Չէին մշակվել զբաղվածության հանրապետական և տարածքային ծրագրեր, չկար աշխատուժի տեղաշարժի մասին հստակ տեղեկատվություն, չէին հաշվարկվել և համալրվել ազատ աշխատատեղերը, չէին մշակվել միջին և փոքր գործարարության խրախուսման միջոցները, չկային անհրաժեշտ լծակներ գործազուրկների վերամասնագիտացման և որակավորման բարձրացման համար: Նոր աշխատատեղերի ստեղծումը մնացել էր լոկ թղթի վրա, չէին մշակվել սեփականաշնորհվող ձեռնարկություններում զանգվածային ազատումները զսպող աշխատակարգեր, չէր սահմանվել նվազագույն աշխատատեղերի քանակը նման ձեռնարկություններում:

---

[384] Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու, (1999-2000) գ. Բ, էջ 414:

Գործազուրկներին օգնելու նպատակով հանրապետությունում 1996 թ. ստեղծվեց «Փարոս» համակարգը, որտեղ ընդգրկվեց 735.000 ընտանիք (բնակչության շուրջ 86%-ը): 1997 թվականին, այսպես կոչված, «մաքրումների» շնորհիվ այդ թիվը դարձավ 450.000[385]: Ավելին, 1999 թ. աննցում կատարվեց ընտանեկան նպաստի համակարգին, որի մեջ 2000 թ. դրությամբ ներառվեց շուրջ 190.000 ընտանիք, և նպաստը բարձրացավ 3500-ից մինչև 7500 դրամի՝ ելնելով կարիքավորությունից, ու անապահովվածությունից:[386] Այսպիսի նպաստը չէր բավարարում նույնիսկ ամենատարրական պահանջմունքները: Նպաստների հատկացման նման համակարգը չէր բխում ո՛չ պետության, ո՛չ էլ նպաստառուների շահերից և սկզբունքային բարեփոխումների կարիք ուներ:

Աշխատանքային շուկայում առաջացած անհավասարակշիռ վիճակը հանգեցրեց այնպիսի իրողության, երբ աշխատավարձի միջին մակարդակը չէր ապահովում նույնիսկ նվազագույն կենսապայմանները: Համաձայն ՀՀ վիճակագրության նախարարության տվյալների, միջին աշխատավարձի իրական մակարդակը (չնայած վերջին տարիների աճին) շարունակում էր մնալ շատ ցածր: Օրինակ, դոլարային արտահայտությամբ 1997 թ. անվանական միջին աշխատավարձը կազմում էր 28 դոլար, 1998 թ.՝ 34 դոլար, իսկ 2000 թ. 40 դոլար[387], այն դեպքում, որ նվազագույն սպառողական զամբյուղը ՀՀ-ում մեկ շնչի հաշվով 2000 թ. կազմում էր շուրջ 66 դոլար[388]:

Փաստորեն անհամապատասխանությունը սպառողական ապրանքների գների և աշխատավարձի միջև բավական մեծ էր: Ընդորում, բյուջետային և ոչ բյուջետային հիմնարկներում այն էականորեն տարբերվում էր: 1999 թ. արդյունաբերությունում զբաղվածների աշխատանքային վաստակը գերազանցում էր ազգային տնտեսության միջինը 40%-ով, իսկ գյուղատնտեսության մեջ 23%-ով պակաս էր եղել: Ամենացածր վաստակը (միջինի 50-55%)

---

[385] Մարդկային զարգացման զեկույց, «Հայաստան», 1997, էջ 52:
[386] Մարդկային զարգացման զեկույց, «Հայաստան», 2000, էջ 77-180
[387] Տե՛ս «Հայաստան», 2001, վիճակագրական գրքույկ, էջ 21:
[388] Տես Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան 2000, էջ 77:

կրթության, առողջապահության և մշակույթի ոլորտում էր. միջինից 2,9 անգամ ավելի ցածր[389]:

2000 թ. հունվար-դեկտեմբերին բյուջետային կազմակերպություններում զբաղվածների աշխատավարձը (գնահատումը կատարվել է մոտ 4 հազար բյուջետային կազմակերպություններից ստացվող եռամսակային հաշվետվությունների օպերատիվ տվյալների հիման վրա) կազմում էր 14007 դրամ և 1999 թ. համեմատությամբ ավելացել էր 14 տոկոսով, իսկ ոչ բյուջետային կազմակերպություններում զբաղվածներինը՝ համապատասխանաբար՝ 26524 դրամ և ավելացել էր 16,1 տոկոսով[390]: Կառավարության ձեռնարկած որոշ միջոցառումների շնորհիվ թեև նվազում, բայց իսպառ չէին վերանում աշխատավարձի ապառքները: 2000 թ. սեպտեմբերին հաշվարկված աշխատավարձերի մեջ դրանց բաժինը կազմում էր մոտ 37%:

Աշխատաշուկայում գների մակարդակի վրա ազդելու՝ պետության հիմնական միջոցը՝ նվազագույն աշխատավարձը, շարունակում էր մնալ խիստ ցածր: Եթե 1992-94 թթ. ընթացքում պետականորեն երաշխավորված նվազագույն աշխատավարձը վերանայվում էր յուրաքանչյուր եռամսյակը մեկ, 1997 թ.-ի ընթացքում մնում էր անփոփոխ և միայն 1999 թ. ավելացավ հնգապատիկ՝ հասնելով 5000 դրամի: Դրան զուգահեռ 2-3 անգամ ավելացան պարենային և ոչ պարենային ապրանքների գները: Հանրապետության մեկ շնչի հաշվով նվազագույն պարենային զամբյուղը կազմում էր 18 հազար դրամ[391]: Միավորված ազգերի կազմակերպության հետազոտությունն ակնառու ցույց է տալիս, որ հարցման մասնակցած բնակչության 60%-ը չէր կարողանում ապահովել նույնիսկ սննդի համար անհրաժեշտ միջոցներ[392]: Հայաստանը

---

[389] Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2000 թ. հունվար-դեկտեմբերին, էջ 92:

[390] Տե՛ս նույն տեղում, էջ 93:

[391] Տես Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան, 1998, էջ 69: Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2000 թ. հունվար-դեկտեմբերին, էջ 93:

[392] Տե՛ս նույն տեղում, Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան, 1999, էջ 38: Հայաստանի Հանրապետության սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան, 1999, էջ 29:

աղքատության մեջ գտնվող, աղքատացող երկրներից էր, որտեղ առկա էին այդ երևույթին ուղեկցող բոլոր բացասական հետևանքները: Քանակապես ավելացել էր ծվազագույն սպառողական զամբյուղի հնարավորություն չունեցողների թիվը: Գնալով ծվազում էին կրթություն ստանալու և առողջապահության համակարգից օգտվողները: Հայաստանի չափանիշներով բարձր աշխատավարձն անգամ մարդուն չէր փրկում աղքատությունից, ուղղակի կապ չկար նաև աղքատության և տարիքի, սեռի, ընտանիքի չափի միջև:

1988 թ. երկրաշարժից տուժած աղետի գոտին և Աղրբեջանին սահմանակից շրջանները տնտեսապես առավել պասիվ էին, իսկ աղքատների թվով՝ խոցելի: Աղքատության հեռանկարները երկրում, ցավոք, ունեին ամրակայման միտումներ: Աղքատությունն սկսում էր ձևավորվել որպես ապրելակերպ և ուրվագծվում էր նրան հարմարվելու մեխանիզմը՝ սոցիալական հավասարության, արդարության, կրթության և առողջապահության հավասար մատչելիությունից հրաժարվելու ուղին, որն ի վերջո տանում էր դեպի անձի սոցիալական նշանակության կորուստ: Ըստ հաշվարկման նոր ցուցանիշների Հայաստանի Հանրապետության մակարդակով աղքատության պարենային զամբյուղի արժեքը համարվեց 6112 դրամը (ԱՄՆ 13 դոլար), իսկ սպառողական ծվազագույն զամբյուղի արժեքը մեկ շնչի հաշվով ընդունվեց 10784 դրամ[393]: Այս ուսումնասիրությունների և համաշխարհային բանկի մասնագետների վերլուծումներով աղքատները Հայաստանում բաժանվեցին սովորական և շատ կամ ծայրահեղ աղքատների, որոնց 1 շնչի հաշվով միջին ընթացիկ ծախսերը ցածր են եղել աղքատության սահմանված գծից: Մեկ շնչի հաշվով աղքատության ընդհանուր մակարդակից բարձր լինելու դեպքում հաշվել են ոչ աղքատ: Այս հաշվարկումով ըստ 1996 թ. ՄԱԿ-ի տվյալների հանրապետության բնակչության 23,9%-ը ապրում էր ծայրահեղ աղքատության մեջ, իսկ 82,4%-ը՝ վատ, միայն 13,2%-ը՝ բավարար և 4,4%-ը՝ լավ կամ շատ լավ:

---

[393] Տե՛ս Հայաստանի Հանրապետության սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան, 2001, էջ 28:

2001 թ., անցած տարիների ընթացքում փոխվեց աղքատների և չատ աղքատների միջև հարաբերակցությունը: Շատ աղքատ բնակչության տեսակարար կշիռը ըստ պաշտոնական տվյալների, 1996 թ. համեմատ, կրճատվեց 4,79%-ով: Աղքատները կազմում էին 32,14%, չատ աղքատները՝ 22,91%, իսկ ոչ աղքատները՝ 44,95%[394]: Այստեղ ակնհայտորեն իր դրական ազդեցությունն ունեցավ ընտանեկան նպաստների համակարգի կիրառումը, քանի որ այն նպատակաուղղված էր չափազանց աղքատ տնային տնտեսությունների վիճակի բարելավմանը: Ընտանեկան նպաստի չափը խիստ փոքր էր համարել հարցման ենթարկվածների 56%-ը[395]: Այսպես, եթե մեկ անձից բաղկացած ընտանիքի նպաստի չափը կազմում էր 4800 դրամ, ապա միայն կոմունալ-կենցաղային պարտադիր վճարումները այդպիսի ընտանիքներում կազմում էին 5500 դրամ: 2001 թ. նպաստի չափը շարունակում էր մնալ նույնը, քանզի բյուջետային հնարավորությունները թույլ չէին տալիս ավելացնելու նպաստներին հատկացվող միջոցները: Շարունակում էր վատանալ նաև բյուջետային ոլորտի աշխատողների կացությունը, որոնց, հատկապես ուսուցիչների, գիտնականների և բուժաշխատողների աշխատավարձերի վճարումները կատարվում էին ուշացումներով:

Փորձագիտական գնահատումները ցույց են տալիս, որ բնակչության առավել հարուստ խավի եկամուտների 20%-ը գերազանցում էր առավել անապահով ընտանիքների 20 տոկոսի եկամուտները ավելի քան 30 անգամ: Եվ այս միտումները շարունակում էին խորանալ: Փաստորեն, հանրապետության ավելի քան 830 հազար ընտանիքների քառորդ մասը, ՄԱԿ-ի չափանիշներով, կամ բացարձակ աղքատ էր, կա՛մ, ինչպես ընդունված է ասել՝ չքավոր: Եվս 200 հազար ընտանիք, այսպես ասած, հարաբերական աղքատ էր: Ընտանիքի այս խմբի օրական եկամուտը կամ ծախսը

---

[394] Տե՛ս նույն տեղում, էջ 44:

[395] Հայաստանի մարդկային զարգացման զեկույց 1996, էջ 11: Հայաստանի Հանրապետության սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան, 2001, էջ 50:

չէր անցնում մեկ ամերիկյան դոլարից[396]: Իսկ ընդհանուր առմամբ Հայաստանը շարունակում էր դասվել ամենից աղքատ երկրների շարքը: Վիճակը վատ էր նաև կենսաթոշակային ապահովության բնագավառում: Հանրապետությունում կային շուրջ 580 հազար կենսաթոշակառուներ, որոնց միջին կենսաթոշակը 7-8 դոլար էր, այն դեպքում, երբ տարեցտարի թանկանում էին էլեկտրաէներգիայի սակագինը, մյուս ապրանքների գները, երբ պարենային զամբյուղի նվազագույն արժեքը անցնում էր 30 դոլարից: Ակնհայտ էր, որ այս ոլորտը ևս լուրջ վերափոխումների կարիք ուներ: 1999-2000 թթ. այն արժանացավ կառավարության ուշադրությանը և այս կապակցությամբ մի շարք որոշումներ ընդունվեցին՝ կապված պետական միջոցներից կենսաթոշակների ավելացման հետ[397]:

Սակայն աղքատության վերացման կամ նույնիսկ նվազեցման մասին խոսելը վաղ էր: Մեր բնակչության գերակշիռ մասը զրկված էր ապահով ու առողջ ապրելակերպից: Շատերի կյանքի պայմաններն ուղղակի նվաստացուցիչ էին: Մարդկանց մի ստվար մասի համար նույնիսկ կենսական պայմանների նվազագույն զամբյուղը շարունակում էր անհասանելի ճոխություն համարվել: Հատկապես անմատչելի էր հիվանդանոցային բուժսպասարկումը, եթե հաշվի առնենք, որ դեղերի մեծ մասի արժեքը գերազանցում էր հանրապետության ազգաբնակչության աշխատավարձը կամ այլ եկամուտները: Հարստության և աղքատության ահռելի հակադրությունը՝ սոցիալական բևեռացումը, ակնհայտ էր:

է. Առողջապահությունը

Հայաստանի առողջապահության համակարգը ժառանգել էր բավական հարուստ նյութատեխնիկական բազա՝ հիվանդանոցների, պոլիկլինիկաների և այլ բուժհիմնարկների համապարփակ

---

[396] Տե՛ս նույն տեղում, էջ 58-65, Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան, 2000, էջ 73:

[397] Տե՛ս Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու (1999-2000), էջ 458, 464-466:

ցանց: Բնակչության մեկ շնչի հաշվով Հայաստանը բժիշկների թվաքանակով դասվում էր աշխարհի զարգացած երկրների շարքը: Ավելին, բուժսարքավորումները, որ ստացվել էին երկրաշարժից տուժածներին մարդասիրական օգնություն ցույց տալու համար, հնարավորություն տվեցին մասնավորապես Երևանում և երկրաշարժի գոտում մի շարք հիվանդանոցներ հասցնել համաշխարհային բարձրության: Եվրոպայի և ԱՄՆ-ի առաջավոր բժշկական հիմնարկներում վերապատրաստված հայ բժիշկները կարողացան Հայաստանում իրականացնել ամենաբարդ հիվանդությունների ախտորոշումը և բուժումը:

Սակայն սոցիալ-տնտեսական դժվարություններն ու համաշխարհային ճգնաժամը բացասական ազդեցություն ունեցան նաև հանրապետության առողջապահության համակարգի վրա: Համակարգն ընդհանուր առմամբ դարձավ վճարովի, իսկ պետության կողմից երաշխավորված անվճար բուժօգնության և ծառայությունների սպասարկումը բավական խրթին, որի պատճառով բնակչության մեծ մասը չէր պատկերացնում, թե ինչ չափանիշներով էր ստանալու բուժօգնություն: Ունենալով փաստորեն լուրջ համակարգված կառուցվածք՝ առողջապահությունը միևնույն ժամանակ դառնում էր անհասանելի, սակագները բնակչության մեծ մասի համար մատչելի չէին, գրեթե բոլոր բուժհիմնարկներում բացի պաշտոնական վճարներից գոյություն ուներ ստվերային վճարումների համակարգ: Այս ամենը բնակչության մեջ ստեղծել էր խոր դժգոհություն և անվստահություն առողջապահության համակարգի նկատմամբ: Անցման շրջանում այս ոլորտում նույնպես զբաղվածությունը խստիվ նվազեց: Դա բացատրվում էր ոչ միայն սոցիալական լարվածության ուժեղացումով, առողջապահության համակարգի վատթարացող իրավիճակով, այլև արտագաղթով և ծննդի նվազումով: 1990 թ. շուրջ 80 հազարի դիմաց ծնվածների թիվը կազմել էր 34,5 հազար, այսինքն՝ նվազել էր ավելի քան 2 անգամ[398]: Բուժաշխատողների որոշ մասի գաղտնի և բացահայտ վճարովի մեթոդների ազատականացումը, օրենքով հովանավորու-

[398] Տե՛ս Հայաստանի վիճակագրական տարեգիրք 1996, Երևան, 1998, էջ 27, Հայաստանի վիճակագրական տարեգիրք (1999-2000), էջ 29:

մը, դեղորայքի չափազանց բարձր գները, ինչպես նաև բարձր որակավորման աշխատողների, հատկապես բժիշկների մեծ մասի ցածր վարձատրությունը ունեցան անդառնալի հետևանքներ: Բարձր որակավորում ունեցող բժիշկների մի զգալի մասն ընդգրկվեց առևտրական կառույցներում, մեկնեց այլ երկրներ: Հիվանդները բուժվելու համար անհրաժեշտ միջոցներ չունեին, ուստի ավելացան հիվանդությունները, մահացությունը, խիստ նվազեցին պոլիկլինիկաներ հաճախողները, հիվանդանոցում բուժվում էին միայն ծայրահեղ անհրաժեշտությունից դրդված: Հիվանդանոցներում հիվանդները չէին ապահովվում անհրաժեշտ դեղամիջոցներով, վիրակապերով, սննդով, սպիտակեղենով և առաջին անհրաժեշտության այլ առարկաներով: Այս համակարգում բարեփոխումների հիմք հանդիսացավ ՀՀ Ազգային ժողովի կողմից 1996 թ. մարտի 4-ին ընդունված «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքը[399]: Այդ օրենքով որոշ ծառայություններ, ինչպես օրինակ, ատամնաբուժությունը և պլաստիկ ու կոսմետիկ վիրաբուժությունը դարձան վճարովի: Բուժհաստատությունների որակավորումը և բուժծառայությունների որակը պետք է բարձրանար արտոնագրման համակարգի ներմուծման միջոցով: Հանրապետության կառավարությունը 1997թ. մայիսին որոշում ընդունեց առողջապահության համակարգի ֆինանսավորման նոր ձևի անցնելու մասին՝ հիմնական բուժսպասարկումը, որոշ բացառություններով, դարձնելով վճարովի: Այդ նույն որոշմամբ պետք է ֆինանսավորվեին միայն տուբերկուլյոզային, նարկոլոգիական, մաշկավեներոլոգիական, ուռուցքաբանական հիվանդությունների բուժումը, շտապ օգնության, վերականգնողական ծառայությունները: Պետական պատվերով բուժծառայություններից կարող էին օգտվել բնակչության որոշ, սոցիալապես առավել խոցելի խավերը, հաշմանդամները, մինչև յոթ տարեկան երեխաները և այլն: Սակայն պետական բյուջեն շարունակում էր չկատարել ստանձնած պարտավորությունները, և դոտացիոն բուժսպասարկումը փաստորեն մնում էր վճարովի: Բնակչության համար պետության կողմից

[399] Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու (1995-1999), Երևան, 1999, էջ 140-148:

ֆինանսավորված և երաշխավորված անվճար բուժօգնությունը և ծառայությունները իրականացվում էին առողջապահական նպատակային ծրագրերին համապատասխան՝ ընդգրկելով համարյա ամբողջ բնակչության տարբեր հիվանդություններ, ինչպես նաև բնակչության որոշ խավերի համարյա բոլոր հիվանդությունները: Միևդեռ ակնհայտ էր, որ նույնիսկ, այսպես կոչված, «անապահով» խավերի ցուցակը չէր ընդգրկում բնակչության սոցիալական աջակցության իրական կարիք ունեցողների ցանկը: Բուժօգնության մատչելիությունը հատկապես բնակչության սոցիալապես առավել խոցելի խավերի համար դարձել էր կարևորագույն խնդիր: Առողջապահական ծառայությունների գերակշիռ մասը պաշտոնապես համարվում էր անվճար, սակայն հիվանդների կողմից կատարվող ոչ պաշտոնական վճարումների պատճառով լուրջ արգելքներ էին ստեղծվում բնակչության մի զգալի մասի համար, որի անմիջական հետևանքը հիվանդությունների ածող տեմպերի պայմաններում բուժհիմնարկներ դիմող քաղաքացիների թվի նվազումն էր: Որոշ փորձագիտական գնահատումներով հիվանդ մարդկանց 59,4%-ը գերադասում էր ինքնաախտորոշվել: Բուժհիմնարկներ չդիմելու հետևանքով արհեստականորեն նվազում էր հիվանդների թիվը: Առողջապահական համակարգը աշխատում էր իր հնարավորությունների կեսի չափով[400]:

2000 թվականին հիվանդանոցներում մահճակալների զբաղվածությունը կազմում էր ընդամենը 35%, մարզերում՝ 10-15%: 1990 թվականի համեմատ, 2000 թ. պոլիկլինիկաներում հաճախումները նվազել էին 45%-ով, տնային կանչերի թիվը՝ 53%-ով, իսկ շտապ օգնության կանչերը՝ 60%-ով[401]:

Անկասկած, այս ամենը հետևանք էր բարձր գների, բուժծառայությունների որակի զգալի անկման և բնակչության անվճարունակության: Միևնույն ժամանակ աճի միտում ունեին սոցիալական վիճակի հետ առնչվող վարակիչ, մանկական, արյան և արյունաստեղծ օրգանների հիվանդությունները: Աճել էին նաև սրտանոթա-

[400] Տե՛ս Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 1999 թվականին, Երևան, 2001, էջ 54, 65:
[401] Տե՛ս Հայաստանի վիճակագրական տարեգիրք (1999, 2000), էջ 140, 141:

յին համակարգի հիվանդությունները, որոնք կազմում էին ընդհանուր մահացության 54%-ը, և այդ ցուցանիշը շարունակում էր աճել:

1997 թ.-ից առողջապահական համակարգի բարեփոխումներն ընթանում էին չորս ուղղություններով՝ համակարգի կազմակերպական կառուցվածք և կառավարում, ցանցի կառուցվածք և կառավարում, առողջապահության ֆինանսավորում և բժշկական կրթություն: Առողջապահության համակարգի կառավարման բարեփոխումը ենթադրում էր երկու ուղղություն՝ ապակենտրոնացում և մի շարք գործառույթների կենտրոնացում: Ապակենտրոնացման արդյունքում ոլորտի պետական կառավարման լիազոր մարմինը՝ ՀՀ Առողջապահության նախարարությունը, որոշում է երկրում առողջապահական քաղաքականության խնդիրներն ու ուղղությունները, համապետական չափորոշիչներն ու չափանիշները: Ապակենտրոնացման ուղղությամբ կարևոր քայլ էր նաև պետական առողջապահական գործակալության ստեղծումը, որի միջոցով տարանջատվում էին բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող ու դրանց դիմաց վճարումներ կատարող մարմինները:

ՀՀ առողջապահության ֆինանսական համակարգի վերլուծությունը ցույց է տալիս, որ առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում իրականացված աշխատանքների ծավալները գերազանցում են պետական բյուջեով կատարված ծախսերը: Ուստի անխուսափելի փուլ է դառնում վճարովի ծառայությունների ներդրումը՝ իր բոլոր բացասական հետևանքներով: Այս գործընթացը բնակչության համար պակաս ցավագին դարձնելու համար փորձ էր արվում իրականացնել առողջապահության ֆինանսավորման բազմաձևության՝ պետական պատվերի, համավճարի, բժշկական ապահովագրության, ինչպես նաև ուղղակի վճարումների համակարգի ներդրումը: Առողջապահության պետական վերափոխումների շրջանակում 1998 թ. գարնանից սկսեց իրագործվել Համաշխարհային բանկի հետ համատեղ մշակված ծրագիրը՝ 10 մլն ԱՄՆ դոլարի անտոկոս վարկի հաշվին[402]: Նախատեսվում էր անցնել պարտադիր բժշկական ապա-

[402] Տե՛ս Սինասյան Է., նշված աշխ., էջ 194:

հովագրության՝ սկզբնական փուլում հիվանդությունների մի շարք տեսակների համար պահպանելով անվճար առողջապահությունը: Սակայն պարտադիր առողջապահական ապահովագրությունը ոչ մի խնդիր չէր կարող լուծել բնակչության մեծամասնության ցածր աշխատավարձի և լայնածավալ ստվերային տնտեսության պատճառով:

Առողջապահության ֆինանսավորման համակարգում 2000 թ. հունիսի 1-ից ներդրված հիվանդանոցային հաստատությունների ծառայությունների դիմաց վճարման գլոբալ բյուջեի մեթոդը նպատակ ուներ ավելի կառավարելի դարձնելու համակարգում ծախսերի վերահսկումը, հստակեցնելու պետության պարտավորությունները բուժօգնության ընագավառում:

Բարեփոխումների կարիք ուներ նաև առողջապահության կրթական համակարգը: Բժիշկների և բուժքույրերի նախկինում առաջացած «ավելցուկը» հուշում էր, որ կադրերի պատրաստումը պետք է համապատասխանեցնել իրական պահանջարկին: 2001թ. անվճար ընդունելությունը պետական բժշկական համալսարան 1992թ. 1400 տեղից կրճատվեց մինչև 300-ի, քույրական գործի բազային կրթությունը դարձավ 3 տարի՝ 2-ի փոխարեն, ընդլայնվեցին մասնագիտական կրթական ծրագրերը՝ հետդիպլոմային մասնագիտացումը հասցվեց 4 տարվա[403]:

Կադրերի պատրաստման կարգավորմանը զուգընթաց կրթական բարեփոխումներն ուղղվեցին նաև դրանց մասնագիտական որակի բարելավմանը: 1996 թվականից բոլոր բժիշկները, բուժքույրերը և դեղագործները 5 տարին մեկ ենթարկվում են լիցենզավորման:

Առողջապահության համակարգում իրականացվում էր արմատական վերափոխումներ ընտանեկան բժշկի ինստիտուտի ստեղծման ուղղությամբ, որի նպատակն էր ընտանիքի անդամներին առաջնային բժշկական օգնություն ցույց տալու իրավունք ունեցող բազմապրոֆիլ ընտանեկան բժիշկների պատրաստումը, որն, ըստ առողջապահության բարեփոխումների ծրագրի, 15 տարիների ընթացքում կփոխարիներ ամբուլատոր պոլիկլինիկական համակարգին: ՀՀ առողջապահության համակարգի բուժհիմ-

[403] Տե՛ս Սինասյան Է., նշված աշխ., էջ 195:

նարկների զարգացման ճանապարհին կարևոր քայլ էր 2001 թ. հունվարին ՀՀ նախագահի կողմից հաստատված «2001 թ. առողջապահական պետական նպատակային ծրագիրը հաստատելու մասին» օրենքը[404]: Այն ուղղված էր բնակչության առողջության պահպանմանը: Նրանում սահմանվում էին բնակչությանը ամեն տարի մատուցվող, պետության կողմից երաշխավորված անվճար բուժօգնություն ու ծառայություններ, որոնք ֆինանսավորվում էին ՀՀ պետական բյուջեից:

2. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԿԻՋԸՆԴՈՒՄ

ա. Բազմակուսակցական համակարգի ձևավորումը Կուսակցությունների գործունեությունը

Հայաստանի անկախության գործընթացում քայլեր ձեռնարկվեցին հասարակական կյանքի դեմոկրատացման և նոր հարաբերությունների հաստատման ուղղությամբ: 1990 թ. նոյեմբերի 5-ին Գերագույն խորհուրդը որոշում ընդունեց հանրապետության պետական մարմինները, ձեռնարկությունները, հիմնարկները, կազմակերպությունները, ուսումնական հաստատությունները և զինվորական ստորաբաժանումները ապաքաղաքականացնելու վերաբերյալ[405]: 1991 թ. փետրվարի 26-ին խորհրդարանի կողմից ընդունվեց «Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին» օրենքը[406], որով հանրապետությունում ստեղծվում էր բազմակուսակցական համակարգ:

Երկարամյա ընդմիջումից հետո հայրենիքում վերստին ազատորեն գործելու իրավունք ստացան ազգային ավանդական Հայ

---

[404] Տե՛ս ՀՀ պաշտոնական տեղեկագիր N3 (135), 31.01.2001, էջ 5:
[405] Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, N16 (972), 31.08.1990, էջ 9
[406] Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու (1990-1995), էջ 115-118:

հեղափոխական դաշնակցություն, Ռամկավար-ազատական և Հնչակյան կուսակցությունները:

Աստիճանաբար հանրապետությունում առաջացան նոր կուսակցություններ, հասարակական-քաղաքական կազմակերպություններ ու միություններ. Ազգային ինքնորոշում միավորումը (ԱԻՄ), Հայաստանի Հանրապետական կուսակցությունը (ՀՀԿ), Ազգային ժողովրդավարական միությունը (ԱԺՄ), Հայաստանի Քրիստոնեադեմոկրատական միությունը (ՀՔԴՄ), Սահմանադրական իրավունք միությունը (ՍԻՄ), Հայաստանի դեմոկրատական կուսակցությունը (ՀԴԿ) և այլն[407]: Շարունակում էր գործել իշխանությունից զրկված Հայաստանի կոմունիստական կուսակցությունը, որը, սակայն, չուներ նախկին միասնությունը և խոր ճգնաժամ էր ապրում ներքին երկպառակություններից: Ավելի ուշ հիմնվեցին Հայաստանի սոցիալիստական կուսակցությունը (ՀՍԿ), Հայաստանի սոցիալիստական ուժերի միությունը (ՀՍՈՒՄ), Հզոր Հայրենիք (ՀՀ), Միավորված աշխատանքային կուսակցություն (ՄԱԿ) Հայաստանի ժողովրդական կուսակցությունը (ՀԺԿ), «Օրինաց երկիր» (ՕԵԿ), «Բարգավաճ Հայաստան» (ԲՀԿ) «Ժառանգություն» կուսակցությունները և այլն: Հետզհետե կուսակցությունների թիվը խիստ աճեց՝ հասնելով մի քանի տասնյակի[408]:

Այս կուսակցությունների մի մասի կազմավորումը սկսվել էր 1980-ական թթ. վերջերից և հիմնականում կապված էր ԽՍՀՄ-ում տեղի ունեցող քաղաքական գործընթացների, հատկապես Արցախյան շարժման ծավալման հետ: Կուսակցություններին և հասարակական-քաղաքական կազմակերպություններին իրավունք տրվեց օրենքի սահմաններում ազատորեն արտահայտելու իրենց կարծիքը: Թեև նոր գրանցված կուսակցությունները տարբեր խնդիրներ ու նպատակներ էին հետապնդում, սակայն ակտիվորեն ներգրավվեցին անկախ պետականության հաստատման գործընթացում:

Բոլորը հավասար իրավունք ստացան օրենքի սահմաններում

---

[407] Տե՛ս Հայաստանի Հանրապետության կուսակցություններ, տեղեկագիր 2007, Երևան, 2007, էջ 20, 30, 45, 174:

[408] Տե՛ս նույն տեղում, էջ 72, 87, 154, 236, 278:

ազատորեն արտահայտելու իրենց կարծիքը: 1991 թվականի ապրիլի 17-ին ՀՀ Գերագույն խորհուրդը որոշում ընդունեց Հայաստանի կոմունիստական կուսակցության և Հայաստանի լենինյան երիտասարդական միության ունեցվածքը ազգայնացնելու մասին[409]: Միաժամանակ գործող մյուս կուսակցություններն ու հասարակական-քաղաքական կազմակերպությունները ձեռք բերեցին գույք ու տարածքներ:

Նոր փոփոխված պայմաններում, երբ հանրապետությունը դուրս էր եկել ճգնաժամային պայմաններից, անհրաժեշտություն առաջացավ նորից անդրադառնալու հասարակական-քաղաքական կազմակերպություններին, և դրա համար Ազգային ժողովը 1996 թ. նոյեմբերի 1-ին ընդունեց «Հայաստանի Հանրապետության օրենքը հասարակական կազմակերպությունների մասին»[410]: Այս օրենքում, որը բաղկացած է 8 գլուխներից, ընդգծվեց հասարակական կազմակերպությունների կարևոր դերը Հայաստանում քաղաքացիական հասարակության և իրավական պետության կայացման գործում, շարադրվեցին նրանց գործունեության հիմնական սկզբունքները:

Օրենքը նպաստեց հայ հասարակության մեջ ժողովրդավարության կարևորագույն տարրերից մեկի՝ քաղաքական կուսակցությունների և տարբեր տիպի հասարակական կազմակերպությունների ձևավորման համար: Այսպես, եթե 1991թ. Հայաստանի Հանրապետությունում գործել են հասարակական-քաղաքական 226 միավորումներ, 1993թ. ամռանը հանրապետությունում պաշտոնապես գրանցված էին 32 կուսակցություններ և հասարակական-քաղաքական միավորումներ, 431 հասարակական կազմակերպություններ[411], ապա 1998թ. ՀՀ-ում գրանցվել և գործում էին արդեն 70 կուսակցություններ ու հասարակական-քաղաքական միավորումներ, ինչպես նաև փախստականների, ՋԼՄ-ների մար-

---

[409] Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, N8 (988), 30.04.1991, էջ 6-7

[410] Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի տեղեկագիր, N 21-22 (1121-1122), նոյեմբեր, 1996, էջ 4-12:

[411] «Հայաստանի Հանրապետություն», 17.06.1993:

դասիրական օգնության, գիտության ու կրթության, մշակույթի ու սպորտի և այլ բնագավառների 2579 հասարակական կազմակերպություններ[412]: Դրանց մեծ մասը թղթի վրա էր, իրականում չէր գործում կամ ակտիվ գործունեություն չէր ծավալում:

Դեռևս 1990-ական թվականների սկզբին նորաստեղծ կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների մեջ ամենախոշորն ու ազդեցիկը արցախյան շարժումը կոորդինացնելու նպատակով 1988 թ. մարտին ստեղծված «Ղարաբաղ» կոմիտեն էր՝ իր կենտրոնական և տեղական կազմակերպություններով (հանրապետական «Ղարաբաղ» կոմիտեն կոչվեց Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտե), որի նախաձեռնությամբ հիմնադրվեց Հայոց համազգային շարժումը (ՀՀՇ):

Մյուս նորաստեղծ կուսակցություններից ակտիվ գործունեություն ծավալեցին Ազգային ինքնորոշում միավորումը, Սահմանադրական իրավունք միությունը, Հայաստանի հանրապետական կուսակցությունը և այլն:

1991 թ. Հայաստանում նոր աշխուժացում ապրեց քաղաքական կյանքը, Գերագույն խորհրդի չորս տասնյակից ավելի պատգամավորներ հայտարարեցին ՀՅԴ-ին և ՀՌԱԿ-ին անդամակցելու իրենց որոշման մասին, որի հետևանքով խորհրդարանում ձևավորվեցին երկու նոր կուսակցական-պատգամավորական խմբեր: Հետխորհրդարանական Հայաստանի առաջին բազմակուսակցական խորհրդարանում ամենամեծ կուսակցական խումբը՝ Հայոց համազգային շարժումն էր՝ (ՀՀՇ-ն), նրան հաջորդում էին Հայ հեղափոխական դաշնակցությունը՝ (ՀՅԴ), Հայաստանի կոմունիստական կուսակցությունը՝ (ՀԿԿ) և Հայաստանի ռամկավար-ազատական կուսակցությունը՝ (ՀՌԱԿ): Նրանց մեջ ընդգրկված պատգամավորների թիվը հաստատուն չէր և հաճախ փոփոխվում էր՝ կապված պատգամավորների կուսակցական պատկանելության փոփոխությունների հետ: Ընդդիմադիր կուսակցությունները (ՀՅԴ, ՀՌԱԿ, ԱԺՄ, ՀԴԿ, ՀԿԿ և այլն) չկարողացան միավորվել և

[412] Տե՛ս Մարդկային զարգացման ազգային զեկույց. անկախության և անցումային 10 տարիները Հայաստանում, Երևան, 2001, էջ 46, ՀՀ արդարադատության նախարարության ընթացիկ արխիվ:

վճռական ուժ դառնալ: Իսկ ՀՀԾ-ն իր շուրջ համախմբելով մեծ թվով պատգամավորներ՝ խորհրդարանում վճռորոշ դեր սկսեց խաղալ[413]:

Ազգային ինքնորոշում միավորման և մյուս կուսակցությունների խորհրդարանական խմբակցությունները բավականին փոքր էին: Ներքին և արտաքին քաղաքականության ակզբունքային հարցերի շուրջը խորհրդարանական խմբակցությունների միջև բավականին սուր պայքար էր գնում, որն առավել խորացավ Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումից հետո: Դա կապված էր այն բանի հետ, որ Հայաստանի քաղաքական կուսակցությունները միաձայն քվեարկելով անկախության հռչակման օգտին՝ բավականին տարբեր մոտեցումներ ունեին երկրի հետագա զարգացման ուղիների և արցախյան խնդրի լուծման միջոցների նկատմամբ: Քաղաքական պայքարն անընդհատ սրվում էր տնտեսական ծանր կացության, էներգետիկ ճգնաժամի, շրջափակումների և Արցախում ընթացող պատերազմի հետևանքով: Հարկավոր է նշել, որ հենց միասնության բացակայությունը ընդդիմադիր կուսակցությունների միջև մեծապես նպաստեց ՀՀԾ-ի դիրքերի ամրապնդմանը: Անկախության հաստատմանը հաջորդած տարիների ընթացքում, մինչև 1995 թ. նոր խորհրդարանական ընտրությունները, քաղաքական կուսակցությունների կազմավորման գործընթացը հանրապետությունում շարունակվում էր: Անժխտելի էր, որ հանրապետությունում անդառնալիորեն հաստատվել էր ընտրական բազմակուսակցական համակարգ, որը չնայած ամենաբազմազան խոչընդոտներին, հնարավորություն էր տալիս Հայաստանի քաղաքացիներին մասնակցելու պետական կառավարման գործընթացին: Այդ հանգամանքով էր պայմանավորված խորհրդարանական ընտրություններին մասնակցող կուսակցությունների և այլ հասարակական-քաղաքական հաստատությունների թվի աճը: Այսպես. եթե համեմատաբար արդարացի ընտրությունների արդյունքում ձևավորված ՀՀ առաջին գումարման Գերագույն

[413] Թորոսյան Տ., Հասարակական համակարգի հետխորհրդային տրանսֆորմացիա, Երևան, 2006, էջ 149, 154, 155:

խորհրդում ներկայացված էին 12 կուսակցություններ ու խմբակցություններ, ապա 1995թ. համամասնական ընտրություններին մասնակցեցին 13 կուսակցություններ, միավորումներ ու հասարակական-քաղաքական այլ կազմակերպություններ, իսկ 1999թ. կայացած ԱԺ պատգամավորների ընտրություններին արդեն մասնակցում էին 21 կուսակցություններ ու այլ հասարակական-քաղաքական կազմակերպություններ[414]:

Հանրապետության քաղաքական ղեկավար ՀՀԾ կազմակերպության ներսում առաջացած ռազմավարական և մարտավարական բնույթի տարաձայնությունները հանգեցրին նրա պառակտմանը և նոր կուսակցությունների ու հասարակական-քաղաքական կազմակերպությունների առաջացմանը: ՀՀԾ-ից անջատվեցին Ազգային ժողովրդավարական միությունը (ԱԺՄ), «Ժողովրդավարական հայրենիք» և այլ կուսակցությունների կազմակերպություններ:

1991 թ. Գերագույն խորհրդի մի խումբ պատգամավորներ, որոնք հեռացել էին ՀՀԾ-ից, կազմեցին իրենց առանձին պատգամավորական խմբակցություն, որի անդամները իրենց կոչեցին ազգային-ժողովրդավարներ: Այս խմբակցության հիման վրա 1991 թ. սեպտեմբերին ձևավորվեց Ազգային ժողովրդավարական միություն (ԱԺՄ) կուսակցությունը, որի նախագահ ընտրվեց Վազգեն Մանուկյանը[415]:

1991 թ. մայիսին տեղի ունեցավ ՀԴԿ (Հայաստանի դեմոկրատական կուսակցություն) հիմնադիր համագումարը: Երկու նոր կուսակցություններ հիմնադրեցին ՀՌԱԿ-ի պատգամավորական խմբակցությունից հեռացած մի խումբ գործիչներ: Դրանցից մեկը կոչվեց Ռամկավար-ազատական (լիբերալ-դեմոկրատական) կուսակցություն, մյուսը՝ ժողովրդական կազմակերպություն, որը շուտով իրեն հռչակեց արևելահայ լիբերալների կուսակցություն՝ Հայ ժողովրդական կուսակցության գաղափարախոսության ժառանգորդ: «Առաքելություն» կոչվող կուսակցությունը հիմնադրեցին

[414] Մարդկային զարգացման զեկույց. Հայաստան 1999. Մարդկային զարգացման 5 տարին Հայաստանում, Երևան, 1999, էջ 66:
[415] «Հայաստանի Հանրապետություն», 19.10.1991:

«Ղարաբաղ» կոմիտեի Գյումրիի կազմակերպությունների գործիչները: 1994 թ. գրանցվեցին «Ազգային պետություն», «Հայաստանի գիտա-արդյունաբերական և քաղաքացիական միություն» հասարակական-քաղաքական կազմակերպությունները: 1995 թ. խորհրդարանական ընտրություններից առաջ գրանցվեց նաև «Շամիրամ» կանանց միավորումը, որը դարձավ հայ կանանց առաջին քաղաքական կազմակերպությունը: Նոր հիմնադրված կուսակցություններից էին նաև «Հայաստանի ազգարարային ժողովրդավարական» կուսակցությունը, «Հայաստանի Քրիստոնեադեմոկրատական միությունը», իսկ 1998-1999 թթ. «Հայաստանի ժողովրդական կուսակցությունը», «Հզոր հայրենիք», «Օրինաց երկիր» կուսակցությունները և այլն[416]:

Սակայն պետք է նշել, որ Հայաստանի նորաստեղծ կուսակցությունների մեծ մասը դեռևս չուներ կազմակերպական ամուր կառույցների լայն ցանց, փոքրաթիվ էին և դրանցից շատերը ճևական բնույթ ունեին:

Հայաստանի Հանարպետության քաղաքական կուսակցությունների ուժերի փոխհարաբերության պատկերը որոշակի տեսք ընդունեց 1995 թ. հուլիսի 5-ին տեղի ունեցած խորհրդարանական ընտրություններից հետո: Հայաստանի նոր խորհրդարանի՝ Ազգային ժողովի ընտրություններին մասնակցում էին 13 կուսակցություններ և կուսակցությունների նախընտրական դաշինքներ: Հակասահմանադրական գործունեության մեղադրանքով ՀՀ իշխանությունները 1994 թ. դեկտեմբերի 28-ից հետո կասեցրին Հայ հեղափոխական դաշնակցության կուսակցության գործունեությունը, և նա չկարողացավ մասնակցել ընտրություններին. ՀՅԴ-ն խորհրդարանում բավական ակտիվ և ազդեցիկ գործունեություն էր ծավալել: Հասարակական կյանքից նրա մեկուսացումը բացասաբար անդրադարձավ դեմոկրատական վերափոխումների վրա: Կուսակցությունը մեղադրվեց գաղտնի հակապետական գործունեություն ծավալելու մեջ, իսկ պաշտոնապես կասեցվեց ղեկավար կազ-

[416] Պողոսյան Գ., Հայ հասարակությունը XXI դարասկզբին, Երևան, 2006, էջ 142, 143:

մում արտասահմանցի անդամներ ունենալու և կուսակցությունների վերաբերյալ օրենքը խախտելու ամբաստանությամբ: Կասեցումից անմիջապես հետո սկսվեց «Դրո» այսպես կոչված գաղտնի կառույցի դատավարությունը, որը շարունակվեց շուրջ երկու տարի[417]:

ՀՅԴ կասեցումը և ընտրություններին չմասնակցելը մեծապես ազդեցին Հայաստանում ժողովրդավարության հետագա ծավալման գործընթացի վրա՝ երկրում ստեղծելով քաղաքական լարված իրավիճակ:

Անկախացումից հետո Հայաստանի բազմակուսակցականության պատմությունը կրում է ոչ միանշանակ և անհամաչափ բնույթ և ունի երկու արտահայտված փուլ: Առաջին փուլն ավարտվում է ժողովրդավարության զարգացման շրջան և ընդգրկում է 1990-1994 թթ., երբ կուսակցությունների, ինչպես և քաղաքացիական հասարակության մյուս հաստատությունների (այդ թվում ընդդիմադիր) կայացումն ու զարգացումը չէր կասեցվում, սկզբում նույնիսկ խրախուսվում էր պետության կողմից: Շատ կուսակցություններ պետական օգնություն ստացան գրասենյակային և այլ պայմանների ապահովման համար, հնարավորություն ունեցան կուսակցական մամուլ հրատարակելու:

Երկրորդ փուլը կարելի է անվանել ժողովրդավարության ճգնաժամի շրջան, որը ընդգրկում է 1994 թ. դեկտեմբերից 1998 թ. փետրվարը, երբ անօրինաբար կասեցվեց դաշնակցության գործունեությունը և սկսվեց ընդդիմադիր մյուս կուսակցությունների հալածանքները: Երկրի նախագահն օգտագործեց ամանորյա շնորհավորանքի առիթը ընդդիմադիր կուսակցության արգելման քաղաքական ու քրեական ծանր մեղադրանքների ու համընդհանուր անհարդուրժողականության մթնոլորտ ստեղծելու նպատակով: Ընտրությունները ընդգրկող շրջանում տեղի ունեցան ժողովրդի և իշխանությունների միջև զանգվածային ընդհարումներ և խորացավ ժողովրդավարության ճգնաժամը:

---

[417] Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, N23-24 (1075-1076), դեկտեմբեր, 1994, էջ 10,11:

բ. Սահմանադրական և դատական բարեփոխումները

Սահմանադրության ընդունումից հետո իրականացվեցին պետաիրավական և վարչական բարեփոխումներ:

ՀՀ-ի տարածքային կառավարման կառուցվածքի բարելավման և տեղական ինքնակառավարման խորացման նպատակին էին ծառայում 1995թ. դեկտեմբերին կատարված վարչատարածքային փոփոխությունները և վարչական նոր միավորումների՝ մարզերի ու համայնքների հիմնումը: 1995թ. նոյեմբերի 7-ին Ազգային ժողովն ընդունեց «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» օրենքը[418], որի համաձայն հանրապետության 37 վարչական շրջանների միավորման միջոցով ստեղծվեցին 10 մարզեր՝ Արագածոտնի, Շիրակի, Սյունիքի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Արարատի, Արմավիրի, Վայոց Ձորի, Տավուշի: Մարզի կարգավիճակ ստացավ քաղաքամայր Երևանը: Մարզերը բաժանվեցին 930 համայնքների, որոնցից 47-ը քաղաքային, 12-ը՝ բաղային և 871-ը՝ գյուղական[419]: ՀՀ վարչատարածքային բաժանման արդյունքում գոյացած համայնքները զգալիորեն տարբերվում են միմյանցից՝ բնակչության թվով, աշխարհագրական դիրքով, զարգացածության աստիճանով և այլ հատկանիշներով[420]:

1996թ. հունիսի 30-ին Ազգային ժողովն ընդունեց «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքը, որին հաջորդեց «Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրության մասին» օրենքը[421]: Հստակ չէին տարանջատվում մարզպետների ու համայնքապետերի միջև իշխանության գործառույթների, տարածքի, գույքի, սեփականության հաստատման հարցերը:

Տեղական կառավարման համակարգի վերափոխման նպատակը լիազորությունների և պատասխանատվության ոլորտների սահմանազատումն էր մի կողմից պետության՝ ի դեմս կառավա-

---

[418] Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու (1995-1999թթ.), գիրք Ա, Երևան, 1999, էջ 51-73:
[419] Նույն տեղում:
[420] Տեղական ինքնակառավարման բարեփոխումները Հայաստանում, քաղաքականության տարբերակներ ու ուղիներ, գիրք 1, Երևան, 2004, էջ 6:
[421] Նույն տեղում, էջ 423-443:

րության նշանակած մարզպետների, մյուս կողմից՝ տեղական համայնքների միջև՝ ի դեմս նրանց ընտրովի մարմինների ու ղեկավարների: Մարզպետն օրենսդրությամբ իրեն վերապահված իրավասության սահմաններում պետք է իրականացներ կառավարության տարածքային քաղաքականությունը: Նախագահի հրամանագրով նրան վերապահվեցին ֆինանսների, քաղաքաշինության, բնակարանային և կոմունալ տնտեսության, տրանսպորտի և ճանապարհաշինության, գյուղատնտեսության, կրթության, առողջապահության, սոցիալական ապահովության, մշակույթի և սպորտի, բնության ու շրջակա միջավայրի պահպանության ոլորտները:

1997թ. մայիսի 6-ին ընդունվեցին ՀՀ նախագահի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» և «Երևան քաղաքում պետական կառավարման մասին»[422] հրամանագրերը: Այս հրամանագրերին նախորդել էին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումները հանրապետական, մարզային, քաղաքային և գյուղական համայնքների գույքերի ցանկերը հաստատելու վերաբերյալ[423]:

Հայաստանի Հանրապետությունում դատահիրավական բարեփոխումների հայեցակարգը ձևավորվեց 1995թ. ընդունված Սահմանադրությամբ: Հանրապետության հիմնական օրենքում ամրագրվեցին դատական նոր համակարգը, դատավարության սկզբունքները, արդարադատության կազմակերպման և կառավարման համակարգային մոտեցումները, դրանց կազմն ու գործունեության կարգը:

Սկսվեց նոր դատական համակարգի կազմավորումը, որի առաջին փուլն ավարտվեց 1999 թվականին: Այդ ուղղությամբ կարևոր քայլեր էին առաջին ատյանի, վերաքննիչ, վճռաբեկ դատարանների, ինչպես նաև սահմանադրական, տնտեսական, վարչական դատարանների հիմնումը, դատախազության համակարգի վերա-

---

[422] Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, հ. 11, 20 մայիսի, 1997, էջ 21-42:

[423] ՀՀ կառավարության որոշումների ժողովածու, հ. 7-8, հուլիս, օգոստոս, Երևան, 1996, էջ 38, 39. ՀՀ պաշտոնական տեղեկագիր, հ. 6, 31 մարտի, 1997, էջ 78-90:

փոխմանն ուղղված միջոցառումները: Դատական բարեփոխումների առաջին փուլի շրջանակներում ընդունվեցին Հայաստանի Հանրապետության քաղաքացիական և քաղաքացիական դատավարության, ՀՀ քրեակատարողական օրենսգրքերը, Դատարանակազմության, Դատավորի կարգավիճակի, Արդարադատության խորհրդի, Դատախազության, Փաստաբանական ծառայության և այլ օրենքներ[424]: Դատաիրավական բարեփոխումների իրականացման համար անհրաժեշտ օրենսգրքերի և օրենքների ընդունումը նպաստեց դատական համակարգի կայացմանը[425]:

Դատաիրավական վերափոխումները կոչված են ամրագրելու լիարժեք հարաբերություններ պետական իշխանության և հասարակության միջև և ստեղծելու անկախ ու արդյունավետ գործող, մարդու իրավունքների պատշտպանությունն ապահովող դատական համակարգ: Այս գործում մեծ էր ՀՀ Սահմանադրական դատարանի դերը, որը ձևավորվեց 1996թ. փետրվարի 6-ին: Նրա նախագահ նշանակվեց Գ. Հարությունյանը[426]: ՀՀ Սահմանադրական դատարանն իրավասու է որոշելու օրենքների, Ազգային ժողովի որոշումների, ՀՀ նախագահի հրամանագրերի, կարգադրությունների, կառավարության որոշումների, ինչպես նաև միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը, լուծելու հանրաքվեների, ՀՀ նախագահի և պատգամավորների ընտրությունների արդյունքների հետ կապված վեճերը, որոշում կայացնելու կուսակցության գործունեությունը կասեցնելու կամ արգելելու մասին: Ա-

---

[424] «Դատաիրավական բարեփոխումներն ապահովող օրենսդրություն» (ՀՀ օրենքը միջնորդ դատարանների և դատավարության մասին, ՀՀ դատախազության մասին, ՀՀ դատարանակազմության մասին, Վճռաբեկ դատարանի գործունեության մասին, Փաստաբանական գործունեության մասին), Երևան, 1998., էջ 43-134:

[425] ՀՀ պաշտոնական տեղեկագիր, «ՀՀ քաղաքացիական օրենսգիրք» հ. 17 (50), 10 օգոստոսի, 1998, «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք» հ. 20(53), 9 սեպտեմբերի, 1998, «ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք» հ. 22(55), 21 սեպտեմբերի, 1998, «Դատավորի կարգավիճակի մասին», «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքները:

[426] Խաչատրյան Հ., Հայաստանի Հանրապետության առաջին սահմանադրությունը, Երևան, 1977, էջ 283:

մածայն Սահմանադրության, Սահմանադրական դատարանում նորմատիվ ակտերի սահմանադրականությունը վիճարկելու իրավունքը վերապահվում է միայն հանրապետության նախագահին և Ազգային ժողովի պատգամավորների առնվազն 1/3-ին: Սահմանադրական դատարան դիմելու հնարավորությունից զրկված են ընդհանուր իրավասության դատարանները և այն քաղաքացիները, որոնք հակասահմանադրական նորմատիվ ակտերի առկայությունն ահազանգող առավել հավանական սուբյեկտներն են:

Այս իրավական ակտերը ուժի մեջ մտնելուց հետո 1999 թ. հունիսի 12-ին ներդրվեց եռաստիճան դատական համակարգը, սկսեց գործել վերաքննության ինստիտուտը, որպիսին չէր եղել խորհրդային ժամանակաշրջանում: Սակայն դատական համակարգն, ըստ էության, ամբողջությամբ չդարձավ օրինապաշտ ու անկախ:

Կատարվեցին սահմանադրության և ժողովրդավարության ոգուն համապատասխան այլ բարեփոխություններ ևս:

գ. 1995թ. խորհրդարանական և 1996թ. նախագահական ընտրությունները

Հասարակական-քաղաքական կյանքը հանրապետությունում աշխուժացավ 1995 թ. հուլիսի 5-ի խորհրդարանական ընտրությունների ժամանակ: Ընտրություններն անցկացվեցին ինչպես համամասնական, այնպես էլ մեծամասնական ընտրական համակարգով: Ընդդիմադիր հիմնական կուսակցություններն առաջադրեցին իրենց թեկնածուներին, իսկ ՀՀԾ-ն իր շուրջ համախմբելով մի շարք կուսակցություններ և հասարակական կազմակերպություններ՝ ձևավորեց «Հանրապետական միավորումը»: Նախընտրական պայքարը հիմնականում ընդդիմության և «Հանրապետություն» միավորման միջև էր ընթանում: Տեղի ունեցած ընտրությունների արդյունքների վերջնական ամփոփումից հետո Ազգային ժողովում կուսակցական ուժերի փոխհարաբերությունը ընդունեց հետևյալ տեսքը[427]

[427] «Հայաստանի Հանրապետություն», 8.06.1995:

1. «Հանրապետություն» միավորումը (ՀՀԾ-ից բացի նրա մեջ մտնում էին Հայաստանի Հանրապետական կուսակցությունը, Հայաստանի Քրիստոնեադեմոկրատական միությունը, Սոցիալ-Դեմոկրատ Հնչակյան կուսակցությունը, «Մտավորական Հայաստան» միությունը և Ռամկավար-Ազատական (լիբերալ-դեմոկրատական կուսակցությունը) ստացավ 20 մանդատ:
2. «Շամիրամ» - 8 մանդատ:
3. Հայաստանի կոմունիստական կուսակցություն - 6 մանդատ:
4. Ազգային ժողովրդավարական միություն - 3 մանդատ:
5. Ազգային ինքնորոշում միավորում - 3 մանդատ:

Մեծամասամբ անկուսակցական պատգամավորների միավորման հետևանքով կազմվեց «Բարեփոխումներ» անունը կրող խումբ, որը խորհրդարանում ուներ 35 տեղ[428]: Ինչպես ցույց են տալիս այս տվյալները, կառավարող Հայոց համազգային շարժման կողմից գլխավորվող «Հանրապետություն» միավորումը բացարձակ մեծամասնություն ուներ բարձրագույն օրենսդիր իշխանության մեջ (191 պատգամավորներից 114-ը): Նրանցից 65-ը ՀՀԾ անդամներ էին, 6-ը՝ ՌԱ(ԼԴ)Կ, 4-ը՝ ՀՀԿ, 3-ը՝ ՀՔԴՄ, 3-ը՝ Մտավորական Հայաստան (ՄՀ) և 2-ը՝ ՍԴՀԿ Խմբակցության, մնացյալ 31 անդամներն անկուսակցականներ էին [429]: Արտաքին և ներքին քաղաքականության սկզբունքային հարցերում նրան էին պաշտպանում «Բարեփոխումներ» պատգամավորական խումբը և «Շամիրամ» խմբակցությունը, ինչպես նաև մի քանի անկախ պատգամավորներ[430]: Երեք ընդդիմադիր կուսակցություններ (ՀԿԿ, ԱԺՄ, ԱԻՄ) միասին ունեին ընդամենը 15 տեղ, որը նրանց զրկում էր խորհրդարանի գործունեության վրա որևէ ազդեցություն ունենալու հնարավորությունից: Սակայն նրանց գործունեությունը խորհրդարանում զգալիորեն նպաստում էր բնակչության հասարակական-քաղաքական ակտիվության բարձրացմանը և համապետական հարցերին մասնակից դարձնելուն[431]:

---

[428] ՀԱԱ, ֆ. 113, ց. 166, գ.456, թ. 1:
[429] Տե՛ս Պողոսյան Գ., նշված աշխ., էջ 148:
[430] Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով, 1996, Երևան, 1996, էջ 223, 224:
[431] Նույն տեղում:

1995 թ. խորհրդարանական ընտրությունների արդյունքների հիման վրա կարելի է եզրակացնել, որ այն ժամանակ Հայաստանի Հանրապետության առաջատար և առավել ազդեցիկ կուսակցություններն էին Հայոց համազգային շարժումը, Հայաստանի կոմունիստական կուսակցությունը, Ազգային ժողովրդավարական միությունն ու Ազգային ինքնորոշման միավորումը:

Խորհրդարանական այդ ընտրություններն անցան աննախադեպ խախտումների, անարդարության և բռնությունների մթնոլորտում: Խորհրդարանում անհրաժեշտ թվով տեղեր նվաճելու նպատակով իշխող ՀՀԸ կուսակցությունը դիմեց քվեաթերթիկների բացահայտ կեղծման կատարեց ժողովրդավարության գաղափարները վարկաբեկող ամենատարբեր գործողություններ, ինչպես, օրինակ, «զուգահեռ» կազմակերպությունների ստեղծումը, կուսակցությունները մեկը մյուսին հակադրելը[432]: Այսպես, հակառակ ՀՅ դաշնակցության ստեղծվեց Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցությունը, Ռ-ԱԿ-ի դեմ՝ Ռամկավար-ազատական (լիբերալ-ժողովրդավարական) կուսակցությունը, կանանց բազմաթիվ կազմակերպությունների կողքին «Շամիրամը» և այլն: Խորհրդարանական այդ «ընտրություններով» Հայաստանում հիմք դրվեց զանգվածային ընտրակեղծիքների ավանդույթին:

Այդ ընտրությունները, որոնք պետք է ապահովեին հանրապետությունում քաղաքական ուժերի դասավորության իրական պատկերը խորհրդարանում, ինչպես տեղական, այնպես էլ աշխարհի 18 երկրներից ժամանած դիտորդների մեծամասնության համոզմամբ անցան օրենքի աննախադեպ խախտումների, անարդարությունների ու բռնությունների մթնոլորտում[433]:

Հետագայում հանրապետությունում բոլոր մակարդակներով անցկացվող ընտրությունները վերածվում էին ձևական միջոցառումների՝ նախապես հայտնի արդյունքներով:

Այսպիսով, խորհրդարանում առավել շատ տեղեր ստանալու ձգտումով իշխող կուսակցությունները, որպես կանոն (ՀՀԸ-ն

---

[432] Տե՛ս նույն տեղում:

[433] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 8.07.1995, Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան, 1998, Պետության դերը, Երևան, 1998, էջ 21, 22:

սկզբում, իսկ ապա մյուսները՝ հետագայում), խախտում էին օրինականությունը, կատարում անարդար ու անթույլատրելի գործողություններ, որով ժողովրդի աչքում կորցնում էին վստահությունն ու հեղինակությունը: Ավելին, լայն ծավալներ ընդունեցին քաղաքական հակառակորդների դեմ կատարվող բռնաճնշումները:

1995թ. հուլիսի 5-ին խորհրդարանական նոր ընտրությունների շնորհիվ ձևավորվեց ՀՀ առաջին գումարման Ազգային ժողովը, որը կազմված էր 190 պատգամավորից, որից 150-ը ընտրված էին մեծամասնական ընտրական համակարգով՝ միամանդատ ընտրատարածքներից, իսկ 40-ը՝ համամասնական ընտրական համակարգով՝ հանրապետության ողջ տարածքն ընդգրկող մեկ բազմամանդատ ընտրատարածքից: Սահմանադրությամբ ամրագրվեց, որ խորհրդարանն ընտրվում է չորս տարի ժամկետով: Հայաստանի Ազգային ժողովի առաջին գումարման նստաշրջանի աշխատանքներն սկսվեցին 1995թ. հուլիսի 27-ին: Այն ուներ վեց մշտական հանձնաժողով, վեց խմբակցություն ու պատգամավորական խումբ: Ընտրությունների արդյունքներով համամասնական ընտրակարգով օրենքով սահմանված հինգ տոկոսի սահմանագիծը հաղթահարեցին հինգ կուսակցություններ, որոնց միջև պատգամավորական տեղերը բաշխվեցին հետևյալ կերպ՝ 1. «Հանրապետություն» միավորում-114 պատգամավոր, որից 68-ը՝ ընտրված են մեծամասնական ընտրակարգով, «Շամիրամ» կանանց միավորում-8, 3. ՀԿԿ-7, որից 1-ը՝ մեծամասնական ընտրակարգով 4. ԱԺՄ-5, որից 2-ը՝ մեծամասնական ընտրակարգով 5. ԱԻՄ-3[434]: Ազգային ժողովի նախագահ ընտրվեց Բաբկեն Արարքցյանը: Այս խորհրդարանը գլխավոր ուշադրությունը նվիրեց դատական համակարգի բարեփոխումներին, վավերացրեց միջազգային բազում պայմանագրեր, փորձեց կարգավորել հարկային վարչարարությունը:

Առաջին անգամ անկախության շրջանում հայ հասարակությունը քաղաքական, տնտեսական, գաղափարակախոսական տեսակետից պառակտվեց: Մյուս կողմից, պետության օտարացումը

[434] Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով, 1996թ., էջ 205-206:

հանգեցրեց հասարակության դիմադրության, որը ավելի խիստ ձևով արտահայտվեց 1996 թ. հերթական նախագահական ընտրություններում:

Բնակչության հասարակական-քաղաքական ակտիվության բարձրացմանը նպաստող կարևոր իրադարձություններից էր 1996 թ. սեպտեմբերի 22-ին տեղի ունեցած նախագահական ընտրությունները, որոնք անցան ակտիվ քաղաքական պայքարի պայմաններում:

Հայաստանում սկսվեց ժողովրդավարության նոր փուլ, երբ հասարակությունը, ի դեմս ընդդիմադիր կուսակցությունների, համախմբվեց իր քաղաքացիական ազատությունները պաշտպանելու համար:

Ժողովրդավարության զոհաբերությունը հանուն «պետական շահերի», ինչը շարունակում էր պահանջել իշխանությունը, այսուհետ մերժվում էր հասարակության կողմից:

Ելնելով առաջին նախագահական ընտրությունների փորձից՝ ընդդիմադիր 5 քաղաքական կուսակցությունները (ԱԺՄ-ն, ԱԻՄ-ը, ՀԴԿ-ն, ՀՅԴ և ՍԻՄ-ը) միավորվեցին «Ազգային համաձայնություն» դաշինքի մեջ և առաջարկեցին Վազգեն Մանուկյանի թեկնածությունը[435]: Ընդդիմադիր կուսակցությունների դաշինքի ստեղծումը և 4 թեկնածուների միանալը ԱԺՄ-ի առաջնորդ Վազգեն Մանուկյանի հետ, ստեղծեց նոր իրավիճակ, կտրուկ աճեց ընտրողների ակտիվությունը: ՀԿԿ-ն առաջարկեց Սերգեյ Բադալյանի, ԳիԱրՔՄ-ն Աշոտ Մանուչարյանի, իսկ «Հանրապետություն» միավորումը (ՀՀՇ-ն, ՀՀԿ-ն, ՔԴՄ-ն, ՌԱ(ԼԴ)Կ, ՍԴՀԿ «Մտավորական Հայաստանը»)՝ հանրապետության նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի թեկնածությունը[436]: Չափազանց մարդաշատ պայմաններում (հանրահավաքներ և ցույցեր) ընթացան նախընտրական քարոզչությունները:

Ընտրությունները անցկացնելու համար ձևավորվեց 1598 ընտ-

---

[435] Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան, 1997, Երևան, 1997, էջ 28, Մանուկյան Վ., Հայկական երազանքը գոյատևման փակուղում, Երևան, 2002, էջ 345:

[436] «Հայաստանի Հանրապետություն», 1.10.1996:

րական տեղամաս: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի հրավերով հանրապետության նախագահի ընտրության նախապատրաստման և անցկացման, արդյունքների ամփոփման գործընթացին դիտողի կարգավիճակով մասնակցեցին ԱՊՀ, Միջխորհրդարանական վեհաժողովի խորհրդի, ԵԱՀԿ-ի ժողովրդավարական օրենքների և մարդու իրավունքների գրասենյակի, ինչպես նաև Վրաստանի խորհրդարանի ավելի քան 100 դիտորդներ: Սեպտեմբերի 22-ին կայացան նախագահական ընտրությունները: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից 1996 թ. սեպտեմբերի 25-ին պաշտոնապես հրապարակված՝ Հայաստանի Հանրապետության նախագահի ընտրության արդյունքներով ընտրություններին մասնակցել է ընտրողների 60%-ը՝ 1 մլն 333 հազար 204 ընտրող: Թեկնածուների օգտին տրված ձայների թիվը կազմել է 1 մլն 249 հազար 893, որից 79.347-ը քվեարկել է հանրապետության նախագահի թեկնածուներ Սերգեյ Բաղալյանի օգտին (6,34 %), Աշոտ Մանուչարյանի օգտին 7.529 (0,6%), Լևոն Տեր-Պետրոսյանի օգտին 646.888-ը՝ (51.75%), իսկ Վազգեն Մանուկյանի օգտին 516.129-ը՝ (41.29%)[437]:

Այսպիսով, կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամների ձայների մեծամասնությամբ (16 կողմ, 2 դեմ) 1996 թ. սեպտեմբերի 25-ի որոշմամբ Հայաստանի Հանրապետության նախագահ ընտրվեց երկրորդ անգամ Լևոն Տեր-Պետրոսյանը: Նոյեմբերի 11-ին Ազգային ժողովի հատուկ նիստում տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի երդման հանդիսավոր արարողությունը:

Դժգոհելով նախագահական ընտրությունների սեպտեմբերի 25-ի արդյունքներից՝ «Ազգային համաձայնություն» դաշինքը և նրան հարող կուսակցությունները կազմակերպեցին հանրահավաքներ ու ցույցեր, որտեղ պահանջեցին անցկացնել կրկնակի քվեարկություններ՝ գտնելով, որ նախագահական ընտրությունների արդյունքները կեղծվել են: 1996 թ. նախագահական ընտրությունները հասարակության կողմից ընդունվեցին որպես անօրինա-

[437] Տե՛ս նույն տեղում:

զոր: Շուտով 1996 թ. սեպտեմբերի 25-ի հանրահավաքը վերածվեց հանրապետության Ազգային ժողովի շենքի վրա ցուցարարների կողմից կազմակերպված գրոհի, որի արդյունքում ԱԺ նախագահն ու փոխնախագահը կրեցին մարմնական վնասվածքներ և շենքին հասցվեց նյութական վնաս[438]: Այս առիթն օգտագործելով՝ հանրապետության իշխանությունները վճռական գրոհի անցան ընդդիմության դեմ: Հանրապետությունում արգելվեց հանրահավաքներ ու ցույցեր կազմակերպելը: Սկսվեցին ընդդիմության առաջնորդների ու ակտիվիստների անօրինական ձերբակալություններն ու բռնությունները, ապա նրանց նկատմամբ եղան պատվիրված քաղաքական դատավարություններ:

1996 թ. սեպտեմբերի 26-ին գումարված ԱԺ արտահերթ նիստը լսեց «Հանարպետության գլխավոր դատախազի միջնորդությունների մասին» հարցը, դատապարտեց կատարված միջադեպը և որոշեց մի խումբ ընդդիմադիր ակտիվիստների հետ միասին ԱԺ պատգամավորների, ընդդիմադիր կուսակցությունների 8 ներկայացուցիչների ևս ենթարկել քրեական պատասխանատվության[439]:

Որոշակի ժամանակով արգելվեցին հանրահավաքներ և ցույցեր կազմակերպելը հանրապետությունում: Չնայած այս ամենին՝ ընդդիմության ներկայացուցիչները դիմեցին հարցի լուծման օրինական ճանապարհին: 1996 թ. սեպտեմբերի 26-ին հանրպետության նախագահի թեկնածուներ Վազգեն Մանուկյանն ու Աշոտ Մանուչարյանը հայց ներկայացրին ՀՀ Սահմանադրական դատարան՝ 1996 թ. սեպտեմբերի 22-ին կայացած Հայաստանի Հանրապետության նախագահի ընտրական արդյունքները վիճարկելու վերաբերյալ: Ընտրությունների արդյունքների իրավազորությունը քննության առնելով՝ ՀՀ Սահմանադրական դատարանը՝ ըստ էության կատարեց իշխանության կամքը և մերժեց ընդդիմության լրջորեն փաստարկված հարցը: Դրանով ավելի խորացավ ներքաղաքական ճգնաժամը[440]:

---

[438] Տե՛ս նույն տեղում:

[439] Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի տեղեկագիր, N17-18, սեպտեմբեր 1996, էջ 10-12:

[440] «Հայաստանի Հանրապետություն», 27.09.1996:

1990-ական թվականների սկզբում իշխանության փոփոխման և ընդհանուր ոգևորության մթնոլորտում ընդդիմության գործունեության համար ասպարեզ չկար: Սակայն հետագայում, երբ ձևավորվեցին պետական հիմնական հաստատությունները, և սկսվեց տնտեսական վերափոխումների գործընթացը, բնականորեն, որոշ չափով ընդլայնվեց նաև ընդդիմության դաշտը: Պետք է նշել, որ հետագայում Հայաստանում ընդդիմությունը թույլ էր և քաղաքական ասպարեզում չկարողացավ ստեղծել անհրաժեշտ հիմքեր: Լավագույն դեպքում բավարարվեց խորհրդարանում խմբակցություններ ստեղծելով և իշխանությունների քաղաքականության այս կամ այն բնագավառը քննադատելով:

դ. Քաղաքական ճգնաժամի խորացումը և 1998թ. իշխանափոխությունը

Փաստորեն 1995 թվականի խորհրդարանական և նախագահական ընտրությունների ժամանակ թույլ տրված խախտումներից և կեղծիքներից հետո ընտրական գործընթացի նկատմամբ ընտրողների վստահության աստիճանը շեշտակի նվազեց: 1996 թ. նոյեմբերին ընտրողների միայն 12%-ն էր օբյեկտիվ համարում գործող ընտրական համակարգը: 1996 թ. ընտրություններից մինչև 1998 թ. փետրվարը տեղի ունեցավ Հայաստանի իշխանությունների և հասարակության լիակատար օտարացում:

1996 թ. նախագահական «ազատ, բայց անարդար» ընտրություններից հետո ժողովրդի և պետության տևական առճակատումն ավելի խորացավ: Մեկուկես տարվա ժամանակահատվածը անչափ ծանր անդրադարձավ ինչպես հասարակության ներքաղաքական և հոգեբանական վիճակի, այնպես էլ երկրի միջազգային հեղինակության վրա: Անարդար ընտրությունները զգալիորեն թուլացրին Հայաստանի դիրքերը նաև ղարաբաղյան բանակցություններում՝ զրկելով երկիրը «Կովկասում ժողովրդավարության և կայունության հենակետի» համբավից: Մյուս կողմից՝ անօրինականության ստվերն ընկավ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի ողջ գործունեության վրա՝ նրան դնելով քիմակիցներից կախվածության

մեջ: Երկրի իշխանությունները շարունակում էին վարկերի միջոցով ապահովել տնտեսության կենսունակությունը՝ հետզհետե ընկնելով պարտքի թակարդը: Երկրի ներսում ստեղծվեց ամենաթողության ու անպատժելիության մթնոլորտ:

Արտադրության որոշ հատվածներ անցան ստվերային տնտեսության հսկողության տակ՝ հովանավորվելով իշխանությունների որոշ «անձեռնմխելի» ներկայացուցիչների կողմից: Կորցնելով քաղաքական, տնտեսական և գաղափարախոսական հեղինակությունն ու համբավը՝ նրանք շահագործեցին իրենց քաղաքական զինանոցի վերջին միջոցը՝ ղարաբաղյան խնդիրը[441]:

1997 թ. նոյեմբերին Լ. Տեր-Պետրոսյանի հրավերով Երևան տեղափոխվեց Արցախի հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանը և նշանակվեց Հայաստանի Հանրապետության վարչապետ:

Ի վերջո տևական առճակատումը հանգեցրեց գործող նախագահի հրաժարականին:

Տնտեսական զրկանքներից, սոցիալական անարդարությունից, մամուլի ու ընդդիմության վրա գործադրած ճնշումներից զայրացած ժողովուրդը դեռևս հանդուրժում ու տոկում էր միայն հանուն Ղարաբաղի անվտանգության: Այս շրջանում Ղարաբաղը դարձավ Հայաստանի ներքին կայունության գրեթե միակ ու փխրուն երաշխիքը: Ղարաբաղյան հարցում Լ. Տեր-Պետրոսյանի զիջողական, պարտվողական քաղաքականությամբ ստեղծվեց քաղաքական այն զարգացումը, որը երկու ամսվա ընթացքում հանգեցրեց համազգային շարժման կարգախոսներով ստեղծված կուսակցության՝ ՀՀՇ-ի տասնամյա իշխանության փլուզմանը: Ջիջելով 1988-91 թթ. ձեռք բերված ժողովրդավարական նվաճումները հանուն «պետական շահերի»՝ հայ հասարակությունը վճարեց 1994-1998 թվականների քաղաքական, տնտեսական և գաղափարախոսական ճգնաժամով: Մյուս կողմից՝ ՀՀՇ վարչակարգի հիմնական սխալը ոչ թե «ազգային շահերի դավաճանության», այլ ժողովր-

[441] Տե՛ս Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան 1998, Պետության դերը, Երևան, 1998, էջ 22:

դավարության սկզբունքներից հրաժարման, հասարակությունից պետության օտարացման և մեկուսացման մեջ էր:

Իշխանության անօրինազորության ճգնաժամը՝ Ղարաբաղի հարցում նախագահի դիրքորոշման հետ ժողովրդի անհամաձայնությանը զուգահեռ, դարձավ 1998 թ. փետրվարի 3-ին ՀՀ առաջին նախագահի հրաժարականի լուրջ նախադրյալներից մեկը:

Նախագահական երկրորդ ընտրություններում պարտություն կրելով, կեղծիքով՝ իշխանությունը պահելու ջանքերը չէին կարող արդյունավետ ավարտ ունենալ, երբ արդեն մարել էր նրա նկատմամբ ժողովրդի ունեցած հավատի վերջին նշույլը:

1998 թ. փետրվարին ՀՀ նախագահի հրաժարականից հետո հետևեցին նաև Ազգային ժողովի նախագահ Բաբկեն Արարքցյանի և նրա երկու տեղակալների հրաժարականները: Ընտրվեց ԱԺ-ի նոր նախագահ՝ Խոսրով Հարությունյանը երկու տեղակալներով[442]:

ՀՀ նախագահի հրաժարականին նախորդեց նաև պատգամավորական խմբակցությունների և խմբերի կտրուկ փոփոխություն, որն արտացոլվեց առաջին հերթին «Երկրապահ» պատգամավորական խմբի զգալի աճով (մինչև 70 անդամ)՝ 1998 թվականին 1996 թվականի նկատմամբ աճելով 37,6%-ով, «Հանրապետություն» խմբակցության թվակազմի նվազմամբ՝ 1996 թ. 60%-ից իջնելով 1998 թ. 26,9%-ի: Նվազեցին նաև «Բարեփոխումներ» խումբը՝ համապատասխանաբար 16,60%-ից՝՝ 5,40%-ի, ՀԿԿ-ի կազմը՝ 3,80%-ից 3,70%-ի, ԱԻՄ-ը՝ 1,60%-ից 1,10%-ի: Աճեց անկախ պատգամավորների խումբը՝ 10,60%-ից դառնալով 12,90%, իսկ ԱԺՄ-ի կազմը մնաց անփոփոխ՝ 2,70%[443]:

1998 թ. փետրվարին ՀՀ նախագահի պաշտոնակատար Ռոբերտ Քոչարյանի նախաձեռնությամբ վերականգնվեց Դաշնակցության պաշտոնական կարգավիճակը, և ազատ արձակվեցին քաղբանտարկյալները, արգելված մամուլը վերսկսեց գործել:

Հայաստանում 1998 թվականի արտահերթ նախագահական

---

[442] ՀՀ պաշտոնական տեղեկագիր, N4 (37), 24.02.1998, էջ 33:

[443] «Հայաստանի Հանրապետություն», 7.04.1998, Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան 1998, էջ 36:

ընտրությունները նշանակվեցին մարտի 16-ին: Կարգախոսը դարձավ. «Կարևոր չէ՝ ով է հաղթելու, կարևորն է՝ ինչպես»: Այդ ընտրություններին մասնակցեցին 12 թեկնածուներ: Այն ընթացավ երկու փուլով և ավարտվեց մարտի 30-ի քվեարկությամբ[444]:

Տեղական և միջազգային դիտորդների վկայությամբ այդ ընտրությունները կարելի է բնութագրել ազատ ու արդար՝ չնայած ընթացան խախտումներով, որոնք, ըստ ԵԱՀԿ փորձագետների, «չազդեցին վերջնական արդյունքների վրա»: Որոշ բարդություններ գրեթե անխուսափելի էին գործող սահմանադրության շրջանակներում, կարծես հարմարեցված էին նախորդ վարչակարգի շահերին: Բավական է ասել, որ ըստ գործող ընտրական օրենքի, նախագահի թեկնածուները պետք է ունենային Հայաստանի Հանրապետության քաղաքացիության տասը տարվա ժամկետ, այն դեպքում, երբ երկրի անկախությունը հռչակվել էր ընդամենը յոթ տարի առաջ:

1998թ. արտահերթ նախագահական ընտրությունները թեև անցան խախտումներով, սակայն կասկածներ չառաջացրին վերջնական արդյունքի տեսակետից և լուրջ քայլ էին ժողովրդավարության ճանապարհին: Ընտրություններից հետո չեղան բողոքի զանգվածային միջոցառումներ կամ արդյունքների փաստարկված հերքումներ: ՀՀ նախագահի ընտրության առաջին փուլի վերջնական տվյալներով ընտրողների ընդհանուր թվի 2 մլն 293 հազար 636-ից ընտրություններին մասնակցեց 1մլն 455 հազար 605 հոգի: Թեկնածուների միջև ձայները բաժանվեցին հետևյալ ձևով՝ Ռոբերտ Քոչարյան՝ 38,76%, Կարեն Դեմիրճյան՝ 30,67%, Վազգեն Մանուկյան՝ 12,24%, Սերգեյ Բադալյան՝ 11,01%, Պարույր Հայրիկյան՝ 5,4%, Դավիթ Շահնազարյան՝ 0,48%, Արտաշես Գեղամյան՝ 0,45%, Վիգեն Խաչատրյան՝ 0,28%, Հրանտ Խաչատրյան՝ 0,21%, Արամ Սարգսյան՝ 0,19%, Յուրի Մկրտչյան՝ 0,18%, Աշոտ Բլեյան՝ 0,11%[445]:

Այսպիսով, երկրորդ փուլ դուրս եկան Ռ. Քոչարյանն ու Կ. Դե-

---

[444] Տես նույն տեղում:

[445] Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, N10 (43), 15.05.1998, էջ 22: «Հայաստանի Հանրապետություն», 7.04, 1998:

միրճյանը: ՀՀԴ-ն, ՀՀԿ-ն, «Երկրապահ» կամավորների միությունը, ՀԴԿ-ն, ԱԻՄ-ը, ՍԻՄ-ը և այլ կուսակցություններ որոշումներ ընդունեցին Ռ. Քոչարյանի թեկնածությունը նախագահական ընտրություններում պաշտպանելու վերաբերյալ: Սակայն պետք է նշել, որ ՀԿԿ Կենտկոմի նախկին առաջին քարտուղարը՝ Կ. Դեմիրճյանը նույնպես ուներ իր սոցիալական հենարանը ժողովրդի և կուսակցությունների մեջ, որոնցից էին՝ «Հայաստանի ժողովրդական կուսակցությունը», «Հայաստանի Սոցիալիստական կուսակցությունը» (ՀՍԿ), Հայաստանի Միացյալ, առաջադիմական կուսակցությունը (ՀԱԿ), Լիբերալ-ժողովրդավարական կուսակցությունը (ԼԺԿ) և այլն:

Ռ. Քոչարյանից բացի, որը ՀՀ վարչապետն էր 1997 թ. մարտից, 1998 թ. փետրվարից ՀՀ նախագահի պաշտոնակատարը և ուներ իր ձեռքին իշխանության լծակներ, մյուս թեկնածուն՝ Կարեն Դեմիրճյանը նույնպես հաջողությամբ վարեց ընտրարշավը, խոստումներ տալով՝ ժողովրդի մեջ մտնելով, նրա հետ խոսելով, իր ասելիքը բացատրելու կարողությամբ՝ լավ տիրապետելով այսպես կոչված «իշխանության մեխանիզմին»: Հատկանշական է, որ ՀԿԿ Կենտկոմի նախկին քարտուղարը, որ ընտրության վերջին փուլում ստացավ ձայների 40,5%-ը, հանդես էր գալիս ոչ թե կոմունիստական կամ սոցիալիստական, այլ պրագմատիկ ցենտրիստական գաղափարախոսության դիրքերից: Անշուշտ, նրա ստացած քվեները խոսուն էին և վկայում էին ժողովրդի մեջ նրա հեղինակության աճի և անցյալի բարվոք կյանքը վերադարձնելու կարոտախտի մասին: Ի տարբերություն համարյա բոլոր հետխորհրդային և անգամ որոշ արևելաեվրոպական երկրների, որտեղ ԽՍՀՄ-ի փլուզումից անմիջապես հետո կամ որոշ ժամանակ անց իշխանության վերադարձան նախկին համայնավար առաջնորդները, Հայաստանում դա տեղի չունեցավ անգամ տասը տարի անց՝ երրորդ նախագահական ընտրությունների ընթացքում: Նույնիսկ երկրի տնտեսական անկման պայմաններում քաղաքական ազատությունները ջատագովող հայ հասարակությունը այդ տարիներին, որպես բնական և անխուսափելի ընթացք, ազատականությունը ընդունեց նաև տնտեսության ոլորտում՝ «ազատ շուկայական հարաբերությունների» կարգախոսների ներքո: Այսպիսով,

նախկին խորհրդային համարյա բոլոր պետություններում հաջողված «սոցիալական կարոտախտ»-ի հնարքը նույն արդյունքը չտվեց Հայաստանի Հանրապետությունում: Հայ հասարակության մեծամասնությունը մերժեց պետության առաջնորդի՝ որպես «բարի հովանավորի» կերպարը հօգուտ Ռ. Քոչարյանի առաջարկած «պետություն որպես գործընկեր» գաղափարի: Երկրորդ փուլում ստանալով ձայների 59,49%-ը՝ հանրապետության նախագահ ընտրվեց Ռոբերտ Քոչարյանը[446]:

Ռ. Քոչարյանի հաղթանակը չեշտեց հայկական ժողովրդավարության ազգային խոր բնույթը, քանի որ նախագահի պաշտոնը հանձնելով Ղարաբաղյան պատերազմի հերոսին՝ հասարակությունը ակնկալում էր պետության հետևողական աջակցության երաշխիքը ազգային հիմնախնդիր հանդիսացող ղարաբաղյան հարցում:

Հայաստանում ընտրությունները կատարվեցին ոչ միայն ժողովրդավարության աստիճանը գնահատելու, այլ նաև պետության ժողովրդավարացումը խթանելու առաքելությամբ՝ ներգրավելով կուսակցությունները, զանգվածային լրատվության միջոցները, ՀԿ-ները, ինչպես նաև անհատներին քաղաքացիական հասարակության կերտման գործընթացի մեջ: Վերանալով ընտրությունների անճնավորված արդյունքներից՝ հարկավոր է նշել, որ թեկնածուների մեծ մասը՝ ազգային ժողովրդավարներից մինչև համայնավարները, հանդես էին գալիս երկրի անհետաձգելի ժողովրդավարացման անհրաժեշտության դիրքերից: Բոլորն էլ համամիտ էին՝ քաղբանտարկյալների ազատման, արգելված կուսակցությունների վերահաստատման, փակված թերթերի վերաբացման, երկքաղաքացիության ընդունման, խորհրդարանական նոր ընտրությունների և սահմանադրության մեջ փոփոխությունների անհրաժեշտության հարցում: Թեկնածուների ծրագրային տարբերությունները հիմնականում վերաբերում էին տնտեսավարման եղանակներին՝ պետական պլանավորումից մինչև ազատականացում: Այսպիսով, Հայաստանում ժողովրդավարացման գործընթացը, որը բավական երկար ժամանակ պետության և հասարակության միջև հակամարտություն էր առաջացնում, ազգային անկախ պե-

[446] Տե՛ս նույն տեղում:

տականության պայմաններում միտում ուներ վերածվելու հասարակության և պետության համագործակցության:

Հայաստանի նորընտիր իշխանության գործունեության սկիզբը նշանավորվեց քաղաքացիական ազատությունների վերականգնմամբ, քաղաքական դատավարությունները կարճելով: Նախագահ Քոչարյանի առաջին քայլերը վկայում էին հասարակության համախմբման և ազգային համաձայնության հասնելու իր յուրովի ծրագրի մասին: «Արհեստավարժների կառավարություն» ստեղծելու կարգախոսով նոր իշխանությունները ձեռնամուխ եղան ընդդիմության լայն ընդգրկմանը երկրի կառավարման գործընթացում: Նրանց հիմնական հենարանը դարձավ «Երկրապահ» և դրա հիմքի վրա ձևավորված Հանրապետական կուսակցությունը: ՀՀ նախագահին առընթեր ստեղծված Քաղաքական խորհուրդը մեծ դեր կատարեց բազմակուսակցական կապերն ամրապնդելու ուղղությամբ: Խորհուրդը մերժեց նախորդ իշխանություններին օրենքի ուժով դատապարտելու և երկրին հասցրած նյութական ու բարոյական վնասները փոխհատուցելու իրավական գործը, որն իր արտահայտությունը գտավ Քաղաքական խորհրդի անդամ երեք կուսակցությունների՝ ԳիԱրՔՄի, ՍԻՄ, ՀՀԴԿ միացյալ կարծիքում: Ընտրություններում Ռ. Քոչարյանին աջակցություն ցույց տված նախկին ընդդիմադիրները բազմիցս հայտարարում էին, որ նախորդ վարչակարգի ներկայացուցիչները պետք է պատասխան տան օրենքի առաջ: Միաժամանակ ակնհայտ էր դառնում, որ փակուղի էին մտել Սահմանադրության բարեփոխման, նախորդ վարչակարգի ժամանակ տեղի ունեցած աղմկալի սպանությունների հետաքննության և էներգետիկայի բնագավառում իրականացված խոշորամասշտաբ հափշտակումների բացահայտման խնդիրները:

Սակայն եթե առաջին նախագահը ջանում էր ջլատել ընդդիմությանը բիրտ ճնշումների կամ խաղարկումների «մտրակով», ապա երկրորդ նախագահը կամա թե ակամա թուլացնում էր ընդդիմության՝ որպես ժողովրդավարական հակակշռի դերը: Այսպես, քիչ թե շատ աչքի ընկած կուսակցությունների ղեկավարները՝ ինչպես ՍԻՄ-ի նախագահ Հրանտ Խաչատրյանը, ՀԴԿ-ի նախագահ Արամ Սարգսյանը նշանակվեցին նախագահի խորհրդականներ,

իսկ ԱԻՄ-ի նախագահ Պ. Հայրիկյանը՝ Սահմանադրության վերափոխման հանձնաժողովի նախագահ, ապա՝ Մարդու իրավունքների պաշտպանության հանձնաժողովի նախագահ: Նախագահի և ընդդիմության այս փխրուն համախոհությունը շուտով փորձության ենթարկվեց ազգային տնտեսության շարունակվող ապապետականացման ընթացքում, որը տարակուսանք առաջացրեց բնակչության շրջանում, ինչպես օրինակ կոնյակի գործարանի կամ կապի համակարգի սեփականաշնորհման դեպքերը և այլն:

Մյուս կողմից՝ նախկին վարչակազմի օրոք կատարված քաղաքական ու տնտեսական հանցագործությունների քննության առաջին իսկ փորձերը հանդիպեցին կոշտ դիմադրության, ինչի ապացույցը դարձավ Հայաստանի գլխավոր դատախազի սպանությունը: Հայաստանի ներքաղաքական զարգացումների համար կարևոր նշանակություն ունեցավ նաև ընտրական օրենսգրքի քննարկման ու ընդունման համար ընթացող պայքարը: 1996 թվականից ի վեր ՀՀ ԱԺ-ում սկսվեց ընտրությունների մասին նոր օրենսդրության նախապատրաստման աշխատանքը, որն առանձնապես թափ առավ 1998 թ. նախագահական ընտրություններից հետո: 1995 թ. խորհրդարանական և 1998 թ. նախագահական ընտրությունները ցուցադրեցին ՀՀ ընտրական օրենսդրության փոփոխության կենսական անհրաժեշտությունը, ինչը նշվեց գործնականորեն միջազգային բոլոր դիտորդների կողմից[447]: Հիմնականում բանավեճի առիթը ԱԺ-ում մեծամասնական և համամասնական տեղերի հարաբերակցության հարցն էր: Քաղաքական կուսակցությունները պնդում էին, որ ըստ կուսակցական ցուցակների տեղերի քանակի նշումը զգալիորեն կբացառի տեղայնության և ընտրողներին կաշառելու դրսևորումները ընտրությունների ընթացքում: Դրական միտում կարելի է համարել 1998 թ. ընտրություններին ընտրողների մասնակցության որոշ աճը՝ 1998 թ. տվյալներով քաղաքացիների 42%-ը մինչև ընտրությունները վստահություն էր հայտնում առաջին ընտրությունների արդյունքների նկատմամբ[448]:

---

[447] Տե՛ս Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան 1998, էջ 37:
[448] Տե՛ս նույն տեղում:

1999 թ. փետրվարին, երկարատև քննարկումից հետո, երկրորդ ընթերցմամբ ընդունվեց ընտրական օրենսգիրքը, որը ևս զերծ չէր թերություններից: Նրա ընդունումից անմիջապես հետո, 1999 թ. հունվարի 25-ին, ՀՀ գլխավոր դատախազը Ազգային ժողովում միջնորդություն ներկայացրեց Վանո Սիրադեղյանին անձեռնմխելիությունից զրկելու և կալանավորելու թույլտվություն ստանալու վերաբերյալ՝ նրան մեղադրելով մի շարք սպանություններ կազմակերպելու մեջ, սակայն հունվարի 26-ին խորհրդարանը մերժեց այդ պահանջը: Միայն նախագահի բացահայտ նախազգուշացումից հետո փետրվարի 17-ին Ազգային ժողովը բավարարեց գլխավոր դատախազի երկրորդ միջնորդությունը (թեև մերժեց կալանավորման թույլտվություն տալու կետը): Սակայն Վ. Սիրադեղյանն արդեն հեռացել էր հանրապետությունից և մինչև մայիս մնաց արտասահմանում, որտեղից վերադարձավ մեկ ամիս անց և, մասնակցելով Ազգային ժողովի ընտրություններին՝ դարձավ պատգամավոր: Սակայն 1999 թ. նոյեմբերին նորից սկսվեց նրա դատավարությունը: Այն բանից հետո, երբ 2000 թ. ապրիլի 3-ին Մալաթիա-Սեբաստիա համայնքի առաջին ատյանի դատարանը ԱԺ պատգամավոր Վ. Սիրադեղյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ կայացրեց համապատասխան որոշում, իսկ ապրիլի 4-ին գլխավոր դատախազը նման միջնորդությամբ մտավ Ազգային ժողով և ԱԺ-ն տվեց իր համաձայնությունը նրան կալանավորելու վերաբերյալ, երբ Վ. Սիրադեղյանն արդեն հեռացել էր հանրապետությունից:

ե. 1999թ. խորհրդարանական ընտրությունները և ներքաղաքական զարգացումները 1998-2000 թթ.

1998 թ. նախագահական նոր ընտրություններից հետո երկրում ընթացող ժողովրդավարացման մասին վկայում են որոշ կարևոր գործընթացների արդյունքները: Դրանք են՝ բազմակուսակցական քաղաքական խորհրդի և սահմանադրական փոփոխությունների խնդրով զբաղվող հանձնաժողովի աշխատությունն ու արդյունավետությունը, դատաիրավական համակարգի բարեփոխումների

իրականացումը և այդ համակարգի անկախացումը գործադիր իշխանություններից, խորհրդարանական նոր ընտրությունները, որոնց ընթացքն ու արդյունքները մեծապես ազդեցին պետության և հասարակության նոր հարաբերությունների, այսինքն Հայաստանում ժողովրդավարության մակարդակի վրա:

1999 թ. սկսվեցին ներքաղաքական զարգացումներին նպաստող փոփոխություններ: Հայաստանն այդ տարի թևակոխեց անավարտ իշխանափոխության գործընթացին բնորոշ ներքաղաքական պայքարի, տնտեսական բարդ կացության և դրանով պայմանավորված սոցիալ-հոգեբանական ակնհայտ ձևախեղումների ու քաղաքականությունից բնակչության հիմնական զանգվածի աստիճանական խորթացման մթնոլորտ: Այս պայմաններում խորհրդարանի պահպանման կամ ժամանակից շուտ լուծարելու խնդիրը ծեռք էր բերում առանցքային նշանակություն: Սակայն այս հարցում ՀՀ նախագահը չէր շտապում, ուստի նոր խորհրդարանական ընտրություններ նշանակվեցին մայիսի 30-ին: Մինչ այդ սկսվեց քաղաքական ուժերի վերախմբավորման եզրափակիչ փուլը, որի հետևանքով միմյանցից հեռացան նախագահի քաղաքական հենարանները:

Ընտրություններից հետո հիմնական քաղաքական ուժերը դաշնակցություններ էին: Ընդդիմադիր պայքարի հարուստ փորձից հրաժարվելով՝ ՀՅԴ-ն դաշնակցեց նախագահի հետ: Երկրապահներն իրենց շուրջը համախմբելով խորհրդարանի այլ պատգամավորների՝ մեծամասնություն կազմեցին: Բավական ակտիվ քաղաքական պայքարի մթնոլորտում անցան 1999 թ. մայիսի 30-ի խորհրդարանական ընտրությունները: Նախընտրական շրջանում ձևավորվեց «Միասնություն» դաշինքը, որի մեջ մտան Հայաստանի հանրապետական կուսակցությունը (ՀՀԿ), Հայաստանի ժողովրդական կուսակցությունը (ՀԺԿ) և Երկրապահների միությունը: Ընդդիմադիր կուսակցությունները չկարողացան միավորվել և լուրջ ուժ ստեղծել:

1999 թ. հունվարի 29-30-ին ավարտվեց հանրապետականների և «երկրապահների» քաղաքականացված մասի միաձուլման գործընթացը պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանի

գլխավորությամբ: Դրանից հետո ակնհայտ դարձավ, որ սկսում է ուրվագծվել Հանրապետական կուսակցության (ՀՀԿ) և 1998թ. նախագահական ընտրություններում Ռ. Քոչարյանի գլխավոր մրցակից Կարեն Դեմիրճյանի գլխավորած Հայաստանի ժողովրդական կուսակցության (ՀԺԿ) դաշինքը, որը վերջնականապես ձևավորվեց խորհրդարանի պատգամավորության թեկնածուների առաջադրման վերջին օրը՝ մարտի 30-ին, և կոչվեց «Միասնություն»:

Մեծամասնական ընտրակարգով վիճարկվող 75 պատգամավորական մանդատների համար հայտ էին ներկայացրել 808 թեկնածուներ, որոնցից 243-ը՝ մայրաքաղաք Երևանում, մնացածը՝ հանրապետության տարբեր մարզերում: Այս ընտրակարգով առավել շատ պատգամավորության թեկնածուներ էր առաջադրել ՀԿԿ-ն՝ 63, ՀՀԿ-ն՝ 62, ԱԺՄ-ն՝ 45, ՀՅԴ-ն՝ 41, ՀԺԿ-ն՝ 39, ԻՄ-ը՝ 36, ՀՀՇ-ն՝ 12 և այլն[449]:

Մայիսի 30-ի քվեարկության արդյունքները գերազանցեցին «Միասնություն» դաշինքի բոլոր սպասելիքները և պարզվեց, որ նա լիակատար հաղթանակ է տարել: Երբ կենտրոնական ընտրական հանձնաժողովը ամփոփեց քվեարկության արդյունքները, պարզվեց, որ համամասնական ընտրակարգով ԱԺ ընտրություններին մասնակցած 21 կուսակցություններին, դաշինքներին և հասարակական-քաղաքական կազմակերպություններին տրված ձայները բաշխվեցին հետևյալ կերպ՝ «Միասնություն» դաշինքը ստացավ ձայների 41,69%-ը, ՀԿԿ-ն՝ 12,09%-ը, «Իրավունք և միաբանություն» դաշինքը՝ 7,96%-ը, ՀՅԴ-ն՝ 7,84%-ը, «Օրինաց երկիրը»՝ 5,28%-ը, ԱԺՄ-ն՝ 5,17%-ը, «Արժանապատիվ ապագան»՝ 3,27%-ը, «Հզոր հայրենիքը»՝ 2,31%-ը, «Կոմունիստական և սոցիալիստական կուսակցությունների միություն» դաշինքը՝ 2,49%-ը, «ԱԻՄ+» դաշինքը՝ 2,29%-ը, «Հայրենիք» դաշինքը՝ 1,23%-ը, ՀՀՇ-ն՝ 1,17%-ը, «Ազատություն» կուսակցությունը՝ 1,03%-ը, իսկ մնացած կուսակցությունները և դաշինքները՝ Հայաստանի դեմոկրատական կուսակցությունը, Հայաստանի ռամկավար ազատական կուսակցությունը, «Ազատ Հայք առաքելությունը», «Ազգային պետություն»,

[449] «Հայաստանի Հանրապետություն», 12.05.1999:

«Առաքելություն», «Շամիրամ» հասարակական-քաղաքական կազմակերպությունները «Սոցիալիստական ուժերի և մտավորականների միություն» դաշինքը՝ 1%-ից էլ պակաս ձայներ[450]:

Այսպիսով, խորհրդարանի 56 պատգամավորական տեղերից ավելի շատ տեղեր ստացավ «Միասնությունը»՝ 29, Հայկոմկուսը՝ 8, «Իրավունք և միաբանությունը»՝ 6, ՀՅԴ-ն՝ 5, «Օրինաց երկիրը»՝ 4, ԱԺՄ-ն՝ 4 տեղեր: Մեծամասնական ընտրակարգով 75 պատգամավորական տեղերից՝ ըստ կուսակցությունների հիմնականում անցան և շատ ձայներ ստացան «Միասնության» ներկայացուցիչները՝ 28%, ՀՅԴ-ն՝ 4%, «Օրինաց երկիրը»՝ 2,7%, ԱԺՄ-ն՝ 2,7%, ՀԿԿ-ն, «Իրավունք և միաբանությունը» , ՀՀՇ-ն և «Առաքելությունը»՝ յուրաքանչյուրը՝ 1,3%, իսկ անկուսակցականները՝ 57,4%-ը[451]:

Ըստ մասնագիտական գործունեության մեծամասնական ընտրակարգով ընտրված պատգամավորներից գործարարներն ու պաշտոնյաները կազմում են 84%, հասարակական-քաղաքական գործիչները՝ 14,7%, մշակույթի և արվեստի գործիչները՝ 1,3%[452]:

1999 թ. ընտրված Ազգային ժողովն առաջին անգամ աշխատելու էր պրոֆեսիոնալ (արհեստավարժ) սկզբունքով: Նորընտիր ԱԺ-ում որոշակի մաս էին կազմում քաղաքականության և օրինաստեղծ աշխատանքի հետ բացարձակ կապ չունեցող պատգամավորները, որոնք ներկայացնում էին իրենց անձնական կամ որևէ գործարար խմբի շահերը, իսկ քաղաքական հարցերում ենթարկվում էին գործադիր իշխանությանը: Որպես այս խնդրի լուծում կարելի է դիտարկել անցումը ամբողջությամբ համամասնական ընտրակարգին, ինչը կբացառեր ընտրողներին և հանձնաժողովներին կաշառելու, տեղայնության, սպառնալիքների դեպքերը, միաժամանակ կնպաստեր բազմակուսակցականության ինստիտուտի ամրապնդմանը:

---

[450] Տես Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով, երկրորդ գումարում, Երևան, 2001, էջ 28, 29, 42, 43, 44, Մինասյան Է., ՀՀ, ԼՂՀ Ազգային ժողովի և նախագահական ընտրությունները, Հայաստանի Ազգային Ատլաս, հատոր Բ, Երևան, 2008, էջ 129:

[451] «Հայաստանի Հանրապետություն», 2.06.1999:

[452] Տե՛ս նույն տեղում:

Ազգային ժողովի ընտրությունների արդյունքները վկայում են, որ հաղթանակ տարան կենտրոնամետ «Միասնություն», «Իրավունք և միաբանություն» դաշինքները և ձախ ուժերը՝ Հայկոմկուսը և ՀՅԴ-ն: Սա բացատրվում էր հիմնականում նրանով, որ պետության դերը տնտեսական ոլորտում հասցված էր նվազագույնի, ինչը համապատասխանում էր ծայրահեղ լիբերալիզմի կողմնակիցների ծրագրերին: Դրանց ձախողումը հասարակության մեջ առաջացրեց պետության տնտեսական ակտիվ միջամտությանը կողմնակից ուժերի հաղթանակին:

Պատահական չէ, որ Ազգային ժողովի ընտրություններում բացարձակ մեծամասնություն ստացած ուժը՝ «Միասնությունը», որպես ռազմավարական նպատակ հայտարարեց արդյունաբերության վերականգնումը՝ շեշտը դնելով պետության ավելի գործուն միջամտության վրա:

Այսպիսով, «Միասնությունն» իր համար ապահովելով որակյալ մեծամասնություն ԱԺ-ում, ինքնաբերաբար պատասխանատվություն էր ստանձնում երկրի ապագայի համար: Պատասխանատվության ընթացակարգը հստակեցրեց նախագահ Ռ. Քոչարյանը՝ կա՛մ սատարել գործող կառավարությանը, կա՛մ ձևավորել նոր կառավարություն: Հունիսի 10-ին տեղի ունեցավ Ազգային ժողովի ղեկավարության ընտրությունը: Նախագահ ընտրվեց Կարեն Դեմիրճյանը, փոխնախագահներ՝ Ա. Բազեյանն ու Ռ. Միրոյանը: Հաջորդ օրը ընտրվեցին ԱԺ մշտական 6 հանձնաժողովների նախագահները: Ռ. Քոչարյանն ընդունեց Ա. Դարբինյանի հրաժարականը և նույն օրը՝ հունիսի 11-ին, նոր վարչապետ նշանակեց պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանին: Կառավարության կազմը նախագահի կողմից հաստատվեց հունիսի 15-ին: Նրանում գերիշխող դիրքեր գրավեցին Լ. Տեր-Պետրոսյանի ժամանակներից հայտնի նախարարները: Փոփոխության ենթարկվեց նաև ուժային նախարարությունների համակարգը՝ ներքին գործերի նախարարությունը առանձնացվեց Ազգային անվտանգության նախարարությունից: Միաժամանակ իր ձեռքը վերցնելով տնտեսությունը վերահսկելու առումով կարևորագույն նշանակություն ունեցող Ներքին գործերի նախարարությունը, հարկային ու մաքսա-

յին համակարգերը միավորելով մեկ նախարարության մեջ՝ վարչապետը ստացավ ձեռքերի լիակատար ազատություն՝ տնտեսության մենաշնորհային բնույթ ունեցող և գերշահույթներ ապահովող ոլորտներում որոշ անձանց դերակատարությունը սահմանափակելու համար:

Մայիսի 30-ից մինչև հոկտեմբերի 27-ն ընկած հինգ ամիսների ընթացքում Հայաստանն ապրում էր ներքաղաքական կյանքի բարդ ու հակասական մի շրջան:

Իր ձեռքում հսկայական իշխանություն կենտրոնացրած Վ. Սարգսյանի հետևողականությունն ու պահանջկոտությունը հույս էին ներշնչում, որ կարվեն անհրաժեշտ քայլեր երկիրը սոցիալ-տնտեսական և բարոյաքաղաքական ծանր վիճակից դուրս բերելու համար: Կտրուկ ակտիվացավ հանրապետության արտաքին քաղաքականությունը՝ Ղարաբաղյան հիմնահարցի շուրջ ընթացող բանակցությունների աշխուժացման պատճառով: Բայց զարգացումները հետ շրջվեցին 1999 թ. հոկտեմբերի 27-ի նախադեպը չունեցող ահաբեկչությամբ: Այդ օրը ահաբեկիչների խումբը Նաիրի Հունանյանի գլխավորությամբ մուտք գործեց խորհրդարան և հրազենով «գլխատեց» օրենսդիր ու գործադիր իշխանությունների ղեկավարությանը: Սպանվեցին Ազգային ժողովի նախագահ Կարեն Դեմիրճյանը, նրա տեղակալներ Յուրի Բախշյանը և Ռուբեն Միրոյանը, պատգամավորներ Արմենակ Արմենակյանը, Հենրիկ Աբրահամյանը, Միքայել Քոթանջյանը, նախարար Լեոնարդ Պետրոսյանը: Ոճրագործների գնդակների զոհ դարձավ գործադիր իշխանության ղեկավար, վարչապետ Վազգեն Սարգսյանը: Շուրջ երեք տարի տևեց «հոկտեմբերի 27»-ի քրեական գործի դատաքննությունը: Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2003թ. դեկտեմբերի 2-ի դատավճռով ահաբեկիչները դատապարտվեցին ցմահ ազատազրկման[453]:

Ահաբեկչությունը հանգեցրեց հանրապետության ներքաղաքական իրավիճակի կտրուկ սրման: Անմիջապես բացվեց իշխանության թևերի միջև նախորդ շրջանում առկա հակասությունների ողջ

[453] «Հայաստանի Հանրապետություն», 21.02.2008:

քնջուկը: Ընդդիմադիր ուժերը սկսեցին հետևողականորեն օգտվել դրանից: Նրանք խնդիր էին դրել օգտագործելով խառը կացությունը՝ հետ բերել իշխանությունը: Հիմնական դիմակայությունն ընթանում էր ոչ թե քաղաքական տարբեր ուժերի, այլ իշխանության թևերը ներկայացնող պաշտոնյաների միջև:

1999 թ. հոկտեմբերի 27-ի ոճրագործությունից հետո Ազգային ժողովի նախագահ ընտրվեց Արմեն Խաչատրյանը:

Հոկտեմբերի 27-ի ողբերգությամբ Հայաստանում սկիզբ առած քաղաքական գործընթացները տևական ժամանակ լարվածության մեջ պահեցին ամբողջ հանրապետությունը: Դիմակայության մեջ էին ընդգրկված մի կողմից՝ հանրապետության նախագահը և նրա շրջապատը, մյուս կողմից՝ կառավարության անդամների ու բարձրաստիճան զինվորականության մի մասը, «Երկրապահ» կամավորների միությունը: Երկրապահները պահանջում էին հանրապետության նախագահի հրաժարականը՝ առաջ քաշելով տարբեր մեղադրանքներ, այդ թվում՝ հոկտեմբերի 27-ի դատավարությանը խոչընդոտելու մեղադրանքը: Նախագահին ընդդիմադիր ուժերի հետ էր նոր նշանակված վարչապետ Վազգեն Սարգսյանի եղբայր Արամ Սարգսյանը: Այնուամենայնիվ, հանրապետության ղեկավարությունը մեծ ջանքերի գնով կարողացավ աստիճանաբար կայունացնել իրավիճակը: ՀՀ նախագահի հրամանագրով 2000 թ. մայիսին Ա. Սարգսյանն ազատվեց զբաղեցրած պաշտոնից, վարչապետ նշանակվեց Հանրապետական կուսակցության նախագահ Անդրանիկ Մարգարյանը (1950-2007):

Այսպիսով, բարեբախտաբար, հաջողվեց ներքաղաքական առճակատումը շեղել կոշտ բախում տանող ուղուց դեպի համերաշխության ճանապարհ: Հասարակությունը խուսափեց անկանխատեսելի հետևանքներով վտանգավոր դիմակայությունից:

3. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ

ա. Գիտությունը

Առկա սոցիալ-տնտեսական ծանր իրադրությունը բացասական ազդեցություն ունեցավ հոգևոր կյանքի վրա: Պետական անհրաժեշտ օգնության ու հոգածության բացակայության պատճառով հայոց մշակույթը մեծ անկում ապրեց: Խիստ ճգնաժամ ապրեցին հայ թատրոնը և կինոն, կրճատվեց գրքերի տպագրությունը, խաթարվեցին մշակութային կապերը: Ունենալով զգալի ազատություն՝ այնուամենայնիվ ազատ մամուլի զարգացման հնարավորությունները հանրապետությունում սահմանափակ էին. թերթերի մեծամասնությունն ուներ ընդամենը 2-3 հազար տպաքանակ և տարածվում էր հիմնականում մայրաքաղաքում:

Արվեստի բազմաթիվ կոթողներ, ճարտարապետական հուշարձաններ, թատրոնի և կինոյի շենքեր հայտնվեցին անմխիթար վիճակում: Մշակութային շատ հիմնարկների սեփականաշնորհման հետևանքով ստեղծագործական բազմաթիվ կոլեկտիվներ, զրկվելով ստեղծագործելու հնարավորությունից, անգործության մատնվեցին: Բայց, չնայած շարունակվող սոցիալ-տնտեսական ծանր ճգնաժամին և շատ ցածր վարձատրությանը, արվեստի աշխատողներն ամեն կերպ ձգտում էին համընթաց քայլել ժամանակի հետ: Հաջողություններ են արձանագրում Հայաստանի թատրոնները, երգի և պարի համույթները, ստեղծագործող բազմաթիվ կոլեկտիվներ:

ԽՍՀՄ-ի գոյության պայմաններում Հայաստանի գիտությունը և կրթությունը հանդիսանում էին միության երբեմնի հզոր ու միասնական գիտական համալիրի օրգանական բաղադրիչը: Այստեղ, ըստ էության, գոյություն չունեին ֆինանսավորման կամ նյութատեխնիկական ապահովման խնդիրներ:

Մինչև ԽՍՀՄ-ի փլուզումը Հայաստանը գիտության զարգացման ցուցանիշներով առաջնակարգ դիրքեր էր զբաղեցնում նախկին միութենական հանրապետությունների գիտական հանրույթների շրջանում:

Հայաստանի անկախացումից հետո ստեղծված տնտեսական ծանր վիճակը, նյութական և ֆինանսական միջոցների անբավարարությունը, գիտական կապերի խզումը, գիտական տեղեկատվության սղությունը հանգեցրին հանրապետությունում գիտական գործունեության լճացմանը: Քանդվեցին հիմնարար ու կիրառական գիտությունների և արտադրության միջև գոյություն ունեցող փոխադարձ կապերը, փլուզվեցին ժամանակին մեծ համբավ ձեռք բերած գիտական դպրոցները, խաթարվեց գիտական և գիտամանկավարժական կադրերի վերարտադրության՝ տասնամյակների ընթացքում ձևավորված համակարգը, կազմալուծվեց գիտական արդյունավետ հետազոտությունների նյութատեխնիկական հիմքը: Հանրապետությունում վարվող արմատական-ազատական բարեփոխումների քաղաքականության ընդհանուր հայեցակետում գիտությունը դիտարկվում էր որպես չափազանց ծախսարար և անքույլատրելի ճոխություն և, որպես կանոն, պետական միջոցներից ֆինանսավորվում էր մնացորդային սկզբունքով:

Պետության ոչ հոգատար վերաբերմունքի հետևանքով Հայաստանի ճյուղային գիտահետազոտական ինստիտուտների մեծ մասը՝ մոտ 80%-ը, որ նախկինում կուտակել էր նյութատեխնիկական զգալի պաշարներ, գիտական և ինժեներատեխնիկական կադրեր, քայքայվեց, իսկ այդ ինստիտուտներում մնացողները, նախկին միութենական գործընկերների հետ համատեղ կատարվող մշակումների ֆինանսավորման շնորհիվ, հազիվ կարողացան գոյատևել:

Հանրապետության գիտական համալիրի քայքայումը հանգեցրեց գիտական կադրերի («ուղեղների») արտահոսքի: Միայն ՀՀ ԳԱԱ-ի համակարգից 1991-1995 թթ. հեռացել էր 800 գիտաշխատող, որոնցից 200-ը մշտական բնակության էր մեկնել արտասահմանյան երկրներ[454]: Երկրից մեկնածների թվում գերակշռում էին ազգային գիտության առավել օժտված և կարողունակ ներկայացուցիչները, հատկապես երիտասարդ և միջին տարիքի գիտնա-

[454] Մինասյան Է., Սոցիալ-տնտեսական վերափոխումները Հայաստանի Հանրապետությունում (1990-2003 թթ.), էջ 126:

կաններ, որոնք ակնառու հաջողությունների էին հասել իրենց ընտրած գիտական ասպարեզում:

Հայաստանի գիտության ոլորտին բնորոշ կաղրային տեղաշարժ էր կատարվում նաև ներքին արտահոսքի միջոցով: Գիտնականներից շատերը, որոնք միջոցներ չունեին արտասահման մեկնելու, թողնում էին գիտական աշխատանքը և տեղափոխվում գործունեության այլ ասպարեզներ, որտեղ հնարավոր էր քիչ թե շատ վաստակ ունենալ և մի կերպ ապահովել իրենց ընտանիքների գոյությունը:

Անկախության պայմաններում հնարավորություն էր ստեղծվել օգտակար կապ հաստատել աշխարհի առաջատար գիտական կենտրոնների հետ, ուսումնասիրել և կիրառել գիտության կազմակերպման համաշխարհային փորձը: Հատկանշական է, որ Հայաստանի գիտական ներուժի հսկայական հնարավորությունների օգտագործման մեջ մեծ հետաքրքրություններ էին դրսևորում ոչ միայն Արևմուտքի համալսարանները ու գիտահետազոտական կենտրոնները, այլև ռազմական բնույթի, մասնավորապես՝ Հյուսիսատլանտյան դաշինքի (ՆԱՏՕ) կառույցները: Հայաստանի գիտնականների արտասահմանյան երկարաժամկետ գործուղումների մեծ մասը ֆինանսավորում էին «Հումբոլդտի» (ԳԴՀ), «Բենջամին Ֆրանկլինի» (ԱՄՆ), «Սորոսի» (ԱՄՆ) հիմնադրամները, INTAS-ը (ԱՄՆ), TACIS-ը (Եվրոմիություն) և այլն[455]:

Հայաստանի գիտության համար լուրջ ձեռքբերում եղավ ակադեմիական համակարգչային տեղեկատվական ցանցի ստեղծումը[456]: 1994 թ. ՀՀ ԳԱԱ Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի աշխատանքները թույլ տվեցին ստեղծել Հայաստանում առաջին ռադիոմոդելային ցանցը և «Հայաստան» հիմնադրամի աջակցությամբ պատրաստված վերգետնյա արբանյակային հանգույցի միջոցով ապահովել ինստիտուտների ելքը դեպի ինտերնետ: Առաջին ինտերնետային կապի միջոցով կառավարության, հայկական բարեգործական կազմակերպութ-

[455] Հայոց պատմություն, Դասագիրք բուհերի համար, Նշվ. աշխ., էջ 783:
[456] ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիան 70 տարում, Երևան, 2013, էջ 17:

յունների և միջազգային դրամաշնորհների օժանդակությամբ հաջողվեց մի քանի տարվա ընթացքում ստեղծել ՀՀ ԳԱԱ տեղեկատվական ցանց: Հայ գիտնականները սկսեցին ավելի շատ դրամաշնորհներ շահել միջազգային գիտական ծրագրերի, տեղեկատվական աջակցության, գիտական աշխատությունների հրապարակման, նոր գիտական սարքավորումների ձեռքբերման և այլ ասպարեզներում:

Անկախության պայմաններում գիտական համակարգի վերափոխմանը նպաստեցին այն կանոնակարգող մի շարք օրենքներն ու որոշումները, որոնցից իր կարևոր նշանակությամբ հատկապես անհրաժեշտ է առանձնացնել 2000թ. Ազգային ժողովի կողմից ընդունված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» օրենքը[457]:

Զգալի աշխատանքներ էին տարվում հայագիտության զարգացման ուղղությամբ: Անհրաժեշտ էր հաղթահարել խորհրդային դարաշրջանի գաղափարական կապանքները: Հայոց պատմության մի շարք թեմաներ ենթարկվեցին ավելի խոր ու համակողմանի ուսումնասիրության, հայ պատմաբանները հնարավորություն ստացան անաչառ լուսաբանել պատմական իրողությունները: Կարևոր էր հայոց պետականության վերականգնման, հայ ժողովրդի անկախության համար մղվող պայքարի պատմության ուսումնասիրությունը, որն իր մեջ ներառում էր նաև հայ ազգային-ազատագրական շարժումը, Հայկական հարցը, Հայ դատը: Հրատարակվեցին ֆիդայական շարժման նշանավոր գործիչներին, ազատագրական պայքարի ազատամարտիկներին, ազգային հերոս Անդրանիկին, տաղանդավոր զորավարներ Նժդեհին, Դրոյին և ուրիշներին նվիրված աշխատություններ, փաստաթղթերի ժողովածուներ: Լայն ծավալ ստացավ Հայաստանի նոր և նորագույն շրջանի պատմության, Ղարաբաղյան ազատագրական պայքարի, Հայոց ցեղասպանության և մի շարք այլ թեմաների ուսումնասիրությունը: Միաժամանակ զարգանում էին հնագիտությունը, ազ-

[457] Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու (1999-2000 թթ.), գիրք Գ, Երևան 2001, էջ 624:

գագրությունը, տնտեսագիտությունը, գրականագիտությունը և հումանիտար այլ ուղղություններ:

Նոր խնդիրներ դրվեցին բնական, ճշգրիտ գիտությունների առջև: Անհրաժեշտություն էր հանրապետությունում, որքան հնարավոր էր, նախ պահպանել եղած գիտական ներուժը, ապա նպաստել Հայաստանի արտադրողական ուժերի զարգացմանը, ներքին բնական ռեսուրսների հայտնաբերմանը և խելացի օգտագործմանը:

բ. Կրթությունը

Սկսվեցին կրթամշակութային ոլորտի կատարելագործման ուղիների որոնումները: Խորհրդային իշխանության օրոք հայ ժողովուրդը ձեռք էր բերել բարձր կրթական մակարդակ: Բայց ակնախությունից հետո այն էապես վտանգվել էր: 1991-1995 թթ. այս ոլորտը դիտարկվում էր որպես պետական ու տնտեսական գերակայությունից դուրս գտնվող բնագավառ, ուստի նրա հոգսերը դրվեցին տեղական իշխանության մարմինների և հասարակության վրա:

Հետագա տարիներին փոփոխություններ կատարվեցին կրթական համակարգում, որոնք ամրագրվեցին 1999 թ. «Կրթության մասին» Ազգային ժողովի կողմից ընդունած օրենքում[458]:

Պետությունը չէր խոչընդոտում տարբեր տիպի դպրոցների, այդ թվում մասնավոր դպրոցների ստեղծմանը: 2000 թ. նման դպրոցների թիվը հասավ 40-ի:

Ընդունված որոշումների համաձայն՝ Հայաստանում հայ երեխաները պետք է սովորեին միայն հայկական դպրոցներում: Հրատարակվեցին ուսումնական նոր ծրագրերով դասագրքեր, որոնց մեծ մասը անորակ լինելու պատճառով չէր համապատասխանում հայ ազգային դպրոցի առջև դրված խնդիրներին: Ուսուցիչների արտահոսքը (բարձրագույն կրթությամբ շատ ուսուցիչներ, հիմնա-

[458] Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու (1995-1999 թթ.), գիրք Բ, էջ 887:

կանում տղամարդիկ, սոցիալական ծանր վիճակից ելնելով՝ հեռանում էին դպրոցից), դասագրքերի, մեթոդական և օժանդակ գրականութան պակասը, գրենական պիտույքների թանկությունը և այլն խոչընդոտում էին ժողովրդական կրթության զարգացմանը: Ծանր վիճակում էր գտնվում նյութատեխնիկական բազան, դպրոցական շինությունները չէին վերանորոգվում և դրանց հետագա շահագործումը դառնում էր վտանգավոր: Այս երևույթներն առկա էին նաև նախադպրոցական հիմնարկներում:

Փոփոխություններ կատարվեցին հանրապետության բարձրագույն կրթության ոլորտում: Բուհերի ուսումնական ծրագրերից հանվեցին անցյալում բոլոր բուհերի համար պարտադիր առարկաները՝ Կոմունիստական կուսակցության պատմությունը, մարքս-լենինյան փիլիսոփայությունը, գիտական կոմունիզմը, գիտական աթեիզմը:

Համաշխարհային հանրության մեջ ինտեգրվելուն էր միտված ՀՀ կառավարության 1995 թ. հունիսի 12-ի որոշումը բուհերում ուսուցման նոր՝ եռաստիճան համակարգին անցնելու մասին[459]: Այդ համակարգը բաղկացած էր բակալավրիատից՝ 4 տարի (որը տալիս է բարձրագույն կրթություն), մագիստրատուրայից՝ 2 տարի (բարձր որակավորման մասնագետների պատրաստում) և ասպիրանտուրայից (կադրերի պատրաստում բուհերի և գիտահետազոտական հիմնարկների համար): 1995-ից ԵՊՀ-ն և Երևանի գյուղատնտեսական ակադեմիան անցան այդ համակարգին, որը, սակայն, շատ կողմերով զիջում էր ուսուցման նախկին համակարգին:

Փորձեր ձեռնարկվեցին բուհերի ինքնուրույնությունն ընդլայնելու ուղղությամբ, ընդարձակվեց դրանց համագործակցությունն արտասահմանյան ուսումնական և գիտական հաստատությունների հետ:

Որոշ ինստիտուտներ (բժշկական, պոլիտեխնիկական և այլն) ոչ համոզիչ պատճառաբանություններով վերանվանվեցին համալսարաններ կամ ակադեմիաներ: 1991 թ. հիմնադրվեց Հայաստանի

---

[459] Տե՛ս Հայոց պատմություն, Դասագիրք բուհերի համար, նույն տեղում, էջ 785:

Ամերիկյան համալսարանը (ՀԱՀ)՝ որպես Կալիֆորնիայի (ԱՄՆ) համալսարանի մասնաճյուղ: Ավելի ուշ բացվեցին Ֆրանսիական և Եվրոպական համալսարանները, իսկ 1998 թ. Սլավոնական (Ռուսական) համալսարանը:

Եթե 1990-1991 ուս.տարում Հայաստանում գործում էր պետական 14 բուհ՝ 68,4 հազար ուսանողներով, որտեղ կադրեր էին պատրաստվում 103 մասնագիտությունների գծով, ապա 2000-2001 ուս.տարում՝ 19 պետական բուհ՝ ավելի քան 158 մասնագիտությունների գծով՝ 60,7 հազար ուսանողներով[460]:

1990 թվականից Հայաստանի մասնագիտական կրթության ոլորտում ներդրվեց վճարովի ուսուցման համակարգը: Բացվեցին բազմաթիվ մասնավոր համալսարաններ ու քոլեջներ, որոնց մեծ մասի մակարդակը շատ հեռու էր բուհերին ներկայացվող պահանջներից:

գ. Գրականությունը

Անկախության հռչակումից հետո գրականությունը Հայաստանում զարգանում էր նոր հասարակարգի թելադրած օրինաչափություններով, թեև այն ընդհանուր առմամբ հայ դասական գրականության ժառանգորդն էր: Գրական ստեղծագործությունը վերջնականապես ազատագրվում է պետական գաղափարախոսության պարտադրանքից և գրաքննությունից: Ստեղծագործական աշխատանքի կազմակերպումը շարունակում է իրականացնել Գրողների միությունը, որը վերջին երկու տասնամյակներին հաջորդաբար ղեկավարել են Հր. Հովհաննիսյանը, Վ. Դավթյանը, Ռ.Դավոյանը, Հր.Մաթևոսյանը և Լ. Անանյանը: Որոշ դժվարություններով և ընդհատումներով լույս են տեսնում գրական հին պարբերականները՝ «Գրական թերթ», «Գարուն», «Նորք», որոնցից բացի հրատարակվում են նաև նոր, երբեմն ոչ տևական կյանք ունեցող հանդեսներ և թերթեր:

---

[460] Հայաստանի վիճակագրական տարեգիրք 1995, 1996, Երևան, 1998, էջ 70, Հայաստանի վիճակագրական տարեգիրք (1999, 2000), Երևան, 2001, էջ 107:

Հայաստանի երրորդ Հանրապետության շրջանում ստեղծագործական ակտիվ ընթացքի մեջ էին ինչպես ավագ, այնպես էլ միջին սերունդների ներկայացուցիչներ և երիտասարդ հեղինակներ: Չափածո նոր ժողովածուներով կամ շարքերով հանդես եկան նշանավոր բանաստեղծներ Հ. Սահյանը, Վ. Դավթյանը, Ս. Կապուտիկյանը, Ռ. Դավոյանը: Գրական շարժման մեջ առավել զգալի դեր խաղացին 60-ական թթ. վերջին ասպարեզ իջած մի շարք բանաստեղծներ: Փիլիսոփայական-գեղագիտական հարցադրումներով, աշխարհի և մարդու ճակատագրի պատկերային զննումներով աչքի ընկան Հովհ. Գրիգորյանի «Հրեշտակներ մանկության երկնքից» և «Երկու ջրհեղեղի արանքում», Ա. Մարտիրոսյանի «Շարակնոց», Հ. Էդոյանի «Հարյուր սոնետ» և «Հետգրություն», Ա. Հարությունյանի «Նամակ Նոյին» և «Հուդայի արձակուրդը», Դ. Հովհաննեսի «Նոր քրոնիկոն» գրքերը, որոնցից մի քանիսը արժանացան պետական մրցանակի:

Գրական նոր շարժմանը բնորոշ են սեռերի և տեսակների բազմազան համադրությունները, հատկապես պոեզիայի ու արձակի ներթափանցումները: Անկախության տարիներին բանաստեղծական և արձակ գործերով հանդես եկավ Ա. Շեկոյանը («Անտիպոեզիա», «Հայկական ժամանակ» և այլն): Բուն արձակի զարգացմանը մասնակցություն են բերում ավագ սերնդի ականավոր ներկայացուցիչներ Հր. Մաթևոսյանը, Մ. Այվազյանը, Զ. Խալափյանը և ուրիշներ: ժամանակակից մարդու հոգեբանությանը, հասարակական բարդ խնդիրների քննությանն են նվիրված Լ. Խեչոյանի «Խնկի ծառեր», Գ. Խանջյանի «Շարժասանդուղք» և «Ստվերներ խամաճիկների փողոցում», Ա. Շեկոյանի «Մետաքսի ճանապարհը» ժողովածուները, որոնք առավելապես բաղկացած են պատմվածքներից:

Անկախության շրջանում բուռն զարգացում է ապրում վեպի ժանրը: Ազգային, հասարակական և հոգեբանական խնդիրներ են շոշափում Գ. Խանջյանի «Հիվանդանոց», «Սպանել փրկչին», «Նստիր Ա գնացքը», Լ. Խեչոյանի «Սև գիրք, ծանր բզեզ» վեպերը: Վերջինս մասամբ նվիրված է Արցախի գոյամարտին և արժանացել է պետական մրցանակի: Լույս են տեսել մի շարք պատմավեպեր, որոնք շարունակում և զարգացնում են հայ դասական պատ-

մավեպի հարուստ ավանդները (Լ. Խեչոյան, «Արշակ արքա, Դրաստամատ ներքինի», Զ. Խալափյան, «Վասիլ Մեծ», Պ. Զեյթունցյան, «Գողացված ձյունը»): ժամանակակից արձակագիրներին շարունակում է հուզել Մեծ եղեռնի թեման: Գրվել են մի քանի վեպեր, որոնցից մեկը Վ. Գրիգորյանի «ժամանակի գետը» ստեղծագործությունը արժանացել է պետական մրցանակի[461]:

Աշխուժություն է տիրում թատերգության ասպարեզում: Պիեսներով հանդես են եկել Ա. Այվազյանը, Ն. Ադալյանը, Պ. Զեյթունցյանը, Գ. Խանջյանը և ուրիշներ: Հրատարակվում է «Դրամատուրգիա» հանդեսը: Դրամատուրգիական որոշ գործեր բեմադրվել են հանրապետության թատրոններում:

1990-2000-ական թվականները հայաստանյան թարգմանական գրականության լավագույն տասնամյակներից են: Առանց գաղափարական-գեղագիտական կաշկանդումների, առավելապես բնագրերից թարգմանվել են եվրոպական, ԱՄՆ, ռուս, լատինամերիկյան գրականությունների նախկինում չթարգմանված լավագույն ստեղծագործություններ, որոնք տպագրվել են ինչպես առանձին գրքերով, այնպես էլ մամուլում: Հրատարակվում է «Արտասահմանյան գրականություն» հանդեսը:

դ. Նկարչությունը և քանդակագործությունը

Հետխորհրդային առաջին տարիներին դժվարին վիճակում հայտնվեցին նաև ազգային կերպարվեստն ու ճարտարապետությունը: Մայրաքաղաքում տարերայնորեն ձևավորվող գեղարվեստական շուկան կենտրոնացավ Մարտիրոս Սարյանի հուշարձանի շուրջը՝ այսպես կոչված՝ Վերնիսաժում:

Հայ արվեստագետներից ոմանք հեռացան Հայաստանից: Ազգային արվեստն աշխարհին ներկայացնելու տեսակետից նշանակալից էր Գերմանիայի Բոխում քաղաքում 1995 թ. հունվարին բացված, մոտ երեք ամիս տևած «Հայաստան. հին մշակույթի վերագտնված երկիր» ցուցահանդեսը, ուր ներկայացված էին նա-

[461] Հայոց պատմության դասագիրք բուհերի համար, էջ 786:

խապատմական շրջանից ցայսօր հայերի ստեղծած մշակութային արժեքներ: Նույն թվականին Մոսկվայում և Կիպրոսում ներկայացվեցին ժամանակակից հայ կերպարվեստին նվիրված ցուցահանդեսներ: 1997 թ. աշնանը Սալոնիկում (Հունաստան) կազմակերպվեց XIX–XX դարերի հայ գեղանկարիչների և գրաֆիկների շուրջ 60 աշխատանք ներկայացնող՝ «Հայաստանի գույներ» ցուցահանդեսը, որը մեծ արձագանք գտավ արտերկրում[462]:

Գեղարվեստական կյանքում որոշ աշխուժություն մտցրին մասնավոր պատկերասրահները: Հայաստանում գործող մասնավոր պատկերասրահներից է «Մկրտչյան» պատկերասրահը, որի ուշադրության կենտրոնում XIX–XX դարերի հայ դասական կերպարվեստն է: Սփյուռքահայ նկարչուհի Սոնիա Պալասանյանի նախաձեռնությամբ 1994 թ. Երևանում կազմակերպվեց Նորարար փորձառական արվեստի կենտրոնը (ՆՓԱԿ)՝ սեփական պատկերասրահով: ՆՓԱԿ–ի ջանքերով 1995 թվականից կազմակերպվեց Հայաստանի մասնակցությունը Վենետիկի համաշխարհային արվեստի փառատոններին[463]:

Խոշոր ցուցահանդես կազմակերպվեց 2002 թ. Հայաստանի նկարիչների միության 70–ամյակի առթիվ, որին մեկական գործերով մասնակցեցին 400 արվեստագետներ:

1990-ական թթ. ևս, ինչպես խորհրդային շրջանում, հայ կերպարվեստի առաջատար ճյուղը գեղանկարչությունն էր: Այդ ասպարեզում աչքի ընկան Սարգիս Մուրադյանը («Զարթոնք»), Փարավոն Միրզոյանը («Նատյուրմորտ դաշտային ծաղիկներով»), Ռուդոլֆ Խաչատրյանը («Բազմաչափ օբյեկտ»), Սոնիա Պալասանյանը («Անվերնագիր»):

Պետպատվերների սակավության պայմաններում 1990–ական թվականները մոնումենտալ արձանագործության համար դժվարին տարիներ էին: Այնուամենայնիվ, այդ ժամանակ Հայաստանում ստեղծվեցին Սպիտակի երկրաշարժի զոհերի և զոհված ազատա-

---

[462] Աղասյան Ա, Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում, Երևան, 2009, էջ 272:
[463] Տե՛ս նույն տեղում, էջ 274:

մարտիկների հիշատակը հավերժացնող մի շարք հուշարձաններ:

Դարասկզբի առաջին տասնամյակում Երևանում կանգնեցված հուշարձաններից հայտնի են Արա Շիրազի «Ջորավար Անդրանիկ» (2002, ճարտարապետ՝ Ա. Մխիթարյան), Նորայր Կարգանյանի «Հովհաննես Բաղրամյան» (2003, ճարտարապետ՝ Է. Արևշատյան), Յուրի Պետրոսյանի «Հովհաննես Այվազովսկի» (2003, ճարտարապետ՝ Ս. Քյուրքչյան), Դավիթ Բեջանյանի «Առնո Բաբաջանյան» (2003, ճարտարապետ՝ Լ. Իգիթյան), Գևորգ Գևորգյանի «Ծովակալ Իսակով» (2006, ճարտարապետ՝ Լ. Մկրտչյան) արձանները և այլն: Վերջին տարիների ստեղծագործություններից են Գյումրիում տեղադրված Միեր Մկրտչյանի հուշարձանը (Ա. Շիրազ), Գարեգին Նժդեհին նվիրված հուշահամալիրը Կապանում (Գ. Գևորգյան) և այլն:

Հայաստանի գեղարվեստական կյանքում տեղի ունեցող գործընթացները, ստեղծագործական խմորումներն ու ձգտումները ճիշտ ընկալելու և բացատրելու, անաչառորեն գնահատելու համար ժամանակ է հարկավոր: Ազգային կենսունակ ավանդույթների նկատմամբ երիտասարդ նկարիչների և քանդակագործների վերաբերմունքով, ինքնուրույն մտածողությամբ և ինքնատիպ ձեռագրով է պայմանավորված հայ կերպարվեստի վաղվա օրը:

ՀՀ անկախության տարիներին շարունակում էր ստեղծագործել հրաշագործ Էդուարդ Ղազարյանը (1923-2012): Նրա համաշխարհային զարմանահրաշ նվաճումը միկրոքանդակագործության նոր ուղղության՝ շարժական միկրոաշխատանքների ստեղծումն էր: Է. Ղազարյանը հեղինակ էր անզեն աչքով անտեսանելի և մինչև օրս չգերազանցված շուրջ 1000 յուրօրինակ շարժական միկրոքանդակների, որոնց ստեղծման գաղտնիքը դեռ չի բացահայտված: Պատահական չէ, որ Քեմբրիջի կենսագրական կենտրոնը 2006 թ. է. Ղազարյանին հայտարարեց բոլոր ժամանակների ամենահանճարեղ մարդկանցից մեկը և նրան պարգևատրեց «Կենդանի լեգենդ» ոսկե մեդալով[464]:

[464] Հայոց պատմություն, Դասագիրք բուհերի համար, նույն տեղում, էջ 787:

ե. Երաժշտությունը

Անկախության առաջին տարիներին երաժշտական խմբերը և անհատ ստեղծագործողները (այդ թվում՝ հեռուստատեսության և ռադիոյի սիմֆոնիկ նվագախումբը, կամերային երգչախումբը, Ա. Մերանգուլյանի անվան ժողգործիքների անսամբլը, էստրադային-սիմֆոնիկ նվագախումբը) ինքնուրույն պիտի լուծեին նյութական ու կազմակերպչական բազմաթիվ խնդիրներ: Շատ խմբեր, չհարմարվելով նոր պայմաններին, լուծարվեցին, սակայն ժամանակի ընթացքում իրավիճակը սկսեց կարգավորվել:

Սփյուռքահայ շատ արվեստագետներ եկան Հայաստան, մասնակցեցին մշակութային վերաշինության գործին:

Առաջիններից էր դիրիժոր և կոմպոզիտոր Լորիս Ճգնավորյանը, որը մինչև 2000 թ. ստանձնեց Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի ղեկավարությունը: 1991 թ. նա հիմնեց Գյումրիի մշակութային կենտրոնը: Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախումբը (դիրիժոր՝ Էդուարդ Թոփչյան) այսօր էլ աչքի է ընկնում ակտիվ գործունեությամբ՝ հետաքրքիր, բարձրակարգ կատարումներով ներկայանալով ինչպես Հայաստանի, այնպես էլ արտերկրի երաժշտասերներին:

Հայաստանում վերսկսեց իր գործունեությունը աշխարհահռչակ դիրիժոր Օհան Դուրյանը:

Իր փայլուն կատարումներով շարունակում է աչքի ընկնել մեծատաղանդ դիրիժոր, պետական ակադեմիական երգչախմբի ղեկավար, պետական մրցանակի դափնեկիր, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Հովհաննես Չեքիջյանը:

Սփյուռքահայ հանրահայտ երաժիշտներից Արամ Ղարաբեկյանը ստանձնեց Պետական կամերային նվագախմբի ղեկավարությունը՝ բարձրացնելով այն նոր աստիճանի, հանդես գալով աշխարհի տարբեր երկրներում:

Մեծ հռչակ ձեռք բերեց Գյումրիի «Գոհար» համույթը տաղանդավոր դիրիժոր Սեպուհ Աբգարյանի ղեկավարությամբ[465]:

---

[465] Տե՛ս նույն տեղում, էջ 787:

Անկախությունը նաև հոգևոր մշակույթի զարթոնք ապահովեց: Համերգասրահների բեմերից հնչեցին միջնադարյան հոգևոր երաժշտության գոհարները՝ «Շարական» (գեղարվեստական ղեկավար՝ Դանիել Երաժիշտ), «Տաղարան» (գեղարվեստական ղեկավար՝ Ս. Երկանյան) համույթների կատարմամբ: ՀՀ մշակույթի նախարարությանը կից ստեղծվեց համերգաշարերի նախաձեռնողների խումբ:

XX դ. հայ երաժշտական արվեստում արժեքավոր ներդրում ունեցած մեծանուն կոմպոզիտորների համար անկախ պետականության ձեռքբերումը ստեղծագործական նոր խթան էր:

Բալետների և օպերաների հեղինակ, ճանաչված կոմպոզիտոր Էդգար Հովհաննիսյանը (1930–1998 թթ.), որի ստեղծագործությունը հիմնականում կապված է մեր ժողովրդի պատմության և արդի կյանքի հետ, նոր իրականությունն իմաստավորեց խոհափիլիսոփայական երկերով (1993 թ.«Գողգոթա» սիմֆոնիկ պոեմ, 1995 թ. «Գրիգոր Նարեկացի» օրատորիա): Անկախության տարիներն արդյունավետ էին նոր իրականության գաղափարներով խանդավառված կոմպոզիտոր Տիգրան Մանսուրյանի համար, որի ստեղծագործությունը համաեվրոպական երաժշտական մշակույթի լավագույն ավանդույթների սինթեզն է՝ հիմնված կոմիտասյան սկզբունքների վրա: Տ. Մանսուրյանի ինքնատիպ ստեղծագործությունները հնչում են արտերկրում հայտնի երաժիշտների կատարմամբ (վոկալ շարք՝ «Գարնան երգեր»):

Շարունակում են ստեղծագործել հանրահայտ կոմպոզիտորներ Ռ. Ամիրխանյանը, Կ. Օրբելյանը, Ա. Սաթյանը, Վ. Բալյանը և ուրիշներ:

Հանրությանն այսօր ժամանակակից բեմադրություններով է ներկայանում Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնը: Երկարատև ընդմիջումից հետո թատրոնի երգացանկում հայտնվեց Ա. Խաչատրյանի «Սպարտակ» բալետը (բեմադրիչ՝ Յուրի Գրիգորովիչ), կայացավ Ջ. Վերդիի «Աիդա» օպերայի շքեղ բեմադրությունը (բեմադրիչ՝ Մարիո Կոռոաղի), Սերգեյ Պրո-

կոֆևի «Ռոմեո և Ջուլիետ» բալետի բեմադրությունը (բեմադրիչ՝ Ռուդոլֆ Խառատյան)[466]:

Նոր ժամանակները պահանջեցին մշակութային հաղորդակցման նոր ձևեր, և այդ ասպարեզում էլ հաջողություններ եղան: Ա. Խաչատրյանի ծննդյան 100-ամյակի առթիվ պատրաստվեց կոմպոզիտորի կյանքը և ստեղծագործական ողջ ժառանգությունն ընդգրկող տեսասկավառակ (2004 թ. Թունիսի միջազգային մրցույթում արժանացել է առաջին մրցանակի): Պատրաստվել է նաև Կոմիտասի հոբելյանին նվիրված տեսասկավառակ, որտեղ առաջին անգամ ներկայացված է ողջ ֆոնդային նյութը:

գ. Թատրոնը և կինոն

Հայ թատրոնի վերջին քսանամյակն առանձնանում է հիմնարար փոփոխություններով: Երկրի սոցիալ-տնտեսական վիճակի կայունացման հետ թատրոնների աշխատանքը աստիճանաբար կարգավորվեց:

1990-ականների սկզբին պետական թատրոնների կողքին հայտնվեցին մասնավոր թատերական խմբեր: 1991թ. ստեղծվեց Համազգային թատրոնը, որը կազմակերպվեց իբրև խաղացանկային թատրոն՝ մշտական թատերախմբով: Տասնամյա գործունեությունից հետո այս թատրոնը դարձավ պետական:

1990-ականների վերջից Հայաստանում սկսեցին կազմակերպվել թատերական փառատոններ՝ հանրապետական ու միջազգային: Միջազգային փառատոնների շրջանակում Հայաստան են ժամանում արտերկրի հայտնի թատերախմբեր, բեմադրիչներ ու դերասաններ:

Նոր բեմադրություններով հանդես եկան Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի, Գ. Սունդուկյանի անվան ակադեմիական, Հր. Ղափլանյանի անվան դրամատիկական, Համազգայինի, Գյումրիի և Վանաձորի թատրոնները: Շարունակում էին բեմում

[466] Նույն տեղում, էջ 788:

հանդես գալ տաղանդավոր դերասաններ Խորեն Աբրահամյանը, Սոս Սարգսյանը, Վարդուհի Վարդերեսյանը և ուրիշներ:

Անկախության առաջին տասնամյակի շատ բարդ պայմաններում Հայաստանում նկարահանվել են երեք տասնյակից ավելի լիամետրաժ ու կարճամետրաժ խաղարկային ֆիլմեր և բազմաթիվ վավերագրական կինոնկարներ: Այդ տարիներին հիմնվեցին մի շարք անկախ ստուդիաներ: Ֆիլմերի մի մասը ոճի առումով մեր կինոյի ավանդական հիմքի վրա է ստեղծված (Առնոլդ Աղաբաբովի «Որտե՞ղ էիր, մարդ Աստծո», Արման Մանարյանի «Ընկեր Փանջունի», Դմիտրի Կեսայանցի «Անիծվածները», «Աղետ» և այլն): Մյուս մասը առավել նոր կինոմտածողության կրողն է (Սուրեն Բաբայանի «Արյուն», Միքայել Դովլաթյանի «Լաբիրինթոս» Հարություն Խաչատրյանի «Վերադարձ ավետյաց երկիր», Վիգեն Չալդրանյանի «Ձայն բարբառոյ...», «Տէր, ողորմեա» ֆիլմերը): Նոր սերնդի նկարահանած ֆիլմերից են Էդգար Բաղդասարյանի «Խաղերը», «Սև պատը», Տիգրան Խզմալյանի «Սևը և սպիտակը», «Պիեռլեկինո կամ օդից էլ թեթև»: 1990–ականներին նկարահանված վավերագրական ֆիլմերից են Ռուբեն Գևորգյանցի «Փարաջանով. վերջին կոլաժը», Կարեն Գևորգյանի «Խաչը մեր», «Երկընտրանք» ֆիլմերը: «Վերջ» և «Կյանք» բանաստեղծական-մոնտաժային երկերգությունում իր ստեղծագործությանը հատուկ տիեզերական տեսանկյունից մարդկային գոյության խորհուրդն է վերաիմաստավորում կինոյի դասական դարձած Արտավազդ Փելեշյանը: 2000-ական թվականներին Հայաստանում նկարահանվել են մոտ 60 լիամետրաժ և կարճամետրաժ գեղարվեստական խաղարկային ֆիլմ և մեծ թվով վավերագրական կինոնկարներ:

1990-ական թվականներին իրենց գործունեությունն էին շարունակում հայ անվանի անիմատորներ Ռոբերտ Սահակյանցը («Քեզ Հայաստան», «Սեղմակոճակ», «Կացին» (ըստ Հ. Թումանյանի), «Ընտրություններ», «Տապան» և այլն), Գայանե Մարտիրոսյանը («Քամու թևերին», «Տարաշխարհիկները» և այլն), Ստեփան Գալստյանը («Միջանցք», «Այլընտրանք» և այլն), Նաիրա Մուրադյանը («Երեք պոետ և Չարենց», «Ճանապարհ» և այլն) և ուրիշներ:

Խաղարկային կինոյում իր խոսքն ասաց Արման Մանարյանը, որը որպես մուլտիպլիկատոր նկարեց «Տգետը» մուլտֆիլմը, իսկ 2009-ին ավարտեց հայոց էպոսի՝ Սասունցի Դավթի անիմացիոն էկրանավորումը[467]:

1990-ական թվականներին Հայաստանում նկարահանվեց մոտ քսան անիմացիոն (մուլտիպլիկացիոն) ֆիլմ, նույնքան էլ նկարահանվեց հաջորդ տասնամյակում:

Հայ ռեժիսորների ֆիլմերը ներկայացվում են միջազգային կինոփառատոններում: Հայաստանում նույնպես կազմակերպվում են կինոփառատոններ, որոնց մեջ առաջնությունը, իբրև մշակութային իրադարձություն, պատկանում է «Ոսկե ծիրան» ամենամյա միջազգային կինոփառատոնին:

է. Ֆիզիկական կուլտուրան և սպորտը

Խորհրդային Միության փլուզումը և Հայաստանի Հանրապետության հռչակումը ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառի աշխատանքների կազմակերպման և ղեկավարման հարցերում առաջ բերեցին սկզբունքային նոր մոտեցումներ: Արդյունաբերական ձեռնարկությունների տնտեսական գործունեության անկման հետևանքով անգործության մատնվեցին նաև ֆիզկուլտուրային կոլեկտիվները:

Հանրապետության տնտեսական վիճակը խոչընդոտում էր ֆիզիկական կուլտուրայի և սպորտի լիարժեք ֆինանսավորմանը, մինչդեռ, վերանորոգման խիստ կարիք ունեին բոլոր մարզադահլիճները և սպորտային կառույցները: Մարզասրահները չէին տաքացվում, չէին գործում շոգեբաղնիքները, ցնցուղարանները, վերականգնման կենտրոնները: Այս ամենի հետևանքով նվազել էր առողջարարական և զանգվածային ֆիզկուլտուրայով զբաղվածների թիվը:

Չնայած այդ ամենին՝ զգալի հաջողություններ ձեռք բերվեցին

---

[467] Գալստյան Ս., Հայացք մեր կինոյին, Պատմությունը և ներկան, Երևան, 2011, էջ 226:

1990-2000 թվականներին հանրապետությունում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի աշխատանքներում, այդ թվում և առանձին մարզաձևերում (ըմբշամարտ, ծանրամարտ, բռնցքամարտ, շախմատ և այլն):

Ստեղծվեցին Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեն, տարբեր մարզաձևերի հանրապետական ֆեդերացիաները, օրինականացվեց պրոֆեսիոնալ սպորտը, որոշ զարգացում ապրեցին մարզական ակումբները:

1990-ական թթ. սկզբից Հայաստանում սկսվեց անկախության գործընթացը, որը նոր պայմաններում նոր պահաջներ ու խնդիրներ դրեց ֆիզկուլտուրայի ու սպորտի զարգացման գործում:

1990 թվականի հոկտեմբերի 23-ին Երևան քաղաքում հրավիրվեց Հայաստանի ազգային օլիմպիական շարժման հիմնադիր համագումարը: Համագումար հրավիրելու անհրաժեշտությունը պայմանավորված էր այն իրողությամբ, որ Հայաստանը ազգային օլիմպիական կոմիտե չուներ, իսկ օլիմպիական խաղերին մասնակցելու իրավունքը վերապահվում էր միայն այն երկրներին, որոնք ունեին ազգային օլիմպիական կոմիտե և անդամակցում էին ՄՕԿ-ին[468]:

Համագումարը հաստատեց Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի (ՀԱՕԿ) կանոնադրությունը, ընտրեց ՀԱՕԿ-ի կազմը, որի մեջ մտան 143 մարդ՝ հանրապետության անվանի մարզիկներ և մարզիչներ, մարզաձևերի ազգային ֆեդերացիաների ներկայացուցիչներ, հանրապետության քաղաքների և շրջանների, մարզական ընկերությունների և կազմակերպությունների ակտիվիստներ, մարզական աշխատողներ, գիտնականներ, լրատվական զանգվածային միջոցների աշխատողներ, սփյուռքահայ մարզական գործիչներ: Հաստատվեց ՀԱՕԿ-ի գործադիր կոմիտեն՝ 27 անդամներով:

ՀԱՕԿ-ի նախագահ ընտրվեց հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կոմիտեի նախագահ Ռ. Հա-

[468] Իսպիրյան Մ., Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պատմություն, Երևան, 2002, էջ 186:

կոբյանը, առաջին փոխնախագահներ՝ Հ. Շահինյանը և Մ. Իսպիրյանը, փոխնախագահներ՝ Ա. Ազարյանը և Վ. Ենգիբարյանը, գլխավոր քարտուղար՝ Հ. Յավրյանը: ՀԱՕԿ-ի գործադիր կոմիտեի կազմում, բացի վերը թվարկվածներից, ընտրվեցին օլիմպիական չեմպիոններ՝ հնգամարտիկ Ի.Նովիկովը, ծանրորդ Յու. Վարդանյանը, օլիմպիական խաղերի մրցանակակիր, ջրացատկորդ Դ. Համբարձումյանը և այլոք[469]:

ՀԱՕԿ-ի աջակցությամբ կարճ ժամանակաշրջանում միջազգային ֆեդերացիաների անդամներ հաստատվեցին հանրապետության բռնցքամարտի, հունահռոմեական և ազատ ոճի ըմբշամարտի, ծանրամարտի, մարմնամարզության, թենիսի, սեղանի թենիսի, բասկետբոլի, ֆուտբոլի, վոլեյբոլի և այլ մարզաձևերի ազգային ֆեդերացիաները:

1991թ. Հայաստանի Հանրապետության նախարարների խորհուրդը որոշում ընդունեց հանրապետությունում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կառավարման լիազորված մարմին համարվող Հայաստանի Հանրապետության ֆիզիկական կուլտուրային և սպորտի պետական կոմիտեի փոխարեն ստեղծել ՀՀ նախարարների խորհրդին առընթեր ֆիզիկական կուլտուրայի և սպորտի կոմիտե՝ դրանով իսկ ընդլայնելով ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ղեկավարման կարգավիճակը և կարևորությունը:

ՀԱՕԿ-ը միջազգային օլիմպիական կոմիտեի կողմից ժամանակավորապես ճանաչվեց 1992 թվականի մարտի 8-ին Լոզանում կայացած ՄՕԿ-ի նստաշրջանում: 1992թ. հոկտեմբերի 31-ին Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեն հաստատվեց աշխարհի ազգային օլիմպիական կոմիտեների միության անդամ, իսկ 2 օր անց՝ նոյեմբերի 2-ին՝ Եվրոպայի ազգային օլիմպիական կոմիտեների միության անդամ[470]:

1992 թվականի հուլիսի 25-ին Բարսելոնի օլիմպիական խաղերի բացման արարողության ժամանակ միացյալ հավաքական թիմի պատվիրակության շարասյան գլխամասում նախկին ԽՍՀՄ-ի

[469] Տե՛ս նույն տեղում, էջ 187:
[470] Տե՛ս նույն տեղում, էջ 189:

միութենական հանրապետությունների դրոշակակիրների շարքում, օլիմպիական խաղերի պատմության մեջ առաջին անգամ, ծածանվում էր Հայաստանի Հանրապետության պետական դրոշը: Այն տանում էր ապագա օլիմպիական չեմպիոն, հրաձիգ Հրաչյա Պետիկյանը: Բացի Հրաչյա Պետիկյանից, այս խաղերին մասնակցեցին հայաստանցի ևս երեք մարզիկներ՝ հունահռոմեական ոճի ըմբիշներ Մնացական Իսկանդարյանը և Ալֆրեդ Տեր-Մկրտչյանը, ծանրամարտիկ Իսրայել Միլիտոսյանը, որոնք ընդգրկված էին Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) միացյալ թիմի կազմում (նախկին ԽՍՀՄ հավաքականի թիմ)[471]:

Այստեղ փայլուն հանդես եկավ գյումրեցի 74 կգ քաշային կարգի հունահռոմեական ոճի ըմբշամարտիկ Մ. Իսկանդարյանը, որը իր բոլոր մրցակիցներին հաղթեց մեծ առավելությամբ և հռչակվեց օլիմպիական չեմպիոն: Մ. Իսկանդարյանի ոչ միայն օլիմպիական խաղերի, այլև ԽՍՀՄ, Եվրոպայի և աշխարհի բազմակի չեմպիոն էր:

Գյումրեցի հանրահայտ ծանրամարտիկ Ի. Միլիտոսյանը նույնպես ցուցադրելով հաղթանակի հասնելու անկոտրում կամք՝ տոնեց իր օլիմպիական հաղթանակը: Նա բազմիցս նվաճել է ԽՍՀՄ-ի, Եվրոպայի և աշխարհի չեմպիոնի կոչումը:

Հայաստանի հրաձիգներից առաջինը Հ. Պետիկյանը նվաճեց օլիմպիական չեմպիոնի պատվավոր տիտղոսը: 1988 թվականից՝ Հ. Պետիկյանը քանիցս նվաճել է ԽՍՀՄ-ի, Եվրոպայի և աշխարհի չեմպիոնի կոչումը:

Հայաստանցի օլիմպիական չեմպիոններ Մ. Իսկանդարյանի, Ի. Միլիտոսյանի և Հ. Պետիկյանի փայլուն հաղթանակների պատվին Բարսելոնի 25-րդ օլիմպիական խաղերում երեք անգամ բարձրացվեց Հայաստանի Հանրապետության պետական եռագույն դրոշը և հնչեց օրհներգը: Օլիմպիական խաղերում հայաստանցի մարզիկները հասան փայլուն հաջողության՝ նվաճելով երեք ոսկե և մեկ արծաթե մեդալ: Այս մարզական արդյունքը

[471] Տե՛ս նույն տեղում, էջ 190:

փոքր-ինչ զիջում է միայն 1956 թվականի Մելբուռնի 16-րդ օլիմպիական խաղերի արդյունքներին, երբ Հայաստանի մարզիկները ձեռք բերեցին 4 ոսկե մեդալ:

Խաղերին միացյալ թիմի կազմում Մոսկվայից, Ուկրաինայից, Ուզբեկստանից մասնակցեցին ևս 4 հայ մարզիկներ: Երկրորդ անգամ օլիմպիական խաղերի մասնակցեցին և օլիմպիական չեմպիոնի կոչում նվաճեցին կինոցի սուսերամարտիկ Գեորգի Պողոսյանը, ինչպես նաև հայազգի մոսկվացի մարզիկներ բասկետբոլիստուհի Ելենա Բունիաթյանցը, ձեռնագնդորդ Պավել Սուքիասյանցը և բռնցքամարտիկ Արթուր Գրիգորյանը (Ուզբեկստան):

Նրանք բոլորն էլ եղել էին ԽՍՀՄ-ի և Եվրոպայի չեմպիոններ, իսկ նրանցից Գ. Պողոսյանն ու Պ. Սուքիասյանը նաև աշխարհի չեմպիոններ:

Խաղերի մասնակից բռնցքամարտիկ Ա. Գրիգորյանը (Ուզբեկստան) մրցանակային տեղ չգրավեց: Խաղերից հետո նա դարձավ Գերմանիայի պրոֆեսիոնալ բռնցքամարտիկների միության անդամ և բազմիցս նվաճեց պրոֆեսիոնալ բռնցքամարտիկների աշխարհի չեմպիոնի կոչումը:

Այս օլիմպիական խաղերում Միացյալ թիմի անդամ Խորհրդային Միության հայազգի մարզիկները նվաճեցին 3 ոսկե մեդալ:

Բարսելոնի օլիմպիական խաղերին մասնակցեցին 6 սփյուռքահայ մարզիկներ: Օլիմպիադային երկրորդ անգամ մասնակցեցին ամերիկահայ ժամանակակից հնգամարտիկ Միսակ Կոստիկյանը և ֆրանսահայ լողորդ Քրիստոֆ Կալֆայանը: Արդեն փորձառու այս հայազգի մարզիկներից բացի խաղերում հանդես եկան ռումինահայ մարմնամարզուհի Ջինա Գոգյանը, բուլղարահայ հուսառումեական ոճի ըմբշամարտիկ Նուրիան Լելիկյանը և բուլղարահայ քույրեր թենիսիստուհիներ Կատերինա և Մագդալինա Բերբերյան-Մալենաները: Այս օլիմպիական խաղերում Խորհրդային Միության հայազգի և սփյուռքահայ մարզիկները նվաճեցին 3 ոսկե և մեկ արծաթե մեդալ[472]:

Հանրապետության ֆիզկուլտուրային շարժման համար 1993

[472] Տե՛ս նույն տեղում, էջ 192-193, 194:

թվականը հայտնի է նրանով, որ հանրապետության կառավարությունը միջոցների խնայողության նպատակով որոշեց միավորել պետական կառավարման տարբեր ոլորտները: Որոշվեց ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառը միավորել երիտասարդության հարցերի հետ, որի հետևանքով ստեղծվեց ՀՀ նախարարների խորհրդին առընթեր ֆիզիկական կուլտուրայի, սպորտի և երիտասարդության հարցերի վարչություն:

Հայաստանի Հանրապետության օլիմպիական շարժման ամենանշանակալի երևույթը հանրապետության մարզական պատվիրակության մասնակցությունն էր 1994 թվականի փետրվարի 12-17-ը կայացած Լիլիհամերի (Նորվեգիա) 17-րդ ձմեռային օլիմպիական խաղերին:

1994 թվականի փետրվարի 11-ին Լիլիհամերի օլիմպիական ավանում Հայաստանի Հանրապետության պետական օրհներգի հնչյունների ներքո առաջին անգամ բարձրացվեց հանրապետության պետական եռագույն դրոշը: Հայաստանի Հանրապետության մարզական պատվիրակությունը խաղերի բացման արարողության ժամանակ, խաղերի մասնակից 66 պետությունների թվում, օլիմպիական մարզադաշտ մտավ «Հայաստանի Հանրապետություն» ցուցատախտակով և եռագույն դրոշով:

Հանրապետության մարզական կյանքի, օլիմպիական շարժման հետագա զարգացման համար չափազանց նշանակալի երևույթ էր 1994թ. ապրիլի 19-20-ը ՄՕԿ-ի (Միջազգային օլիմպիական կոմիտեի) պատվիրակության այցը Հայաստան՝ ՄՕԿ-ի պրեզիդենտ, մարկիզ Խուան Անտոնիո Սամարանչի գլխավորությամբ[473]:

ՄՕԿ-ի պատվիրակության այցը Հայաստան նպաստեց հանրապետությունում օլիմպիական շարժման հեղինակության բարձրացմանը, մարզական աշխատանքների աշխուժացմանը, միջազգային մարզական կապերի բարելավմանը, օլիմպիական շարժման բազմաթիվ հիմնահարցերի պարզաբանմանը և այլն:

Հաշվի առնելով այն, որ ՄՕԿ-ը 1994 թվականը հայտարարել էր օլիմպիական շարժման 100-ամյակի տարի՝ հանրապետության

[473] Տե՛ս նույն տեղում, էջ 197:

մարզական կազմակերպություններում, հիմնարկ-ձեռնարկություններում և ուսումնական հաստատություններում լայնորեն կազմակերպվեցին և անցկացվեցին օլիմպիական շարժման 100-ամյակին նվիրված միջոցառումներ:

ՄՕԿ-ի հռբելյանի կապակցությամբ, նկատի ունենալով օլիմպիական խաղերի հայաստանցի միակ եռակի չեմպիոն Ալբերտ Ազարյանի ծանրակշիռ ծառայությունները միջազգային օլիմպիական շարժմանը, ՄՕԿ-ը նրան շնորհեց հատուկ մրցանակ:

Նույն տարում ժամանակակից օլիմպիական խաղերի առաջին հայ չեմպիոն, մարմնամարզիկ Հրանտ Շահինյանը համաշխարհային օլիմպիական շարժմանը մատուցած մեծ ծառայությունների համար պարգևատրվեց «Արդարացի խաղի համար» ՄՕԿ-ի հատուկ մրցանակով:

Մեծ կարևորություն տալով մարզական հերթափոխի պատրաստմանը՝ ՀԱՕԿ-ը 1995 թվականներին Հոլանդիա և Անգլիա ուղարկեց հանրապետության երիտասարդական հավաքական թիմերի 27 մարզիկների:

Հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառը 1995թ. ապրեց նոր փորձություն. Հանրապետության կառավարությունը ստեղծեց ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարություն: Ընդ որում՝ նախարարությունում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հարցերով աշխատողների թիվը կրճատվեց մոտ 3 անգամ և հավասարվեց 12 մարդու:

Ատլանտայում կայանալիք 26-րդ օլիմպիական խաղերին Հայաստանի Հանրապետության արժանավայել մասնակցությունը ապահովելու նպատակով հանրապետության վարչապետը 1996 թ. ապրիլի 18-ին ընդունեց թիվ 231 որոշումը, որով պարտավորեցվում էր կառավարության համապատասխան մարմիններին ձեռնարկել բոլոր միջոցները օլիմպիական խաղերին հաջող մասնակցությունն ապահովելու համար[474]:

Ֆիզկուլտուրային շարժման պատմության մեջ առաջին անգամ Հայաստանի մարզական պատվիրակությունը ամառային օլիմպիական խաղերին մեկնեց առանձին թիմով և իր անվամբ: Լրաց-

[474] Տես նույն տեղում, էջ 199:

ելով ՄՕԿ-ի և տարբեր մարզաձևերի միջազգային ֆեդերացիաների վարկանիշները՝ խաղերին մասնակցելու իրավունք ստացան հայաստանցի 32 մարզիկ-մարզուհիներ՝ 12 մարզաձևերից: Հանրապետության մարզիկների հետ օլիմպիադա մեկնեցին նաև 63 մարզական աշխատողներ, մարզիչներ, օլիմպիական շարժման առաջատարներ:

Հունահռոմեական ոճի ըմբշամարտի 52 կգ քաշային կարգի օլիմպիական մրցաշարում Հայաստանցի Արմեն Նազարյանը նվաճեց օլիմպիական չեմպիոնի ոսկե մեդալ: Այնուհետև Ա. Նազարյանը մշտական բնակություն հաստատեց Բուլղարիայում և հաջորդ՝ 2000 թ. Սիդնեյի օլիմպիական խաղերում արժանացավ օլիմպիական խաղերի ոսկե պարգևին ու դարձավ օլիմպիական խաղերի կրկնակի չեմպիոն, բայց արդեն Բուլղարիայի հավաքական թիմի կազմում: Նա օլիմպիական խաղերի կրկնակի չեմպիոնի կոչումից բացի արժանացել է ԽՍՀՄ, Եվրոպայի կրկնակի չեմպիոնի, ինչպես նաև՝ աշխարհի չեմպիոնի կոչման[475]:

48 կգ քաշային կարգի ազատ ոճի ըմբիշների օլիմպիական մրցումներում հաջող հանդես եկավ Արարատ քաղաքի ներկայացուցիչ Արմեն Մկրտչյանը, որը ձեռք բերեց արծաթե մեդալ:

Ատլանտայի 26-րդ օլիմպիական խաղերին, բացի հայաստանցի 32 մարզիկներից, մասնակցեցին նաև հայազգի 25 մարզիկներ՝ 14 պետություններից:

Այս խաղերում ամենամեծ մարզական հաջողության հասավ ամերիկահայ թենիսիստ Անդրե Աղասին, որը հայ մարզիկներից առաջինը կարողացավ հաղթանակով դուրս գալ աշխարհի ուժեղագույն թենիսիստների օլիմպիական մրցաշարից՝ նվաճելով օլիմպիական խաղերի չեմպիոնի ոսկե մեդալ: Հաղթանակներ տանելով իր բոլոր մրցակիցների նկատմամբ և միայն եզրափակիչ մարտում զիջելով առաջնությունը՝ օլիմպիական 7 խաղերի ձյուդոիստների մրցումներում արծաթե մեդալ նվաճեց ուզբեկստանցի հայազգի մարզիկ Կարեն Բաղդասարովը: Օլիմպիական արծաթե մեդալի արժանացավ նաև ռումինահայ փորձառու մարմնամարզուհի Ջինա Գոգյանը[476]:

[475] Տե՛ս նույն տեղում, էջ 201:
[476] Տե՛ս նույն տեղում, էջ 202-203:

Ատլանտայի խաղերի մասնակից սփյուռքահայ մարզիկները նվաճեցին մեկ ոսկե, երկու արծաթե և մեկ բրոնզե մեդալ: Բացի օլիմպիական խաղերից հայաստանցի և հայ մարզիկները որոշակի հաջողություններ ունեցան աշխարհի և Եվրոպայի չեմպիոնատներում: 1992թ. Եվրոպայի չեմպիոնի կոչումը նվաճեց ըմբիշ Ալֆրեդ Տեր-Մկրտչյանը: 1993թ. աշխարհի չեմպիոններ դարձան ըմբիշ Աղասի Մանուկյանը և սամբիստ Հովիկ Մանուկյանը, իսկ ծանրորդ Խաչատուր Քյափանակցյանը նվաճեց Եվրոպայի չեմպիոնի կոչումը: Սկսած 1994 թվականից հրաձգուհի Երջանիկ Ավետիսյանը բազմիցս նվաճել է աշխարհի և Եվրոպայի չեմպիոնի տիտղոսը: 1994 թվականին Եվրոպայի չեմպիոններ դարձան ըմբիշներ Արմեն Մկրտչյանը և Անուշավան Սահակյանը, իսկ մեկ այլ ըմբիշ՝ Արայիկ Գևորգյանը, աշխարհի չեմպիոնի կոչման արժանացավ 1995, 1997 և 1998 թթ.: 1998 թ. Ֆրանսիայի ֆուտբոլի ազգային հավաքականի կազմում աշխարհի չեմպիոնի տիտղոս նվաճեցին ֆրանսիահայ ֆուտբոլիստներ Յուրա Ջորկաևը և Ալեն Պողոսյանը[477]:

1997 թվականի հունվարի 29-ին կայացավ Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի հերթական Գլխավոր ասամբլեան, ուր ՀԱՕԿ-ի կատարած աշխատանքների մասին հաշվետվությամբ հանդես եկավ ՀԱՕԿ-ի նախագահ Ա. Ավետիսյանը: Օլիմպիական խաղերին մասնակցած 32 մարզիկներից միայն 2–3-ը չահեցին մեկական ոսկե և արծաթե մեդալ, 9-ը տեղ գրավեցին առաջին ութնյակում, մնացած 21-ը անհաջող հանդես եկան:

Ասամբլեան քննարկեց 1998 թ. Նագանոյի (Ճապոնիա) ձմեռային 18-րդ և 2000 թ. Սիդնեյի (Ավստրալիա) 27-րդ ամառային օլիմպիական խաղերին Հայաստանի մասնակցության հարցը և որոշում ընդունեց մասնակցել ձմեռային և ամառային օլիմպիական խաղերին:

1997թ. ՀԱՕԿ-ը ակտիվ գործունեություն ծավալեց Նագանոյում (Ճապոնիա) 1998թ. հունվարի 7-29-ը կայանալիք ձմեռային 18-րդ խաղերին հայաստանցի մարզիկների նախապատրաստման ուղղությամբ[478]:

---

[477] Տե՛ս նույն տեղում, էջ 204-205:
[478] Տե՛ս նույն տեղում, էջ 205:

1998 թ. փետրվարի 4-ին Նագանո մեկնեցին 7 մարզիկներ, մեկ մարզիչ, մեկ բժիշկ, պատվիրակությունը ղեկավարող և ուղեկցող 9 անձինք և 2 ուսանող՝ միջազգային երիտասարդական ճամբարի աշխատանքներին մասնակցելու համար:

Նագանոյի 18-րդ ձմեռային խաղերին մասնակցեցին երկու սփյուռքահայ մարզիկներ: Փայլուն հանդես եկավ ԱՄՆ-ի՝ տափ-օղակով հոկեյի կանանց հավաքական թիմի անդամ Վիկտորյա Մովսիսյանը, որը ձմեռային օլիմպիական խաղերի չեմպիոնուհու կոչումը նվաճած առաջին հայ մարզուհին է:

1999թ. լուրջ հաջողությունների հասան և Եվրոպայի չեմպիոնի կոչումը նվաճեցին Հայաստանի շախմատի գրոյսմաստեր Լևոն Արոնյանը, Սմբատ Լպուտյանը, Արտյոմ Մինասյանն ու Աշոտ Անաստասյանը:

1999 թ. փետրվարին ձայների մեծամասնությամբ ՀԱՕԿ-ի նախագահ ընտրվեց սպորտի վաստակավոր վարպետ, հունահռոմեական ըմբշամարտի աշխարհի բազմակի չեմպիոն Բենուր Փաշայանը: Աշխատանքներ տարվեցին Համահայկական առաջին խաղերը ՀՀ-ում կազմակերպելու ուղղությամբ:

Համահայկական առաջին խաղերը կայացան Հայաստանում 1999թ. օգոստոսի 28-ից սեպտեմբերի 5-ը: Խաղերի հանդիսավոր բացումը կայացավ Երևանի «Հրազդան» մարզադաշտում օգոստոսի 28-ին: Խաղերի կրակը բոցավառվեց Գառնիի հեթանոսական տաճարում և փոխանցավազքերով հասցվեց «Հրազդան» մարզադաշտ, ուր օլիմպիական խաղերի եռակի չեմպիոն, մարմնամարզիկ Ալբերտ Ազարյանը բոցավառեց խաղերի ջահը[479]:

Հանդիսավոր բացման արարողությունը, որը վերածվեց մարզամշակույթային խոշոր տոնի, ավարտվեց գեղեցիկ և ճոխ հրավառությամբ: Խաղերի մասնակիցներին իր բարեմաղթանքները հղեց ՄՕԿ-ի պրեզիդենտ Խուան Անտոնիո Սամարանչը: Համահայկական առաջին խաղերին մեծ թվով մարզիկներ մասնակցեցին Թեհրանից (64 հոգի), Ստեփանակերտից (58 հոգի), Բուենոս Այրեսից (53 հոգի), Սիդնեյից (49 հոգի), Լոս Անջելեսից (47 հոգի), Փարիզից (34 հոգի), Տորոնտոյից (32 հոգի), ինչպես նաև Բեյրու-

[479] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 29.08.1999:

քից, Բրյուսելից, Կահիրեից, Հալեպից, Մարսելից, Մոնրեալից, Նիկոզիայից, Նիցցայից, Սան Ֆրանցիսկոյից, Սան Պաուլոյից, Սպահանից:

Խաղերի ժամանակ խաղարկվեցին 37-ական ոսկե, արծաթե և բրոնզե մեդալներ, որոնք բաժին ընկան 26 քաղաքների մարզիկների: Խաղերի ոսկե մեդալակիրների մեջ էին Երևան, Վանաձոր, Թբիլիսի, Թեհրան, Գյումրի, Մոնրեալ, Լոս Անջելես, Հալեպ, Վալլեյ, Սիսիան և Էջմիածին քաղաքները:

Խաղերի հանդիսավոր փակման արարողությունը կայացավ Երևանի Կ. Դեմիրճյան մարզահամերգային համալիրում 1999 թվականի սեպտեմբերի 5-ին: Այն վերածվեց երիտասարդության բարեկամության ջերմ ու հուզիչ տոնախմբության:

2000 թվականի ամենախոշոր մարզական ստուգատեսը, բնականաբար, Սիդնեյի 27-րդ ամառային օլիմպիական խաղերն էին, որոնց մասնակցեցին 24 հայաստանցի մարզիկ-մարզուհիներ:

Հայաստանցի մարզիկները այս օլիմպիական խաղերում հանդես եկան չափազանց անհաջող: Նրանցից միայն ծանրորդ Արսեն Մելիքյանին հաջողվեց ձեռք բերել բրոնզե մեդալ: Ի տարբերություն հայաստանցի մարզիկների՝ Սիդնեյի խաղերում անչափ հաջող հանդես եկան սփյուռքահայ մարզիկները: Խաղերի սփյուռքահայ 18 մասնակիցներից չորսը՝ հունահռոմեական ոճի ըմբիշ Վարդերես Սամուրղաշևը, սուսերամարտուհի Կարինե Ազնավուրյանը, ձեռագնդորդ Պավել Սուքիասյանցը և Հայաստանից Բուլղարիա մեկնած և Բուլղարիայի քիմից հանդես եկող հունահռոմեական ոճի ըմբիշ Արմեն Նազարյանը հռչակվեցին օլիմպիական չեմպիոններ, ըստ որում վերջին երկու մարզիկները այդ մարզական բարձր տիտղոսին արժանացան երկրորդ անգամ: Սփյուռքահայ մարզիկներից ֆրանսիացի մարմնամարզիկ Բենիամին Վարոնյանը և ռուսաստանցի վոլեյբոլիստուհի Ինեսա Սարգսյանը ձեռք բերեցին արծաթե մեդալներ[480]:

ՀԱՕԿ-ի որոշ փոփոխությունների ենթարկված գործադիր կոմիտեն՝ նորընտիր նախագահ Իշխան Զաքարյանի գլխավորությամբ, 2001 հունվար-մայիս ամիսներին անցկացրեց գլխավոր ա-

[480] Իսպիրյան Մ., նշված աշխ., էջ 212-213:

սամբլեայի 4 արտահերթ նիստ, որոնցում, ըստ մարզաձևերի քննություն առավ Սիդնեյի օլիմպիական խաղերին հանրապետության մարզիկների մասնակցության արդյունքները և ձեռնամուխ եղավ թույլ տրված սխալների ու թերությունների վերացմանը:

ՀԱՕԿ-ի ասամբլեան հաստատեց «Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերի Աթենքի 28-րդ օլիմպիական խաղերի նախապատրաստման 2001-2004 թթ. համալիր ծրագիրը», որի կենսագործման նպատակով ՀՀ Մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարար Ռ. Շառոյանի և ՀԱՕԿ-ի նախագահ Ի. Զաքարյանի 2001 թ. մայիսի 10-ի համատեղ հրամանով հանձնարարականներ տրվեցին բոլոր մարզական կազմակերպություններին և հավաքական թիմերին օլիմպիական խաղերի նախապատրաստման համալիր ծրագիրը ամբողջությամբ կատարելու համար[481]:

Սպորտի բնագավառում ստեղծված խառնաշփոթ իրավիճակից դուրս գալու համար ակտիվություն հանդես բերեց հանրապետության մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարությունը, որը նախարար Ռ. Շառոյանի և ֆիզիկական կուլտուրայի ու սպորտի հարցերով փոխնախարար Ի. Զաքարյանի նախաձեռնությամբ ձեռնամուխ եղավ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի վերաբերյալ հայեցակարգի և ապա նաև՝ օրենքի մշակմանը: 2000 թ. հունիսի 29-ին Հայաստանի կառավարությունը հաստատեց «Հայաստանի Հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում պետական քաղաքականության հայեցակարգը»:

Հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտի համար պատմական նշանակության երևույթ էր 2001 թվականի հունիսի 26-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենքի ընդունումը, որը ՀՀ նախագահի կողմից վավերացվեց 2001 թվականի հուլիսի 19-ին[482]: Շարունակելով ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտի բարեփոխումների գոր-

[481] Տե՛ս նույն տեղում, էջ 214:

[482] Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու 2001, գիրք Դ, Երևան, 2002, էջ 628:

ծընթացը՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը 2001թ. սեպտեմբերի 12-ին սահմանեց «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի վաստակավոր գործիչ» պատվավոր կոչումը:

2001 թվականի ամենակարևոր մարզական միջոցառումը Համահայկական երկրորդ խաղերն էին, որին մասնակցեցին 28 պետությունների 83 քաղաքների շուրջ 1700 մարզիկ-մարզուհիներ: Այս խաղերում աշխարհասփյուռ հայ մարզիկները մրցեցին 9 մարզաձևերից[483]: Նրանք մրցում էին 45-ական ոսկե, արծաթե և բրոնզե մեդալ նվաճելու համար: Խաղերի մարզական ծրագրում ավելացել էին լող և մինի ֆուտբոլ մարզաձևերը: Այսպիսով, հայ մարզիկները հանդես եկան ֆուտբոլ, բասկետբոլ, վոլեյբոլ, թենիս, սեղանի թենիս, շախմատ, աթլետիկա, լող և մինի ֆուտբոլ մարզաձևերում: Թիմային մարզաձևերում հաղթանակ տոնեցին ստեփանակերտցի ֆուտբոլիստները, երևանցի մինի ֆուտբոլիստները, Վալլեյ քաղաքի տղամարդկանց բասկետբոլի թիմի անդամները և Երևանի բասկետբոլիստուհիները:

Շախմատի մրցախաղերում վանաձորցիները հաղթանակ տարան կանանց ու տղամարդկանց մրցումներում, իսկ թենիսի և վոլեյբոլի մրցումներում հաղթանակ տոնեցին երևանցի տղաներն ու աղջիկները: Բացի վերը թվարկված քաղաքների ներկայացուցիչներից խաղերի հաղթողներից մրցանակներ շահեցին ևս 24 այլ քաղաքների մարզիկ-մարզուհիներ, այդ թվում՝ Փարիզից, Թեհրանից, Բուխարեստից, Թբիլիսիից, Հալեպից, Բեյրութից, Ստամբուլից, Գլենդելից, Մոսկվայից, Լոս Անջելեսից, Բուենոս Այրեսից, Սպահանից, Սոչիից, Շուշիից, Գյումրիից և Հայաստանի այլ քաղաքներից:

2001 թվականը նշանավորվեց հայաստանցի ծանրորդների մեծ հաջողություններով: Նախ Սալոնիկում (Հունաստան), աշխարհի երիտասարդական առաջնությունում, Արմեն Ղազարյանը (62 կգ) և Գևորգ Դավթյանը (77 կգ) նվաճեցին չեմպիոնի կոչումը, իսկ Արթուր Դանիելյանը (62 կգ) և Գևորգ Ալեքսանյանը (77 կգ) արժանացան արծաթե մեդալի: Հանրապետության հավաքական թիմը

[483] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 30.08.2001:

գրավեց երկրորդ տեղը: Այնուհետև՝ Կալմարում (Շվեդիա) կայացած Եվրոպայի երիտասարդական առաջնությունում Գևորգ Ալեքսանյանը և Ռուդոլֆ Նամալյանը (85 կգ) նվաճեցին ոսկե մեդալներ, Մակար Թամազյանը (56 կգ), Արթուր Դանիելյանը, Տիգրան Քամալյանը (94 կգ) դարձան արծաթե մեդալակիրներ, իսկ Տիգրան Մարտիրոսյանը (77 կգ) գրավեց երրորդ տեղը[484]:

2001 թվականը նոր հաջողություններ բերեց Հայաստանի հունահռոմեական ըմբշամարտի հավաքականին թիմին ու նրա գլխավոր մարզիչ աշխարհի չեմպիոն Լևոն Ջուլֆակյանին: 63 կգ քաշային կարգում աշխարհի չեմպիոնի կոչումը նվաճեց երևանցի Վաղինակ Գալստյանը, իսկ 58 կգ քաշային կարգում արծաթե մեդալի արժանացավ Կարեն Մնացականյանը (Երևան):

Գյումրիից Շվեդիա տեղափոխված հունահռոմեական ոճի ըմբիշ Արա Աբրահամյանը նույնպես նվաճեց աշխարհի չեմպիոնի կոչումը՝ 76 կգ քաշային կարգում: Մինչ այդ 2001 թվականի աշխարհի երիտասարդական առաջնությունում նույն մարզաձևում հաղթեց երևանցի Ռոման Ամոյանը, իսկ էջմիածինցի Ռոբերտ Պետրոսյանը արժանացավ արծաթե պարգևի[485]:

2003, 2007 և 2011 թվականներին տեղի ունեցան համահայկական խաղեր, որոնք ինչպես նախորդները վերածվեցին իսկական բարեկամության տոների:

Ծանրամարտի գծով առաջին հայ կինը, որը Եվրոպայի չեմպիոն դարձավ, Հռիփսիմե Խուրշուդյանն էր (2007 թ.), որին հաջորդեց Մելինե Դալուզյանը, իսկ աշխարհի չեմպիոն հռչակվեց Նազիկ Ավդալյանը (2009 թ.):

Լուրջ հաջողությունների հասավ և համաշխարհային մեծ հռչակ ձեռք բերեց Հայաստանի շախմատի ընտրանին: Հանրապետության շախմատի տղամարդկանց հավաքական թիմը՝ գրոստմայստերների կազմով 2006 թ. համաշխարհային շախմատային օլիմպիադայում նվաճեց չեմպիոնի տիտղոսը: Այդ աննախադեպ հաջողությունը շախմատի հրաշալի հնգյակը՝ Լ. Արոն-

[484] Իսպիրյան Մ., նշված աշխ., էջ 218:
[485] Տե՛ս նույն տեղում:

յան, Վ. Հակոբյան, Գ. Սարգսյան, Ա. Մինասյան, Տ. Պետրոսյան կազմով կրկնեց 2008 թվականին՝ Հայաստանը դարձնելով շախմատային օլիմպիադայի կրկնակի չեմպիոն: Հայ շախմատիստները (Լ. Արոնյան, Ս. Մովսիսյան, Վ. Հակոբյան, Գ. Սարգսյան, Ռ. Հովհաննիսյան, մարզիչ Ա. Պետրոսյան կազմով) նոր հաջողության հասան 2011 թ. հուլիսին շախմատի աշխարհի 8-րդ թիմային առաջնությունում՝ նվաճելով չեմպիոնի տիտղոսը: Շախմատի կանանց հավաքական թիմը՝ Է. Դանիելյան, Լ. Մկրտչյան, Ն. Աղինյան կազմով, 2003 թ. դարձավ Եվրոպայի չեմպիոն: Շախմատի համաշխարհային միջազգային մրցաշարերում հաղթողի կոչմանն են արժանացել հայազգի շախմատիստներ Յուրի Դոխոյանը (Ռուսաստան), Սերգեյ Մովսիսյանը (Չեխիա), Գեորգի Բագատուրը (Վրաստան), Նաիրա և Էլմիրա Աղաբաբյանները (Մոլդովա)[486]:

Առաջին հայազգի կին բոնցքամարտիկ Սյուզի Կենտիկյանը (Գերմանիա) աշխարհի չեմպիոնի կոչում վաստակեց 2007 թ.:

4. ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Հայոց անկախության վերականգնումը ինչպես ամբողջ հայ ժողովրդի, այնպես էլ Հայ Առաքելական եկեղեցու նվիրական երազանքի իրականացումն էր: Հայոց եկեղեցին իր ժողովրդի հետ ակտիվորեն մասնակցեց նվաճված հաղթանակներին, հանրապետության կայացմանը: Արցախյան ազատամարտի ընթացքում իրենց անունը փառքով պսակեցին Արցախի թեմի առաջնորդ Պարգև արքեպ. Մարտիրոսյանը, Հովհաննես քահանա Հովհաննիսյանը, Ռաֆիկ դպիր Խաչատրյանը, Գրիգոր քահանա Մարկոսյանը, Վահան աբեղա Դավթյանը, Արմեն դպիր Մովսիսյանը և ուրիշներ:

Հայ Առաքելական եկեղեցու համար կարևոր նշանակություն

[486] Հայոց պատմություն, դասագիրք բուհերի համար, նույն տեղում, էջ 790:

ունեցավ ՀՀ Գերագույն խորհրդի ընդունած «ՀՀ-ում խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքը[487]: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ ամրագրվեց, որ Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում: Հայոց եկեղեցու համար նպաստավոր պայմաններ ստեղծվեցին վերստեղծելու իր թեմերն ու համայնքները, կառուցելու նոր եկեղեցիներ, նպաստելու հոգևոր կրթությանը: Հաստատվեց ներքին թեմերի եկեղեցական կանոնադրությունը: Վազգեն Ա կաթողիկոսի նախաձեռնությամբ Սևանի թերակղզում հիմնադրվեց հոգևոր դպրոց:

Ամրապնդվեցին Մայր աթոռի կապերը Կիլիկիո կաթողիկոսության, քրիստոնեական մյուս եկեղեցիների հետ: 1994 թ. օգոստոսին վախճանվեց Ամենայն Հայոց Մեծագործ կաթողիկոս Վազգեն Առաջինը: 1995 թ. ապրիլին Էջմիածնի Ազգային-եկեղեցական պատգամավորական ժողովը Ամենայն Հայոց կաթողիկոս ընտրեց Մեծի Տան Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Ա-ին, որի կարճատև գործունեության տարիներին (1995-1999) հատկապես լայն ձեռնարկումներ եղան միջեկեղեցական կապերի սերտացման ուղղությամբ: Ընդլայնեցին կապերը Վատիկանի և Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հետ: Երևանի պետական համալսարանում հիմնվեց Աստվածաբանության ֆակուլտետ:

1999 թ. հոկտեմբերին տեղի ունեցած Ազգային-եկեղեցական ժողովում Ամենայն Հայոց կաթողիկոս ընտրվեց Գարեգին արքեպ. Ներսիսյանը՝ վերանվանելով Գարեգին Բ: Նորընտիր կաթողիկոսը շինարարական լայն աշխատանքներ ձեռնարկեց Մայր Աթոռում և եկեղեցական բոլոր թեմերում:

Ժողովրդի և եկեղեցու կյանքում կարևորագույն իրադարձություն էր 2001 թ. սեպտեմբերին քրիստոնեությունը Հայաստանում

[487] Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու (1990-1995 թթ.), 1995, էջ 136-140:

պետական կրոն հռչակելու 1700-ամյակի առթիվ կազմակերպված տոնակատարությունը, որին իրենց մասնակցությունը բերեցին Հռոմի պապը, հունաց, ռուսաց, վրաց, ղպտի, հաբեշ, ասորի, ռումին, բուլղար, անգլիական և այլ եկեղեցիների պետերն ու ներկայացուցիչները: Նույն օրերին օծվեց Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին՝ աշխարհում ամենամեծ հայկական եկեղեցին:

Ընտրությունից ի վեր Գարեգին Բ-ն ձեռնամուխ եղավ եկեղեցական ներքին կյանքի կարգավորմանն ու կազմակերպմանը: Նրա ջանքերով ՀՀ կառավարության կողմից Գևորգյան հոգևոր ճեմարանը ճանաչվեց բարձրագույն ուսումնական հաստատություն՝ Աստվածաբանական համալսարան: 2002 թ. օգոստոսին հանրապետության վարչապետ Ա. Մարգարյանի և Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ Ներսիսյանի կողմից ստորագրվեց համաձայնագիր, որով հանրակրթական դպրոցների 4-րդ-ից-10-րդ դասարաններում 2003 թ. հունվարից դասավանդվելու էր «Հայոց եկեղեցու պատմություն» առարկան[488]:

5. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ա. Հայաստանի Հանրապետության միջազգային ճանաչումը

Հայաստանի արտաքին քաղաքականության հիմնական խնդիրը բոլոր պետությունների և, առաջին հերթին, հարևանների հետ բարիդրացիական ու փոխշահավետ հարաբերությունների հաստատումն էր:

Հայաստանի Հանրապետության անկախության վերականգնումով նա դարձավ միջազգային հարաբերությունների լիիրավ անդամ՝ հնարավորություն ստանալով իր կամքով ու հայեցողութ-

[488] Մինասյան Է., Հայ առաքելական եկեղեցին անկախության վերականգնման և հանրապետության կայացման ժամանակաշրջանում, «Տարեգիրք Գ», ԵՊՀ Աստվածաբանական ֆակուլտետ, Երևան, 2008, էջ 346-348:

յամբ մշակել պետության արտաքին քաղաքականությունը: Դրությունը բարդանում էր նրանով, որ գտնվելով ԽՍՀՄ-ի կազմում՝ հասկանալի պատճառներով Հայաստանը չուներ միջազգային շփումների փորձ, միջազգային քաղաքականության հայեցակարգ և գործելակերպի չափանիշներ: Նրան սպասում էր քաղաքական դաշնակիցների դժվարին ընտրություն, որոնց հետ մոտ ապագայում պետք է կառուցեր միջպետական հարաբերությունների ստվարածավալ համակարգ:

Նորանկախ Հայաստանը միջազգայնորեն ճանաչվեց 1991 թ. վերջերից: Այդ տարվա դեկտեմբերին Հայաստանի Հանրապետությունը ճանաչեցին ԱՄՆ-ը, Ռուսաստանը, Կանադան, Ռումինիան և այլ պետություններ: 1992 թ. մարտի 2-ին նա դարձավ Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) լիիրավ անդամ, այնուհետև անդամագրվեց միջազգային մի շարք կազմակերպությունների, այդ թվում՝ Սևծովյան տնտեսական համագործակցությանը (ՍԾՏՀ):

Դեռևս ԽՍՀՄ վերջնական կազմալուծումից մեկ տարի առաջ միութենական հանրապետություններում արդեն ընթանում էր ինքնիշխանության ձևավորման գործընթացը: Այդ ուղիով ընթացողներից առաջիններից մեկը Հայաստանն էր, որը ԽՍՀՄ մյուս հանրապետությունների հետ հաստատել էր տնտեսական և մշակութային սերտ համագործակցություն, աչքի էր ընկնում սեփական արմատական շահերի գիտակցմամբ, սոցիալ-տնտեսական ու քաղաքական ինքնիշխանության ամրապնդմամբ, հատկանիշներ, որոնք հատուկ են անկախության ուղին ընտրած ժողովրդին: 1990 թ. օգոստոսի 31-ին ՀՀ Նախարարների խորհրդի նախագահ Վ. Մանուկյանը և պաշտոնական այցով հանրապետությունում գտնվող Բելոռուսիայի ԽՍՀ կառավարության նախագահի տեղակալ Ի. Կենիկը ստորագրեցին Բելոռուսիայի և ՀՀ կառավարությունների միջև համաձայնագիր սոցիալ-տնտեսական, գիտատեխնիկական ու մշակութային համագործակցության մասին[489]: Պայմանագրում կողմերը ղեկավարվում էին միմյանց քաղաքական ու

[489] «Խորհրդային Հայաստան», 1.09. 1990:

տնտեսական ինքնուրույնության ճանաչմամբ: Այստեղ շեշտվում էր հանրապետությունների իրավահավասարության հիման վրա փոխշահավետ կապերի խորացման անհրաժեշտությունը: Կնքված համաձայնագիրը հակասում էր խորհրդային երկրի միասնական, կենտրոնացված կառավարման վարչահրամայական համակարգի հիմնարար սկզբունքներին և ուներ ինքնորոշման քաղաքական ենթատեքստ: Այն ուղղված էր կենտրոնի տիրապետությունից ձերբազատվելուն և ազատ տնտեսական հարաբերություններ կառուցելուն: Ինքնիշխանության հաստատամանը ձգտող, բայց դեռևս ԽՍՀՄ հանրապետություն հանդիսացող Խորհրդային Հայաստանի կարևորագույն քայլերից էր հենց Ռուսաստանի հետ հորիզոնական կապերի հաստատումը, որի հիմքը դրվեց 1990 թ. սեպտեմբերին ՀԽՍՀ-ի և ՌԽՖՍՀ-ի միջև միջկառավարական համաձայնագրի ստորագրմամբ[490]: Համաձայնագրում ուղղակիորեն ընդգծված էր, որ տնտեսական ու մշակութային համագործակցության վերաբերյալ պայմանագիրը ստորագրվել էր երկու ինքնիշխան հանրապետությունների միջև[491]: Համաձայնագիրը երկու երկրների ինքնիշխանությունը հաստատող ու ամրապնդող փաստաթուղթ էր, քանզի կնքվել էր Ռուսաստանի Ֆեդերատիվ Հանրապետության հետ, որի կողմից ՀՀ անկախության ճանաչումը վճռորոշ նշանակություն ուներ մեր երկրի համար: Բելոռուսիայի և ՌԽՖՍՀ-ի հետ կնքված երկու միջկառավարական պայմանագրերում կողմերը միմյանց ընկալում էին որպես լիովին ինքնուրույն, առանձին տնտեսական սուբյեկտներ: Փաստորեն ստորագրված փաստաթուղթը ՀԽՍՀ-ի հետ հորիզոնական կապեր հաստատելու ՌԽՖՍՀ-ի ամենաառաջին համաձայնագրերից էր: 1990 թ. սեպտեմբերին ՀՀ-ն նույնատիպ համաձայնագրեր կնքեց Տաջիկական ԽՍՀ-ի, իսկ հոկտեմբերին՝ Լատվիական ԽՍՀ-ի հետ[492]:

1991 թ. հուլիսին Մոսկվայում կայացած Բ. Ելցինի և Լ. Տեր-Պետրոսյանի հերթական հանդիպման ժամանակ կողմերը հայ-

[490] Տե՛ս նույն տեղում, 8.09.1990:
[491] Նույն տեղում:
[492] «Հայաստանի Հանրապետություն», 20.10.1990:

տարարեցին, որ հանրապետությունների ինքնիշխանության հաստատումը նոր հնարավորություն է տալիս երկկողմ, փոխշահավետ համագործակցության համար: 1990-1991 թթ. Հայաստանի Հանրապետությունը ակտիվացրել էր մյուս հանրապետությունների հետ ներկայացուցչական մակարդակով փոխհարաբերությունների հաստատումը: Այսպես, 1990 թ. աշնանը հայկական երկու ներկայացուցչական պատվիրակություններ ՀՀ կառավարության բարձրաստիճան ներկայացուցիչների և ԳԽ պատգամավորների հետ պաշտոնական այցով եղան մերձբալթյան հանրապետություններում, Բելոռուսիայում, Մոլդովիայում, ինչպես նաև միջինասիական հանրապետություններում[493]: Փաստորեն, անկախության հռչակագրի ընդունումից հետո գնալով ավելի էր խորանում Հայաստանի Հանարապետության ինքնուրույն գործելաոճը: ՀՀ իշխանությունները սերտորեն համագործակցում էին փլուզվող միության ժողովրդավարական ուժերի հետ ընդդեմ կենտրոնի ծավալած բռնաճնշումների: Հայաստանի Գերագույն խորհուրդը առաջիններից մեկը եղավ, որ 1990 թ. հոկտեմբերի 2-ին հանրապետության բնակչության անունից Գերմանիայի վերամիավորման կապակցությամբ շնորհավորական հեռագիր հղեց Գերմանիայի Դաշնային Հանրապետության իշխանություններին, իսկ նույն թվականի նոյեմբերին՝ Վրաստանի բարձրագույն օրենսդիր մարմնին՝ ընտրությունների արդյունքում ժողովրդավարական պառլամենտի ձևավորման կապակցությամբ[494]: Մինչև Հայաստանի անկախության հանրաքվեն և Հայաստանի ինքնիշխանության պաշտոնական հռչակումը հաճախացել էին օտարերկրյա պատվիրակությունների այցերը հանրապետություն, որը նրա իրավունքների ճանաչման յուրօրինակ վկայություն էր: 1990 թ. նոյեմբեր-դեկտեմբերին իրենց պետությունների հանճնարարականներով Հայաստան էին ժամանել և ՀՀ ԳԽ նախագահի հետ պաշտոնական հանդիպումներ էին ունեցել Մոնղոլիայի, Լեհաստանի, Բելգիայի, Գերմանիայի, Դանիայի, Ավստրիայի, Իտալիայի, ԱՄՆ-ի, Ռու-

[493] Նույն տեղում, 16.10.1990:
[494] ՀՀ Գերագույն խորհրդի տեղեկագիր, N 21(977), 15, 11, 1990:

սաստանի դեսպանատների բարձրաստիճան ներկայացուցիչները, ԽՍՀՄ-ում գտնվող Կիպրոսի, Անգլիայի, Թուրքիայի, Նոր Զելանդիայի արտակարգ և լիազոր դեսպանները: 70 տարվա ընդմիջումից հետո նման մակարդակներով իրականացված ՀՀ արտաքին քաղաքական առնչությունները նոր որակ էին հայ ժողովրդի ինքնորոշման ճանապարհին, անկախ պետականության կայացմանն ուղղված առաջին հաստատուն քայլերը: Այսպիսով, անկախության հռչակագրի ընդունումից հետո մինչև անկախության հանրաքվեն ընկած ժամանակահատվածում արտաքին աշխարհի հետ ունեցած առնչություններում ինքնիշխանության հաստատման ուղղությամբ ձեռնարկված քայլերը բարենպաստ արտաքին քաղաքական մթնոլորտ ապահովեցին Հայաստանում անկախության հանրաքվեի հաջող իրականացման, համաշխարհային հանրության կողմից Հայաստանի Հանրապետության միջազգային ճանաչման համար: Անկախության հանրաքվեից անմիջապես հետո աշխարհի երկրների խորհրդարաններին ու կառավարություններին ուղղված դիմումում ՀՀ Գերագույն խորհուրդը կոչ էր անում ճանաչել ՀՀ-ի անկախությունը և նրա հետ հաստատել ու ամրապնդել դիվանագիտական կապեր: ՀՀ անկախության հանրաքվեից ուղիղ երկու ամիս անց (նոյեմբերի 21-ին) ՀՀ անկախությունը ճանաչեց և նրա հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատեց նորանկախ Լիտվայի Հանրապետությունը[495]: Հաջորդը՝ դեկտեմբերի 12-ին Ուկրաինան ճանաչեց ՀՀ-ի անկախությունը և նույն ամսի 21-ից դիվանագիտական հարաբերություններ հաստատեց հանրապետության հետ[496]: 1991 թ. դեկտեմբերի 16-ին ՀՀ-ի անկախությունը ճանաչեց Թուրքիան, դեկտեմբերի 17-ին՝ Ռուսաստանի Ֆեդերացիան, որի անկախությունը Հայաստանը ճանաչեց հաջորդ օրը՝ նրա հետ հաստատելով դիվանագիտական կապեր 1992 թ. ապրիլից[497]: 1991 թ. դեկտեմբերի 25-ին ՀՀ-ի անկախությունը ճանաչեց և նրա հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատեց Ռումինիան: Նույն օրը ԱՄՆ նախագահ

[495] ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 68, թ. 6:
[496] Տե՛ս նույն տեղում, գ. 190, թ. 1-6:
[497] Նույն տեղում, գ. 68, թ. 8:

Ջորջ Բուշը հայտարարեց, որ իր երկիրը պաշտոնապես ճանաչում է Հայաստանի Հանրապետությունը որպես ինքնիշխան պետություն[498]: Ի սկզբանե Թուրքիան իր հարաբերությունները Հայաստանի հետ սկսեց կառուցել նախապայմանների լեզվով՝ չունենալով ոչ մի հիմք, քանզի հայկական կողմը մինչ այդ որևէ տարածքային հարց չէր բարձրացրել Թուրքիայի առջև: Թուրքիայի նախագահ Ա. Դեմիրելը՝ ՀՀ-ի իր պաշտոնակցին հասցեագրած ուղերձում ասում էր. «Մեր կառավարությունը, ճանաչելով Հայաստանի Հանրապետությունը, համոզված է, որ Հայաստանը Թուրքիայի Հանրապետության և մյուս հարևանների հետ իր հարաբերությունների մեջ հավատարիմ կմնա միջազգային իրավունքի հիմնական և հատկապես տարածքային ամբողջականության ու սահմանների անձեռնմխելիության սկզբունքներին...»[499]: Փաստաթղթում շեշտադրելով տարածքային անձեռնմխելիության հանգամանքը՝ թուրքական կողմը հանդես էր գալիս ոչ միայն իր, այլև ցեղակից Ադրբեջանի տարածքային պահանջների բավարարման օգտին՝ այն դարձնելով թուրք-հայկական հարաբերությունների գլխավոր նախապայմաններից մեկը: Հայաստանի անկախացման տարվա առաջին երեք ամսվա ընթացքում ՀՀ-ն ճանաչեցին աշխարհի 48 պետություններ, որոնց թվում հիշատակված երկրների հետ միասին նաև Չինաստանը, Իրանը, Հնդկաստանը, Գերմանիան, Մեծ Բրիտանիան, Ճապոնիան, Եգիպտոսը, Մարոկկոն, Մեքսիկան, Իսրայելը, Բրազիլիան, Դանիան, Նիդերլանդները և այլն[500]: Անկախացած Հայաստանի Հանրապետության ճանաչման գործընթացը մեծ չափով շարունակվեց նաև 1992 թվականին: Նույն տարում աշխարհի տարբեր կողմերից Հայաստանը ճանաչեցին Իտալիան, Հունաստանը, Եթովպիան, Լաոսը, Արգենտինան, Ուրուգվայը, Իսպանիան, Տաջիկստանը, Լիբանանը, Լատվիան, Ավստրիան, Էկվադորը, Պորտուգալիան և այլն[501]: 1992 թ.

[498] Նույն տեղում, գ. 204, թ. 4-5:
[499] Նույն տեղում, գ. 192, թ. 2:
[500] Նույն տեղում, գ. 196, թ. 1-12, գ. 220, թ. 1-10, գ. 221, թ. 1-8, գ. 231, թ. 1-6, գ. 235, թ. 1-4:
[501] Նույն տեղում, գ. 241, թ. 1-3, գ. 243, թ. 1-10, գ. 245, թ. 1-18, գ. 247, թ. 1-13, գ. 249, թ. 1-4:

գարնանը Հայաստանի անկախությունը ճանաչել էին աշխարհի 101 երկրներ, որոնցից 42-ի հետ հաստատվել էին դիվանագիտական հարաբերություններ[502]: Հայաստանի ինտեգրումն այնքան արագ էր ընթանում, որ նույն թվականի օգոստոսին ՀՀ-ի հետ դիվանագիտական կապեր հաստատած երկրների թիվը հասել էր 58-ի[503]: Յոթանասուն տարվա ընդմիջումից հետո սկիզբ դրվեց Հայաստանի արտաքին ինքնուրույն քաղաքականության ու դիվանագիտական գործունեությանը: Կարճ ժամանակամիջոցում ՀՀ-ն դարձավ միջազգային իրավունքի ինքնուրույն սուբյեկտ և իր տեղը զբաղեցրեց ժողովուրդների իրավահավասար ընտանիքում:

Նորանկախ Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականություն իրականացնող գերատեսչությունը արտաքին գործերի նախարարությունն էր, որի գործունեության մեջ սկսվեց նոր փուլ: 1991 թ. մայիսին կառավարության ընդունած որոշումով ՀՀ ԱԳ նախարարությունն ընդլայնեց իր կազմը՝ այն հասցնելով 120 աշխատակցի[504]: ՀՀ արտգործնախարարությունը աշխատանքներ ծավալեց անկախության ուղին որդեգրած ՀՀ-ի և նախկին խորհրդային հանրապետությունների և արտասահմանյան երկրների հետ գործնական կապեր հաստատելու ուղղությամբ: ԱԳՆ-ն բանակցություններ վարեց մեծ տերությունների և այլ երկրների հետ դիվանագիտական, հյուպատոսական կապեր հաստատելու, միջազգային կազմակերպություններին ինտեգրվելու նպատակով: ՀՀ Արտգործնախարարության աշխատակիցը 1990 թ. սեպտեմբերին մասնակցեց ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 45-րդ նստաշրջանի աշխատանքներին, իսկ ղեկավարությունը՝ Եվրոպայի անվտանգության և համագործակցության փարիզյան բարձր մակարդակի համաժողովին[505]: Հանրապետությունը դիվանագիտական մասնագետ կադրերով ապահովելու նպատակով արտգործնախարարությունը հանդես եկավ Երևանի պետհամալսարանում միջազգային հարաբերությունների ֆակուլտետ բացե-

[502] Նույն տեղում, գ. 68, թ. 6:
[503] «Հայաստանի Հանրապետություն», 5.08.1992:
[504] ՀԱԱ, ֆ. 326, ց. 9. գ. 10, թ. 7:
[505] Տե՛ս նույն տեղում, թ. 2:

լու նախաձեռնությամբ[506]: 1992 թ. մայիսին ՀՀ ԳԽ-ն ընդունեց «ՀՀ դիվանագիտական աստիճանների մասին» օրենքը, որով միջազգային պրակտիկայից ելնելով՝ ՀՀ-ում սահմանվեցին դիվանագիտական 7 աստիճաններ՝ կցորդից մինչև արտակարգ ու լիազոր դեսպան, սահմանվեցին աստիճաններ շնորհող լիազոր մարմիններ և այդ ուղղությամբ նրանց գործունեության կարգը և այլն[507]: 1992 թ. ամռանը Հայաստանի նորանկախ հանրապետության արտակարգ և լիազոր դեսպանի կոչում առաջինը ստացողների թվում էին ՀՀ ԱԳ նախարարի տեղակալներ Ա. Կիրակոսյանը, Ա. Նավասարդյանը, Գ. Ղազինյանը, ՄԱԿ-ում ՀՀ-ի մշտական ներկայացուցիչ, ԱՄՆ-ում ՀՀ գործերի ժամանակավոր հավատարմատար Ա. Արզումանյանը, Անգլիայում ՀՀ գործերի ժամանակավոր հավատարմատար Ա. Սարգսյանը և այլոք[508]: Նույն թվականին ընդունվեցին «Արտասահմանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչների կարգավիճակի մասին», «ՀՀ միջազգային պայմանագրերի կնքման, վավերացման և չեղյալ հայտարարման մասին» օրենքները[509]: 1992 թ. վերջնականապես ձևավորվեց ԱԳ նախախարության կառուցվածքը, որը բաղկացած էր տարածքային, գործառութային և օպերատիվ, հյուպատոսական և դիվանագիտական բաժիններից: ՀՀ արտաքին հարաբերությունների գերատեսչությունն իրեն կայացած կառույց 1999 թ. բաղկացած էր նախարարի աշխատակազմից, քարտուղարությունից և արտաքին կապերի որոշակի ուղղություններ կարգավորող վարչություններից ու բաժիններից: 1992 թ. վերջերին ՀՀ-ում իրենց հավատարմագրերն էին ներկայացրել 13 երկրների դեսպաններ, իսկ Հայաստանում լիարժեք գործում էին 6 դեսպանություններ[510]: 1992 թ. նոյեմբերի 6-ին Երևանում ՀՀ նախագահին իր հավատարմագրերն էր հանձնել ՌԴ առաջին արտակարգ ու լիազոր դեսպան Վ. Ստուպիշինը[511]: Նույն թվականի մարտին ՀՀ-ում արտակարգ և լիազոր դես-

---

[506] Նույն տեղում, թ. 3:
[507] ՀՀ ԳԽ տեղեկագիր, N 9 (1013), 15.10.1992, էջ 5-6:
[508] «Հայաստանի Հանրապետություն», 30.07.1992:
[509] Տե՛ս նույն տեղում, էջ. 3-9:
[510] «Հայաստանի Հանրապետություն», 25.11.1992:
[511] Տե՛ս նույն տեղում, 7.11.1992:

պանի մակարդակով ներկայացված էր Ֆրանսիան (դեսպան՝ տիկին Ֆ. դ'Արտինգ)[512]: Հայաստանում գործում էին նաև Իրանի, Չինաստանի, Գերմանիայի դեսպանությունները՝ ժամանակավոր հավատարմատարների մակարդակով, իսկ փետրվարից՝ ԱՄՆ-ի ներկայացուցչությունը՝ գործերի կառավարիչ Ս. Մանի գլխավորությամբ[513]: Հայաստանում իրենց մշտական ներկայացուցչությունների համար մայրաքաղաքի տարբեր մասերում առանձին տարածքներ ձեռք բերեցին ՉԺՀ-ն, ՌԴ-ն, Ֆրանսիան, Հունաստանը, իսկ նույն տարվա օգոստոսին Երևանում Բաղրամյան փողոցի վրա մեծ հանդիսավորությամբ բացվեց Հայաստանում ԱՄՆ-ի դեսպանատունը և այլն[514]: Իր հերթին Հայաստանի Հանրապետությունը 1992 թ. դեսպանատներ հիմնեց ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի միացյալ թագավորությունում, Իրանի Իսլամական Հանրապետությունում և այլուր: Մոսկվայում Հայաստանի մշտական ներկայացուցչությունը ՀՀ նախագահի հրամանագրով վերափոխվեց ՌԴ-ում Հայաստանի դեսպանության, որտեղ դեսպան նշանակվեց Յու. Մկրտումյանը: Հայաստանի անկախության միջազգային ճանաչման գործընթացը շարունակվում էր նաև հետագա տարիներին: 1997 թ. Հայաստանի Հանրապետությունը ճանաչել էին աշխարհի 128 երկրներ, որոնցից դիվանագիտական հարաբերություններ հաստատվել էին 114-ի հետ: Նրանցից 73-ը ՀՀ-ում ունեին արտակարգ ու լիազոր դեսպաններ կամ գործերի ժամանակավոր հավատարմատարներ: Երկկողմ դիվանագիտական ներկայացուցչությունների մակարդակով Հայաստանը կապված էր 31 երկրի հետ: Միակողմ ներկայացված 42 երկրներից 32-ը ներկայացված էին ՀՀ-ում: 10 երկրներում Հայաստանի Հանրապետությունը միակողմանիորեն ուներ ներկայացուցչություններ: 41 երկրների հետ դիվանագիտական հարաբերությունները գտնվում էին կնքված փաստաթղթային մակարդակում[515]: 1997 թ., երբ ՀՀ-ն արդեն կայացած պետություն էր, հան-

[512] Նույն տեղում, 27.03.1992:
[513] Նույն տեղում, 7.07.1992:
[514] Նույն տեղում, 5.08.1992:
[515] «Հայաստանի Հանրապետություն», 2.07.1997:

րապետությունում հավատարմագրված էին 61 երկրների դեսպաններ և ժամանակավոր հավատարմատարներ, որոնցից 12-ի՝ ՌԴ-ի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Անգլիայի, Չինաստանի, Ուկրաինայի, Իրանի, Հունաստանի, Լիբանանի, Սիրիայի ու Վրաստանի ներկայացուցիչների նստավայրերը գտնվում էին Երևանում: Այստեղ էին գործում նաև Կանադայի և Ուրուգվայի պատվո հյուպատոսությունները: Մյուս երկրների դեսպանությունները գտնվում էին Հայաստանի սահմաններից դուրս, որոնց դեսպանները համատեղության կարգով ներկայացնում էին իրենց երկրները նաև Հայաստանում: Մոսկվայում կային իրենց երկրները ՌԴ-ում ներկայացնող, նաև Հայաստանում հավատարմագրված 38, իսկ Կիևում՝ 6 դեսպաններ: ՀՀ-ն 1997 թ. արտասահմանյան երկրներում ուներ 30 դիվանագիտական ներկայացուցչություններ, որոնք տեղակայված էին 27 երկրներում և ծառայում էին 41 պետություններում: 2000 թ. սկզբին ՀՀ-ի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատած երկրների թիվը հասավ 148-ի[516]:

ՀՀ առաջին արտգործնախարարը ԱՄՆ-ի 32-ամյա քաղաքացի Րաֆֆի Հովհաննիսյանն էր՝ հայտնի պատմաբան, պրոֆեսոր Ռիչարդ Հովհաննիսյանի որդին, 1915 թ. Մեծ եղեռնից մազապուրծ եղած արևմտահայերի թոռը, որը թողնելով Լոս Անջելեսում իր բնակարանը, իրավաբանի բարձր աշխատավարձը՝ ստանձնեց նորանկախ Հայաստանի արտաքին գործերի նախարարի պաշտոնը[517]: Լինելով ջերմ հայրենասեր՝ նա իր ներդրումը կատարեց անկախ պետականության կայացման գործում:

2001 թ. նոյեմբերին ՀՀ անկախության հռչակման տասներորդ տարեդարձի կապակցությամբ արտգործնախարարության մի խումբ աշխատակիցներ նախագահի հրամանագրով պարգևատրվեցին ՀՀ բարձրագույն պարգևներով դիվանագիտության ասպարեզում ունեցած նշանակալի ծառայությունների համար:

---

[516] Հայաստան,1998-2007, խմբ. Վարդանյան Ա., Երևան, 2008, էջ 78:
[517] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 21.11.1991:

բ. Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև հարաբերությունների ձևավորման և զարգացման նոր փուլը
Հարաբերությունները ԱՊՀ մյուս երկրների հետ

ՀՀ արտաքին քաղաքականության հիմնական առաջնություններից մեկը Անկախ պետությունների համագործակցությունն է (ԱՊՀ): Հայաստանի Հանրապետության համար ԱՊՀ-ն նախ և առաջ ունի ռազմաքաղաքական և անվտանգության ապահովման նշանակություն: Հայաստանն ԱՊՀ երկրների անդամ է և այդ շրջանակներում քաղաքական-տնտեսական բոլոր գործընթացների իրավահավասար մասնակիցը: Սերտ և երկկողմանի կապեր են հաստատված ԱՊՀ-ի մի շարք երկրների հետ: ԱՊՀ կազմավորման պահից առ այսօր նրա շրջանակներում ընդունվել են ամենատարբեր բնագավառների բազմաթիվ համաձայնագրեր, ստեղծվել և գործում են մասնակից երկրների բազմակողմ համագործակցությունը համակարգող մի շարք կանոնադրական և այլ մարմիններ: Գործող խորհուրդներին 1996 թ. միացավ նաև ԱՊՀ ներքին գործերի նախարարների խորհուրդը, որի ստեղծման գաղափարով հանդես եկավ Հայաստանը:

ԱՊՀ շրջանակներում ընդունված շուրջ 700-ից ավելի փաստաթղթերին Հայաստանն ունեցել է ակտիվ անդամակցություն: ԱՊՀ-ն Հայաստանի համար շարունակում է մնալ ռեալ և արդյունավետորեն գործող համագործակցության ուղիների որոնման և մեխանիզմների ստեղծման կազմակերպություն: Սակայն պետք է նշել, որ միաժամանակ ԱՊՀ-ն գործում էր անբավարար արդյունավետությամբ, որի հիմնական պատճառն այն էր, որ ԱՊՀ-ի մասնակից բոլոր երկրներում իրենց անկախությունից հետո մտցվեցին ազգային դրամներ, ունեցան մաքսային սահմաններ և այլն:

Միաժամանակ օրենսդրական բնագավառում ներքին և արտաքին տնտեսական քաղաքականության կարգավորման ձևերում գոյացան էական տարբերություններ: Ակներև դարձավ, որ նորանկախ երկրներն ունեն և ղեկավարվում են տարբեր քաղաքական ու տնտեսական շահերով՝ ձգտելով ավելի շուտ կապեր զարգացնել իրենց մերձավոր գործընկերների, հիմնականում տվյալ տարա-

ծաշրջանում հարևան երկրների, քան ԱՊՀ շրջանակներում գտնվող մյուս երկրների հետ: 2000 թ. հունվարին գումարված ԱՊՀ հերթական գագաթնաժողովը քննարկեց ու ընդունեց ԱՊՀ համագործակցության ծրագիր, որտեղ մատնանշվեց տնտեսական ու քաղաքական համագործակցության միանգամայն նոր և արդյունավետ ձևերի ու միջոցների կիրառման անհրաժեշտությունը:

Չնայած նորագույն ժամանակներում հայ ժողովրդի ազգայինազատագրական շարժման դեմ կրեմլյան-գորբոչովյան ղեկավարության վարած կողմնակալ քաղաքականությանը՝ հայ ժողովուրդը, սակայն, բնավ չփոխեց իր վերաբերմունքը դեպի Ռուսաստանը, եղբայրական ռուս ժողովուրդը, նրա մեծ մշակույթը: Պատմության մի կարճ ժամանակահատվածում ստեղծված դժվարությունները ի վիճակի չեղան սասանելու հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամությունը:

ԽՍՀՄ փլուզումից հետո Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունը չշեղվեց ԱՊՀ անդամ Ռուսաստանի հետ փոխհարաբերություններում պատմականորեն ձևավորված մոտեցումներից: Երկու երկրների միջև թե՛ երկկողմ, թե՛ բազմակողմ հարաբերություններում գրեթե չեղան խնդիրներ, որոնց շուրջը փոխհամաձայնություն չկայացվեր: Ռուսաստանի հետ Հայաստանի Հանրապետությունը վարում էր համագործակցության հարաբերություններ ռազմապաշտպանական, տնտեսական և այլ բնագավառներում:

1991 թ. դեկտեմբերի 3-ին Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության միջև համաձայնագիր ստորագրվեց առևտրատնտեսական համագործակցության սկզբունքների մասին, իսկ 1991 թ. դեկտեմբերի 29-ին կնքվեց «Բարեկամության, համագործակցության և փոխադարձ անվտանգության պայմանագիր», որը, սակայն, մերժվեց Պետական դումայի կողմից: Մերժման շարժառիթներից գլխավորը համարվեց ԼՂՀ հակամարտության սաստկացումը[518]:

1992-1994 թթ. Ռուսաստանը որոշակիորեն վերանայեց վերջին

[518] Տե՛ս Սինասյան Է., Վարդանյան Ա., Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության հարաբերությունները (1991-2001 թթ.), «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, Ա, Երևան, 2011, էջ 5:

տարիներին անուշադրության մատնված իր ռազմավարական շահերը, դիմելով մի շարք քայլերի, որոնք համաշխարհային հանրության կողմից որակվեցին որպես գերտերության կորցրած կարգավիճակի վերականգնման փորձ: Արտաքին քաղաքականության այս շրջադարձով էր պայմանավորված Հայաստանի հետ ավելի սերտ ռազմական համագործակցությանն ուղղված միջկառավարական մի շարք համաձայնագրերի կնքումը:

1992-1993 թթ. ՀՀ տարածքում ռուսական սահմանապահ զորքերի կարգավիճակի շուրջ վարվող բանակցություններով, ինչպես նաև ԼՂՀ-Ադրբեջան հակամարտության գոտում Ռուսաստանի ակտիվ միջնորդությամբ էր պայմանավորված 1994 թ. մայիսի 12-ին Բիշքեկում հաստատված հրադադարը:

1992 թ. հունիսին բացվեց Ռուսաստանի դիվանագիտական ներկայացուցչությունը Հայաստանում, իսկ Մոսկվայում ՀՀ ներկայացուցչությունը վերածվեց դեսպանատան[519]:

Շուտով Ռուսաստանի Դաշնության վարչապետ Եգոր Գայդարը 1992 թ. սեպտեմբերին ժամանեց Հայաստան, տեսակցեց և բանակցեց հանրապետության ղեկավարության հետ, որի հետևանքով ստորագրվեցին 1993 թ. համար առևտրատնտեսական, համագործակցության, ռուսական զորամասերի կարգավիճակի մասին և այլ համաձայնագրեր[520]:

Ռուսաստանը շեշտում է իր արտաքին քաղաքականության կովկասյան ուղղվածությունը՝ միաժամանակ ապահովելով իրեն իրավահավասար գործընկերոջ կարգավիճակ: Ահա թե ինչու Ռուսաստանը Հայաստանի հետ սերտ համագործակցություն հաստատեց ռազմական բնագավառում, որը բխում էր երկու երկրների շահերից:

1995 թ. մարտի 16-ին Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև կնքվեց «Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմակայանի մասին» պայմանագիրը, որը ստորագրեցին Լևոն Տեր-Պետրոսյանը և Բո-

---

[519] Տե՛ս Ստուպիշին Վ., Իմ առաքելությունը Հայաստանում 1992-1994 թթ., Հուշեր, Երևան, 2005, էջ 29:

[520] Տե՛ս ՀՀ միջազգային պայմանագրերի ժողովածու, 1991-1995 թթ., Երևան, 2002, էջ 91-99:

րիս Ելցինը: Այն շուրջ երկու տարվա ընդմիջումից հետո 1997 թ. ապրիլի 18-ին վավերացվեց ՌԴ Պետդումայի կողմից, իսկ ապրիլի 29-ին՝ ՀՀ Ազգային ժողովի կողմից[521]: Այս պայմանագիրը առաջին վավերացված փաստաթուղթն էր, որով իրավական հիմքի վրա էր դրվում ռուսական ռազմական ներկայությունը այլ պետությունում՝ տվյալ դեպքում Հայաստանի Հանրապետությունում: Ըստ պայմանագրի ՀՀ տարածքում գտնվող ՌԴ զինված ուժերի կազմավորումները վերածվում են ՀՀ տարածքում գտնվող ռուսաստանյան ռազմակայանի: Շեշտված է նաև, որ «Ռուսաստանյան ռազմակայանը ՌԴ-ի շահերը պաշտպանելու պարտականությունից բացի, Հայաստանի զինված ուժերի հետ համատեղ ապահովում է ՀՀ անվտանգությունը նախկին ԽՍՀՄ արտաքին սահմանում»[522]:

Ռուս-հայկական համագործակցության ամրապնդման գործում նշանակալի դեր ունի ռուսական սահմանապահ «Արմենիա» զորախումբը, որն ապահովում է Թուրքիայի և Իրանի հետ ՀՀ սահմանի պաշտպանությունը: Զորախմբի 50 տոկոսի համալրումն իրականացվում է Հայաստանի քաղաքացիներից: 2000 թ. մարտի 2-10-ը ստորագրվեց Հայաստանում ռուսական ռազմակայանների տարածքների անհատույց հանձնումը 25 տարի ժամկետով երկարացնելու համաձայնագիրը[523]:

Ընդհանուր առմամբ 1991-2000 թվականներին Ռուսաստանի և Հայաստանի միջև կնքվել են 100-ից ավելի միջպետական, միջկառավարական և միջգերատեսչական պայմանագրեր ու համաձայնագրեր, որոնք կարգավորում են համագործակցության ամենատարբեր բնագավառները: Այսպիսին են հայկական ԱԷԿ-ի ապակոնսերվացման ու արդյունավետ շահագործման, եկամուտների ու գույքի կրկնակի հարկումը վերացնելու, ինչպես նաև մշակույթի, գիտության ու կրթության բնագավառում համագործակցության մասին համաձայնագրերը[524]:

---

[521] Տե՛ս Սինասյան Է., Վարդանյան Ա., նշված աշխ., էջ 10:
[522] Հայոց պատմություն, դասագիրք բուհերի համար, նույն տեղում, էջ 798:
[523] Տես Սինասյան Է., Վարդանյան Ա., նշված աշխ., նույն տեղում:
[524] Նույն տեղում:

Հայ-ռուսական հարաբերություններում կարևոր տեղ են գրավում միջխորհրդարանական կապերը: 1995 թ. ապրիլին Ռուսաստանի Պետդուման ընդունեց հայ ժողովրդի ցեղասպանությունը դատապարտելու մասին հայտարարություն: 1997 թ. մարտին և ապրիլին տեղի ունեցավ Հայաստանի ԱԺ պատվիրակության այցը Մոսկվա: Այն ապացուցեց, որ ռուսական և հայկական խորհրդարանականների միջև գոյություն ունի փոխադարձ փոխըմբռնման բարձր մակարդակ: Հետագայում ևս Հայաստանի և Ռուսաստանի խորհրդարանական պատվիրակությունների փոխգործողություններն իրականացվեցին ոչ միայն երկկողմ, այլև տարածաշրջանային ու միջազգային մակարդակներում՝ ԱՊՀ միջխորհրդարանական վեհաժողովում, ԵԱՀԿ-ում, ՍԾՏՀ խորհրդարանական վեհաժողովում: 1998-1999 թթ. միջխորհրդարանական կապերն ավելի ընդլայնվեցին և խորացան: 1998 թ. Մոսկվայում տեղի ունեցավ միջխորհրդարանական միության 100-րդ հոբելյանական համաժողովը, որին մասնակցեց նաև ՀՀ Ազգային ժողովի պատվիրակությունը՝ ՀՀ ԱԺ նախագահի գլխավորությամբ: ՀՀ ԱԺ պատվիրակությունը հանդես եկավ մի շարք կարևոր նախաձեռնություններով, այդ թվում ցեղասպանության դատապարտման մասին, որն իր արտացոլումը գտավ միջխորհրդարանական միության ընդունած որոշումներում: 1999 թ. հոկտեմբերի 18-ից 21-ը ՀՀ Ազգային ժողովի նախագահ Կ. Դեմիրճյանի գլխավորած պատվիրակությունը ժամանեց Մոսկվա: Միջխորհրդարանական կապերի ամրապնդման գործում ընդգծվեց համագործակցության անհրաժեշտությունը և օրենսդրական դաշտի ստեղծումը[525]:

Ռուսաստանը մնում է Հայաստանի գլխավոր առևտրատնտեսական գործընկերներից մեկը, չնայած այդ կապերին շատ են խանգարում տրանսպորտային շրջափակումը, ուղղակի երկաթուղային հաղորդակցության բացակայությունը: Այս խոչընդոտների վերացումը թույլ կտար մի քանի անգամ մեծացնել արտաքին առևտրական շրջանառությունը, որի ծավալը միայն 1996 թվականին կազմել է մոտ 220 մլն դոլար: 1992-1999 թվականներին Ռու-

[525] Տե՛ս, «Հայաստանի Հանրապետություն», 22.10.1999:

սաստանը Հայաստանին էկոնոմիկայի զարգացման համար տրամադրել է ավելի քան 100 մլն դոլար վարկ[526]: Դրա հիմնական միջոցներն ուղղվել են ՀՀ-ի համար այնպիսի մի առանցքային բնագավառի, ինչպիսին է էներգետիկան: Շնորհիվ այդ ներդրումների վերականգնվեց և գործարկվեց Մեծամորի ատոմակայանի երկրորդ էներգաբլոկը, որն այժմ արտադրում է երկրի ողջ էլեկտրաէներգիայի 40 տոկոսը: Ընդհանրապես էներգետիկան հայ-ռուսական համագործակցության ամենահեռանկարային բնագավառներից մեկն է: Դրա վկայությունն է Հայաստանի կառավարության և ռուսական «Գազպրոմ» ԲԸ միջև 1997 թ. հունվարին կնքված համաձայնագիրը ՀՀ տարածքում գազամուղների շինարարության և շահագործման բնագավառում համագործակցության, Հայաստանի տարածքով բնական գազի արտահանման, էլեկտրաէներգիայի արտադրության և երրորդ երկիր արտահանելու մասին[527]: Աղետի գոտում մեծ աշխատանք է իրականացնում ռուսական «Հայուրալսիբշին» շինարարական ֆիրման, որին բաժին է ընկնում այդտեղ իրականացվող շինարարության կեսից ավելին:

1997 թ. հունիսին Երևան ժամանեց ՌԴ փոխվարչապետ Վալերի Սերովի գլխավորած ՌԴ պաշտոնական պատվիրակությունը: ՀՀ նախագահի հետ նույն օրը կայացած հանդիպման ընթացքում քննարկվեցին երկու երկրների միջև էներգետիկայի, տրանսպորտի և բանկային բնագավառում համագործակցության հարցեր: Հուլիսի 1-ին ՀՀ վարչապետն ու ՌԴ փոխվարչապետը ստորագրեցին միջկառավարական փաստաթղթեր տնտեսական փոխօգնության վերաբերյալ:

Ընդհանրապես տնտեսական երկկողմանի հարաբերությունների (մասնավորապես էներգետիկայի) զարգացման գործում մեծ նշանակություն ունեցավ ՌԴ ատոմային էներգիայի նախարար Ե. Ադամովի 1999 թ. այցը Երևան, ինչպես նաև վարչապետ Արամ Սարգսյանի ղեկավարությամբ ՀՀ պատվիրակության այցը Մոսկվա 1999 թ. դեկտեմբերի 7-ին: Այստեղ Ա. Սարգսյանը Ե. Ադամովի հետ քննարկեց Հայաստանի՝ այդ երկրին, ՀԱԷԿ-ին ունեցած

[526] Տե՛ս Սինասյան Է., Վարդանյան Ա., նշված աշխ., էջ 11:
[527] Տե՛ս նույն տեղում:

պարտքը մարելու ուղիները և որոշվեց Հայաստանի առաջարկը հարգել և թույլ տալ ապրանքի դիմաց ապրանքով վճարել: Քննարկվեցին նաև առևտրատնտեսական հարաբերությունների զարգացման հեռանկարները ՌԴ ղեկավարության հետ էներգետիկայի, մեքենաշինության բնագավառներում: Նախապես մշակվում էին համատեղ ծրագրերի իրականացման խնդիրներ: Հայ-ռուսական տնտեսական հարաբերությունների զարգացման նոր խթան էր Մոսկվայի քաղաքապետ Յու. Լուժկովի պատվիրակության ժամանումը Երևան 1999 թ. փետրվարին և Հայաստանի հետ համատեղ համաձայնագրերի ստորագրումը, մասնավորապես ավտոմոբիլային համատեղ արտադրություն ստեղծելու, քիմիական արտադրանքի մատակարարման, սննդամթերքների գնման, կրթության, մշակույթի և առողջապահության համագործակցության վերաբերյալ:

Տարեցտարի ընդլայնվում են ռուս-հայկական մշակութային և գիտական կապերը: Տպավորիչ է 1994-2000 թթ. տեղի ունեցած միջոցառումների ցանկը. ռուսական դասական երաժշտության շաբաթ Երևանում, Հայաստանի մշակույթի օրեր Ռուսաստանում և Ռուսաստանի մշակույթի օրեր Հայաստանում, «Ռուսական կինոյի ցուցասրահ» փառատոն Երևանում և այլն: Ստորագրված են և իրականացվում են ՌԴ և ՀՀ ԳԱ-ների, երկու երկրների մի շարք բուհերի միջև համաձայնագրեր:

Դինամիկ զարգանում են նաև հայ-ռուսական փոխգործողությունները քաղաքական ասպարեզում: 1997 թ. փետրվարի 4-7-ը Հայաստանի հետ բանակցություններ վարող Ռուսաստանի պետական պատվիրակությունը՝ ՌԴ արտգործնախարարության հատուկ հանձնարարությունների դեսպան Վսեվոլոդ Օլեանդրովի գլխավորությամբ, վարչապետ Արմեն Սարգսյանի Մոսկվա այցելությունից հետո Երևանում քննարկեց հայ-ռուսական միջպետական հարաբերությունների պայմանագրի իրավական հիմքը՝ Հայաստանի և Ռուսաստանի միջև կնքվելիք բարեկամության, համագործակցության և փոխօգնության պայմանագրի նախագիծը:

Երկուստեք համաձայնություն ձեռք բերվեց հայ-ռուսական համագործակցության նոր պայմանագիր կնքելու վերաբերյալ:

1997 թ. մարտի 29-ին Մոսկվայում կայացավ Լ. Տեր-Պետրոս-

յանի և Բ. Ելցինի ջերմ ու արդյունավետ հանդիպումը, որտեղ պայմանավորվածություն ձեռք բերվեց վերը նշված ՀՀ-ի և ՌԴ-ի միջև մոտ ապագայում ստորագրվելիք «Բարեկամության, համագործակցության և փոխօգնության» պայմանագրի վերաբերյալ:

1997 թ. օգոստոսի 28-ին եռօրյա այցով Մոսկվա մեկնեց ՀՀ նախագահի գլխավորած պատվիրակությունը: Հայ-ռուսական բանակցությունների արդյունքում օգոստոսի 29-ին Կրեմլի մեծ պալատի Վլադիմիրյան դահլիճում երկու երկրների նախագահները ստորագրեցին «Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին» մեծ պայմանագիր, ինչպես նաև «Հայ-ռուսական համատեղ հռչակագիրը»[528]:

Այս պայմանագրով երկու երկրների հարաբերությունները որակական նոր փուլ թևակոխեցին: Պայմանագիրն ունի կարևոր նշանակություն, քանի որ ՀՀ ԱԳՆ բնորոշման համաձայն, Հայաստանը մտահոգված լինելով սեփական անվտանգության խնդրով՝ հայ-ռուսական ռազմական համագործակցությունը դիտում է որպես տարածաշրջանում ձևավորված իրավիճակի խիստ կարևոր միջոցառում: Հայաստանն ու Ռուսաստանը հենվելով այդ մեծ պայմանագրի հիմնադրույթների վրա՝ շարունակում են ակտիվացնել ռազմական համագործակցությունը: Դրա լավագույն ապացույցն է 2000 թ. մարտի 17-ին Մոսկվայում Հայաստանի պաշտպանության նախարար Վաղարշակ Հարությունյանի այցը ՌԴ պաշտպանության նախարար Իգոր Սերգեևին և նրանց համատեղ որոշումով երեք համաձայնագրերի ստորագրումը, որոնք մասնավորապես վերաբերում են համագործակցության ընդլայնմանը օդային տարածության պաշտպանության ոլորտում:

Ռուսաստանից բացի Հայաստանը բարիդրացիական հարաբերություններ է հաստատել Ուկրաինայի հետ: 1992-1997 թթ. երկու պետությունների՝ Հայաստանի և Ուկրաինայի կառավարությունների ու զանազան գերատեսչությունների միջև ստորագրվել են ֆինանսատնտեսական բնույթի մի շարք պայմանագրեր, հա-

[528] Տե՛ս Սինասյան Է., Վարդանյան Ա., նշված աշխ., էջ 13:

տուկ ուշադրություն է դարձվել հայ-ուկրաինական առևտրատնտեսական կապերի ամրապնդմանը: Երկու երկրների համար շրջադարձային էր Ուկրաինայի նախագահ Լեոնիդ Կուչմայի 1996 թ. մայիսին Երևան կատարած այցը, որի ընթացքում ստորագրվեցին բարեկամության ու համագործակցության մասին պայմանագիր և մի շարք այլ փաստաթղթեր, որոնք վերաբերում էին երկու երկրների միջև քաղաքական, տնտեսական ու մշակութային ավանդական կապերի զարգացմանը[529]:

1996 թ. սեպտեմբերին Երևանում բացվեց Ուկրաինայի դեսպանատունը: 1997 թ. մայիսին երկօրյա պաշտոնական այցով Հայաստան ժամանեց Ուկրաինայի Գերագույն ռադայի նախագահ Ալեքսանդր Մորոզի գլխավորած պատվիրակությունը: Հանդիպման շնորհիվ ընդունվեց երկու խորհրդարանների նախագահների համատեղ հայտարարություն միջխորհրդարանական, առևտրատնտեսական և քաղաքական կապերի ամրապնդման ուղղությամբ:

Հուլիսի 22-ին երկօրյա պաշտոնական այցով Կիև մեկնեց ՀՀ նախագահի գլխավորած պատվիրակությունը: Բանակցությունների արդյունքում երկու երկրների նախագահները ստորագրեցին համատեղ հռչակագիր, իսկ պաշտոնական պատվիրակության անդամները՝ 8 միջկառավարական համաձայնագիր: Երկու երկրների վարչապետերի ջանքերով 1999 թ. հունիսին Կիևում վերսկսվեցին 1996 թվականին ստեղծված տնտեսական համագործակցության համատեղ խորհրդի աշխատանքները, և առաջին համագումարի արդյունքում ստորագրվեց տնտեսական համագործակցության ծրագրերի մի ողջ փաթեթ, որը վերաբերում էր հիմնականում առևտրատնտեսական կապերին[530]:

Զարգանում էին նաև քաղաքական հարաբերությունները Բելոռուսի և Մոլդովայի հետ: Հայաստանը նրանց հետ կնքել էր մի

---

[529] Տե՛ս Փափազյան Վ., ՀՀ արտաքին քաղաքականության հիմնական ուղղություններն ու գերակայությունները, տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», օրաթերթ, 18.09.1996, էջ 3:

[530] Հայաստանի Հանրապետության պատմության ամփոփ ժամանակագրություն, 1997, Երևան, 2002, էջ 103:

շարք համաձայնագրեր, ստորագրել բարեկամության և համագործակցության պայմանագրեր:

Կենտրոնական Ասիայում Հայաստանի կողմից տարվող արտաքին քաղաքականության առանցքում գտնվում էր Թուրքմենստանը, որը Հայաստանի արտաքին առևտրական գործընկերների շարքում Իրանից և Ռուսաստանից հետո երրորդն էր: Ավելին, Հայաստանի տնտեսության կենսապահովումը մեծ չափով կախված էր Թուրքմենական գազի առաքումներից: Ի պատասխան ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի 1993 թ. Աշքաբադ կատարած այցի, Թուրքմենստանի նախագահ Ս. Նիյազովը 1996 թ. մարտին այցելեց Երևան և ստորագրեց բարեկամության մեծ պայմանագիր: Թուրքմենստանի և Հայաստանի միջև կնքվեցին բազմաթիվ բնագավառների վերաբերող շուրջ 40 համաձայնագրեր:

1997 թ. հունիսին Աշքաբադ ժամանեց ՀՀ նախագահի գլխավորած պատվիրակությունը: Բանակցությունների արդյունքում ստորագրվեց «Երկկողմ հարաբերությունների խորացման մասին» հուշագիր, ինչպես նաև միջկառավարական չորս համաձայնագիր[531]:

Հայ-թուրքմենական հարաբերությունները զարգանում են նաև եռակողմ (Հայաստան-Թուրքմենստան-Իրան) համագործակցության շրջանակներում: 1997 թ. ապրիլին ՀՀ կառավարությունում տեղի ունեցավ Հայաստան-Իրան-Թուրքմենստան արտգործնախարարների 6-րդ հանդիպումը, բանակցությունների արդյունքում ստորագրվեց հուշագիր, որի շրջանակներում մեծ տեղ էր հատկացվում Հայաստանի արդյունաբերությանը:

2000 թ. փետրվարին ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանը Թուրքմենստանի դեսպանի կողմից հավատարմագրերի հանձնման ժամանակ մեկ անգամ ևս նշեց հայ-թուրքմենական ավանդական բարեկամական հարաբերությունների անցյալը և կարևորեց այդ հարաբերությունների նաև ներկա ջերմությունը և այն խորացնելու պատրաստակամությունը:

Ղազախստանի հետ Հայաստանի հարաբերությունները զար-

[531] Տես նույն տեղում, էջ 96:

գացել են բնականոն ընթացքով: 1993 թ. հունվարին, երբ Ալմա-Աթա այցելեց ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը, ստորագրվեց երկու երկրների միջև բարեկամության պայմանագիր, կնքվեցին մի շարք այլ համաձայնագրեր, որոնք գլխավորապես վերաբերում էին երկու երկրների միջև առևտրատնտեսական համագործակցության ոլորտին: Սակայն դրանք մնացին թղթի վրա, իսկ Ղազախստանի հետ առևտրական կապեր իրականացնում էին միայն Հայաստանի մասնավոր ձեռնարկությունները, որոնց ապրանքափոխանակությունն աննշան էր:

Աստիճանաբար ընդլայնվեցին կապերը Ղրղզստանի հետ: 1997 թ. մարտին Ղրղզստանի նախագահի գլխավորած խորհրդարանական պատվիրակության հայաստանյան այցի ընթացքում ստորագրվեց ավելի քան 15 համաձայնագիր[532], իսկ ապրիլին ՀՀ նախագահը և Ղրղզստանի նախագահ Ասկար Ակաևը Երևանում ստորագրեցին երկու երկրների համագործակցության մի շարք պայմանագրեր, մասնավորապես միջազգային ավտոմոբիլային հաղորդակցության, արդյունաբերական սեփականության պահպանության, ստանդարտացման, չափագրության և սերտիֆիկացման, զբոսաշրջության, կրթության և մշակույթի բնագավառներում:

Ուզբեկստանի և Տաջիկստանի հետ կապերը մասամբ պահպանվում են ԱՊՀ շրջանակներում բազմակողմանի պայմանագրերի հիման վրա:

գ. ՀՀ փոխհարաբերությունները հարևան երկրների հետ

Հանրապետության արտաքին քաղաքականության հիմնական ուղղություններից մեկը հարևան երկրների հետ կապերի պահպանումն ու ամրապնդումն է: Այդ երկրների հետ բնականոն հարաբերությունների հաստատումը Հայաստանի համար ունի կենսական նշանակություն: Առաջին հերթին դա վերաբերում է Վրաստանին, որը ծանր շրջափակման տարիներին միակ երկիրն էր, որի տարածքով շարունակվեց Հայաստանի կապը արտաքին աշխարհի

[532] Նույն տեղում, էջ 81, 82:

հետ: Սակայն վրաց-աբխազական հակամարտության հետևանքով փակվեցին և չէին գործում Աբխազիայի տարածքով անցնող երկաթուղին և ավտոճանապարհը, որի պատճառով Հայաստանի բեռների փոխադրումը կատարվում էր Վրաստանի սևծովյան նավահանգիստներով: Վրաստանը ոչ շատ հաճախ եղել է Անդրկովկասում Հայաստանի միակ հուսալի դաշնակիցը և հայ-վրացական հարաբերությունները կանխորոշել են տարածաշրջանում կայունության աստիճանը: Բացի դրանից այս հարևան պետությունում ապրում են մի քանի հարյուր հազար մեր հայրենակիցներ: Հայ-վրացական բարեկամությունը դարավոր պատմություն ունի:

Բանն այն է, որ Վրաստանը ոչ միայն մեր միակ հարևանն է, որի հետ Հայաստանը կապված է քաղաքական, տնտեսական, մշակութային և կրոնական հազարամյա ընդհանրություններով, այլև այն, որ Վրաստանը Հայաստանի ռազմավարական դաշնակից Ռուսաստանին և ընդհանրապես ողջ Եվրոպային կապող միակ ուղին է: Վրաստանի տարածքով շրջափակման տարիներին շարունակվեց Հայաստանի կապը արտաքին աշխարհի հետ: Վրաստանը Հայաստանի համար կարևորվում է նաև այդ երկրում բնակվող մեծաքանակ վիրահայության, այդ թվում Ջավախքի հայ համայնքի առկայության հանգամանքով: Հայ-վրացական տարբեր ոլորտներում փոխշահավետ համագործակցության զարգացումն ու խորացումը բխում են երկու երկրների շահերից:

Հայտնի է, որ տարածաշրջանի երկու երկրները՝ Ադրբեջանը և Վրաստանը, ԽՍՀՄ-ի օրոք իրենց վարչական տարածքներում առկա ինքնավար ազգային միավորումները՝ Լեռնային Ղարաբաղն ու Աբխազիան կորցնելու կարևոր մեղավորներից մեկը հռչակեցին Ռուսաստանին: Միաժամանակ, աշխարհաքաղաքական վերակառուցման գործընթացների հետևանքով տարածաշրջանի ներգրավումը և կարևորումը աշխարհատնտեսական և աշխարհառազմավարական նշանակության ծրագրերում՝ Վրաստանի և Ադրբեջանի իշխանություններին մղեցին կողմնորոշումային մի ընտրության, որը, ըստ նրանց, երաշխավորելու է այդ երկրների տարածքային ամբողջականությունը, ներքաղաքական կայունությունը և տնտեսական բարգավաճումը: Սա նշանակում է, որ եթե

Հայաստանը կողմնորոշված է դեպի Ռուսաստանը, ապա Վրաստանն ու Ադրբեջանը՝ դեպի Արևմուտք: Այս համատեքստում 1998-1999 թթ. ավելի ամրապնդվեց Վրաստանի և Ադրբեջանի ռազմավարական համագործակցությունը Ուկրաինայի և Մոլդովայի հետ: Արցախի հարցի առկայությունը բանակցային գործընթացում չի բխում Վրաստանի շահերից, որն ավելի շատ հակված է Ադրբեջանի առաջ քաշած տարածքային ամբողջականության սկզբունքին: Ուստի հասկանալի է, որ Վրաստանին չի գոհացնի արցախյան հարցի լուծման հայկական տարբերակը, բայց տվյալ իրադրության մեջ Վրաստանը որոշ չափով պահպանում է այդ հարցում չեզոքության քաղաքականություն՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության հետ իր ավանդական կապերի առկայությունը:

1990-ական թթ. սկզբներին Հայաստան-Վրաստան միջպետական հարաբերություններում նկատվեցին դրանց բարելավմանն ուղղված սկզբնական քայլերը: Այս առումով երկու երկրների միջպետական, դիվանագիտական հարաբերությունների հաստատմանն ու ամրապնդմանն ուղղված կարևոր քայլ էր 1991 թ. հուլիսի 27-ին ՀՀ Գերագույն խորհրդի նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի այցը Թբիլիսի: Անկախության ուղին բռնած երկու երկրների ղեկավարների այսպիսի մակարդակի հանդիպում կայանում էր առաջին անգամ: Շուտով հրապարակվեց նաև ՀՀ Գերագույն խորհրդի որոշումը Հայաստանի և Վրաստանի հանրապետությունների միջև միջպետական հարաբերությունների հիմնական սկզբունքների մասին պայմանագիրը վավերացնելու վերաբերյալ: Հաջորդ օրը՝ սեպտեմբերի 13-ին ՀՀ ԳԽ-ն միաձայն որոշում ընդունեց հարևան Վրաստանի (ինչպես նաև Մերձբալթյան երկրների) անկախության ճանաչման մասին[533]:

Երկու երկրների միջև առևտրատնտեսական և գիտատեխնիկական համագործակցության վերաբերյալ մի շարք պայմանագրեր կնքվեցին: Հայաստանի և Վրաստանի ղեկավարության միջև հանդիպումները հաճախակի դարձան 1990-ական թթ. կեսերից:

[533] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 13.09.1991:

1996 թ. Հայաստան այցելեցին Վրաստանի արտաքին գործերի նախարարն ու խորհրդարանի նախագահը: Նույն թվականի հուլիսի 4-5-ին կայացավ ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի այցը Վրաստան[534]: Այդ ընթացքում քննարկվեցին երկկողմ հետաքրքրություն ներկայացնող բազմաթիվ հարցեր, ստորագրվեցին մի շարք պայմանագրեր, որոնք լրացրեցին երկու երկրների միջև փոխհարաբերությունների իրավապայմանագրային հիմքի ձևավորումը, շեշտվեց, որ քաղաքական ոլորտում հայ-վրացական հարաբերություններում սկզբունքային խնդիրներ չկան: Կարևորվեց հայ-վրացական առևտրատնտեսական և գիտատեխնիկական ու մշակութային համագործակցությունը, ինչպես նաև գործարար կապերի հետագա ընդլայնումը:

Անդրադառնալով այս տարիների հայ-վրացական հարաբերություններին, հարկ է նշել, որ դրանք ունեցել են բարելավման միտումներ: Հայկական կողմի համար դրանք ինչ որ տեղ եղել են պարտադրված՝ կապված գազատարի հաղորդակցության ուղիների անվտանգության ապահովման հետ: Պատահական չէ, որ այդ տարիներին կողմերի միջև բարձր մակարդակի բոլոր հանդիպումների օրակարգում գրեթե առանց բացառության եղել է Վրաստանի տարածքով անցնող հայկական հաղորդակցության միջոցների, հատկապես գազատարի, անվտանգության ապահովման մասին հարցը:

1997 թ. փետրվարին ՀՀ ԱԺ նախագահի պատվիրակությունն այցելեց Թբիլիսի և երկու երկրների խորհրդարանների բանակցությունների արդյունքում ստորագրվեց կոմյունիկե երկկողմանի մշտական համագործակցության վերաբերյալ: Հունիսին միջխորհրդարանական համագործակցության շրջանակներում Երևան ժամանեց Վրաստանի խորհրդարանի պատվիրակությունը: Համաձայնություն ձեռք բերվեց միջխորհրդարանական հանձնաժողով ստեղծելու և համագործակցության հետագա ընդլայնման ուղղությամբ: Նույն տարվա նոյեմբերին պաշտոնական այցով Վրաստան մեկնեց վարչապետ Ռ. Քոչարյանի գլխավորած

[534] Տե՛ս Փափազյան Վ., նշված աշխ., էջ 4:

պատվիրակությունը[535], որը Վրաստանի նախագահի և պետնախարարի հետ բանակցությունների ընթացքում ստորագրեց «Երկու կողմերի միջև կրկնակի հարկումից խուսափելու, ինչպես նաև արխիվային ոլորտում համագործակցելու մասին» համաձայնագիրը[536]: Մեկ տարի անց՝ 1998 թ. նոյեմբերին, արդեն ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի Վրաստան այցելության և բանակցությունների ընթացքում ստորագրվեց երկու փաստաթուղթ. համատեղ դեկլարացիա և մեկ համաձայնագիր բարձրագույն որակավորման, գիտության և կրթության հարցերի վերաբերյալ: Կողմերն առաջին անգամ պայմանավորվեցին համատեղ նախագծեր ներկայացնել միջազգային կազմակերպություններին՝ ֆինանսական աջակցություն ստանալու համար: Ռ. Քոչարյանին շնորհվեց Թբիլիսի մայրաքաղաքի պատվավոր քաղաքացու կոչում:

1999 թ. սեպտեմբերին տեղի ունեցավ Վրաստանի Հանրապետության պատվիրակության այցը Հայաստան՝ նախագահի գլխավորությամբ: Երկու երկրների նախագահների միջև ստորագրվեց «Հայաստանի Հանրապետության և Վրաստանի միջև փոխհարաբերությունների նոր փուլում համագործակցության հիմնական սկզբունքների մասին» հռչակագիրը[537]: Դրանում արձանագրվում էր, որ մինչև 1993 թ. և հաջորդող տարիներին կնքված 72 պայմանագրերը երկու պետությունների հարաբերությունների համար լավ իրավական բազա հանդիսանալով, հնարավորություն են տալիս պայմանավորվածություն ձեռք բերել համագործակցության նոր փուլի, «նոր, ավելի բարձր որակի համար»: Հռչակագիրը բավականին որոշակի է արտահայտում կողմերի թե՛ շահերը, թե՛ ծրագրերն ու նպատակները: Այս փաստաթղթում, բացի երկկողմ շահերից, քննարկված են ԱՊՀ և բալթյան ու սևծովյան տարածաշրջանների երկրների հետ համագործակցության սերտացման գաղափարները: Բնականաբար, առաջնահերթ տեղ է հատկացված մեր տարածաշրջանում անվտանգության ապահովմանն ու բախումների լուծմանը: Վրաստանի նախագահին՝ Շևարդնաձեին

---

[535] Հայաստանի Հանրապետության պատմության ամփոփ ժամանակագրություն, 1997, Երևան, էջ 79:
[536] Տե՛ս նույն տեղում, էջ 117:
[537] Օսկանյան Վ., նշված. աշխ., էջ 123-124:

չնորհվեց Երևանի պատվավոր քաղաքացու կոչում և հանձնվեց Երևանի խորհրդանշական բանալին:

Համաձայն երկու երկրների միջև նախօրոք ձեռք բերված պայմանավորվածության, 2000 թ. մարտի 29-30-ը Վրաստան այցելեց ՀՀ նախագահի գլխավորած պատվիրակությունը: Ինչպես հայ-վրացական բարձր մակարդակի բանակցությունների ավարտից հետո հայտարարեց Վրաստանի նախագահը, քննարկվեցին երկկողմանի տնտեսական և քաղաքական հարաբերությունների զարգացմանը վերաբերող հարցեր[538]: Երկու երկրների շահերը համընկնում են, և Հայաստանն ավելի մեծ մասնակցություն պիտի ունենա ՏՐԱՍԵԿԱ-ի ծրագրում: Երկու նախագահները պայմանավորվեցին դիմել Եվրամիությանը՝ ֆինանսավորելու Երևան-Թբիլիսի և ապա սևծովյան նավահանգիստներ տանող ավտոճանապարհների վերանորոգումը: Հայաստանի նախագահը, կարևորելով ավտոճանապարհների շինարարությունը, նշեց այդ շրջանակում նաև Իրանի ներգրավումը և էներգետիկ համագործակցության խորացման նպատակով՝ երկու երկրների էներգահամակարգերը ևս մեկ գծով միացնելու հնարավորությունը: Ի դեպ, տարածաշրջանային համագործակցությանը նվիրված իր ելույթում Ռոբերտ Քոչարյանը վերստին անդրադարձավ Հարավային Կովկասում կոլեկտիվ անվտանգության «արդեն հասունացած» համակարգի ստեղծման հարցերին, նշելով, որ «Հայաստանն իր արտաքին քաղաքականության մեջ հավատարիմ է մնում կոմպլիմենտարության սկզբունքին: Կոլեկտիվ անվտանգության ապագա համակարգը կարող է արդյունավետ լինել, եթե այն իսկապես կրի համընդգրկուն և համալիր բնույթ: Այդպիսի համակարգը չպետք է բացառի տարածաշրջանի վրա անմիջական ազդեցություն ունեցող որևէ տերության մասնակցություն: Մեր առաջարկած «երեք+երեք+երկու բանաձևը ներառում է Հարավային Կովկասի բոլոր երեք պետությունները, տարածաշրջանի հետ անմիջական հարևան պետությունները՝ Ռուսաստանը, Թուրքիան և Իրանը, ինչպես նաև՝ Եվրոպական Միությունն ու Միացյալ Նահանգները:

[538] Տե՛ս նույն տեղում, էջ 124:

Կայունությունը Հարավային Կովկասում զրկված է ամուր հիմքերից, եթե անտեսվում է Ռուսաստանի հետ տարածաշրջանի երկրների բարիդրացիական հարաբերությունների զարգացման անհրաժեշտությունը:

Մենք չեն կարող հաշվի չառնել տարածաշրջանում ռուսական շահերի խորությունը, և դրանց թերագնահատման լույսի ներքո, նրա կողմից որոշակի անհանգստության առկայությունը... Ի դեմս ժողովրդական Ռուսաստանի, մենք տեսնում ենք լուրջ գործընկեր»,- հայտարարեց ՀՀ նախագահը[539]: Այստեղ ընդգծվեց երկու երկրների խորհրդարանականների դերն ու նշանակությունը փոխհարաբերությունների համակողմանի խորացման գործում, միջխորհրդարանական հարաբերությունների զարգացման բնագավառում[540]:

Համագործակցության սերտ կապեր են ստեղծվել ՀՀ Ազգային ժողովի և Վրաստանի խորհրդարանի միջև: 1998 և 1999 թթ. ստորագրվել են համագործակցության համաձայնագրեր: Տեղի են ունեցել փոխադարձ այցելություններ պաշտոնական և ոչ պաշտոնական մակարդակներում[541]: Միջխորհրդարանական հարաբերությունները կառուցվել են գործնականության ոգով: Երկու երկրների մաքսային, հարկային համակարգերի ներդաշնակեցման, տրանսպորտային սակագների համաձայնեցման, տնտեսական կյանքի այլ ոլորտներին առնչվող, ինչպես նաև քաղաքական նշանակության խնդիրները, որպիսիք են հակամարտությունների խաղաղ հանգուցալուծումը, տարածաշրջանում կայունության և փոխվստահության համակարգերի ձևավորման հարցերը, մշտապես մնացել են խորհրդարանականների ուշադրության կենտրոնում: 1999 թ. սեպտեմբերին առաջին անգամ Թբիլիսիում հանդիպում կայացավ երեք երկրների խորհրդարանների նախագահների միջև, որի ժամանակ քննարկվեցին տարբեր հարցեր, հիմնականում Հարավային Կովկասում իրադրությունը բարելավելու և

---

[539] Հայաստանի Հանրապետության պատմության ամփոփ ժամանակագրություն, 1999, Երևան, 2002, էջ 111, նույն տեղում, էջ 86:
[540] Օսկանյան Վ., նշված աշխ., էջ 121:
[541] Տե՛ս նույն տեղում, էջ 119-127:

երկրների հետագա զարգացումն ապահովելու, ինչպես նաև հետագա համագործակցության սկզբունքներին վերաբերող խնդիրներ: Բավական սերտ հարաբերություններ են պահպանվում նաև մշակույթի բնագավառում: Ավանդական են դարձել մշակույթի օրերի փոխադարձ անցկացումը: 1995 թ. տեղի ունեցան հայ մշակույթի օրերը Թբիլիսիում, իսկ 1996 թ. վրաց մշակույթի օրերը Երևանում, և այսպես շարունակ, գրեթե ամեն տարի:

Այսպիսով, Հայաստանի և Վրաստանի փոխհարաբերությունները գտնվում են բարեկամական բարձր մակարդակի վրա:

Հայաստանը բարիդրացիական հարաբերություններ է հաստատել իր հարևան Իրանի հետ: Հայ-իրանական հարաբերությունները պայմանավորված են առաջին հերթին երկկողմանի տնտեսական շահերով, Կովկասյան տարածաշրջանում Իրանի խաղացած դերով, միջազգային ասպարեզում, հատկապես Մերձավոր Արևելքում, նրա ունեցած կշռով, իսլամական աշխարհում, մասնավորապես արաբական երկրներում նրա ազդեցության հետագա ուժեղացումով: Իրանի ազդեցությունն աճում է ոչ միայն Իսլամական կոնֆերանս կազմակերպությունում, ԷԿՕ-ում, ՕՊԵԿ-ում և Կասպից ծովի ավազանի երկրների կազմակերպությունում: Մեծ է նաև Իրանի միջազգային արտաքին տնտեսական կապերի նշանակությունը կովկասյան տարածաշրջանի երկրների համար: Առանձնակի նշանակություն է ստանում մեր երկրի համար Իրանի հետ էներգետիկայի, տրանսպորտի, առողջապահության, միջպետական առևտրի բնագավառներում համագործակցության զարգացումը: Իրանը Վրաստանի հետ միասին այն երկիրն է, որ, ինչպես 1990-ական թվականների սկզբին, այնպես էլ այժմ զգալիորեն նպաստում են Հայաստանի շրջափակման հետևանքների մեղմացմանը: Արաքսի վրա կառուցած կամուրջը միացնում է երկու երկրները՝ հնարավորություն ընձեռելով աշխույժ տնտեսական գործունեություն ծավալելու համար: Այդ կամրջով Հայաստանը կապվում է շատ երկրների հետ: Իրանի Իսլամական Հանրապետության հետ Հայաստանի կապերի զարգացումը պայմանավորված է նաև իրանահայ համայնքի առկայությամբ, որը որոշակի դեր ունի Իրանի տնտեսական կյանքում: Հայաստանի Հանրապե-

տության արտագործնախարար Բաֆֆի Հովհաննիսյանի այցը Թեհրան 1992 թ. փետրվարի 8-10-ը նպաստեց երկրների դիվանագիտական կապերի հաստատմանը[542]: Հռչակագիր ստորագրվեց երկու երկրների դիվանագիտական հարաբերությունների հաստատման և մեկ ամսվա ընթացքում դեսպանատների բացման մասին: Համատեղ հայտարարություններ եղան համագործակցության, բարեկամության և բարիդրացիության մասին: 1995-1996 թթ. մի շարք նոր համաձայնագրեր կնքվեցին, որոնց թվում կապիտալ ներդրումների, կրկնակի հարկումը բացառելու, Հայաստանին էլեկտրաէներգիա և հեղուկ գազ վաճառելու, Արաքսի վրա ՀԷԿ կառուցելու մասին, ինչպես նաև գյուղատնտեսության, առողջապահության և առևտրի բնագավառներում համագործակցության վերաբերյալ[543]: Գործում են հայ-իրանական տնտեսական կապերի կոորդինացման հանձնաժողովներ Իրանում և Հայաստանում՝ կարևորագույն նախարարությունների մասնակցությամբ: Նրանց ակտիվ գործունեության արդյունքում ստեղծվել են հայ-իրանական համատեղ ձեռնարկություններ, կատարվում է աշխույժ առևտուր Իրանի հետ: 1997 թ. փետրվարին Թեհրան ժամանած ՀՀ ԱԺ նախագահի պատվիրակությունը բանակցությունների ընթացքում պայմանագիր ստորագրեց Իրան-Հայաստան գազամուղի կառուցման վերաբերյալ, համաձայնություն ձեռք բերեց երկու պետությունների տնտեսական, գիտական, մշակութային կապերի ընդլայնման և Հայաստանի տնտեսության մեջ նոր ներդրումներ կատարելու մասին[544]:

1998 թ. հոկտեմբերին Երևանում ՀՀ վարչապետի և Իրանի Իսլամական Հանրապետության ղեկավարության միջև համաձայնագիր ստորագրվեց երկու պետությունների տրանսպորտային համակարգերի համագործակցության զարգացման վերաբերյալ: Երկուստեք կարևորվեց Հայաստանի հյուսիսը հարավին կապող ճանապարհների շինարարությունը, որը հնարավորություն ընձեռեց

---

[542] Տե՛ս Փափազյան Վ., նշված աշխ., էջ 3:
[543] Տե՛ս նույն տեղում:
[544] Հայաստանի Հանրապետության պատմության ամփոփ ժամանակագրություն, 1997, Երևան, էջ 76:

Իրանին Հայաստանի ճանապարհներով ընդլայնելու ապրանքաշրջանառությունը դեպի Ռուսաստան, Սև ծով, Բուլղարիա, Եվրոպա: Կողմերի համաձայնությամբ ստեղծվեց համատեղ տրանսպորտային ընկերություն և համատեղ աշխատանքային խումբ հյուսիս-հարավ մայրուղու շինարարության գործում իրանական կողմի մասնակցության աշխատանքների համակարգման նպատակով: Ստեղծվեց նաև Հայաստան-Իրան տնտեսական գործունեությունը համակարգող միջկառավարական հանձնաժողով, որը լուրջ աշխատանքներ էր տանում Սյունիքում նախագծվող թունելի և Մեղրու ՀԷԿ-ի կառուցման գործում իրանական կողմի մասնակցությունն ապահովելու ուղղությամբ:

Ամրապնդվում են նաև Հայաստան-Իրան միջխորհրդարանական կապերը բարձր մակարդակի փոխայցեր կազմակերպելու միջոցով:

1999 թ. դեկտեմբերին ՀՀ Ազգային ժողովի նախագահի հետ հանդիպման ժամանակ Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանը մեկ անգամ ևս փաստեց Հայաստանի և Իրանի միջև միջխորհրդարանական կապերի հետագա ընդլայնումը և կարևորեց տնտեսական փոխգործակցությունը մասնավորապես էներգետիկայի, տրանսպորտի, կապի, հեռահաղորդակցության և ապրանքափոխանակության բնագավառներում:

1990-ական թվականներին զգալի աշխատանքներ են կատարվել Հայաստան-Իրան-Թուրքմենստան և Հայաստան-Հունաստան-Իրան եռակողմ և բազմակողմ հարաբերությունների ուղղությամբ: Այս հարաբերություններում Իրանը խաղում էր որոշակի դեր: Այս երկրների հետ հարաբերությունների շրջանակներում գրեթե ամեն տարի կառավարության արտգործնախարարների մակարդակով կազմակերպվում էին հանդիպումներ ու քննարկվում եռակողմ տնտեսական կապերն ընդլայնելու ուղղությամբ բազմաբնույթ միջոցառումների իրականացման հարցեր, ստորագրվում էին համաձայնագրեր գազամուղի շինարարության, էներգետիկայի նոր համակարգեր ստեղծելու վերաբերյալ[545]: Այս-

[545] Հայաստանի Հանրապետության պատմության ամփոփ ժամանակագրություն, 2000, Երևան, էջ 113:

պես, օրինակ, 1999 թ. սեպտեմբերին Հայաստան-Հունաստան-Իրան եռակողմ համագործակցության շրջանակներում տեղի ունեցավ հերթական հանդիպում Երևանում: 2000 թ. նոյեմբերին երեք երկրների արտգործնախարարների միջև ստորագրվեց փոխըմբռնման հուշագիր կոչվող փաստաթուղթ, որտեղ համագործակցության հիմքը գնահատվեց որպես չափազանց ամուր ու հավասարաչափ փոխշահավետ, ինչը բացատրվում էր այն պարզ իրողությամբ, որ Հունաստանին կայուն մուտք էր պետք Կովկաս, իսկ համագործակցության մյուս երկրներին՝ Եվրոպա: Հունաստանի համար այս համագործակցության նպատակն էր իր երկիրը եվրոպական երկրների համար էներգետիկ կենտրոն դարձնել: Իսկ Իրանի համար Հայաստանը հարավ-հյուսիս կապն ամրապնդող ձեռնտու միջոց էր և այդ ճանապարհով իրենց հեշտ կլիներ մուտք գործել եվրոպական երկրներ, իսկ Հայաստանի համար իր տնտեսությունը զարգացնելու լայն հնարավորություններ էին տալիս այս համագործակցությունները: Փաստաթղթում ընդգծվում էր նաև Իրանի և Հունաստանի շահագրգռվածությունը բացի էներգետիկայից նաև տրանսպորտի և տուրիզմի բնագավառներում: Այսպիսով, Իրանը, Հայաստանն ու Հունաստանը դարձան բնական դաշնակիցներ:

Նկատի առնելով 1999 թ. ընթացքում Իրանի, Հունաստանի և Հայաստանի ղեկավարությունների միջև կատարված փոխայցերը, քննարկված հարցերի շրջանակը և փոխհարաբերությունների զարգացման միտումները՝ կարելի է ասել, որ բացի տնտեսական համագործակցությունից ուրվագծվում էր նաև ռազմական դաշինքի հաստատում հիշյալ պետությունների միջև: Ուրվագծվում էր մի կողմից Ռուսաստանի, Հայաստանի և Իրանի, մյուս կողմից ԱՄՆ-ի, Թուրքիայի և Ադրբեջանի միանշանակ աշխարհաքաղաքական կողմնորոշումը: ԱՄՆ-ի հովանավորությամբ Թուրքիան Ադրբեջանի, Վրաստանի, Ղազախստանի և Ուզբեկստանի հետ 1998 թ. հոկտեմբերին Անկարայում հաստատագրեց իր կամքը՝ սկսել Ռուսաստանը շրջանցող, վերջինիս և Իրանին անտեսող Բաքու-Թբիլիսի-Ջեյհան խողովակաշարի շինարարությունը: Ռուսաստանը և Իրանը լավ էին հասկանում, որ մերձկասպյան տարածաշրջանում

մղվող տնտեսական պատերազմը նպատակ ուներ ԱՄՆ-ի օգնությամբ իրենց վերջնականապես դուրս մղելու այնտեղից:

Ակնառու էր, որ Կովկասում Իրանի շահերի պաշտպանության մեջ վճռորոշ դեր կարող էր խաղալ Ռուսաստանը, իր ռազմավարական դաշնակից Հայաստանի հետ միասին:

1999 թ. ապրիլին, երբ Իրանի արտաքին գործերի նախարարն այցելեց Մոսկվա, երկրի խորհրդարանում կայացավ հատուկ նիստ՝ նվիրված հայկական ցեղասպանությանը: Ավելի ուշ Հայաստանի Հանրապետության և Իրանի էներգետիկայի նախարարությունները ստորագրեցին պայմանագիր: Ղարաբաղյան խնդրի շուրջ Իրանը վարում էր իր կովկասյան շահերին համապատասխան շատ նուրբ և ճկուն քաղաքականություն[546]:

Ամրապնդվում էին հայ-իրանական, Հայաստան-Հունաստան-Իրան մշակութային և գիտակրթական կապերը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանն ու Իրանը մշակութային ընդհանրություններ ունեցող երկրներ են, մշտապես ամեն տարի կազմակերպվում էին Իրանի և Հայաստանի մշակույթի օրեր: 1995 թ. աշնանը կազմակերպվեց Իրանի մշակույթի օրերը Հայաստանում, իսկ 1996 թ. աշնանը՝ Հայաստանի օրերը Իրանում: Մշտական էին դարձել երկկողմ ցուցահանդեսների կազմակերպումը: Հայ-իրանական մշակութային հարաբերությունների զարգացման համար մեծ նշանակություն ուներ 1999 թ. սեպտեմբերին Երևանում Իրանի Իսլամական Հանրապետության մշակութային կենտրոնի բացումը: Տեղի ունեցավ նաև Հայաստանի մշակութային կենտրոնի բացում Թեհրանում[547]:

Հայաստանը կարևոր նշանակություն էր տալիս Թուրքիայի հետ բարիդրացիական հարաբերությունների հաստատմանը:

Թեև Թուրքիան առաջիններից մեկը ճանաչեց Հայաստանի անկախությունը, բայց նրա հետ դիվանագիտական հարաբերություններ չհաստատվեցին: Անկարան հայկական իշխանություններին նախապայմաններ ներկայացրեց. չհիշատակել 1915 թ. Հայոց

---

[546] Տե՛ս Բայբուրդյան Վ., Իրանն այսօր, Երևան, 1999, էջ 309:

[547] Բաղալյան Գ., Հայաստան-Իրան. հարաբերությունները 20 տարեկան են, Թեհրան, 2012, էջ 68:

ցեղասպանությունը, պաշտոնապես հրաժարվել պահանջատիրությունից, ճնշում գործադրել Լեռնային Ղարաբաղի վրա՝ դադարեցնելու պայքարը և ընդունելու Ադրբեջանի գերակայությունն ու տարածքային ամբողջականությունը:

Միաժամանակ պահանջեց, որ Հայաստանը զերծ մնա Թուրքիայի շահերին հակասող գործողություններից և ամեն կերպ չեզոքացնի սփյուռքահայության հակաթուրքական գործունեությունը: Հայաստանի Հանրապետությունը մերժեց միջազգային պրակտիկային անհարիր այս նախապայմաններն ու պահանջները: Ավելի ուշ Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի միջև տնտեսական հարաբերությունների ոլորտում որոշ աշխուժացում նկատվեց:

Համայնավարական համակարգի քայքայման պայմաններում Հայաստանի նոր ղեկավարությունը սկզբում փորձեց Մոսկվայի նկատմամբ կոշտ դիրքորոշում որդեգրել, դեպի Արևմուտք կողմնորոշվելու հակումներ ցուցաբերեց: Թուրքիան, որպես արևմտյան ճամբարի լիիրավ անդամ, իր վրա գրավեց նրա ուշադրությունը: Դրան հետևեց նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի հայտարարությունը, թե «Հայաստանը քաղաքակիրթ երկրներին արժանավայել հարաբերություններ պետք է հաստատի անխտիր բոլոր հարևանների, այդ թվում՝ Թուրքիայի հետ»[548]:

Նախագահ Թուրգութ Օզալը դրականորեն արձագանքեց Լևոն Տեր-Պետրոսյանի հայտարարությանը՝ ընդգծելով. «Թուրքիան ծրագրում է տնտեսական հարաբերություններ հաստատել Հայաստանի հետ»[549]:

Թուրքիան տվյալ դեպքում տնտեսական շահերով չէր առաջնորդվում: Միևնույն է, Հայաստանի հետ առևտուրը նրա ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալի լոկ չնչին մասն էր կազմում: Նա Հայաստանի հետ առևտրատնտեսական կապեր հաստատելու պատրաստակամությամբ փորձում էր շահել միջազգային հանրության համակրանքը և հայաստանյան իշխանությունների միջոցով չեզոքացնել սփյուռքահայության «հակաթուրքական» գործունեությունը, հասնել Մեծ եղեռնի միջազգային ճանաչման

[548] Տե՛ս Տեր-Պետրոսյան Լ., նշված աշխ., էջ 26:
[549] Տե՛ս Փափազյան Վ., նշված աշխ., էջ 4:

ուղղությամբ տարվող աշխատանքների կասեցմանը: Անկախ Հայաստանի հետ առևտրատնտեսական կապերը Թուրքիայի քաղաքական նպատակներին ծառայեցնելու Անկարայի նկրտումները հայ-թուքական հարաբերությունների կարգավորման նախադրյալներ էր ստեղծում: Դառնալով անկախ պետություն՝ Հայաստանը զրկվել էր խորհրդային վահանից, մինչդեռ նրա ռազմական կարողությունները խիստ սահմանափակ էին: Ազգային անվտանգության հրամայականը նման պետության համար ենթադրում էր խաղաղ ճանապարհով չեզոքացնել ռազմական հնարավոր սպառնալիքը: Այդ առումով «բարիդրացիական հարաբերությունների հաստատումը անխտիր բոլոր հարևանների հետ», որ դրվեց նորանկախ Հայաստանի արտաքին քաղաքականության հիմքում, սկզբունքորեն ճիշտ որոշում էր: Թվում էր, թե Հայաստանի ղեկավարությունը դրանով փորձում էր լուծել ոչ միայն միջազգային ասպարեզում հանրապետության դիրքերն ամրապնդելու, այլև քաղաքական եղանակով ազգային անվտանգությունն ապահովելու խնդիր: Սակայն Թուրքիայի հետ փոխհարաբերությունների նշանակությունը Հայաստանի համար խիստ գերագնահատվեց: Դեռ ավելին, անկախության սկզբնական փուլում կառավարող շրջանակների որոշ հայ գործիչներ հանդես էին գալիս «Հայաստանի հարաբերությունները Ռուսաստանի հետ վերանայելու և գլխավորապես դեպի Թուրքիա կողնորոշվելու պահանջով»: Իսկ նրանց պահանջը ԱՄՆ-ի գլխավորությամբ խրախուսվում էր Արևմուտքի կողմից:

Չնայած Անկարան իր առաջարկած վերը նշված պայմանները չկատարած տեսնելով՝ հրաժարվեց դիվանագիտական հարաբերություններ հաստատել Հայաստանի հետ, բայց հավանություն տալով ALGRKO HOLDING բաժնետիրական ընկերությունների միավորման տնօրեն Իցիակ Ալաթոնի հայտնի ծրագրին, Տրապիզոնի նավահանգիստը Հայաստանի Հանրապետության տրամադրության տակ դնելու պատրաստակամություն հայտնեց: Ավելին, հենց Թուրքիայի նախաձեռնությամբ բարձրացվեց Սևծովյան տնտեսական համագործակցությանը Հայաստանի անդամակցության հարցը: Այս ծրագրով նախատեսվում էր միջինասիական հինգ հանրապետությունների հումքը, այդ թվում գազն ու նավթը

Հայաստանի վրայով փոխադրել Տրապիզոն, իսկ այնտեղից էլ կազմակերպել դրա դուրսբերումը Արևմուտքի շուկաներ[550]: Այլ կերպ ասած, Տրապիզոնի նավահանգիստը Հայաստանի համար դառնում էր ազատ առևտրի հատուկ գոտի, որի շնորհիվ նա ոչ միայն շրջափակումն էր ճեղքում, այլև վեր էր ածվում միջազգային տարանցիկ հենակետի Միջին Ասիա-Արևմուտք առևտրատնտեսական կապերում: Ծրագրով նախատեսվում էր նաև անհապաղ բացել Մարգարա-Ալիջան սահմանային կետը և ձեռնամուխ լինել Էրզրում-Տրապիզոն երկաթգծի կառուցմանը, որպեսզի հնարավոր լիներ ապահովել Գյումրիի երկաթուղային հաղորդակցությունը Տրապիզոնի նավահանգստի հետ: Ինքնաբերաբար օրակարգ էր մտնում նաև Ախուրյանի սահմանակետի բացումը: Ծրագրում առանձնակի տեղ էին հատկացվում Հայաստանում աղետի գոտու վերականգնման, բնակարանային շենքերի կառուցման, տեխնիկապես հնացած արդյունաբերական ձեռնարկությունների արդիականացման, դրանց արտադրական կարողությունների հզորացման ու նոր գործարաններ հիմնադրելու աշխատանքներին:

1991 թ. ծրագրի ֆինանսավորումն ու կենսագործումը, Ալաքոնի ընկերության հետ միասին, ստանձնում էր ԱՄՆ-ում հայկական համայնքի նախագահ Հրայր Հովնանյանի «Հովսոնս քամփընի» ընկերությունը[551]: Այդ առումով պատահական չէր «Հովսոն-Ալարկո» թուրք-ամերիկյան բաժնետիրական համատեղ ընկերության ստեղծումը: Ալաքոնյան ծրագիրը, թվում էր, Հայաստանի առջև լայն հեռանկարներ էր բացում: Համենայնդեպս, Թուրքիան մասնակիորեն ապահովելով ալաքոնյան ծրագրի ընթացքը՝ վարչապետի և արտգործնախարարի մակարդակով սկսեց հանդես գալ ղարաբաղյան հիմնահարցում միջնորդի դեր ստանձնելու պատրաստակամության մասին հայտարարություններով: 1992 թ. հունվարին նրա միջնորդության հարցը վերջնականապես համաձայնեցվեց Բաքվի իշխանությունների հետ: Սրանով Թուրքիան հայ-թուրքական հարաբերությունները տնտեսական ոլորտից տեղա-

[550] Տե՛ս Չաքրյան Հ., Ղարաբաղյան հիմնահարցը հայ-թուրքական հարաբերությունների համատեքստում, Երևան, 1998, էջ 18:
[551] Տե՛ս նույն տեղում, էջ 21:

փոխեց քաղաքական ոլորտ: Քանի որ Ալաթոնյան ծրագիրը նախատեսում էր միջինասիական հանրապետությունների հումքը Հայաստան փոխադրել Աղրբեջանի տարածքով, ուստի Թուրքիան այդ ծրագրով Հայաստանին փորձում էր ներքաշել բավական շահավետ մի գործարքի մեջ, որպեսզի նրան Աղրբեջանի հետ բանակցություններում ստիպի զիջումների գնալ:

Քանի որ Հայաստանի իշխանությունները Թուրքիայի միջնորդական վերոհիշյալ ջանքերի հարցում նույնպես լռություն էին պահպանում, իսկ ալաթոնյան ծրագրի կենսագործման աշխատանքները ընթացքի մեջ էին, ուստի հայ-թուրքական մերձեցման տպավորություն ստեղծվեց: Դա հիմք էր տալիս ենթադրելու, թե միջպետական հարաբերությունները երկու երկրների միջև կարգավորվում էին: 1992 թ. Անկարայում տեղի էին ունենում բուռն քննարկումներ՝ Հայաստանին Սևծովյան համագործակցության մեջ ընդգրկելու շուրջ: Հայաստանի Հանրապետությունը ԱԳՆ փոխնախարար Արման Նավասարդյանի գլխավորությամբ առաջին պաշտոնական այցն էր կատարում Թուրքիա՝ մասնակցելու համար այդ քննարկումներին: Ավելին, փետրվարի 13-ին Ալաթոնի կողմից Թուրքիա էին հրավիրվել Հայկական համագումարի նախագահ Հրայր Հովնանյանը և այդ կազմակերպության տնօրեն Վան Գրիգորյանը[552]: Ալաթոնը պատրաստվում էր հյուրերին ուղեկցել Տրապիզոն, որտեղից՝ Էրզրում, որպեսզի վերջիններս տեղում ծանոթանան Հայաստանին տրամադրվող ազատ գոտու պայմաններին և ուսումնասիրություն անցկացնեն Էրզրում-Տրապիզոն երկաթգծի շուրջ:

Սակայն երբ 1992 թ. փետրվարին ղարաբաղյան ուժերն ազատագրեցին Խոջալուն, իսկ 1993 թ.՝ ԼՂՀ տարածքների մեծ մասը, դա առիթ հանդիսացավ, որ Թուրքիան իսկույն հրաժարվեր ալաթոնյան ծրագրից: Հայաստանի հետ մերձեցման թուրքական միտումները վերածվեցին հակահայկական հիստերիայի:

Թուրքական կողմը դա առիթ համարելով՝ այդպես էլ չբացեց ՀՀ-ի հետ պետական սահմանը:

---

[552] Նույն տեղում, էջ 28:

ԼՂՀ պաշտպանական բանակի հաղթական գործողությունները ոչ միայն վճասեցին Ադրբեջանում Թուրքիայի հեղինակությանը, այլև սպառնալիքի տակ դրեցին Անդրկովկասը թուրքական գործոնի միջոցով ռուսական ազդեցությունից պաշտպանելու ամերիկյան ծրագրերը: 1993 թ. ապրիլի 3-ին կառավարության որոշումով Թուրքիան արգելեց իր տարածքով բոլոր տեսակի բեռնափոխադրումները Հայաստան՝ պատճառաբանելով, թե «դրանք նպաստում են հայերի ռազմական ջանքերին ընդդեմ Ադրբեջանի»[553]: Հայկական ինքնաթիռների առջև փակվեց նաև H-50 օդային միջանցքը: Հայաստանը ենթարկվեց լիակատար շրջափակման: Դրան հետևեցին բացահայտ ռազմական սպառնալիքները: 1992 թ. հունիսի տվյալներով Նախիջևանի և Ադրբեջանի տարածքում տեղակայված էին շուրջ 3 հազար թուրք կամավորներ, որոնք կռվում էին հայերի դեմ: Ադրբեջանի ռազմական կարիքները պաշտոնապես հոգալը կառավարության տեսանկյունից նշանակում էր մարտահրավեր նետել միջազգային ուժերին՝ ստեղծելով նրանց համար հակազդեցության անհրաժեշտ նախադրյալներ: Դա իր հերթին ենթադրում էր վտանգել Թուրքիայի ազգային շահերը: Այս պայմաններում կառավարությունն այլ ելք չգտավ, քան ռազմական օգնությանը տալ մարդասիրականի ձևակերպում:

ԼՂՀ պաշտպանական բանակի ռազմական գործողությունները, այնուհանդերձ, չխանգարեցին, որպեսզի Հայաստանը 1992 թ. հունիսի 25-ին Թուրքիայի կողմից իբրև հիմնադիր անդամ հրավիրվի մասնակցելու Սևծովյան տնտեսական համագործակցությանը: Դա արվում էր Հայաստանին Թուրքիայի քաղաքական ուղեծրում պահելու և Արևմուտքի ազդեցության ոլորտ ներքաշելու նպատակով: Այլ կերպ ասած, նրա կապը Արևմուտքի հետ միջնորդավորվում էր Թուրքիայով: Նախիջևանի վրայով Թուրքիայի ու Ադրբեջանի միջև անմիջապես ցամաքային կապի հաստատումը դարձավ առաջնահերթ խնդիր: Այսպիսով, առաջ քաշվեց Պոլ Գոբլի տխրահռչակ ծրագիրը, որը ենթադրում էր Լեռնային Ղարաբաղի մի մասը միացնել Հայաստանին, իսկ մյուս մասը հանձ-

[553] Նույն տեղում, էջ 32:

նել Ադրբեջանին: Ինչ վերաբերում է Զանգեզուրին, ապա դա, որպես կամուրջ Նախիջևանի ու Ադրբեջանի միջև, վերջինիս էր կցվում: Դրանով Հայաստանը զրկվում էր Իրանի հետ ընդհանուր սահմանից և կանգնում էր լիակատար մեկուսացման առջև, իսկ Ռուսաստանը վերջնականապես տարանջատվում էր Միջին Արևելքից՝ կորցնելով ցամաքային հաղորդակցության հնարավորությունները: Զանգեզուրի գոտու ամրապնդմամբ Գոբլի ծրագիրը փաստորեն տապալվեց[554]: Նման պայմաններում բնական է, որ Ադրբեջանի իրավունքները միջազգային ասպարեզում պաշտպանող Թուրքիան սառն անտարբերությամբ վերաբերվեց Թուրքիայի և Հայաստանի միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու հայկական իշխանությունների առաջարկներին:

1994 թ. հրադադարից հետո ռուս-թուրքական հակասությունները ղարաբաղյան հարթությունից փոխադրվեցին կասպյան նավթի և Եվրոպայում սովորական սպառազինությունների կրճատման պայմանագրի հարթություն: Թուրքիան փորձեց կանխել վերջինիս վերանայումը Ռուսաստանի կողմից: Ի պատասխան դրան՝ ռուսները դիմեցին քրդական հարցը որպես ազդեցության լծակ օգտագործելու քայլին: Հենց այս մրցապայքարում նորից կարևորվեց Հայաստանի տեղն ու դերը ինչպես Ռուսաստանի, այնպես էլ Թուրքիայի քաղաքական ծրագրերում: Վերոհիշյալ խնդիրների նախաձեռնությունը Մոսկվային զիջելու հանգամանքը Թուրքիային ստիպեց բարելավման միտումներ հանդես բերել Հայաստանի հետ փոխհարաբերություններում՝ հանգեցնելով հայ-թուրքական հարաբերությունների որոշ աշխուժացմանը՝ թուրք լրագրողների այցեր Հայաստան, Հայաստանի առջև Թուրքիայի օդային տարածքի բացում և այլն:

Թուրքիան Հայաստանի հետ հարաբերությունները կառուցում էր «երկկողմ շփումները դիվանագիտական հարաբերությունների բացակայությամբ շարունակելու» սկզբունքի հիման վրա: Հայկական իշխանությունները, ելնելով նախորդ տարիների փորձերից, երկու «երկրների միջև դիվանագիտական հարաբերություններ

[554] Նույն տեղում, էջ 36:

հաստատելու» առաջարկի փոխարեն Թուրքիային սկսեցին դիմել սահմանային դուռ բացելու առաջարկով 1997 թվականից սկսած:

1997 թ. մայիսի սկզբներին Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության կազմում ստեղծվեց հայ-թուրքական գործարար համագործակցության հանձնաժողով:

Մինչ այդ ջանքեր էին գործադրվում, որպեսզի Թուրքիայի կառավարող շրջանակները սահմանային դուռ բացեին Հայաստանի համար: Նախագահ Սուլեյման Դեմիրելը նույն թվի հոկտեմբերի 30-ին Կարսում հայտարարեց. «Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանային դռան բացումը քաղաքական խնդիր է: Մի քանի գրոշանոց առևտրի համար մենք աղրբեջանցիներին դժվար կացության մեջ չենք գցելու»[555]:

Նա դրանով սահմանային դռան բացումը նույնպես պայմանավորեց «Աղրբեջանի գրավյալ տարածքներից հայկական զորքերի լիակատար դուրս բերման» հետ: Այսպիսով, դիվանագիտական հարաբերությունների հաստատման ակնկալիքների հետ հօդս ցնդեցին նաև սահմանային դռան բացման հայկական կողմի սպասումները:

Թուրքիայում կառավարության յուրաքանչյուր հերթափոխին, որպես կանոն, հետևում էին Հայաստանի հետ մերձեցման նոր միտումներ:

1999 թ. նոյեմբերի 18-ին Ստամբուլի գագաթնաժողովի շրջանակներում տեղի ունեցավ ՀՀ նախագահի և Սուլեյման Դեմիրելի առանձնազրույցը, որտեղ քննարկվեցին հայ-թուրքական հարաբերությունների հեռանկարները: Նորից դիվանագիտական հարաբերությունների հաստատման հարցը Թուրքիայի նախագահը կապեց Ղարաբաղյան խնդրի լուծման հետ:

դ. Հայ-ամերիկյան հարաբերությունները

ՀՀ անկախությունից հետո գործնական բնույթ ստացան հայ-ամերիկյան հարաբերությունները, որոնք պայմանավորված էին նաև

---

[555] Նույն տեղում, էջ 39:

ԱՄՆ-ի ազդեցիկ հայկական համայնքի ակտիվ գործունեությամբ: ԱՄՆ-ը Հայաստանի Հանրապետության անկախությունը ճանաչելուց հետո դիվանագիտական հարաբերություններ հաստատեց նրա հետ 1992 թ. հունվարի 7-ին: Երևանում ԱՄՆ-ի դեսպանությունը բացվեց 1992 թ. փետրվարին՝ հանդիսանալով Հայաստանում առաջին օտարերկրյա դեսպանությունը: Հարաբերությունները ԱՄՆ-ի և Հայաստանի միջև զարգանում էին բնականոն ճանապարհով՝ ընդգրկելով քաղաքական, տնտեսական ու մշակութային ոլորտները: Դժվարին տարիներին ԱՄՆ-ը Հայաստանին հատկացրեց հարյուր միլիոնավոր դոլարների մարդասիրական օգնություն:

Հայ-ամերիկյան շփումները բավական ակտիվացան 1993 թվականից, երբ ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանն ընդունեց կոնգրեսականների պատվիրակությանը[556]: ՀՀ նախագահը հույս հայտնեց, որ այցը կնպաստի հայ-ամերիկյան կապերի ամրապնդմանը և արդյունավետ համագործակցությանը, ինչպես նաև տարածաշրջանում խաղաղության հաստատմանը[557]: Հայ-ամերիկյան շփումներն ակտիվացան ամբողջ տարվա ընթացքում, երբ ՀՀ-ում ԱՄՆ առաջին արտակարգ և լիազոր դեսպան Հ. Գիլմորը մայիսի 31-ին իր հավատարմագրերը հանձնեց ՀՀ նախագահին: Նա հայ-ամերիկյան համագործակցության ոլորտում կարևորեց ԱՄՆ-ի հայ համայնքի դերը՝ ընդգծելով, որ այն կամուրջ է հանդիսանում երկու երկրների բազմաբնույթ հարաբերություններում[558]: Դեսպանն ակտիվ շփումների մեջ էր ոչ միայն ՀՀ կառավարության, այլ նաև ոչ կառավարական ոլորտների ու հասարակական-քաղաքական կազմակերպությունների հետ: Գնալով ակտիվանում էին ԱՄՆ-ի պատվիրակությունների և ՀՀ բարձրաստիճան այլ պաշտոնյաների փոխադարձ շփումները: Այսպես, հունիսի 1-ին ՀՀ ԳԽ նախագահ Բ. Արարաքցյանն ընդունեց ԱՄՆ սենատորներ Փոլ Սայմոնին, Հենրի Բրաունին և Հարրի Ռիդին: Այս հանդիպման ժամանակ հայկական կողմը ներկայացրեց ՀՀ ընտրակարգը, ԳԽ կառուցվածքը, նրանում քաղաքական ուժերի հարաբերակցությունը, ընդունված օրենքները և այլն: Իսկ ամերիկյան կողմը

[556] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 13.02.1993:
[557] ՀՀ ԳԽ տեղեկագիր, N 7, (1035), 15 ապրիլի 1993, էջ 18:
[558] Նույն տեղում, էջ 28:

հայտնում էր, որ շարունակելու է աջակցությունը և շատ կարևոր է համարում ԳԽ-ի և Կոնգրեսի միջև գործնական հարաբերությունների սերտացումը[559]: 1993 թ. հայ-ամերիկյան դիվանագիտական հարաբերություններում ամենակարևոր հանդիպումները տեղի էին ունենում հուլիսի 12-22-ը[560]: Այդ օրերին պաշտոնական այցով ԱՄՆ-ում էր գտնվում ՀՀ ԱԳ նախարար Վահան Փափազյանը, որը տասնօրյա այցի ընթացքում հանդիպումներ ունեցավ պետքարտուղար Ու. Քրիստոֆերի, նախագահի ազգային անվտանգության հարցերով խորհրդական Լեյքի և այլ պաշտոնյաների ու կոնգրեսականների հետ: ՀՀ-ն հատուկ ուշադրության էր արժանանում ԱՄՆ-ի վարչակազմի կողմից, քանզի ԱՄՆ-ը դրական էր գնահատում ՀՀ-ում իրականացվող ժողովրդավարական բարեփոխումները: ԱՄՆ-ը բարձր էր գնահատում նաև Հայաստանի դերը տարածաշրջանային կայունության հաստատման գործում: 1994 թ. մայիսի 14-ին Լ. Տեր-Պետրոսյանն ընդունում է ԱՄՆ-ի պատվիրակությանը պետդեպարտամենտի նորանկախ երկրների գծով հատուկ դեսպան և խորհրդական Ջեյմս Քոլինգի գլխավորությամբ: Պատվիրակությանն ուղեկցում էր դեսպան Գիլմորը: Հանդիպման ժամանակ զրույցը հիմնականում ընթանում էր ԼՂՀ հակամարտության կարգավորման միջնորդական ջանքերի, կայուն խաղաղության հաստատման, զինադադարի ամրապնդման հարցերի շուրջ: ՀՀ նախագահին է փոխանցվում օգոստոսին ԱՄՆ այցելելու՝ նախագահ Բ. Քլինթոնի հրավերը[561]: Նույն տարվա օգոստոսի 9-ին նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը մեկնում է ԱՄՆ, որտեղ իր հանդիպումներում ներկայացնում է ՀՀ սոցիալ-քաղաքական դրությունը, ԼՂՀ հակամարտության նկատմամբ ՀՀ-ի պաշտոնական դիրքորոշումը, քննարկվում են ԱՄՆ-ՀՀ ռազմական համագործակցության հարցեր, ԱՄՆ-ի կրթական հաստատություններում հայ սպաների վերապատրաստման, ՀՀ պաշտպանության նախարարությանը ցուցաբերվող տեխնիկական օգնության, ռազմական բյուջեի ձևավորման, բանակի համար կադրերի

---

[559] Նույն տեղում, էջ 16:
[560] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց.170, գ. 285, թ. 1:
[561] Մելիքյան Ս., Հայաստանի Հանրապետություն-Ամերիկայի Միացյալ Նահանգներ հարաբերությունները 1991-2000 թթ., Երևան, 2010, էջ 32:

պատրաստման, զինված ուժերի քաղաքացիական վերահսկողության իրականացման հարցեր: 1995 թ. ապրիլին ՀՀ-ում ԱՄՆ-ի դեսպան Հ. Գիլմորը հանդիպեց ՀՀ նախագահի հետ և քննարկեց ԼՂՀ-ին առնչվող խնդիրներ, ԱՄՆ-ի կողմից ՀՀ-ին տրամադրվող օժանդակության ծրագրեր: Այնուամենայնիվ, ԱՄՆ կառավարությունը շարունակում էր ԼՂՀ հակամարտության հարցում ՀՀ-ի վրա ճնշում գործադրելու քաղաքականությունը, որը դրսևորվեց նաև նույն թվականի նոյեմբերի 2-ին ՀՀ ժամանած ԱՄՆ բարձրաստիճան պատվիրակության հետ հանդիպման ժամանակ[562]: Անհրաժեշտ է նշել, որ ՀՀ-ն առարակեց այս հարցում՝ ելնելով հայ ազգաբնակչության անվտանգության ապահովման անհրաժեշտությունից: Այս փուլում ԱՄՆ մեծ դերակատարում ունեցավ ոչ միայն աղետի գոտուն տրամադրվող օգնության, արցախյան հակամարտության խաղաղ կարգավորման ուղիների որոնման, այլև տնտեսական (ներդրումային) մի շարք ծրագրերի իրականացման գործում: Դա պայմանավորված էր նաև ԱՄՆ-ի շահերով, որը ձգտում էր տարածաշրջանում ամրապնդել իր դիրքերը՝ հակառակ Ռուսաստանի:

1996-2000 թթ. շարունակում էր Հայաստան-ԱՄՆ միջպետական հարաբերությունների զարգացումը, որն արտահայտվում էր տնտեսական համագործակցության ոլորտում ամրագրված միջպետական պայմանագրերով ու համաձայնագրերով: Ամերիկյան ֆինանսական օգնությամբ աշխատում էին գյուղմթերքի վերամշակման մի քանի ձեռնարկություններ, որոնց արտադրանքն արտահանվում էր ԱՄՆ[563]:

Անկախության ձեռքբերումից մինչև 2000 թ. ԱՄՆ-ը Հայաստանին է հատկացրել 612 մլն դոլարի մարդասիրական օգնություն, իսկ, օրինակ, Վրաստանին տրամադրել է 420 մլն դոլար: 1999 թ. փետրվարի 26-ին համաձայնագիր ստորագրվեց ՀՀ և ԱՄՆ կառավարությունների միջև՝ ԱՄՆ կառավարության կողմից Հայաստանին 15 մլն դոլարի դրամաշնորհ տրամադրելու մասին: Դրամաշնորհը նպատակ ուներ աջակցել ՀՀ կառավարության էներգետիկայի մինչև 2001 թ. զարգացման ծրագրին: Նախատեսվում էր Երևանի էլեկտրացանցի արդիականացում, ինչպես նաև էլեկտ-

[562] Տե՛ս նույն տեղում, էջ 36:
[563] Նույն տեղում, էջ 38:

րաէներգիայի սպառման հաշվառման նորացված և ժամանակակից համակարգի ներդրում[564]:

Դեռևս 1998 թ. հոկտեմբերին, երբ ՀՀ կառավարության պատվիրակությունը վարչապետի ղեկավարությամբ ժամանեց ԱՄՆ, համագործակցության կոնկրետ հուշագրեր սորագրվեցին մի շարք ամերիկյան խոշոր ընկերությունների հետ: Ստորագրվեց մեմորանդում «Արիալ ինքերնեյշընըլ» կորպորացիայի հետ՝ Աբովյանի գազի պահեստարանի վերագործարկման, «Սաուզեն Կալիֆորնիա Էդիսոն» ընկերության հետ էլեկտրաէներգիայի բաշխիչ ցանցերի, տնտեսական շահավետության բարձրացման միջոցառումներ անցկացնելու և այլն[565]: Ֆինանսավորումն իրականացնում էր միջազգային զարգացման գործակալությունը: ԱՄՆ-ը բազմաբնույթ օգնություն էր ցույց տալիս Հայաստանին՝ նպաստելով նրա սոցիալ-տնտեսական որոշ պայմանների բարելավմանը:

Հայաստանում տնտեսական և ժողովրդավարական բարեփոխումների խորացման նպատակով նույնպես ԱՄՆ-ը շարունակում է օժանդակել հանրապետությանը: Փաստորեն ԱՄՆ-ի հետ Հայաստանի Հանրապետության հարաբերություններն ընդգրկում են նախաձեռնությունների լայն ոլորտներ և խորացման կայուն միտում են դրսևորում:

Հայաստանը հարաբերություններ էր հաստատել նաև Կանադայի, Արգենտինայի, Ուրուգվայի, Չինաստանի, Ճապոնիայի, Հնդկաստանի հետ, որոնք վավերացված էին մի շարք պայմանագրերով և համաձայնագրերով:

Հայ-կանադական հարաբերությունները զարգանում էին երկկողմ տնտեսական համագործակցությամբ, մասնավորապես հայկանադական համատեղ ձեռնարկությունների միջազգային կազմակերպություններում փոխգործակցության ամրապնդմամբ, միջխորհրդարանական կապերով և այլն: Կանադայի կառավարական ներկայացուցչությունը Հայաստանում 1993 թվականից և Հայաստանի դեսպանությունը Օտտավայում 1995 թ. մարտից լայն ու համակողմանի աշխատանքներ տարան երկկողմանի համագործակցությունը զարգացնելու և ընդլայնելու համար:

---

[564] Տե՛ս նույն տեղում, էջ 65:
[565] Տե՛ս նույն տեղում, էջ 126:

ե. ՀՀ փոխհարաբերությունները Եվրամիության հետ

Անկախություն ձեռք բերելուց հետո Հայաստանը գործնական դիվանագիտական հարաբերություններ հաստատեց Արևմտյան Եվրոպայի երկրների՝ Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Ավստրիայի, Բելգիայի, Իսլանդիայի, Շվեյցարիայի, Իսպանիայի, Իտալիայի հետ: Գնալով ամրապնդվեցին Հայաստանի տնտեսական և մշակութային կապերը Հունաստանի, Բուլղարիայի, Ռումինիայի, նախկին Հարավսլավիայի երկրների և Հարավարևելյան Եվրոպայի մյուս երկրների հետ: Անկախության առաջին օրերից Հայաստանը ձգտում էր ինտեգրվել եվրոպական կառույցներում, որոնց փորձը և օգնությունը կարող էին նպաստել Հայաստանում սկսված ժողովրդավարական գործընթացների խորացմանը:

Անկախություն ձեռք բերելուց հետո Հայաստանի Հանրապետությունը բավականին գործնական դիվանագիտական հարաբերություններ հաստատեց եվրոպական երկրների հետ: Արևմտյան Եվրոպայի երկրների՝ Անգլիայի, Ֆրանսիայի, Ավստրիայի, Բելգիայի, Իսլանդիայի, Շվեյցարիայի, Իսպանիայի, Իտալիայի հետ հարաբերություններում Հայաստանի գլխավոր նպատակն էր նրանց միջոցով մասնակցել եվրոպական միջազգային կառույցների աշխատանքներին, քանզի այս երկրները ոչ միայն ունեին մեծ հեղինակություն, այլև վաղուց մասնակցում էին այդ կառույցների աշխատանքներին: Հայաստանի Հանրապետության հռչակումից հետո Մեծ Բրիտանիան 1991 թ. դեկտեմբերի 12-ին ճանաչեց Հայաստանի Հանրապետությունը և նրա հետ հաստատեց դիվանագիտական հարաբերություններ: Հայաստանի դեսպանություն բացվեց Լոնդոնում, իսկ բրիտանականը՝ Երևանում: Երկու երկրների միջև հաստատվեցին բարեկամական հարաբերություններ:

2000 թ. փետրվարի 4-ին ՀՀ վարչապետի և Հայաստանում Մեծ Բրիտանիայի ու Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության արտակարգ և լիազոր դեսպանի հետ հանդիպման ժամանակ քննարկվեցին հայ-բրիտանական տնտեսական կապերի ամրապնդման հարցեր: Առաջին հերթին միջկառավարական համաձայնագրերի հիման վրա նախատեսվում էր Միացյալ Թագավո-

րության դրամահատարանում կազմակերպել հայկական ոսկյա հուշադրամների հատում, որի վաճառքից ստացված միջոցները կօգտագործվեին Հայաստանում ներդրումներ կատարելու համար[566]: Հեռահաղորդակցության ոլորտում նախատեսվում էր «Բրիտիշ-Տելեկոմ» ընկերության ուժերով երեք ամսում իրականացնել արբանյակային հեռահաղորդակցություն, որը կլիներ ավելի էժան, որակով և հուսալի, միաժամանակ կապահովեր նաև բարձրակարգ սպասարկում: Մշակութային համագործակցության բնագավառում նախատեսվում էր Լորիս Ճգնավորյանի գլխավորած Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի համերգային շրջագայությունը Մեծ Բրիտանիայում:

Ֆրանսիան 1992 թ. հունվարի 3-ին ճանաչեց Հայաստանի Հանրապետությունը, իսկ փետրվարի 24-ին հաստատեց դիվանագիտական հարաբերություններ Հայաստանի հետ: Փարիզում և Երևանում համապատասխանաբար գործում էին դեսպանություններ[567]: Հայ-ֆրանսիական միջպետական հարաբերությունները, որոնք կրում էին բարեկամական բնույթ, զարգանում էին հաջողությամբ՝ ընդգրկելով պետական, քաղաքական, տնտեսական և մշակութային բնագավառները:

1997 թ. դեկտեմբերին Հայաստանի և Ֆրանսիայի կառավարությունների միջև ստորագրվեց համաձայնագիր՝ եկամուտների և գույքի հարկերի առնչությամբ, կրկնակի հարկումը բացառելու և հարկային խուսափումներն ու խարդախությունները կանխելու մասին, ինչպես նաև արձանագրություն՝ քաղաքացիական ավիացիայի ոլորտում համագործակցության մասին, մշակույթի, կրթության և գիտության ոլորտներում համագործակցության ընդլայնման վերաբերյալ[568]: Հայ-ֆրանսիական հարաբերություններում կարևորվեց երկու խնդիր՝ տնտեսական համագործակցության զարգացումը և Ֆրանսիան որպես համանախագահող երկիր պետք է օգներ ղարաբաղյան հակամարտության կարգավորմանը: Կրթության և մշակույթի բնագավառներում հայ-ֆրանսիական համագործակցության լավագույն օրինակ հանդիսացավ Գյումրիում

[566] Տե՛ս Օսկանյան Վ., նշված աշխ., էջ 97:
[567] Տե՛ս Փափազյան Վ., նշված աշխ., էջ 4:
[568] Տե՛ս Օսկանյան Վ., նշված աշխ., էջ 99:

ֆրանսիական կազմակերպությունների անմիջական մասնակցությամբ բացված դպրոցը: Հեռանկարներ ուներ նաև համագործակցությունը առողջապահության ոլորտում: Գրեթե ամեն տարի Ֆրանսիայի հայկական համայնքի ուժերով կազմակերպվում էր Հայաստանի և Ֆրանսիայի բժիշկների փորձի փոխանակում և որակավորման բարձրացում:

Հայաստանը մեծ օժանդակություն էր ստանում նաև բժշկական հիմնարկները ժամանակակից սարքավորումներով ապահովելու գործում: Այս ամենը բարենպաստ պայմաններ էին ստեղծում Հայաստանի՝ որպես տարածաշրջանի առաջատար բժշկական կենտրոնի զարգացման համար:

Հայ-ֆրանսիական հարաբերությունների զարգացման և հետագա խորացման գործում մեծ է ֆրանսահայ համայնքի դերը, որը հանդիսանում է առաջնային կապող օղակը երկու երկրների միջև: Ֆրանսիայի նախագահ Ժակ Շիրակը ԵԱՀԿ ստամբուլյան գագաթնաժողովում ելույթ ունենալով ղարաբաղյան հակամարտության կարգավորման խնդրի վերաբերյալ՝ մեկ անգամ ևս ընդգծեց հայ-ֆրանսիական հարաբերությունների հետագա զարգացման հեռանկարը՝ խոստանալով տնտեսական լուրջ օգնություն ցուցաբերել Անդրկովկասյան տարածաշրջանին, այդ թվում Հայաստանին:

Գերմանիան նույնպես Եվրոպական մյուս երկրների նման ճանաչեց Հայաստանի անկախությունը և 1992 թ. հունվարից դիվանագիտական հարաբերություններ հաստատեց Հայաստանի հետ: Բեռլինում և Երևանում գործում են դեսպանություններ: Հայ-գերմանական միջպետական հարաբերությունները նույնպես զարգանում են հաջողությամբ՝ ընդգրկելով քաղաքական, տնտեսական ու մշակութային բնագավառները: 1998 թ. սեպտեմբերին Գերմանիայում առաջին անգամ անցկացվեցին ՀՀ մշակույթի օրեր: Տեղի ունեցան տարբեր մակարդակների պատվիրակությունների, գործատուների և մշակույթի գործիչների փոխայցելություններ, 1999 թ. սեպտեմբերին Գերմանիա ժամանեց ՀՀ Ազգային ժողովի խորհրդարանական պատվիրակությունը ԱԺ-ի նախագահ Կ. Դեմիրճյանի գլխավորությամբ: Հանդիպումների ընթացքում պայմանավորվածություններ ձեռք բերվեցին միջխորհրդարանական կապերի ամրապնդման, բարեկամական խմբերի փոխանակման,

տնտեսական համագործակցության առնչվող հարցերի շուրջ:

1999 թ. նոյեմբերի 19-23-ը կայացավ ՀՀ արտգործնախարար Վ. Օսկանյանի աշխատանքային այցը Գերմանիա[569]: Այդտեղ պայմանավորվածություն ձեռք բերվեց հայ-գերմանական տնտեսական համագործակցության զարգացման, Հայաստանում գերմանական ներդրումների խրախուսման երկկողմ խորհրդարանական այցերի կազմակերպման վերաբերյալ: Հայաստանը եվրոպական կառույցների մեջ էր ընդգրկված մասնավորապես Գերմանիայի օգնությամբ: 2000 թ. ապրիլի վերջին համաձայնություն ձեռք բերվեց հայ-գերմանական տնտեսական համաժողովի անցկացման վերաբերյալ: Հաջողությամբ զարգացան դիվանագիտական, միջպետական, միջխորհրդարանական տնտեսական ու մշակութային կապերը Ավստրիայի և Իտալիայի հետ: ՀՀ նախագահի և Հայաստանում Իտալիայի դեսպանի 2000 թ. մարտի 23-ի հանդիպման ժամանակ կարևորվեց երկու երկրների գործարարների համար ավելի սերտ համագործակցության հնարավորությունների ստեղծումը: Թեև իտալական որոշ ձեռնարկություններ արդեն ներդրումներ կատարել էին Հայաստանում, բայց այս ոլորտում անելիքները շատ էին: Նշվեց նաև, որ երկկողմ քաղաքական հարաբերությունները և մշակութային կապերը բավական բարձր մակարդակի վրա էին:

Դիվանագիտական կապեր հաստատվեցին ու զարգացան նաև Իսպանիայի, Նիդերլանդների, Իսլանդիայի, Շվեյցարիայի հետ: 1997 թ. հունիսի 26-ին տեղի ունեցավ Իսպանիայի դեսպանի, 1999 թ. հոկտեմբերի 22-ին Նիդերլանդների դեսպանի, իսկ 1999 թ. նոյեմբերի 24-ին Իսլանդիայի դեսպանի հավատարմագրերի հանձնումը ՀՀ նախագահին[570]:

Բրյուսելում բացվեց ՀՀ դեսպանությունը, որն իրագործում էր ՆԱՏՕ-ի հետ կապերը: Ելնելով Հայաստանի ֆինանսական հնարավորություններից՝ կիրառվում է որոշ դեսպանություններին տարածաշրջանային ֆունկցիաներ շնորհելու եղանակը: Մեծ Բրիտանիայի ՀՀ դեսպանը միաժամանակ հավատարմագրված էր Բելգիայում, Լյուքսեմբուրգում և Վատիկանում, Ավստրիայում ՀՀ

[569] Տե՛ս նույն տեղում, էջ 101:
[570] Նույն տեղում, էջ 98:

դեսպանը՝ Հունգարիայում, Չեխիայում և Սլովակիայում: Սա դիվանագիտական պրակտիկայում հաճախ հանդիպող երևույթ էր փոքր երկրների համար:

Հայաստանն իր արտաքին քաղաքականության մեջ առանձնակի հետաքրքրություն էր ցուցաբերում Հարավ-արևելյան Եվրոպայի նկատմամբ, քանզի աշխարհաքաղաքական առումով մեր երկիրը այդ տարածաշրջանի երկիր էր: Հայաստանը սերտ բարիդրացիական հարաբերություններ էր հաստատել Հունաստանի հետ: Հայ-հունական հարաբերությունները ռազմավարական նշանակություն ունեին և ընդգրկում էին քաղաքական ու տնտեսական ոլորտները: Երկու երկրների նախագահների, արտաքին գործերի նախարարների, ԱԺ միջխորհրդարանական պատվիրակությունների և պաշտոնական այլ հանդիպումների արդյունքում 1991-2000 թթ. Հունաստանի և Հայաստանի միջև ստորագրվել են մեկ տասնյակից ավելի պայմանագրեր՝ տնտեսական համագործակցության, մշակութային կապերի ամրապնդման վերաբերյալ, ռազմական բնույթի և այլն[571]: Հունաստանի հետ սերտ հարաբերությունների հաստատման համար մեծ նշանակություն ուներ «Բարեկամության և համագործակցության մասին» հայ-հունական պայմանագիրը: 1999 թ. մայիսին Հունաստանի Հանրապետության նախագահ Ստեֆանոպոլի Հայաստան կատարած պաշտոնական այցի արդյունքում ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի հետ ստորագրվեց տնտեսական համագործակցության պայմանագիր: Ստորագրվեցին միջկառավարական համաձայնագրեր եկամուտների և գույքի կրկնակի հարկումից խուսափելու մասին և այլն: 1999 թ. տեղի ունեցավ նաև Հունաստանի և Հայաստանի պաշտպանության նախարարների փոխադարձ այցելություններ, որոնց արդյունքում ստորագրվեց ռազմական բնագավառի համագործակցության վերաբերյալ պայմանագիրը, որը նախատեսում էր համագործակցություն ռազմական պատրաստության և հետազոտությունների, ինչպես նաև տեղեկատվության փոխանակման բնագավառում: Տեղի ունեցած բանակցությունների ընթացքում կողմերը քննարկեցին նաև տարածաշրջանային անվտանգության խնդիրներ: Հայաստանը Հունաստանի հետ իր հարաբերությունները կարգավո-

[571] Նույն տեղում, էջ 100:

րում էր նաև Հայաստան-Հունաստան-Իրան եռակողմ համագործակցության շրջանակներում: Նրանց բանակցությունների արդյունքում ստորագրվեցին էներգետիկայի, տրանսպորտի և առևտրի բնագավառում համակողմանի պայմանագրեր: Հունաստանը պատրաստակամություն հայտնեց օժանդակել Հայաստանին Ժնևի եվրոպական կառույցներին ինտեգրվելու և ՆԱՏՕ-ի հետ համագործակցությունը զարգացնելու համար:

Ռումինիան առաջին պետություններից էր, որ ճանաչեց Հայաստանի Հանրապետության անկախությունը: Մինչ այդ հայ ու ռումին ժողովուրդների միջև բարեկամական համագործակցության կապերը միակողմանիորեն կամ խորհրդային միջնորդությամբ էին ընթանում: 1991 թ. Հայաստանի և Ռումինիայի միջև հաստատվեցին ուղիղ, իրավահավասար պետական կապեր: Անցած ինը տարիների ընթացքում երկու երկրների միջև տեղի են ունեցել կառավարական բարձր և այլ մակարդակների պաշտոնական աճ֊ուրդներ ու պատվիրակությունների այցելություններ, հանդիպումներ, որոնց ընթացքում ստորագրվել են 30 միջպետական պայմանագրեր և համաձայնագրեր: 1994 թ. Բուխարեստում բացվեց Հայաստանի Հանրապետության դեսպանությունը: 1999 թ. փետրվարի 10-ից Երևանում գործում է Ռումինիայի դեսպանությունը: Երևան ժամանեց Ռումինիայի արտակարգ և լիազոր դեսպան Պավել Պլատոնոն, որը ջերմ ընդունելության արժանացավ: Նրա ակտիվ ու բազմակողմանի գործունեության հետևանքով աշխուժացավ նաև Հայաստան-Ռումինիա ընկերակցության գործունեությունը: 1998-1999 թթ. երկու երկրների նախագահների միջև կայացած հանդիպման և բանակցությունների արդյունքում համաձայնություն ձեռք բերվեց Վրաստանի սևծովյան նավահանգիստներից մինչև Կոնստանցա հայկական բեռների համար լաստանավով գետանց բացելու, ինչպես նաև երկկողմ համագործակցությունը Տրասեկա ծրագրի մասնակցության գործում և փոխգործակցությունը Սևծովյան տնտեսական համագործակցության շրջանակներում[572]: Հայաստանի և Ռումինիայի պաշտպանության նախարարների փոխադարձ այցերի ընթացքում ստորագրվեց նաև ռազմական համագործակցության մասին համաձայնագիր: Ռու-

[572] Հայաստանի Հանրապետության ամփոփ ժամանակագրություն 2000, էջ 49:

մինիայի Հանրապետության նախագահ Էմիլ Կոնստանտինեսկուի 1999 թ. Հայաստան կատարած այցելության ժամանակ երկու երկրների միջև ստորագրվեց քաղաքական, մշակութային տնտեսական համագործակցության և բարեկամության պայմանագիր: 2000 թ. ապրիլի 5-ին ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանը ժամանեց Բուխարեստ, որտեղ էլ Ռումինիայի նախագահի հետ համատեղ ստորագրեցին նոր համաձայնագրեր երկու երկրների քաղաքական, տնտեսական, մշակութային, գիտական և այլ բնագավառներում համագործակցության մասին[573]: Դրանք վերաբերում էին արվեստի, ցուցահանդեսների, կրթության, լուսավորության ներկայացուցիչների փոխանակման, տուրիզմի զարգացման, տնտեսական և առևտրական հարաբերությունների կատարելագործման հարցերին, ինչպես նաև կարևորվեց Բուխարեստի զորակցությունը հայկական արտաքին քաղաքականության եվրոպական ուղղությանը: Բանակցությունների ավարտին Ռ. Քոչարյանը նշեց, որ «Ռումինիան Հայաստանի համար մեծ հետաքրքրություն է ներկայացնում նաև այն պատճառով, որ 2001 թվականին նախագահելու է ԵԱՀԿ-ում, որի Մինսկի խումբը զբաղվում է ղարաբաղյան հակամարտության կարգավորմամբ»[574]:

Բարեկամական հարաբերություններ հաստատվեցին նաև Բուլղարիայի հետ: Դրանք կառուցվեցին հայ-բուլղարական պաշտոնական պատվիրակությունների փոխադարձ այցերի շնորհիվ 1994 թվականից սկսած՝ երկու երկրների միջև ստորագրվեցին երկու տասնյակից ավելի միջպետական համաձայնագրեր: 1999 թ. մարտին Բուլղարիայի Ժողովրդական ժողովի պատվիրակության՝ Հայաստան կատարած այցելությունների և հանրապետության ղեկավարության հետ հանդիպումների ընթացքում քննարկվեցին տնտեսական համագործակցության մի շարք հարցեր՝ տրանսպորտային ուղիների զարգացման խնդիրները Տրասեկա և Իննգեյթ ծրագրերի շրջանակներում և երկկողմ հարաբերությունների համատեքստում[575]: Առևտրատնտեսական հարաբերությունների

---

[573] Տե՛ս նույն տեղում, էջ 62:
[574] Տե՛ս Օսկանյան Վ., նշված աշխ., էջ 101:
[575] Տե՛ս Սինասյան Է., Հայ-բուլղարական հարաբերությունները ՀՀ անկախության շրջանում (1991-2008 թթ.), «Հայ-բուլղարական հարաբերությու-

զարգացման նպատակով որոշվեց ստեղծել միջկառավարական հանձնաժողով: Միաժամանակ համաձայնություն ձեռք բերվեց Հայաստանի և Վրաստանի անմիջական մասնակցությամբ Տրասեկա ծրագրի շրջանակներում 8-րդ տրանսպորտային միջանցքի ձևավորման հարցում, որի մեջ պետք է ընդգրկվեին նաև Իտալիան, Ալբանիան և Մակեդոնիան: Կողմերը պայմանավորվեցին նաև ձեռք բերված փորձի փոխանակման վերաբերյալ: Հայ-բուլղարական դարավոր բարեկամության հետագա ամրապնդման ու զարգացման գործում կարևոր նշանակություն ունեցավ Բուլղարիայի Հանրապետության նախագահ Պետր Ստոյանովի պաշտոնական այցը Հայաստան 1999 թ. դեկտեմբերի 1-ին: Անդրադառնելով հայ-բուլղարական հարաբերություններին՝ Պ. Ստոյանովն ասաց. «Իմ կարծիքով հայ-բուլղարական հարաբերությունները միշտ փայլուն են եղել, նրանք կարող են ծառայել որպես լավ հարաբերությունների օրինակ: Եվ այս առումով մենք՝ քաղաքական գործիչներս, պարտական ենք մեր ժողովուրդներին: Եվ մենք պետք է էլ ավելի աշխատենք, որպեսզի կարողանանք ավելի աշխույժ առևտրական, տնտեսական, մշակութային համագործակցություն ունենալ»[576]: Երկու երկրների նախագահների միջև ստորագրվեց համատեղ հայտարարություն: Ընդունվեց ՀՀ և ԲՀ կառավարությունների միջև մշակույթի, գիտության և կրթության բնագավառներում համագործակցության ծրագիր, ստորագրվեց 6 համաձայնագիր՝ մաքսային բնագավառում համագործակցության և փոխօգնության, փոստի և հեռահաղորդակցության ոլորտում համագործակցության, համակցված փոխադրումների, զբոսաշրջիկության բնագավառներում համագործակցության, ՀՀ վիճակագրության, պետական ռեգիստրի և վերլուծության նախարարության ու ԲՀ վիճակագրության ազգային ինստիտուտի միջև համագործակցության մասին[577]: Համաձայնագրի ստորագրումից հետո Երևանի քաղաքապետարանի որոշմամբ Պետր Ստոյանովիչին շնորհվեց Երևանի պատվավոր քաղաքացու կոչում, որոշվեց Երևանում բացել Բուլղարիայի դեսպանատուն:

ներ. անցյալը, ներկան և ապագան», միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, 2009, էջ 96:

[576] Տե՛ս նույն տեղում, էջ 98:

[577] Նույն տեղում, էջ 99:

Հայաստանի Հանրապետությունը դիվանագիտական հարաբերություններ հաստատեց Հարավսլավիայի, Խորվաթիայի և Սլովենիայի հետ: 1999 թ. մարտի 2-ին ՀՀ նախագահին իր հավատարմագիրը հանձնելու ժամանակ Հայաստանում Սլովենիայի նոր նշանակված դեսպանը նշեց իր երկրի շահագրգռվածությունը Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման գործում՝ ընդգծելով երկկողմ հարաբերությունների զարգացման կարևորությունը տարածաշրջանի երկրների համար[578]: Սլովենիան Արևելյան Եվրոպայի այն երկրներից է, որը կարողացավ կարճ ժամանակամիջոցում հաղթահարել անցումային շրջանի դժվարությունները: Ըստ ՀՀ նախագահի՝ Հայաստանի համար հետաքրքիր է այդ փորձը: Կարևորվեց նաև հայ սլովենական կապերի ընդլայնումը, տնտեսական համագործակցության և միջազգային կազմակերպությունների շրջանակներում համագործակցության խորացումը:

Հայաստանի Հանրապետությունը տնտեսական և քաղաքական ու մշակութային բնագավառներում երկկողմանի համաձայնագրեր կնքեց նաև Կիպրոսի հետ:

Պասիվ էին Հայաստանի հարաբերությունները Վիշեգրադյան խմբի (Լեհաստան, Հունգարիա, Չեխիա, Սլովակիա) և սկանդինավյան ու մերձբալթյան երկրների հետ: Սլովակիայի հետ հարաբերություններում դրական տեղաշարժեր կատարվեցին՝ կապված Սլովակիայի Հանրապետության կառավարական պատվիրակության Հայաստան կատարած այցի հետ: 2000 թվականի փետրվարի 2-ին Երևան ժամանած Սլովակիայի կառավարական պատվիրակության հետ Հայաստանի կառավարությունը կնքեց առևտրատնտեսական և գիտատեխնիկական համագործակցության համաձայնագիր, ստորագրվեց նաև արտաքին գործերի նախարարությունների համագործակցության մասին արձանագրություն: Դրանով Հայաստանը և Սլովակիան կատարեցին համագործակցության առաջին քայլերը:

2000 թ. մարտի 15-18-ը ՀՀ արտաքին գործերի նախարար Վ. Օսկանյանը իր մերձբալթյան շրջագայության շրջանակում հանդիպելով Լատվիայի, Լիտվայի և Էստոնիայի նախագահների

[578] Տես Օսկանյան Վ., նշված աշխ., էջ 96:

հետ՝ ստորագրեց համատեղ կոնվենցիա՝ եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու մասին, ինչպես նաև ընդունեց արձանագրություն արտաքին գործերի նախարարությունների համագործակցության, օդային փոխադրումների և միջազգային կազմակերպություններում և եվրոպական կառույցներում Հայաստանի և մերձբալթյան երկրների համագործակցության վերաբերյալ[579]:

Կարևոր աշխատանքներ կատարվեցին արաբական աշխարհի հետ Հայաստանի կապերի հաստատման և ամրապնդման ուղղությամբ:

Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության կարևորագույն ուղղություններից է բարեկամական հարաբերությունների զարգացումը Մերձավոր և Միջին Արևելքի արաբական երկրների՝ Եգիպտոսի, Սիրիայի, Լիբանանի, Ալժիրի, Մարոկկոյի և Օմանի հետ: Հետևողականորեն զարգանում էին Հայաստանի ավանդական կապերը այս երկրների հետ, որոնք առկա ծեռքբերումներով հանդերձ դեռևս ունեին հետագա առաջընթացի մեծ ներուժ: Հայաստանի շահագրգռվածությունը նրանց հետ հարաբերությունների հաստատման ու զարգացման գործում բացատրվում էր ոչ միայն պատմամշակութային դարավոր կապերով, այլև հայկական գաղթօջախների առկայությամբ, արաբական երկրների ռազմական և տնտեսական ներուժով և այլն:

1992 թ. դիվանագիտական հարաբերություններ հաստատվեցին Սիրիայի, Եգիպտոսի, Լիբանանի, Ալժիրի, Մարոկկոյի և Օմանի հետ: Հատկապես սերտ համագործակցություն հաստատվեց Եգիպտոսի, Լիբանանի և Սիրիայի հետ: Հանրապետության նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը, 1992 թ. ապրիլ-մայիսին այցելեց Եգիպտոս և Սիրիա: Այս երկրների հետ ստորագրվեցին տնտեսական համագործակցության մի շարք պայմանագրեր: 1993-95 թթ. Եգիպտոսի, Սիրիայի և Լիբանանի հետ ՀՀ-ն ստորագրեց համագործակցության և փոխօգնության երկու տասնյակից ավելի պայմանագրեր ու համաձայնագրեր: 1993 թվականից Երևանում գործում են Եգիպտոսի, իսկ 1997 թվականից՝ Լիբանանի և Սիրիայի դեսպանությունները: Իրենց ակտիվ աշխատանքներով հարաբերությունների խորացմանը մեծապես նպաստեցին արաբական

[579] Տե՛ս նույն տեղում, էջ 89:

երկրներում գործող հայկական դիվանագիտական ներկայացուցչությունները՝ հայկական դեսպանությունները Կահիրեում, Դամասկոսում, Բեյրութում և գլխավոր հյուպատոսությունը Հալեպում:

1997 թ. մարտին կայացան ՀՀ արտգործնախարարի այցելությունները Մերձավոր և Միջին Արևելքի մի շարք երկրներ՝ Սիրիա, Լիբանան, Հորդանան, Եգիպտոս: Նույն թվականի մայիսին Եգիպտոսի Արաբական Հանրապետության ժողովրդական ժողովի նախագահի հրավերով Կահիրե մեկնեց ՀՀ Ազ նախագահի պատվիրակությունը: Երկկողմանի փոխայցելությունների ընթացքում համաձայնագրեր ստորագրվեցին քաղաքական և մշակութային համագործակցության բնագավառներում[580]:

Երկու երկրների համատեղ տնտեսական հանձնաժողովի երկրորդ նիստը տեղի ունեցավ 1999 թ. նոյեմբերին Երևանում: Այստեղ նշվեց, որ առևտրատնտեսական համագործակցության մակարդակը չի արտացոլում երկու երկրների իրական հնարավորությունները, կարևորվեց նրանց միջև օդային ուղիղ չվերթի հաստատումը, ինչպես նաև երկուստեք տնտեսական փոխշահավետ կապերի զարգացման անհրաժեշտությունը:

Հայ-սիրիական հարաբերությունների հիմքում ընկած է դարերի պատմություն ունեցող բարեկամությունը: Երկու երկրների միջև առկա էին քաղաքական, տնտեսական և մշակութային ոլորտներում համագործակցությունը, միջխորհրդարանական կապերի ընդլայնումն ու պատվիրակությունների փոխայցերը: Ինչպես ընդգծվեց ՀՀ խորհրդարանի նախագահի և Հայաստանում Սիրիայի Արաբական Հանրապետության ժամանակավոր հավատարմատարի 1999 թ. դեկտեմբերի 9-ի հանդիպման ժամանակ, «Հայաստանի և Սիրիայի ղեկավարների ջերմ հարաբերությունները, միջխորհրդարանական փոխայցերը կօժանդակեն հայ-սիրիական համագործակցության ընդլայնմանը հատկապես ներդրումների ապահովության առումով և կնպաստեն տնտեսության զարգացմանը»[581]:

Հայ-լիբանանյան բարեկամական հարաբերությունների զարգացման համար մեծ նշանակություն ունեցավ 1997 թ. հոկտեմբերին

[580] Նույն տեղում, էջ 115:
[581] Հայաստանի Հանրապետության ամփոփ ժամանակագրություն 1999, էջ 56:

Լիբանանի վարչապետ Ռաֆիկ Հարիրիի այցը Հայաստան և «ՀՀ-ի և ԼՀ-ի միջև բարեկամության և համագործակցության մասին» պայմանագրի ստորագրումը: Իսկ 1998 թ. սեպտեմբերին ՀՀ վարչապետ Արմեն Դարբինյանի Լիբանան կատարած պաշտոնական այցի ժամանակ ստորագրվեց ՀՀ և ԼՀՀ կառավարությունների միջև «Եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու վերաբերյալ» «Զբոսաշրջության բնագավառում համագործակցության մասին», «Բարձրագույն կրթության և գիտության բնագավառում համագործակցության մասին», «Միջնակարգ կրթության բնագավառում համագործակցության մասին» համաձայնագրերը[582]: Լիբանանի և Հայաստանի հարաբերությունների հետագա խորացման համար մեծ կարևորություն ունեցավ 2000 թ. փետրվարի 15-ին ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի գլխավորած Հայաստանի պատվիրակության պաշտոնական այցը Բեյրութ[583]: Նրա և Լիբանանի Հանրապետության նախագահ Էմիլ Լահուդի միջև ստորագրվեցին մի շարք պայմանագրեր՝ միջազգային փոխադրումների, միջտնտեսական, միջխորհրդարանական կապերի և մշակութային համագործակցությունների վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետությունը դիվանագիտական հարաբերություններ է հաստատել Քուվեյթի հետ՝ 1994 թ., Եմենի՝ 1995 թ., Հորդանանի՝ 1996 թ.: Այս երկրների հետ բարեկամական կապերի ամրապնդումը մեծապես նպաստում էր նաև այդ երկրների հայկական համայնքների գործունեության աշխուժացմանը: Հայաստանը փորձում էր նորմալ փոխհարաբերություններ հաստատել Իսրայելի հետ: Հայաստանի Հանրապետությունն ուներ իր պատվո հյուպատոսությունը Իսրայելում: Իսրայելը հայտնի էր իր աղրբեջանամետ դիրքորոշումով: Թուրքիայի հետ նա ուներ սերտ հարաբերություններ, որը կարող էր վնասել Հայաստանին: Ահա թե ինչու հարկավոր էր այս երկրներում պահպանել ուղղակի շփումներ՝ զերծ մնալով վտանգներից: Հայ-իսրայելական հարաբերությունների նորմալացման գործում մեծ նշանակություն ունեցավ ոչ միայն ՀՀ արտաքին գործերի նախարարի այցը Իսրայել 1999 թ., այլև ՀՀ նախագահի ղեկավարությամբ պատվիրակության այցը

[582] Նույն տեղում, էջ 42:
[583] Նույն տեղում, 2000, էջ 64:

երուսաղեմ 2000 թ. հունվարի 20-ին[584]: Վարչապետ Էհուդ Բարաքի և Նախագահ Էյզեր Վայցմանի հետ Ռ. Քոչարյանի հանդիպման ժամանակ քննարկվեցին հայ-իսրայելական երկկողմ հարաբերություններին և իսրայելա-պաղեստինյան հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացի զարգացմանը վերաբերող հարցեր: ՀՀ նախագահը, կարևորելով հայ-իսրայելական հարաբերությունների նորմալացումը, նշեց. «Չէինք ցանկանա, որ Թուրքիայի և Իսրայելի միջև հարաբերություններն ինչ-որ տեղ հակահայկական, Հայաստանի դեմ ուղղված բնույթ կրեին և մեր հարաբերությունները պետք է զարգացնել»[585]:

Այցի շրջանակներում ՀՀ և Իսրայելի պետության առողջապահության նախարարները համագործակցության ծրագիր ստորագրեցին ՀՀ և ԻՊ առողջապահության և բժշկության բնագավառում՝ նախատեսելով մասնագետների փոխանակում, քույր հիվանդանոցների միջև ուղղակի կապերի ստեղծում, իսրայելական կողմից ՀՀ բուժհիմնարկներում ներդրումների կատարում և համագործակցություն[586]:

Այսպիսով, Հանրապետության արտաքին քաղաքականությունը ելնում էր երկրի անվտանգության շահերից և թելադրված էր նրա աշխարհաքաղաքական վիճակով: Եթե Ռուսաստանի հետ հարաբերություններն ուղղված էին գլխավորապես ռազմավարական ու տնտեսական համագործակցության ամրապնդմանը, ապա ԱՄՆ-ի հետ՝ տնտեսական և միջազգային համագործակցության ընդլայնմանը: Հայաստանի արտաքին քաղաքականությունը միտված է Կովկասում անվտանգության տարածաշրջանային համակարգի ստեղծմանը, որը հնարավոր է միայն բանակցությունների ընթացքում ընդունված փոխզիջումների և ժողովրդավարության սկզբունքների ամրապնդման դեպքում:

[584] Տե՛ս նույն տեղում, 2000, էջ 58:
[585] Նույն տեղում:
[586] Նույն տեղում, էջ 61:

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ
ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՌՔ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ա. Կրթամշակութային կապերը

Ճակատագրի բերումով զրկվելով ազգային պետականությունից՝ հայ ժողովուրդը դարեր շարունակ իր հայրենի երկրում ենթարկվել է օտար իշխողների բիրտ հալածանքներին: Ժողովրդի տարբեր հատվածներ տարբեր ժամանակներում հարկադրված հեռացել են հայրենիքից և բնակություն հաստատել աշխարհի տարբեր երկրներում:

ԽՍՀՄ փլուզումից հետո նպաստավոր պայմաններ ստեղծվեցին ինչպես Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների բազմակողմանի ամրապնդման, այնպես էլ նախկին խորհրդային հանրապետությունների հայկական գաղթօջախների հետ հարաբերությունների կարգավորման ու զարգացման համար: Հայաստանի անկախացումը նոր փուլ նշանավորեց Հայրենիք-Սփյուռք փոխհարաբերություններում: Ամենատարբեր մակարդակներով երկխոսություններ սկսվեցին անհատների ու կազմակերպությունների, պետական գործիչների միջև: Բայց հեշտ չէր վերականգնել տարիներով խզված կապը, մանավանդ որ հայության երկու հատվածներն իրենց աշխարհայացքով, ապրելակերպով, կենցաղով շատ էին հեռացել միմյանցից: Իրենց հերթին Հայաստանի նոր իշխանությունները հաճախ թույլ էին տալիս ոչ ճիշտ մոտեցումներ, որոնք չէին նպաստում հարաբերությունների կարգավորմանը: Այսպես, անկախությունից հետո հայրենիքում գործելու լայն ասպարեզ ստացան Սփյուռքի ավանդական կուսակցությունները, որոնց դերն անգնահատելի էր արտերկրում հայապահպանության տեսակետից: Հայրենիք գալով՝ նրանք (ՀՅԴ, ՀՌԱԿ, Հնչակ) փորձեցին մասնակից դառնալ երկրի կառավարմանը: Ցավոք, ՀՀԾ-ն հալածական բիրտ քաղաքականություն որդեգրեց ավանդական կուսակցությունների հանդեպ (ՀՅԴ-ն արգելվեց, ՀՌԱԿ-ը պա-

ռակտվեց): Հայաստանի իշխանությունները փորձեցին վարկաբեկել այդ կուսակցությունների գործունեությունը նաև արտասահմանում, որի հետևանքով Սփյուռքում վտանգվեցին ազգապահպանման գործին նվիրված շատ կազմակերպություններ, որոնք հիմնականում գործում էին կուսակցությունների հովանու ներքո: Դա մեծ հարված էր նաև Հայրենիք-Սփյուռք հարաբերություններին: Սփյուռքի հետ հարաբերությունները ստացան տարերային բնույթ և հաճախ կախված էին այս կամ այն ղեկավար գործչի նախասիրություններից ու կարողությունից:

Նոր պայմաններում Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները արդյունավետ կազմակերպելու գործում կարևոր նշանակություն ունեցավ դեռևս 1964 թ. ստեղծված Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի աշխատանքների վերակառուցումը: 1991 թ. մշակվեց կոմիտեի գործունեության նոր կանոնադրությունը, որտեղ հատուկ շեշտադրվում էին Հայրենիքի և ներքին ու արտաքին Սփյուռքի մերձեցման աշխատանքների կարգավորման, համատեղ կառույցների ստեղծման, տնտեսական ու մշակութային մերձեցման, գիտակրթական համագործակցության խնդիրները[587]:

Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների սերտացման համար հզոր խթան հանդիսացավ Արցախի ազատագրական պայքարը: Այդ պայքարը լայն արձագանք գտավ բոլոր գաղթավայրերում, մարտնչող Արցախին սատար կանգնեց ողջ հայությունը թե՛ Հայաստանում և թե՛ արտերկրում: Ամենուր հայերը համոզվեցին, որ թուրք-ազերիական բռնություններին դիմակայելու հիմնական ուղին միասնությունն ու համախմբվածությունն է: Այդ գիտակցությունն էլ ավելի ամրապնդվեց 1988 թ. դեկտեմբերյան ավերիչ երկրաշարժի հետևանքները վերացնելու համար ծավալված համազգային պայքարով: Երկրաշարժը, նրա մեծածավալ ավերումները և տասնյակ հազարավոր զոհերը Հայրենիքում և Սփյուռքում առաջին պլան մղեցին ազգապահպանման խնդիրը և մշակվեց համապատասխան գործելակերպ: Արցախի ազատագրական շար-

[587] Սինասյան Է., Վարդանյան Ա., Հայրենիք-Սփյուռք առնչությունները անկախության տարիներին (1991-2009), Ստեփանակերտ, 2010, էջ 56:

ժումն ու երկրաշարժը ցնցելով ողջ հայությանը՝ միաժամանակ ամրապնդեցին ազգային միասնության գաղափարը:

Չնայած դրան՝ բացակայում էր այն համազգային ծրագիրը, որի իրագործմանը պետք է լծվեին բոլոր հայերը՝ անկախ իրենց բնակության վայրից: Այժմ նոր հարթության վրա էին դրվում Հայրենիք-Սփյուռք առնչությունները: Հայաստանը պետք է նպաստեր Սփյուռքի հայապահպանման գործին, իսկ Սփյուռքն օգնելու էր Հայաստանի անկախության ամրապնդմանն ու տնտեսական զարգացմանը: Հայ ժողովուրդը համոզվեց, որ Հայրենիքն ու Սփյուռքը այլևս առանձին-առանձին գոյություն ունենալ չեն կարող, որ նրանց փոխհարաբերությունները պետք է խարսխվեին «Մեկ հայրենիք, մեկ ազգ» կարգախոսին: Այդ հարաբերությունները պետք է փոխշահավետ լինեին: Սփյուռքը չպետք է դիտվեր որպես Հայաստանի համար մշտական օգնության միջոց, քանզի նա նույնպես օգնության կարիք ուներ, որին մեծապես կարող էր նպաստել Հայրենիքը: Սփյուռքին սպառնում է ձուլման վտանգը, մանավանդ այն պատճառով, որ նոր սերնդի զգալի մասն արդեն կապված չէր ազգային կառույցների և մշակույթի հետ, ուստի այդ վտանգը շատ իրական էր:

Այս և այլ հարցերի կարգավորման նպատակով Սփյուռքահայության հետ մշակութային կապի լուծարված կոմիտեի փոխարեն 1996 թ. հանրապետության արտաքին գործերի նախարարությունում ստեղծվեց Սփյուռքի հետ կապերի ստորաբաժանում[588]:

Հայաստան-Սփյուռք փոխհարաբերություններում առաջնային էր հոգևոր կապերի ամրապնդումը, այդ ոլորտում միասնական ծրագրերի մշակումն ու կենսագործումը:

Հայ ժողովրդի ինքնագիտակցության զարգացման և հայապահպանման առաջնահերթ գործոններից մեկը մայրենի լեզվով մատաղ սերնդի կրթությունն է: Ինչպես նախկինում, նոր պայմաններում նույնպես սփյուռքահայ ուսուցիչներին օգնելու, նրանց վերապատրաստման նպատակով Երևանում կազմակերպվում էին դասընթացներ: ԱՄՆ-ից, Կանադայից, Ֆրանսիայից, Անգլիայից,

[588] Տե՛ս նույն տեղում, էջ 57:

Սիրիայից, Իրանից և այլ երկրներից եկած ուսուցիչները մասնագիտական օգնություն ստանալուց բացի, շրջագայում էին Հայաստանում, ծանոթանում հայրենիքի հոգևոր-մշակութային արժեքներին: Պահպանվեց նախկին ավանդույթը. տարբեր գաղթավայրերից Հայաստանի բուհերում սովորելու էին գալիս մեծ թվով սփյուռքահայ երիտասարդներ, որոնք բուհերն ավարտելուց հետո վերադառնում էին իրենց բնակավայրերը: 1997 թ. Հայաստանի պետական բուհերում սովորում էր արտերկրի 818 ուսանող, որոնցից 314-ը՝ պետպատվերով, 509-ը՝ վճարովի: Նույն տարում իրենց ուսումը ասպիրանտուրայում շարունակում էին 97 հոգի: Դրանց հիմնական մասը մասնագիտանում էր հայագիտության և բժշկության գծով[589]:

Սփյուռքում շարունակում էին գործել բազմաթիվ կրթարաններ, որոնց ավանդը հայապահպանման գործում դժվար է գերագնահատել: 1998 թ. Սփյուռքում կային 160-ից ավելի ամենօրյա վարժարաններ և նույնքան կիրակնօրյա դպրոցներ: Միայն Ֆրանսիայում գործող 6 հայկական վարժարաններում (Պարսամյան, Համազգային, Փափազյան և այլն) սովորում էր 1466 աշակերտ, որոնց դասավանդում էր շուրջ 90 ուսուցիչ[590]: Դպրոցների ծախսերի մի մասը հոգում էին բարեգործները, մյուս մասը՝ ծնողները: Բայց Սփյուռքի հայկական դպրոցները բազում դժվարություններ ունեին, հատկապես ուսումնական գործընթացի կարգավորման գործում: 1996 թ. Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանում հիմնվեց «Սփյուռք» գիտաուսումնական կենտրոնը, որը Սփյուռքի ուսումնական հաստատությունների համար սկսեց մշակել ուսումնակրթական ծրագրեր, որոնց հիման վրա ստեղծված դասագրքերը առաքվում էին տարբեր երկրներ: Ջավախքի դպրոցները նույնպես ստանում էին դասագրքեր, ծրագրեր, գեղարվեստական գրականություն: Կենտրոնը զբաղվում էր նաև սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման, հայագիտական առարկաների գծով ուսուցիչների պատրաստման հարցերով:

---

[589] Տե՛ս նույն տեղում, էջ 58:
[590] Տե՛ս նույն տեղում, էջ 59:

Սփյուռքահայ մատաղ սերնդի հայեցի դաստիարակության գործում անգնահատելի էր Սփյուռքի այնպիսի ուսումնական և դաստիարակչական կենտրոնների դերը, ինչպիսիք էին Թեքեյան մշակութային միությունը, Մխիթարյան միաբանությունը, Մուրադ-Ռաֆայելյան վարժարանը, Մելգոնյան կրթական հաստատությունը և այլն, որտեղ հարյուրավոր երիտասարդներ են սովորել ու սովորում, որոնցից շատերը ուսումը շարունակում էին Եվրոպայի և Հայաստանի բուհերում:

Դպրոցաշինությունը Սփյուռքում լայն ծավալ ստացավ 1990-ական թվականներին: Դպրոցների շենքերը կառուցվում էին հատուկ ֆոնդերի և բարեգործների միջոցներով: Անգնահատելի են Ալեք Մանուկյանի, Գաբրիել Ինջեջիկյանի, Մաթևոս Ֆերահյանի և ուրիշների ներդրումները դպրոցաշինության: Այդ գործում մեծ է Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) կատարած աշխատանքը[591]:

Սփյուռքահայ դպրոցները գրականության մեծ կարիք էին զգում: 1991 թ. հուլիսին «Հայրենիքի ձայն» թերթի միջոցով հայրենակիցներին դիմեց Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն՝ նշելով, որ արտերկրի հայությունն ապրում է ինքնաճանաչման, ազգային զարթոնքի շրջան, որ հատկապես նոր սերնդի մեջ աճել է հետաքրքրությունը հայ հոգևոր արժեքների նկատմամբ, և նա տոգորված է վճռականությամբ՝ տեր կանգնելու սեփական մշակույթին: Բայց հայ գաղթավայրերի, մշակութային կենտրոնների ու դպրոցների գրադարանները աղքատ են, հայ պատանիներն ու երիտասարդները հնարավորություն չունեն հաղորդակցվելու հայրենի գրականությանն ու մշակութային նվաճումներին:

Կոչը լայն արձագանք գտավ. Հայաստանի Հանրապետությունում հավաքվեց մեծ քանակությամբ գրականություն և ուղարկվեց տարբեր գաղթավայրեր:

Չնայած Հայաստանի Հանրապետության տնտեսական ծանր

---

[591] Պետրոսյան Ք., Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները 1988-2001 թթ., Երևան, 2011, էջ 142:

պայմաններին՝ Հայրենիք-Սփյուռք կապերն ամրապնդելու նպատակով 1991 թ. բացվեցին Երևանի հայկական քոլեջ-համալսարանը, մենեջմենթի բարձրագույն դպրոցը, որտեղ հիմնականում սովորում էին արտասահմանից եկած ուսանողները: Նույն տարում կառավարության որոշմամբ Երևանում հիմնվեց Հայաստանի Ամերիկյան համալսարանը (ՀԱՀ), որը նախատեսում էր բարձրագույն կրթություն տալ ՀՀ-ի և այլ երկրների ուսանողներին՝ ամերիկյան կրթական համակարգին ու մակարդակին համապատասխան: Համալսարանը սկսեց գործել Հայաստանի ամերիկյան համալսարան ընկերակցության (ՀԱՀԸ) և Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) գործուն օժանդակությամբ:

ՀԱՀ-ը սերտորեն համագործակցում էր Հայաստանի պետական բուհերի հետ, մշակում համատեղ ծրագրեր:

Հետպատերազմյան շրջանում տարբեր ճակատագրեր ու զարգացման տարբեր հնարավորություններ ունեցան Հարավարևելյան Եվրոպայի սոցիալիստական երկրների հայկական գաղթօջախները:

Բուլղարահայ գաղութն իր քանակով Եվրոպայում երկրորդն էր Ֆրանսիայից հետո: Այստեղ ազգային խնդիրները հետին պլան էին մղված: Միայն 1990-ական թվականներին վերականգնվեց գաղթօջախի ազգային կյանքը, որը սերտ կապեր հաստատեց հայրենիքի հետ: Երկրորդ աշխարհամարտից հետո իր գոյությունը դադարեցրել էր նաև Ռումինիայի «Հայոց միությունը», որը վերակենդանացավ 1990-ականների սկզբներին: Այստեղ ևս, ինչպես Բուլղարիայում, առաջնահերթ նշանակություն էր տրվում հայոց դպրոցական գործին: Հայաստանի Հանրապետության օգնությամբ ստեղծվեցին նախ կիրակնօրյա, ապա և հանրակրթական հայկական դպրոցներ:

1960-1970-ական թվականներին Գերմանիայում ստեղծված հայկական գաղթավայրի զարթոնքը սկզբնավորվեց 1990-ական թվականներին՝ կապված Արցախի ազատագրական պայքարի և երկրաշարժի հետ: Երկրի տարբեր քաղաքների հայկական եկեղեցիներին առընթեր ստեղծվեցին կիրակնօրյա դպրոցներ, որոնց նպատակը հայ նոր սերնդին ձուլումից փրկելն էր:

Կրթամշակութային երկարատև նիրհից արթնանում էր ներքին

սփյուռքի հայությունը՝ ձեռնամուխ լինելով ազգապահպանության գործին: Այդ տեսակետից կարևոր աշխատանք էր ծավալում Սանկտ Պետերբուրգի «Հայկական տուն» ընկերությունը, որի հիմնական նպատակն էր Պետերբուրգի զանազան կազմակերպությունների, ինչպես նաև անհատ գործիչների միջև հոգևոր մշակութային և գործարար կապերի ամրապնդումը: 1993 թ. քաղաքի իշխանությունները հայկական համայնքին վերադարձրին հայոց եկեղեցին, սկսեց լույս տեսնել «Հավատամք» ամսաթերթը: Տեղի հայկական դպրոցները Հայաստանից ստացան անհրաժեշտ դասագրքեր ու դպրոցական պիտույքներ[592]: Եռանդուն ազգապահպան գործունեություն էր ծավալել Աստրախանի հայկական համայնքը, որը սերտորեն համագործակցում էր Հայաստանի հետ, կազմակերպում փոխադարձ այցելություններ: Առաջին քայլերն էր արվում քաղաքի հայությանը վերադարձնելու ազգային լեզուն: Ազգանվեր գործունեություն էր սկսվել Դնեպրոպետրովսկի հայկական համայնքում, որի ակտիվ միջնորդությամբ քաղաքի որոշ դպրոցներում, ուր մեծ էր հայ աշակերտների թիվը, մտցվել էր հայոց լեզու և գրականություն առարկան:

բ. Փոխներթափանցումներ արվեստի ոլորտում

Հայաստանի անկախացումից հետո արվեստի ոլորտում հայրենիք-Սփյուռք առնչությունները դրսևորվեցին տարբեր մակարդակներով ու բնույթով. պաշտոնական, պետական, անհատական, ինքնագործ և սիրողական խմբերի ու անհատների կողմից: Այդ տեսակետից կարևոր էր 1991 թ. մայիսին Երևանում հրավիրված սփյուռքահայ թատրոնների անդրանիկ փառատոնը, որի հիմնական նպատակն էր կապ հաստատել սփյուռքահայ մշակութային տարբեր կենտրոնների միջև և ամրապնդել այդ կապը հայրենիքի հետ: Փառատոնը բացեց Նյու Յորքի «Համազգային» թատերախումբը: Փառատոնի գլխավոր մրցանակը, որը կրում էր Վահրամ Փափազյանի անունը, շնորհվեց Լոս Անջելեսի «Վարդան Աճեմ-

[592] Տե՛ս նույն տեղում, էջ 46:

յան» թատերախմբին: Սփյուռքից հայրենիք ժամանած թատերախմբերը հանդես էին գալիս ոչ միայն Երևանում, այլև Գյումրիում, Վանաձորում և հանրապետության այլ քաղաքներում ու շրջաններում:

Հայրենիքում պարբերաբար կազմակերպվում էին փոխադարձ նկարչական ցուցահանդեսներ: Լոս Անջելեսի Թեքեյան միության կենտրոնում կազմակերպվեց սփյուռքահայ տաղանդավոր գեղանկարիչ Բյուզանդ Կոճամանյանի ցուցահանդեսը: Բացման առիթով հայրենասեր նկարիչն ասել էր. «Նկարներս կուզենայի Հայաստան ղրկել, կուզեի, որ Երևանը դառնա արվեստի թանգարանների երկիր, ինչպես Իտալիան»: Ամերիկահայ նկարիչ Մարկոս Գրիգորյանն իր թանկարժեք հավաքածուն նվիրաբերեց հայրենիքին: Ամերիկահայ հայտնի քանդակագործ Խորեն Տեր-Հարությունյանը հարյուրավոր արձաններ նվիրեց հայրենիքին[593]: 1997 թ. Բոստոնում բացվեց «Էլբակյանների արվեստը» ցուցահանդեսը, որը հնարավորություն տվեց Բոստոնի հայկական համայնքին և այլազգիներին մոտիկից առնչվելու Հայաստանի արվեստագետների տարբեր սերունդների ներկայացուցիչների ստեղծագործություններին: Տեղի ամերիկյան մամուլը բարձր գնահատեց ցուցահանդեսը՝ ընդգծելով, որ հայ ժողովուրդն իր զավակների միջոցով շարունակում է նորանոր արժեքներ մատուցել աշխարհին:

Արգենտինահայ համայնքում հայրենասիրական լայն աշխատանքներ ծավալած լուսանկարիչ Մարտին Բուքիսկյանի՝ Հայաստանը պատկերող գունավոր լուսանկարների ցուցահանդեսը ազգասիրական խոր զգացումներ էր առաջ բերել տեղի հայության մեջ: Նա լուսանկարչական ցուցահանդեսներ կազմակերպեց նաև Իրանում: Նկարիչ Արամ Ստեփանյանի ջանքերով իրանահայերի հնօրյա լուսանկարների հավաքածուի ցուցահանդես բացվեց Թեհրանի Արդի արվեստի պետական թանգարանում:

Հայրենիք-Սփյուռք մշակութային մերձեցմանը մեծապես նպաստում էին սփյուռքահայ մշակութային գործիչների այցերը Հայաստան: Հայրենիք էին գալիս Համազգային մշակութային

[593] Մինասյան Է., Վարդանյան Ա., նշված աշխ, էջ 61-62:

միության Լիբանանի և Սիրիայի մասնաճյուղերի պատվիրակությունները՝ իրենց կապերը գործնական հունի մեջ դնելու նպատակով: Կարևոր դեր էր հատկացվում երաժշտական և պարային խմբերի փոխայցելություններին:

Բեյրութի Համազգային մշակութային միության վարչության և Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի միջև պայմանագիր կնքվեց, որով վերջինս իր հովանավորության տակ վերցրեց «Բարսեղ Կանաչյան» երաժշտական ուսումնարանը՝ պարտավորվելով բարձրորակ մասնագետներ գործուղել այնտեղ:

Հայրենիք-Սփյուռք մշակութային հարաբերություններում կարևոր երևույթ էր 1993 թ. հունվարին հայկական մշակույթին նվիրված փառատոնը Իտալիայում, որի ընթացքում հայ արվեստագետները ցույց տվեցին իրենց կատարողական բարձր վարպետությունը, նաև դասախոսություններով լայնորեն պրոպագանդեցին հայկական արվեստը: Իտալիայի հասարակությունը և իշխանությունները հետաքրքրվեցին Հայաստանի արվեստով, որը միաժամանակ իտալահայերի մեջ արթնացրեց ազգասիրական-հայրենասիրական զգացումներ[594]: 1997 թ. ապրիլին Ստամբուլում համերգներով հանդես եկան Գյումրիի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի սաները, որը կարևոր իրադարձություն էր թուրքահայ համայնքի կյանքում: Ամերիկահայ գաղթօջախներում, հատկապես Կալիֆորնիայի հայկական շրջանակներում մեծ աշխատանք էր կատարում «Կոմիտաս» գեղարվեստական կազմակերպությունը:

Հայ արվեստի հետազոտողները Հայաստանում ավելի ու ավելի հաճախ էին դիմում սփյուռքահայ արվեստագետների՝ երգահանների, երաժիշտ կատարողների, գեղանկարիչների, թատերական գործիչների ստեղծագործությունների ուսումնասիրմանն ու տարածմանը: Ցիցիլիա Բրուտյանը իր «Հայ երաժշտական մշակույթի աշխարհասփուռ ընտրյալները» աշխատության մեջ ամփոփել էր 32 գաղթավայրերի շուրջ 350 երաժիշտների գործերը[595]: Գիրքը սփյուռքահայ երաժիշտներին հայրենիքում պրոպագանդելու լուրջ փորձ էր, որը նաև նպաստեց նրանց ստեղծագործությունների

[594] Տե՛ս նույն տեղում:
[595] Տե՛ս Հայոց Պատմություն, Բուհական դասագիրք, նույն տեղում, էջ 810:

ընդգրկմանը Հայաստանի երաժշտական ուսումնարանների ու դպրոցների ծրագրերում:

Հայաստանի անկախացումից հետո, երբ հանրապետությունից սկսված լայնածավալ արտագաղթի պատճառով բազմամարդ դարձան հատկապես Ռուսաստանի հայկական գաղթավայրերը և ստեղծվեցին նորերը, կարևորագույն նշանակություն ունեցավ նրանցում հայ մշակույթի օրերի կազմակերպումը: Օրինակ, 1993 թ. հունիսին Աստրախանում կազմակերպվեց հայկական մշակույթի օրեր, որին մասնակցեցին Ռուսաստանի հայկական մյուս համայնքների ներկայացուցիչներ, քաղաքական ու տնտեսական ղեկավարներ, գիտության և արվեստի գործիչներ:

Հայ արվեստի գործիչները պարբերաբար այցելում էին Ռուսաստանի զանազան նահանգներ, շրջաններ ու քաղաքներ: Հայկական մշակույթի օրերին, որպես կանոն, տեղի հեռուստատեսությամբ տրվում էին հաղորդումներ հայ արվեստի, նրա գործիչների ստեղծագործությունների, տվյալ հայկական համայնքի մասին: Հայ երաժշտության մասնագետները հաղորդումներով հանդես էին գալիս ռուսական լսարանի առջև: Նման միջոցառումները մեծապես նպաստում էին հայ համայնքների համախմբմանը, հայրենիքի հետ նրանց կապերի ամրապնդմանը:

գ. Գիտական կապերի ամրապնդումը

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո մեծաթիվ մտավորականների արտահոսքի պատճառով խիստ պակասել էր ՀՀ-ի գիտական ներուժը: Դրա պատճառը գիտության բնագավառում կառավարության սխալ քաղաքականությունն էր: Չնայած դրան՝ մեծ թվով հայրենանվեր գիտնականներ, հատկապես ավագ սերնդի ներկայացուցիչներից, շարունակեցին իրենց գիտական գործունեությունը հայրենիքում:

Ստեղծված նոր իրավիճակում կարևոր նշանակություն ստացավ Հայաստանի և Սփյուռքի գիտական ուժերի համախմբումը՝ որոշակի ծրագրեր իրականացնելու համար: Երևանում և Սփյուռքում հաճախակի գիտական նստաշրջաններ էին հրավիրվում, որ-

տեղ քննարկվում էին համատեղ հետաքրքրություն ներկայացնող հարցեր, ընդունվում համապատասխան որոշումներ:

1992 թ. հունիսին Երևանում կազմակերպված համահայկական գիտական նստաշրջանը նվիրված էր հայության տարբեր հատվածների համագործակցության ամրապնդման, ազգային համախմբման և հայապահպանության կարևոր հարցերին: Գիտաժողովը առաջարկեց լուրջ աշխատանքներ տանել տարբեր կուսակցությունների և մշակութային կազմակերպությունների միջև հակասությունների վերացման ուղղությամբ՝ դրանով իսկ նպաստելով ամբողջ հայությանը մեկ առանցքի շուրջ համախմբելու գործին:

Նշանակալի միջոցառում էր 1992 թ. հոկտեմբերին Երևանում տեղի ունեցած ԳԱԱ ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի, Երևանի պետական և Կալիֆորնիայի նահանգային համալսարանների համատեղ գիտաժողովը, որին մասնակցում էին ԱՄՆ-ից, Ֆրանսիայից և այլ երկրներից եկած մասնագետներ: 1997 թ. Բուլղարիայի «Երևան» կազմակերպության նախաձեռնությամբ Սոֆիայում կազմակերպված «Հայկական ոգու կենսունակությունը» գիտական կոնֆերանսում հետաքրքիր զեկուցումներ լսվեցին հայոց պատմության ու մշակույթի մասին, հայ-բուլղարական կապերի վերաբերյալ[596]:

Համահայկական գիտաժողովներում բազմիցս լուրջ անհանգստություն էր հայտնվում ներքին սփյուռքի ծանր վիճակի համար: Նախկին ԽՍՀՄ-ում տարվող այլազգիների ուծացման քաղաքականության հետևանքով Ռուսաստանում վերացվել էին ազգային բոլոր կազմակերպությունները: Բացի Վրաստանից, որտեղ հայկական ամուր համայնք կար՝ իր կրթամշակութային կազմակերպություններով, մնացած նախկին խորհրդային հանրապետություններում հայերի խոսակցական լեզուն հիմնականում ռուսերենն էր: Գիտաժողովներում Հայաստանի կառավարությունից պահանջում էին միջոցներ ձեռնարկել նաև ներքին Սփյուռքում եղած հայկական գաղթավայրերը ամրապնդելու համար:

---

[596] Մինասյան Է., Վարդանյան Ա., նշված աշխ., էջ 65:

դ. Մշակութային միջոցառումները

Սփյուռքի աճող սերնդի հայրենասիրական դաստիարակության կարևոր միջոց էր հայ գրքի պրոպագանդումը: Այդ տեսակետից օրինակելի աշխատանք էր կատարում Բուենոս-Այրեսի «Խրիմյան կրթական հիմնարկությունը», որի ջանքերով հայ գիրքը դուրս էր բերվում միջազգային ամենամյա ցուցահանդեսներ: Սփյուռքահայ գաղթավայրերում լայն տարածում գտավ 1999 թ. Շվեյցարիայում հրատարակված «Ղարաբաղի պատմական հուշարձանները» գունավոր քարտեզը, որի վրա պատկերված և ծանոթագրված վանքերի, եկեղեցիների, ամրոցների նկարները ցույց էին տալիս արցախահայության ստեղծագործական արարումները բազում դարերի ընթացքում: Հետագա տարիներին գաղթավայրերում լայն տարածում գտան Շահեն Մկրտչյանի՝ Արցախին նվիրված գրքերը և ալբոմները[597]:

Հայաստանի անկախությունից հետո Սփյուռքից Հայաստան վերադարձվեցին բազում մշակութային արժեքներ, այդ թվում՝ հայ մտավորականների արխիվներ ու գրադարաններ: Երևանի Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանը գաղթավայրերից ստացավ մի քանի հազար ձեռագրեր, գրքեր, ձայնագրություններ, այդ թվում՝ Ավ. Ահարոնյանի, Ն. Աղբալյանի, Ա. Չոպանյանի և այլոց անտիպ ստեղծագործությունները, նամակները, նյութերը: Այդ ձեռքբերումները շարունակվեցին նաև հետագայում:

ե. Սոցիալ-տնտեսական աջակցությունը Մայր Հայրենիքին

Անկախության տարիներին Հայրենիք-Սփյուռք հարաբերություններում կարևոր նշանակություն ստացավ տնտեսական աշխույժ համագործակցությունը: Հայաստանի իշխանությունները

---

[597] Տե՛ս Պետրոսյան Ք., նշված աշխ., էջ 158-159, Հայոց Պատմություն, Բուհական դասագիրք, նույն տեղում, էջ 812:

անկախության առաջին տարիներին, տնտեսական ծանր պայմաններից ելնելով, Սփյուռքին հատկացրին Հայաստանին «տնտեսական օժանդակողի» սահմանափակ դեր: Դա չէր կարող նպաստել Հայրենիք-Սփյուռք փոխհարաբերությունների կայունացման փոխշահավետ ռազմավարության մշակմանը: Հայաստանը պետք է Սփյուռքի տարբեր գաղթավայրերի հետ համագործակցության համապարփակ ծրագրեր մշակեր՝ հաշվի առնելով ոչ միայն հայրենիքի, այլև համայնքների շահերը: Հայրենիքի անկախ գոյությունն ու հզորությունը սփյուռքահայության հարատևման երաշխիքն էր, իսկ վերջինիս կենսունակությունն ու բարեկեցությունը՝ հայրենիքի ամրապանդման կարևոր գործոն: Իհարկե, բնական կլիներ, եթե հայրենիքն, իր հերթին, հայ գաղթօջախներին ցույց տար նկատելի տնտեսական աջակցություն, բայց Հայաստանում ստեղծված ծանր վիճակը դրա հնարավորությունը չէր տալիս: Ուստի, մանավանդ երկրաշարժից հետո, չափազանց մեծ էր Սփյուռքից ստացված օգնության դերը, որն ի վերջո ուղղված էր ազգապահպանման գործընթացին: Այդ օգնությունը դրսևորվեց ամենատարբեր ձևերով:

Հայաստան-Սփյուռք հարաբերություններում անգնահատելի էր առանձին բարեգործների և հասարակական կազմակերպությունների ազգանվեր գործունեությունը: Երկար տարիներ Ալեք Մանուկյանը ազգային բարեգործների առաջին շարքում էր: Տակավին 1964 թ. հիմնված Ալեք Մանուկյանի և նրա տիկնոջ՝ Մարի Մանուկյանի հիմնադրամը կարևոր դեր խաղաց Սփյուռքում դպրոցաշինության, մշակութային նոր կենտրոնների ստեղծման, հայ ուսուցիչների կենցաղային պայմանների բարելավման գործում: Հիմնադրամի միջոցներով դպրոցներ և մշակույթի տներ, հիվանդանոցներ, ծերանոցներ կառուցվեցին ԱՄՆ-ում, Կանադայում, Արգենտինայում, Ավստրալիայում և այլ երկրներում: Հայրենիքից հրավիրվեցին բարձրորակ մասնագետներ, որոնք նպաստեցին գաղթօջախների հայկական դպրոցների կայացմանը: Հիմնադրամը մասնակից եղավ նաև հայրենիքի վերաշինությանը: «Սփյուռքի հայությունը կապրի Հայաստանի սիրով, ու կապրի ա-

նոր ապագայի համար,- ասել է Ա. Մանուկյանը,- այլապես ինչ իմաստ պիտի ունենար մեր ազգապահպանումի ամբողջ պայքարը, եթե մենք չունենայինք վախճանական նպատակ մը: Մենք համոզված ենք, թե առանց Հայրենիքի չի կարող գոյատևել Սփյուռքը»[598]: Մեծ բարերար Ալեք Մանուկյանի գործունեությունը, նրա կատարած ազգանվեր աշխատանքը բարձր են գնահատվել Հայրենիքում և Սփյուռքում: Նա արժանացել է Հայաստանի ազգային հերոսի կոչման, պարգևատրվել շքանշաններով: Նրա գործը 1996 թվականից շարունակեց դուստրը՝ Լուիզ Սիմոն-Մանուկյանը[599]:

Սփյուռքի կողմից հայրենիքին աջակցելու վառ օրինակ է Լիսաբոնի Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության գործունեությունը: Նրա հայկական բաժանմունքը խոշոր միջոցներ է տրամադրում Հայաստանի գիտության, բժշկության կարիքներին, նաև գրահրատարակչությանը, ընդհանրապես՝ հանրապետության տնտեսությանը: Այն մեծ աշխատանքներ է կատարում հատկապես Սփյուռքում[600]:

Հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդման գործում վիթխարի է ֆրանսահայ երգիչ, մեծ հայրենասեր Շառլ Ազնավուրի դերը, որը բազմիցս մարդասիրական օգնություն է բերել Հայաստան: Հայրենիքին մատուցած մեծ ծառայությունների համար աշխարհահռչակ երգչին շնորհվել է Հայաստանի Ազգային հերոսի կոչում:

Անգնահատելի է «Լինսի» բարեգործական հաստատության ծավալած գործունեությունը, որը գլխավորում է հայրենիքին հսկայական ծառայություններ մատուցած Քըրք Քըրքորյանը: «Լինսի» հիմնադրամի անդամ դարձան ամերիկահայ ամենահայտնի բարեգործական կազմակերպությունները, եկեղեցական թեմերը: Հիմնադրամը և անձամբ Քըրք Քըրքորյանը պարբերաբար խոշոր հատկացումներ կատարեցին Հայաստանը տնտեսական ծանր վիճակից դուրս բերելու համար: Ամբողջ 1990-ական

---

[598] Մելքոնյան Էդ., Հայկական բարեգործական ընդհանուր միության պատմություն, Երևան, 2005, էջ 528:
[599] Համազասպյան Վ., Ալեք Մանուկյան, Երևան, 1994, էջ 41:
[600] Պետրոսյան Ք., նշված աշխ., էջ 79:

թվականներին այդ հիմնադրամի օժանդակությամբ կառուցվեցին կուլտուր-տնտեսական հիմնարկներ, ճանապարհներ, բնակարաններ և այլն: Քըրք Քըրքորյանը նույնպես արժանացել է Հայաստանի Ազգային հերոսի կոչման[601]: Հանրահայտ է «Ջինիշյան» հիշատակի հիմնադրամի գործունեությունը Գյումրիում բնակելի շենքերի կառուցման, ջրագծերի վերականգնման ուղղությամբ: Հիմնադրամը օրինակելի հոգատարություն է ցուցաբերում անօթևան երեխաների, սոցիալապես ծանր վիճակում գտնվող ընտանիքների նկատմամբ: Սփյուռքահայ բարեգործ Գալուստ Սողոմոնյանը բազում նվիրատվություններ է կատարել Թալինի և Վայքի շրջաններում դպրոցներ ու եկեղեցիներ կառուցելու համար: Հայաստանում հոգևոր-եկեղեցական և գիտական բեղուն գործունեություն ծավալեց Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյանը:

Շվեյցարացի բարերար և հասարակական գործիչ Սարգիս Իզմիրլյանը նշանակալի միջոցներ նվիրաբերեց Երևանի պետական համալսարանի գրադարանի վերակառուցման, նրա գրքային ֆոնդի հարստացման համար: Ի նշան երախտագիտության՝ 1997 թ. համալսարանի գրադարանն անվանակոչվեց Սարգիս Իզմիրլյանի և նրա կնոջ՝ Մարի Իզմիրլյանի անունով[602]: Ազգային բարերար Վաչե Մանուկյանը մեկ մլն դոլար դրամագլխով հիմնեց համալսարանական կրթաթոշակների հիմնադրամ, որից հատկապես օգտվում են Լիբանանի համալսարաններում սովորող հայ ուսանողները: Շատ սփյուռքահայեր նյութական օգնություն ցուցաբերեցին աղետի գոտու բնակիչներին ու ազատամարտիկների ընտանիքներին:

Սփյուռքի ամենախոշոր մարդասիրական կազմակերպությունը շարունակում էր մնալ Հայ բարեգործական ընդհանուր միությունը (ՀԲԸՄ), որի աջակցությունը հայրենիքին անգնահատելի է[603]:

Մեծ ակտիվությամբ էր գործում Հայ օգնության միությունը (ՀՕՄ), որը երկրաշարժի աղետյալներին առաջին ձեռք մեկնողնե-

[601] Տե՛ս նույն տեղում, էջ 73:
[602] Տե՛ս Հայոց պատմություն, Բուհական դասագիրք, նույն տեղում, էջ 815:
[603] Մելքոնյան Է., նշված աշխ., էջ 562:

րից էր: Միության Հյուսիսային Ամերիկայի մասնաճյուղերի բարեբարների օգնությամբ 1997 թ. մայիսին Ախուրյանում բացվեց «Մոր և մանկան առողջության կենտրոնը», որն այնքան անհրաժեշտ էր աղետի գոտու համար: ՀՕՄ-ը զգալի նյութական օժանդակություն է ցույց տվել գիշերօթիկ դպրոցներին, անապահով ընտանիքների երեխաներին: Մարդասիրական օգնություն ստացան հանրապետության, հատկապես Երևան քաղաքի հազարավոր մտավորականներ, պատերազմի վետերաններ:

Հայաստանին օգնության հասնելու գործում բեղուն աշխատանք է կատարել Հայ օգնության ֆոնդը (ՀՕՖ), որը մեծ քանակի սննդամթերք ու դեղամիջոցներ բերելով հայրենիք՝ անվճար բաժանում էր կարիքավորներին: ՀՕՖ-ի հովանավորությամբ Հայաստանից մեծ թվով բժիշկներ են վերառորակավորվել ԱՄՆ-ում, հանրապետության շատ հիվանդանոցներ ապահովվել են բուժսարքավորումներով:

Հայրենիքին աջակցելն իրենց առաջնահերթ հայրենասիրական պարտքն էին համարում ներքին սփյուռքի հայ համայնքները: Այստեղ իր ուրույն տեղն ուներ Ռուսաստանը, որը միակ երկիրն էր, որ անարգել ապաստան տվեց ինչպես ազգամիջյան կռիվներից, այնպես էլ երկրաշարժից հետո անօթևան մնացած հարյուր հազարավոր մարդկանց: Կրասնոդարի, Ստավրոպոլի, Աստրախանի, Հյուսիսային Կովկասի շատ բնակավայրեր հյուրընկալեցին հայերին՝ նրանց ցույց տալով տարբեր տեսակի օգնություն: Հայաստանի ծանր հոգսերը մշտապես գտնվում էին Մոսկվայի և Պետերբուրգի հայության ուշադրության կենտրոնում:

Իր հերթին, Հայաստանը իր սուղ միջոցներով փորձում էր օգնել Սփյուռքի տնտեսապես առավել խոցելի հատվածներին, մասնավորապես Վրաստանի կազմում գտնվող պատմական Հայաստանի Ջավախք տարածաշրջանի հայությանը:

Դժվարին կացության մեջ հայտնված Հայաստանի ժողովրդի և սփյուռքահայության բացառիկ ջերմությամբ ձեռք ձեռքի տալը հայոց պատմության ամենապատվաբեր էջերից մեկն է: Ազգային զարթոնքը, մեկ միասնական ազգի գաղափարը համակել էր ողջ հայությանը: Բոլոր հայերը քաջ գիտակցում էին, որ միայն հզոր

Հայաստանի գոյությամբ կամրապնդվի Սփյուռքը, կունենա ամուր հենարան՝ մյուս կողմից Սփյուռքին վերապահված էր հսկայական դեր Հայաստանի առաջադիմության գործում:

Հայ ժողովրդի երկու հատվածների միջև հարաբերությունները սերտացնելու, առավել արդյունավետ ու փոխշահավետ դարձնելու նպատակով Հայաստանի իշխանությունների նախաձեռնությամբ 1999 թվականից սկսած՝ Երևանում տեղի են ունենում «Հայաստան-Սփյուռք» համահայկական խորհրդաժողովներ, համահայկական մարզական խաղեր, որոնց մասնակցում էին հայ սփյուռքի բոլոր համայնքների պատվիրակությունները:

Բացի առանձին բարեգործներից ու բարեգործական կազմակերպություններից Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների ամրապնդման գործին մասնակից են բոլոր համայնքները: Արտաքին սփյուռքում դրանցից ամենախոշորը մնում է 1.6 միլիոն հայությունն ունեցող ամերիկահայ գաղութը: Հայերը գլխավորապես բնակվում են Լոս Անջելես, Նյու-Յորք, Բոստոն, Ֆրեզնո, Չիկագո, Դետրոյտ, Սան Ֆրանցիսկո քաղաքներում: Այս գաղութում է տեղադրված Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) կենտրոնական վարչությունը, որն իր մասնաճյուղերն ունի ԱՄՆ-ի բոլոր հայաբնակ վայրերում, որտեղ ակտիվորեն գործում են հայկական քաղաքական կուսակցությունները, բազում միջնակարգ (26 ամենօրյա վարժարան), մեկօրյա (131) դպրոցներ և բարձրագույն ուսումնական հաստատություններ, իսկ մի շարք ամերիկյան համալսարաններում բացվել են տասնյակից ավելի հայագիտական ամբիոններ ու դասընթացներ: Ամերիկահայ գաղթօջախն իր կազմակերպություններով հանդերձ մեծ օգնություն է ցույց տալիս նաև Սփյուռքի մյուս հայկական համայնքներին, օգնում հայապահպանման ընդհանուր գործին:

Հայրենասիրական բազմաթիվ ձեռնարկումներ են իրականացրել Ֆրանսիայի, Շվեդիայի, Կանադայի, Արգենտինայի, Հունաստանի, Կիպրոսի, Սիրիայի, Լիբանանի, Քուվեյթի, Ռուսաստանի, մասնավորապես Մոսկվայի և Ս. Պետերբուրգի հայ համայնքները: Արգենտինահայ համայնքի օգնությամբ վերականգնվեց Արցախի Մարտունու շրջանի Վաղուհաս գյուղը, Ստեփանավանում կառուցվեց ֆիզիկա-մաթեմատիկական դպրոց: Արևմտյան Եվրո-

պայի ամենաթվաշատ համայնքը Ֆրանսիայի հայկական գաղթավայրն է: Համայնքում գործում են ընդամենը 6 ամենօրյա և 50 մեկօրյա հայկական դպրոցներ, այն դեպքում, երբ դպրոցահասակ երեխաների թիվը 60 հազար է:

Այստեղ գործում են բազմաթիվ մշակութային, հասարակական-քաղաքական և հայրենակցական միություններ ու կազմակերպություններ, որոնք զգալի դեր են խաղում հայապահպանման աշխատանքներում: Մասնավորապես հայտնի է «Ազնավուրը Հայաստանին», «SOS Արմենի» բարեգործական և «Արմենիա» մշակութային կազմակերպությունների գործունեությունը:

Հայապահպանության բնագավառում իրենց ընդգծված ջանքերով նշանակալից գործունեություն են ծավալել Լիբանանի, Սիրիայի, Իրանի և այլ հայկական համայնքներ:

Հետպատերազմական շրջանում տարբեր ճակատագրեր ու զարգացման տարբեր հնարավորություններ ունեցան Հարավարևելյան Եվրոպայի սոցիալիստական երկրների հայկական գաղթավայրերը:

Բուլղարահայ համայնքն իր թվաքանակով (52 հազար) Եվրոպայում երկրորդն էր Ֆրանսիայից հետո, բայց այստեղ ազգային խնդիրները հետին պլան էին մղված: Միայն 1990-ական թվականների կեսերից վերականգնվեց գաղթավայրի ազգային կյանքը, որը սերտ կապեր հաստատեց հայրենիքի հետ: Երկրորդ աշխարհամարտից հետո իր գոյությունը դադարեցրել էր նաև Ռումինիայի «Հայոց միությունը», որը վերակենդանացավ 1990-ականների սկզբներին: Այստեղ ևս, ինչպես Բուլղարիայում, առաջնահերթ նշանակություն էր տրվում դպրոցական գործին:

Հայաստանի Հանրապետության օգնությամբ ստեղծվեցին նախ կիրակնօրյա, ապա և հանրակրթական հայկական դպրոցներ:

Գերմանիայի հայկական համայնքում շուրջ 40 հազար հայեր կան: Հայրենիքին օգնություն ցույց տալուց բացի, գերմանահայ համայնքը զբաղվում է նաև հայ մշակույթի քարոզչությամբ:

Սփյուռքում իր ուրույն տեղն ունի հայկական ամենամեծ համայնքը՝ Ռուսաստանը: Այստեղ բնակվում է շուրջ 2,5 մլն հայ: Հիմնական կենտրոններն են Մոսկվան (ավելի քան 500 հազար),

Կրասնոդարի (800 հազար) և Ստավրոպոլի (500 հազար) երկրամասերը, Ս. Պետերբուրգը (70 հազար), Ռոստովի մարզը (140 հազար) և այլն: Ազգապահպան լայն գործունեություն ծավալեց Աստրախանի հայկական համայնքը, որը սերտորեն համագործակցում էր Հայաստանի հետ, կազմակերպում մշակութային օրեր, փոխադարձ այցելություններ և այլն: 1993 թ. հունիսին Աստրախանում կազմակերպվեցին հայկական մշակութային օրեր, որոնց մասնակցեցին Ռուսաստանի հայկական մյուս համայնքների ներկայացուցիչներ, քաղաքական ու տնտեսական ղեկավարներ, գիտության և արվեստի գործիչներ:

Ազգապահպանմանը նպաստելու գործում կարևոր աշխատանք էին ծավալում նաև վերը նշված Ս. Պետերբուրգի «Հայկական տուն» ընկերությունն ու Դնեպրոպետրովսկի հայկական համայնքը:

Ռուսաստանից հետո հայությունը կարևոր համայնք ունի Վրաստանում (շուրջ 350 հազար): Դա ամուր գաղութ է իր կրթամշակութային կազմակերպություններով: Հայաստանից Ջավախքի դպրոցները ստանում են դասագրքեր, ծրագրեր, գեղարվեստական գրականություն: Փոխադարձ մշակութային համույթների այցելություններն ավելի են ամրապնդում կապը մայր հայրենիքի հետ[604]:

Բացի Վրաստանից մնացած նախկին խորհրդային հանրապետություններում հայերի խոսակցական լեզուն ռուսերենն էր: Գիտաժողովներում Հայաստանի կառավարությունից պահանջում էին միջոցներ ձեռնարկել նաև ներքին Սփյուռքում եղած հայկական գաղթավայրերը ամրապնդելու համար:

Այսպիսով, Հայրենիք-Սփյուռք հարաբերություններում նոր փուլ նշանավորեց Հայաստանի Հանրապետության ծնունդը, որն ավելի կայուն ու գործնական դարձրեց այդ հարաբերությունները: Ազգային զարթոնքը, մեկ միասնական ազգ լինելու ձգտումը համակեց բոլորին: Բոլոր հայերը քաջ գիտակցում էին, որ միայն հզոր Հայաստանի գոյությամբ կբարգավաճի Սփյուռքը, կունենա ամուր հենարան: Մյուս կողմից՝ Սփյուռքը հսկայական դեր ունի Հայաստանի առաջադիմության գործում:

---

[604] Հայոց պատմություն, Բուհական դասագիրք, նույն տեղում, էջ 816:

Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները որակական նոր բարձրության հասան 2008 թ. հոկտեմբերից, երբ ստեղծվեց ՀՀ Սփյուռքի նախարարությունը:

Հենց նրա ջանքերով 2009թ. կազմակերպվեց և անցկացվեց «Արի տուն» հայրենասիրական ծրագիրը, որի շնորհիվ հարյուրավոր սփյուռքահայեր հանգրվանեցին Մայր Հայրենիքում, իրենց հայրենակիցների օջախներում՝ հետևելով նրանց նիստուկացին, սովորույթներին, որը ոգևորող ազդեցություն ունեցավ և նպաստեց տարբեր երկրների սփյուռքահայերի հայրենիք վերադառնալու ծրագրի իրականացմանը: Նախարարության նախաձեռնությամբ հրավիրվեցին բազմաթիվ համահայկական համաժողովներ, գիտական նստաշրջաններ և այլն: ՀՀ իշխանությունների ակտիվ նախաձեռնությամբ 1999 թ. սեպտեմբերին Երևանում կայացավ Հայաստան-Սփյուռք առաջին խորհրդաժողովը:

Խորհրդաժողովը հստակեցրեց երեք հիմնախնդիր. ազգային պետականության ամրապնդումն ու զարգացումը, Արցախյան հարցի արդարացի լուծումը, Սփյուռքում ազգային ինքնության և արժեհամակարգի առավելագույն պահպանումը:

2002 թ. մայիսին Երևանում կայացավ Հայաստան-Սփյուռք երկրորդ խորհրդաժողովը: Այն անցկացվեց ըստ մասնագիտական բնագավառների: Դա հնարավորություն տվեց հետագա տարիներին Հայաստան-Սփյուռք գործակցությունը ծավալելու ըստ համապատասխան ոլորտների:

2006 թ. սեպտեմբերին Երևանում կայացավ Հայաստան-Սփյուռք երրորդ խորհրդաժողովը: Այն ընդունեց համագործակցության հեռանկարային և ռազմավարական նոր ուղղություն՝ Հայաստանի Հանրապետության գյուղերի վերականգնման ու բարեշինության համալիր ծրագիր: Դրա համակարգման աշխատանքներին ձեռնամուխ եղան «Հայաստան» համահայկական հիմնադրամը, Հայաստանի արտաքին գործերի նախարարությունը, Հայաստանի Հանրապետության և Սփյուռքի այլ կառույցներ:

1999 թ. սեպտեմբերից մինչև 2010 թ. ընկած ժամանակահատվածում Երևանում անցկացվել են Հայաստան-Սփյուռք համահայկական 50-ից ավելի տարաբնույթ միջոցառումներ. Համահայկա-

կան մարզական խաղեր, «Մեկ ազգ, մեկ մշակույթ» փառատոն, կրթական համաժողովներ, սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ, տնտեսական, երիտասարդական համաժողովներ, «Բազե» համահայկական հավաքներ, հայագիտական, հայ բժիշկների համահայկական գիտաժողովներ և այլն:

2004 թ. օգոստոսին Երևանում 30 երկրների կրթական հաստատությունների շուրջ 200 ներկայացուցիչների մասնակցությամբ անցկացվեց համահայկական կրթական առաջին համաժողովը: Քննարկվեցին կրթական համակարգի, Հայաստան-Սփյուռք կրթական կապերի ամրապնդման, համագործակցության խորացման հարցեր: Կարևորելով Հայաստանի Հանրապետության կողմից սփյուռքի յուրաքանչյուր կրթական հաստատությանը աջակցություն ցույց տալու խնդիրը՝ որոշվեց ՀՀ ԿԳՆ-ում ստեղծել կրթական խորհուրդ, իսկ համաժողովները դարձնել ավանդական:

2004 թ. օգոստոսին 27 երկրներից սփյուռքի շուրջ 1500 ներկայացուցիչների (համույթներ, անհատ կատարողներ, մշակույթի գործիչներ, հյուրեր) մասնակցությամբ անցկացվեց «Մեկ ազգ, մեկ մշակույթ» առաջին համահայկական փառատոնը:

Հայկական կինոարվեստի զարգացմանն էր ուղղված 2004 թ. հուլիսին Երևանում կայացած «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնը, որն ամենամյա է դարձել և տարեցտարի ընդլայնում է շրջանակները:

Հայաստան-Սփյուռք առաջին խորհրդաժողովում առաջարկված «Համահայկական երիտասարդական միջազգային կենտրոնը» ստեղծվեց 2001 թ.: Կենտրոնի նախաձեռնությամբ 2002 թ. նոյեմբերին Երևանում կայացավ Համահայկական երիտասարդական առաջին համաժողովը, իսկ 2003 թ. հուլիսին Ծաղկաձորում անցկացվեց նույնպես ամենամյա դարձած «Բազե» համահայկական երիտասարդական հավաքը:

2011 թ. օգոստոսին Երևանում բարձր մակարդակով անցկացվեցին Համահայկական 5-րդ մարզական խաղերը՝ բազմահազար սփյուռքահայ մարզիկների մասնակցությամբ:

Հայաստան-Սփյուռք կապերը տարեցտարի դառնում են առավել համակարգված, դինամիկ ու հեռանկարային:

զ. Հայկական համայնքները արդի փուլում

1990-ական թթ. մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով՝ էներգետիկ ճգնաժամ, գործազրկություն, ցածր կենսամակարդակ, հանրապետության լիակատար շրջափակում, պատերազմ Լեռնային Ղարաբաղում և Հայաստան բռնագաղթված փախստականների դժվարին դրություն, Հայաստանի նորանկախ հանրապետությունից սկսվեց արտագաղթ դեպի արտերկիր՝ Ռուսաստան, ԱՄՆ, Եվրոպայի տարբեր երկրներ և այլուր:

Այդ տարիներին Արևելքի երկրներում քաղաքական անկայուն վիճակը, երկարատև պատերազմները ստիպեցին, որ հայերը Մերձավոր Արևելքի գաղթօջախներից արտագաղթեն հիմնականում Եվրոպա ու Ամերիկա՝ ստվարացնելով այնտեղի հայկական գաղթօջախները:

Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների մեջ առաջնային տեղ էր վերապահված ավանդական, հատկապես համասփյուռքյան կազմակերպություններին: Ավելի քան կեսդարյա ընդմիջումից հետո ՀԲԸՄ-ն 1990 թ. վերաբացեց իր գրասենյակը Երևանում:

Վերսկսելով գործունեությունը Հայաստանի Հանրապետությունում՝ ՀԲԸՄ-ն նախապատվությունը տվեց ոչ թե զուտ մարդասիրական օգնությանը, այլ երկրի զարգացմանը նպաստող ծրագրերին՝ մշակութային, առողջապահական, կրթական: ՀԲԸՄ-ն նյութապես օժանդակում է Մատենադարանին, Գիտությունների ազգային ակադեմիային, ԵՊՀ-ին, բժշկական և ճարտարագիտական համալսարաններին և կրթական, մշակութային այլ հաստատություններին: Միությունը մասնաճյուղեր ունի սփյուռքահայ գրեթե բոլոր համայնքներում և իր նպաստն է բերում ազգապահպանման գործին: Հայ օգնության միությունը 1991 թ. հիմնեց իր շրջանային կազմակերպությունը Հայաստանում՝ «Հայ օգնության խաչը», որի մասնաճյուղերը ներկայումս գործում են ավելի քան 40 բնակավայրերում: 1996 թ. Լեռնային Ղարաբաղում ՀՕՄ-ը հիմնեց «Հայ կին» կազմակերպությունը: Միությունն աշխուժ գործունեություն է ծավալում նաև սփյուռքահայ համայնքներում, որտեղ ունի 200-ից ավելի մասնաճյուղեր[605]:

---

[605] Պետրոսյան Ք., նշված աշխ., էջ 10:

Բարեգործական կազմակերպությունների շարքում յուրահատուկ տեղ է գրավում «Հայաստան» համահայկական հիմնադրամը, որը հիմնվեց 1992 թ. մարտին Երևանում: Հիմնադրամն ունի երկու տասնյակ մասնաճյուղեր արտերկրի հայ համայնքներում: Համահայկական հիմնադրամը նպատակ ունի Հայաստանի զարգացման համար ներգրավելու կայուն ֆինանսավորման աղբյուրներ թե՛ Հայաստանի Հանրապետությունում, թե՛ Սփյուռքում:

Հայրենիքի հետ սերտորեն համագործակցում են Սփյուռքի մի շարք կազմակերպություններ, որոնցից են «Լինսի հիմնադրամը», «Հայաստանի օգնության ֆոնդը», «Ազնավուրը՝ Հայաստանին» և այլն: Հայ օգնության ֆոնդը (ՀՕՖ), որի կենտրոնական գրասենյակը գտնվում է Նյու Յորքում, մասնաճյուղեր ունի սփյուռքի համայնքներում: Այն 1993 թ-ից գրանցվել է որպես անկախ կառույց[606]:

Սփյուռքում գործում են Արևմտյան Հայաստանի բնակավայրերի՝ Զեյթունի, Աղանայի, Կեսարիայի, Մարաշի, Մալաթիայի, Սասունի, Տարոնի, Տիգրանակերտի, Քեսապի, Մուսա լեռան անուններով հայրենակցական միություններ, որոնք ավանդական կուսակցությունների հետ հանդես են գալիս Հայ դատի պաշտպանությամբ: Հայաստանի անկախությունից հետո ՀՅԴ-ն, ՌԱԿ-ը, ՍԴՀԿ-ն հնարավորություն ստացան վերսկսելու իրենց գործունեությունը Հայաստանի Հանրապետությունում: Կարճ ժամանակում երկրի տարբեր շրջաններում նրանք հիմնեցին տեղական կուսակցական կազմակերպություններ, ծավալեցին աշխույժ գործունեություն: Կարևոր դեր խաղաց այն հանգամանքը, որ սփյուռքում անցած տասնամյակների ընթացքում ազգային կուսակցությունների հիմնական գործառույթը դարձել է սփյուռքահայերի համախմբումը ազգային արժեքների շուրջ: Իրենց փորձը նրանք կիրառեցին նաև Հայաստանի Հանրապետությունում՝ հիմնելով մշակութային, երիտասարդական, մարզական, պատանեկան միություններ, թերթեր և այլն:

Երկար տարիներ գործելով Արևմուտքի երկրներում և քաջածանոթ լինելով միջկուսակցական, ներքաղաքական մրցակցության

---

[606] Նույն տեղում, էջ 107:

խաղաղ, խորհրդարանական միջոցներին ու ձևերին՝ այդ կուսակցությունները որոշակիորեն նպաստեցին դրանց արմատավորմանը նաև Հայաստանի Հանրապետությունում:

Արտերկրի սփյուռքահայ կազմակերպությունները հիմնականում գործում են սփյուռքահայ ավանդական կուսակցությունների հովանավորությամբ: Սփյուռքում ՀՅԴ հովանավորությամբ են գործում Հայ օգնության միությունը (ՀՕՄ), Համազգային մշակութային միությունը (ՀՄՄ), Հայ մարմնակրթական ընդհանուր միությունը (ՀՄԸՄ), ուսանողական, երիտասարդական և այլ կազմակերպություններ, ինչպես նաև դպրոցներ, մարզական ու մշակութային ակումբներ: ՀՅԴ-ն իր ռազմավարական առաջնահերթ նպատակն է համարում ՀՀ և ԼՂՀ պետականությունների ամրապնդումը, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը և Հայ դատի ու պահանջատիրության խնդիրներին հետամուտ լինելը:

Արտերկրի հայ համայնքներում Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցության (ՍԴՀԿ) հովանավորությամբ են գործում «Նոր սերունդ» մշակութային միությունը, Հայ մարմնամարզական միությունը», որոնք մասնաճյուղեր ունեն գրեթե բոլոր խոշոր հայ համայնքներում:

Ռամկավար ազատական կուսակցության (ՌԱԿ) նախաձեռնությամբ Սփյուռքում ստեղծվել և գործում են մեծ թվով մշակութային, բարեգործական, կրթական հաստատություններ:

ՌԱԿ-ը իր տեղական կազմակերպություններն ունի ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Լիբանանում, Եգիպտոսում և այլ երկրներում: Նրա հովանու տակ է գործում Թեքեյան մշակութային միությունը (ԹՄՄ)[607]:

Հայաստան-Սփյուռք համագործակցության ոլորտում կարևորվում է Ամերիկայի հայկական համագումարի ներդրումը:

Նրա գործունեության կարևոր խնդիրներից են՝ սատարել ԱՄՆ-ում հայ ազգային ինքնության պահպանմանն ու զարգացմանը, պաշտպանել ամերիկահայերի շահերն ու իրավունքները, բարձրացնել հայ ժողովրդի պատմական, կրթական, մշակութային կյանքի մասին իրազեկվածության մակարդակը:

---

[607] Տե՛ս Սփյուռքահայ կազմակերպություններ, Երևան, 2002, էջ 24, 66:

Հայ գաղթօջախներում, հատկապես ոչ քրիստոնեական երկրներում, համայնքի անդամներին միավորող կարևոր կառույցը եղել ու մնում է հայ եկեղեցին, որը գրեթե ամենուր ներկայացված է առաքելական, կաթողիկ և ավետարանական ուղղություններով:

Հոգևոր գործունեությունից բացի նրանք նպաստում են հայապահպանությանը և սատարում սփյուռքահայության կյանքի կազմակերպման գործին. ունեն իրենց դպրոցները, մամուլը՝ հոգևոր, գիտական, մշակութային ուղղության թերթեր, ամսագրեր, հանդեսներ:

Հայաստանյայց առաքելական եկեղեցին առանձնահատուկ տեղ ունի Հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդման ու զարգացման ոլորտում:

Անկախության տարիներին նշանակալի, պատմական առաքելություն բաժին ընկավ Մայր Աթոռ Ս. Էջմիածնին: Վազգեն Ա կաթողիկոսի կոչը 1988 թ. դեկտեմբերին ոտքի հանեց սփյուռքահայությանը՝ երկրաշարժից ավերված հայրենիքին օգնության փութալու, ապա Արցախյան ազատագրական պատերազմին իրենց մասնակցությունն ապահովելու և հայոց անկախ պետականության շինարարությանն աջակցելու համար: Ամենայն հայոց հայրապետների այցելությունները հայկական գրեթե բոլոր համայնքներ արդյունավետորեն նպաստեցին Սփյուռքը և Հայրենիքը համախմբելու գործին:

Մերձավոր և Միջին Արևելքի հայության տեղաշարժերը և արտագաղթը արևմտյան երկրներ ու մասամբ Հայաստանի Հանրապետություն այսօր էլ կապված են զանազան հակամարտությունների, Պարսից ծոցում ծավալված ռազմական գործողությունների (1991), Իրաքի դեմ հակաիրաքյան (անգլոամերիկյան) դաշինքի սկսած պատերազմի (2003-2008 թթ.) հետ:

Մերձավոր Արևելքի համայնքներից կարելի է առանձնացնել Լիբանանի հայ համայնքը:

Տեղի հայության թիվը քաղաքացիական երկարատև պատերազմի և դրա հետևանքով առաջացած անապահովության ու տնտեսական ճգնաժամի պատճառով զգալիորեն նվազել է և 2010 թ. հասել 120 հազարի: Նրանց հիմնական մասը գաղթել է ԱՄՆ, Կանադա, Ֆրանսիա, Ավստրալիա, Հայաստանի Հանրապետություն:

Լիբանանի հայ համայնքը՝ կրոնական-սահմանադրական համայնքի կարգավիճակով, ներկա խորհրդարանում ունի պատգամավորական վեց ամրագրված տեղ և երկու նախարարական աթոռ կառավարությունում:

Լիբանանում է գտնվում Սփյուռքում գործող միակ Հայկազյան համալսարանը: Ներկայումս Լիբանանի տնտեսության, հատկապես արդյունաբերության, շինարարության և առևտրի բնագավառներում շարունակում են կարևոր դիրքեր զբաղեցնել հայազգի Նազարյան, Պարսումյան, Տեմիրճյան, Տաճճիկյան, Այանյան ընտանիքները, Աբրահամ Տետեյանը, Նուպար Վարդանյանը և ուրիշներ: Լիբանանում հրատարակվող թերթերից և հանդեսներից են «Ազդակը», «Արարատը», «Զարթօնքը», «Նաիրին», «Ծիրակը», «Բագինը» և այլն:

Սիրիայում բնակվում էր շուրջ 100 հազար հայ, որոնց մեծ մասը կենտրոնացած էր Հալեպում (մոտ 60 հազար): Գործում էին հայ ավանդական կուսակցությունների տեղական մարմինները, Համազգային հայ կրթական և մշակութային միության, Թեքեյան մշակութային միության, «Նոր սերունդ» մշակութային միության, ՀՄԸՄ-ի, ՀՄՄ-ի մասնաճյուղերը և հայրենասիրական ու մշակութային այլ միություններ: Վերջին շուրջ երկու տարում Սիրիայում սկսված քաղաքացիական պատերազմի պատճառով դատարկվեց հայկական համայնքը, 10 հազարից ավելի հայեր ապաստան գտան Հայրենիքում:

Ներկայումս Թուրքիայի հայ համայնքում[608], ըստ պաշտոնական տվյալների, շուրջ 70 հազար մարդ կա: Զգալի քիվ են կազմում (տարբեր տվյալների համաձայն՝ 500 հազարից 1 միլիոն) իսլամացված հայերը, ովքեր կենտրոնացված են Մերձսևծովյան շրջաններում (Խոփա, Համշեն, Տրապիզոն և այլն) և Արևմտյան Հայաստանի հյուսիսարևմտյան հատվածներում: Գավառներում բնակվող հայերի մեծ մասը քրքախոս կամ քրդախոս է: Թուրքիայում բնակվում են նաև մոտ 2500 կաթոլիկ և 500 ավետարանական հայեր:

Գործում է Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքությունը, որը

[608] Մելքոնյան Է., նշված աշխ., էջ 674:

Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու Ցվիրապետական աթոռներից է, և Թուրքիայի հայ համայնքի հոգևոր ներկայացուցչությունը:

Պոլսում հաշվվում է մոտ 35 հայկական եկեղեցի, 18 հայկական կրթական հաստատություն, որոնցից 14-ը պատկանում է Հայ առաքելական, 4-ը՝ Հայ կաթողիկե համայնքներին: Վերջին տասնամյակների ընթացքում հայկական դպրոցների թիվը Թուրքիայում պակասել է՝ կապված աշակերտների թվաքանակի նվազման հետ:

Պոլսահայ համայնքն ունի իր պարբերականները՝ «Ժամանակ», «Մարմարա» օրաթերթերը և երկլեզու (հայերեն, թուրքերեն) «Ակոս» շաբաթաթերթը: 1996 թվականից Հրանտ Դինքի խմբագրությամբ «Ակոս» երկլեզու շաբաթաթերթը (թուրքերեն և հայերեն ներդիրով) համարձակություն ունեցավ շոշափելու նաև թուրքական իշխանությունների կողմից արգելված թեմաներ, այդ թվում՝ Հայոց ցեղասպանության հարցը:

Ներկայումս Իրանում բնակվում է շուրջ 80 հազար հայ[609]: Գործում է մի քանի տասնյակ հայկական դպրոց: Երկրի Սահմանադրության համաձայն՝ Իրանի հայ համայնքն ունի կրոնական փոքրամասնության կարգավիճակ, որին շնորհվել է ներքին մշակութային, համայնքային և կրոնական ինքնավարություն:

Իրանահայերին Մեջլիսում (290 պատգամավոր) հատկացված է կրոնական փոքրամասնություններին տրամադրված 5 տեղից 2-ը:

Ներկայումս գործող ազգային քաղաքական կազմակերպություններն են ՀՅԴ-ի տեղական մարմինը և Հայկական ժողովրդական միությունը (ՀԺՄ): Երկրում գործում են նաև ՀԲԸՄ-ի, ՀՕՄ-ի, Համազգային հայ կրթական և մշակութային միության, Հայ դատի, Հայ երիտասարդաց ընկերակցության մասնաճյուղերը, ինչպես նաև մշակութային, մարզական և կրթական կազմակերպություններ: Համայնքի գլխավոր տպագիր թերթը «Ալիքն» է: Հրատարակվում են նաև «Լույս», «Արաքս», «Ապագա» պարբերականները:

Ռուսաստանի մի շարք շրջաններում՝ Կրասնոդարի և Ստավրոպոլի երկրամասերում, Ռոստովի մարզում, հայերն իրենց թվով երկրորդ տեղն են զբաղեցնում ռուսներից հետո:

---

[609] Տե՛ս Բայբուրդյան Վ., նշված աշխ., էջ 121:

Ռուսաստանի հայ համայնքը մեծ ակտիվություն է ցուցաբերում եկեղեցաշինության, կիրակնօրյա դպրոցների բացման, մարզական համահայկական խաղերին մասնակցության, ռուսական կենտրոնական և տարածաշրջանային հեռուստաալիքներով հայկական հաղորդումների հեռարձակման գործում:

Ռուսաստանի Դաշնության տարածքում գործում է շուրջ 40 հայկական եկեղեցի: Հայ առաքելական եկեղեցին ՌԴ-ում ունի երկու թեմ: Ռուսաստանի հայ համայնքը հիմնականում համախմբված է «Ռուսաստանի հայերի միություն» կազմակերպության շուրջը: Մոսկվայում լույս են տեսնում «Արմենիա ի միր», «Արմյանսկի վեստնիկ», «Պրո Արմենիա», «Հյուսիսափայլ» երկլեզվյան (ռուսերեն և հայերեն) հանդեսները, Կրասնոդարում՝ «Երկրամաս» ամսաթերթը, Սանկտ Պետերբուրգում՝ «Հավատամք» ամսաթերթը, «Մաշտոց» թերթը և այլն:

2010 թ. ոչ պաշտոնական տվյալներով Բելոռուսում բնակվում է շուրջ 30-36 հազար հայ: Հայերը նկատելի դեր են խաղում Բելոռուսի տնտեսական, հասարակական և մշակութային կյանքի տարբեր բնագավառներում: 2002 թվականին Մինսկում լույս տեսած «Բելոռուսի 100 անվանի գործիչներ» տեղեկատուի էջերում հիշատակվում է 10 հայի անուն:

Բելոռուսում հայ համայնքային կառույցներ սկսել են ձևավորվել 1990-ական թվականներին: Առաջինը Մշակույթի բելոռուսական ֆոնդին կից Մինսկի քաղաքային «Հայաստան» մշակութային-լուսավորական ընկերությունն է, որը համախմբել է Բելոռուսի ճանաչված հայերին:

Ուկրաինայի 400 հազար հայերից 40 հազարը Կիևում է ապրում: Սկսած 1988 թ. և ԽՍՀՄ-ի փլուզումից հետո ուկրաինական գրեթե բոլոր մարզերում և քաղաքներում հիմնվել են հայկական հասարակական կազմակերպություններ: Աչքի են ընկնում Կիևի, Ղրիմի, Խարկովի, Օդեսայի, Ժիտոմիրի, Լվովի հայ համայնքները: Ուկրաինայում գործում է հայ համայնքին վերադարձված, վերաօրոգված կամ նոր կառուցված ավելի քան քսան հայկական եկեղեցի:

2001 թ. Ուկրաինայում հիմնադրվել է «Ուկրաինայի հայերի միությունը» (ՈՒՀՄ): ՈՒՀՄ-ն համախմբում է համայնքները Հայ ա-

ռաքելական սուրբ եկեղեցու շուրջ: ՈՒՀՄ-ի հովանու ներքո գործում են բազմաթիվ կիրակնօրյա դպրոցներ, երգի ու պարի համույթներ, տպագրվում են թերթեր: 10 հազար տպաքանակով հրատարակվում է միության ռուսալեզու «Արմյանսկի վեստնիկ» թերթը, որտեղ զետեղվում են նաև ուկրաիներեն ու հայերեն հոդվածներ:

Ուկրաինայում ստեղծվել է Հայագիտության կենտրոն, տպագրվում է «Հայագիտական հետազոտությունները Ուկրաինայում» գիտական պարբերականը:

Վրաստանի այսօրվա տարածքում հայերը հոծ բնակեցված են Սամցխե-Ջավախք նահանգում, մայրաքաղաք Թբիլիսիում: Վրաստանում (առանց Աբխազիայի և Հարավային Օսիայի) հայերի ընդհանուր թիվը, ըստ պաշտոնական տվյալների, կազմում է շուրջ 250 հազար, իսկ ոչ պաշտոնական տվյալներով՝ մինչև 350 հազար մարդ:

Ներկայումս Թբիլիսիում բնակվում է շուրջ 150 հազար (ըստ պաշտոնական տվյալների՝ 82 հազար) հայ: Գործում է վեց հայկական դպրոց, Պետրոս Ադամյանի անվան հայկական դրամատիկական թատրոնը: Թբիլիսիում է գտնվում նաև հայ մեծանուն գրողների և հասարակական գործիչների՝ Խոջիվանքի պանթեոնը, որտեղ ամփոփված են Րաֆֆու, Թումանյանի, Սունդուկյանի, Աղայանի, Պռոշյանի, Մուրացանի, Նար-Դոսի, Ջիվանու և հայազգի այլ մեծերի աճյունները:

Ներկայումս Սամցխե-Ջավախք նահանգում, ներառյալ Քվեմո Քարթլի նահանգի Ծալկայի շրջանը, հայերի թիվը ըստ պաշտոնական տվյալների կազմում է շուրջ 125 հազար: Գործում են 118 հայկական դպրոց, մշակութային կենտրոն, գրադարան, հայերեն հաղորդումներ հեռարձակող տեղական հեռուստաընկերություններ: Հայերեն լույս են տեսնում «Ակունք», «Արշալույս», «Հարավային դարպաս» թերթերը, ստեղծվել են շուրջ երկու տասնյակ հայկական հասարակական կազմակերպություններ:

1992 թվականի վրաց-աբխազական պատերազմի հետևանքով Աբխազիայից արտագաղթել է մոտ 30 հազար հայ: Ներկայումս հայերի թիվը Աբխազիայում, ըստ պաշտոնական տվյալների, կազմում է 45 հազար, գործում է 32 հայկական դպրոց:

1988 թ-ից սկսած՝ Ղարաբաղյան ազատագրական պայքարի շրջանում Սումգայիթի, Կիրովաբադի, Խանլարի շրջանների, Քաքվի հայությունը ենթարկվեց կոտորածների, ցեղասպանության: Այդ պատճառով դատարկվեցին հայաբնակ քաղաքները, շուրջ 400 հազարանոց հայկական համայնքը Ադրբեջանում դադարեց գործելուց: Բնակչությունը ենթարկվեց բռնագաղթի: Այսօր հայկական համայնք Ադրբեջանում գոյություն չունի[610]:

Ղազախստանում ներկայումս բնակվում է շուրջ 50 հազար հայ: Աստանայում, Ալմա Աթայում, Կարագանդայում և այլ քաղաքներում գործում է 14 հայկական ազգային, մշակութային կազմակերպություն: Հանրապետությունում գործող շուրջ մեկ տասնյակ կիրակնօրյա դպրոցներում սովորում է 300-500 աշակերտ:

Ներկայումս Ֆրանսիայում բնակվում է շուրջ 500 հազար հայ: Նրանք կենտրոնացված են Փարիզում, Մարսելում, Լիոնում, Վալանսում, Կաննում և այլ քաղաքներում: Աշխույժ գործունեություն են ծավալում հայ ազգային կուսակցությունների տեղական կազմակերպությունները, ՀԲԸՄ-ը, ՀՄԸՄ-ը, Թեքեյան, Համազգային հայ կրթական և մշակութային միությունները[611], Հայ դատի Ֆրանսիայի հանձնախումբը և այլն: Ֆրանսիայում հաշվվում է մոտ 500 հայկական կազմակերպություն:

Ֆրանսահայությանը հաջողվել է համազգային հարցերի շուրջ միավորվել և ստեղծել «Ապրիլ 24» կոմիտեն, որը 2001 թ. վերակազմավորվել է Ֆրանսահայ կազմակերպությունների համակարգող խորհրդի:

Ֆրանսիայում ներկայումս հրատարակվում են «Հառաջ» օրաթերթը, «Աշխարհ» շաբաթաթերթը, «Ապագա», «Անահիտ» թերթերը, «Ֆրանս Արմենի», «Անդաստան» ամսագրերը:

Ինչպես վերը նշվեց, ներկայումս Գերմանիայում ոչ պաշտոնական տվյալներով բնակվում է շուրջ 40 հազար հայ, որոնք հիմնականում զբաղված են արդյունաբերության, շինարարության, գիտության, առողջապահության բնագավառներում: Բեռլինում, Մայնցում, Մյունխենում, Շտուտգարդում, Քյոլնում, Համբուրգում և այլ քաղաքներում ձևավորվել են հայ համայնքներ:

---

[610] Հայոց պատմություն, էջ 651:

[611] Տե՛ս Սփյուռքահայ կազմակերպություններ, էջ 24, 27:

Իտալիայի հայ համայնքը տնտեսապես բարգավաճ է: Ունի բժիշկներ, առևտրականներ, գործարարներ: Իտալիայի Հայոց միության, ինչպես նաև միլանահայերի հանդիպումների հավաքատեղին «Հայ տունն» է, որտեղ կազմակերպվում են թատերական ներկայացումներ, ազգային և մշակութային հանդեսներ:

Միլանի Ս. Ամբրոզիո տաճարի մոտակայքում տեղադրված է Մեծ եղեռնի զոհերի հիշատակը հավերժացնող հայկական խաչքար: 2000 թ. Հռոմի պապ Հովհաննես Պողոս II-ը Ս. Գրիգոր Լուսավորչի մասունքները հանձնել է Հայ առաքելական եկեղեցուն:

2003 թ. դրությամբ Մեծ Բրիտանիայում հայերի թիվը կազմել է 15-20 հազար մարդ: 8-10 հազարը բնակվել է Լոնդոնում:

Գաղութի համախմբման և ազգային կյանքի կազմակերպման գործում կարևոր դեր է խաղում Բրիտանահայ համայնքային և եկեղեցական խորհուրդը, որը կազմված է հայ ազգային կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների 17 ներկայացուցիչներից: Խորհուրդը համայնքի միակ ներկայացուցչական ընտրովի մարմինն է, որի գլխավոր նպատակը բրիտանահայության ազգային ինքնագիտակցության պահպանումն ու գաղութի միասնականության, տարբեր կազմակերպությունների համագործակցության ապահովումն է:

Ինչպես վերը նշվել է, ներկայումս ԱՄՆ-ում բնակվում է շուրջ 1 միլիոն 600 հազար հայ: Նրանց գրեթե կեսը կենտրոնացած է Լոս Անջելես, Նյու Յորք, Դետրոյտ, Բոստոն, Չիկագո, Ֆիլադելֆիա քաղաքներում: ԱՄՆ-ում գործում են ազգային երեք կուսակցությունների՝ ՀՅԴ-ի, ՍԴՀԿ-ի, ՌԱԿ-ի, տեղական մարմինները: Գրեթե բոլոր հայաշատ քաղաքներում մասնաճյուղեր կան համասփյուռքյան նշանակություն ունեցող՝ ՀԲԸՄ, ՀՄԸՄ, ՀՕՄ, Համազգային հայ կրթական և մշակութային միություն, «Նոր սերունդ» մշակութային միություն, Թեքեյան մշակութային միություն և այլ կազմակերպություններ՝ իրենց գեղարվեստական խմբերով, ակումբներով, դպրոցներով[612]:

ԱՄՆ-ի մի շարք նահանգների՝ Կալիֆորնիա (Լոս Անջելես,

[612] Տե՛ս նույն տեղում, էջ 32:

Սան Ֆրանցիսկո, Ֆրեզնո), Միչիգան, Կոլումբիա, Փենսիլվանիա, համալսարաններում գործում են հայագիտական ամբիոններ և դասընթացներ: ԱՄՆ-ում լույս են տեսնում «Հայրենիք», «Նոր օր», «Նոր կյանք», «Նոր գիր», «Ասպարեզ» թերթերը, «Առագաստ» ամսագիրը, «Այգ» եռամսյա պարբերականը:

2009 թվականի տվյալներով Արգենտինայում բնակվում է ավելի քան 100 հազար հայ, որոնց մեծ մասը (շուրջ 90 հազար) կենտրոնացած է Բուենոս Այրեսում և արվարձաններում:

Հայ ազգային կուսակցությունների տեղական կազմակերպություններն իրենց գործունեությունն իրականացնում են մշակութային, հայրենակցական, բարեգործական և մարզական միությունների, պարբերականների միջոցով:

2003 թվականի օգոստոսի 20-ին Հայոց ցեղասպանության փաստը վերաճանաչել է Արգենտինայի Խորհրդարանը, իսկ 2005 թվականի ապրիլի 20-ին՝ Սենատը:

Բուենոս Այրեսի Պալերմո թաղամասի Արմենիա փողոցում 1998 թվականին կառուցվել է Սարդարապատի հերոսամարտի հուշարձան-կոթող: 2009 թվականի հոկտեմբերի 1-ին Բուենոս Այրեսի «Հայ կենտրոնի» տարածքում տեղադրվել է Արցախյան ազատամարտում նահատակված հայ մարտիկների հիշատակը հավերժացնող՝ Սփյուռքում առաջին խաչքար-հուշակոթողը:

2009 թվականի տվյալներով Ավստրալիայում բնակվում է շուրջ 60 հազար հայ, գերակշիռ մասը Սիդնեյ (42 հազար) և Մելբուռն (13 հազար) քաղաքներում: Համայնքի անդամների հիմնական մասը հայախոս է[613]:

Սիդնեյ և Մելբուռն քաղաքներում գործում են Հայ առաքելական, Հայ կաթողիկե և Հայ ավետարանական եկեղեցիներ, երեք ամենօրյա և վեց մեկօրյա վարժարաններ: Ազգային կյանքը կազմակերպում են ավանդական կուսակցությունների տեղական մարմինները, համահայկական հայտնի կրթական և մշակութային միությունների մասնաճյուղերը:

---

[613] Տե՛ս Դալլաքյան Կ., Հայ սփյուռքի պատմություն (համառոտ ակնարկ), Երևան, 2004, էջ 83:

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՐՐՈՐԴ ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ՍԿԶԲԻՆ (2001-2012 թթ.)

1. ՀՀ ՆԵՐՔԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ա. Տնտեսական վիճակը

Հայաստանի Հանրապետությունը քայլ առ քայլ հաղթահարելով անցումային շրջանի առաջին տասնամյակի դժվարությունները տնտեսության մեջ՝ 21-րդ դարասկզբին շարունակում էր ապահովել կայուն տնտեսական աճ: Ու թեև 1999-2000 թթ. տնտեսական աճի տեմպերը փոքր-ինչ դանդաղեցին՝ կրելով Ռուսաստանի տնտեսական ճգնաժամի բացասական հետևանքները, հաջորդող տարիներին տնտեսությունը թևակոխեց արագացող աճի փուլ, իսկ 2002 թվականից գրանցվեցին տնտեսության զարգացման միայն երկնիշ ցուցանիշներ: Այսպես, օրինակ, 2002-2008 թթ. տնտեսական աճը կազմել է միջինը 12,5%: Այդ նույն ժամանակամիջոցում համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) իրական աճի միջին տարեկան տեմպը հանրապետությունում կազմել է 10%, իսկ 2009-2011 թթ. 4%, կապված համաշխարհային տնտեսական ճգնաժամի հետ[614]: Դրա համար ՀՀ նոր կառավարությունը ծրագրեց տնտեսական աճի ցածր, նվազ ցուցանիշ՝ 4,2 տոկոս՝ նկատի ունենալով արտաքին միջավայրում առկա մարտահրավերներն ու ռիսկերը, ինչպես նաև միջազգային կառույցների գնահատականները:

21-րդ դարասկզբին ՀՀ տնտեսությունը թևակոխեց որակական նոր փուլ՝ անցում «սպառողական տնտեսությունից» «խնայողական տնտեսության»: Տնտեսության մեջ ընդհանուր խնայողությունները տարիներ շարունակ բացասական մեծություն են եղել, այսինքն հանրապետությունը էականորեն ավելի շատ է սպառել,

---

[614] Տե՛ս Հայաստան 1998-2007, Երևան, 2008, էջ 8, ՀՀ կառավարության 2008-2011 թթ. գործունեության արդյունքները, Երևան, 2011, էջ 12:

քան արտադրել: Իրավիճակը շրջադարձային էր 2002 թ., երբ առաջին անգամ ՀՀ տնտեսությունում գրանցվեց խնայողությունների դրական միտումներ: Եթե 2000 թ. ՀՀ տնտեսության ընդհանուր սպառումը գերազանցում էր համախառն ներքին արդյունքը 11%-ով, ապա 2008 թ. ներքին խնայողությունները արդեն կազմում էին ՀՆԱ-ի 16%-ը: Այդ տարիներին գրանցված տնտեսական աճը ուղեկցվեց տարեցտարի ավելացող բարձր տեմպով: 2008 թ. ներդրումների աճի տեմպը մոտ հինգ անգամ գերազանցեց 2000 թ. այդ ցուցանիշը՝ 15%-ի փոխարեն աճելով 24%-ով[615]: Տնտեսության ազատության աստիճանով եվրոպական 41 երկրների շարքում ՀՀ-ն 15-րդն էր, փաստ, որը տպավորիչ է անցման շրջանում գտնվող պետությունների համար: 2000-2008 թթ. օտարերկրյա ներդրումների շնորհիվ տնտեսության ոլորտում արձանագրվեցին կառուցվածքային փոփոխություններ: Այսպես, 2000-2002 թթ. ՀՀ տնտեսության մեջ ներգրավված օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալները մեծապես պայմանավորված էին կապի (Արմենթել) և էներգետիկայի (Հայռուսգազարդ) բնագավառների ներդրումային մասնավորեցումներով: Վերջին տարիներին զգալիորեն աճել են փոքր և միջին ծավալի օտարերկյա ներդրումները: Գործարար միջավայրի բարելավմանն ուղղված քաղաքականության իրականացման արդյունք էր այն, որ 2007-ի դրությամբ ՀՀ-ում արդեն գործում էին օտարերկյա կապիտալի մասնակցությամբ 3350 ընկերություններ, որոնց շարքում մեծ թիվ էին կազմում ՌԴ-ի, Իրանի և ԱՄՆ-ի ներդրողների մասնակցությամբ ստեղծված ընկերությունները: Նույն տարում ՀՀ-ն 37 երկրների հետ ստորագրել էր ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության մասին երկկողմ համաձայնագրեր[616]:

Փաստորեն, մինչև համաշխարհային տնտեսական ճգնաժամի ներթափանցումը Հայաստանի Հանրապետություն՝ գնաճի ցածր մակարդակը, փոխարժեքի ազատական ռեժիմը, իրական տոկոսադրույքների անկումը երկրի տնտեսության կայունության նախադրյալներ էին:

---

[615] Տե՛ս Հայաստան 1998-2007, էջ 8:
[616] Տե՛ս նույն տեղում, էջ 9:

Նպատակաուղղված աշխատանքի արդյունքում տեղի ունեցան լուրջ փոփոխություններ երկրի տնտեսության կառուցվածքում ինչպես ըստ ոլորտների, այնպես էլ ըստ սեփականության ձևերի: 2008 թ. տվյալներով ՀՀ-ում ՀՆԱ-ի ավելի քան 85%-ը արտադրվում էր մասնավոր հատվածում, որից 40%-ը՝ փոքր և միջին բիզնեսում:

Եթե անկախացմանը հաջորդող տարիներին, հատկապես 1990-ական թթ. առաջին կեսին, տնտեսության մյուս ճյուղերի համեմատ՝ արդյունաբերության վիճակը բնութագրվում էր որպես ամենավատթարը, որտեղ անկումը 80% էր, ապա 21-րդ դարասկզբին պատկերը որոշ չափով փոխվում է, և արդյունաբերությունը ապահովում է աստիճանական տնտեսական աճ:

Արդյունաբերական ամբողջ արտադրանքի մեջ վերամշակող արդյունաբերության տեսակարար կշիռը ավելացավ և 2007թ. տվյալներով կազմեց 66,7%[617]:

Դրական կարելի է համարել նաև արդյունաբերական արտադրանքի կառուցվածքային փոփոխությունները: 2001թ. ընդհանուր առմամբ սեփականաշնորհվել էր պետական ձեռնարկությունների 80%-ից ավելին: Փաստորեն անկախացումից հետո սկսվեց և 2004 թ. հիմնականում ավարտվեց արդյունաբերական ձեռնարկությունների ապապետականացումը: Երկրի արդյունաբերական դիմագիծը որոշող ձեռնարկությունները դադարեցին աշխատելուց, մատնվեցին անգործության, մաներատվեցին ու կազմալուծվեցին: Մյուսները կտրուկ կրճատեցին արտադրանքի ծավալը: 2006 թ. տվյալներով հանրապետության տարածքում գործող ինքնուրույն արդյունաբերական ձեռնարկությունների քիվը գերազանցում էր 10 հազարը, որոնց մեծ մասը մինչև 100 աշխատող ունեցող փոքր ու միջին ձեռնարկություններ էին: Դրանց բաժին էր ընկնում արդյունաբերության արտադրանքի ընդհանուր ծավալի գրեթե 90%-ը[618]: 100-ից ավելի աշխատող ունեցող ձեռնարկությունները միավորված էին մասնագիտացված կամ բազմաճյուղ միավորումների ու

---

[617] Մինասյան Է., Վարդանյան Ա., ՀՀ ներքին դրությունը, տնտեսական վիճակը (2001-2011 թթ.), Լրատու, Ստեփանակերտ, 2012, 1 (12), էջ 106:
[618] Տե՛ս նույն տեղում:

ֆիրմաների մեջ: Գնալով մեծանում էր համատեղ կամ միայն արտասահմանյան կապիտալին պատկանող ձեռնարկությունների թիվը: Հանրապետության արդյունաբերությունը արդեն հանդես էր գալիս որպես նյութական արտադրության բազմաճյուղ ոլորտ, բայց ոչ իր նախկին բովանդակությամբ, ճյուղային կառուցվածքով ու ներքին արտադրական ու տեխնոլոգիական կապերով: Սեփականաշնորհման հետևանքով լուրջ փոփոխությունների ենթարկվեց ճյուղերի հարաբերակցությունը: Եթե նախկինում առաջինը մեքենաշինությունն էր, որը մետաղամշակման ճյուղի հետ միասին տալիս էր հանրապետության ողջ արդյունաբերության համախառն արտադրանքի մեկ երրորդը, երկրորդ տեղում էր թեթև արդյունաբերությունը, որին էլ հաջորդում էին սննդի, քիմիական, գունավոր մետաղածուլության, շինարարական արդյունաբերությունն ու էլեկտրաէներգետիկան, ապա այժմ փոխվել էր այդ հարաբերակցությունը և հանրապետության արդյունաբերական արտադրանքի ծավալում ավելի մեծ բաժին ունեին սննդի ու թեթև արդյունաբերությունը, գունավոր մետաղների ու շինանյութերի արտադրությունը, էլեկտրաէներգետիկան, ինչպես նաև այնպիսի նոր ճյուղեր, ինչպիսիք են ադամանդագործությունն ու տեղեկատվական տեխնոլոգիաների արտադրությունը: 2001-2002 թթ. ՀՀ-ում մշակվում էր տարեկան մինչև 300 մլն դոլարի ադամանդի հումք[619]: Կապված համաշխարհային ճգնաժամի հետևանքների հետ՝ եվրոպական շուկայում ադամանդե իրերի նկատմամբ պահանջարկի նվազումը լուրջ հարված հասցրեց ինչպես աշխարհի, այնպես էլ ՀՀ ադամանդագործության ոլորտին: Արդյունքում մինչև 7 հազար աշխատատեղ ունեցող ձեռնարկությունները բավականին ծանր վիճակում հայտնվեցին: Ճգնաժամի թուլացումը նպաստեց ադամանդագործության հատվածում պահանջարկի մեծացմանը: 2011թ. մոտ 40 մլն դոլարի հումք է ներկրվել հանրապետություն[620]: Եթե դարասկզբին հանրապետությունում գործում էր ադամանդագործական երկու գործարան, ապա 2011թ.՝ 10 ընկերություն: «Ալ-

[619] Տե՛ս նույն տեղում:
[620] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 22.09.2011:

ռոսա» ռուսական ընկերությունը մեծացրել է ՀՀ-ին մատակարարվող աղամանաղի հումքի ծավալները: Հանրապետությունում շարունակում են գործել Նոր Գեղիի «Լորի» գործարանը, որը աշխատում է թերբեռնվածությամբ, 30-40% հզորությամբ՝ ամսական քողարկելով 3-4 մլն դոլարի արտադրանք, մինչդեռ նախկինում ընկերության արտադրանքի ամսական ծավալները հասնում էին 7-10 մլն դոլարի: Հիմնականում ռուսական հումքով աշխատող երկրորդ աղամանդագործական գործարանը՝ Նոր Հաճնի «Արևակն» ընկերությունը, 2011 թ. 41,7% աճ էր արձանագրել: Գործարանում աշխատում էր 126 մարդ՝ 103 հազար դրամ միջին աշխատավարձով: 2010 թ. թեթև արդյունաբերության համակարգում գործում էին 27 խոշոր և միջին ձեռնարկություններ[621]:

21-րդ դարասկզբին սեփականաշնորհման հետևանքով, արդյունաբերության ոլորտում նկատված թերություններով ու սխալներով հանդերձ, այն աստիճանաբար աճ էր արձանագրում: Ընդ որում աճի տեմպեր ապահովող հիմնական ճյուղերն էին հանքահումքային, մետաղագործական, շինանյութերի, մեքենաշինական, քիմիական արդյունաբերությունները: Սրանք ոլորտներ էին, որոնց զարգացումը Հայաստանի Հանրապետությանը հնարավորություն ընձեռեց հումք և կիսաֆաբրիկատներ արտադրող երկրից անցնել վերջնական արտադանք թողարկող արդյունաբերական երկրի: Նշված ոլորտները կարողացան առավել արագ համակերպվել շուկայավարման նոր պահանջներին: Շատ դեպքերում կարևոր դեր խաղացին նաև միջազգային շուկաներից եկող ազդակները: Մեծանում էին պղնձի, մոլիբդենի, ինչպես նաև ակնագործական զարդերի նկատմամբ համաշխարհային պահանջները, որոնք, իրենց հերթին, հանգեցնում էին գների աճին՝ լավ նախադրյալներ ստեղծելով երկրում հատկապես հանքարդյունաբերության և աղամանդագործության, ինչպես նաև մյուս ճյուղերի զարգացման համար: 2000-2008 թթ. վերագործարկվեցին ու առավել հզորացան շուրջ 50 խոշոր ընկերություններ, հիմնվեցին ավելի քան 2500 միջին և փոքր արդյունաբերական ձեռնարկությու-

[621] Տե՛ս նույն տեղում:

ներ[622]: Վերագործարկվեցին մի շարք մեքենաշինական գործարաններ՝ «Հրազդանմաշ» ՓԲԸ, «Հայէլեկտրամեքենա», Ավտոդղերի, Երևանի հաստոցաշինական: Քիմիական արդյունաբերության ոլորտում զարգացումն ընթացավ «մեծ քիմիայից» «փոքր քիմիային» անցնելու քաղաքականության շրջանակներում: Վերագործարկվեցին «Նաիրիտ» ՓԲԸ-ը (կարճ ժամկետով), «Հայ-քիմմենքենա» արտադրական միավորումը և այլն: Վերազինվեցին հանքարդյունաբերության, մետաղագործական և շինանյութերի արդյունաբերության ձեռնարկությունները: Կարևորագույն քայլ էր «Զանգեզուր» պղնձամոլիբդենային կոմբինատ ՓԲԸ-ի վերաշինությունն ու ընդլայնումը, Ալավերդու «Մանես և Վալեքս» ՓԲ ընկերության կողմից Ալավերդու լեռնամետաղագործական գործարանի պղնձաձուլական արտադրության ընդլայնումը, ինչպես նաև «Ռուբին», «Տրանզիստոր» և այլ գործարանների տեխնիկական վերազինումը և այլն: Վերջին տարիներին մեծ զարգացում ապրեցին աղամանդագործության և ոսկերչության ոլորտները: 2000-2007թթ. ընթացքում ՀՀ-ում արտադրվել է մոտ 1,65 մլրդ ԱՄՆ դոլարի արտադրանք, որը գրեթե ամբողջությամբ արտահանվել է: Նույն ժամանակահատվածում զբաղվածությունը ոլորտում աճել է 3-4 անգամ[623]:

2001 թվականից տեղեկատվական տեխնոլոգիաները ՀՀ-ի տնտեսության զարգացման գերակա ճյուղ են հռչակվել: Հաշվի առնելով Հայաստանի գիտակրթական մակարդակը, այդ ոլորտում երկրի ունեցած ավանդույթները, մասնագիտական բարձրորակ մարդկային ռեսուրսը, ինչպես նաև ՀՀ-ի աշխարհագրական դիրքը, տրանսպորտային հաղորդակցության ուղիների սահմանափակումներն ու սակավ բնական պաշարները՝ զարկ տրվեց տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառին: 2008 թ. այդ ոլորտում գործում էր ավելի քան 230 ձեռնարկություն, իսկ 2011թ. 350: Ոլորտի մասնագետների թիվը Հայաստանի Հանրապետությունում 2008 թ. հասնում էր 6500-ի, իսկ 2011թ., հեռահաղորդակցութ-

[622] Տե՛ս Հայաստան 1998-2007, էջ 15, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Երևան, 2013, էջ 269:
[623] Տե՛ս նույն տեղում:

յան ճյուղի հետ միասին, 10 հազարի[624]: Այստեղ հայաստանյան մասնաճյուղեր են հիմնում և իրենց գործունեությունն ընդլայնելու ծրագրեր իրագործում մի շարք օտարերկյա ընկերություններ՝ «Մայքրոսոֆթ», «Սինոփսիս», «Ալկատել», «Լայքս» «Նեյշնլ ինսթրումենթ» և այլն: Միջազգային որակի հազարավոր հայ մասնագետներով համալրված տեղեկատվական և թվային տեխնոլոգիաների բնագավառը հանդիսանում է ՀՀ արդյունաբերության ամենաարժեքավոր հավելյալ արժեք ստեղծող և ամենաարագ զարգացող ճյուղը: Այդ աճը կազմում է տարեկան շուրջ 25%: Զարգացման այս տեմպը պահպանելու և ՀՀ երիտասարդության հետաքրքրությունները այս ոլորտի նկատմամբ խրախուսելու նպատակով 2005 թ. սկսած՝ 7 տարի շարունակ կազմակերպվում է ՀՀ նախագահի ամենամյա մրցանակաբաշխություն, որին մասնակցել են հարյուրավոր ուսանողներ և աշակերտներ: Նրանցից 139 ուսանող, ինչպես նաև 55 աշակերտ արժանացել են ՀՀ նախագահի պարգևներին[625]:

Արդյունաբերության մեջ նկատվող որոշ դրական ձեռքբերումների կողքին առկա են մի շարք թերություններ ու բացթողումներ, որոնց պատճառով արդյունաբերությունը ոչ միայն դեռևս չի ապահովում խորհրդային տարիների զարգացման բարձր մակարդակը, չի ստեղծում անհրաժեշտ թվով աշխատատեղեր, այլև այդ ոլորտի մշտական առաջընթաց աճ: Հիմնական թերությունն ու բացթողումը այն է, որ խորհրդային տարիներին մեծ ճանաչում ունեցող շատ ձեռնարկություններ ոչ միայն մատնվել են անգործության, ամբողջովին թալանվել են, որի պատճառով հնարավոր չէ այլևս նրանց վերականգնումը, այլև չեն կառուցվում քիչ թե շատ նոր խոշոր ձեռնարկություններ, որոնք կապահովեին բնակչության զբաղվածությունն ու հանրապետությունը կվերածեին զարգացած արդյունաբերական երկրի: Այս ոլորտի հիմնական թերություններից են մենաշնորհներն ու գերկենտրոնացվածությունը տնտեսական որոշ ճյուղերում, ստվերի առկայությունը, ինչպես նաև ազատ մրցակ-

[624] «Հայաստանի Հանրապետություն», 22.09.2011, 2.11.2011:
[625] Տե՛ս նույնը, 13.10.2011:

ցային և ներդրումային միջավայր չապահովելը, պետական չինովնիկների հովանավորչությունը բիզնեսում և այլն: Այս թերությունների մասին խոսվեց 2011 թ. նոյեմբերի 9-ին Երևանում կայացած Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության 6-րդ համագումարում[626]:

Արդյունաբերության բնագավառում հանրապետության սարքաշինության չորրորդ գործարանը Վանաձորի «Ավտոգեն Մ.»-ն է (նախկին «Ավտոգենմաշը»), որը ունենալով 250 աշխատող՝ տարեկան մոտ 1 մլրդ դրամի արտադրանք է տալիս, որն ամբողջությամբ արտահանվում է Ռուսաստան: Գործարանը արտադրում է ավտոգենային շուրջ 40 անուն սարքավորումներ՝ հիմնականում կտրիչներ և այրիչներ: 2011 թվականին արտադրատեսականին մնացել է գրեթե նույնը, սակայն ծավալները էապես նվազել են: Այժմ տարեկան 1 մլն-ի փոխարեն 60-70 հազար հատ է արտադրվում յուրաքանչյուր սարքավորումից, այսինքն՝ նախկին ծավալների միայն 12-15 տոկոսը[627]:

Արդյունաբերական երբեմնի հզոր Վանաձորում, որտեղ 4 տասնյակից ավելի գործարաններ էին աշխատում, այսօր «Ավտոգեն Մ.»-ն է միակ գործողը: Քանի որ աշխատավարձը ոլորտում ցածր է, միջինից էլ պակաս՝ 45 հազարից 100 հազար դրամ, իսկ աշխատանքն էլ ծանր է ու ոչ գրավիչ, ուստի գործարանում աշխատել ցանկացողները քիչ են[628]:

Հայաստանի Հանրապետությունը փոքր շուկա է և բնական է, որ զարգացած տնտեսություն ունենալու համար պետք է շեշտը դնել արտահանվող ապրանքների ու ծառայությունների վրա: 21-րդ դարասկզբին ամենախոշոր պատվիրատուն ներքին շուկայում հանքարդյունաբերությունն է, որը մասամբ է ապահովում մեքենաշինական մի շարք ընկերությունների այժմյան գոյությունը: Ներկայումս չկա ոլորտի գոնե մեկ ընկերություն, որը աշխատի իր նախկին հզորությունների գոնե կիսով չափ: Գործող ընկերությունները նախկին ներուժի 20 տոկոսն են հազիվ ներկայացնում: Այդ

---

[626] Տե՛ս «Ազգ», 10.11.2011:
[627] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 29.06.2011:
[628] Տե՛ս Սինասյան Է., Վարդանյան Ա., նշված աշխ., էջ 108:

թվում կան նաև իրենց արտադրանքը արտահանողներ, սակայն դրանք էլ քիչ են ու արտադրում են իրենց հնարավորություններից շատ ցածր[629]:

Նախ նկատենք, որ այժմ քիչ թե շատ գործող բոլոր գործարանների ղեկավարները դրանց նախկին տնօրեններն են, ովքեր «Վառչերային բում»-ի տարիներին շատ էժան գներով, ինչպես ընդունված է ասել՝ կոպեկներով տեր դարձան հսկայական շինություններ ու հողատարածքներ ունեցող այս գործարաններին: Ամենափոքր գործարանները մոտ 3-4 հա տարածք են զբաղեցնում, կան նաև մինչև 13-14 հա տարածքներ ունեցողներ, սակայն չկա որևէ մի գործարան, որտեղ տարածքներն այսօր ամբողջովին շահագործվեն: Դրանց մի մասը, եթե հաջողվել է, տրվել են վարձակալության, ինչից ստացվող եկամուտների հաշվին բուն գործարանի աշխատողների աշխատավարձերն են փակվել, կամ էլ պարզապես մատնված են անգործության: Բոլոր դեպքերում կապիտալ է (մանավանդ մայրաքաղաքում), որը ծայրահեղ դեպքում կարելի է պատկառելի մի գումարով վաճառել որպես սոսկ տարածք, քանի որ գույքը, եթե դեռ չի վաճառվել, հազիվ թե ինչ-որ մեկին պետք գա: 2000-ական թվականներին շարունակում էին անգործության մատնվել դեռևս 1990-ական թվականներին տարերայնորեն սեփականաշնորհված բազմաթիվ ձեռնարկություններ: Այսպես, օրինակ, Արագածոտնի մարզի Քուչակի հաստոցաշինական գործարանը՝ նախկին Ջերժինսկի գործարանի մասնաճյուղը, որ նախկինում ուներ 400 աշխատող և արտադրում էր փոքր գայլիկոնանման հաստոցներ ու պահեստամասեր, սեփականաշնորհումից ի վեր՝ արդեն 17 տարի, փակ է[630]: Փաստորեն գործարանի նորօրյա սեփականատերերը ժամանակին կարողացել են չնչին կոպեկներով ձեռք գցել հարուստ գործարանը, ծախել գույքն ու մոռացության տալ այն: Ցավալի է, որ այս երևույթը, որ 1990-ական թթ. համատարած բնույթ էր կրում, շարունակվում էր նաև 2000-ական թվականներին, հատկապես մեքենաշինության ոլորտում: Նման

[629] Տե՛ս Արդյունաբերություն 1998-2003, վիճակագրական ժողովածու, Երևան, 2004, էջ 44, 45:
[630] Տե՛ս Մինասյան Է., Վարդանյան Ա., նշված աշխ., էջ 109:

տխուր պատկերի կարելի է հանդիպել նաև 21-րդ դարասկզբին հանրապետության գրեթե բոլոր մարզերում՝ Արտաշատի գործիքաշինական գործարան, «Ալմաստ» գործարանի Ապարանի մասնաճյուղ, Վանաձորի «Ավտոմատիկա» գործարան և այլն: Դրանց մեծ մասը այլևս վերականգնման ենթակա չէ:

Վերջին երկու տասնամյակում ՀՀ-ում մեքենաշինական կամ սարքաշինական որևէ նոր գործարան չի կառուցվել: Հակառակը, դեռ նախկին եղածների մեծ մասն էլ նոր սեփականատերերի կողմից թալանվել ու լրիվ անգործության են մատնվել: Իսկ քչից-շատից պահպանվածների ու գործողների համար պատվերների ու հումքի ձեռք բերման, նաև հարկային բեռի խնդիրներ են ստեղծվում ու ավելի անորոշ դարձնում վաղվա օրը: Սրան հակառակ՝ մի շարք ընկերություններ (ինչպես Երևանի Շենգավիթ վարչական շրջանում գործող «Ջրկոնստրուկցիա» ընկերությունը) երկրի համար ամենածանր օրերին անգամ կանգ չառան:

2000-ից մինչև 2008 թվականը հայրենական արտադրության խթանման, բարեփոխումների, գործարար և մրցակցային միջավայրի ձևավորման, կայուն տնտեսական աճի ապահովման, արտաքին տնտեսական հարաբերությունների խորացման և տնտեսության վերամասնագիտացման ժամանակաշրջան էր:2008 թ. տնտեսական առաջընթացը կայունացավ, և զգացվում էր բարեփոխումների նոր փուլին անցնելու անհրաժեշտություն: Դրա համար ստեղծվել էին բոլոր բավարար հիմքերը՝ անցնելու ազատ առևտրին, միջազգային կառույցների անդամակցությանը և այլն: 2008 թ. ձևավորվեց նոր կառավարություն և մինչ տրվում էր երկրորդ բարեփոխումների մեկնարկը, վրա հասավ համաշխարհային ճգնաժամը:

Ընդամենը երեք ամիս գործող նոր կառավարությունը դեռ նոր էր սկսում գործնական քայլեր ձեռնարկել, երբ սկսվեց ռուս-վրացական պատերազմը: Փակվեցին ճանապարհները՝ ըստ էության Հայաստանի Հանրապետությունը դրսի աշխարհի հետ կապող միակ զարկերակը: Տարածաշրջանային ճգնաժամն իր հետևանքներով ֆինանսատնտեսականից ավելի շուտ տեղ հասավ: Երկիրը փակ սահմանների պայմաններում ստիպված անցում կատարեց

արտակարգ ռեժիմի կառավարմանը: 2008թ. դեկտեմբերից արդեն աշխարհի բազմաթիվ երկրների հետ Հայաստանի Հանրապետությունը ևս մտավ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հորձանուտը, որտեղ տնտեսական անկումը հասավ 15%-ի[631]:

Նկատի ունենալով համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցությունն ու հետևանքները՝ ՀՀ կառավարությունը ձեռնարկեց որոշ միջոցառումներ արդյունաբերության ոլորտում:

Այդ միջոցառումները պայմանականորեն բաժանվում են երեք խմբի: Առաջինը՝ կարճաժամկետ, որը ուղղված էր ճգնաժամի հետևանքների վերացմանն ու օպերատիվ խնդիրների լուծմանը, երկրորդը՝ միջնաժամկետ, որը ապահովում էր ներդրումները, զբաղվածությունը և տնտեսական աճը՝ կայուն զարգացման փուլ մտնելու համար, երրորդը՝ երկարաժամկետ, որը բացահայտում ու իրականացնում էր արդյունաբերության նոր հնարավորություններն ու նոր քաղաքականությունը: Նորանկախ հանրապետության պատմության մեջ առաջին անգամ կառավարությունը հաստատել է արդյունաբերության քաղաքականության հայեցակարգ, որը նախատեսում էր տնտեսությունը դարձնել արտահանող, որի իրականացումը դառնում է առաջիկա տարիների գլխավոր հրամայականը:

2009 թ. հուլիսին արդյունաբերությունում անկումը հասավ ամենաբարձր ցուցանիշի՝ 7,8 տոկոսի: Կառավարությունը ձեռնարկեց որոշ քայլեր այս ոլորտին աջակցելու համար: 2008-ի վերջին վարչապետի գլխավորությամբ ստեղծվեց օպերատիվ շտաբ, որը գնաց որոշակի քայլերի՝ մասնավոր ընկերություններին ֆինանսական աջակցություն տրամադրելուն: Հավանություն ստացած բիզնես նախագծերին պետությունը տրամադրում էր վարկեր, վարկային երաշխիքներ, դառնում նրանց կապիտալի մասնակիցը: Այդ նպատակով շուրջ 32 մլրդ դրամ հատկացվեց արտադրական ձեռնարկություններին, ավելի քան 37 մլրդ դրամ ուղղվեց փոքր և միջին բիզնեսին, 32,5 մլրդ դրամ էլ՝ խոշոր, համակարգաստեղծ հանքարդյունաբերական ընկերություններին[632]:

---

[631] Տե՛ս նույն տեղում, էջ 110:
[632] Տե՛ս նույն տեղում:

Միջնաժամկետ միջոցառումներով խրախուսելով ներդրումների ներգրավումը արդյունաբերության մեջ՝ կառավարությունը մինչև 2011թ. առաջին կիսամյակը հնարավորություն ընձեռեց 300 մլն դրամը գերազանցող և սարքավորումներ ներմուծող 16 ընկերությունների հետաձգել ավելացված արժեքի վճարումը երեք տարով: Այդ ընթացքում կատարվեցին ավելի քան 72 մլրդ դրամի ներդրումներ՝ ստեղծելով մոտ 1500 նոր աշխատատեղեր: Արդյունաբերության զարգացման և արտահանման խթանման քայլերի արդյունքում արդեն 2010 թվականին արդյունաբերության մեջ արձանագրվեց 9,7 տոկոս աճ, իսկ համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) մեջ արդյունաբերության բաժինը հասավ 15 տոկոսի՝ 2009 թվականի 13,8 տոկոսի փոխարեն[633]:

2011 թ. 64 ձեռնարկություններում կատարվեցին լուրջ ներդրումներ, որոնցից 15-ը նոր ձեռնարկություններ են: Արդեն իսկ գործարկվել են «Արփիմեդ» դեղագործական ընկերությունը, «Արարատ ջուրը», «Պեպսին», «Մայքրոսոֆթի ինովացիոն կենտրոնը» և այլն: Որոշ ձեռնարկություններում, ինչպիսին, օրինակ, «Արմենիան մոլիբդեն քոմփնին» է, կապիտալ ներդրումների մեծ ծրագրեր են իրականացվում, որոնք հնարավորություն են տալիս 3,5 հազար նոր աշխատատեղեր ստեղծելու և արդյունաբերության աստիճանական վերելքն ապահովելու[634]:

Երկարաժամկետ միջոցառումներից էր արդյունաբերության զարգացման նոր ծրագիրը, որն այս ոլորտի համար առաջին համալիր ծրագիրն էր երկրի անկախանալուց ի վեր: Այն միտված էր արդյունաբերության արտահանման ներուժի զարգացմանը, իսկ հիմնական նպատակը առաջիկա 20-30 տարում Հայաստանը գիտատար ապրանքներ և ծառայություններ արտադրող երկիր դարձնելն էր:

2000-ական թթ. կրճատվեց էներգակիրների ներմուծումը արտասահմանից: Առավելագույնի հասավ սեփական ջրաէներգետիկ ռեսուրսների օգտագործումը և սկիզբ դրվեց ոչ ավանդական (արե-

[633] Տե՛ս նույն տեղում:
[634] Տե՛ս նույն տեղում:.

գակի, քամու և ընդերքի) ջերմային էներգառեսուրսների օգտագործմանը: 2006 թ. արդեն փոքր ջէկերի արտադրանքը կազմում էր 230 մլն կվտ[635]: ՀՀ էներգետիկ հզորության զգալի աճ ապահովեցին նաև Հրազդանի և Երևանի ջէկերը՝ վերակառուցվելուց հետո: Ռուսաստանից Հայաստան հասնող գազամուղից բացի կառուցվեց Իրան-Հայաստան հզոր գազամուղը, որի շինարարության առաջին փուլն ավարտվեց 2007 թ. մարտին, իսկ ամբողջությամբ՝ 2009 թ.: Կառուցելով 190 կմ գազատար՝ ՀՀ-ն ունեցավ կայուն և հուսալի գազամատակարարում: Իրանական գազի դիմաց վճարումները կատարվում են գազ՝ էլեկտրաէներգիայի դիմաց սկզբունքով[636]:

Էներգահամակարգի ընկերությունների մասնավորեցման գործընթացում շրջադարձային էր 2002 թվականը, երբ իրականացվեց «Հայկական էլեկտրացանցեր» ՓԲԸ մասնավորեցումը: Դրան հետևեց «Սևան-Հրազդան կասկադ» ՓԲԸ մասնավորեցումը: Ինչպես արդեն նշվել է, 2002 թ. հոկտեմբերին հանրապետության արդյունաբերական որոշ ձեռնարկություններ ևս Երևանի «Մարս», «Էլեկտրոն» և այլ խոշոր մեքենաշինական համալիրների մեծ մասը, ինչպես նաև Հրազդանի ջէկ-ի բաժնետոմսերի մեծ մասը 1 մլրդ դոլար պետական պարտքերի դիմաց տրվեց Ռուսաստանի Դաշնությանը: Բաժնետոմսերի մեծ մասը վաճառվեցին Ռուսաստանի «ՌԱՕ ԵԷՍ» բաց բաժնետիրական ընկերությանը[637]:

2004 թ. ՀՀ էլեկտրաէներգետիկ համակարգի պետական ընկերությունների կողմից իրականացվող ֆինանսական առողջացման ծրագրային միջոցառումները մտան ավարտական փուլ, և 2005 թվականից ընկերությունների գործունեությունը ամբողջությամբ իրականացվեց առևտրային հիմքերով: Հրազդանի ջէկ-ի 5-րդ էներգաբլոկի անավարտ շինարարության գույքը 2006 թ. վաճառվեց ՌԴ «Գազպրոմ» ընկերությանը, և վերջինս պարտավորվեց 2009 թ. գազատուրբինային տեղակայման հավելումով էներգաբլոկի

[635] Տե՛ս նույն տեղում, էջ 111:
[636] Տե՛ս Հայաստան 1998-2007, էջ 27:
[637] Նույն տեղում, էջ 26:

տեղակայված հզորությունը հասցնել մոտ 440 մվտ[638]: 2011թ. վերջին գործարկվեց Հրազդան ջԷԿ-ի 5-րդ էներգաբլոկը՝ 460 մվտ հզորությամբ, որը անմիջապես միանում է նոր կառուցվող Իրան-Հայաստան էլեկտրահաղորդման գծին՝ դրանով երկու երկրների էլեկտրաէներգիայի փոխանակման հզորությունը 350 մվտ-ից հասցնելով 1200 մվտ-ի[639]: 2010 թ. շահագործվեց Երևանի համակցված շոգեգազային ցիկլով (ՀՇԳՑ) էներգաբլոկը: Էներգետիկ անվտանգության շահերից էր բխում նաև ատոմային կայանի վերագործարկումը, ինչը շատ կարևոր քայլ էր: Ավելին, այդ շահերը թելադրում էին նաև նորի կառուցումը, որը նախատեսվում է առաջիկա տարիների ընթացքում: 2011 թ. տեղի ունեցավ նոր ատոմակայանի կառուցման համար ներդրողների ընտրության մրցույթը և բանակցությունները նրանց հետ:

Սկսվել է Իրան-Հայաստան նավթատար խողովակաշարի կառուցումն ու նավթամթերքի պահպանման համալիրի կառուցման առաջին փուլը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ էներգետիկ պաշարներից ամենաշատը օգտագործվում են ջրային պաշարները, 2000-ական թվականներին զգալի աշխատանքներ տարվեցին այդ ուղղությամբ: Դրանցից կարելի է առանձնացնել Սևան-Հրազդանի և Որոտանի խոշոր հիդրոէլեկտրակայանների համալիրները և Ձորահէկը: Կառուցվեցին միջին հզորության երեք նոր հէկեր և յուրացվեց փոքր հէկերի ներուժը[640]:

Միջազգային կազմակերպությունների և օտարերկյա պետությունների կողմից տրամադրված վարկային, դրամաշնորհային միջոցների և տեխնիկական աջակցության շնորհիվ իրականացրած աշխատանքների արդյունքում վերազինվեց 220 կվտ լարման ենթակայանների գերակշռող մասը, վերակառուցվեցին Քանաքեռ ՀԷԿ-ի երկու ագրեգատները և արդիականացվեցին Տաքև հէկի արագության կարգավորիչները, հիմնավորվեց «Լոռի բերդ» հէկի կառուցման տեխնիկատնտեսական ծրագիրը: 2005 թ. Պուշկինի լեռնանցքում շահագործման հանձնվեց Հայաստանում, նաև Կով-

[638] Նույն տեղում, էջ 25:
[639] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 20.09.2011:
[640] Տե՛ս Սինասյան Է., Վարդանյան Ա., նշված աշխ., էջ 111:

կասում առաջին ցանցային հողմաէլեկտրակայանը՝ 2,6 մվտ հզորությամբ[641]: 2011 թ. դրությամբ գործող հիմնական հէկերն էին՝ Սևան-Հրազդան հէկերի համալիրը, որը պետական սեփականություն է և բաղկացած է 7 հէկերից, Որոտանի հէկերի համալիրը, որը պետական սեփականություն է՝ կազմված 3 հէկից, ինչպես նաև Ձորահէկը: Արաքս գետի վրա նախատեսվում է կառուցել Մեղրու հէկը (մոտ 140 մվտ հզորությամբ և շուրջ 800 մլն կվտժ էներգիայի տարեկան արտադրությամբ), Դեբեդ գետի վրա՝ Շնողի հէկը (մոտ 75 մվտ հզորությամբ և 300 մլն կվտժ էներգիայի տարեկան արտադրությամբ), Ձորագետ գետի վրա Լոռի բերդի հէկը (մոտ 66 մվտ հզորությամբ և շուրջ 200 մլն կվտժ էլեկտրաէներգիայի տարեկան արտադրությամբ): 2011 թ. դրությամբ էլեկտրաէներգիա էին արտադրում 110 փոքր հէկեր, որոնց գումարային հզորությունը կազմում էր մոտ 130 մվտ, իսկ էլէկտրաէներգիայի առաքումը՝ շուրջ 410 մլն կվտժ[642]:

Փաստորեն, 2011 թ. վերջնական ամփոփումից պարզվեց, որ 4.6% ՀՆԱ աճ է գրանցվել արդյունաբերության ոլորտում: ՀՀ Կառավարությունը նախաձեռնել էր ակտիվ արդյունաբերական քաղաքականության իրականացում: Նպատակն էր ապահովել արտահանման աճը և տարատեսականացումը: Արդյունաբերական քաղաքականության թիրախը վերամշակվող արդյունաբերության ճյուղերի և համալիրների զարգացումն էր: Ռազմավարությամբ նախանշված՝ արտահանման տեսանկյունից հեռանկարային 11 ոլորտների (մեկնարկային փուլում՝ ճշգրիտ ճարտարագիտության, դեղագործության և կոնյակագործության) համար արդեն իսկ մշակվել էին ոլորտային ռազմավարությունների ուղենիշները: Արդյունաբերական քաղաքականության ուղղությամբ պետական կառույցների գործունեությունը համակարգելու նպատակով ստեղծվել էր ՀՀ վարչապետին կից արդյունաբերական խորհուրդ:

21-րդ դարասկզբի առաջին տասնամյակում տնտեսավարողների ջանքերով և պետական ընթացիկ քաղաքականության շնորհիվ գյուղատնտեսության մեջ տեղի ունեցավ տնտեսական նկատելի աճ՝ չնայած 2000թ. երաշտին: Այսպես, 2000-2008 թթ. գյուղատն-

[641] Տե՛ս Հայաստան 1998-2007, էջ 26:
[642] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 13.10.2011:

տեսության համախառն արտադրանքի ընդհանուր աճը կազմել է 80 տոկոսից ավելի, որից վերջին 5 տարիներին միջին տարեկան աճը 8%[643]: 2000-ական թթ. ագրոպարենայինն ոլորտում ձևավորվեց շուկայական հարաբերություններով կարգավորվող ազատ տնտեսական համակարգ, որտեղ գործում էին 340 հազարից ավելի գյուղացիական տնտեսություններ, գյուղատնտեսությամբ զբաղվող մեծ թվով առևտրային կազմակերպություններ, գյուղատնտեսության սպասարկման, գյուղմթերքների իրացման ու վերամշակման բազմաթիվ մասնավոր ընկերություններ: Չնայած դրան՝ ագրարային ոլորտի ծառայությունները ու ենթակառուցվածքները պետական աջակցության անմիջական կարիք ունեն, մասնավորապես՝ ոռոգման համակարգերի զարգացման, սննդի անվտանգության ապահովման, գյուղական համայնքների վարկավորման և գյուղմթերքների իրացման խնդիրների լուծման գործում:

Ագրոպարենայինն համակարգը ՀՀ տնտեսության կարևորագույն ճյուղերից է, որը վերջին 5 տարիների տվյալներով ապահովել է երկրի համախառն ներքին արդյունքի 21,7%-ը, այդ թվում, գյուղատնտեսությունը՝ 17,4 %-ը: 2008-2012 թթ. գործունեության ծրագրով գյուղատնտեսության ոլորտը դասվում է պետական ծախսային քաղաքականության գերակայությունների շարքին:

Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ավելի քան 98%-ը արտադրվում է մասնավոր հատվածի կողմից, ընդ որում՝ 2010 թ. տվյալներով համախառն արտադրանքի ավելի քան 61,6 %-ը բաժին է ընկել բուսաբուծությանը, իսկ շուրջ 38,4%-ը՝ անասնաբուծությանը: Ներկայումս տեղական արտադրության հաշվին բավարարվում է կենսականորեն կարևորագույն սննդամթերքի նկատմամբ պահանջարկի շուրջ 60%-ը: Սակայն երկրի բնատնտեսական ներուժը հնարավորություն է ընձեռում ավելացնել ինքնաբավության մակարդակը ևս 15-20 %-ով[644]:

2000-2005 թթ. մշակվեց Հայաստանի Հանրապետության ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման ծրագիր (ՋՌ-

[643] Տե՛ս Հայաստան 1998-2007, էջ 18:
[644] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 18.11.2011:

ՀԿԾ), որի շրջանակներում գնահատվեցին ջրային պաշարները, մշակվեցին ջրային քաղաքականության հիմունքները: Լուրջ կառուցվածքային փոփոխություններ կատարվեցին ոռոգման համակարգում: Հողերի արհեստական ոռոգման կազմակերպումը դարձավ տնտեսական գործունեության ինքնուրույն բնագավառ, որով զբաղվեցին հատուկ ստեղծված «Հայ ոռոգում» միավորման մեկ տասնյակ փակ բաժնետիրական ընկերություններ և ջրօգտագործողների 15 միություններ: 2009 թ. ոռոգման համակարգում տեղադրվել են 300 կմ ջրամատակարարման խողովակներ: 2010 թ. կառուցվել է մոտ 500 կմ ջրագիծ: 2011 թ. վերակառուցվեցին Արմավիրի մայր ջրանցքի մոտ 83 կմ երկարությամբ հատվածներ: Դրա հետևանքով ջրի կորուստները կրճատվեցին 20%-ով, ստեղծվեց մոտ 1000 գյուղատնտեսական աշխատատեղ: Արմավիրի ոռոգման վերականգնվող տարածքում են գտնվում 39 համայնքների շուրջ 22 հազար 800 տնային տնտեսությունների ոռոգվող հողեր, իսկ Թալինի տարածքում՝ 22 համայնքների շուրջ 10 հազար տնային տնտեսությունների հողեր[645]:

Ոռոգման ինքնահոս համակարգի, մայր ջրանցների վերանորոգման, մի շարք պոմպակայանների նորոգման, ոռոգվող գյուղատնտեսության ենթածրագրի մասով ֆինանսավորումն իրականացնելու նպատակով 2006 թ. մարտի 27-ին Հազարամյակի մարտահրավերներ կորպորացիայի» ԱՄՆ և ՀՀ կառավարության միջև ստորագրվեց 235,65 մլն ԱՄՆ դոլարի հնգամյա համաձայնագիր՝ նպատակ ունենալով կրճատել գյուղական աղքատությունը, գյուղատնտեսության ոլորտում կայուն և տևական աճ ապահովելով: Համաձայնագիրը պաշտոնապես ուժի մեջ մտավ 2006 թ. սեպտեմբերի 29-ից: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում էր 176 մլն 491 հազար ԱՄՆ դոլար: Հնգամյա ծրագրի իրականացումը (2006 թ. սեպտեմբեր-2011 թ. սեպտեմբեր) նպաստեց Հայաստանի շուրջ 350 համայնքում բնակվող ավելի քան 420 հազար գյուղաբնակ շահառուների կենսամակարդակի բարելավմանը՝ վերականգնելով ոռոգման մայր ջրանցքների վնասված հատվածներ,

[645] Տե՛ս նույնը, 15.10.2011:

ոռոգման կարիք ունեցող մի շարք պոմպակայաններ, կառուցելով ոռոգման ինքնահոս համակարգեր և երրորդ կարգի ջրանցքներ, կարգավորվելով Արարատյան հարթավայրի դրենաժային համակարգի որոշ մասեր[646]: «ՀՄՀ-Հայաստան» ծրագրի շրջանակներում վերապատրաստվել են շուրջ 45 հազար ֆերմերներ՝ ծանոթանալով գյուղատնտեսական առաջավոր փորձին: Տեխնիկական աջակցություն է տրամադրվել ջուր մատակարարող կառույցներին և 8,5 մլն ԱՄՆ դոլար վարկ՝ ֆերմերներին և ագրոբիզնեսով զբաղվող կազմակերպություններին: Ընդհանուր առմամբ «Հազարամյակի մարտահրավերներ կորպորացիայի» կողմից Հայաստանի ոռոգման և գյուղատնտեսության բնավառներում կատարվել է շուրջ 177 մլն դոլարի ներդրում:

Ագրարային բարեփոխումների քաղաքականության գործադրմամբ գյուղատնտեսությունն աստիճանաբար ապահովեց նկատելի տնտեսական աճ: 2000-2007 թթ. գյուղատնտեսության համախառն արտադրանքի ընդհանուր աճը կազմեց 90 %:

Գյուղատնտեսական արտադրանքի արտահանմանը նպաստող քաղաքականության իրականացման շնորհիվ հնարավոր եղավ էապես ավելացնել պարենամթերքի արտահանման ծավալները: 2000-2010 թթ. այդ ծավալները ավելացան 2,5 անգամ և 2010 թ. կազմեցին 172 մլն ԱՄՆ դոլար՝ 2000 թ.-ի 71 մլն դոլարի դիմաց[647]: Մեծ չափով ավելացան թարմ մրգի արտահանման ծավալները:

Բուսաբուծության ճյուղի համար անցած տարիները (հատկապես 2000-2008 թվականները) հատկանշական էին նրանով, որ ցանքատարածությունների կայունացման հետ մեկտեղ ավելացան հացահատիկային մշակաբույսերի, կարտոֆիլի, բանջարեղենի, բոստանային կուլտուրաների ծավալները: Հատկապես 2004 թվականին ստացվեց հացահատիկային մշակաբույսերի աննախադեպ բերք՝ 457 հազ. տոննա: 2007 թվականին բանջարեղենի և բոստանային մշակաբույսերի արտադրության ծավալները գերա-

[646] Տե՛ս նույնը, 1.12.2011:
[647] Տե՛ս նույն տեղում:

զանցեցին 2000 թվականի մակարդակը՝ համապատասխանաբար՝ 2,5 և 3,5 անգամ[648]:

Զգալի դրական տեղաշարժեր կատարվեցին հանրապետության այգեգործության ճյուղում: Այստեղ պտղատու և խաղողի այգիների տարածքների ընդլայնման հետ մեկտեղ բարելավվեց տեսականին, ավելացան արտադրության ծավալները: Այսպես, 2005 թ. ստացվեց պտղի և հատապտղի աննախադեպ բերք՝ 316 հազ. տոննա, որը գերազանցում էր 2000 թվականի մակարդակը 2,5 անգամ: 2007 թվականին խաղողի արտադրությունը գերազանցեց 2000 թ. մակարդակը ավելի քան 2 անգամ և կազմեց 219 հազար տոննա[649]:

Բարեփոխումների սկզբին հաջորդող առաջին տարիները բնութագրվեցին գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակի կտրուկ կրճատմամբ և անասնապահական մթերքների արտադրության ծավալների նվազմամբ:

Անասնաբուծության ոլորտում կայունացման դրսևորումներ երևան եկան 2000-2002 թթ., երբ դադարեց անասնագլխաքանակի նվազման միտումը և անասնաբուծական մթերքների արտադրության տարեկան ծավալները ոչ միայն պահպանվեցին, այլև աճեցին:

Հանրապետության անասնաբուծության ոլորտի համար բեկումնային փուլ կարելի է համարել 2003-2007 թվականները, որ առանձնանում էր գյուղատնտեսական տարբեր տեսակի կենդանիների գլխաքանակի և անասնաբուծական մթերքների արտադրության ծավալների աճով: 2000 թ. համեմատությամբ 2007 թ. տավարի գլխաքանակն աճեց 32 %-ով, այդ թվում կովերինը 20%-ով, ոչխարներինն և այծերինը՝ 15 %-ով, իսկ խոզերինը՝ 2 անգամ: Գրեթե նույն օրինաչափությամբ էլ փոփոխվեցին անասնաբուծական մթերքների ծավալները[650]:

2003 թվականից կաթի, մսի և ձվի արտադրության ցուցանիշները մեծացան, նախորդ տարվա տվյալները գերազանցելու միտումները կրեցին հաստատուն բնույթ: Թռչնամսի և ձվի արտադրութ-

[648] Տե՛ս Հայաստան 1998-2007, էջ 18:
[649] Տե՛ս նույն տեղում, էջ 19:
[650] Տե՛ս նույն տեղում:

յան ոլորտում մեծ ծավալի աշխատանքներ իրականացրին «Նուբարաշեն» և «Արաքս» թռչնաբուծական ֆաբրիկաները, որոնք հնարավորություն ընձեռեցին ոչ միայն ապահովելու մեր երկրի ազգաբնակչության ձվի պահանջարկը, այլև արտահանելու տարեկան արտադրվող ձվի մինչև 20 %-ը:

Կաթի համախառն արտադրության տարեկան ծավալները մինչև 2000 թ. աստիճանաբար նվազեցին՝ դարձան 425 հազար տոննա: Հաջորդ տարիները բնութագրվեցին կաթի արտադրության առավել մեծ աճով և արդեն 2007 թ. Հայաստանում կաթի համախառն արտադրությունը հասավ աննախադեպ ցուցանիշի՝ 642 հազար տոննայի, որը 43 %-ով գերազանցեց 2000 թ. ցուցանիշը[651]: Կաթի արտադրության ծավալների աճը պայմանավորված էր հատկապես կաթի վերամշակման ձեռնարկությունների ընդարձակ ցանցի ձևավորմամբ, ինչը հնարավորություն ընձեռեց տարեցտարի ընդլայնելու գյուղացիական տնտեսությունների և անասնապահությամբ զբաղվող այլ տնտեսվարողների կողմից արտադրված կաթի մթերումների ծավալները:

Ագրովերամշակող արդյունաբերությունը մշտապես համարվել է ՀՀ տնտեսության կարևորագույն ճյուղերից մեկը: Անկախացման առաջին տարիներին այստեղ կուտակված բազմապիսի լուրջ խնդիրներին լուծում տալու նպատակով մշակվեց «ՀՀ վերամշակող արդյունաբերության վերականգնման և զարգացման ծրագիր»: Իրականացված միջոցառումների շնորհիվ այդ տարում մթերվեց ու վերամշակվեց շուրջ 40 հազար տոննա բանջարեղեն՝ նախորդ տարվա 4 հազար տոննայի դիմաց: Լուծվեց ոչ միայն լոլիկի, այլև ծիրանի, խնձորի և դեղձի վերամշակման խնդիրը[652]:

Գյուղատնտեսության տեխնիկական ապահովման և տեխնիկայի նորոգման հիմնախնդրի կարևորությունից ելնելով՝ սկսած 2000 թվականից իրականացվեցին մի շարք դրամաշնորհային ծրագրեր, որոնց շնորհիվ հանրապետություն ներմուծվեցին և մատչելի պայմաններով գյուղացիական տնտեսություններին ու

[651] Տե՛ս նույն տեղում, էջ 20:
[652] Տե՛ս նույն տեղում, էջ 21:

գյուղատնտեսությամբ զբաղվող այլ տնտեսավարողներին տրվեցին 109 հացահատիկահավաք կոմբայն և 745 միավոր տարբեր հզորության տրակտորներ: 2011 թ. հանրապետության գյուղատնտեսական մեքենաների հավաքակազմը ընդգրկում է 1412 հացահատիկահավաք և 314 կերահավաք կոմբայն, 14 հազար 777 բրքուրավոր և անիվավոր տրակտոր, 15 հազար 337 բեռնատար ավտոմեքենա[653]:

Աշխատանքներ տարվեցին գյուղատնտեսության վարկավորման մատչելիության բարձրացման, նաև վարկավորման ծավալների ավելացման ու տոկոսադրույքի նվազեցման ուղղությամբ: Փոխվեց հատկացվող վարկերի կառուցվածքը, ավելացավ միջնաժամկետային և երկարաժամկետային վարկերի տեսակարար կշիռը, նվազեց տրամադրվող վարկերի տոկոսադրույքները: 2000-2006 թթ. հանրապետությունում Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվեցին գյուղատնտեսական բարեփոխումների աջակցության ծրագիր, որի շրջանակներում հանրապետության 10 մարզերի ագրարային ոլորտում տնտեսավարողներին տրամադրվեցին կարճաժամկետ վարկեր 17 հազարից ավելի տնտեսություններին (16 մլն ԱՄՆ դոլարի չափով) և միջնաժամկետ վարկեր 52 ընկերություններին (4 մլն ԱՄՆ դոլարի չափով)[654]: 2006 թ. հունվարից գործողության մեջ մտավ գյուղական ձեռնարկությունների և փոքրածավալ առևտրային գյուղական տնտեսությունների զարգացման ծրագիրը, որի շրջանակներում մասնակից ֆինանսական հաստատությունների կողմից հատկացվեցին 9 երկարաժամկետ վարկեր՝ 5-ից 7 տարի ժամկետով, որոնք ուղղվեցին բուսաբուծության, անասնապահության, ձկնաբուծության, կաթի վերամշակման արտադրության խթանմանն ու գյուղտեխնիկայի ձեռքբերմանը: Նշված վարկերի ընդհանուր գումարը կազմել է շուրջ 1 մլն դոլար[655]:

---

[653] Տե՛ս նույն տեղում, էջ 22, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2011թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 2012, էջ 23:
[654] Տե՛ս նույն տեղում, էջ 23:
[655] Տե՛ս նույն տեղում, Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում, Հանրապետական գիտաժողովի նյութեր, Երևան, 2009, էջ 333:

2008 թվականի հունվարից սկսվեց գյուղվարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման փորձնական ծրագրի իրականացումը Գեղարքունիքի մարզի Ճամբարակի և Շիրակի մարզի Աշոցքի ու Ամասիայի տարածաշրջանների 60 համայնքներում: Ծրագրի հաջողությունը հիմք ունենալով՝ սկսվեց դրա առավել լայնամասշտաբ իրականացումը, որով առևտրային 4 բանկերի հետ համատեղ կառավարությունը այդ տարվանից սկսեց պետական սուբսիդավորմամբ գյուղվարկերի տրամադրումը:

Արդյունքում բանկային տոկոսադրույքները 24 տոկոսից նվազեցին տարեկան մինչև 14 տոկոսի, որի 6-ից 8 տոկոսը սուբսիդավորվում էր պետության կողմից: Հանրապետության ավելի քան 11,500 գյուղացիական տնտեսություններ արդեն իսկ կարողացել էին օգտվել «Էժան վարկեր գյուղացուն» ծրագրի առաջին փուլից: 2011 թ. հոկտեմբերից սկսվեց ծրագրի երկրորդ փուլը[656]:

2001 թ. հոկտեմբերից ՀՀ-ում Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվել է գյուղատնտեսական ծառայությունների ծրագիր, որի շրջանակներում տրամադրվել է 16041 վարկ՝ 11.647 մլն ԱՄՆ դոլարին համարժեք ծավալով[657]:

Եթե 2000 թ. աշխատում էին գյուղատնտեսական հումք վերամշակող ձեռնարկություններից պահածոների 7, գինեգործության 12 և կաթի ու մսի վերամշակման մի քանի ընկերություններ, ապա 2007 թ. վերագործարկվել էին կամ ստեղծվել պահածոների 30, գինեգործական 40, կաթի ավելի քան 250, մսի 70 և ծխախոտի 4 վերամշակման ընկերություններ:

Հայտնի է, որ գյուղատնտեսության ոլորտում զբաղվածները կազմում են բնակչության ընդհանուր թվի 45,6 %-ը, ինչը վկայում է, ՀՀ-ում գյուղատնտեսության սոցիալական մեծ նշանակության մասին: Չնայած այն հանգամանքին, որ 2006-2008 թթ. գյուղատնտեսության ոլորտում գրանցվել էր աճ, սակայն ակնհայտ էր, որ կային կառուցվածքային խնդիրներ: Վերջին մի քանի տարինե-

---

[656] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 1.11.2011:

[657] Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում, Հանրապետական գիտաժողովի նյութեր, Երևան, էջ 23:

րին, թե՛ բուսաբուծության և թե՛ անասնաբուծության բնագավառում նկատվում էին կայուն նվազման միտումներ: Մասնավորապես մշակվող ցանքատարածությունները 2005 թվականին կազմում էին 332 հազար հա, իսկ արդեն 2010 թ. 283 հազար հա՝ ամեն տարի արձանագրելով անկում[658]:

Համաշխարհային տնտեսական ճգնաժամի ազդեցությունը խիստ զգալի էր ՀՀ գյուղատնտեսության վրա: Ամենմեծ անկումը այստեղ էր՝ 15%, որը բացատրվում է նաև օբյեկտիվ պատճառներով, բնակլիմայական անբարենպաստ պայմաններով: ՀՀ գյուղատնտեսությունում 2010 թ. գրանցվեց մեր տնտեսության մեջ ամենամեծ անկումը՝ 13,4 %[659]: Տարին անբարենպաստ էր, գյուղացին էլ հիմնականում զրկված էր անհրաժեշտ շրջանառու միջոցներից: 2011 թ. մարտին ՀՀ գյուղատնտեսության ոլորտը գերակա ճյուղ հայտարարելով՝ ՀՀ նախագահը ցուցումներ տվեց այն զարգացնելու, որի հիման վրա 2011 թ. մշակվեց գյուղատնտեսության զարգացման ազգային ծրագիր: Այն նախատեսում էր հիմնական պարենամթերքների ինքնաբավության մակարդակի բարձրացում, կոոպերատիվների ստեղծման միջոցով հողերի արդյունավետ մշակում, տարածքների խոշորացում, պետական երաշխիքով ու ցածր տոկոսադրույքներով երկարաժամկետ (5-10 տարով) վարկերի տրամադրում և այլն[660]:

Ելնելով վերջին տարիներին թե՛ անասնաբուծության, թե՛ բուսաբուծության մեջ նկատվող կայուն նվազման միտումներից և նախագահի հանձնարարականներից՝ կառավարությունը մշակեց և սկսեց իրականացնել մի քանի խոշոր ծրագրեր: Դրանք են՝ գյուղացիական տնտեսությունների վարկավորումը, ցորենի և գարու բարձրորակ սերմերի ներմուծումն ու տրամադրումը, գյուղմթերքների իրացման ապահովումը, տեղական պարարտանյութերի արտադրության զարգացումը և այլն: Վերոնշյալներից ամենամեծածավալն ու գյուղացիական տնտեսությունների համար կարևորը

---

[658] Տե՛ս ՀՀ կառավարության 2008-2011 թթ. գործունեության արդյունքները, Երևան, 2011, էջ 24, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2011թ. հունվար-դեկտեմբերին, էջ 21:
[659] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 1.12.2011:
[660] Տե՛ս նույն տեղում:

դրանց վարկավորման ծրագիրն էր, որով պետությունն իր վրա էր վերցրել վարկերի տոկոսների մի մասի մարումը: Առաջին փորձնական ծրագիրն սկսել էր իրականացվել դեռևս 2008 թվականից Գեղարքունիքի և Շիրակի մարզերի 60 գյուղերում, իսկ 2011 թ.՝ արդեն Հայաստանով մեկ: Պետության վարկավորման շնորհիվ գյուղացիները վարկեր ստացան 10%-ով, իսկ սահմանամերձ ու լեռնային 225 համայնքներում՝ 8%-ով: Այդ ծրագրով գյուղացիները բանկերից ստացան մոտ 15 մլրդ դրամ: «Շուկայական հնարավորություն ֆերմերներին» համաշխարհային բանկի և «Հազարամյակի մարտահրավերներ» ծրագրով տրված վարկերի հետ այդ գումարը կազմեց 20,8 մլրդ դրամ: 2011 թ. բարձր արտադրողականության սերմերի ցանքսի արդյունքում ցորենի միջին բերքատվությունը 1 հա-ից կազմել է 35-40 ցենտներ, առանձին դեպքերում՝ մինչև 70 ցենտներ: Գյուղատնտեսությանը և գյուղի զարգացմանը հատկացվել է ավելի քան 10 մլրդ դրամ:

Գյուղատնտեսության ոլորտի հիմնական թերությունը շարունակում է մնալ գյուղացիական տնտեսությունների փոքր չափերը և մասնատված հողաբաժինները, որոնք ձևավորվել են հողի սեփականաշնորհման ընթացքում: Դրանք սահմանափակում են ոլորտի կայուն զարգացումը և խոչընդոտում գյուղատնտեսության վարման արդյունավետ տեխնոլոգիաների ներդրումն ու արդյունաբերականացումը: Հետսեփականաշնորհման ժամանակահատվածում ձևավորված գյուղացիական ֆերմային տնտեսություններից յուրաքանչյուրին բաժին էր ընկնում ընդամենը 1,4 հա գյուղատնտեսական հողատեսքեր, այդ թվում 1,1 հա վարելահողեր, ինչը սահմանափակում էր գյուղատնտեսությունում տնտեսավարողների վերարտադրողական կարողությունները: Բացի այդ, յուրաքանչյուր տնտեսությանը բաժին էր ընկնում 4 մասնատված հողակտոր, իսկ գյուղատնտեսական արտադրությունը փաստացի իրականացվում էր ավելի քան 1200,0 հազար հողակտորի վրա[661]: Այս հանգամանքը նկատի ունենալով՝ ՀՀ կառավարությունը 2011 թ. աշնանը հավանություն տվեց ՀՀ գյուղացիական տնտեսութ-

[661] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն»,18.11.2011:

յունների խոշորացման հայեցակարգին, դրա կատարումն ապահովող միջոցառումների ժամանակացույցին: Դրանով կստեղծվեին ոչ միայն այդ հայեցակարգային քաղաքականության իրականացման, այլև գործող փոքր չափերի գյուղացիական տնտեսությունների պետական աջակցության արդյունավետ մեխանիզմների ներդրման իրավական հիմքեր:

Ոլորտի հաջորդ թերությունը գործարար նախաձեռնությունների խրախուսման և գործարարությամբ զբաղվելու համար բարենպաստ միջավայրի ու օտարերկյա ուղղակի ներդրումների գրավչության բացակայությունն է: Դեռևս չեն պարզեցված գյուղատնտեսական ընկերությունների գրանցման և լուծարման գործընթացները: Չի ապահովված հարկային և մաքսային վարչարարության թափանցիկությունն ու անկողմնակալությունը: Շարունակվում է գյուղական և քաղաքային բնակչության կենսամակարդակներում առաջացած ճեղքվածքի հետագա խորացումը ու նրանց զգալի մասի (հատկապես անապահով խմբերի) պարենի մատչելիության նվազումը[662]: Բացակայում է գյուղատնտեսական աշխատանքային հարաբերությունները կարգավորող ամբողջական օրենսդրություն: Գյուղի աշխատավորության մեծ մասին դեռևս հասանելի չէ և չի տրամադրվում մատչելի ու արտոնյալ վարկեր: Գյուղացիության մի մասն էլ ժամանակին չկարողանալով վճարել վարկերը՝ տոկոսներով, հայտնվում է անմխիթար վիճակում՝ կորցնելով գրավադրված գույքը: Դեռևս ոլորտում չի կիրառվում անշարժ գույքի գրանցման էլեկտրոնային համակարգը, թույլ է պարենային անվտանգության, մասնավորապես սննդամթերքի անվտանգության վերահսկողությունը: ՀՀ նախագահի՝ 2011 թ. կառավարությանն ու առևտրային բանկերին տրված հանձնարարականով առաջարկվում է պետության կողմից մասնակի սուբսիդավորվող անհամեմատ մատչելի վարկերի հատկացում հանրապետության բոլոր մարզերի գյուղացիական տնտեսություններին: «Տնտեսության կայունացման վարկավորում»

---

[662] Տես Սարգսյան Հ., Հարությունյան Խ., Մանասյան Վ., Ագրարային հատվածի և գյուղի կայուն զարգացման սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները, Երևան, 2011, էջ 21:

վարկային ծրագրի «Գյուղատնտեսական վարկեր» վարկային բաղադրիչը թույլ է տալիս շահառուին մինչև 3 մլն դրամ վարկ ստանալ՝ 14% տարեկան տոկոսադրույքով: Ընդ որում գյուղացու վրա ծանրանում է վարկային տոկոսադրույքի միայն 8-10%-ը: Իսկ տոկոսադրույքի մնացած 4-6%-ը, կախված համայնքի կարիքավորության աստիճանից, սուբսիդավորում է ՀՀ կառավարությունը[663]:

Հանրապետությունում գյուղացիական վարկավորման ուղղվածություն ունեցող ընդամենը 1 մասնագիտացված բանկ է գործում՝ «ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկը», 2-ն էլ մասնակիորեն են ներգրավված այս գործի մեջ: Առաջին փուլի ընթացքում 11 հազար 500 գյուղացիական տնտեսություններ օգտվեցին վարկային ծրագրից:

Բուսաբուծության ոլորտում իրականացվեցին ցորենի և գարու սերմնաբուծության և սերմնարտադրության, գյուղատնտեսության զարգացման, տեղական պարարտանյութի արտադրության զարգացման, ինչպես նաև գյուղտեխնիկայի վերազինման ծրագրերը:

Անասնապահության հատվածում մշակվեցին և կյանքի կոչվեցին տավարաբուծության, համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության ծրագրեր, ինչպես նաև գյուղատնտեսական միջավայրի բարելավման ծրագիր:

Պետության կողմից 2011 թ. ձեռնարկված հաջորդ կարևոր միջոցառումը պարարտանյութերը, սերմերը, տնկիները, ոլորտը սպասարկող սարքավորումներն ու տեխնիկան ԱԱՀ-ից (ավելացված ակցիզային հարկից) ազատելն էր:

Առաջիկա տարիներին գյուղացուն ընդառաջ այս քայլերի արդյունքներն իրենց զգացնել կտան, ըստ ամենայնի նաև մթերքի գնի ձևավորման մեջ:

Վերջին տարիներին մեծ հաջողություններ են արձանագրվել գյուղատնտեսական մթերքների իրացման շղթայի ապահովման մասով: Այս ուղղությամբ տարվող աշխատանքներն էլ նպաստեցին հանրապետությունից ձկնեղենի արտահանման ծավալների աճին: 2010 թ. Հայաստանից արտահանվեց մոտ 300 տոննա ձկնեղեն: 2011 թվականի առաջին կեսին արդեն արտահանվել էր

[663] Տե՛ս ՀՀ կառավարության 2008-2011 թթ. գործունեության արդյունքները, էջ 25:

550 տոննա ձկնեղեն: Արդյունքում, չնայած 2010 թվականի գյուղատնտեսության ոլորտի 12,4 տոկոս անկմանը, արձանագրվեց գյուղմթերքների արտահանման ծավալի 21 տոկոս աճ, որը կազմեց 172 մլն. դոլար[664]:

Գյուղոլորտում իրականացված մյուս կարևոր ծրագիրը, որի մեկնարկը տրվեց 2010 թ., «2010-2014 թթ. սերմնաբուծության զարգացման ծրագիրն» էր:

Դրսի շուկաներից կախվածությունը թուլացնելու և տեղում սերմնաբուծությունը խթանելու նպատակով կառավարությունը 2010 թվականից Ռուսաստանից սկսեց ներկրել բարձր վերարտադրողականությամբ էլիտար սերմնացուներ ու դրանք բաժանել գյուղացիական տնտեսություններին: ՌԴ Ստավրոպոլի երկրամասից ձեռք բերված և հանրապետություն ներկրված առաջին 950 տոննա էլիտային սերմացուն բաժանվեց հանրապետության բոլոր մարզերի 146 խոշոր հողօգտագործողներին՝ մեկը երկուսով վերադարձնելու պայմանով[665]:

Քերքատվությունն ավելացել է, մշակվող հողատարածքները նույնպես: 2011 թ. հանրապետություն ներկրվեց 1100 տոննա էլիտային սերմնացու և բաժանվեց շուրջ 250 շահառուների:

«Սերմերի գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցով Ռուսաստանից ներկրված 1100 տոննա էլիտային վերարտադրության սերմնացուն բաշխվեց ՀՀ մարզերի միջև: Այդ բաշխումը կատարվեց 7 և ավելի հեկտար հողատարածք ունեցող շահառուներին: Երկրորդ խմբաքանակը՝ 400 տոննա ցորենը, բաշխվեց նորից մարզերի միջև: Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Լոռու, Շիրակի և Տավուշի մարզերին հատկացվեց 30-ական տոննա, իսկ 20-ական տոննա Վայոց Ձորի և Կոտայքի մարզերին, 90-ական տոննա Գեղարքունիքին և Սյունիքին: Պայմանը հետևյալն էր, որ 2012 թ. բերքահավաքից հետո 1:2 փոխհարաբերությամբ 1 կգ համար 80 դրամ հետ վերադարձնելով[666]:

---

[664] Տե՛ս նույն տեղում, էջ 26:
[665] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 1.12.2011:
[666] Տե՛ս նույն տեղում:

Չնայած տարբեր տարիներին ոլորտում գրանցված աճին՝ առկա են կառուցվածքային խնդիրներ: ՀՀ-ում եղած շուրջ 340 հազար գյուղացիական տնտեսությունները ունեն 430 հազար հեկտար մշակովի հող, այսինքն մեկ տնտեսությանը բաժին ընկնող հողատարածքի ծավալը բավականին փոքր է:

Կառավարության հաստատած գյուղատնտեսության զարգացման հայեցակարգով սահմանվում են ժամանակակից գյուղատնտեսության կազմակերպման սկզբունքները, որոնք ներառում են ոչ միայն գյուղատնտեսության, այլև գյուղի ամբողջական զարգացումը: Հանրապետության 55 համայնքներում Համաշխարհային բանկի օժանդակությամբ ներդրվելու են կառավարման նոր մեխանիզմներ ու ձևավորվելու են կոոպերատիվներ: Խթանվելու է կոոպերացիան, ինչը կբարձրացնի գյուղատնտեսության արդյունավետությունը տարեկան առնվազն 30%-ով:

Պետությունը գյուղտեխնիկայի ձեռքբերումը համաֆինանսավորելու է 50%-ով: Նմանատիպ միջոցառումներ իրականացվելու են գյուղատնտեսության բոլոր բնագավառներում՝ սկսած սերմնաբուծությունից և ավարտած այգիների մշակմամբ:

Կարգավորվել է Սևանից ոռոգման նպատակով ջրի տրամադրումը: Ինը տարվա ընթացքում լճի մակարդակը բարձրացել է 3մ 87 սմ-ով:

2011 թ. վերականգնվեցին Արփա-Սևան թունելի վնասված հատվածները, որի համար ծախսվեց 12 մլն դրամ: «Հայաստան» համահայկական հիմնադրամի աջակցությամբ կառուցվել է 3 ջրանցք, որոնք պետք է նվազեցնեն ջրի կորուստները: Շուտով կավարտվի Մարմարիկի ջրամբարի կառուցումը: Սևանի մակարդակի բարձրացումից ջրի մեջ հայտնվել է 500 շինություն: Լուրջ է նաև 452 հա անտառների հարցը, որոնք ողողված են ջրով[667]: Այժմ էլ առկան են Սևանա լճի այս և մի շարք այլ կարևոր հիմնախնդիրներ, որոնք դեռևս չեն լուծվել:

ՀՀ նախագահի ղեկավարությամբ 2011 թ. գարնանը Ազգային

[667] Տե՛ս ՀՀ կառավարության 2008-2011 թթ. գործունեության արդյունքները, էջ 79:

անվտանգության խորհրդում ընդունվեց մի կարևոր փաստաթուղթ. հավանության արժանացավ երկրի պարենային անվտանգության ապահովման հայեցակարգը, որը իրականացնելու համար կառավարությունը մշակեց գործողությունների ծրագիր: Հետամուտ լինելով այն իրագործելուն՝ նպատակ էր դրվում երկրում զարկ տալ տեղական արտադրությանը՝ ինքնաբավության մակարդակը հասցնելով միջազգայնորեն ընդունված չափանիշներին:

2011 թ. հոկտեմբերի 16-ին առաջին անգամ պետականորեն ՀՀ-ում նշվեց Գյուղատնտեսության աշխատողի օրը: Այդ օրվա տոնի կապակցությամբ Երևանի Հյուսիսային պողոտայում կազմակերպվեց գյուղատնտեսական ապրանքների տոնավաճառ, որտեղ ներկայացվեցին ՀՀ բոլոր մարզերի և Արցախի գյուղացիական տնտեսությունների ու վերամշակող կազմակերպությունների գյուղատնտեսական արտադրանքը:

ՀՀ կառավարության որոշմամբ յուրաքանչյուր տարի հոկտեմբեր ամսվա երրորդ կիրակի օրը այսուհետև նշվելու է որպես ՀՀ գյուղատնտեսության աշխատողի օր:

2011թ. հոկտեմբերի 1-ին նշվեց Արմավիր քաղաքի 80-ամյա հոբելյանական տոնակատարությունը, որը ուղեկցվեց մարզի համայքների ներկայացուցիչների ջանքերով բերքի տոնի նշումով: Նույն թվականի հոկտեմբերի 15-ին մեծ հանդիսավորությամբ նշվեց հայոց հինավուրց Արտաշատ մայրաքաղաքի հիմնադրման 2200- ամյակը: Արդեն ավանդույթ է դարձել ՀՀ մայրաքաղաք Երևանի հիմնադրման և Էջմիածին քաղաքի ամենամյա տարելիցների նշումը[668]:

Տոնի շրջանակներում մայրաքաղաքում և ՀՀ մարզերում անցկացվեցին բազմատեսակ միջոցառումներ՝ տոնավաճառներ, ցուցահանդեսներ, բերքի տոներ, համերգային ծրագրեր և այլն:

2011 թ. հոկտեմբերի 14-ից 16-ը Երևանում Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում տեղի ունեցավ հայ ֆերմերների առաջին համաշխարհային «Հայագրոֆորում» համաժողովը, որին մասնակցեցին շուրջ 40 սփյուռքահայ ֆերմերներ Ռուսաս-

[668] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 15.10.2011:

տանից, Ուկրաինայից, Վրաստանից, Լիբանանից, Իրանից, Լեհաստանից, Լատվիայից, ԱՄՆ-ից, Ֆրանսիայից[669]: Պատվիրակություն էր ժամանել նաև Լեռնային Ղարաբաղից: Համաժողովի շրջանակում քննարկվեցին գյուղատնտեսության ոլորտում տեղի ունեցող զարգացումները, առկա խնդիրներն ու իրականացվող ծրագրերը: Համաժողովը հնարավորություն ընձեռեց հայաստանյան և սփյուռքահայ, ինչպես նաև տարբեր երկրներից ժամանած օտարերկրյա գործարարներին ներկայացնելու իրենց արտադրատեսակներն ու մատուցվող ծառայությունները, փոխշահավետ համագործակցություն հաստատելու, ծանոթանալու գյուղատնտեսության ոլորտում Հայաստանում առկա ներդրումային հնարավորություններին և գյուղատնտեսության զարգացման միջազգային առաջադեմ փորձին: Համաժողովը որոշեց ստեղծել ագրոպարենային բնագավառի գործարարների և ֆերմերների համահայկական ընկերակցություն:

բ. Տրանսպորտը և կապը

Վերջին տասը տարիներին տրանսպորտի և կապի ոլորտում պետական քաղաքականությունն ուղղված է եղել ուղևորների և բեռների երաշխավորված փոխադրմանը, պաշտպանունակության ամրապնդմանն ու բարձրորակ կապի ապահովմանը, ինչպես նաև այլընտրանքային համակարգերի ձևավորմանն ու կատարելագործմանը: Ընդ որում վերջին տարիներին քանակականին զուգահեռ՝ շեշտադրումը փոխադրվել է որակական բարելավումների և բարեփոխումների վրա:

Ձեռնարկվել են միջոցառումներ միջազգային այլընտրանքային հաղորդակցության ուղիների ստեղծման համար: Մասնավորապես 2007թ. գործարկվել է երկաթուղային լաստանավ ՌԴ--Կավկազ և Վրաստանի Փոթի նավահանգիստների միջև: Աշխատանքները հաջողությամբ տարվեցին Էնզելի (Իրան)-Ակտաու (Ղազախստան)-Աստրախան (ՌԴ) նավագանգիստների միջև մի-

[669] Տե՛ս նույն տեղում:

ջազգային լաստանավային հաղորդակցություն ստեղծելու ուղղությամբ[670]:

2000-ական թթ. կտրուկ ավելացան պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների հիմնանորոգման աշխատանքների համար ՀՀ պետական բյուջեից կատարվող հատկացումները[671]: Բյուջետային ներդրումների շնորհիվ 2000-2007թթ. ընթացքում ճանապարհների հիմնանորոգման համար կառուցվել ու վերանորոգվել են մոտ 900 կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհ և 118 կամուրջ, այդ թվում՝ Երևան քաղաքի Դավիթաշենի կամուրջը: Իրականացվել են 23 մլրդ դրամի ՀՀ միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների շահագործման և ձմեռային պահպանության աշխատանքներ[672]:

2000-2002 թթ. Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ նորոգվել են և շահագործման են հանձնվել 636 կմ ասֆալտապատ ճանապարհներ, այդ թվում 17 կմ Երևան քաղաքում, Պուշկինի լեռնանցքի 1,8 կմ երկարությամբ թունելը, 11 կամուրջ, տեղադրվել են 28 կմ մետաղական արգելափակոցներ, վերանորոգվել է 2000 մետր հենապատ և ընթացիկ նորոգման են ենթարկվել 786 կմ ընդհանուր երկարությամբ ընտրովի ճանապարհահատվածներ: Երևան-Այրում հատվածում կապիտալ վերանորոգման է ենթարկվել շուրջ 72 կմ երկարությամբ երկաթգիծ, որը երկաթուղու առավել վթարավտանգ հատվածն էր: Բացի այդ, «Լինսի» հիմնադրամի միջոցներով 2000-2007 թթ. ընթացքում հիմնանորոգվել են 73,4 մլն ԱՄՆ դոլարի 435 կմ ընդհանուր երկարությամբ ՀՀ միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհներ[673]:

2006 թվականից Հայաստանի Հանրապետությունում սկսվեց «Հազարամյակի մարտահրավերներ» կորպորացիայի ծրագրի իրականացումը, ըստ որի 22 մլրդ դրամ ուղղվեց հանրապետութ-

---

[670] Տե՛ս Հայաստան 1998-2007, էջ 28:
[671] Տե՛ս Հայաստանի Հանրապետության տրանսպորտը և կապը, վիճակագրական ժողովածու 1999-2003, Երևան, 2004, էջ 15:
[672] Տե՛ս նույն տեղում, էջ 29:
[673] Տե՛ս նույն տեղում:

յան բոլոր մարզերում «կենսական նշանակության» 265 համայնքների շուրջ 940 կմ տեղական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների նորոգմանը և վերականգնմանը: ՀՀ պետական բյուջեի միջոցներով 2005 թ. սկսվեց և մի քանի տարի անց ավարտվեց 92 կմ երկարությամբ Կապան-Ճավ-Շվանիձոր-Մեղրի միջպետական ճանապարհի շինարարությունը, որի նպատակը նաև մեր երկրի ռազմավարական անվտանգությունն ապահովելն էր: Արևիքի լեռները հատող այս նոր ուղղությունը ծովի մակերևույթից 400 մետրով ավելի ցածր է, քան ներկայումս գործող Քաջարան-Մեղրի լեռնանցքը[674]: Իսկ ամերիկահայ Քըրք Քըրքորյանի «Լինսի» հիմնադրամի միջոցներով կառուցվեց Սևան-Դիլիջան թունելը, որով կրճատվեց ճանապարհի վտանգավոր 8 ոլորան (4 կմ-ից ավելի): Կատարված ներդրումներով տրանսպորտային ընդհանուր ծախսերի գրեթե կեսը կրճատվեց, երթևեկության միջին արագության մեծացմանը շնորհիվ զգալիորեն նվազեց երթևեկության տևողությունը: 2003 թվականից սկսեց գործել Տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգման ծրագիրը: Հիմնանորոգվել է պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող 65 կամուրջ, իսկ 2007 թ. 13 կամուրջ[675]: 2005 թ. սկսած՝ կտրուկ ավելացել են պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ձմեռային և ընթացիկ պահպանության ու շահագործման աշխատանքների համար ՀՀ պետական բյուջեից կատարվող հատկացումները:

Վերջին տարիներին ուշադրություն է դարձվել նաև մարզային նշանակության ավտոճանապարհների ընթացիկ պահպանության, շահագործման և ձմեռային աշխատանքներին: Կենսական նշանակության ճանապարհների բարելավման ծրագրի շրջանակներում միջազգային չափանիշներին համապատասխան՝ համաշխարհային բանկի միջոցներով նորոգվեցին Երևան-Աշոցք-Բավրա, Վանաձոր-Ստեփանավան-Գոգավան, Երևան-Գորիս-Մեղրի, Երևան-Գյումրի մինչև այժմյան Թուրքիայի սահմանը ընկած հատվածը և մի շարք այլ մայրուղիներ: Այդ ծրագրով 2011 թ. շա-

[674] Տե՛ս նույն տեղում, էջ 29, 30:
[675] Տե՛ս նույն տեղում:

րուցակվում է գյուղական ճանապարհների, նաև դեպի հարևան երկրներ տանող մայրուղիների հիմնանորոգումը: Չափանիշները դարձյալ միջազգայինին համապատասխան են: Գյուղական 130 կմ ճանապարհահատված արդեն վերանորոգվել է: Երկու տարուց ավելի է, ինչ իրականացվել է Տաթևի համալիր տանող ճանապարհի շինարարությունը և տեղադրվել ու գործում է ճոպանուղին: Չմոռանանք, որ Տաթևի համալիրը երկրի զբոսաշրջության կարևոր կենտրոններից է: 2011 թ. սկսվեց ու շարունակվում է ՀՀ մարզերում 249 կմ ճանապարհատվածի և 6 կամուրջների վերակառուցումը, որը կայուն կապ կապահովի 176 հազար բնակչություն ունեցող 52 համայքների միջև[676]: Այսօր խիստ կարևորվում է Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող և արդեն մեկնարկած «Հյուսիս-հարավ» ճանապարհային միջանցքի շինարարության ներդրումային ծրագիրը, որով հնարավորություն կստեղծվի ելք ունենալու դեպի շատ երկրներ՝ Վրաստանով ու Իրանով: Ուստի «Հյուսիս-հարավը» ոչ միայն Հայաստանի, այլև ամբողջ հարավկովկասյան տարածաշրջանի համար կարևոր նշանակություն կունենա: Առաջնային լուծման կարոտ է ավտոկայարանային տնտեսության կարգավորումը, «Զվարթնոց» օդանավակայանի տարածքում կառավարության որոշմամբ ազատ տնտեսական գոտու ստեղծման ծրագրի շրջանակներում մշակվող վերգետնյա մետրոյի գաղափարը: Սա կհեշտացնի օդանավակայանի ու մայրաքաղաքի միջև տրանսպորտային երթևեկությունը: 2011 թ. շահագործման հանձնվեց «Զվարթնոց» օդանավակայանի ուղևորային նոր համալիրը: Ավարտին է մոտենում Վանաձոր-Ֆիոլետովո երկաթուղու հատվածի կառուցումը, որն էապես կրճատելու է միջհանրապետական և միջմարզային երկաթուղու փոխադրումների հեռավորությունները ու արժեքը, հյուսիս-հարավ նոր երկաթգծի տեխնիկատնտեսական հիմնավորման աշխատանքների իրականացումը, հյուսիս-հարավ ավտոճանապարհային միջանցքի շինարարական աշխատանքների կազմակերպումը, փոստի կառավարման նոր մոդելի ներդրումը[677]:

[676] Տե՛ս ՀՀ կառավարության 2008-2011 թթ. գործունեության արդյունքները, էջ 36, 37:
[677] Տե՛ս նույն տեղում, էջ 45:

2000-2011 թթ. Հայկական երկաթուղին լիովին ապահովել է փոխադրումների պահանջարկը, բեռների անկորուստ փոխադրումները, բարձրացել է շարժակազմի արդյունավետությունը, մրցունակությունը, և պայմաններ են ստեղծվել հետագա դինամիկ աճի համար: 2006 թ. ամռանը կազմակերպվեց Երևան-Քաթումի նոր ուղերթը, որն իր մատչելիությամբ բնակչությանը հնարավորություն տվեց հանգիստը կազմակերպել Սև ծովի ափին: Միայն 2006 թ. փոխադրվել է շուրջ 680 հազ. ուղևոր[678]:

Ներկայումս ձեռնարկվում են միջոցառումներ կոնցեսիոն պայմանագրի միջոցով Հայկական երկաթուղու կառավարման արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ:

Փաստացի կապի և էլեկտրոնային հաղորդակցության ոլորտում 2000-2011 թթ. ընթացքում ապահովվել է հանրապետության տնտեսության և բնակչության պահանջարկի մեծ մասը: Բարելավվել ու ընդլայնվել է ինչպես հայկական, այնպես էլ արտասահմանյան հեռուստառադիոծրագրերի հեռարձակումը: Մեծ ուշադրություն է դարձվել տեղեկատվության զարգացմանը: Հեռուստատեսության և ռադիոյի հեռարձակման ոլորտում իրականացված բարեփոխումները ուղղված են եղել հեռարձակվող ալիքների ավելացմանը, հասանելիության ապահովմանը, գործող ցանցի արդիականացմանը: 2003 թ. վերջերին 57 հեռուստակայանների գործարկմամբ ավարտվեց Հայաստանի հանրային հեռուստատեսության, իսկ 2006 թ. թվով 65 FM ռադիոկայանների գործարկմամբ՝ նաև Հայաստանի հանրային ռադիոյի 1-ին ծրագրով հանրապետության ամբողջ բնակչությանն ապահովելու ծրագիրը: 2000 թ. Երևանում գործում էր 5 թվային ԱՀԿ (Արբանյակային հաղորդիչ կայան)՝ 58600 բաժանորդային գծերի ընդհանուր տարողությամբ, որը կազմում էր մայրաքաղաքի ամբողջ բաժանորդային ցանցի կարողության գրեթե 20%-ը: 2008 թ. դրությամբ այդ ցուցանիշը կազմում էր 80%: Մնացած նման կայանների թվայնացումը և բաժանորդների վերամիացումներն ընթացքի մեջ են: 2000 թ. ՀՀ շրջաններում գործում էին միայն 2 թվային ԱՀԿ Գյումրի և Ստեփանավան քաղաքներում՝ 11.024 բաժանորդային գծերի ընդ-

[678] Տես Հայաստան 1998-2007, էջ 30:

հանուր կարողությամբ, որը շրջանների ընդհանուր ցանցի 3%-ից պակաս էր[679]: 2011թ. ընթացքում տեղադրվեց 42 թվային ԱՀԿ՝ 116000 բաժանորդային գծերի ընդհանուր կարողությամբ, որը կազմում է ընդհանուր տարածքային ցանցի ավելի քան 21%-ը: Արդեն հեռուստաֆիկացվել են Հայաստանի 50 մարդուց ավելի բնակչություն ունեցող գյուղերը, նաև թվայնացվել են 800-ից ավելի գյուղեր[680]:

Ներդրումներ են կատարվել բաժանորդային նոր բաշխվող ցանցերի վերականգնման և կառուցման համար, որի արդյունքում 2008 թ. Երևանում, Էջմիածնում, Վանաձորում, Աշտարակում և Սևանում հնարավոր դարձավ ADSL ծառայությունների տրամադրումը՝ ինտերնետային ցանց և տվյալների փոխանցման այլ ցանցեր լայնաշերտ մուտքի հնարավորությամբ:

2000-2007 թթ. ընթացքում հանրապետության հյուսիսային հատվածում վերջնականորեն ավարտվեցին ավելի քան 490 կմ երկարությամբ օպտիկական մալուխի անցկացման TAOS նախագծի աշխատանքները: Կառուցվեց Հայաստանի համընդհանուր տրանսպորտային ցանցը, որը հնարավորություն ընձեռեց օպտիկական մանրաթելի միջոցով միացնել տարածքային հանգույցները Երևանի կոմուտացիոն կայաններին: Եթե 2000թ. «Արմենթել» ՓԲԸ-ը բջջային կապի ցանցը կազմված էր ընդամենը 15 բազային կայաններից[681], 2008 թ. բազային կայանների թիվը հասավ 283-ի: Բջջային կապի բաժանորդների թիվը 2000թ. 8 հազարից 2008 թ. դարձավ 46000: 2005թ. ՀՀ տարածքում իր գործունեությունն է ծավալել շարժական բջջային կապի երկրորդ օպերատոր հանդիսացող «Ռ-Տելեկոմ» ՓԲ ընկերությունը: Այն բարելավեց մատուցվող ծառայությունների որակը, զգալիորեն նվազեցրեց սակագները և ընդլայնեց այդ ծառայություններից օգտվողների քանակը:

Եթե 1990-ականներին կապի ծառայությունը մատուցվում էր

---

[679] Տե՛ս նույն տեղում, էջ 31:
[680] Տե՛ս ՀՀ կառավարության 2008-2011 թթ. գործունեության արդյունքները, էջ 42, 43:
[681] Տե՛ս Հայաստան 1998-2007, էջ 32, 33:

Երևանի միջքաղաքային կայանի, քաղաքային հեռախոսային կայանների, Երևանի փոստատան և Կենտրոնական հեռագրատան միջոցով, ապա 2011 թվականին միայն բջջային կապի շուկայում 3 օպերատորներ էին գործում: Հայաստանի Հանրապետության բջջային շուկան ոչ միայն բավականին կայացած է, այլև ԱՊՀ-ում առաջատարների թվում է՝ Ռուսաստանից և Ուկրաինայից հետո: 2000-ական թթ. բարձրացել է ինտերնետ ծառայությունների մատուցման որակը, թողունակությունը եռապատկվել: Նախապատրաստական քայլեր են ձեռնարկվում թվային հեռուստատեսության անցնելու համար: 2011 թվականից սկսած «Հայփոստը» ծառայություններ է մատուցում 900 փոստային բաժանմունքների միջոցով: Ուղիղ փակ ճեպագրերով ծանրոցներ է առաքում 36 և նամակներ՝ 33 երկրներ: Արագընթաց փոստային ծառայություն է իրականացնում 66 երկրների հետ[682]:

Տրանսպորն ու կապը այն ոլորտներն են, որտեղ ինչքան էլ ձեռքբերումներ լինեն, անելիքներ միշտ կան, քանզի օրեցօր զարգացող աշխարհը միշտ խնդիրներ է առաջադրում, որոնք արդիական լուծումներ են պահանջում:

գ. Շինարարությունը

21-րդ դարասկզբին իրականացվող շինարարական աշխատանքների ծավալները իրենց դրական ազդեցությունը ունեցան ՀՀ տնտեսության զարգացման վրա: Շահագործման հանձնվեցին որակյալ և ժամանակակից պահանջներին համապատասխանող բազմաթիվ ու բազմաբնույթ կառույցներ՝ ամբողջական փողոցներ, բնակելի շենքեր, դպրոցներ, հիվանդանոցներ, պոլիկլինիկաներ, մշակութային, սոցիալական նշանակություն ունեցող օբյեկտներ, նոր ենթակառուցվածքներ, խմելու, ոռոգման համակարգեր, ճանապարհներ և այլն:

---

[682] Տե՛ս ՀՀ կառավարության 2008-2011 թթ. գործունեության արդյունքները, էջ 43, 44:

Կայուն ու բարձր եկամուտներ են ստանում շինարարության մեջ ներգրավված բազմաթիվ մասնագետներ: Շինարարությունը էական դեր է խաղում տնտեսական աճի միտումների ձևավորման գործում: Շինարարական աշխատանքների ֆինանսավորմանն ուղղվող գումարները 2001 թ. կազմել են հանրապետության կապիտալ շինարարության ֆինանսավորման ողջ ծավալի համապատասխանաբար 34,2 և 32,6%-ը[683]: Շինարարության տարեկան միջին աճի տեմպերը 2000-2003 թթ. կազմել են 22%, իսկ 2004-2008 թթ. 29%: 2000-2003 թթ. ժամանակահատվածում շինարարությանը լայն թափ են հաղորդել նաև միջազգային ու տեղական հասարակական, բարեգործական և այլ կազմակերպությունների կողմից տրամադրված միջոցներով իրականացվող աշխատանքները, որոնք երկրի զարգացմանը զուգահեռ՝ աստիճանաբար փոխարինել են տեղական աղբյուրների հաշվին կատարվող շինարարությանը:

Իրականացված ծրագրերը նպաստել են նաև բնակարանային գույքի շուկայի աշխուժացմանը: Գործարքները 2000 թ. նկատմամբ ավելացել են մոտ 50%-ով: Շուկայի աշխուժացումն իր հերթին հանգեցրեց բնակչության միջոցների հաշվին իրականացվող բնակարանային շինարարության կտրուկ ավելացմանը[684]: Այսպես, եթե 2000 թ. բնակչության միջոցների հաշվին գործարկվել է մոտ 105 հազ. քառ. մետր բնակարան, ապա 2007 թ. մոտ 469 հազ. քառ. մետր կամ 4,5 անգամ ավելի[685]:

2000 թվականից հետո երկրում իրականացված շինարարության ծավալներում առանձնանում են աղետի գոտում կատարված աշխատանքները: Աղետի գոտու վերականգնման ծրագրի շրջանակներում ֆինանսավորման բոլոր աղբյուրների հաշվին 2000-2006 թթ. ընթացքում ավելի քան 20 հազար ընտանիք բարելավել է իր բնակարանային պայմանները: ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության օժանդակությամբ ՀՀ Շիրակի և Լոռու մար-

[683] Տե՛ս Տե՛ս Հայաստան 1998-2007, էջ 34:
[684] Տե՛ս նույն տեղում:
[685] Տե՛ս նույն տեղում:

զերում 2001-2004 թթ. աղետի գոտու վերականգնման ծրագրով բնակարանների գնման վկայագրեր տրամադրվեցին 5914 ընտանիքի: Այդ նախաձեռնությունը շարունակվեց պետական բյուջեի միջոցների հաշվին. բնակարան ստացավ ևս 628 ընտանիք: 2005-2006 թթ. պետական միջոցների հաշվին Շիրակի և Լոռու մարզերի գյուղական բնակավայրերում անավարտ շինարարությունը ավարտելով՝ լուծվեցին 960 անօթևան ընտանիքների բնակարանային խնդիրները: 2005-2007 թթ. կապիտալ ներդրումները նպաստել են նաև 32 մարզական օբյեկտների հիմնանորոգման, շինարարության և վերակառուցման բարեհաջող ավարտին[686]: Այդ նույն ժամանակահատվածում իրականացվել են 3211,5 մլն դրամի շինարարական աշխատանքներ:Հիմնանորոգվել են նաև 20 առողջապահական օբյեկտներ, որոնց կայացման համար ներդրվել է 1268 մլն դրամ: Պետական և օժանդակող կազմակերպությունների միջոցների հաշվին իրականացված շինարարական աշխատանքների շնորհիվ լուծվել են 4970 ընտանիքի բնակարանային խնդիրները, որոնցից 4126-ը «Լինսի» հիմնադրամի հաշվին[687]: 2009 թվականին համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով շինարարության տեսակարար կշիռը համախառն ներքին արդյունքի մեջ 25%-ից իջավ 14,2 %-ի: Աննախադեպ անկում նկատվեց այդ ոլորտում, որը տարվա կտրվածքով 14 տոկոսով նվազեցրեց համախառն ներքին արդյունքը: 21 հազարից ավելի բազմաբնակարան շենքերի զգալի մասը «խրուշչովյան» տարիներին կառուցված շենքեր էին, որոնք վթարային դառնալու լուրջ խնդիրներ ունեին, ուստի 2011 թ. որոշակի գումարներ էր հատկացվել բազմաբնակարան շենքերի նմանատիպ խնդիրները լուծելու համար[688]: Այդ նպատակով էլ ՀՀ-ում 2010 թվականից կյանքի կոչվեց նաև հիպոթեքային բնակարանային շինարարության ծրագիրը: Դա նախատեսված էր հատկապես այն մարդկանց համար, ովքեր իրենց աշխատավարձով չեն կարող այսօր բնակարան ձեռք բերել, այն մարդիկ, ովքեր աշխատանք չունեն կամ երիտա-

---

[686] Տե՛ս նույն տեղում:
[687] Տե՛ս նույն տեղում:
[688] Տե՛ս Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2011թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 2012, էջ 26,27:

սարդ ընտանիքներ են: ՀՀ-ում ստեղծվեցին առաջին հիփոթեքային հիմնադրամները, որոնք երկարաժամկետ պայմանագրերով երիտասարդ ընտանիքներին արտոնյալ բնակարաններ են տրամադրում:

2011 թ. Երևանում շահագործման հանձնվեց ՀՀ նախագահի նախաձեռնությամբ ԵՊՀ աշխատակիցների և երիտասարդ դասախոսների համար մատչելի գներով կառուցված բազմաբնակարան շենքը: Նմանատիպ նախագծերով շենքեր են կառուցվում ոչ միայն Երևանում, այլև մարզերում՝ հանրապետության մյուս բուհերի և որոշ հաստատությունների աշխատակիցների, երիտասարդ ընտանիքների համար: 2011 թ. հուլիսին Հոլանդիայում ստորագրված փաստաթղթով արդեն առաջին 3 մլն եվրո աջակցություն ստացավ ՀՀ-ն՝ բնակարանաշինության համար. բնակարանները հատկապես կառուցվելու են սոցիալապես անապահով մարդկանց համար: Թիրախային քաղաքներ ընտրվեցին առաջին փուլում Դիլիջանը, Հրազդանը, Ապարանը, Աշտարակը և Վեդին: Նախատեսվում է կառուցել 1000 բնակարան առաջիկա երեք տարում: 2011 թ. սեպտեմբերից սկսվեց ծրագրի իրագործման առաջին փուլը[689]:

2011 թ. վերջերին իրականացնելով աղետի գոտու վերականգնման աշխատանքների վերջին փուլը՝ շուրջ 7 հազար անօթևան ընտանիքներ ապահովվեցին բնակարաններով[690]:

Ձեռքբերումների հետ միասին շինարարության ոլորտում նկատվող թերություններից են՝ տեղական շինանյութերի արտադրության կրճատումը, դրսից ներմուծումների քանակի ավելացումը և գների անընդմեջ աճը, նորակառույց բազմաբնակարան էլիտար շենքերի բնակարանների բանկ և շատերի համար անմատչելի գները, շինարարության թույլտվությունների անհարգի ձգձգումները և այլն:

---

[689] Տե՛ս «Ազգ», 25.10.2011:

[690] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 8.11.2011, Հայաստանի Հանրապետության բնակարանային ֆոնդը և կոմունալ տնտեսությունը 2012թ., Երևան, 2013, էջ 68:

դ. Առևտուրը և ծառայությունները

21-րդ դարասկզբին աճեց մանրածախ առևտրի շրջանառության և բնակչության մատուցած ծառայությունների ծավալը: Այդ աճը, 2000 թ. համեմատությամբ, 2008 թ. երեք անգամ ավելի էր, մանրածախ առևտրի շրջանառությունը՝ մոտ չորս անգամ, իսկ բնակչությանը մատուցված ծառայությունները՝ մոտ երկու անգամ: Այդ աճի տեմպերը ակնառու են հատկապես 2000 թ. հետո: Ոլորտում զարգացումները բնութագրող մեկ շնչի հաշվով մանրածախ առտրի շրջանառության և մատուցված ծառայությունների ծավալը 2008 թ., 2000 թ. համեմատությամբ, համադրելի գներով աճել է 3,5 անգամ[691]: Դրական տեղաշարժեր են տեղի ունեցել մանրածախ առևտրի շրջանառության ապրանքային կառուցվածքում: Եթե 1998 թ. մանրածախ առևտրի շրջանառության մեջ ոչ պարենային ապրանքների տեսակարար կշիռը 23% էր, ապա 2008 թ. այն կազմել է ավելի քան 38%[692]: Դրական փոփոխություններ են տեղի ունեցել նաև ոչ պարենային ապրանքների կառուցվածքում: Մասնավորապես 2000-2008 թթ. ընթացքում շուրջ 2,5 անգամ աճել է երկարատև օգտագործման ապրանքների (հեռուստացույց, սառնարան, կահույք, լվացքի մեքենա և այլն) վաճառքի ծավալները: Սա վկայում է բնակչության եկամուտների ավելացման մասին: Վերոնշյալ տարիներին դրական տեղաշարժեր կատարվեցին նաև բնակչությանը մատուցվող ծառայությունների կառուցվածքում: Ավելացել է կենցաղի, կրթության համակարգի, մշակույթի, բժշկական ծառայությունների, կապի և հեռահաղորդակցության ծառայությունների տեսակարար կշիռը, որը վկայում է մարդկանց հոգևոր և առողջության պահպանման պահանջմունքների բավարարման հնարավորությունների ընդլայնման ու որոշ մատչելիության մասին: Աստիճանաբար մեծանում է խանութներում իրականացվող առևտրի շրջանառության տեսակարար կշիռը, որը 25 տոկոսով ավելի է սպառողական ապրանքների շուկաներում, տոնա-

[691] Տե՛ս Հայաստան 1998-2007, էջ 35:
[692] Տե՛ս նույն տեղում, էջ 36, Առևտուր և մարդկային զարգացում, Երևան, 2011, էջ 32, 33:

վաճառներում և կրպակներում առևտրի շրջանառության ծավալներից:

Արտաքին առևտրական գործունեության բնագավառում իրականացվող քաղաքականությունը նպատակաուղղվել է համաշխարհային տնտեսության մեջ ՀՀ տնտեսության ինտեգրման գործընթացների արդյունավետության բարձրացմանը, արտահանման խթանմանը, ներդրումների ներգրավմանը, արտաքին առևտրական ռեժիմի հետագա ազատականացման ապահովմանը, արտերկրի հետ միջպետական տնտեսական համագործակցության ընդլայնմանը: Արտաքին տնտեսական գործունեության ազատականացման քաղաքականության հետևողական իրագործման շնորհիվ 2003 թ. փետրվարի 5-ին ՀՀ-ն դարձավ Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) լիիրավ անդամ:

Հայաստանի անդամակցությունը ԱՀԿ-ին հնարավորություն ընձեռեց ԱՀԿ անդամ երկրների հետ ամրապնդել երկկողմ առևտրատնտեսական հարաբերությունները, մեծացնել հայկական ծագում ունեցող ապրանքների մուտքը ԱՀԿ անդամ երկրների շուկաներ, նպաստեց ԱՀԿ անդամ երկրների ապրանքների և ծառայությունների մուտքը հայկական շուկա, որն էլ ուղղակիորեն ազդեց ՀՀ արտահանման և ներմուծման ծավալների աճի ավելացման վրա: ՀՀ տնտեսության մեջ օտարերկյա ներդրումները 2008 թ. անդամ երկրների համեմատությամբ կրկնապատկվել են[693]:

ԱՀԿ-ին անդամակցելով մեծ դաշտ է ստեղծվել պաշտպանելու ինչպես ՀՀ ներքին շուկան, այնպես էլ տեղական արտադրողների շահերը, բարձրացնելու վերջիններիս մրցունակությունն արտաքին շուկաներում, խթանելու սեփական արտադրության ապրանքների և ծառայությունների որակի բարձրացումը: ԱՀԿ-ին անդամակցելուց ի վեր ՀՀ կառավարության կողմից ընդունվել են մի շարք տեխնիկական կանոնակարգեր, որոնց հիմքում դրված են միջազգային և եվրոպական ստանդարտներ: ՀՀ-ն մասնակցում է նաև ԱՀԿ շրջանակներում ձևավորված մի շարք խմբերի աշխատանքներին, որոնք դեպի ծով ելք չունեցող երկրներ են:

---

[693] Տե՛ս Առևտուր և մարդկային զարգացում, էջ 22:

Եվրախորհրդին Հայաստանի Հանրապետության լիիրավ անդամակցությունը տեղի ունեցավ 2001 թ. հունվարի 25-ին: Այն ընդլայնեց եվրոպական երկրների հետ համագործակցության շրջանակները[694]: 2000-ական թվականներին Եվրամիությունը երկկողմանի համաձայնագրեր կնքեց ԱՊՀ երկրների, այդ թվում՝ Հայաստանի հետ, որի հիման վրա սկսվեց ԵՄ-ի հետ տնտեսական ինտեգրման գործընթացը: Եվրամիությունը Հայաստանին աջակցում է արագ հաղթահարելու շուկայական տնտեսության անցումային փուլը, ներդրումների միջոցով նպաստում է հանրապետության տնտեսության զարգացմանը ու նրա տարբեր ոլորտների բարեփոխումներին:

Կայուն հիմքերի վրա է ընթանում ՀՀ-ի համագործակցությունը ԱՊՀ երկրների հետ: Ընդ որում համագործակցությունն ընդգրկում է սոցիալ-տնտեսական կյանքի գրեթե բոլոր ոլորտները: ՀՀ-ն լինելով ԱՊՀ հիմնադիրներից մեկը՝ կարևորում է առևտրատնտեսական համագործակցությունը, որի շնորհիվ ձեռք է բերվում ինչպես քանակական, այնպես էլ որակական արաջընթաց: Ընդհանուր առմամբ 2008թ. դրությամբ ԱՊՀ երկրներին է բաժին ընկնում ՀՀ ողջ առևտրաշրջանառության 33%-ը: 2000 թ. համեմատությամբ, այն 2008 թ. ավելացել է ավելի քան 3 անգամ[695]: Ընդ որում այդ գործում զգալի մասնաբաժին ունի Ռուսաստանի Դաշնությունը, որը առաջատար է բոլոր գործընկեր երկրների շարքում՝ 2008 թ. դրությամբ ապահովելով ԱՊՀ երկրների հետ առևտրաշրջանառության 49%-ը: Ռուսաստանի հետ հարաբերությունները լինելով ռազամավարական՝ ընդգրկում են տնտեսության բոլոր ոլորտներն ու ճյուղերը:

2000-2008 թթ. արտաքին տնտեսական գործունեության բնագավառում տեղի են ունեցել որակական փոփոխություններ, որոնք առաջին հերթին դրսևորվել են զարգացած երկրների հետ առևտրի շրջանառության ընդլայնման միջոցով: Մասնավորապես Եվրամիության երկրների հետ առևտրաշրջանառությունը 2000 թ. կազ-

---

[694] Տե՛ս Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը, վիճակագրական ժողովածու, Երևան, 2003, էջ 3:

[695] Տե՛ս Առևտուր և մարդկային զարգացում, էջ 31:

մել է ՀՀ արտաքին ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալի 22%-ը[696], իսկ 2008թ. համապատասխանաբար՝ 38%-ը: Վերջին տասը տարվա ընթացքում ՀՀ-ից արտահանումը աճել է ավելի քան 7 անգամ: Փաստորեն հայրենական արտադրողները այս ժամանակահատվածում կարողացել են ոչ միայն իրենց թողարկած ապրանքների որակը հասցնել միջազգային ստանդարտներին, այլև տիրապետել զարգացած շուկաներում գործելու հմտություններին: 2008 թ. ցուցանիշներով 2000 թ. համեմատ զգալի աճ են ունեցել մեքենասարքավորումների և մեխանիզմների (մոտ 3 անգամ), ինչպես նաև արդյունաբերական հումքի (ավել քան 4 անգամ) ներմուծման ծավալները, ինչը վկայում է ՀՀ-ում արդյունաբերության աստիճանական զարգացման մասին[697]: ՀՀ-ի և եվրոպական համայնքների ու նրա անդամ պետությունների միջև կնքված գործընկերության և համագործակցության համաձայնագրով հիմքեր ստեղծվեցին օրենսդրական, ֆինանսական, գիտական, տեխնոլոգիական և մշակութային համագործակցության համար՝ նոր խթաններ ապահովելով կայուն տնտեսական զարգացման համար:

2004 թ. Եվրամիության խորհրդի ընդհանուր և արտաքին հարաբերությունների խորհուրդը Հայաստանի Հանրապետությունը ընդգրկեց Եվրոպական հարևանության քաղաքականության (ԵՀՔ) մեջ՝ հարաբերությունները տեղափոխելով որակական նոր մակարդակ: Գործընկերոջ և համագործակցողի կարգավիճակ ունեցող երկրից ՀՀ-ն դարձավ Եվրամիությանը հարևան երկիր: ԵՀՔ շրջանակներում Եվրամիությունը հարևան երկրներին առաջարկեց արտոնյալ համագործակցություն, որի նպատակն էր ժողովրդավարության հաստատումը, մարդու իրավունքների պաշտպանությունը, օրենքի իշխանությունը, շուկայական տնտեսության սկզբունքների ներդրումը, կայուն զարգացումը:

ԵՀՔ շրջանակներում 2006 թ. ստորագրվեց և հաստատվեց Հայաստան-Եվրամիություն համատեղ գործողությունների ծրագիր, որի իրականացումը նշանակալիորեն նպաստելու է ՀՀ օրենս-

[696] Տե՛ս Հայաստան 1998-2007, էջ 49, Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2012 թվականին, Երևան, 2013, էջ 8:
[697] Տե՛ս նույն տեղում, էջ 49:

դրության, նորմերի և ստանդարտների ներդաշնակեցմանը Եվրամիության չափանիշներին[698]:

Հաջողված համագործակցություն է ծավալել ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության, Արդյունաբերության զարգացման կազմակերպության, Եվրոպական տնտեսական հանձնաժողովի, Արժույթի միջազգային հիմնադրամի, Համաշխարհային բանկի, Եվրասիական տնտեսական ընկերության, ինչպես նաև Սևծովյան տնտեսական համագործակցության շրջանակներում, որտեղ ՀՀ-ի ներգրավվածությունը զգալիորեն աճել է:

Եվրամիության հետ ներկա հարաբերությունները Հայաստանի Հանրապետությունը կառուցում է՝ ելնելով իր հիմնական երեք նպատակներից: Առաջին՝ դառնալ Եվրամիության ասոցիացիայի անդամ, երկրորդ՝ ստեղծել ազատ առևտրի գոտի՝ ազատ առևտուր անելով եվրոպական երկրների հետ, և երրորդ՝ ՀՀ քաղաքացիները կարողանան ավելի հեշտ ելումուտ անել շենգենյան երկրներ: Բարեփոխումներին օժանդակելու նպատակով 2009 թվականից ՀՀ-ում գործում է ԵՄ խորհրդատուների խումբ, որը աջակցում է ՀՀ պետական կառույցներին՝ օրենսդիր, գործադիր և դատական համակարգերում ԵՄ չափանիշներին համապատասխան բարեփոխումներ իրականացնելու գործում[699]: Մեծապես կարևորելով եվրոպական հարևանության քաղաքականության վերանայման շնորհիվ մշակված «Ավելի շատ աջակցություն՝ ավելի շատ բարեփոխումների դիմաց» սկզբունքին՝ Հայաստանի և ԵՄ-ի միջև ընդլայնվեցին ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ համագործակցության ոլորտները:

2010 թ. հուլիսին մեկնարկեցին Հայաստան-Եվրամիություն ասոցիացման համաձայնագրի շուրջ բանակցությունները: Դրա արդյունքում 2011 թ. հոկտեմբերի 27-ին Լյուքսեմբուրգում ստորագրվեց Հայաստանի և ԵՄ-ի միջև շարժունակության շուրջ գործընկերության համատեղ հռչակագիր, որի նպատակն էր նպաստել միգրացիոն հոսքերի կառավարմանը, ԵՄ տարածքում ՀՀ քաղաքացիների օրինական մուտքի ու գործունեության կանոնա-

[698] Տե՛ս նույն տեղում:
[699] Տե՛ս Առևտուր և մարդկային զարգացում, էջ 33:

կարգմանը, մասնագիտական փոխանակումների խթանմանը: Այս գործընկերության մեկնարկը անուղղակիորեն դյուրացնելու է նաև մուտքի վիզաների գործընթացը[700]:

2011 թ. նոյեմբերի 25-ին Բրյուսելում տեղի ունեցավ Հայաստան-Եվրամիություն համագործակցության խորհրդի 12-րդ նիստը, որտեղ քննարկվեցին երկկողմ համագործակության զարգացման ու ամրապնդման բազմաթիվ հարցեր:

ե. Դրամավարկային և հարկային քաղաքականությունը

2000-ական թթ. Հայաստանի Հանրապետությունում իրականացված հարկային քաղաքականությունը բնութագրվում է հետևյալ ուղղություններով: Առաջինը և հիմնականը ներդրումների իրականացման բարենպաստ հարկային դաշտի կայացման և այդպիսով տնտեսական աճի առավելագույն ցուցանիշների ձեռքբերման համար անհրաժեշտ հարկային միջավայրի ապահովումն էր: Շահութահարկի մասին օրենքով սահմանված հարկի 30%-ի սահմանային դրույքաչափը 2001 թ.-ին նվազեցվեց մինչև 20%: Նվազեցվեց նաև եկամտահարկի դրույքաչափը՝ 30%-ից մինչև 20%, որին զուգահեռ ավելացվեց նաև եկամտահարկով չհարկվող ամսական եմակուտների մեծությունը 20-րդ դարավերջին սահմանված 2 հազար դրամից 2002 թվականին հասնելով 20 հազար դրամի: Սոցիալական ապահովագրության վճարների դրույքաչափերի շարունակական նվազեցման շնորհիվ առավալագույն դրույքաչափը կազմում էր 15%[701]:

Շահութահարկի կիրառության մեխանիզմների կատարելագործմամբ ստեղծվեցին ներդրումների խրախուսման տարբեր խթաններ: Սահմանվեց, որ օտարերկյա ներդրողների փաստացի կատարած ներդրման ընդհանուր արժեքը առնվազն 500 մլն դրամ կազմելու դեպքում օգտվում են շահութահարկից ազատվելու արտոնությունից: Հարկման բարենպաստ պայմաններ սահմանվե-

[700] Տե՛ս նույն տեղում, էջ 38, 39, 109, 110:
[701] Տե՛ս Հայաստան 1998-2007, էջ 39, Միևնույնը, Սոցիալ-տնտեսական վերափոխումները Հայաստանի Հանրապետությունում 1990-2003թթ., էջ 146:

ցին նաև ներդրումներից ստացվող շահաբաժինների մասով[702]:

Գույքահարկից ազատվեցին հիմնական միջոցների զգալի մասը՝ մեքենաներն ու սարքավորումները: Հարկման արդարացիության սկզբունքից ելնելով՝ ընդգծվեց նաև գույքահարկի սոցիալական ուղղվածությունը՝ ֆիզիկական անձանց պատկանող ավելի բարձրարժեք գույքի համար սահմանելով աճող բարձր դրույքաչափեր:

Փոքր և միջին ձեռնարկատիրության խրախուսման նպատակով կարևոր քայլ էր 2000 թվականից պարզեցված հարկի կիրառությունը, ինչը փոքր ձեռնարկության դեպքում փոխարինեց ավելացված արժեքի հարկին և շահութահարկին կամ եկամտահարկին:

Հարկման նման մոտեցման կիրառումը հնարավորինս պարզեցրեց հարկային հաշվառումը, նվազեցրեց հարկային մարմինների և պարզեցված հարկ վճարող տնտեսավարող սուբյեկտների շփումների հաճախականությունը և բարելավեց վերջիններիս տնտեսավարման պայմանները: Չնայած հարկային բեռի վերը նշված թեթևացմանը՝ հիմնականում հարկման բազայի ընդլայնման և հարկային հսկողության բարելավման շնորհիվ 2007 թ. ՀՆԱ-ի նկատմամբ հարկային եկամուտների մակարդակը, 1998 թ. համեմատությամբ, ավելացավ շուրջ 2,8%-ով[703]: 2002 թ. հետո ընկած ժամանակահատվածում հարկային քաղաքականությունը բնութագրվում է տնտեսավարողների համար համահավասար պայմանների ապահովմամբ, հարկերի հաշվարկման և վճարման մեխանիզմների հնարավորինս պարզեցմամբ, հարկային օրենսդրությունում առկա հակասությունների նվազմամբ ու հարկատուների իրավունքների պաշտպանությամբ:

2003 թվականից հետո կատարված օրենսդրական փոփոխությունների մյուս կարևոր ուղղությունը վերաբերում էր հարկային հսկողության մեխանիզմների կատարելագործմանը: Ստուգումների վերաբերյալ օրենքում կատարված փոփոխությամբ հնարավո-

[702] Տե՛ս նույն տեղում:
[703] Տե՛ս նույն տեղում, էջ 40:

րությունն ստեղծվեց առավել հստակ հարաբերություններ ձևավորել հարկային մարմինների և հարկ վճարողների միջև: Դրանով խստիվ սահմանափակվեցին կրկնակի ստուգումները: Բացի դրանից արգելվեց կազմակերպության համալիր ստուգումը որևէ պետական մարմնի կողմից: Փաստորեն 2000-ական թթ. Հայաստանում իրականացված հարկային քաղաքականությունը հիմնականում բնորոշվեց հարկային խոչընդոտների առավելագույն վերացմամբ:

Ներդրումների և միջազգային առևտրի վրա եկամտային և գույքային հարկերի հետ կապված խոչընդոտների ազդեցությունը վերացնելու, ինչպես նաև կայուն և կանխատեսելի հարկային դաշտ ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետությունը եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու մասին երկկողմանի համաձայնագիր կնքեց: Գործում են 26 երկրների հետ կնքված համաձայնագրերը, վավերացվել են ևս երեք համաձայնագրեր[704]:

Ֆինանսատնտեսական ճգնաժամի ընթացքում նվազած տնտեսական ակտիվության պատճառով կրճատվեցին հարկային մուտքերը, ինչը հանգեցրեց հարկաբյուջետային պակասուրդի աճի՝ 2008 թվին ՀՆԱ-ի 0,7%-ից մինչև 4,7 % 2009 թվին[705]: Պակասուրդը հիմնականում փակվում էր արտաքին ռեսուրսներից (վարկեր և դրամաշնորհներ), ինչը թույլ էր տալիս կառավարության ավանդները կուտակել բանկային համակարգում:

Այդ ռեսուրսները, որոնք հիմնականում տրամադրված էին Համաշխարհային բանկի, Զարգացման ասիական բանկի, ԵՄ-ի և Ռուսաստանի Դաշնության կառավարության կողմից, հայաստանյան կառավարությանն օգնեցին հարկային եկամուտների 15% կրճատումն այնպես կառավարել, որ այն չհանգեցնի իր ծախսերի նշանակալի նվազման: Հարկաբյուջետային քաղաքականությունը խստացվեց 2010 թվականին՝ կապված ճգնաժամի

[704] Տե՛ս նույն տեղում:
[705] Տե՛ս ՀՀ կառավարության 2008-2011 թթ. գործունեության արդյունքները, Երևան, 2011, էջ 48:

հետ, որպեսզի ապահովվի պարտքերի սպասարկումը: Հարկաբյուջետային քաղաքականությունն աջակցում էր նաև տնտեսության վերականգնմանը ծախսային այնպիսի ծրագրերով, որոնք կենտրոնանում էին հակաճգնաժամային աշխատանքների իրականացման, օտարերկյա ֆինանսավորմամբ կապիտալ ծախսերի ավելացման և պետական ծախսերի պաշտպանության վրա: Վերջին տասը տարիների ընթացքում պետական բյուջեի համար եկամուտների նշանակալի աղբյուր են հանդիսացել հարկերը և տուրքերը, որոնք շարունակեցին համամասնորեն աճել: 2009 թվականին պետական բյուջեի ծախսերի զգալի մասն ուղղված էր սոցիալական ապահովությանն ու ազգային անվտանգությանը (ներքին և արտաքին), որոնց հետևում էին պետական ծառայությունները, կրթությունն ու առողջապահությունը:

2009 թ. ՀՀ արտաքին պատքը կազմեց մոտ 3 մլրդ ԱՄՆ դոլար, որի 13,8 %-ը գոյացել էր հայաստանյան կառավարությունում, իսկ 30 %-ը՝ կենտրոնական բանկում[706]: 2012 թ. ՀՀ արտաքին պետական պարտքը կազմեց 3 մլդ. 740 հազար ԱՄՆ դոլար, որից ՀՀ կառավարության պարտքը 3 մլդ. 145 մլն. էր, իսկ ՀՀ կենտրոնական բանկինը՝ 595 մլն.[707]:

Թեև հարկերը, տուրքերը պետական բյուջեում շարունակեցին աճել 2010-2011 թթ., սակայն դրանցից ստացված իրական եկամուտը մնում էր ցածր՝ հարկերից խուսափման, հարկային վարչարարության թուլացան և անուղղակի հարկերի վրա մեծապես հենվելու պատճառով:

2011 թ. հարկային քաղաքականության մեջ կատարվեցին նոր փոփոխություններ՝ նպատակ ունենալով հնարավորինս բարելավել միջավայրը փոքր և միջին բիզնեսի համար և հարկային բեռը տեղափոխել այն ոլորտները, որտեղ կան ավելի բարձր եկամուտներ: Առաջին փոփոխությունը եկամտահարկի սանդղակն էր, որը կազմվել է պրոգրեսիվ սկզբունքով: Այն ֆիզիկական անձանց հա-

[706] Տե՛ս Առևտուր և մարդկային զարգացում, էջ 22:
[707] Տե՛ս Հայաստանի վիճակագրական տարեգիրք, ՀՀԱՋ վիճ. ծառայություն, Երևան, 2013, էջ 395:

մար, ովքեր ստանում էին 2 մլն դրամից ավելի եկամուտ, նրանք պետք է վճարեին ոչ թե 20%, այլ 25 % եկամտահարկ: Երկրորդ կարևորագույն փոփոխությունը վերաբերում է ալկոհոլային խմիչքներին: Ճգնաժամի ժամանակ նախապատվությունը տրվում էր հայրենական արտադրողներին, իսկ արդեն 2011 թ. սահմանվեցին հավասար պայմաններ: Այսուհետև ավելացվում էր օղու արժեքային դրույքաչափը՝ ներքին շեմը թողնելով անփոփոխ 500 դրամ: Դա նշանակում է, որ եթե հանրապետության շուկայի 80%-ը էժան օղիներն են, 20%-ը էլիտար, ապա այդ 20% էլիտար օղիների շուկայում տեղի կունենա գների որոշակի բարձրացում՝ դրույքաչափի պատճառով: Փաստորեն թանկ օղիներից 2 մլրդ դրամ լրացուցիչ կհավաքվի բյուջեում: Երրորդ կարևոր փոփոխությունը շքեղության հարկն է: Առաջին անգամ Հայաստանի Հանրապետությունում բարձրացվում են թանկարժեք մեքենաների դրույքաչափերը: Խոսքը 90 հազար ԱՄՆ դոլարից ավելի բարձր գին ունեցող մեքենաների մասին է, որոնց դրույքաչափը բարձրացել է 20%-ով: Չորրորդ՝ խաղատների համար նախատեսված հաստատագրված վճարները ավելացել են 50%-ով՝ ակնկալելով 2 մլրդ դրամ լրացուցիչ եկամուտ[708]:

Փոքր և միջին բիզնեսի համար կարևոր քայլ է համարվում արտոնագրային վճարների դաշտում գործունեության այնպիսի տեսակների ընդլայնումը, ինչպիսիք են հանրային սննդի գործունեությունը, հյուրանոցային տնտեսությունները, թեթև մարդատար մեքենաներով ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպությունները, վարսավիրանոցները, ավտոտեխսպասարկման կայանները, ավտոկանգառները, բիլիարդի խաղերի կազմակերպումը:

Նախկինում ընդամենը 100 հազար դրամի պարագայում էր թույլատրվում հարկային գերավճարները հաշվարկել՝ առանց հարկային մարմնի ստուգման: Այդ շեմը օրենքով բարձրանում է մինչև 10 մլն դրամ, որն առաջին հերթին վերաբերում է փոքր և միջին բիզնեսին[709]:

---

[708] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 3.11.2011:
[709] Տե՛ս նույն տեղում:

Կարևոր է նաև այն, որ պետության կողմից գերավճարների վերադարձման տույժ-տուգանքները չեն դիտարկվելու որպես եկամուտ և չեն հարկվելու: Ընդհանրապես ավելացված արժեքի հարկի հաշվանցումների դաշտն էապես պարզեցվում է այս հարկային փաթեթով: 2012 թ. պետբյուջեում 101 մլրդ դրամով բազան ավելացվում է: Նման հարկային քաղաքականության շնորհիվ այդ գումարից հարկային վարչարարության բարելավման հաշվին պետք է հավաքվի լրացուցիչ 10-15 մլրդ դրամ, 40-50 մլրդ դրամն էլ տնտեսական աճի և նոր ստեղծված արժեքի հաշվին: Մոտ 60 մլրդ դրամն էլ պետք է հավաքվի ստվերային տնտեսության նվազեցման հաշվին[710]:

զ. Մաքսային և ֆինանսաբանկային քաղաքականությունը

2001 թ. ուժի մեջ մտավ Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգիրքը, որով մաքսային քաղաքականությունն ուղղվեց ազատ առևտրի զարգացմանը[711]: Սահմանվեցին մաքսատուրքերի բավականին ցածր դրույքաչափեր, մասնավորապես արտահանման համար 0%, իսկ ներմուծման համար մաքսատուրք սահմանվեց յուրահատուկ հաստատագրված դրույքաչափերով: Մաքսավճարի գծով նույնպես սահմանվեցին հաստատագրված դրույքաչափեր նախկինում գործող արժեքայինի փոխարեն: Աշխատանքներ էին տարվում նաև ազատ առևտրի ոչ սակագնային խոչընդոտների կրճատման ուղղությամբ: Մասնավորապես ՀՀ տարածքում գործող ստանդարտները և տեխնիկական կանոնակարգերը համապատասխանեցվեցին միջազգային չափանիշներին: Հանվեցին նաև ազատ առևտրի զարգացման այլ խոչընդոտներ՝ ներմուծման լիցենզավորումը և քվոտաների սահմանումը: Հստակ սահմանվեցին մաքսային վճարների գանձնման նպատակով որոշվող մաքսային արժեքի հաշվարկման եղանակները, ընդ

[710] Տե՛ս «Ազգ», 25.10.2011, Հայաստանի վիճ. տարեգիրք, նշված աշխ, էջ 383-384:
[711] Տե՛ս Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու 2002, գիրք Ե, 2002, էջ 592:

որում որպես առաջնային մեթոդ սահմանվեց գործարքի գնի մեթոդը, ինչը հնարավորություն ստեղծեց Հայաստանի Հանրապետության շուկա ապրանքներ ու ծառայություններ ներկրել առավել մատչելի գնով[712]: Մաքսային քաղաքականության շրջանակներում կարևոր էր նաև տարածաշրջանում ազատ առևտրի համաձայնագրերի կնքմանն ուղղված միջոցառումների իրականացումը: 2000 թվականի կեսին ազատ առևտրի գոտու ստեղծման մասին համաձայնագրեր կնքվեցին Վրաստանի, Ռուսաստանի, Իրանի, Տաջիկստանի, Բելոռուսի, Ղրղզստանի, Ղազախստանի, Ուկրաինայի, Թուրքմենստանի, Մոլդովայի հետ: Այդ տեսակետից կարևորվում է Սանկտ-Պետերբուրգում 2011 թ. նոյեմբերին Ռուսաստանի Դաշնության հետ ստորագրված ազատ առևտրի գոտու ստեղծման համաձայնագիրը[713]: Վերջին տարիներին (2009-2011 թթ.) ստվերային տնտեսության հայտնաբերման ուղղությամբ կառավարությունն ու պետական եկամուտների կոմիտեն որոշակի միջոցառումներ ձեռնարկեցին: Հասարակությանը ստվերի բացահայտման գործում ներգրավելու, փաստաթղթաշրջանառությունը ցույց տալու նպատակով բոլոր առևտրական կետերում տեղադրվեցին հաշվիչ դրամային մեքենաներ (ՀԴՄ-ներ)՝ կտրոնների դիմաց տրամարելով բոնուսներ: Սակայն այդ գործընթացն անհաջողության մատնվեց: Տնտավաճառների շրջանառությունն այժմ էլ մեծապես գտնվում է ստվերում: Հարկերի լրացուցիչ հավաքման ռեզերվներից կարելի է առանձնացնել հանքաարդյունավերությունը: Համաշխարհային բանկն առաջարկել էր հարկային փոփոխություններ, ըստ որի հանքաարդյունաբերական ընկերությունները բնապահպանական վճարները պետք է վճարեին միջազգային գների փոփոխություններին համարժեք սանդղակով: Սակայն դեռևս այդ օրենքը ընդունված չէ:

2000-2006 թթ. մակրոտնտեսական միջավայրի կայուն զարգացման միտումները զուգորդվեցին ֆինանսաբանկային համակարգի կայունացմամբ և վերջինիս նկատմամբ վստահության մակարդակի բարձրացմամբ: Իրականացվող քաղաքականությունը

[712] Տե՛ս Հայաստան 1998-2007, էջ 41:
[713] Տե՛ս «Ազգ», 25.10.2011:

ուղղված է եղել այնպիսի ֆինանսական համակարգ ունենալուն, որը կլինի առողջ ու կայուն, վճարունակ, տնտեսությունն ակտիվորեն սպասարկող և զարգացող: Տվյալ ժամանակահատվածում լուրջ ջանքեր գործադրվեցին բանկային համակարգը վատորակ ակտիվներ ունեցող և զարգացման հեռանկար չունեցող բանկերից ձերբազատելու ուղղությամբ, ինչի արդյունքում լուծարվեց 11 բանկ, գրանցումից հանվեց 30 բանկ, տեղի ունեցավ երկու բանկերի միաձուլում, իսկ մեկ բանկ վերաձևակերպվեց ու դարձավ վարկային կազմակերպություն: Միաժամանակ նոր բանկային լիցենզիաներ տրամադրվեցին 3 բանկերի[714]:

Վերոնշյալ բարեփոխումների արդյունքում ՀՀ ֆինանսական համակարգն անցավ զարգացման որակապես նոր փուլ, համակարգում ձևավորվեցին կայուն ֆինանսական ինստիտուտներ, որոնք լինելով ճկուն՝ ամուր դիրքեր գրավեցին ֆինանսական շուկայում: 2010 թ. բանկային համակարգում գործում էին 21 բանկեր, որոնց տեսակարար կշիռը ՀՆԱ-ում մոտ 20% էր, իսկ 2011 թ. 22 բանկերից 17-ը փակ բաժնետիրական և 1-ը սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն էին: Բանկային համակարգի չափազանց փոքր քանակի մասնակիցներ տնօրինում էին ՀՀ բանկային համակարգի 90%-ից ավելին և ՀՀ-ում ներդրումային բարձր որակի պայմաններում բարձրանում է նաև ՀՀ-ից բանկային կապիտալի արտահանման ռիսկը՝ իրական վտանգներ ստեղծելով ՀՀ ֆինանսական շուկայի համար[715]:

2011 թ. տվյալներով բանկային համակարգի ակտիվներն աճել էին 12,5%-ով և կազմել 7 տրլն 763 մլրդ դրամ: Վարկային ներդրումները աճել էին 17,8%-ով, տնտեսության վարկավորումը՝ 23,4%-ով, ֆիզիկական անձանց վարկավորման ցուցանիշը՝ 8%-ով: Միևնույն ժամանակ բանկային համակարգի պարտավորություններն աճել էին 14%-ով, իսկ բոլոր տեսակի ավանդների գծով պարտավորությունները՝ 9,4%-ով[716]: 2000 թվականների առաջին տասնամյակում ՀՀ բանկային համակարգի տնտեսության

[714] Տե՛ս Հայաստան 1998-2007, էջ 45:
[715] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 10.09.2013:
[716] Տե՛ս նույն տեղում:

վարկավորումն աճել է մոտ 3,5 անգամ, սակայն առավել արտահայտիչ աճ է արձանագրվել 2004-2006 թթ.՝ տարեկան միջին հաշվով 36%[717]: Վերջին տարիներին վարկավորման զգալի աճը հիմնականում արդյունք է եղել ինչպես սպառողական վարկերի ինստիտուտի զարգացման և պայմանավորված է ֆիզիկական անձանց վարկավորման, այնպես էլ բանկերի կողմից բիզնեսին առաջարկվող նոր վարկային արդյունքների աճով: Տնտեսության կայունությունը դրական արձագանք է գտել նաև բանկային համակարգի կողմից ավանդների ներդրումով: 2000 թվականից ի վեր բանկային համակարգի ավանդներն ավելի քան քառապատկվել են, ընդ որում սկսած 2004-ից տարվող տնտեսության ապադոլարացման քաղաքականության և դրամի դիրքերի ամրապնդման արդյունքում դրամային ավանդները աճել են 7 անգամ՝ արտարժութային ավանդների 2,7 անգամ աճի պայմաններում[718]: Ավանդների աճին մեծամասամբ նպաստել է հայրենական պլաստիկ քարտերի ներդրումը և այդ շուկայի զարգացումը: Վերջինս էապես նպաստել է նաև տնտեսության ոլորտում կնքվող անկանխիկ գործարքների զգալի աճին:

2000-ական թթ. սկզբից սկսվեց հանրային հատվածում գնումների իրականացման միասնական և միջազգային չափանիշներին համապատասխանող համակարգի ներդրման գործընթացը: Այս աշխատանքների արդյունքում ՀՀ Ազգային ժողովի կողմից 2000 թվականին ընդունվեց, այնուհետև 2004 թ. վերանայվեց «Գնումների մասին» ՀՀ օրենքը, որով կանոնակարգվեց հանրային հատվածի կարիքների համար ապրանքների, աշխատանքների և ծառայությունների հետ կապված հարաբերությունները: Որպես կատարված բարեփոխումների գնահատման ցուցանիշ կարելի է նշել մրցակցությամբ կատարված գնումների ծավալի աճը: Եթե 2001 թ. մրցույթներով էին իրականացվում ընդհանուր գնումների շուրջ 20 %-ը, ապա 2006 թ. մրցույթներով իրականացված գնումների ծավալը կազմում էր ընդհանուր գնումների շուրջ 80 %-ը, իսկ 2011

[717] Տե՛ս Հայաստան 1998-2007, էջ 42:
[718] Տե՛ս նույն տեղում, էջ 43:

բ. 90%-ից ավելին[719]: 2003 բ. 578 դրամից մեկ դոլարը 2006 բ. իջավ 415-ի, իսկ 2011 բ. 385 դրամի[720]: Այս քայլը պաշտպանեց արտարժույթի շուկան՝ մեծացնելով ՀՀ մրցունակությունը համամաշխարհային շուկայում՝ առանց սպառնալու վերջինիս ֆինանսական կայունությանը: Ածող ֆինանսական կարիքները բավարարելու համար կառավարությունը համաձայնության եկավ Արժույթի միջազգային հիմադրամի հետ վարկավորման շուրջ և նաև բազմակողմ ու երկկողմ դոնորներ ապահովեց հավելյալ ֆինանսավորման համար: Գների կայունությունը ՀՀ դրամավարկային քաղաքականության հիմնական նպատակն է: Առաջնահերթություն է տրվում նաև այնպիսի դրամավարկային քաղաքականության մշակմանն ու կիրառմանը, ինչպիսիք են իրացվելիության կարճաժամկետ կարգավորումը, կառավարության կողմից արտաքին ֆինանսական հոսքերի ստացումն ու ծախսումը և պետական պարտատոմսերի թողարկումն ու տեղաբաշխումը: Համաշխարհային ֆինանսական ճգնաժամի ընթացքում իրականացվել է ընդլայնվող դրամավարկային քաղաքականություն, որի նպատակն է եղել տնտեսական գործունեության խթանումը: ՀՀ կենտրոնական բանկը 2009 թվականին իջեցրել է իր վերաֆինանսավորման տոկոսադրույքը մինչև 7%, որպեսզի նպաստի տնտեսության վերակենդանմանը: Դրամի առաջարկն ավելացավ 15%-ով, ինչը թույլ տվեց ավելացնել տնտեսության վարկավորումը: Կենտրոնական բանկը բարձրացրեց նաև կանխիկ իրացվելիությունը, որի համար օգտագործվեցին տարբեր միջոցներ, ներառյալ պետական պարտատոմսերի ձեռք բերումը: Այդ միջոցները չհանգեցրին ակնկալվող արդյունքների՝ փոխանցման մեխանիզմի թերությունների պատճառով, հատկապես քանի որ բանկերի կողմից վարկավորվող տոկոսադրույքները մնացին 14-15%-ի սահմաններում, ինչը այլ գործոնների թվում ավանդների բարձր դոլարացման հետևանքն էր:

2008-2011 թթ. գնաճն ու գների մակարդակի անկայուն վիճակը

[719] Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2013, էջ 540:
[720] Նույն տեղում, Առևտուր և մարդկային զարգացում, էջ 21:

հանգեցրին ՀՀ տնտեսության ու սոցիալական վիճակի անհամաչափ զարգացումների: Վերջին տարիներին գնաճի զսպմանն ուղղված կոշտ դրամավարկային քաղաքականությունը հանգեցրեց բարձր տոկոսադրույքների սահմանմանը, երբ նոր աշխատատեղերի ստեղծումն ու ձեռնարկությունների ընդլայնումն անհնար էր կամ դժվար, քանի որ աճի համար անհրաժեշտ կապիտալը ուղղակի շատ թանկ էր նստում:

է. Համաշխարհային տնտեսական ճգնաժամի ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա և ձեռնարկված միջոցառումները

2008 թ. սեպտեմբերին ԱՄՆ-ում սկիզբ առած և այնուհետև ամբողջ աշխարհում տարածված ֆինանսատնտեսական ճգնաժամը բացասական լուրջ հետևանքներ ունեցավ նաև ՀՀ տնտեսության վրա:

Զգալիորեն նվազեցին արտասահմանում աշխատող կամ բնակվող հարազատների կողմից Հայաստան փոխանցվող կանխիկ դրամական միջոցները, ինչը խիստ բացասաբար անդրադարձավ ներքին պահանջարկի ու բնակչության բարեկեցության վրա: Ճգնաժամի հետևանքով տեղի ունեցավ ծավալների կրճատում, արտահանման ծավալների նվազում, ապրանքատեսակների գների անկում, պակասեցին ներդրումները: Ֆինանսական հատվածում ծագող խնդիրներն ու պետական աջակցության ծավալների կրճատումը նպաստեցին ՀՀ տնտեսության անկմանը:

Եթե սկզբում կառավարությունը չէր ընդունում ճգնաժամի ազդեցությունը հանրապետության տնտեսության վրա, նույնիսկ վարչապետի խոսքերով՝ «տնտեսական ճգնաժամի ալեկոծված ծովում Հայաստանի Հանրապետությունը համարվում էր խաղաղ նավահանգիստ», ապա հետագայում հայտարարվեց, որ ճգնաժամի հիմնական տարին 2009 թվականն է: Այդ նույն տարում երկրի համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ-ն) նվազեց 14.1 %-ով[721]:

---

[721] Տե՛ս Մինասյան է., Համաշխարհային տնտեսական ճգնաժամի ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա, «Լրատու» N 2 (9), Ստեփանակերտ, 2010, էջ 45:

Արձանագրվեց Հայաստանի Հանրապետության տնտեսության խոր անկում: Որպես արդյունք նույն տարում աղքատության մակարդակն առաջին անգամ 1998 թվականից հետո աճեց: 2010 թ. ճգնաժամը շարունակեց իր բացասական ազդեցությունը: ՀՀ տնտեսությունը այդ ժամանակ մի փոքր աճեց նախորդ տարվա նկատմամբ, և աճը կազմեց 2,2%, սակայն աղքատության մակարդակը շարունակեց աճել: 2011 թ. ՀՀ տնտեսությունը նախորդ տարվա նկատմամբ աճեց 4,7%-ով: Որպես արդյունք նույն տարում գրանցվեց աղքատության մակարդակի աճի դանդաղեցում: 2012 թ. ՀՀ տնտեսության աճը կազմեց 7,2%, ինչը բերեց աղքատության կրճատման [722]:

Հայաստանի Հանրապետության խոշոր ձեռնարկությունները փակվեցին կամ կրճատեցին արտադրության ծավալները:

2008 թ. նոյեմբեր ամսին փակվեց Վանաձորի քիմիական կոմբինատը: Գործարանի արտադրանքի 95%-ը արտահանվում էր, և «Վանաձոր-քիմ արդ.» համալիրի առջև ծառացավ բարդ խնդիր՝ միջազգային շուկաներում իր արտադրանքի գնի կրկնակի իջեցումը: Պղնձի և մոլիբդենի գների անկման պատճառով ընդհատումներով աշխատեց Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը (ԶՊՄԿ)՝ Հայաստանի խոշորագույն հարկատուներից մեկը: Ձեռնարկության ղեկավարությունը հայտարարեց աշխատողների և աշխատավարձերի հնարավոր կրճատումների մասին: Նույն ամսին Ալավերդու պղնձամոլիբդենային կոմբինատի հանքանյութը հարստացնող գործարանի փակման մասին հայտարարեց կոմբինատի սեփականատերը՝ «Էս-Սի-Պի» ընկերության ընդհանուր հարցերով տնօրեն Անդրանիկ Ղամբարյանը: Գործարանը փակելն ու աշխատողներին կրճատելը պայմանավորվեցին միջազգային շուկայում գունավոր մետաղների կտրուկ անկումով: Ձեռնարկությունում մնացին միայն վերահսկող աշխատողների մի քանի խմբեր[723]:

Մինչև 2009 թ. փետրվարը պարապուրդ հայտարարեց նաև

[722] Տե՛ս Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան, 2013, էջ 34:
[723] Տե՛ս նույն տեղում, էջ 43, 44:

«Նաիրիտ» գործարանը՝ քլորոպրենային կաուչուկի, կաուստիկ սոդայի, լատեքսների, քլորային կրի, հեղուկ քլորի, չհանգած կրի և բթվածնի արտադրողը: Հիմնարկությունում աշխատում էր մոտ 2.500 մարդ, արտադրանքի 90%-ն արտահանվում էր:

Ակնառու դարձան նաև շինարարական ոլորտի հիմնախնդիրները: Շինանյութ արտադրող քարի մշակման «Քարարդ» կոմբինատը դժգոհություն հայտնեց համարյա զրոյի հասած ներքին պահանջարկի կրճատումից: Ընկավ նաև ներմուծող շինանյութի պահանջարկը:

Արտահանման ծավալները կրճատվեցին 2008 և 2009 թվականներին համապատասխանաբար 8.26% և 34% անկումով, իսկ 2009 թ. կրճատվեցին նաև օտարերկրյա ներդրումները (25%-ով): Ի հավելումն, ընթացիկ հաշվի պակասուրդը 2009 թ. աճեց և ՀՆԱ-ում կազմեց գրեթե 15.5%՝ չնայած ներմուծման ծավալների նշանակալի կրճատմանը՝ ներքին պահանջարկի նվազմանը[724]: Միևնույն ժամանակ, հարկաբյուջետային պակասուրդն ընդլայնվեց մինչև ՀՆԱ-ում 7%, ինչը պայմանավորված էր կառավարության ծախսերի բարձր մակարդակով, որոնք ուղղված էին ներքին պահանջարկին աջակցելուն: 2009 թ. երկրորդ կեսին ՀՀ կառավարությունը քայլեր ձեռնարկեց համաշխարհային ճգնաժամի հետևանքները հաղթահարելու համար՝ ներառյալ հարկերի նվազեցումը փոքր և միջին ձեռնարկությունների համար (ՓՄՁ-ներ), պետական երաշխիքների ներդրումը շինարարության և արդյունաբերության ոլորտում գործող խոշոր ընկերությունների համար և ՓՄՁ վարկերի համար արտաքին աղբյուրների ապահովումը: Ձեռնարկված միջոցառումների շնորհիվ վիճակն աստիճանաբար բարելավվեց: Երկիրն աստիճանաբար սկսեց դուրս գալ խոր ճգնաժամից, բայց շատ բան դեռ կախված է համաշխարհային տնտեսական ճգնաժամի լիակատար հաղթահարումից, միջազգային ֆինանսական շուկայում կայունության հաստատումից:

[724] Տե՛ս նույն տեղում, էջ 42:

ը. Բնակչության սոցիալական վիճակը

2000 թվականից հանրապետությունում դիտվում է գործազրկության մակարդակի պաշտոնական ցուցանիշների նվազում: Ամսական նվազագույն աշխատավարձը 2000-ից մինչև 2003 թ. կազմել է 5000 դրամ, իսկ 2004 թ. հունվարից՝ 13 հազար դրամ, որը պահպանվեց նաև 2005 թ.: 2006 թ. հունվարից դարձավ 15 հազար դրամ, իսկ 2007 թ. հունվարից՝ 20 հազար դրամ, 2008 թ. 25 հազար, 2009 թ. և 2010 թ. 30 հազար, իսկ 2011 թ. 32 հազար 500 դրամ[725]: 11 տարիների ընթացքում հանրապետությունում միջին անվանական աշխատավարձը աճեց մոտ 5-ից 6 անգամ, 2000 թվականի 22.7 հազարը 2011 թ. դարձավ 123.6 հազար, այն դեպքում, երբ նույն ժամանակահատվածում գներն աճեցին 30- ից 60%-ով[726]: Գների և աշխատավարձի աճի դինամիկան բնակչության կենսամակարդակի և բարեկեցության բնութագրիչ է: Բնակչության բարեկեցության, կենսամակարդակի գնահատման կարևոր ցուցանիշ է համարվում աղքատության մակարդակը: Աղքատությունն արտահայտվում է տարբեր ձևերով և շոշափում է կյանքի տարբեր կողմեր՝ սպառում, պարենային անվտանգություն, առողջություն, կրթություն, իրավունքներ, անվտանգություն, արժանապատվություն և արժանապատիվ աշխատանք:

2003 թ. ՀՀ կառավարությունը մշակել և իրագործել է «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր»-ը (ԱՀՌԾ), որի արդյունքում աղքատության մակարդակը 2000 թ. համեմատությամբ 2005 թ. կրճատվեց 1.9 անգամ, իսկ ծայրահեղ աղքատությունը՝ 4.5 անգամ[727]: 2000-2008 թթ. տնտեսական աճի պայմաններում աղքատության մակարդակի կրճատումը 56-ից հասել է մինչև 27%-ի, բայց 2009 թ. համաշխարհային տնտեսական ճգնաժամի պայմաններում աղքատությունը նորից գերակշիռ տենդենց

---

[725] Տե՛ս Հայաստան 1998-2007, էջ 67, Տե՛ս ՀՀ կառավարության 2008-2011 թթ. գործունեության արդյունքները, էջ 63, 64, 65:
[726] Տե՛ս նույն տեղում:
[727] Տե՛ս Հայաստան 1998-2007, էջ 13:

ձեռք բերեց[728]: 2012 թ. ՀՀ-ում աղքատության մակարդակը կազմել է 32,4% 2008 թ. արձանագրված 27,6%-ի դիմաց: Շատ աղքատների տեսակարար կշիռը 2012 թ. կազմել է 13,5% 2008 թ. արձանագրված 12,6%-ի դիմաց, իսկ ծայրահեղ աղքատության մակարդակը 2012 թ. կազմել է 2,8%՝ 2008 թ. արձանագրված 1,6%-ի դիմաց[729]:

Փաստորեն 2004-2008 թթ. արձանագրված տնտեսական աճը նպաստեց իրական աշխատավարձի բարձրացմանը, զբաղվածության կայունացմանը և սոցիալական ծառայություններին ու տրանսֆերտներին ուղղվող բյուջետային ծախսերի ավելացմանը: Այդ ամենը, ինչպես նաև արտասահմանից մասնավոր տրանսֆերտների աճը նպաստեցին աղքատության մակարդակի զգալի կրճատմանը ՀՀ-ում: 2004-2008 թթ.-ին ընդհանուր և ծայրահեղ աղքատության մակարդակը նվազել էր[730]: Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը լրջորեն վտանգեց ՀՀ-ում մինչև այդ ձեռք բերված տնտեսական աճը և աղքատության կրճատումը իր բացասական ազդեցությունը թողեց նաև բնակչության կենսամակարդակի վրա: 2009-2011 թթ. տվյալները ցույց են տալիս, որ ճգնաժամը լուրջ հետևանքներ թողեց աղքատության վրա: 2009 թվականին աղքատության մակարդակը աճել է՝ կազմելով 34.1%, 2008 թ. արձանագրված 27.5%-ի դիմաց: Իսկ ծայրահեղ աղքատությունը 2009 թ. կազմեց 3.6%՝ 2008 թ. 1.6%-ի դիմաց[731]: 2011 թ. նոյեմբերին հրապարակված Ազգային վիճակագրական ծառայության տվյալների համաձայն 2010 թ. համար աղքատության ընդհանուր չափը հաշվարկվել է ամսական 33.517 դրամ, աղքատության ընդհանուր մակարդակը կազմել է 35.8%, ծայրահեղ աղքատությունը՝ 3%, իսկ բնակչության եկամուտների անհավասա-

---

[728] Տե՛ս նույն տեղում, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը 2009, Երևան 2009, էջ 73:

[729] Տե՛ս Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը 2012, Երևան, 2013, էջ 36:

[730] Տե՛ս Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը 2008, Երևան, 2009, էջ 83:

[731] Տե՛ս Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը 2010, Երևան, 2010, էջ 49, 50:

րությունը (բևեռվածությունը) բնութագրող Ջինի եկամուտների անհավասարության գործակիցը, 2008 թ. համեմատ աճել է՝ կազմելով 0.362, իսկ 2012 թ. 0, 372[732]:

Վիճակագրական վերլուծությունները ցույց են տալիս, որ 2004-2008 թթ. տնտեսական աճի պայմաններում աղքատները շահում են, բայց ոչ այնքան, ինչքան հարուստները, իսկ համաշխարհային տնտեսական ճգնաժամի ընթացքում, երբ տնտեսությունը անկում է ապրում, ավելի շատ տուժում են հենց աղքատները, իսկ հարուստները անգամ ճգնաժամի պայմաններում շարունակում են հարստանալ: 2009 թ. բնակչության ամեն երրորդը եղել է աղքատ, նրանցից ամեն հինգերորդը՝ 20.1%-ը, շատ աղքատ, իսկ 3.6%-ը՝ ծայրահեղ աղքատ: Միայն մեկ տարվա ընթացքում մոտ 214 հազար մարդ դարձել է աղքատ՝ հասցնելով աղքատների թվաքանակը 2009 թ.-ին մոտ 1.1 մլն- ի (մշտական բնակչության ցուցանիշի հաշվով): Մոտ 245 հազարը նույն ժամանակահատվածում դարձել է շատ աղքատ՝ հասցնելով շատ աղքատների թվաքանակն ավելի քան 650 հազարի: Միայն մեկ տարվա ընթացքում մոտ 65 հազարը դարձել է ծայրահեղ աղքատ՝ հասցնելով ծայրահեղ աղքատների թվաքանակը 2009 թ.-ին մոտ 117 հազարի: Աղքատությունը 2009 թ. շատ չի տարբերվում ըստ քաղաքային (33.7%) և գյուղական բնակավայրերի (34.9%), սակայն եթե 2008 թ.-ին աղքատության մակարդակը քաղաքային բնակավայրերում գերազանցել է գյուղականին, ապա 2009 թ. գյուղական բնակավայրերում այն գերազանցել է քաղաքայինին: Այդ հարաբերությունը շարունակվել է պահպանվել նաև հետագա տարիներին[733]:

Քաղաքային ծառառայողների հիմնական աշխատավարձը 2004 թ. հունվարի 1-ին սահմանվեց 20 հազար դրամ, 2005 թ. դարձավ 30 հազար դրամ, 2007 թ. 35.5 հազար դրամ, իսկ 2008-2011 թ. անփոփոխ 40 հազար դրամ[734]:

Զբաղվածության բնագավառը կանոնակարգվեց 2005թ. ըն-

---

[732] Տե՛ս Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը 2012, Երևան, 2013, էջ 58:
[733] Տե՛ս նույն տեղում, էջ 48-52, 54:
[734] Տե՛ս նույն տեղում, էջ 13:

դուրված «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքով և դրա կիրարկումն ապահովող ՀՀ կառավարության որոշումներով: Աշխատանքային ստաժ չունեցող անձանց տրվեց գործազուրկի կարգավիճակ: Դա հնարավորություն ստեղծեց երիտասարդներին ընդգրկելու զբաղվածության պետական այնպիսի կարևորագույն ծրագրերից մեկում, ինչպիսին «Մասնագիտական ուսուցման կազմակերպում» ծրագիրն է, որի նպատակն էր նախնական մասնագիտական պատրաստման և արհեստագործական ուսուցման, ինչպես նաև որակավորման բարձրացման կամ վերամասնագիտացման միջոցով բարձրացնել նրանց մրցունակությունը աշխատաշուկայում՝ դրանով իսկ նպաստելով նրանց զբաղվածության ապահովմանը:

2004 թվականից տարեցտարի աճեցին զբաղվածության ծրագրերի համար նախատեսվող, այդ թվում՝ գործազրկության նպատակներին հատկացվող միջոցները: Պաշտոնական վիճակագրության համաձայն ՀՀ աշխատանքային ռեսուրսները 2011 թ. կազմում են շուրջ 2.25 մլն մարդ, որից տնտեսապես գործուն բնակչությունը՝ 1.19 մլն մարդ է (տնտեսական ակտիվության մակարդակը՝ 52.9%): Զբաղված են համարվում 1.1 մլն մարդ (զբաղվածության մակարդակը մոտ 49%), որից գյուղական բնակավայրում 66%, քաղաքում՝ 40%: Ընդ որում ըստ տնտեսական գործունեության տեսակների դասակարգման զբաղվածների շուրջ 45.3%-ը ընդգրկված են գյուղատնտեսության, որսորդության և անտառային տնտեսության ոլորտներում (այստեղ զբաղված են համարվում նաև հողի թեկուզ փոքր հողակտորի սեփականատեր հանդիսացող անձինք), որտեղ 1.2% աճ է արձանագրվել 2008 թ. հետ համեմատած, ի տարբերություն մշակող արդյունաբերությունում նույն ժամանակահատվածի 1.5% և շինարարությունում 0.3% անկման ցուցանիշների: Իրական գործազրկության մակարդակը շուրջ 19.2% է[735]:

Ֆինանսատնտեսական ճգնաժամը բացասական ազդեցություն

[735] Տե՛ս Առևտուր և մարդկային զարգացում, էջ 24:

է թողել նաև բնակչության կենսամակարդակի վրա: Այսպես՝ 33.517 դրամ աղքատության ընդհանուր սահմանի և 35.8% աղքատության մակարդակի պայմաններում նվազագույն աշխատավարձը 32500 դրամ էր, աշխատանքային միջին կենսաթոշակը՝ 28.396 դրամ (2012 թ. բյուջեով նախատեսվում էր այն դարձնել 31.255 դրամ), սոցիալական հիմնական կենսաթոշակը 10.500 դրամ (2012 թ. համար 13000 դրամ), աղքատության անապահովության ընտանեկան միջին նպաստը 26.853 դրամ (2012 թ. նախատեսվում էր այն դարձնել 29.538 դրամ), ընդ որում շահառուների թիվը չի գերազանցում նույնիսկ պաշտոնական վիճակագրությամբ հայտարարված աղքատների թվի 40%-ը այն դեպքում, երբ սպառողական նվազագույն զամբյուղը կամ սոցիալական նվազագույն ընդունելի մակարդակը 2011 թ. կազմում էր շուրջ 63000 դրամ: Ըստ էության համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը վատթարացրեց ՀՀ բնակչության սոցիալ-տնտեսական վիճակը: Փաստորեն 2011 թ. համար սահմանված և փոփոխության չենթարկված 32500 դրամ ամսական նվազագույն աշխատավարձը ոչ միայն շուրջ 49%-ով զիջում էր 2011 թ. նվազագույն սպառողական զամբյուղի մեծությանը, այլև անցնում էր նույնիսկ 2010 թ. հաշվարկված աղքատության 33517 դրամի սահմանը[736]:

2000-2008 թթ. հանրապետությունում մեծ ուշադրություն է դարձվել բնակչության կենսաթոշակային ապահովության խնդիրներին: Այդ ժամանակահատվածում բնակչության կենսաթոշակային խնդիրների լուծմանը միտված քայլերը կարելի է բաժանել երկու խմբի. առաջին՝ կենսաթոշակային համակարգի բարեփոխումների իրականացում՝ միտված առկա սոցիալ-տնտեսական և հասարակական հարաբերություններին հարիր, միջազգային փորձի վրա հիմնված համակարգի ներդրմանը, երկրորդ՝ ֆինանսական խնդիրների լուծում՝ միտված կենսաթոշակառուների սոցիալական վիճակի բարելավմանը և կենսաթոշակների չափերի շարունակական աճին:

---

[736] Տե՛ս նույն տեղում, ՀՅԴ պատգամավորական խմբակցության տեսակետը ՀՀ կուսակցության վարած սոցիալ-տնտեսական քաղաքականության և 2012 թ. պետական բյուջեի վերաբերյալ, 2011, էջ 4, 5:

2000 թ. ՀՀ կառավարությունը հաստատեց «Հայաստանի Հանրապետությունում կենսաթոշակային ապահովության ռազմավարության հիմնադրույթները», որի հիման վրա մշակվեց 2003 թ. «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքը:

Ջուգահեռաբար ՀՀ կառավարությունը նաև քայլեր ձեռնարկեց՝ ուղղված կենսաթոշակային ապահովության համակարգի զարգացումն ապահովող ենթակառուցվածքների ստեղծմանն ու դրանց գործունեության ապահովմանը: Հնարավորություն ստեղծվեց շարունակական դարձնել կենսաթոշակների չափերի բարձրացումը, որի արդյունքում 2000-2008 թթ. միջին կենսաթոշակը աճել է շուրջ 4 անգամ՝ 2000 թ. 3700 դրամ, 2007 թ. շուրջ 13000 դրամ, 2008 թ. 21.370 դրամից հասնելով 31 հազար 255 դրամի՝ 2011 թ.[737]:

Փաստորեն պետական բյուջեի ֆինանսական ամենածավալուն սոցիալական ծրագիրը կենսաթոշակայինն է, որին շահառու է 518 հազար մարդ և որին ուղղված է պետական բոլոր ծախսերի 22-23%-ը[738]: Այս ոլորտում կառավարությունը բարեփոխում է իրականացրել երկու հիմնական ուղղություններով՝ կատարելագործել պետական կենսաթոշակի գործող համակարգը և օրենսդրական հիմքեր ստեղծել աշխատավարձի հետ ուղղակի կապ ունեցնող և անձնական պատասխանատվության վրա հիմնված կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման համար, որի կիրառումը դեռևս վաղաժամ է: Ներկայումս յուրաքանչյուր վեցերորդ կենսաթոշակառու իր թոշակը ստանում է պլաստիկ քարտերով, և այս գործընթացը շարունակվում է: Կենսաթոշակային բարեփոխման կարևոր նպատակներից է կենսաթոշակի չափի շարունակական բարձրացումը: 2008-2011 թթ. կառավարությունը չնչին չափով (3 անգամ) կատարել է կենսաթոշակի համատարած ավելացում՝ բոլոր խմբերի կենսաթոշակառուների համար և 2 անգամ՝ կենսաթո-

[737] Տե՛ս ՀՀ կառավարության 2008-2011 թթ. գործունեության արդյունքները, էջ 65, 66:
[738] Տե՛ս նույն տեղում:

չակառուների առանձին խմբերի համար[739]: 2007 թ. համեմատ՝ կենսաթոշակի միջին մակարդակը 2011 թ. հուլիսի 1-ի դրությամբ աճել է 2.1 անգամ, իսկ բազային կենսաթոշակը՝ 2.5 անգամ[740]: Արմատական փոփոխություններ են կատարվել նաև զինվորական կենսաթոշակառուների և զոհված զինծառայողների ընտանիքներին տրվող դրամական օգնության բնագավառում: Ընտանեկան նպաստի ոլորտում զոհված զինծառայողի ընտանիքին տրվող դրամական օգնության չափը սահմանվել է 30 հազար դրամ, որին 2011 թ. սեպտեմբերի 1-ից լրացուցիչ ավելացվել է յուրաքանչյուր երեխայի համար 20 հազար դրամ[741]:

Սոցիալական քաղաքականության ծրագրերը մշակելիս կառավարությունը հատուկ ուշադրություն է դարձրել բնակչության սոցիալապես խոցելի կամ հատուկ կարիքներ ունեցող կամ առանձնահատուկ մոտեցում պահանջող խմբերի՝ հասարակությանը ինտեգրվելու առավել ճկուն միջոցների ներդրմանը:

Կառավարությունը անօթևան միայնակ տարեցների, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների, մանկատների սաների և այլ սոցիալական խմբերի պատկանող անձանց համար նախաձեռնել է «սոցիալական բնակարան» ծրագրի իրականացման գործընթացը: Պետական նպաստների բնագավառում կառավարությունը աշխատել է ճշտել ընտանեկան նպաստի ծրագրի հասցեականությունը՝ համակարգում ընդգրկելով առավել սակավ ապահովներին, և 2011 թ. հուլիսի 1-ի դրությամբ հանրապետության շուրջ 100 հազար աղքատ ընտանիք 2008 թ. 21 հազար դրամի փոխարեն ամսական միջին հաշվով ստացել է 27 հազար դրամ նպաստ: Նպաստ ստանալու իրավունքից զրկվել է շուրջ 17 հազար ոչ անապահով ընտանիք[742]:

Ընտանեկան նպաստի համակարգից դուրս մնացած ընտանիքներին հատկացվել է միանվագ հրատապ դրամական օգնութ-

[739] Տե՛ս նույն տեղում, էջ 63, 65, 66:
[740] Տե՛ս նույն տեղում:
[741] Տե՛ս նույն տեղում, էջ 66:
[742] Տե՛ս նույն տեղում:

յուն, որի չափերը նույնպես 2009 թ. ավելացվել են 20%-ով, իսկ 2010 թ. ևս 35%-ով: Ներկայումս այն 13500 դրամ է՝ 2008 թ. 8000 դրամի փոխարեն[743]:

Երեխայի ծննդյան միանվագ նպաստը հասցվել է 50 հազար դրամի (35 հազար դրամի փոխարեն), 1-ին և 2-րդ երախայի համար՝ 430 հազար դրամի՝ 300 հազար դրամի փոխարեն, 3-րդ և հաջորդ յուրաքանչյուր երեխայի համար նպաստը բարձրացել է 6 անգամ, որ ներկայումս 18 հազար դրամ է (3000 դրամի փոխարեն): Ընդ որում նպաստի չափի բարձրացման շնորհիվ շեշտակիորեն ավելացավ նպաստից օգտվող անձանց թիվը՝ շուրջ 3 անգամ[744]:

Ճգնաժամի տարիներին սոցիալական ոլորտներին՝ սոցիալական ապահովությանը, առողջապահությանն ու կրթությանը ուղղված միջոցների բաժինը պետական բյուջեի ծախսերում չիջավ 40%-ից, և կառավարությունը կատարեց իր սոցիալական բոլոր պարտավորությունները[745]:

Համաշխարհային բանկի փորձագետների հաշվարկները ցույց են տվել, որ եթե կառավարությունը չկատարեր 2009 թ. վերը թվարկված կենսաթոշակների և սոցիալական աջակցության ծրագրերի հավելումները, ապա աղքատության մակարդակը հանրապետությունում կլիներ ոչ թե 34.1%, ինչպես արձանագրել է ազգային վիճակագրական ծառայությունը, այլ 51.7%:

ՀՀ կառավարությունը՝ սկսած 2009 թ.-ից, մեծ վարկեր վերցրեց միջազգային ֆինանսական կազմակերպություններից և այլ դոնոր երկրներից՝ թույլ չտալու համար ճգնաժամի հետևանքով պետական ծախսերի, այսինքն թոշակների, նպաստների, աշխատավարձի կրճատում: Դա բնակչության սոցիալական վիճակի վատթարացում թույլ չտալու առումով արդարացված էր, բայց բերեց երկրի արտաքին պարտքի բեռի ավելացման: Եվ ահա 2012 թ. բյուջեում արդեն նախատեսված էր վերադառնալ ցածր դեֆիցիտին՝ հասց-

[743] Տե՛ս Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2010 թվականին, էջ 50, 52:
[744] Տե՛ս նույն տեղում:
[745] Տե՛ս նույն տեղում:

ելով այն նախահաշվային 3%-ին, ինչը նշանակում է կառավարելի պահել պարտքը և չվտանգել տնտեսական աճը:

2012 թ. 10%-ով նախատեսվում էր ավելացնել 100 հազար ընտանիքների սոցիալական նպաստները, մոտ 500 հազար թոշակառուների թոշակները: Հարկ է նշել, որ բյուջեի ծախսերից ամենամեծածավալը հենց կենսաթոշակներին ուղղվող գումարներն են՝ մոտ 200 մլրդ դրամ կամ բյուջեի ծախսերի մոտ 20%-ը: Այլ բան է, որ բարձրացումից հետո 28 հազար դրամ միջին կենսաթոշակը դեռևս բավարար չէ կենսական կարևոր կարիքների բավարարման համար: 2012 թ. բյուջեի ամենակարևոր նորությունը այսպես կոչված սոցիալական փաթեթն է: Մոտ 120 հազար պետական ծառայողներ օգտվելու են այդ փաթեթից, որով նրանք կարող են հոգալ իրենց կրթական, առողջապահական, Հայաստանի Հանրապետությունում կամ Լեռնային Ղարաբաղում հանգստանալու, հիփոթեքային վարկերի տոկոսները մարելու պահանջները: Այս փաթեթը նշանակում է, որ պետական ծառայողների եկամուտները կավելանան մոտ 10%-ով, թեև նրանք այդ գումարները կանխիկ չեն ստանա[746]: Դրանք անկանխիկ կուղղվեն այն նպատակին, որը կորոշի պետական ծառայողը: Գնաճի ցուցանիշի պահպանումը կարևոր էր նախ և առաջ սոցիալական առումով, քանի որ եթե ավելի բարձր լիներ, ապա կփոշիացներ կենսաթոշակների և նպաստների բարձրացման արդյունավետությունը, ուստի սոցիալական ծախսերի ավելացման և գնաճի զսպման գործընթացների զուգահեռ իրականացումը նույնպես բյուջեի. կարևոր խնդիրներից էր:

Սոցիալական ոլորտում ևս առկա են մի շարք թերություններ, որոնցից կարելի է առանձնացնել հետևյալը. ընտանեկան նպաստի համակարգի տվյալների ստուգման արդյունքում 17 հազար ընտանիք իրավացիորեն զրկվեց ընտանեկան նպաստի իրավունքից, փոխարենը շուրջ 9 հազար ընտանիք ճանաչվեց կարիքավոր և ընդգրկվեց համակարգում: Կենսաթոշակային համակարգում նշգրտվեցին 65 հազար անհատական գործեր, վերականգնվեցին գրեթե 5 հազար կենսաթոշակառուի թերվճարված գումարները,

[746] ՀՀ կառավարության 2008-2011 թթ. գործունեության արդյունքները, էջ 65:

դադարեցվեցին 18 հազար «ոչ առկա» անձանց կենսաթոշակների վճարումը[747]: ՀՀ Վերահսկիչ պալատի ստուգումների շնորհիվ հայտնաբերվեցին մեծ չափերի յուրացումներ կենսաթոշակային համակարգում: Ժողովրդագրական իրավիճակի առկա հիմնախնդիրներից է բնակչության ժողովրդագրական ծերացումը, որի ընթացքը հանրապետությունում հետխորհրդային տարիներին մեծապես արագացել է: Բնակչության ծերացումը կամ ժողովրդագրական ծերացումը երկարատև ժողովրդագրական փոփոխությունների, բնակչության վերարտադրության, ծնելիության, մահացության և դրանց հարաբերակցություններում տեղ գտած տեղաշարժերի, ինչպես նաև մասամբ, միգրացիայի հետևանք է: Ըստ ՄԱԿ-ի ժողովրդագրական ծերացման սանդղակի, եթե երկրի բնակչության կառուցվածքում 65 և բարձր տարիքի բնակչությունը կազմում է 7 %-ից ավելի, ապա տվյալ բնակչությունը համարվում է ծերացած, այդ ցուցանիշը 2013 թ. տարեսկզբի դրությամբ ՀՀ-ում կազմել է 10,6% [748]:

2000-2002 թթ. ՀՀ-ում շարունակվում էր պահպանվել նախորդ տարիների արտագաղթի զգալի ծավալները, և ՀՀ-ից մեկնողների ու ժամանողների միջին տարեկան տարբերությունը կազմում էր շուրջ 55 հազար մարդ (բացասական մնացորդ), ապա 2002-2003 թթ. չնայած ուղևորահոսքերի ծավալներին՝ այն կտրուկ նվազեց՝ հասնելով 3-ից 10 հազարի, իսկ սկսած 2004 թվականից յուրաքանչյուր տարի արձանագրվում էր միգրացիայի դրական մնացորդ և ՀՀ ժամանողների թիվը գերազանցում էր ՀՀ մեկնողների թվին[749]: ՀՀ-ում միգրացիոն խնդիրների կոորդինացման և դրանց լուծման արդյունավետությունից ելնելով՝ դեռևս 1990-ական թթ. վերջերին ստեղծվեց միգրացիայի և փախստականների հիմնահարցերը համակարգող պետական կառավարման առանձին մարմին՝ ՀՀ կառավարությանն առընթեր վարչության կարգավիճակով: Այդ մարմնի գործունեության շնորհիվ մեր հանրապետությունն ունեցավ միգրացիայի պետական կարգավորման հայեցա-

[747] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 11.10.2012:
[748] Տե՛ս Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, Երևան, 2013, էջ 19:
[749] Տե՛ս Հայաստան 1998-2007, էջ 69:

կարգային փաստաթուղթ: Այն հանդիսացավ ՀՀ կառավարության 2004թ. հունիսի 25-ի որոշմամբ ընդունված ՀՀ բնակչության միգրացիայի պետական կարգավորման հայեցակարգ, որով սահմանվեցին միջազգային հոսքերի պետական կարգավորման համակարգի արմատական կատարելագործմանն ուղղված քաղաքական միջոցառումների սկզբունքները:

2006 թ. Հայաստան ժամանածների թիվը մոտ 22 հազարով ավելի է եղել ՀՀ-ից մեկնողների թվից: 2007 թվականին մեկնողների և ժամանողների թվաքանակների տարբերությունը մեծ չէր[750]:

2000-ականների առաջին տարիներից սկսած ՀՀ-ում որոշակի փոփոխություններ կրեցին ինչպես աղքատությունն ու անհավասարությունը, այնպես էլ միգրացիոն գործընթացները[751]: 2002-2006 թթ. սկզբում կտրուկ նվազեց ՀՀ արտաքին միգրացիայի միջին տարեկան բացասական մնացորդի մեծությունը: 2002-2003 թթ. ՀՀ արտաքին միգրացիոն հոսքերի բացասական հաշվեկշիռը կտրուկ նվազեց հասնելով տարեկան մոտ 6500 մարդու: Իսկ 2004-2006 թթ. այդ ցուցանիշը դարձավ նույնիսկ դրական՝ 2006 թ. վերջում հասնելով 21.8 հազարի[752]: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության զբաղվածության պետական ծառայության (ԶՊԾ) տվյալներով գործակազրկությունը ևս երկրում սկսում էր աստիճանաբար նվազել 2002 թ.՝ 9.8%-ից 2006 թ. հասնելով 7.8%-ի[753]: Բնակչության առավել հարուստ և առավել աղքատ 20%-ի եկամուտների տարբերությունը 2004 թ. հասել էր նույնիսկ 10.6-ի, իսկ 2006 թ. 7.6-ի: ՀՀ սահմանային անցակետերում ուղևորահոսքերի հաշվառման համակարգի տվյալներով 2007 թվականից կրկին բացասական դարձավ ՀՀ արտաքին միգրացիոն հաշվեկշիռը: 2008 թ. հասավ 23.1 հազարի: Այդ նույն թվականին վրա հասած համաշխարհային ֆինանսական ճգնաժամը լուրջ ազդեցություն թողեց ոչ միայն աղքատության ու անհավասարության, այլև

---

[750] Տե՛ս նույն տեղում:

[751] Մինասյան Է., Մինասյան Ա., ՀՀ ժողովրդական և սոցիալական հիմնախնդիրներն ու դրանց լուծման ուղիները, «Լրատու», N1, Ստեփանակերտ, էջ 28:

[752] Տե՛ս Հայաստան 1998-2007, էջ 69:

[753] Տե՛ս նույն տեղում:

միգրացիոն հոսքերի վրա: 2009-2010 թթ. այդ հաշվեկշռի բացասական բնույթը ոչ միայն պահպանվել է, այլև աճել է՝ հասնելով 30-ից 50 հազարի[754]: Այդ նույն միտումը շարունակվեց նաև հետագա տարիներին: ՀՀ 2011 թ. մարդահամարի արդյունքներով արձանագրվեց, որ ՀՀ 2001 թ. մարդահամարի տվյալների համեմատությամբ, ՀՀ մշտական բնակչության թվաքանակի ցուցանիշը՝ հաշվառման պահի դրությամբ՝ 2011 թ. հոկտեմբերին նվազել է շուրջ 195 հազար մարդով, կամ 6%-ով, այն դեպքում, երբ միջմարդահամարային տարիներին (2002-2011 թթ.) ՀՀ բնակչության հավելաճը կազմել է 126 հազար մարդ: Այսինքն՝ մշտական բնակչության թվաքանակի ցուցանիշի նվազումը միջմարդահամարային տասնամյակում ի հաշիվ միգրացիայի գնահատվում է (կազմում է) շուրջ 320 հազար մարդ[755]:

Մեկնողների և ժամանողների բացասական տարբերությունն ակնհայտ է, այսինքն՝ տարվա ընթացքում ավելի շատ մարդ մեկնում է, քան վերադառնում: «Միգրացիայի նվազման միտումը պետք է դառնա իրականացվող միգրացիոն քաղաքականության առարկան,- ընդգծել է ՀՀ նախագահը 2011 թ. հունիսին միգրացիոն քաղաքականությանը նվիրված խորհրդակցության ժամանակ: Հայաստանում միգրացիայի վերաբերյալ վիճակագրության պակաս կամ տվյալների հավաքագրման թերացումներ կան, որոնք թույլ չեն տալիս կարճաժամկետ հատվածում պարբերաբար և ճշգրիտ պատկերացումներ կազմել իրավիճակի և զարգացումների մասին: Ըստ հանրապետության ղեկավարի, ի վերջո, մարդկանց աշխատանքային միգրացիայի գործընթացը բարդ երևույթ է, հիմնվում է բազմաթիվ սոցիալ-տնտեսական, մշակութային և հասարակական-քաղաքական գործոնների վրա»[756]:

2000 թ. Հայաստան չի վերադարձել մոտավորապես 57 հազար մարդ, 2001 թ.՝ 60 հազար մարդ, այնուհետև այն փոքրացել է և արդեն 2004-2006 թթ. գրանցվել է դրական հաշվեկշիռ: Վերջին տարիների ընթացքում (2008-2009 թթ.) Հայաստան չվերադարձածնե-

---

[754] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 25.10.2011:
[755] Տե՛ս Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, Երևան, 2013, էջ 22:
[756] Տե՛ս նույն տեղում, «Հայաստանի Հանրապետություն», 25.10.2011:

րի թվաքանակը կազմել է 23-30 հազար մարդ[757]: Ինչ վերաբերում է 2011 թվականին, Հայաստանից մեկնողների թվաքանակը 43820 մարդով գերազանցեց ժամանողներին[758], իսկ 2012 թ. 42784 մարդով[759]:

Հանրապետությունից անընդհատ աճող արտագաղթը, միգրացիան կանխելու համար խիստ անհրաժեշտ է կտրուկ միջոցներ ձեռնարկել:

Ավելացվել է բոլոր տեսակի պետական նպաստների և կենսաթոշակների չափը: Ընտանեկան նպաստի միջին չափն աճել է 29%-ով, երեխայի ծննդյան միանվագ նպաստը՝ 43%-ով, երեխայի խնամքի համար նպաստը՝ 6 անգամ, բազային կենսաթոշակը՝ 2.5 անգամ կենսաթոշակի միջին մակարդակից ավելի, քան 2 անգամ:

բ. Առողջապահությունը

21-րդ դարասկզբին առողջապահության ոլորտում իրականացված քաղաքականության նպատակներն են եղել՝ համակարգի կայուն զարգացումը, սոցիալական արդարության ու համերաշխության սկզբունքներով բնորոշվող առողջապահության համակարգի ձևավորումը, բժշկական օգնության որակի ու մատչելիության բարձրացումը, բնակչության առողջության պահպանումը և բարելավումը:

Առողջապահական հաստատությունների մասնավորեցման ռազմավարության իրականացումն ուղղված է եղել ոլորտում սոցիալական և շուկայական սկզբունքների համապատասխանեցմանը, ինչպես նաև ոլորտի զարգացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների ներգրավման նպատակով առողջապահական հաստատությունների ներդրումային գրավչության բարձրացմանը:

Ելնելով ժամանակի պահանջներին համապատասխան առող-

---

[757] Տե՛ս նույն տեղում, էջ 121-122:

[758] Տե՛ս Միգրացիա և մարդկային զարգացում, հնարավորություններ և մարտահրավերներ 2009, «Հայաստան», Երևան, 2009, էջ 78:

[759] Տե՛ս Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, 2013, էջ 122:

ջապահական հաստատությունների ներուժի ձևավորման և առողջապահությանը հասցեագրվող ռացիոնալ միջոցների օգտագործման անհրաժեշտությունից՝ իրականացվեց առողջապահական համակարգի օպտիմալացման գործընթացը:

ՀՀ պետբյուջեից առողջապահության ոլորտի ֆինանսավորման ծը կրել է շարունակական և կայուն բնույթ: Այդ ամենը անմիջական ազդեցություն ունեցավ համակարգի զարգացման, բուժօգնության որակի ու մատչելիության բարելավման վրա: Ոլորտում իրականացվող քաղաքականությունը հնարավորություն տվեց ավելացնել պետության առողջապահական ծրագրերը և մեծացնել դրանց ծավալներն ու մատչելիությունը:

2006 թ. առողջության առաջնային պահպանման ծառայությունները հանրապետության բնակչության համար դարձան անվճար: Ամբուլատոր-պոլիկլինիկական համակարգի հզորացումը ՀՀ կառավարության կողմից իրականացվող առողջապահական բարեփոխումների առանցքային ուղղություններից էր: Վերջինս արտացոլվել է նաև ՀՀ կառավարության կողմից ընդունված «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրում»: 2000-ական թթ. շարունակվում ու ընդլայնվում էր ընտանեկան բժշկության համակարգի ներդրումը որպես ՀՀ բնակչության ու հատկապես անապահով խավի համար առողջության առաջնային պահպանման և ախտորոշիչ ծառայությունների մատչելիության գրավական: Առաջին անգամ մասնագիտացված ստոմատոլոգիական ծառայության մատուցումը 65 տարեկանից բարձր բնակչության տարիքային խմբի համար իրականացվեց պետական պատվերի շրջանակներում[760]:

2006 թ. ՀՀ կառավարությունը հաստատեց «Առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող բժշկի ազատ ընտրության և նրա մոտ բնակչության գրանցման կարգը», որով կանոնակարգվում էր բնակչության կողմից բժշկի ազատ ընտրության և նրա մոտ գրանցման գործընթացը: Պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվեց կենտրոնացված կարգով բուժ-

[760] Տե՛ս Հայաստան 1998-2007, էջ 70, 71:

սարքավորումների ձեռքբերումը: Շուտով բուժսարքավորումներով բավարարելու խնդիրը առավելապես ուղղվեց դեպի մարզային առողջապահության համակարգ[761]: 2001-2007 թթ. բացվեցին ժամանակակից բուժսարքավորումներով ու տեխնոլոգիաներով հագեցված բաժանմունքներ ու կենտրոններ: Այդ ընթացքում ակնհայտ հաջողություններ արձանագրվեցին վարակիչ հիվանդությունների համաճարակաբանական վերահսկման ուղղությամբ:

Առողջապահության ոլորտում կառավարությունը հետևողականորեն իրականացրել է բուժծառայությունների որակի և մատչելիության բարձրացման, ինչպես նաև ոլորտի ստվերայնության կրճատման աշխատանքներ: Այսպես, կառավարության նախաձեռնությամբ 2008 թվականի հուլիսի 1-ից մեկնարկեց ծննդօգնության՝ պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնությունն ու սպասարկումը ըստ հավաստագրերի: 2011 թվականի հունվարի 1-ից ներդրվեց մինչև 7 տարեկան երեխաների հիվանդանոցային անվճար բուժօգնության հավաստագրի ծրագիրը և երեխայի առողջության անձնագիրը: 2011 թվականի մայիսից անվճար էր 14 տարեկանը բոլորած նախազինակոչային տարիքի երիտասարդների բուժզննումը և անհրաժեշտության դեպքում բուժումը[762]: 2010-2011 թվականների ընթացքում ներդրվել ու իրականացվում է հիվանդանոցային և առողջության առաջնային պահպանման օղակում աշխատող բուժաշխատողների կատարողականի վրա հիմնված խրախուսական վարձատրության նոր համակարգ: 2010 թվականին ՀՀ կառավարության կողմից ընդունվեց «Դեղերի պատշաճ արտադրական գործունեության կանոնները», ինչի շնորհիվ ՀՀ-ում մեծանում էր տեղական արտադրության դեղերի արտահանման ծավալները, արտադրության տեխնիկական հագեցվածությունը համապատասխանեցվում էր ժամանակակից միջազգային չափանիշներին, բարձրանում էր դեղերի որակի, արդյունավետության, անվտանգության վերահսկողության մակարդակը:

---

[761] Տե՛ս նույն տեղում, էջ 71:

[762] ՀՀ կառավարության 2008-2011 թթ. գործունեության արդյունքները, էջ 73:

Բնակչության բուժսպասարկման որակի և մատչելիության բարձրացման տեսակետից կառավարության կարևոր ձեռքբերումներից են հանրապետությունում շտապօգնության ծառայության զարգացմանն ու արդիականացմանն ուղղված միջոցառումները: 2011 թվականին շտապօգնության ծառայությունների ավտոպարկը նորացվեց Չինաստանի կառավարության դրամաշնորհով ստացված 88 ժամանակակից ավտոմեքենաներով, որոնք հատկացվեցին Երևանի և հանրապետության բոլոր մարզերի գրեթե բոլոր քաղաքների 38 բուժհիմնարկներին:

Շտապօգնության ծառայության բժիշկների աշխատավարձը 2011 թվականի հուլիսի դրությամբ կազմեց 103 հազար դրամ՝ 2010 թվականի 54 հազար դրամի փոխարեն, բուժքույրերինը՝ 75 հազար դրամ 47 հազար դրամի փոխարեն, վարորդներինը՝ 96 հազար դրամ 71 հազար դրամի փոխարեն[763]:

Շտապօգնության ծառայության աշխատանքի որակի բարելավման նպատակով մշակվել և ներդրվել են 15 կլինիկական ուղեցույցներ՝ առավել հաճախ պատահող և կյանքին վտանգ սպառնացող վիճակների վերաբերյալ:

Առողջապահության ոլորտում կրճատմանն ուղղված միջոցառումների շարքում կառավարությունը 2010 թվականին սկսեց համավճարի ծրագրի փորձարկումը 3 բուժհաստատություններում, իսկ 2011 թվականի փետրվարի 1-ից ծրագրի գործողությունը տարածվեց հանրապետության բոլոր բաժհաստատությունների անհետաձգելի և գինեկոլոգիական բժշկական ծառայությունների վրա՝ միաժամանակ համավճարից ազատելով սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկված անձանց: 2011 թվականին՝ համավճարի ներդրման 6 ամիսների ընթացքում, համավճարով բյուջե է մուտքագրվել նախկինում ստվերային շրջանառության մեջ գտնվող 439.6 մլն դրամ: Պետական բյուջե փոխադրված հարկերը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճել են 39 տոկոսով կամ 734.9 մլն դրամով[764]:

---

[763] Տե՛ս նույն տեղում, էջ 73:
[764] Տե՛ս նույն տեղում, էջ 73:

Բյուջետային հատկացումների ավելացման, ֆինանսավորման համավճարային նոր մեխանիզմների ներդրման, վճարովի ծառայությունների գների մասնակի կարգավորման, ինչպես նաև հիվանդանոցային ծառայություններ մատուցող բուժհաստատություններում աշխատակիցների աշխատավարձերի վճարման մասնակի կանոնակարգման պայմաններում բժիշկների միջին աշխատավարձը 2010 թվականի 97.0 հազար դրամի դիմաց 2011 թվականին կազմել է շուրջ 170 հազար դրամ, բուժքույրերինը՝ համապատասխանաբար 52 և 70 հազար դրամ, մայրապետներինը՝ 47 և 57 հազար դրամ, մանկական ծառայության բժիշկներինը՝ 92 և 215 հազար դրամ[765]:

Ստվերային շրջանառության աղբյուր էր նաև պոլիկլինիկաների կողմից զանազան տեղեկանքների տրամադրումը քաղաքացիներին: ՀՀ կառավարությունը 2011 թվականի հունիսի 2-ի որոշմամբ կասեցրել է քաղաքացիներից օրենքով չսահմանված որևէ տեղեկանք պահանջելը:

Բուժծառայության մատչելիության բարձրացման նպատակով կառավարությունը խթանել է կամավոր բժշկական ապահովագրության համակարգի զարգացումը, «Եկամտահարկի մասին» օրենքում գործատուների կողմից յուրաքանչյուր աշխատողի առողջության ապահովագրության համար կատարված ամսական 10000 դրամ ապահովագրավճարը սահմանել է որպես համախառն եկամտից նվազեցվող եկամուտ: Օգտվելով ընձեռած հնարավորությունից՝ 2011 թ. հուլիսի 1-ի դրությամբ 2677 ձեռնարկություն և կազմակերպություն պայմանագրեր են կնքել 23277 աշխատողների բժշկական ապահովագրության վերաբերյալ[766]:

Առանձնահատուկ կարևորություն ունի կառավարության կողմից մարզերում իրականացվող բուժհաստատությունների արդիականացման ծրագիրը: Հիմնովին վերակառուցվել է և բժշկական նորագույն սարքավորումներ տեղադրվել Իջևանի, Հրազդանի, Արմավիրի, Արարատի և Գորիսի բժշկական կենտրոններում: 2011

[765] Տե՛ս նույն տեղում, էջ 74:
[766] Տե՛ս նույն տեղում, էջ 75:

թվականին ցուցակը համալրվեց Ապարանի և Գավառի բուժկենտրոններով: 2010 թվականին սկսվեցին Շիրակի մարզի Գյումրու բժշկական նոր կենտրոնի կառուցման աշխատանքները, որոնք ավարտվեցին 2012 թվականի վերջին: Շիրակի մարզում գործում է միջազգային չափանիշներին համապատասխան ժամանակակից բժշկական կենտրոն, որը մարզի բնակչությանը մատուցում է որակյալ և մատչելի բժշկական ծառայություններ: Հանրապետության 50 գյուղական համայնքներում նույն ժամանակահատվածում կառուցվեց 20 նոր և նորոգեց 30 համայնքային ամբուլատորիա՝ տրամադրելով նաև ժամանակակից բժշկական սարքավորում, կահույք և բուժպարագաների ստանդարտ հավաքածու: Ընդհանուր առմամբ այս ուղղությամբ իրականացվել է 27 մլն ԱՄՆ դոլարին համարժեք ներդրում, որից 5 մլն դոլարը՝ սարքավորումների և կահույքի համար[767]: 2012 թ. հանրապետությունում բնակչության ստացիոնար բուժումն իրականացվել է 127 հիվանդանոցներում, որոնց 70,1%-ը ՀՀ առողջապահության նախարարության ենթակայության են, ինչպես նաև հանրապետությունում գործող 513 ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկների 28,1%-ը, հիվանդանոցային մահճակալների 61,8%-ը [768]:

Չնայած ձեռնարկված միջոցառումներին, այնուամենայնիվ առողջապահության ոլորտում առկա են մի շարք թերություններ ու բացթողումներ, չլուծված հրատապ խնդիրներ: Առողջապահության ոլորտում պետական ծախսերը շարունակում են մնալ փոքրածավալ: Առողջապահության ծառայություններից օգտվող բնակչության քանակը դեռևս ցածր է:

Բնակչության ընդամենը 25%-ն է օգտվում այդ ծառայություններից և սա հատկապես առկա է քաղաքային վայրերում ու աղքատների շրջանում: Հայաստանի բնակչության մեծամասնությունը (52%) նախընտրում է այցելել պետական հիվանդանոցներ, որտեղ նրանց այցելությունները հասնում են 43%-ի: Միայն 5%-ն է օգտվում մասնավոր հիվանդանոցներից: Սա ցույց է տալիս, որ բնակ-

[767] Տե՛ս նույն տեղում:
[768] Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2012 թ., էջ 271:

չության շատ փոքր հատվածն է ունակ վճարել բժշկական ծառայությունների դիմաց:

2008 թ. բնակչության անձնական ծախսերի 73%-ը ուղղվել է առողջապահական ծառայություններին, որը վկայում է դրանց չափազանց բանկ լինելու մասին: Ճիշտ է, այս երևույթը կանխելու համար կառավարությունը դեռևս 2008 թ. մշակեց աղքատ ընտանիքների ծախսերը հոգալու ծրագիր, սակայն մինչև 2013 թ. միայն բնակչության 20%-ն է օգտվել այդ ծրագրից[769]:

ժ. Կրթությունը

Երրորդ հազարամյակի սկզբին հիմք դրվեցին ու նախանշվեցին կրթական բարեփոխումների առաջին ուղղությունները կրթական բոլոր աստիճաններում՝ նախադպրոցականից մինչև մասնագիտական: Անցած 10-ից ավելի տարիները նաև լայնածավալ բարեփոխումների ժամանակահատված էին միջնակարգ կրթության արդիականացման, որակի բարելավման, մատչելիության մեծացման, կառավարման ապակենտրոնացման և արդյունավետության բարձրացման առումով:

2001 թվականից ուսումը դարձավ 11-ամյա, իսկ 2006-ից՝ 12-ամյա (տարրական՝ 4 տարի, հիմնական՝ 5 տարի և ավագ դպրոց՝ 3 տարի): Այդ ամենը ամրագրվեց 2009 թ. Ազգային ժողովի կողմից ընդունված «Հանրակրթության մասին» օրենքում: Եթե 1990-1991 ուստարում պետական հանրակրթական դպրոցների քիվը հանրապետությունում 1347 էր՝ 59,8 հազար աշակերտներով և 55,5 հազար ուսուցիչներով, ապա 2006- 2007 ուստարում 1427 դպրոցներում սովորում էր 471,3 հազար աշակերտ[770], 41,7 հազար ուսուցիչներով, իսկ 2012-2013 ուստարում դպրոցների քիվը կազմում էր 1388, սովորում էր 361, 228 հազար աշակերտով և 39,5 հազար ուսուցիչներով[771]:

---

[769] Տե՛ս նույն տեղում:

[770] Տե՛ս Հայաստան 1998-2007, էջ 72:

[771] Տե՛ս Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 1995, 1996, Երևան, 1998, էջ 67, նույնը, 2006, էջ 107, Հանրակրթությունը Հայաստանում 2012-2013 ուստարում, վիճ. տեղեկագիր, Երևան, 2013, էջ 4, 40, 55:

Կրթության ոլորտում 2008 թ. աշխատում էր շուրջ 45 հազար մանկավարժ: Կրթության որակի ապահովման տեսանկյունից հատուկ կարևորելով ուսուցիչների դերը՝ պետությունը հետևողականորեն իրականացրեց աշխատավարձերի բարձրացման քաղաքականություն: Եթե 2003 թ. «ուսուցիչների տարեկան աշխատավարձ-շնչային ՀՆԱ հարաբերությունը կազմում էր 1.0, ապա 2008 թ. այն դարձավ 0.49: Ընդլայնվեց ուսուցիչների վերապատրաստման ծավալը: Եթե մինչև 2003 թ. տարեկան վերապատրաստում անցել են ուսուցիչների միայն 4-5 %-ը, 2005 թվից ամեն տարի վերապատրաստվում են նրանց 20%-ը[772], ինչը հնարավորություն է տալիս ապահովել ուսուցիչների ողջ համակազմի վերապատրաստման 5-ամյա պարբերաշրջանը: 2002 թ. կրթության կառավարման և ֆինանսավորման բարեփոխումներ ծրագրի շրջանակներում հաջողվեց արմատապես լուծել աշակերտներին դասագրքերով ապահովելու կարևորագույն խնդիրը: Միջնակարգ կրթության ծախսերը տարեցտարի ավելացել են և 2008 թ. կազմել են կրթության բնագավառի ընդհանուր ծախսերի 78.2 %-ը: Ֆինանսավորման ծավալների աճը հնարավորություն տվեց էականորեն բարելավելու ոլորտի վիճակը: Այս տարիներին կրթության՝ որպես աղքատության հաղթահարման և սոցիալ-տնտեսական զարգացման հիմնական գործոնի զարգացման գլխավոր նպատակներն են եղել կրթության որակի բարելավումը և սոցիալական բոլոր խավերի համար որակյալ կրթություն ստանալու հավասար հնարավորությունների ու մատչելիության ապահովումը՝ կրթության թե՛ համակարգային, թե՛ բովանդակային բարեփոխումների ուղղությամբ: Հայաստանի Հանրապետության 43 հազ. ուսուցիչներ օգտվում են 2012-ի բյուջեում ներառված սոցիալական փաթեթից[773]: Դա վերաբերում է հանրակրթական, հատուկ դպրոցների ուսուցիչներին և արհեստագործնական ուսումնարանների ուսուցիչներին:

2008-2011 թվականների ընթացքում կրթական ծրագրերը նպատակաուղղել են համակարգի բոլոր մակարդակներում կրթության

---

[772] Տե՛ս նույն տեղում:

[773] Տե՛ս ՀՀ կառավարության 2008-2011 թթ. գործունեության արդյունքները, էջ 70:

որակի բարձրացմանն ու շարունակական կրթության ապահովմանը:

2012-2013 թթ. ուստարում ՀՀ-ում գործել են հանրակրթական ծրագրեր իրականացնող 1435 հանրակրթական դպրոցներ, որից 1388-ը կամ 96,7%-ը պետական, իսկ 47-ը, կամ 3,3%-ը՝ ոչ պետական: 2011-2012 ուստարվա համեմատ՝ հանրակրթական դպրոցների ընդհանուր թվաքանակը նվազել է 0,4%-ով: Դա բացատրվում է դպրոցների օպտիմալացման արդյունքում Երևանի Գեղարքունիքի, Շիրակի, Վայոց Ձորի և Արագածոտնի մի քանի դպրոցների փակումով և 2 ավագ դպրոցների միավորմամբ: Հայաստանում գործել են 13 մասնագիտացված (1 ոչ պետական) և 27 պետական հատուկ հանրակրթական դպրոցներ, որոնց քանակը նախորդ տարվա համեմատ մնացել է անփոփոխ: ՀՀ-ում գործել է 12 տարրական դպրոց, որոնցից 11-ը՝ պետական են և գտնվում են մարզերում, իսկ 1-ը՝ ոչ պետականը, Երևանում: Հանրապետությունում գործել է 461 հիմնական դպրոց, ինչը կազմում է դպրոցների ընդհանուր թվաքանակի 32,2%-ը: Նրանցից 306-ը գործել են մարզերում: Վերոնշյալ ուստարում ՀՀ-ում գործում էր 109 ավագ դպրոց, որից 44-ը Երևանում, մյուսները՝ մարզերում: Դրանցից 10-ը ոչ պետական հանրակրթական հաստատություն է: 109 ավագ դպրոցները կազմում են դպրոցների ընդհանուր թվաքանակի 7,6%-ը: Նախորդ տարվա 18-ի փոխարեն հանրապետությունում 2013թ. գործել է 16 վարժարան և 837 միջնակարգ դպրոց, որը կազմում է ընդհանուրի 58%-ը, նրանցից 790-ը մարզերում են: Միջնակարգ դպրոցների ընդհանուր քանակը աճել է 4,8%-ով: Ըստ էության կատարված բարեփոխումները համակարգում դեռևս ամբողջությամբ չեն արդարացրել արդյունավետ և որակյալ կրթություն ապահովելու հույսերը[774]:

Նախադպրոցական կրթության ոլորտում կազմվել էր նախադպրոցական խմբերի ստեղծման ծրագիր, որի փորձարկումն սկսվել էր 2010 թ. հունիսից՝ Արագածոտնի և Արարատի մարզերի

[774] Տե՛ս Հանրակրթությունը Հայաստանում 2012-2013 ուստարում, վիճ. տեղեկագիր, էջ 41-63:

41 համայնքներում: 2011 թ. վերջին ծրագիրը ներդրվեց ևս չորս մարզում՝ ընդգրկելով 130 համայնք և 5-6 տարեկան 2334 երեխա[775]:

Հանրակրթության ոլորտում իրականացվել է շուրջ 400 դպրոցների հիմնանորոգում, վերակառուցում, ժամանակակից աշակերտական գույքով կահավորում, ինչպես նաև այդ դպրոցներն ապահովվել են համակարգչային տեխնիկայով և ինտերնետային կապով՝ ընդլայնելով Հայաստանի դպրոցների ինտերնետային համացանցը: Այժմ համացանցում ընդգրկված է 944 դպրոց, կամ դպրոցների ընդհանուր թվի 79.5 տոկոսը: 2011 թ. 461 դպրոցների՝ այդ ցանցին միանալու շնորհիվ հանրապետության դպրոցների 93.2 տոկոսն ինտերնետային կապով կապվել է միմյանց և արտաքին աշխարհին: Բոլոր դպրոցներում հիմնվել են էլեկտրոնային գրադարաններ՝ 19 էլեկտրոնային ձեռնարկներով: Այժմ Հայաստանի դպրոցները հագեցված են 16761 համակարգիչով, «համակարգիչ-աշակերտ» հարաբերակցությունը հասել է 22.5-ի, իսկ մեկ դպրոցին բաժին ընկնող համակարգիչների քանակը 2008 թ. 4.0-ի փոխարեն 12 է[776]:

Դպրոցների տեխնիկական վերազինմանը համահունչ՝ իրականացվել է նաև դրանց կառավարման և դասավանդման բարելավումը: Մասնավորապես ներդրվել են ուսուցիչների ատեստավորման և դպրոցի տնօրենների հավաստագրման ու վերապատրաստման նոր կարգեր: Ներկայիս ավելի քան 1400 դպրոցի տնօրեններից հավաստագիր է ստացել միայն 679-ը: Քննությունների արդյունքում հավաստագրվել են նաև 194 տնօրենի պաշտոնակատար ու 279 փոխտնօրեն և ուսուցիչ: Հավաստագրված անձանց թույլատրվում է մասնակցել դպրոցի տնօրենի մրցույթներին, որոնց ընթացակարգը կառավարությունն արդեն հաստատել է՝ ներառելով մրցույթների անցկացման թափանցիկության և հրապարակայնության ապահովման մեխանիզմներ:

Ավագ դպրոցների ձևավորման նպատակով ընդլայնվել է դեռևս

[775] Տե՛ս նույն տեղում:
[776] Տե՛ս նույն տեղում:

2008 թվականին մեկնարկած փորձնական 10 ավագ դպրոցների ստեղծման ծրագիրը՝ վերջիններիս թիվը հասցնելով 109-ի, յուրաքանչյուր նորաստեղծ ավագ դպրոց նորոգվել է և համալրվել անհրաժեշտ տեխնիկայով ու սարքավորումով, գործածության են երաշխավորվել 37 անուն դասագիրք և 12 անուն ուսուցչի ձեռնարկ: 2003 թվականից միջին մասնագիտական նախնական (արհեստագործական) կրթության համակարգը սկսեց վերակազմավորվել:

Միջին մասնագիտական և նախնական կրթության ոլորտում իրականացվել է եվրոպական կրթական հիմնադրամի «Թուրինի գործընթաց»-ում 2010 թվականին ներգրավվելու և վերջինիս պահանջներին համապատասխան մասնագիտական կրթությունը բարեփոխելու աշխատանք: Մասնավորապես, յուրաքանչյուր մարզում և մայրաքաղաքում ստեղծվել է 12 տարածաշրջանային քոլեջ, նորոգվել և վերակառուցվել են այդ քոլեջների շենքերն ու կառույցները, ամբողջովին նորացվել և վերազինվել է դրանց նյութատեխնիկական բազան: Միաժամանակ, հաստատված օպտիմալացման ծրագրով 2010-2011 թվականների ընթացքում միավորվել և վերակազմավորվել է 20 միջին մասնագիտական հաստատություն և արհեստագործական ուսումնարան, ևս 4 վարժարան-քոլեջ՝ որպես բազային՝ միացվել է համապատասխան բուհերին[777]:

ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության զարգացման գործում կարևոր նշանակություն ունեցավ ՀՀ Ազգային ժողովի կողմից 2004 թ. ընդունված «Բուհական և հետբուհական կրթության մասին» օրենքը[778]: Մասնագիտական որակավորման բարձրացման, առաջավոր փորձի փոխանակման, կրթության բովանդակության ու մեթոդների արդիականացման շատ հարցեր սկսեցին լուծվել Բոլոնիայի համաձայնագրին Հայաստանի Հանրապետության միացման, եվրոպական կրթական համակարգին ինտեգրվելու շնորհիվ: Բարձրագույն կրթության բարեփոխումները

[777] Տե՛ս Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2010 թ. հունվար-մարտին, Երևան, 2010, էջ 212:

[778] Տե՛ս Բարձրագույն կրթություն, պրակ 5, ՀՀ ԿԳՆ, կրթության ազգային ինստիտուտ, Երևան, 2012, էջ 3, 24:

իրականացվեցին այդ գործընթացի սկզբունքներին համապատասխան, հաստատվեց բարձրագույն կրթության որակավորման ազգային շրջանակը, մշակվեց և ընդունվեց բուհերի ֆինանսավորման ռազմավարությունը, վերանայվեցին մասնագիտական կրթական ծրագրերի արտոնագրման պայմաններն ու պահանջները, կարգավորվեց ուսանողների շարժունության հիմնահարցը, ներդրվեց հետազոտողի հետբուհական կրթական ծրագրի կրեդիտային համակարգը՝ սահմանելով ասպիրանտների համար 180 կրեդիտի պարտադիր պահանջ: Կատարված քայլերի շնորհիվ հաջողվեց ձերբազատվել շուկայում անորակ կրթական ծառայություն մատուցող 30-ից ավելի բարձրագույն ուսումնական հաստատություններից՝ արտոնագրից զրկելու, մասնակիորեն կասեցնելու կամ այլ բուհերի հետ դրանք միավորելու ճանապարհով[779]:

2005 թ. Նորվեգիայի Բերգեն քաղաքում Հայաստանի Հանրապետությունը ստորագրեց նաև Բերգենի հռչակագիրը՝ միանալով Բոլոնիայի գործընթացին: Նպատակը ՀՀ մասնագիտական կրթական համակարգի ինտեգրումն էր բարձրագույն կրթության եվրոպական միասնական տարածքին: 2005 թ. հուլիսին հաստատվեց «Ուսանողներին մեկ բարձրագույն ուսումնական հաստատություններից մեկ ուրիշը փոխադրելու կարգը»: 2006 թ. հունիսին որոշվեց «ՀՀ պետական բուհերում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տալու կարգը»[780], որով ուսանողական նպաստը փոխհատուցվում է (լրիվ կամ մասնակի) ՀՀ պետական բյուջեի ծախսային մասում նախատեսված միջոցների, բարձրագույն ուսումնական հաստատության, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրների հաշվին: Իսկ 2006 թ. սեպտեմբերից, առաջին անգամ, ՀՀ պետական բուհերում կիրառվել է մրցակցային կրթության գաղափարը՝ ըստ առաջադիմության ուսանողների փոխատեղումը վճարովի ուսուցման համակարգից անվճար, և՝ հակառակը[781]: Ստեղծվեց բարձրագույն կրթության որակի ապա-

[779] Տե՛ս Բարձրագույն կրթություն, պրակ 2, կրթության ազգային ինստիտուտ, Երևան, 2007, էջ 58-109:
[780] Տե՛ս նույն տեղում, էջ 186-192:
[781] Տե՛ս նույն տեղում, էջ 132:

հովման, հավաստագրման համակարգի հայեցակարգ, ուրվագծվեցին դրա իրականացման հիմնական սկզբունքներն ու ուղենիշները:

2012-2013 ուստարում հանրապետությունում գործել են 23 բարձրագույն պետական ուսումնական հաստատություններ և 12 մասնաճյուղեր, որոնցում սովորել են 76730 ուսանող, նրանցից 64905-ը կամ 84,6%-ը սովորել է վճարովի ուսուցմամբ, իսկ 11825-ը կամ 15,4%-ը՝ անվճար: Ոչ միայն հանրապետության, այլև աշխարհի առաջավոր բուհերի շարքում իր որակյալ կրթական ու գիտական մակարդակով առաջնակարգ տեղ է զբաղեցնում մայր բուհը՝ Երևանի պետական համալսարանը: 2012-2013 ուստարում հանրապետությունում գործել են 42 բարձրագույն ոչ պետական ուսումնական հաստատություններ, որտեղ սովորող ուսանողների թվաքանակը կազմել է 13415[782]:

Տարեցտարի ավելի շատ օտարերկրացիներ և սփյուռքահայեր են դիմում ՀՀ-ում բարձրագույն կրթություն ստանալու համար: 2007-2008 ուս. տարվա տվյալներով հայաստանյան պետական և ոչ պետական բուհերում սովորում էին մոտ 2300 օտարերկրացի և սփյուռքահայ ուսանողներ[783], որոնց թիվը 2012-2013 ուստարում կիսով չափ կրճատվել է[784]: Այս ծրագիրը հնարավորություն է տալիս ոչ միայն կադրեր պատրաստել Սփյուռքի հայկական համայնքի համար, կապ ապահովել Սփյուռքի և Հայաստանի միջև, այլև բազմաթիվ ընտանիքների համար ազդեցիկ գործոն է Հայաստան վերադառնալու կամ Հայաստանում մշտական բնակություն հաստատելու համար:

Երիտասարդների համար ստեղծվել է արտասահմանյան կրթօջախներում որակյալ կրթություն ստանալու հնարավորություն: Այսպես, կրթության բնագավառում 2008-2011 թվականներին ստորագրված 31 միջպետական համաձայնագրերով 627 երիտասարդ գործուղվել է արտասահման բարձրագույն և հետբուհական

[782] ՀՀ սոցիալական վիճակը 2012 թ., էջ 181, 193:
[783] Տե՛ս Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2010 թ., էջ 124:
[784] ՀՀ սոցիալական վիճակը 2012 թ., էջ 187:

կրթություն ստանալու: «Լույս» կրթական հիմնադրամի ստեղծմամբ 43 երիտասարդ 2009/2010 թթ., 68-ը՝ 2010/2011 թթ. և 143-ը՝ 2011/2012 թթ. ուսումնական տարում աջակցություն է ստացել ուսանելու աշխարհի լավագույն 25 համալսարաններում[785]:

ժա. Գիտությունը

21-րդ դարասկզբին ՀՀ գիտության ոլորտում առաջնային խնդիր էր օրենսդրական և նորմատիվ իրավական դաշտի կարգավորումը: 2001 թ. ապրիլին ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացավ «Հայաստանի Հանրապետության գիտության զարգացման հայեցակարգը»[786], որը նախանշում էր ոլորտի զարգացման ուղիները:

2001 թ. ՀՀ կառավարությունը հաստատեց գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային (պայմանագրային), թեմատիկ, նպատակային ծրագրային ֆինանսավորման կարգերը:

ՀՀ կառավարության կողմից 2002 թ. ընդունվեց «ՀՀ Գիտության և տեխնիկայի զարգացման գերակայությունները հաստատելու մասին» որոշումը , իսկ 2006 թ. «Գիտության ոլորտի բարեփոխումների հայեցակարգերի դրույթները»: Նրանցում ոչ միայն նշված էին գիտական ու գիտատեխնիկական գործունեության ֆինանսավորման աղբյուրները, այլև հայրենի գիտության գերակա ուղղությունները: Դրանցում հատկապես կարևորվում էին հայագիտությունը, կիրառական արժեքավոր հետազոտությունների զարգացումը խթանող հիմնարար հետազոտությունները, տեղեկատվական ու առաջատար տեխնոլոգիաները (կենսատեխնոլոգիա, նանոտեխնոլոգիա), էներգիայի նոր աղբյուրների ուսումնասիրումը և այլն:

2006-2007 թթ. ընթացքում մշակվեց և ՀՀ կառավարության հավանությանը արժանացավ ՀՀ գիտության ոլորտի բարեփոխումների հայեցակարգը, որի հիմնական նպատակն էր գիտելիքի վրա

---

[785] Տե՛ս նույն տեղում, «Բարձրագույն կրթություն», էջ 116:

[786] Տե՛ս Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու 2001, գիրք Դ, էջ 922:

հիմնված տնտեսության և հասարակության ստեղծումը: Հայեցակարգը նախանշում էր համակարգի զարգացումը 2008-2011 թթ. և ամրագրում հետևյալ հիմնական նպատակները: Առաջին՝ համակարգի կառավարման արդյունավետության բարձրացմամբ գիտության ոլորտի կառավարման պետական միասնական մարմնի ստեղծում՝ հանձին գիտության պետական կոմիտեի: Երկրորդ՝ անկախ փորձաքննության համակարգի ստեղծում, երրորդ՝ գիտական աստիճանաշնորհման համակարգի վերափոխում և գիտության պետական հիմնադրամի ստեղծում[787]:

Բնական գիտությունների բնագավառում աշխատանք է կատարվել հետևյալ հիմնական ուղղություններով՝ հիմնադրվել է Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիան, որին կից ստեղծվել է տարրական մասնիկների և միջուկային ֆիզիկայի նորարարության համալիր ծրագիր երիտասարդ գիտնականների ու ասպիրանտների համար: Այսօր արդեն ծրագրում ընդգրկված են 11 երիտասարդներ, ովքեր կառավարության ֆինանսավորմամբ մասնակցել են համաշխարհային ճանաչում ունեցող Շվեյցարիայի և ԱՄՆ-ի գիտակրթական կենտրոնների նախագծերին, տասնյակ միջազգային գիտաժողովների՝ ներկայացնելով բարձր էներգիաների ֆիզիկայի բնագավառում իրենց կատարած գիտական-նորարարական աշխատանքները: Գործի է դրվել միջուկային բժշկության ծրագիրը, որի շրջանակում Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիայում կազմակերպվել է «տեխնեցիում» ռադիոիզոտոպի արտադրությունը: Հայաստանում գործող Երկու գամմա-խցիկներում այս ռադիոիզոտոպի կիրառմամբ հնարավոր է դարձել ավելի ճշգրիտ ախտորոշել օնկոհիվանդներին: Զուգահեռաբար հիմնադրվել է «Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոն» ՓԲԸ-ը, որը բելգիական «ԱյԲիէյ մոլեկուլյար» ընկերության հետ համատեղ սկսել է կառուցել ռադիոիզոտոպ արտադրող նոր ցիկլոտրոնը: Վերջինս թույլ կտա Հայաստանում ստեղծել քաղցկեղի ախտորոշման և բուժման գերժամանակակից կենտրոն: Այս նպատակին արդեն

[787] Տե՛ս ՀՀ կառավարության 2008-2011 թթ. գործունեության արդյունքները, էջ 72:

հատկացվել է շուրջ 5.2 մլն եվրո[788]: Կրթություն-գիտություն կապն ամրապնդելու համար կառավարությունը սկսել է գիտահետազոտական ինստիտուտների միացումը համալսարաններին, կրթական և գիտական ակադեմիաներին:

Որոշակի զարգացում նկատվեց հայագիտության ոլորտում: Նրա գլխավոր խնդիրը դարձավ բոլոր ուղղությունների ըստ ամենայնի զարգացումը, համընթաց քայլելը համաշխարհային գիտության հետ և հայագիտության նվաճումները հայոց պետության հետագա զարգացմանն ու ամրապնդմանը ի սպաս դնելը:

Արդի պայմաններում հայագիտության մտահոգիչ վիճակի թելադրանքով և նրա աշխատանքները համակարգելու համար 2003 թ. սեպտեմբերին ՀՀ ԳԱԱ-ն և Երևանի պետական համալսարանը կազմակերպեցին հայագիտության արդի վիճակին և զարգացման հեռանկարներին նվիրված միջազգային համաժողով՝ արտերկրի հայագետների մասնակցությամբ: Համաժողովը եկավ այն եզրակացության, որ անհրաժեշտ է ստեղծել հայագիտական հիմնադրամ, լուսաբանել տեղեկատվական պարբերական, հիմնել հայագիտական աշխատանքները համակարգող կենտրոն՝ Հայաստանի և արտերկրի գիտնականների մասնակցությամբ:

Չնայած չստեղծվեց այդ կենտրոնը, սակայն Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի, Երևանի պետական համալսարանի, Երևանի Մատենադարանի և մյուս հայագիտական օջախների ակտիվ աշխատանքների համագործակցության շնորհիվ զգալի նվաճումներ ձեռք բերվեցին այս ոլորտում: 2013 թ. հոկտեմբերին տեղի ունեցավ հայագիտական 2-րդ միջազգային համաժողովը, որը ձեռնամուխ եղավ վերոնշյալ հիմնախնդիրների լուծմանը: Արդի պայմաններում հայագիտության կարևորագույն նվաճումներից պետք է համարել «Հայոց պատմության» քառահատորյակի (յուրաքանչյուրը՝ 2 գրքով) հրատարակումը, 3-րդ և 4-րդ հատորների առաջին գրքերը հրատարակվեցին 2010 թվականին: Առաջիկա տարիներին կհրատարակվեն բոլոր մյուս հատորները: Վերջին երկու տարիներին ավարտ-

[788] Տե՛ս նույն տեղում:

վեցին «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» մատենաշարի (16 հատորով), «Հայ ժողովրդական հեքիաթներ»-ի (17 հատորով), «Հայաստանի ազգային ատլասի» (2 հատորով), «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ատլասի» (եռալեզու՝ հայերեն, անգլերեն և ռուսերեն), Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանի» (4 հատորով վերահրատարակումը 2010 թ.), Պ. Բեդիրյանի «Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան»-ի հրատարակությունները: 21-րդ դարասկզբին (2001-2004 թթ.) իրականացվեցին Հանրագիտարանի համառոտ քառահատոր հրատարակությունը (2003 թ.), «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանը» (5 հատորով, արժանացել է պետական մրցանակի, 2001 թ.), «Հայկական Սփյուռք» (2003 թ.), «Քրիստոնյա Հայաստան» (2002 թ.), «Ղարաբաղյան ազատագրական պատերազմ (1988-1994 թթ.)» (2004 թ.) և այլ հանրագիտարանային հրատարակություններ: Հրատարակվել են հայագիտության տարբեր բնագավառները ներկայացնող մենագրություններ ու հոդվածների ժողովածուներ՝ նվիրված հայ պատմագիտության, աղբյուրագիտության, լեզվաբանության, գրականագիտության հիմնախնդիրներին, նաև մի քանի հազար մենագրություններ ու հոդվածներ՝ հայագիտության տարաբնույթ խնդիրներին վերաբերող, «Բանբեր Մատենադարանի» ժողովածուի երկու տասնյակի հասնող հատորները, «Բազմավեպն» ու «Հանդես ամսօրյան», «Պատմա-բանասիրական հանդես» ու «Բանբեր Երևանի համալսարանի» պարբերականները և այլն: Վերջին տասնամյակներում զգալի աշխատանք է կատարվել նաև արևմտահայերենի գիտական ուսումնասիրման բնագավառում, հրատարակվել են մենագրություններ, բառարաններ ու դասագրքեր: Հայագիտական ակտիվ հետազոտություններ է իրականացնում 2008 թվականից ԵՊՀ-ում ստեղծված Հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, որի գիտաշխատողների ջանքերով 2008-2011 թթ. ընթացքում հրատարակվել են 55 գիրք, մեթոդական ձեռնարկներ, 149 հոդված, 200-ից ավելի քարտեզներ: Կարևոր նվաճում է հայ մատենագրության ու դասական գրականության թվանշանային գրադարանի և www.digilib.am կայքի ստեղծումը,

որը լայն հեռանկարներ է բացում ազգային գիտամշակութային արժեքների պահպանման, միջազգայնացման և հայագիտական ուսումնասիրությունների դյուրացման ու զարգացման առջև: Որոշակի նվաճումներ են ձեռք բերվել հնագիտական հետազոտությունների ասպարեզում: Հայ հնագետները արտասահմանյան հնագիտական արշավախմբերի հետ համատեղ ՀՀ-ում կատարեցին բազմաթիվ պեղումներ, որոնց արդյունքները անակնկալ էին ամբողջ աշխարհի մակարդակով: Հայաստանի «Արենի 1» քարանձավային համալիրում 2010 թ. կատարված պեղումներով հայտնաբերվեց եղինջի մանրաթելից պատրաստված կանացի հագուստ, որը թվագրվում է մ. թ. ա. 39-րդ դարով (մ. թ. ա. 3800 թ.), այսինքն մոտ 5900 տարեկան է: Հագուստի տարիքը որոշվել է Կալիֆորնիայի համալսարանում կատարված հետազոտությամբ: Բացի այդ ՀՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հնագետների ուժերով նույն «Արենի 1» քարանձավային համալիրում հայտնաբերվեցին նաև 5000-ամյա ոտնաման և աշխարհի ամենահին գինեգործարանը[789]: Հայագիտության նվաճումներն ի մի են բերվել ՀՀ ԳԱԱ և ԵՊՀ կողմից հրավիրված միջազգային մի շարք գիտաժողովներում: Հիշատակության արժանի են Մովսես Խորենացու ծննդյան 1500-ամյակին, Գլաձորի համալսարանի 700-ամյակին, քրիստոնեության պետական կրոնի հռչակման 1700-ամյակին (2001) ու հայ գրերի ստեղծման 1600-ամյակին (2005) նվիրված գիտաժողովները և այլն:

Հայագիտության իբրև գերակա ուղղության զարգացումը խթանելու նպատակով ՀՀ կառավարությունը 2012 հունվարի 12-ին ընդունեց «Հայագիտության զարգացման հայեցակարգը, ոլորտի զարգացման 2012-2025 թթ. ռազմավարությունը և դրա իրականացման միջոցառումների ժամանակացույցը»[790]: Փաստաթղթի հիմնական նպատակն է պետության և հայ մտավորականության ջանքերով հայագիտությունը վերածել հայության ազգային ու մշակութային անվտանգության ապահովման հզոր գործոնի:

[789] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 25.07.2011:
[790] Տե՛ս Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիան 70 տարում, Երևան, 2013, էջ 12-13:

Ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման շնորհիվ հայագիտությունը կխթանի անկախ պետականության ամրապնդումը ու կնպաստի ազգային ինքնագիտակցության ուժեղացմանը:

ժբ. Մշակույթը

Պայքարը ազգային արժեքների պահպանման համար 2000-ական թթ. առանձնահատուկ ուշադրություն սևեռեց բնակչության մշակութային կյանքի աշխուժացմանը, մշակութային ծառայությունների մատչելիությանը և որակի ապահովմանը, մշակութային ենթակառուցվածքների համաչափ զարգացմանը (ըստ ոլորտների ու մարզերի): Կազմակերպվեցին և ֆինանսավորվեցին բազում երաժշտական, թատերական, կինոարվեստի փառատոններ, ցուցահանդեսներ, աշխարհահռչակ մշակութային գործիչների հյուրախաղեր:

Ժամանակակից արվեստի զարգացման ուղղությամբ 2009 թվականից սկսվեց «Դեբյուտային ծրագրերին պետական աջակցություն» ծրագիրը, որի շրջանակում օժանդակություն ցուցաբերվեց երիտասարդական թատերական արվեստի 15 ներկայացումների, 47 լավագույն երիտասարդ կոմպոզիտորների դասական ստեղծագործությունների, 28 կինոֆիլմերի ստեղծմանը (12 դեբյուտային, 16 ուսանողական)[791]: Հովանավորչական ֆինանսական ներդրումների, միջազգային կառույցների և արտասահմանյան երկրների դրամաշնորհների հաշվին (մոտ 2 մլրդ դրամին համարժեք տարադրամ) որակական փոփոխության են ենթարկվել մշակութային միջոցառումները, համալրվել է մշակութային կառույցների նյութատեխնիկական բազան, պայմաններ են ստեղծվել մշակութային ժառանգության պահպանության կառույցների ձևավորման համար:

Երաժշտարվեստի ոլորտում գերակա ուղղություն համարվող օպերային և բալետային արվեստի զարգացման նպատակով պետական պատվերով 2 տարվա ընթացքում իրականացվել է 5 խո-

[791] Տե՛ս ՀՀ կառավարության 2008-2011 թթ. գործունեության արդյունքները, էջ 76:

չոր նախագծերի՝ «Սպարտակ» (բեմադրիչ Յուրի Գրիգորովիչ), «Ռոմեո և Ջուլիետ» (բեմադրիչ՝ Ռուդոլֆ Խառատյան) բալետների, «Աիդա» (բեմադրիչ Մարիո Կորադի), «Սայաթ-Նովա» (բեմադրիչ՝ Արամ Սուքիասյան), «Ալմաստ» (բեմադրիչ՝ Ա. Իսահակյան) օպերաների բեմադրությունը[792], ֆինանսավորվել է «XXI դարի հեռանկարներ» միջազգային դասական երաժշտական փառատոնի 10-ից ավելի ծրագրեր՝ Հայաստանում կազմակերպելով ավելի քան 70 համերգ աշխարհի ամենաճանաչված օպերային երգիչների, ռոք-խմբերի, անվանի դիրիժորների ու նրանց ղեկավարած նվագախմբերի, միջազգային մրցույթների դափնեկիրների, հայտնի մենակատարների մասնակցությամբ: ՀՀ կառավարությունը սատարել է Պլաչիդո Դոմինգոյի, Աննա-Մարիա Մարտինեսի, Լարա Ֆաբիանի, Ջեքրո Թալի, Յան Գիլանի, Ջո Կոկերի, Ջորջ Բենսոնի, Ջուկերոյի, «Յուռահիպ» և «Դիպ Փարփլ» ռոք-խմբերի, Վլադիմիր Սպիվակովի, Քշիշտոֆ Պենդերեցկու, Վալերի Գերգիևի, Լոնդոնի սիմֆոնիկ նվագախմբի, Գեդեոն Կրեմերի լարային նվագախմբի, Բորոդինի անվան լարային քառյակի, Մալերի կամերային նվագախմբի, Յուրի Բաշմետի, Դենիս Մացուևի և շատ այլ հանրաճանաչ վարպետների հայաստանյան հյուրախաղերը, աջակցել է նաև ֆինանսապես Հայաստանում ջազի 70-ամյակին նվիրված «Jazz-70» ջազային փառատոնի համերգներին հանրաճանաչ երաժիշտներ էլ Ջերոյի, Ինդիանայի, Միխայիլ Բուտմանի, Նինո Քաթամաձեի, Տիգրան Համասյանի, Տաթևիկ Հովհաննիսյանի և այլոց մասնակցությանը[793]:

Կինոարվեստի ոլորտում նոր թափ է հաղորդվել «Ոսկե ծիրան» կինոփառատոնին՝ աջակցելով կինոյի համաշխարհային աստղեր Կլաուդիա Կարդինալեի, Ժերար Դեպարդիեի, Քշիշտոֆ Զանուսիի, Ֆաննի Արդանի, Մարկո Բելոկիոյի, Տավիանի եղբայրների, Տոնինո Գուերայի, Լի Չանգդոյի մասնակցությանը, խթանելով նոր փառատոնների, մասնավորապես «Ռեանիմանիայի» կայացումը[794]:

---

[792] Տես նույն տեղում:
[793] Տես նույն տեղում:
[794] Տես նույն տեղում:

Թատերարվեստի ոլորտում առաջին անգամ նախաձեռնվեց Ծաղկաձոր քաղաքում, Մինջախաղի միջազգային և հանրապետական նշանակության «Թատրոն-X» փառատոնը:

Կերպարվեստի ոլորտում հայ մշակույթը արտերկրում ներկայացվեց շուրջ 18 ցուցահանդեսներում: Հայաստանում կազմակերպվեց «Սալվադոր Դալին և սյուրռեալիստները» ցուցահանդեսը, որտեղ հայ արվեստասերին առաջին անգամ ներկայացվեց 20-րդ դարի գեղանկարի մեծագույն վարպետներ Սալվադոր Դալիի, Վասիլի Կանդինսկու, Ջորջո դե Կիրիկոյի ավելի քան 160 գրաֆիկական գործեր և հայ նկարիչների 40 գործ[795]:

Գրահրատարակչական ոլորտում պետական պատվերով և աջակցությամբ տպագրվեցին շուրջ 500 անուն գիրք, ներդրվեցին գրահրատարակչական 7 նոր ուղղություններ, մասնավորապես՝ մշակութային ժառանգությունը ներկայացնող գրականություն, հայ գրքի տպագրության 500-ամյակին նվիրված հրատարակություններ, թարգմանական գրականություն, ազգային փոքրամասնությունների գրականություն, գրական ժառանգություն, Հայաստանի անկախության 20-ամյակին նվիրված գրականություն, էլեկտրոնային հրատարակություններ: Հրատարակված գրականությունից անվճար բաշխվեց 77081-ը, իրացվեց 25351 միավոր[796]:

Գեղարվեստական կրթության ոլորտում պետական աջակցությամբ սկսվեց ուսումնական գրականության հրատարակումը, որի հետևանքով երաժշտական և արվեստի դպրոցները ապահովվեցին 132 անուն ուսումնական գրականությամբ և մեթոդական ուղեցույցներով: Մշակվեցին երաժշտական դպրոցների օրինակելի ուսումնական պլաններ և 17 առարկայական ծրագրեր: Մեթոդական աշխատանքների կազմակերպման նպատակով ՀՀ-ում հիմնվեց 33 հեռակետային դպրոց (յուրաքանչյուր մարզում՝ երեքական, հատկացվեց 48 մլն դրամ), վերաբացվեց «Դպրոցականի ֆիլհարմոնիան», որը հանրապետության մանուկների և պատանիների համար 156 դասհամերգներ է իրականացրել, այդ թվում 90-ը՝ մայրաքաղաքում (հատկացվել է 22 մլն դրամ): Ընդլայնվեց երաժշտական

[795] Տե՛ս նույն տեղում, էջ 77:
[796] Տե՛ս Նույն տեղում:

արվեստի դպրոցներին տրամադրվող ուսման վարձավճարի փոխհատուցման ծրագիրը՝ ցանկում ներառելով նաև փողային և լարային նվագարաններ: 2011 թ. սովորողների թիվը կազմեց 2443 աշակերտ: Ծրագրի վրա ծախսվեց տարեկան մոտ 300 մլն դրամ[797]:

Տարբեր մասնագիտությունների գծով կազմակերպվեց մի շարք հանրապետական նպատակային մանկապատանեկան մրցույթներ, փառատոններ, ամառային ստեղծագործական և արվեստի ճամբարներ, որոնց մասնակցեցին 5049 շնորհալի երեխա և 110 երգչախումբ:

Մշակութային ժառանգության պատմամշակութային հուշարձանների պահպանության բնագավառում կանոնակարգվեցին և ներդրվեցին պետական ֆինանսավորման նոր ծրագրերով: Այսպես, 2009-2010 թվականներին հուշարձանների վերականգնման ծրագիրը համալրվեց «Հուշարձանների տեխնիկական վիճակի դիտանցում», «Հուշարձանների պեղում» ենթածրագրերով, ինչպես նաև «Հուշարձանների հրատապ ուսումնասիրում, ամրակայում, վերանորոգում» և «Աջակցություն հայկական պատմամշակութային հուշարձանների վավերագրման» նոր ծրագրային ուղղություններով, որոնց շրջանակում իրականացվեց շուրջ 65 հուշարձանի նախնական ուսումնասիրում, անհրաժեշտության դեպքում՝ նաև պեղման աշխատանքներ, կազմվեց ավելի քան 920 հուշարձանի անձնագրային փաթեթ, իրականացվեց առավել վտանգված 52 հուշարձանի տեխնիկական վիճակի դիտանցում, թողարկվեց 980 պահպանական գոտի, որից հաստատվեց 598-ը, այդ թվում՝ 2010 թ. հաստատվեց Երևան քաղաքի հուշարձանների պահպանական 114 գոտի: Իրականացվեց 24 թանգարանների մոտ 900 000 միավոր թանգարանային առարկաների վերահաշվառում, թանգարանային ֆոնդերը իրականացված պեղումների արդյունքում և նվիրաբերությունների միջոցով 2008-2010 թվականներին համալրվել են 45920 ցուցանմուշով[798]: Թանգարաններում ներդրվել է շուրջ 26,8 մլն դրամ գումար՝ հակահրդեհային, ազդանշանային, ջեռուցման, արտաքին տեսահսկողական համակարգե-

[797] Տե՛ս Նույն տեղում:
[798] Տե՛ս նույն տեղում:

րի տեղադրման, ինչպես նաև սենսորային կրպակների ձեռքբերման համար: Ընդհանուր առմամբ շուրջ 4.2 մլն դրամ[799]:

Մշակութային ծառայությունների որակի և մատչելիության ապահովման նպատակով սկսվել է մշակույթի ոլորտում տեղեկատվական-հաղորդակցական նոր տեխնոլոգիաների ներդրումը: Մասնավորապես գրադարանային ոլորտում ներդրվեցին «Հայաստանյան գրադարանների միացյալ ավտոմատացված ցանց» (ALEPH)՝ գրադարաններից օգտվողների համար, նորացված էլեկտրոնային-տեղեկատվական "EBSKO" և "Integrum World" փաթեթները:

Թանգարանային ոլորտում ստեղծվեց նոր վեբ կայք և ապահովվեց էլեկտրոնային շտեմարաններ պարունակող սենսորային կրպակների տեղադրումը:

Արվեստի բնագավառում սկսվեց արվեստի գործերի և թանգարանային առարկաների թվայնացման և համացանցում դրանք ներդնելու գործընթացը: Արդեն լուսանկարվել և թվայնացվել է 8000 գործ Հայաստանի պետական պատկերասրահի հավաքածուից: Կայքը բաց է այցելուների համար[800]:

«Հայաստանյան գրադարանների միացյալ ավտոմատացված ցանց» (ALEPH) ծրագրում ընդգրկված 12 գրադարանները մուտքագրեցին մոտ 3 մլն միավոր (778 700 անուն) գրքի մատենագիտական տվյալներ:

Որպես սոցիալական ծրագիր՝ ամսական երկու օր աշակերտության, իսկ վերջին շաբաթ օրը բոլորի համար թանգարաններն աշխատում են առանց մուտքի վճարի: Մշակութային ժամանակակից ենթակառույցների զարգացման ասպարեզում ՀՀ մարզերի համաչափ զարգացման սկզբունքից ելնելով՝ հիմնանորոգվել և վերանորոգվել է թատրոնի 6 շենք, որից 4-ը՝ մարզային (Գավառի, Արտաշատի, Վանաձորի, Գորիսի թատրոնները), 12 թանգարանային, այդ թվում Օրբելի եղբայրներինը՝ Ծաղկաձորում, Պերճ Պռոշյանինը՝ Աշտարակում, Ակսել Բակունցինը՝ Գորիսում և այլն, 12 գրադարանի շենք, որից 8-ը մարզային, Դիլիջանի ու Գա-

[799] Տե՛ս նույն տեղում, էջ 78:
[800] Նույն տեղում:

վառի քաղաքային գրադարանները, 79 մարզային մշակույթի տուն, ակումբ, ինչպես նաև կառուցվել է 10 նոր շենք[801]:

Ազգային փոքրամասնությունների մշակույթի պահպանման նպատակով օժանդակություն տրվեց 12 անուն թերթերի և ամսագրերի, 4 գրքի հրատարակման, 2 ֆիլմի նկարահանման:

Միջազգային համագործակցության ոլորտում աջակցություն ցույց տրվեց միջազգային կառույցների հետ երկկողմ, բազմակողմ կապերի ամրապնդմանը: Արտերկրում հայ մշակույթի տարածման ուղղությամբ լուրջ աշխատանքներ տարվեցին: Ապահովվեց մշակութային կոլեկտիվների, անհատների մասնակցությունը շուրջ 120 միջազգային միջոցառումների՝ հյուրախաղերի, փառատոնների, մրցույթների, ցուցահանդեսների և այլն, ՅՈՒՆԵՍԿՕ-ի հետ համագործակցության շրջանակում մրցույթում հաղթելու շնորհիվ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից Երևանը հայտարարվեց 2012 թ. Գրքի համաշխարհային մայրաքաղաք[802]:

Մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության ցուցակներում ընդգրկվել է հայկական խաչքարը հետևյալ վերտառությամբ՝ «Խաչքարի արվեստը, խորհուրդն ու խաչքարագործությունը»: «Գառնի» պատմամշակութային արգելոց-թանգարանն արժանացել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի և Հունաստանի կողմից սահմանված Մելինա Մերկուրի մրցանակին:

2. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ

ա. Սահմանադրական և դատական նոր բարեփոխումներ

1995-2005 թվականներին հանրապետության տնտեսական, քաղաքական ու հասարակական կյանքում կատարված տեղաշարժերը ՀՀ Սահմանադրության մեջ բարեփոխումներ կատարելու անհրաժեշտություն առաջացրին: Այդ բարեփոխումներն առաջին հերթին վերաբերում էին ՀՀ նախագահին ընձեռած բացառիկ լիազորությունները սահմանափակելուն, գործադիր իշխանության

[801] Տե՛ս նույն տեղում:
[802] Տե՛ս նույն տեղում:

նկատմամբ ՀՀ Ազգային ժողովի վերահսկողությունը ուժեղացնելուն, իշխանության երեք թևերի միջև փոխադարձ հակակշիռների մեխանիզմներ ստեղծելուն և այլն: Սահմանադրական բարեփոխումների նախապատրաստական աշխատանքները կատարվեցին 1998-2005 թթ.: Այդ փոփոխությունների վերջնական տարբերակը արժանանալով Ազգային ժողովի հավանությանը, համաժողովրդական հանրաքվեի արդյունքով հաստատվեց 2005 թ. նոյեմբերի 27-ին:

Սահմանադրական փոփոխությունները ներառեցին հասարակական կյանքի գրեթե բոլոր ոլորտները: Հայաստանի առջև նոր հնարավորություններ բացվեցին: Կարևոր փոփոխություններ եղան Սահմանադրության 14-րդ և 42-րդ հոդվածներում: 14-րդ հոդվածում կատարված փոփոխությամբ սահմանվեցին պետության պարտավորությունները հարգելու և պաշտպանելու մարդու արժանապատվությունը՝ որպես նրա ազատությունների և իրավունքների անքակտելի հիմք և բարձրագույն արժեք:

42-րդ հոդվածում կատարված փոփոխության համաձայն մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակը:

Ի հավելումն Սահմանադրության մեջ առկա մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների փոփոխություններով ամրագրվեցին հին և նոր այնպիսի իրավունքներ, ինչպիսիք են ազատ տեղաշարժվելու, խաղաղ, առանց զենքի ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու իրավունք (հոդ. 25), աշխատանքի ընտրության իրավունք (հոդ. 32), ընտանիքի համար բավարար կենսամակարդակի իրավունք (հոդ. 34), ծերության, հաշմանդամության, հիվանդության և այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունք (հոդ. 37), կրթության իրավունք (հոդ. 39) և այլն[803]:

---

[803] Տես 10 հարց սահմանադրական փոփոխությունների մասին, Երևան, 2005, էջ 4,5:

Կարևոր փոփոխություն էր նաև երկքաղաքացիության արգելքի վերացումը: «Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքում արդեն ամրագրվել է երկքաղաքացիության վերաբերյալ դրույթ, որը հնարավորություն է տալիս երկրի կյանքում ներգրավել սփյուռքահայությանը:

Օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնական գործունեությունն ապահովելու և զսպումների ու հակակշիռների արդյունավետ համակարգ ձևավորելու համար 2005թ. սահմանադրական փոփոխություններով էականորեն սահմանափակվեցին հանրապետության նախագահի լիազորությունները: Վերանայվեց Ազգային ժողովն արձակելու նախագահի բացարձակ իրավունքը: Կառավարության ձևավորման հարցում գերակա դիրք զբաղեցրեց Ազգային ժողովը[804]:

Հանրապետության նախագահի որոշ լիազորություններ փոխանցվեցին Ազգային ժողովին: Այսպես, մինչև սահմանադրական փոփոխությունները գլխավոր դատախազին նշանակում և ազատում էր հանրապետության նախագահը՝ վարչապետի առաջարկությամբ, փոփոխություններից հետո գլխավոր դատախազին հանրապետության նախագահի առաջարկությամբ նշանակում է Ազգային ժողովը: Վերանայվել է նաև հանրապետության նախագահի՝ կառավարության կառուցվածքը սահմանելու, կառավարության որոշումները վավերացնելու, Արդարադատության խորհուրդը նախագահելու իրավունքը: Եթե նախկինում հանրապետության նախագահը իր հայեցողությամբ կարող էր նշանակել ու ազատել վարչապետին, ապա ներկայումս հանրապետության նախագահը Ազգային ժողովում պատգամավորական խմբակցությունների հետ խորհրդակցելով՝ վարչապետ է նշանակում պատգամավորների մեծամասնության վստահությունը վայելող անձին, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա առավել թվով պատգամավորների վստահությունը վայելող անձին:

Նախագահի լիազորությունները փոխանցվել են Ազգային ժողովին: Գործադիր իշխանության բնագավառում սահմանադրա-

[804] Տե՛ս նույն տեղում, էջ 6, 7:

կան նորամուծություններից է այն, որ կառավարության կառուցվածքը և լիազորությունները սահմանվում են օրենքով: Հանրապետության նախագահը կառավարության նիստ կարող է հրավիրել և վարել միայն արտաքին քաղաքականության, պաշտպանության և ազգային անվտանգության հարցերով, մնացած դեպքերում նիստերը հրավիրում և վարում է վարչապետը: Կառավարության որոշումներն ուժի մեջ են մտնում առանց հանրապետության նախագահի վավերացման (բացառություն են կազմում մարզպետների նշանակման և ազատման որոշումները)[805]:

Կատարված փոփոխություններով բարձրացավ խորհրդարանի դերը: Դրա վառ ապացույցն է այն, որ կառավարության ձևավորման գործում առաջնությունը տրվեց խորհրդարանին, կառավարությունը պատասխանատվություն է կրում ոչ միայն նախագահի, այլև խորհրդարանի առջև: Խորհրդարանը հանրապետության նախագահի առաջարկությամբ նշանակում է նաև Վերահսկիչ պալատի նախագահին, Կենտրոնական բանկի նախագահին, ընտրում մարդու իրավունքների պաշտպանին:

Երկարացվեց Ազգային ժողովի լիազորությունների ժամկետը՝ 4 տարուց դառնալով 5 տարի: Ավելացվել են նաև Ազգային ժողովի մշտական հանձնաժողովները: Դրանց առավելագույն քիվը այժմ 12 է:

Դատական իշխանության համակարգում ևս սկզբունքային փոփոխություններ են կատարվել: Սահմանադրության նախկին տարբերակով հանրապետության նախագահը գլխավորում էր Արդարադատության խորհուրդը, իսկ նրա տեղակալներն էին ՀՀ արդարադատության նախարարը և գլխավոր դատախազը՝ ի պաշտոնե: Ներկայումս Արդարադատության խորհրդի նիստը նախագահում է ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահը՝ առանց քվեարկության իրավունքի: Փոխվել է նաև Արդարադատության խորհրդի կազմավորման կարգը: Արդարադատության խորհուրդն ըստ էության ձեռք է բերել դատավորների ինքնակառավարման մարմնի հատկանիշներ: Որոշակիորեն փոխվել է վճռաբեկ դատարանի դերը, որը կոչված է ապահովել օրենքի միատեսակ կիրառությունը:

[805] Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, Երևան, 2005, էջ 5, 6:

Տվյալ փոփոխության նպատակը դատարանների կողմից օրենքի կամայական մեկնաբանման և կամայական որոշումների ընդունման հնարավորության սահմանափակումն է:

Սահմանադրական կարգավիճակ ստացան Մարդու իրավունքների պաշտպանը և Հեռուստատեսության ու ռադիոյի ազգային հանձնաժողովը: Այս մարմինների կազմավորման հետ կապված՝ նույնպես լիազորությունների որոշակի փոխանցում կատարվեց հանրապետության նախագահից Ազգային ժողովին: Ստեղծվեց նաև Վերահսկիչ պալատ, որի նախագահին նշանակում է Ազգային ժողովը:

Սահմանադրական փոփոխությունների դրական քայլերից էր նաև տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների ժամկետների երկարացումը: Ինքնակառավարման մարմիններն ընտրվում էին 3 տարի ժամկետով: Փոփոխություններից հետո այդ ժամկետը դարձավ 4 տարի: Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների կարճ ժամկետները կառավարման կազմակերպման գործում կայուն պայմաններ չէին ստեղծում և լրացուցիչ խոշոր ծախսեր էին պահանջում ընտրությունների անցկացման համար:

Սահմանադրությամբ ամրագրվեց նաև, որ համայնքի բնակչությունը կարող է ուղղակիորեն մասնակցել համայնքի գործերի կառավարմանը՝ համայնքային նշանակության հարցերը տեղական հանրաքվեով լուծելու միջոցով:

Բարդացվեց նաև համայնքի ղեկավարի պաշտոնանկության գործընթացը: Այսուհետ կառավարությունը, նախքան համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու մասին որոշում ընդունելը պարտադիր պետք է ստանա Սահմանադրական դատարանի եզրակացությունը համայքնի ղեկավարի պաշտոնանկ անելու հիմքերի առկայության մասին:

Փոփոխությունները հնարավորություն տվեցին նաև ընդլայնել համայքնի ավագանու կազմը՝ նախկին Սահմանադրությամբ ամրագրված 15 անդամներից ավելի[806]:

Սահմանադրական նոր փոփոխություններով փոխվեց նաև

[806] Տե՛ս նույն տեղում, էջ 8, 9:

Երևանի կարգավիճակը՝ մարզից դառնալով համայնք: Երևանն ունի իր սեփական բյուջեն և ինքնուրույն է լուծում համայնքային նշանակության խնդիրները: Երևանի քաղաքապետը ընտրովի է և պատասխանատու առաջին հերթին բնակչության առջև, ինչն էլ կարող է որոշ չափով ապահովել նրա անկախությունը պետական իշխանության մարմիններից: Երևանը ձևավորել է նաև իր ներկայացուցչական մարմինը, որը վերահսկում է քաղաքապետի գործունեությունը,
քաղաքի բյուջեն և վերջինիս միջոցների օգտագործումը:

2009 թ. մայիսին առաջին անգամ ՀՀ անկախության տարիներին տեղի ունեցան մայրաքաղաքի քաղաքապետի ընտրություններ:

2000 թվականից սկսվեց դատաիրավական բարեփոխումների երկրորդ փուլը: 2001 թ. հիմնվեց ՀՀ տնտեսական դատարանը, իսկ 2003 թ. ընդունվեց ՀՀ քրեական նոր օրենսգիրքը: Այս փուլի կարևոր բարեփոխումներից էր քրեակատարողական համակարգում մարդասիրական գործընթացի կարգավորումը, որի շնորհիվ համակարգը ներքին գործերի նախարարությունից տեղափոխվեց արդարադատության նախարարության համակարգ:

ՀՀ-ի անդամակցությունը միջազգային ամենատարբեր կառույցներին և հատկապես Եվրախորհրդին պահանջում է անկախ ու հուսալի դատական համակարգի ստեղծում: Բացի դրանից սահմանադրական բարեփոխումները նույնպես խթան հանդիսացան դատաիրավական բարեփոխումների երկրորդ փուլի համար: Երկրորդ փուլի շրջանակներում ընդունվեցին դատական օրենսգիրքը, դատախազության մասին օրենքներ, ինչպես նաև մյուս օրենքներում կատարվեցին համապատասխան փոփոխություններ և լրացումներ: Դատաիրավական բարեփոխումների երկրորդ փուլում ստեղծվեցին նոր դատավարական օրենսգրքեր, մասնավորապես քրեական, քաղաքացիական և վարչական դատավարության օրենսգրքերը: Դատական համակարգի անկախության ապահովմանն ուղղված կարևոր քայլերից էր ՀՀ Ազգային ժողովի կողմից 2007 թ. վերջերին ընդունված «ՀՀ դատական օրենսգիրքը», որը կարգավորում է դատական իշխանության կազմակերպման և գործունեության հետ կապված հարաբերությունների ողջ շրջանակը:

Միջոցներ ձեռնարկվեցին դատարանների նյութատեխնիկական խնդիրները և դատավորների սոցիալական պաշտպանվածության մակարդակը բարելավելու ուղղությամբ: 2007 թ. փետրվարին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվեց նաև «Դատախազության մասին» ՀՀ օրենքը, որով սկսվեց դատախազական համակարգի բարեփոխման գործընթացը, և հստակեցվեցին քրեական հետապնդում հարուցելու, հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու, դատարանում մեղադրանքը պաշտպանելու, դատարանների վճիռները և որոշումները բողոքարկելու, պետական շահերի պաշտպանության, պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու դատախուզության գործառույթները: ՀՀ դատական օրենսգրքի ընդունմամբ 2008 թ. հունվարի 1-ից դատական համակարգում բարեփոխումները շարունակվեցին, դրվեց դատական նոր համակարգի հիմքը[807]:

Դատական նոր համակարգում ընդգրկված առաջին ատյանի դատարանները ընդհանուր իրավասության դատարաններ են: ՀՀ-ում գործում է ընդհանուր իրավասության 16 դատարան, յուրաքանչյուր մարզում ընդհանուր իրավասության մեկ դատարան, Երևանում՝ 7 դատարան: Նշված օրենսգրքի ընդունմամբ ստեղծվել է նաև դատական դպրոց, որը կարևրագույն դերակատարում կունենա հանրապետության արդարադատության իրականացման ու ամրապնդման գործում:

ՀՀ-ում գործում են ընդհանուր իրավասության առաջին ատյանի, վերաքննիչ և վճռաբեկ դատարաններ, ինչպես նաև մասնագիտացված վարչական և վարչական վերաքննիչ դատարաններ: Վերաքննիչ դատարանները երեքն են՝ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ նախագահի և 15 դատավորների կազմով, վերաքննիչ քրեական դատարան՝ նախագահի և 15 դատավորների կազմով և վերաքննիչ վարչական դատարան՝ նախագահի և 6 դատավորների կազմով: ՀՀ-ում գործող վճռաբեկ դատարանը կազմված է դատարանի նախագահից և դատական երկու պալատից. առաջինը

[807] Տե՛ս Հայաստան 1998-2007, էջ 112:

քրեական պալատ և երկրորդը քաղաքացիական ու վարչական պալատ[808]:

Դատախազության մասին ՀՀ նոր օրենքով սահմանվեց դատախազության՝ քաղաքակիրթ երկրներին հարիր համակարգ, որը միտված է նրա սահմանադրական լիազորությունների լիարժեք ու արդյունավետ իրականացմանը: Դատախազության գործառույթներից հանվեց նախաքննություն իրականացնելու լիազորությունը: Նախաքննական նոր մարմիններ ստեղծվեցին հարկային և մաքսային ծառայություններում, պաշտպանության նախարարության համակարգում:

Կարելի է փաստել, որ հասարակական իրավագիտակցության և իրավաընկալման մեջ նկատելի են լուրջ փոփոխություններ, մարդիկ հաճախ են դիմում փաստաբանների օգնությանը, աճում է իրենց իրավունքների պաշտպանության համար դատարաններ դիմող անձանց ու դատական գործերի քանակը: Սակայն դեռևս - հասարակության վստահության պակասը դատարանների նկատմամբ շարունակում է մնալ չլուծված և արդիական խնդիր: Դրա պատճառներից մեկը այն է, որ դեռևս դատարաններում չի կազմակերպվում գործերի արագ և արդյունավետ քննություն: Շատ են դատավարությունների անհարգի ձգձգումները: Այս և ոլորտի այլ թերությունների մասին ընդգծեց ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը 2011 թ. հուլիսին դատահրավական խնդիրներին նվիրված խորհրդակցության ժամանակ: Միաժամանակ նա պահանջեց որակապես փոխել հանրության վերաբերմունքը երկրում իրականացվող արդարադատության հանդեպ՝ նրա մեջ դատարանների նկատմամբ վստահություն առաջացնելով, և ընդգծեց, որ «դատահրավական բարեփոխումների հիմնական ուղղություններից մեկը պետք է հանդիսանա հատկապես դատարանների կողմից օրենքների միատեսակ մեկնաբանությունը և կիրառումը»[809]:

---

[808] Հայաստանի Հանրապետության Սահմանադրական Իրավունք, դասագիրք բուհերի համար, Երևան, 2012, էջ 182, 183:

[809] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 20.07.2011:

բ. Բարեփոխումներ պետական և հանրային կառավարման ոլորտում
Ժողովրդավարության գործընթացը

Պետական կառավարման ոլորտում նույնպես իրականացվեցին որոշակի բարեփոխումներ, որոնցից կարևոր նշանակություն ունեցավ քաղաքացիական ծառայության համակարգի ստեղծումը: 2001 թ. դեկտեմբերին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվեց «Քաղաքացիական ծառայության մասին ՀՀ օրենքը»[810], որի հիման վրա ստեղծվեց քաղաքացիական ծառայության խորհուրդը՝ որպես քաղծառայության համակարգի կառավարման բարձրագույն մարմին: Սրանով կարգավորվում էին քաղաքացիական ծառայության համակարգի իրավական հիմքերը: Օրենքի ընդունմամբ փաստորեն սկսվեց Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական ծառայության համակարգի ներդրման գործընթացը: Նպատակ էր դրվել այդ համակարգի կայացմամբ նպաստել արդյունավետ, միասնական կադրային քաղաքականության վարմանը, պետական ապարատը քաղաքական ազդեցությունից զերծ՝ պրոֆեսիոնալ, բարոյական բարձր որակներով օժտված մասնագետներով համալրելուն:

Դրանով իրականացավ 7500 քաղաքացիական ծառայողների վերապատրաստման ևատեստավորման նոր ինստիտուտների ստեղծումը, որոնց շնորհիվ ապահովվեց, մի կողմից, քաղաքացիական ծառայողների մասնագիտական ունակությունների ու գիտելիքների, կառավարչական հմտությունների կատարելագործումը, նրանց շարունակական ուսուցումը, մյուս կողմից՝ երեք տարին մեկ անգամ իրենց պաշտոններին քաղաքացիական ծառայողների համապատասխանության որոշումը[811]: Մրցութային հանձնաժողովի անաչառությունն ապահովելու նպատակով հստակ կանոնակարգվեցին թեստային առաջադրանքների գնահատման չափորո-

---

[810] Տե՛ս Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու 2001 թ., գ. Դ, Երևան, 2001, էջ 785:

[811] Տե՛ս Մինասյան Է., Սոցիալ-տնտեսական վերափոխումները Հայաստանի Հանրապետությունում (1990-2003 թթ.), էջ 33:

շիչները, մրցույթների և ատեստավորումների հարցազրույցի փուլի անցկացման մեխանիզմները: Համակարգի նորարարություններից էր քաղծառայության թափուր պաշտոնները բացառապես մրցույթների միջոցով համալրման ինստիտուտի ներդրումը, որի շնորհիվ արդեն 2002 թ. հոկտեմբերից քաղաքացիական ծառայության բոլոր պաշտոնները սկսեցին համալրվել բացառապես մրցույթների միջոցով[812]: Այսպիսով, հնարավոր եղավ բոլոր քաղաքացիների համար համահավասարություն ապահովել պետական կառավարման ոլորտ ընդգրկվելու համար: Քաղաքացիական ծառայության համակարգի ներդրումից առ այսօր ակտիվ գործունեություն է ծավալվում միջազգային կազմակերպությունների, առանձին պետությունների համապատասխան կառույցների հետ համագործակցություն ծավալելու ու խորացնելու ուղղությամբ:

2012 թ. հունվարին նշվեց ՀՀ քաղաքացիական ծառայության համակարգի ներդրման 10-ամյակը: Նշվեց, որ այն դարձել է մեր պետականության կայացման ու ամրապնդման հիմնական մեխանիզմներից մեկը, այն հենքը, որի վրա ապագայում պետք է կառուցվի եվրոպական բարձրակարգ չափանիշներին համապատասխանող քաղծառայության բնագավառը: Քաղաքացիական ծառայության համակարգի կայացման տասնամյա փորձը՝ իր բոլոր թերություններով ու բացթողումներով հանդերձ, վկայում է, որ այդ գործընթացը անշրջելի է արդյունավետ կառավարման ու քաղծառայության այլ ոլորտների կադրեր ընտրելու գործում: Նպատակը որակյալ քաղաքացիական ծառայություն, բարձր մարդկային ու մասնագիտական հատկանիշներ ունեցող ծառայող ունենալն է, պետական ծառայողի նկատմամբ հանրային վստահության ամրապնդումը:

Հասարակական կյանքի ժողովրդավարական վերափոխումների ճանապարհին կարևոր նշանակություն ուներ մարդու իրավունքների պաշտպանի (օմբուդսմեն) ինստիտուտի ստեղծումը, որի լիազորությունները սահմանող օրենքի ընդունումը ՀՀ-ի համար անկախացումից ի վեր տևեց 12 տարի: Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի անհրաժեշտությունը պայմանավոր-

[812] Տե՛ս նույն տեղում:

ված էր ոչ միայն ժողովրդավարական վերափոխումների անհրաժեշտությամբ, այլև Եվրախորհրդի առջև ստանձնած պարտավորություններով: Ուստի պատահական չէ, որ 2003 թ. հոկտեմբերին ՀՀ ԱԺ-ն ընդունեց «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» օրենքը, որը ուժի մեջ մտավ 2004 թ. հունվարի 1-ից: Սահմանադրության մեջ փոփոխություններ կատարելուց հետո անհրաժեշտություն առաջացավ նաև օրենքում փոփոխություններ կատարել: 2006 թ. փետրվարին ընտրվեց առաջին պառլամենտական օմբուդսմենը՝ 6 տարի ժամկետով: Փաստորեն առաջին անգամ մեր պատմության մեջ հիմք դրվեց խորհրդարանական օմբուդսմենի ինստիտուտի ստեղծմանը:

Պետական կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով 2008 թվականից ՀՀ կառավարությունը նախատեսեց էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման ծրագիր: Գործում է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ, որը նպաստում է կատարողական կարգապահության բարձրացմանը, նախարարությունների և այլ գերատեսչությունների հաշվետվությունների կատարման ժամկետների և գործընթացի ավտոմատված վերահսկմանը: Ընդ որում ներդրված է նաև կատարողականի գնահատման համակարգ: Պետական կառավարման համակարգի թափանցիկության ապահովման նպատակով գործարկվել է առցանց համակարգ, որը քաղաքացիներին հնարավորություն է տալիս հետևելու պետական մարմիններ ուղարկած գրությունների ընթացքին[813]:

Պետական կառավարման համակարգի կառուցվածքային և գործառութային բարեփոխումների շրջանակում տարանջատվել են բոլոր նախարարություններում և կառավարության աղբներ մարմիններում քաղաքականության մշակման գործառույթները ծառայության մատուցման գործառույթներից, մի շարք միջոցառումներ են ձեռնարկվել այդ ծառայությունների որակի և արդյունավետության բարձրացման համար[814]:

---

[813] Տե՛ս ՀՀ կառավարության 2008-2011 թթ. գործունեության արդյունքները,էջ 84, 85, 89:
[814] Տե՛ս նույն տեղում, էջ 87:

Անհրաժեշտ բարեփոխումներ իրականացվեցին նաև անվտանգության և ոստիկանական մարմիններում: Դրան մեծապես նպաստեցին ՀՀ Ազգային ժողովի կողմից 2001 թ. դեկտեմբերին ընդունված «Ազգային անվտանգության մարմինների մասին» և 2002 թ. հուլիսին «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքները[815]: 2002 թ. դեկտեմբերին «Հայաստանի Հանրապետության կառավարության կառուցվածքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ նախագահի հրամանագրով Ազգային անվտանգության և ներքին գործերի նախարարությունները վերածվեցին ՀՀ կառավարությանն առընթեր Ազգային անվտանգության ծառայության և Հայաստանի Հանրապետության ոստիկանության[816]:

Ոստիկանական համակարգի բարեփոխումների շնորհիվ որոշակի հաջողություններ արձանագրվեցին տեխնիկական հագեցվածության բարձրացման, պրոֆեսիոնալ խմբերի արագ կայացման և այլ ուղղություններով: Որոշակի միջոցառումներ մշակվեցին այնպիսի անընդունելի երևույթների նկատմամբ, ինչպիսիք են կաշառակերության, այսպես կոչված «բարձր հովանավորությունների» ինստիտուտի, ոչ հարիր վարքագիծ և պաշտոնական դիրքի չարաշահումների վերացման ուղղությամբ: Չնայած բարձրացան ոստիկանական համակարգի աշխատողների աշխատավարձերը և դրույքաչափերը, բայց դրանք դեռևս բավարար չեն նրանց սոցիալական խնդիրները լուծելու համար: Մշակվել են ծրագրեր բարեփոխումների շրջանակում նաև ոստիկանների սոցիալական երաշխիքների փաթեթի իրականացման համար: Ընդլայնվում է ոստիկանական համակարգի հետ միջազգային կառույցների համագործակցության ծրագրերի շրջանակը: Այսպես, օրինակ, 2008 թ. նոյեմբերին ՀՀ ոստիկայության և ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի միջև ստորագրվեց համագործակցության մասին հուշագրի լրացուցիչ արձանագրություն[817]: Երկու կառույցները համաձայնության եկան, որ ոստիկանական կառուցվածքում ստեղծվի ոս-

[815] Տե՛ս Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր թիվ 6 (181), 5 փետրվարի 2002, էջ 3-18, թիվ 32 (207,) 8 օգոստոսի, 2002, էջ 5-39:
[816] Տե՛ս նույն տեղում, թիվ 55 (230), 17 դեկտեմբերի, 2002, էջ 25:
[817] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 15.03..2008:

տիկանության բարեփոխումների բաժին այդ գործընթացը համակարգելու համար: Այդ նպատակով ԵԱՀԿ-ն տրամադրեց անհրաժեշտ միջոցներ: Բացի այդ նա աջակցում է ոստիկանությանը՝ հասարակական կարծիքի հարցումներ կազմակերպելու և դրա հիման վրա մշակելու ոստիկանության ռազմավարություն՝ ուղղված ոստիկայության նկատմամբ բնակչության վստահության բարձրացմանը: Բացի այդ 2011 թ. ապրիլին ԵԱՀԿ-ի աջակցությամբ հրավիրվեց ոստիկանության գծով միջազգային փորձագետ, որի հիմնական գործառույթը համայնքային ոստիկանության ռազմավարության մշակումն էր:

Ակտիվ փուլում են գտնվում ՀՀ կառավարությանն առընթեր ճանապարհային ոստիկայության համակարգի բարեփոխումները, որոնց շրջանակներում ընդունվել են երեք տասնյակից ավելի իրավական ակտեր, այդ թվում «Ճանապարհային երթևեկության մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքները և կառավարության մի շարք որոշումներ: Ձեռնարկվել են կոնկրետ գործողություններ ճանապարհային ոստիկանության նյութատեխնիկական բազան ընդլայնելու և կատարելագործելու համար: 2011-2012 թթ. զգալի աշխատանք կատարվեց տեխնիկական համակարգերի, արագության չափման և խախտումների գրանցման, տեսախցիկների ներդրման ուղղությամբ: Ներդրումից հետո նվազագույնի են հասել ոստիկան-վարորդ շփումները: Զուգահեռաբար ընդլայնվել է վարորդական իրավունք ստանալու գործընթացը:

գ. Ներքաղաքական զարգացումներ

2000 թվականների սկզբին հանրապետության ղեկավարությունը կարողացավ խուսափել ներքաղաքական ցնցումներից և աստիճանաբար կայունացնել քաղաքական իրավիճակը: Դարասկզբին իրականացվեցին սահմանադրության և ժողովրդավարության ոգուն համապատասխան այլ բարեփոխումներ ևս: 2001 թ. դեկտեմբերին ընդունվեց «Հասարակական կազմակերպությունների

մասին»[818], իսկ 2002 թ. օգոստոսին՝ «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքները[819]: Այս նոր օրենքներով ոչ բոլոր կուսակցությունները կարողացան քննություն բռնել ու վերագրանցվել: Եթե 2002 թ. հանրապետությունում կուսակցությունների թիվը հասել էր 116-ի, որոնց մեծ մասը իրականում ստեղծված էին թղթի վրա: Օրենքի կիրառումից հետո 2004 թ. հունվարին հանրապետությունում կուսակցությունների թիվը հասնում էր 52, իսկ 2005 թ.՝ 71, 2011 թ. 77[820]: Կուսակցությունների ակտիվությունը դրսևորվեց հատկապես նախագահական և խորհրդարանական ընտրությունների ժամանակ:

Հայաստանի Հանրապետության նախագահական չորրորդ ընտրություններն անցկացվեցին 2003 թ. փետրվարի 19-ին: Երկրորդ փուլ դուրս եկան գործող նախագահ Ռոբերտ Քոչարյանը և միացյալ ընդդիմության թեկնածու Ստեփան Դեմիրճյանը: ՀՀ նախագահ վերընտրվեց Ռոբերտ Քոչարյանը: 2003 թ. մայիսի 25-ին տեղի ունեցան Ազգային ժողովի հերթական ընտրությունները. փաստորեն կուսակցություններից և ոչ մեկին չհաջողվեց բացարձակ մեծամասնություն ստանալ խորհրդարանում և միայնակ ձևավորել կառավարություն: Ընտրությունները կայացան 75 համամասնական և 56 մեծամասնական ընտրակարգով: Ինչպես Ազգային ժողովի նախորդ, այնպես էլ այս ընտրություններն անցան ընտրախախտումներով: Ընտրություններին համամասնական ընտրակարգով մասնակցած 21 կուսակցություններից ու դաշինքներից 5%-ի սահմանագիծը հաղթահարեց և պատգամավորական մանդատները բաշխվեցին հետևյալ կուսակցությունների միջև՝

1. Հայաստանի Հանրապետական կուսակցություն – 23
2. «Արդարություն» դաշինք – 14
3. «Օրինաց երկիր» -12
4. ՀՅԴ - 11

---

[818] Տե՛ս Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու 2001, գիրք Դ, էջ 771:
[819] Տե՛ս Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու 2002, գիրք Ե, էջ 648:
[820] Տե՛ս Պողոսյան Գ., Հայ հասարակությունը XXI դարասկզբին, Երևան 2006, էջ 134:

5. «Ազգային միաբանություն» - 9

6. «Միավորված աշխատանքային կուսակցություն» - 6[821]

ՀՀ երրորդ գումարման Ազգային ժողովն իր առաջին նստաշրջանը գումարեց 2003 թ. հունիսի 12-ին: ՀՀ Ազգային Ժողովի նախագահ ընտրվեց «Օրինաց երկիր» կուսակցության նախագահ Արթուր Բաղդասարյանը:

Առաջին անգամ Հայաստանի անկախ Հանրապետության պատմության մեջ այդ ընտրություններին առավել շատ ձայներ ստացած երեք կուսակցությունները՝ Հայաստանի Հանրապետական կուսակցությունը (ՀՀԿ)-ն, Օրինաց երկիրը (ՕԵԿ) և Հայ հեղափոխական դաշնակցությունը (ՀՅԴ) կազմեցին քաղաքական կոալիցիա և համատեղ ձևավորեցին կառավարություն[822]: Վարչապետ նշանակվեց 2000 թվականից այդ պաշտոնում գտնվող Հայաստանի հանրապետական կուսակցության խորհրդի նախագահ Անդրանիկ Մարգարյանը (1951-2007): 2006 թ. կոալիցիայից դուրս եկավ Օրինաց երկիր (ՕԵԿ) կուսակցությունը, որը կարճ ժամանակով դարձավ ընդդիմություն:

Հասարակության ակտիվության պայմաններում ընթացան Ազգային ժողովի չորրորդ գումարման 2007 թ. մայիսի 12-ի խորհրդարանական ընտրությունները: Համամասնական ընտրակարգով սահմանված շեմը հաղթահարեցին 5 կուսակցություններ. ՀՀԿ-ից՝ 65 պատգամավոր, «Հայ հեղափոխական դաշնակցություն»-ից՝ 16 պատգամավոր, «Օրինաց երկիր»-ից՝ 8 պատգամավոր և «Ժառանգություն»-ից՝ 7 պատգամավոր: Ազգային Ժողովի նախագահ ընտրվեց Տիգրան Թորոսյանը[823]: Համամասնական ընտրակարգով մեծամասնություն ստացավ Հայաստանի Հանրապետական կուսակցությունը (ՀՀԿ), որին հաջորդեցին Բարգավաճ Հայաստան (ԲՀԿ) և Հայ հեղափոխական դաշնակցություն (ՀՅԴ) կու-

---

[821] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 3.06.2003:

[822] Տե՛ս Թորոսյան Տ., Հասարակական համակարգի հետխորհրդային տրանսֆորմացիա, Երևան, 2006, էջ 157:

[823] Տե՛ս Աբրահամյան Հ., Ժողովրդավարությունը և քաղաքական կուսակցությունները, Երևան, 2009, էջ 70:

սակցությունները: Ընտրությունների արդյունքից ելնելով՝ ՀՀ նախագահի աջակցությամբ ստորագրվեց համաձայնագիր «Հայաստանի հանրապետական» և «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունների միջև քաղաքական կոալիցիա ստեղծելու վերաբերյալ: Քաղաքական կոալիցիան իր հերթին Հայ հեղափոխական դաշնակցության հետ ստորագրեց համագործակցության համաձայնագիր: Այս երեք կուսակցություններն էլ ձևավորեցին Հայաստանի Հանրապետության նոր կառավարությունը: Հունիսի 7-ին վարչապետ նշանակվեց դեռևս 2007 թ. ապրիլի 4-ից այդ պաշտոնը վարող Սերժ Սարգսյանը: Ընդդիմությունը ներկայացնող նախկին քաղաքական ուժերին այնպես էլ չհաջողվեց միավորվել և անհրաժեշտ թվով ձայներ գրավել նոր խորհրդարանում:

Հայաստանի Հանրապետության նախագահական հինգերորդ ընտրություններն անցկացվեցին 2008թ. փետրվարի 19-ին: Ընտրություններին մասնակցեցին 9 թեկնածուներ: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, օրենքով նախատեսված կարգով ամփոփելով ընտրության արդյունքներն արձանագրեց, որ Սերժ Սարգսյանը ստացել է 52,82% ձայն, Լևոն Տեր-Պետրոսյանը 21,51%, Արթուր Բաղդասարյանը՝ 16,69%, Վահան Հովհաննիսյանը՝ 6,18% և այլն[824]:

2008թ. մարտի 1-2-ին Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների և դրանց պատճառների ուսումնասիրման Ազգային ժողովի ժամանակավոր հանձնաժողովը ներկայացնելով հետընտրական զարգացումները նշում է, որ քաղաքական տարբեր բևեռներում գտնվող ուժերը տրամագծորեն հակադիր մեկնաբանություններ էին տալիս ընտրություններին, դրանց ընթացքին ու արդյունքներին[825]:

---

[824] Տե՛սhttp://res.elections.am/images/doc/verjnakan2008.pdf, «Հայաստանի Հանրապետություն», 21.02.2008:

[825] Տե՛ս «2008թ. մարտի 1-2-ին Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների և դրանց պատճառների ուսումնասիրման ՀՀ Ազգային ժողովի ժամանակավոր հանձնաժողովի եզրակացությունը», Երևան, 2008, (http://www.parliament.am/committee_docs_ 4/LegalCom/15.09.2009(01.03).pdf) էջ 20-23, ինչպես

ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի կողմից հիմնված ընտրական դիտորդական առաքելության կատարած մանրակրկիտ ուսումնասիրության արդյունքում արվեց եզրակացություն, որ «Թեև 2008թ. նախագահական ընտրությունները հիմնականում համապատասխանել են ԵԱՀԿ պարտավորություններին և միջազգային չափանիշներին, նախընտրական շրջանում և քվեարկության ժամերին որոշ պարտավարությունների նկատմամբ ի հայտ եկան լուրջ մարտահրավերներ հատկապես ընտրությունների օրվանից հետո: Սա ժողովրդավարական ընտրությունների համար էական չափանիշների նկատմամբ դրսևորեց անբավարար հարգանք և արժեզրկեց ամբողջ ընտրական գործընթացը»[826]:

ԵԽԽՎ 1609 բանաձևը գնահատելով 2008 թվականի նախագահական ընտրությունները, արձանագրեց, որ չնայած դրանք «անցկացվեցին հիմնականում Եվրոպայի Խորհրդի չափանիշներին համահունչ», ընտրությունները դիտարկող ժամանակավոր հանձնաժողովը արձանագրեց մի շարք խախտումներ և թերություններ, որոնցից ամենակարևորն էին բոլոր թեկնածուների համար նախընտրական քարոզարշավի իրականացման ոչ հավասար պայմանները, ընտրական վարչարարության ոչ բավարար թափանցիկությունը և այլն: Բանաձևում նշվում է, որ նկատված խախտումները և թերությունները չնպաստեցին ընտրական գործընթացի նկատմամբ հանրության առանց այդ էլ խախտված վստահության մակարդակի բարձրացմանը, միաժամանակ հասարակության մի հատվածի շրջանում հարցեր առաջացնելով ընտրությունների արդյունքի վստահելիության կապակցությամբ: ԵԽԽՎ գնահատականի համաձայն հենց հանրային վստահության պակասը հիմք դարձավ նախնական արդյունքների հրապարակմանը հաջորդած, թեև առանց նախապես պաշտոնական տե-

---

նաև «Մարդու իրավունքների պաշտպանի Արտահերթ հրապարակային զեկույցը, 2008 թ. փետրվարի 19-ի նախագահական ընտրությունների և հետընտրական զարգացումների վերաբերյալ», Երևան, 2008թ. էջ 9, 15, 16 (http://www.ombuds.am / library /library /page/101/type/3):

[826] Տե՛սնույն տեղում:

ղեկացման, խաղաղ ցույցերի համար, որոնք տասը օրվա ընթացքում հանդուրժվում էին իշխանությունների կողմից»[827]:

Մերժելով ընտրությունների արդյունքները, ընդդիմության արմատական թևը, իշխանությունների ամենաթողության պայմաններում, փետրվարի 21-ից Երևանում սկսեց չարտոնված հանրահավաքների շարք: Հետընտրական այդ օրերին ավելի լարվեց ու շիկացավ նախընտրական քարոզչության փուլում ձևավորված մթնոլորտը, որի պայմաններում մեծապես խորացել էր անհանդուրժողականությունն ու անվստահությունը հայկական տարբեր խավերի ու խմբերի միջև, հասարակությունը երկփեղկվել և բևեռացել էր, վախի, ատելության ու թշնամանքի ազդակների տակ:[828]

ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի զեկույցում նշված է, որ «փետրվարի 20-29-ին Ազատության հրապարակում հնչող քարոզչության մեջ հստակ առանձնանում էին իշխանությունների կողմից ժողովրդի վրա բռնության, ընտրակեղծիքների, «ժողովրդի թեկնածուի» տարած հաղթանակին տեր կանգնելու, գործող իշխանության նկատմամբ մինչև վերջ անհանդուրժող լինելու կարգախոսները»:[829]

Հակաղիր մղումների գերակշռության պայմաններում աճում էր հասարակության լարվածությունը: Հետընտրական շրջանը շատ քաղաքագետներ որակեցին «իշխանության և ընդդիմության միջև նյարդերի պայքար»: Այս իրավիճակում ՋԼՄ-ները հիմնականում շարունակում էին տալ բևեռացված մեկնաբանություններ[830]:

---

[827] Տե՛ս նույն տեղում, ինչպես նաև ԵԽԽՎ 1609 բանաձևը՝ http://www.coe.am/docs/pace/1609arm.pdf:

[828] Տե՛ս«Հայկական ժամանակ», N14 (1963), 25.01.2008, N30 (1979), 16.02.2008, 26.01, 31.01.2008, N 31 (1980), 17.02.2008, Մարդու իրավունքների պաշտպանի «Արտահերթ հրապարակային զեկույց», 2008թ. փետրվարի 19-ի նախագահական ընտրությունների և հետընտրական զարգացումների վերաբերյալ, էջ 9, 15, 16, 33, 2008թ., մարտի 1-2-ին Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների և դրանց պատճառների ուսումնասիրության ՀՀ Ազգային ժողովի ժամանակավոր հանձնաժողովի եզրակացություն, էջ 24, 25 (այսուհետև ՀՀ Ազգային ժողովի ժամանակավոր հանձնաժողով):

[829] Տե՛սՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի զեկույցը, էջ 9, 13, 15, 16, 28, 29:

[830] Տե՛սնույն տեղում, նաև «Հայկական ժամանակ», 22, 23, 25.01.2008, 21.02.2008, ՀՀ Ազգային ժողովի ժամանակավոր հանձնաժողովի եզրակացություն, էջ 20, 23:

Առաջացած անվստահության մթնոլորտում արմատական գործելաոճ որդեգրած հասարակության մի մասի համար ոչ արդյունավետ էր հնչում տարբեր հասարակական կազմակերպությունների, արվեստի, գիտության գործիչների՝ բողոքը դադարեցնելու և հանդուրժողական լինելու վերաբերյալ հայտարարությունները ու կոչերը, այդ թվում անարձագանք մնաց նաև Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցու թեմակալ առաջնորդների և եպիսկոպոսների ժողովի փետրվարի 29-ի ուղերձը ուղղված ժողովրդին, որով հորդորվում էր պահպանել ողջամտության ու խոհեմության ոգին, լինել զգոն, օրինապահ, անարձագանք թողնել ատելություն և թշնամանք հրահրող ամեն ձայն, յուրաքանչյուր քայլ կատարել մեր երկրի հեղինակության, մեր ներկայի և ապագայի հանդեպ լուրջ մտահոգությամբ[831]:

Հետընտրական լարվածության այս պայմաններում Լևոն Տեր-Պետրոսյանի կողմնակիցների գործողությունները գործող Նախագահ Ռոբերտ Քոչարյանը փետրվարի 23-ին որակեց «իշխանությունը զավթելու ոչ լեգիտիմ փորձ» և հայտարարեց, որ պատասխանը կլինի «վճռական և կտրուկ»[832]:

Ընտրություններում հաղթած թեկնածու Սերժ Սարգսյանը փետրվարի 26-ին Նախագահի մյուս թեկնածուներին համագործակցության կոչ արեց, իսկ փետրվարի 29-ին քաղաքական համագործակցության համաձայնագիր ստորագրեց նախագահական ընտրություններում երրորդ տեղը գրաված Արթուր Բաղդասարյանի հետ: Սերժ Սարգսյանի շուրջ մի քանի թեկնածուների և նրանց կողմնակիցների համախմբումն ու համագործակցությունը Լևոն Տեր-Պետրոսյանի թիմում ընդունվեց զայրույթով և առավել սրեց արմատական տրամադրությունները: Համագործակցության կոչը Լևոն Տեր-Պետրոսյանի կողմից մերժվեց[833]:

---

[831] Տե՛ս նույն տեղում:

[832] Տե՛ս ՀՀ Ազգային ժողովի ժամանակավոր հանձնաժողովի եզրակացություն, (http://www.parliament.am/committee_docs_4/LegalCom/15.09.2009(01.03).pdf), էջ 20-23, ինչպես նաև Մարդու իրավունքների պաշտպանի Արտահերթ հրապարակային զեկույցը՝ 2008 թ. փետրվարի 19-ի նախագահական ընտրությունների և հետընտրական զարգացումների վերաբերյալ, էջ 9, 15, 16 (http://www.ombuds.am/library/library/page/101/type/3):

[833] Տե՛ս նույն տեղում:

Փետրվարի 27-ին Ժողովրդական կուսակցության նախագահ Տիգրան Կարապետյանը դիմեց Սահմանադրական դատարան ընտրությունների արդյունքները անվավեր համարելու դիմումով: Նույն պահանջով փետրվարի 29-ին Սահմանադրական դատարան դիմեց նաև Լևոն Տեր-Պետրոսյանը: Նրա ներկայացուցիչները պնդում էին, որ նախընտրական քարոզարշավի ընթացքում, ընտրությունների օրը և արդյունքների վերահաշվարկի ժամանակ եղած խախտումները այն չափերի էին, որ անհրաժեշտ էր չեղյալ համարել ընտրությունների ընդհանուր արդյունքները[834]:

Հակաղիր մղումների պայմաններում աճում էր հասարակության լարվածությունը:

Չնայած գերլարված այս իրավիճակը պետք է հաղթահարվեր խաղաղ ճանապարհով՝ իշխանության ու ընդդիմության միջև հանդուրժողականության ու փոխհամաձայնության միջոցներ գտնելով, բայց նրանց փոխադարձ անհանդուրժողականությունը և փոխզիջման որոնման անհնարինությունը հանգեցրին մարտի 1-2-ին ծավալված դեպքերին:

Մարտի 1-ի առավոտյան Երևանի ազատության հրապարակում տեղի ունեցավ ոստիկանության և ցուցարարների բախում, որից հետո Երևանի քաղաքապետարանին հարող տարածքում հավաքվեցին հազարավոր մարդիկ: Գործողությունները զարգանալով՝ կեսօրից հետո ընթացան անցանկալի սցենարով՝ ջարդուփշուր արվեցին անձնական օգտագործման շուրջ 100 ավտոմեքենա, շտապ օգնության մեքենաներ, ավտոբուսներ, տրոլեյբուսներ, վնասվեցին գրասենյակներ և խանութներ: Ծավալված իրադարձությունների ընթացքում զոհվեց 10 մարդ՝ ոստիկանական 2 ծառայող և 8 քաղաքացիական անձ, վիրավորվեցին մեծ թվով ոստիկաններ և քաղաքացիական անձինք[835]:

---

[834] Տե՛ս նույն տեղում: Ավելի ուշ՝ մարտի 8-ին, Սահմանադրական դատարանը հաստատեց կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2008թ. փետրվարի 24-ի թիվ 24-Ա որոշումը, համաձայն որի փետրվարի 19-ին Հայաստանի Հանրապետության նախագահ է ընտրվել Սերժ Սարգսյանը:

[835] Տե՛ս ավելի մանրամասն ՀՀ Ազգային ժողովի ժամանակավոր հանձնաժողովի եզրակացությունը, էջ 128, 129, (http://www.parliament.am/committee_docs_4/LegalCom/15.09.2009(01.03).pdf), ինչպես նաև Մարդու իրավունքների պաշտպանի Արտահերթ հրապարակային զեկույցը «2008 թ. փետրվարի 19-ի նախա-

Մարտի 1-ի երեկոյան Հայաստանի Հանրապետության գործող նախագահ Ռ. Քոչարյանի հրամանագրով Երևան քաղաքում 20 օրով հայտարարվեց արտակարգ դրություն[836]:

Ակնհայտ է, որ դա պարտադրված քայլ էր, միակ ելքն իրավիճակից դուրս գալու համար: Հրամանագրում նշվում էր. «ՀՀ նախագահի թեկնածու Լ. Տեր-Պետրոսյանի կողմնակիցները շարունակում են վիճարկել ընտրությունների ելքն ապօրինի միջոցներով: Ընդդիմության ներկայացուցիչների մի խումբ մարտի 1-ին անկարգություններ են իրականացրել Երևանի Կենտրոնում՝ պատճառելով վնաս քաղաքացիների և պետության գույքին, ինչպես նաև ստեղծելով ուղղակի սպառնալիք քաղաքացիների անվտանգության համար, ինչը վիճակը դարձնում է անվերահսկելի: Այդ գործողությունների քիրախը ՀՀ ձեռք բերած կայունությունն է, իսկ հետևանքը՝ միջազգային հեղինակության խաթարումը»: Իհարկե, եթե հրամանագիրն ավել վաղ հայտարարվեր, երբ տեղի էին ունեցել առաջին կրակոցներն ու մահվան դեպքերը, գուցե հնարավոր լիներ խուսափել ծանր հետևանքներից:

Սպանված անձանց գործի քննության համար հարուցվեց քրեական գործ: Ազգային ժողովը մարտի 1-ի լույս 2-ի գիշերը հրավիրեց արտահերթ նիստ, որում ընդունվեց հայտարարություն: Հայտարարությամբ Ազգային ժողովը դատապարտեց մարտի 1-ին մայրաքաղաքում խժդժությունների հրահրումը, ատելության և չարության քարոզչությունը քաղաքական գործընթացներում, երկրի կայունությունը, միջազգային վարկը և ազգային միասնությունը խաթարող ցանկացած գործողությունը, անհրաժեշտ և իրավաչափ համարեց հանրապետության նախագահի 2008 թվականի մարտի 1-ին արտակարգ դրություն հայտարարելու մասին հրամանագիրը, քաղաքացիներին զսպվածության և ողջամտության կոչ արեց[837]:

գահական ընտրությունների և հետընտրական զարգացումների վերաբերյալ», (http://www.ombuds.am/library/library/page/101/type/3):

[836] Տե՛սնույն տեղում, «Հայաստանի Հանրապետություն», 6.03.2008:

[837] Տե՛ս http://www.parliament.am/transcript.php?AgendaID=1606&day=02 &month=03&year=2008&lang=arm #02.03.2008, ինչպես նաև http://www.parliament.am /legislation. php?sel=show&ID=3182&lang=arm:

Ընտրությունների վերաբերյալ մարդու իրավունքների պաշտպանը 2008թ. ապրիլի 25-ին հրապարակեց արտահերթ զեկույց, մասնավորապես արձանագրելով, որ ընտրությունների ժամանակ հասարակության մի ստվար մասի դժգոհությունը, համապատասխան ուղղվածություն ստանալով, ձեռք բերեց նոր որակներ: Ակնհայտ սոցիալական և տնտեսական բևեռացումը, հանրային և, հատկապես, իրավապահ մարմինների նկատմամբ գոյություն ունեցող հասարակական անվստահությունը, իշխանության գերկենտրոնացումը, իշխանության երեք թևերի միջև զսպումների և հակակշիռների մեխանիզմի ոչ արդյունավետ գործողությունը, մարդու և քաղաքացու իրավունքների անբավարար երաշխավորված լինելը, արտոնյալ խավի փակ համակարգի ձևավորումը հասարակության մի զգալի մասին դրդեցին կտրուկ և շրջադարձային փոփոխություններ փնտրել այս խնդիրներին լուծումներ տալու համար[838]:

2008 թվականի հունիսի 16-ին Ազգային Ժողովում ստեղծվեց մարտի 1-2-ի իրադարձությունների և դրանց պատճառների ուսումնասիրության ժամանակավոր հանձնաժողով, որը պետք է ուսումնասիրեր տեղի ունեցած բռնությունների, ինչպես նաև ոստիկանության գործողությունների իրավաչափությունն ու համաչափությունը, ճշտեր զոհվածների մահվան հանգամանքները, ինչպես նաև ներկայացներ նման իրադարձությունների կրկնումը բացառող քաղաքական, իրավական և այլ լուծումների առաջարկություններ: Ժամանակավոր հանձնաժողովը պետք է կազմավորվեր Ազգային Ժողովի յուրաքանչյուր խմբակցությունից 2-ական պատգամավորների և մեկ պատգամավոր՝ խմբակցություններում չընդգրկված պատգամավորների մասնակցությամբ: Հանձնաժողովը խորհրդակցական ձայնի իրավունքով պետք է հրավիրեր նաև Լ. Տեր-Պետրոսյանին և արտախորհրդարանական քաղաքական ուժերին[839]:

Հանձնաժողովի աշխատանքներին հրաժարվեցին մասնակցել Լ. Տեր-Պետրոսյանը, «Ժառանգություն» խմբակցությունը և «Ժո-

[838] Տե՛ս http://www.ombuds.am/library/library/page/101/type/3:
[839] Տե՛ս http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=3285&lang=arm:

ղովրդականե կուսակցությունը: Հնարավոր 19 անդամներից հանձնաժողովը կազմավորվեց 15 անձից[840]:

2008թ. հոկտեմբերի 23-ին հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանի կարգադրությամբ ստեղծվեց նույն իրադարձությունների պատճառների վերհանման և բացահայտմանն ուղղված փորձագետների փաստահավաք խումբ: Փաստահավաք խումբը կազմվեց 5 անձից, այդ թվում՝ 2 ներկայացուցիչ իշխող քաղաքական կոալիցիայից, մեկական ներկայացուցիչ Ժառանգությունի կուսակցությունից, Լ. Տեր-Պետրոսյանի կողմից ղեկավարվող քաղաքական ուժից և մարդու իրավունքների պաշտպանից: Նախագահի կարգադրությամբ խումբը լուծարվեց 2009թ. հունիսի 6-ին[841]:

2009թ. սեպտեմբերի 16-ին և 17-ին ժամանակավոր հանձնաժողովը Ազգային ժողովում հրապարակեց շուրջ 138 էջից բաղկացած իր եզրակացությունը[842]: Եզրակացության վերաբերյալ հատուկ կարծիք ներկայացրեցին ժամանակավոր հանձնաժողովի ՀՅԴ ներկայացուցիչները[843]:

Ոստիկանության գործողությունները հանձնաժողովի եզրակացության համաձայն, ընդհանուր առմամբ, գնահատվեցին իրավաչափ և համաչափ:[844] Հանձնաժողովը նաև ներկայացրեց իրավաքաղաքական և սոցիալ-տնտեսական առաջնահերթություններ[845]:

Անդրադառնալով զոհվածների մահվան հանգամանքների ճշտման խնդրին, հանձնաժողովը եզրակացրեց, որ ամենախնդրահարույց և հասարակությանը մտահոգող հարցերից մեկին՝ այն

---

[840] Տե՛ս «2008թ. մարտի 1-2-ին Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների և դրանց պատճառների ուսումնասիրման ՀՀ Ազգային ժողովի ժամանակավոր հանձնաժողովի եզրակացությունը», (http://www.parliament.am /committee docs_ 4/LegalCom /15.09.2009(01.03).pdf):

[841] Տե՛ս http://www.arlis.am/:

[842] Տե՛ս http://www.parliament.am/committee_docs_4/LegalCom/15.09.2009(01.03). pdf:

[843] Տե՛ս http://www.parliament.am/transcript.php?AgendaID=1887&day=17&month= 09&year= 2009&lang=arm#17.09.2009:

[844] Տե՛ս նույն տեղում:

[845] Տե՛ս «2008թ. մարտի 1-2-ին Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների և դրանց պատճառների ուսումնասիրման ՀՀ Ազգային ժողովի ժամանակավոր հանձնաժողովի եզրակացությունը», (http://www.parliament.am/ committee_docs_4/LegalCom /15.09.2009(01.03).pdf):

է՝ ում գործողությունների հետևանքով է վրա հասել մահը, հանձնաժողովը չի պատասխանել, քանի որ իրավունք չունի վերածվելու նախաքննական մարմնի և իրականացնելու վերջինիս լիազորությունները: Սակայն հանձնաժողովն առաջարկեց հատուկ քննչական ծառայությանը ձեռնարկել անհրաժեշտ բոլոր միջոցները՝ բացահայտելու ինչպես մահվան, այնպես էլ բռնությունների, մարմնական վնասվածքներ պատճառելու և մյուս դեպքերը[846]: Ժամանակավոր հանձնաժողովի եզրակացությունը միանշանակ չընդունվեց հասարակության տարբեր հատվածների կողմից: Հանձնաժողովի կողմից ներկայացված առաջարկությունների կատարման վերաբերյալ ՀՅԴ խմբակցությունը առաջարկեց ստեղծել մշտադիտարկման ժամանակավոր հանձնաժողով, որը մերժվեց Ազգային ժողովի մեծամասնության կողմից: Ազգային ժողովը նման իրավասություն վերապահեց Ազգային ժողովի պետա-իրավական հարցերով մշտական հանձնաժողովին[847], որը 2010-2011թ.թ. իրականացնելով մոնիթորինգ՝ Ազգային ժողովին ներկայացրեց պարբերական զեկույցներ: Մարտյան իրադարձությունների ժամանակ անձանց մահվան հանգամանքների պարզման նպատակով հարուցված քրեական գործի առնչությամբ հատուկ քննչական ծառայությունը մոնիթորինգի ընթացքում տեղեկացրեց, որ էական առաջընթաց չի եղել[848]: Հետագայում՝ 2012-2013թ.թ. ընթացքում Ազգային ժողովում փորձեր արվեցին ստեղծել նոր ժամանակավոր հանձնաժողովներ, սակայն դրանք բոլորը մերժվեցին:

Մարտի 1-2-ի դեպքերը քննարկվեցին նաև Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովում և ԵԽԽՎ-ի կողմից Հայաստանի վերաբերյալ մի շարք բանաձևեր ընդունվեցին[849]: Այս բա-

---

[846] Տե՛ս «2008թ. մարտի 1-2-ին Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների և դրանց պատճառների ուսումնասիրման ՀՀ Ազգային ժողովի ժամանակավոր հանձնաժողովի եզրակացությունը», (http://www.parliament.am /committee_docs_4/LegalCom /15.09.2009(01.03).pdf):

[847] Տե՛ս http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=3704&Reading=0, ինչպես նաև http://www.parliament.am/register.php?lang=arm&month=12&year=2009:

[848] Տե՛սhttp://www.parliament.am/committees.php?do=show&ID=111151 &showdoc=1386&cat_id=204&month=all&year=2014&lang=arm

[849] Տե՛սԵԽԽՎ 1609, 1620, 1643 և 1677 բանաձևերը. (http://www.coe.am/index.php?cat_id=38&print=1):

նաճևերը առիթ հանդիսացան հանրապետությունում համաներում հայտարարելու, քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու, ինչպես նաև մի շարք հանրային իրավաքաղաքական լուծումներ իրականացնելու համար:

2008 թվականի մարտի 1-2-ին Երևան քաղաքում տեղի ունեցած ողբերգական իրադարձությունները բացասական բարոյահոգեբանական ազդեցություն թողեցին հայ ժողովրդի տարբեր շերտերի վրա՝ ինչ-որ տեղ նաև խորացնելով ատելության ու անհանդուրժողականության մթնոլորտը, ծանր հարված հասցվեց Հայաստանի Հանրապետության՝ որպես ժողովրդավար պետության միջազգային վարկանիշին:

դ. Կուսակցությունները

Անժխտելի է մնում քաղաքական կուսակցությունների դերը, որոնք կոչված են նպաստելու երկրում ժողովրդավարության հաստատմանը, ժողովրդի քաղաքական մշակույթի, ազգային ինքնագիտակցության բարձրացմանը, պետական մտածողության ձևավորմանը: Դրանք այն կարևոր արժեքներն են, առանց որոնց XXI դարի հայ հասարակությունը չի կարող առաջընթաց ապրել:

Հանրապետության հասարակական-քաղաքական կյանքում իրենց ակտիվությամբ աչքի ընկան մի շարք կուսակցություններ:

Այդ կուսակցություններից կարելի է առանձնացնել 21-րդ դարասկզբին ստեղծված և հասարակական-քաղաքական կյանքում իրենց դերակատարությունը ունեցած երկու կուսակցություն: Դրանցից է 2002 թ. ստեղծված «Ժառանգություն» կուսակցությունը, որն իր շարքերում ուներ 6 հազարից ավելի անդամ, տարածքային 43 ստորաբաժանումներով[850]:

Այն հանրապետության բազմակուսակցական համակարգի ձևավորման գործում ունեցավ այնպիսի դերակատարություն, որ Ազգային ժողովի 4-րդ գումարման ընտրություններում հաղթահարելով անհրաժեշտ 5%-անոց շեմը՝ խորհրդարանում ապահովեց 7 պատգամավորական տեղ:

---

[850] Տե՛ս Աբրահամյան Հ., նշված աշխ., էջ 67, 68:

Հանրապետության ընդդիմադիր դաշտի շուրջ 2 տասնյակ կուսակցություններ ու հասարակական կազմակերպություններ միավորվելով՝ կազմեցին Հայ ազգային կոնգրեսը (ՀԱԿ) կուսակցությունների դաշինքը, որը ձևավորվեց 2008 թ. օգոստոսին՝ ՀՀ առաջին նախագահի ղեկավարությամբ: Կուսակցությունների այս դաշինքը իր մեջ միավորում էր «ՀՀՇ», «Ազատություն», «ՀԺԿ», «Հանրապետություն», «Հայոց հայրենիք», «Պահպանողական» և այլ կուսակցական խմբեր: Ըստ կուսակցություններում ընդգրկվածների նրա անդամների թիվը հասնում էր մի քանի տասնյակ հազարի[851]:

2008 թ. մարտի 21-ին նորընտիր նախագահի նախաձեռնությամբ ու աջակցությամբ հանրապետությունում բարեփոխումներ իրականացնելու, հասարակական համերաշխության մթնոլորտ ապահովելու նպատակով ՀՀ Ազգային ժողովում մեծամասնություն կազմող չորս կուսակցություններ՝ ՀՀԿ-ն, ԲՀԿ-ն, ՕԵԿ-ն ու ՀՅԴ-ն, ստորագրեցին քաղաքական կոալիցիայի համաձայնագիր՝ ստանձնելով երկրի կառավարման պատասխանատվությունը: Վարչապետ նշանակվեց Տիգրան Սարգսյանը[852]:

Պատճառաբանելով, թե իշխանությունների՝ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանն ուղղված քաղաքականությունը չի բխում Հայաստանի շահերից՝ կապված հայ-թուրքական ճանապարհային քարտեզի համաձայնագրի ստորագրման հետ, ՀՅԴ-ն 2009 թ. ապրիլի 22-ին դուրս եկավ կոալիցիայից և հռչակեց, որ ծավալում է կառուցողական ընդդիմադիր գործունեություն[853]:

Մյուս կուսակցություններից շատ գծերով առանձնանում և տարբերվում է «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը, որը ձևավորվելով ավելի ուշ (2004 թ.), շատ կարճ ժամանակամիջոցում մեծ ճանաչում ստացավ: Բավական է նշել, որ 2007 թ. Ազգային ժողովի ընտրությունների նախօրյակին կուսակցությունն իր շարքերում ուներ 300 000-ից ավելի անդամ, տարածքային 41 ստորա-

[851] Տե՛ս նույն տեղում:
[852] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 22.03.2008:
[853] Տե՛ս նույն տեղում:

բաժանումներ և այլն: Եվ միայն այն փաստը, որ Ազգային ժողովի 4-րդ գումարման (2007 թ.) ընտրություններին կուսակցությունը համամասնական ընտրակարգով առաջադրել էր 112 թեկնածու, իսկ մեծամասնականով՝ 13 թեկնածու և, ի վերջո, Ազգային ժողովում ունեցավ 25 պատգամավոր, իսկ իշխող Հայաստանի հանրապետական կուսակցության և «Օրինաց երկիր» ու «ՀՅԴ»-ի հետ կազմեց կոալիցիա, փաստում է լայն զանգվածների վստահության մասին: Սակայն ճշմարտությունը նաև այն է, որ մարդկանց մի զգալի մասը ոչ այնքան գնում էր կուսակցության ծրագրային դրույթների ետևից, այլ ավելի շատ հավատում և վստահում էր կուսակցության առաջնորդին[854]:

ՀՀ նորընտիր նախագահի նախաձեռնությամբ ՀՀ քաղաքական կյանքում սկսեց ձևավորվել նոր, փոխադարձաբար ավելի հանդուրժող մթնոլորտ: Հասարակության հուզող հարցերը վերհանելու, քննարկումներ կազմակերպելու, դրանց լուծման ուղիները մատնանշելու և իրականացնելու նպատակով ՀՀ նախագահի առաջարկով 2008 թ. աշնանը ստեղծվեց Հանրային խորհուրդ, որի կազմում ընդգրկվեցին հասարակական կյանքի բոլոր ոլորտները ընդգրկող մասնագետներ, մտավորականության ներկայացուցիչներ: Հանրային խորհրդի նախագահ ընտրվեց ՀՀ նախկին վարչապետ Վազգեն Մանուկյանը[855]:

ՀԱԿ-ը մարտիմեկյան ողբերգական դեպքերից որոշ ժամանակ անց նորից կազմակերպեց հանրահավաքներ, որտեղ հիմնական պահանջը նախագահական և խորհրդարանական արտահերթ ընտրություններն էին, նաև ձերբակալված ակտիվիստներին՝ որպես քաղաքական բանտարկյալների, ազատելը:

ՀԱԿ-ը՝ 5 կուսակցությունների հետ մասնակցեց 2009 թ. մայիսի 31-ի Երևանի քաղաքապետի, ավագանու ընտրություններին, սակայն հրաժարվեց ավագանու իր 13 մանդատներից (17.57%), քանի որ ընտրություններում մեծամասնություն կազմողը ՀՀԿ-ն էր՝ իր 35 մանդատներով (47.43 %) և ԲՀԿ-ն՝ 17 մանդատներով (26.65

---

[854] Տե՛ս նույն տեղում:

[855] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 22.11.2008:

%)[856]: Շուտով ՀՀ նախագահի նախաձեռնությունը, որը նա դեռևս 2008 թ. մարտի դեպքերից առաջ և հետո առաջարկել էր՝ «քանդել անհանդուրժողության պատը և երկխոսություն սկսել քաղաքական ուժերի միջև», իրականություն դարձավ: 2009 թ. ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի անմիջական նախաձեռնությամբ առաջին անգամ ձևավորվեց ՀՀ կուսակցությունների համատեղ խորհրդակցությունների ավանդույթ: 2011 թ. մայիս-սեպտեմբեր ընկած շրջանում մի քանի անգամ տեղի ունեցավ ՀԱԿ-ի և քաղաքական կոալիցիայի ներկայացուցիչների երկխոսություններ, որոնք քաղաքական մշակույթի ձևավորման առումով շատ կարևոր էին, քանզի ցանկացած դեպքում դրական ազդեցություն կարող էին ունենալ երկրի ներքին կայունության վրա:

Դեռևս երկխոսությունը սկսելուց առաջ 2011 թ. մայիսի 28-ին ՀՀ նախագահի կողմից համաներման իրավունքով բանտից ազատ արձակվեցին ՀԱԿ-ի մի շարք ակտիվիստներ ու հավաքների կազմակերպիչներ[857]: Ինչպես նաև նրանց հանրահավաքները թույլատրվեց անցկացնել Ազատության հրապարակում: Այդ ամենը անշուշտ նպաստեց երկխոսության կայացմանը: Ուստի պատահական չէ, որ երկու փուլով իրականացվեց երկխոսությունը մի կողմից ՀԱԿ-ի, մյուս կողմից՝ իշխող կոալիցիայի ներկայացուցիչների միջև՝ սկսած հունիս-հուլիսից մինչև օգոստոս-հոկտեմբեր ամիսները: Սակայն երկրի ներքին կայունության համար բանտարկյալների մի մասի ազատումից հետո էլ ՀԱԿ-ի ներկայացուցիչները նորից պահանջում էին արտահերթ ընտրություններ և ՀՀ նախագահի հրաժարականը, որը անհնարին էր դարձնում երկխոսության վերջնական փուլը: Սակայն կարևոր ձեռքբերում էր փոխադարձ հանդուրժողական մթնոլորտի ձևավորումը:

2012 թ. փետրվարին «Հայաստանի Հանրապետական», «Օրինաց երկիր» և «Ժառանգություն» կուսակցությունները դարձան եվրոպական ժողովրդական կուսակցության անդամ՝ դիտորդ-անդամի կարգավիճակով: Սա նշանակում է, որ նրանք ամբողջութ-

[856] Տե՛ս Աբրահամյան Հ., նույն տեղում, «Հայաստանի Հանրապետություն», 1.06.2008:
[857] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 28.05.2011:

յամբ մասնակցելու են ԵԺԿ-ի քաղաքական կյանքին, որը մեծ կարևորություն ունի Հայաստանի Հանրապետության համար:

Կուսակցությունները ակտիվ աշխատանքներ տարան 2012թ. մայիսին կայանալիք խորհրդարանական ընտրություններին մասնակցելու համար:

Հասարակության ակտիվության պայմաններում ընթացան Ազգային ժողովի հինգերորդ գումարման 2012 թ. մայիսի 6-ի խորհրդարանական ընտրությունները համամասնական 90, մեծամասնական 41 պատգամավորների տեղերի համար: Ընտրություններին մասնակցեցին 8 կուսակցություններ և մեկ դաշինք: Դրանք են՝ «Հայ յեղափոխական դաշնակցություն» (ՀՅԴ), «Հայաստանի դեմոկրատական կուսակցություն» (ՀԴԿ), «Հայաստանի կոմունիստական կուսակցություն» (ՀԿԿ), «Հայաստանի հանրապետական կուսակցություն» (ՀՀԿ), «Բարգավաճ Հայաստան» (ԲՀԿ), «Օրինաց երկիր» (ՕԵԿ), «Միավորված հայեր» կուսակցությունները և մեկ Կուսակցությունների դաշինք՝ «Հայ ազգային կոնգրես» (ՀԱԿ): Մեծամասնական և համամասնական ընտրապայքարում ընդգրկվեցին 1026 պատգամավորության թեկնածուներ, որից 230-ը կանայք էին: Խորհրդանական այս ընտրություններին հանրապետությունում պաշտոնապես գրանցված 77 կուսակցություններից վերը նշված կուսակցությունների և դաշինքի կազմում մասնակցեցին 31-ը՝ իրենց ներկայացուցիչներով: Այսինքն՝ Հայաստանյան քաղաքական կուսակցությունների կեսից ավելին ինչ-ինչ պատճառներով ի վիճակի չէին մասնակցելու ընտրություններին, մինչդեռ մանավանդ խորհրդարանական ընտրությունները յուրաքանչյուր կուսակցության համար սեփական վարկանիշը, հնարավորությունները ստուգելու, ծրագրերն ու նպատակները տեսանելի դարձնելու, համախոհներ ձեռք բերելու լավագույն միջոց էին:

Առաջին անգամ խորհրդարանական ընտրություններին մասնակցեց «Միավորված հայեր» կուսակցությունը, որի անդամների թիվը 4 հազար էր, 32 անդամով:

2012 թ. մայիսի 6-ին կայանալիք խորհրդարանական ընտրությունները ազատ, արդար, թափանցիկ, եվրոպական չափանիշներին հարիր անցկացնելու, հանրության և քաղաքական կուսակ-

ցությունների ջանքերը՝ միավորելու նպատակով ապրիլի 4-ին ԱԺ ընտրություններին մասնակից քաղաքական չորս ուժեր՝ ԲՀԿ-ն, ՀՅԴ-ն, ՀԱԿ-ն ու Ժառանգությունը՝ իրենց ներկայացուցիչների միջոցով ստորագրեցին համատեղ հռչակագիր ընտրությունների հանրային վերահսկողության միջկուսակցական միասնական շտաբ ձևավորելու վերաբերյալ:

Մայիսի 6-ին կայացած խորհրդարանական ընտրություններում բացարձակ հաղթանակ տարավ ՀՀԿ-ն՝ ՀՀ նախագահի գլխավորությամբ՝ 44,02% (69 պատգամավորական մանդատ): ԲՀԿ-ն երկրորդն էր՝ 30,12% (37 մանդատ): Մյուս կուսակցություններից 5%-ից 7%-ի շեմը հաղթահարեցին և խորհրդարան մտան ՕԵԿ-ը՝ 5,51%՝ (6 մանդատ), ՀՅԴ-ն՝ 5,67%՝ (5 մանդատ), Ժառանգությունը՝ 5,76% (5 մանդատ) և ՀԱԿ-ը՝ որպես կուսակցությունների դաշինք՝ 7,8% (7 մանդատ): ԲՀԿ-ն հրաժարվեց կոալիցիայի մեջ մտնելուց: ՀՀԿ-ն ՕԵԿ-ի հետ ձևավորեց նոր կառավարություն: Կրկին վարչապետ նշանակվեց Տիգրան Սարգսյանը, իսկ ՀՀ Ազգային ժողովի նախագահ ընտրվեց Հովիկ Աբրահամյանը[858]:

ՀՀ նախագահական վեցերորդ ընտրություններն անցկացվեցին 2013 թ. փետրվարի 19-ին: ՀՀ նախագահի յոթ թեկնածուներից առավել շատ ձայներ հավաքեցին ՀՀ գործող նախագահ Սերժ Սարգսյանը՝ 58,64% և «Ժառանգություն» կուսակցության ղեկավար Րաֆֆի Հովհաննիսյանը՝ 36,74%: Մյուս թեկնածուներից ոչ մեկը չհաղթահարեց 5 տոկոսի շեմը: ՀՀ նախագահ վերընտրվեց Սերժ Սարգսյանը[859]:

ե. Պատերազմի սպառնալիքը և բարեփոխումները հայկական բանակում

2000 թվականների առաջին տասնամյակում Հայաստանի և հայ ժողովրդի անվտագության համար ռազմական առումով հիմնական սպառնալիքը շարունակում է մնալ ղարաբաղյան հակա-

[858] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 15.05.2012:
[859] Տե՛ս նույնը, 26.02.2013:

մարտության չկարգավորվածությունը: Չէին դադարում Ադրբեջանի ղեկավարության կողմից հնչեցվող ռազմատենչ հայտարարությունները, ԼՂՀ-ի և ՀՀ-ի դեմ ռազմական գործողություններ վերսկսելու սպառնալիքները: Անթաքույց ռազմական պատրաստությունները դարձել էին Բաքվի իշխանությունների հիմնական զբաղմունքը: Հայաստանի Հանրապետության տնտեսական ու տրանսպորտային շրջափակումը Ադրբեջանի և Թուրքիայի կողմից՝ վկայում են Ադրբեջանի ագրեսիվ պահվածքի մասին: Թուրքիան Ադրբեջանին ծավալուն ռազմական ու դիվանագիտական օգնություն էր ցուցաբերում: Այդ ամենը ՀՀ զինված ուժերից պահանջում էր բարձր մարտական պատրաստականություն, մարտունակություն ու զգոնություն: Հայաստանի Հանրապետության համար պաշտպանական ոլորտում անվտանգության ապահովման գլխավոր միջոցը հանդիսացավ համակարգված պաշտպանական քաղաքականությունը, որի մշակումը և իրագործումը կատարվեց պետության ռազմաքաղաքական ղեկավարության կողմից՝ երկրի նախագահի՝ Զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարի գլխավորությամբ: Պաշտպանական քաղաքականությունը իրագործվեց տարբեր ուղղություններով՝ ներքին ու արտաքին, ինչպես նաև տարբեր ոլորտներում՝ ռազմական, տնտեսական, ֆինանսական, իրավական, գիտակրթական, հոգեբանական և այլն:

Ստեղծվեցին ժամանակակից բանակներին համապատասխան ստորաբաժանումներ ու ենթակառուցվածքներ, այդ թվում՝ մի շարք ռազմաուսումնական հաստատություններ: 2005 թ. դեկտեմբերին հիմնադրվեց ՀՀ անվտանգության և պաշտպանության հարցերի ուսումնասիրման գիտակիրառական հաստատությունը՝ ՀՀ ՊՆ Դրաստամատ Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտը (ԱՌՀԻ)[860]:

2005 թ սկսած՝ համապետական բարեփոխումների համատեքստում սկսվեցին նաև ՀՀ զինված ուժերի բարեփոխումների նախապատրաստական աշխատանքները: Ի սկզբանե պաշտպանական բարեփոխումների իրականացման համար որդեգրվեցին հետևյալ հիմնական նպատակները. ա) զինված ուժերի արդիակա-

[860] Տե՛ս Հայաստան 1998-2007, էջ 97:

նացում և մարտունակության ամրապնդում՝ ժամանակակից չափանիշների ներդրմամբ, բ) ՀՀ ռազմական անվտանգության ապահովում՝ իրական և հնարավոր ռազմական սպառնալիքների ճշգրիտ գնահատմամբ, գ) զինված ուժերի կողմից միջազգային անվտանգության ապահովման մասնաբաժնի ստանձնում՝ միջազգային անվտանգության տարբեր կառույցների հետ փոխգործակցելիության հնարավորությունների ընդլայնմամբ, դ) զինված ուժերի կայուն ու համակողմանի զարգացման ապահովում՝ ղեկավարման ու կառավարման ճկուն, թափանցիկ և արդյունավետ համակարգերի ներդրմամբ[861]:

Ջուգահեռաբար ՀՀ պաշտպանական գերատեսչությունը և ռազմաքաղաքական ղեկավարությունը սկսեցին բանակցություններ վարել ՀՀ ռազմական գործընկերների հետ՝ պաշտպանական բարեփոխումների համար անհրաժեշտ խորհրդատվություն և օժանդակություն ապահովելու համար: Այս ամենի արդյունքում 2005-2006 թթ. ընթացքում հստակեցվեցին պաշտպանական բարեփոխումների իրականացման ձևերն ու ընթացակարգերը, պլանավորվեցին անհրաժեշտ ռեսուրսներ, ստեղծվեցին համապատասխան օղակներ: Սպառնալիքների վերլուծությունը, գնահատումը, դրանց դիմակայման միջոցները և ՀՀ անվտանգ ու կայուն զարգացման ուղիները նախանշվեցին 2007 թ. փետրվարի 7-ին ՀՀ նախագահի՝ Ռ. Քոչարյանի հրամանագրով հաստատված «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն» (Ռազմական դոկտրին) փաստաթղթում[862]: Դրա նախագիծը մշակվեց Հայաստանի Հանրապետության նախագահին առընթեր ազգային անվտանգության խորհրդի քարտուղար, այն ժամանակ ՀՀ պաշտպանության նախարար, այժմ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի գլխավորած միջգերատեսչական հանձնաժողովի կողմից, որի քարտուղարության դերը ստանձնեց ՀՀ ՊՆ

---

[861] Տե՛ս Քոթանջյան Հ., Անվտանգության քաղաքագիտական պրոբլեմներ. ԽՍՀՄ վերակառուցում – Ղարաբաղ, Հայաստան, Անդրկովկաս-Աֆղանստան, Երևան, 2009, էջ 81:

[862] Տե՛ս ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարություն՝ «Հայկական բանակ», 2007, հատուկ թողարկում, էջ 5, 6:

ԱՌՀԻ-ին: «Ռազմավարության» մեջ անփոփվեց երկրի քաղաքական ղեկավարության տեսլականը Հայաստանի անվտանգ ու կայուն զարգացման վերաբերյալ: Այն նախանշեց նաև ՀՀ ազգային անվտանգության գերատեսչական ծրագրերի ռազմավարության իրագործումը, իսկ պաշտպանության ոլորտում՝ մշակվող ռազմական դոկտրինը:

Նույն տարվա դեկտեմբերի 25-ին հաստատվեց ՀՀ ռազմական դոկտրինը[863]: Մշակվեց և 2008 թ. նոյեմբերի 27-ին ընդունվեց «Պաշտպանության մասին» ՀՀ նոր օրենքը, որը հստակորեն տարանջատեց պաշտպանության նախարարության և ԶՈՒ գլխավոր շտաբի գործառույթները[864]: 2009 թվականից սկսվեց և ավարտին հասցվեց ՊՆ-ում քաղաքացիական հատուկ ծառայության ստեղծումը: Պաշտպանության ռազմավարական վերանայման ընթացքում մշակվեցին նաև մի շարք հայեցակարգային ու ծրագրային փաստաթղթեր, իրականացվեց օպերատիվ և վարչական ընթացակարգերի, անձնակազմի կառավարման մեխանիզմի գնահատման կարգը:

Ռազմաքաղաքական գործունեությունը նպաստեց ՀՀ միջազգային ռազմական համագործակցության ակտիվացմանը, ինչպես միջազգային և տարածաշրջանային կազմակերպություններին Հայաստանի անդամակցության, այնպես էլ երկկողմ հարաբերությունների ձևաչափով: ՀՀ ռազմական քաղաքականության արտաքին բաղադրիչում տեղի ունեցավ սկզբունքային փոփոխություն՝ պայմանավորված արտաքին քաղաքականության մեջ փոխլրացման սկզբունքի որդեգրմամբ, ԱՊՀ-ի և ՌԴ-ի հետ ռազմաքաղաքական համագործակցության ամրապնդմամբ: Այս տեսանկյունից մեծ նշանակություն ունեցավ 2002 թ. հոկտեմբերին Հայաստանի Հանրապետության ակտիվ ռազմական համագործակցության ծավալումը ՀԱՊԿ-ի (հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության) շրջանակներում[865]: Այն դարձավ ոչ միայն երկրի անվտանգության կարևոր բաղադրատարրը,

---

[863] Տե՛ս Օհանյան Ս., Հայկական բանակի 20-ամյա տարեգրությունը, էջ 323:
[864] Տե՛ս նույն տեղում:
[865] Տե՛ս նույն տեղում:

այլև արտոնյալ պայմաններ ընձեռեց ռազմատեխնիկական մատակարարումների և ամենամյա համատեղ զորավարժությունների միջոցով բանակի մարտունակության բարձրացմանը:

2009 թ. հունիսին Մոսկվայում ստորագրվեց «ՀԱՊԿ օպերատիվ արձագանքման հավաքական ուժերի» մասին համաձայնագիր, որը ամբողջացրեց օպերատիվ արձագանքման հավաքական ուժերի ստեղծումը և Հայաստանի համար հավաքական անվտանգության ապահովման գործուն մեթոդներ մշակեց[866]:

Կարևոր քայլ էր Հայաստանի անդամակցությունը Եվրաատլանտյան գործընկերության խորհրդին, որի շրջանակներում ՀՀ ռազմաքաղաքական ղեկավարությունը պարբերաբար մասնակցում էր անվտանգության հարցերի շուրջ Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպության (ՆԱՏՕ-ի) ռազմաքաղաքական ղեկավարության խորհրդակցություններին: Ստեղծվեց և ՀԽ ծրագրում ընդգրկվեց զինված ուժերի խաղաղապահ գումարտակը: 2003 թվականին մեր երկիրը հյուրընկալեց «Համատեղ լավագույն ջանք 2003», իսկ 2008 թվականին՝ «Համատեղ աղեղ և համատեղ նիզակակիր» զորավարժությունները: 2005 թվականին հաստատվեց Հայաստան-ՆԱՏՕ անհատական գործընկերության գործողությունների ծրագիրը: ՆԱՏՕ-ի հետ համագործակցության ծրագիրը, որը նախատեսված էր հետագա 10 տարիների համար, նպաստում է միջազգային փորձի հաշվառմամբ իրականացվող բարեփոխումների միջոցով հանրապետության պաշտպանական ոլորտի, մասնավորապես բանակի համապարփակ արդիականացման ընթացքին: ՀՀ-ն ակտիվորեն համագործակցում է ՀԱՊԿ-ի և ՆԱՏՕ-ի հետ նաև միջազգային ահաբեկչության դեմ պայքարում: ՀՀ-ի համագործակցությունը ՆԱՏՕ-ի հետ իր դրսևորումը ստացավ Կոսովոյում, Աֆղանստանում և Իրաքում իրականացված խաղաղապահ գործողություններում[867]: 2004 թ. փետրվարին ՀՀ ՋՈՒ առաջին խաղաղապահ դասակը տեղակայվեց Կոսովոյում՝ հունական գումարտակի կազմում: 2010 թ. Հայաստանը Աֆղանստանի Կունդուզ քաղաքի մերձակայքում գերմանական հրամանատարության

---

[866] Տե՛ս նույն տեղում, էջ 360, 361:

[867] Տե՛ս Քոթանջյան Հ., Նշված. աշխ., էջ 121:

ներքո տեղակայեց 40 զինծառայողից կազմված զորախումբ: Այնուհետև, 2011 թվականին Աֆղանստանում տեղակայվեցին ևս երկու լրացուցիչ հրաձգային դասակներ 81 զինծառայողով և հետևազորի հինգ հրահանգիչներով: ՀՀ ԶՈՒ-ի խաղաղապահ ստորաբաժանման և մասնագետների մասնակցությամբ Հայաստանը դարձավ միջազգային անվտանգության ակտիվ մասնակից, որը զգալիորեն բարձրացրեց Հայաստանի ռազմաքաղաքական հեղինակությունը միջազգային ասպարեզում[868]: Զինված ուժերի մարտունակության բարձրացման համար կարևորագույն գործընթաց է նաև համագործակցությունը այլ երկրների զինված ուժերի հետ, փորձի փոխանակումը, մասնակցությունը տարբեր զորավարժություններին: 2009 թ. ընթացքում շարունակվեց համագործակցությունը ռազմավարական գործընկերոջ՝ Ռուսաստանի Դաշնության հետ: Նոր որակ ու թափ ստացավ Հայաստան-Գերմանիա ռազմաքաղաքական երկխոսությունը, որին նպաստում էր այն հանգամանքը, որ Աֆղանստանում ՀՀ ԶՈՒ խաղաղապահ ստորաբաժանումը գործում էր գերմանական հրամանատարության ներքո: Զարգացավ համագործակցությունը Բելոռուսի, Ղազախստանի, Ուկրաինայի, ԱՄՆ-ի, Հունաստանի, Միացյալ Թագավորության, Լեհաստանի, Բուլղարիայի, Ռումինիայի հետ:

2010 թ. ՀՀ-ի հետ երկկողմ ռազմական համագործակցության ծրագրեր իրականացնող պետությունների շարքում ավելացան Հունգարիան, Սլովակիան, Ֆրանսիան և Չեխիան[869]:

Կարելի է հատկապես առանձնացնել մասնակցությունը ՀԱՊԿ-ի շրջանակներում ՌԴ Չերքակուլ քաղաքում անցկացված «Փոխգործակցություն-2010» զորավարժությանը, որտեղ մարտական հրաձգության ընթացքում ցուցաբերած լավագույն արդյունքների համար Հայաստանը ներկայացնող մոտոհրաձգային վաշտն արժանացավ զորավարժության ղեկավարության գավաթին[870]:

2007 թ. սկսված՝ պաշտպանական բարեփոխումների շրջանակներում 2009 թ. հաջողությամբ գործարկվեց ՀՀ ՊՆ և ԶՈՒ ԳՇ

[868] Տե՛ս Օհանյան Ս., Նշված. աշխ., էջ 336, 339:
[869] Տե՛ս նույն տեղում, էջ 341:
[870] Տե՛ս նույն տեղում:

նոր կառուցվածքը, ՀՀ ՊՆ-ում ստեղծվեցին պաշտպանական քաղաքականության վարչություն, նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտ, տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչություն, ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբում՝ ռազմավարական պլանավորման վարչություն, ակտիվացավ ՀՀ ԶՈՒ պրոֆեսիոնալ սերժանտական համակարգի ներդրման գործընթացը, շարունակվեց ՀՀ խաղաղապահ բրիգադի համալրումը: Սկսվեց ռազմարդյունաբերական ոլորտի բարեփոխումների գործընթացը, մշակվեցին ՀՀ ռազմական արդյունաբերության հայեցակարգի և ռազմարդյունաբերական զարգացման 2011-2015 թթ. պետական ծրագրեր: 2010 թվականից ՀՀ ԶՈՒ պրոֆեսիոնալ սերժանտական համակարգի զարգացման գործընթացը մտավ հայեցակարգային բնույթի որոշումների կատարման փուլ, գործնականում սկսեց իրականացվել ՀՀ պաշտպանական բարեփոխումների 2010-2015 թթ. ծրագիրը: Հիմնական խնդիրները մարտական ներուժի, մարտական ու զորահավաքային պատրաստականության պահպանումն էր այն մակարդակում, որը երաշխավորված ճնով ապահովում էր ՀՀ ինքնուրույնության, անկախության և տարածքային ամբողջականության, պետական սահմանի հուսալի պաշտպանությունը, Հայաստանի և Արցախի ժողովրդի խաղաղ, ստեղծագործ աշխատանքը: Զգալի գործ կատարվեց պաշտպանական շրջանների, զորամասերի և ստորաբաժանումների դիրքերի ինժեներական ամրացման աշխատանքներում:

Զորային կառույցի բարեփոխման նպատակով տեղի ունեցան որոշակի կառուցվածքային փոփոխություններ, վերակազմավորվեցին մի շարք զորամասեր ու ստորաբաժանումներ, ինչի արդյունքում բարձրացավ դրանց մարտունակության աստիճանը, մեծացան կրակային խոցման հնարավորությունները: Լուրջ ուշադրություն դարձվեց մարտական պատրաստականության խնդիրներին՝ մարտավարաշարային տարբեր զորավարժություններին ու զորախաղերին: Պաշտպանական բանակի հակահարձակողական զորավարժությունը իրականացավ 2011 թ., որին անձամբ

մասնակցեց ՀՀ ԶՈՒ գերագույն գլխավոր հրամանատարը[871]: Զորավարժությունն անցավ պատշաճ մակարդակով և տարբերվում էր ինչպես իր ծավալով, այնպես էլ ղեկավարման համակարգի կատարելագործմամբ, մարտավարական խնդիրների կատարման որակով, ինժեներական աշխատանքների պատշաճ իրականացմամբ ու նաև կրակային պատրաստության, կրակային խոցման մեծ չափերով. դրանք օգնում էին զինվորին իրեն առավել ապահով զգալու իսկական մարտադաշտում, հոգեբանորեն վարժվելու «մարտ» հասկացության պայմաններին: Բանակն ամեն տարի կատարելագործվում էր, դառնում ավելի մարտունակ, ավելի կազմակերպված, կարգապահ:

Հատուկ ուշադրություն էր դարձվում հակաօդային պաշտպանությանը, ավիացիայի, հրետանու, հետախուզության, կապի, ռադիոէլեկտրոնային զորամասերի և ստորաբաժանումների կատարելագործմանը: Բանակի արագաշարժությունը ապահովելու համար այն համալրվել է զինված պայքարի առաջատար բոլոր միջոցներով:

Զորամիավորումների և զորամասերի մարտական պատրաստության խնդիրների հաջող կատարման համար վերամշակվեցին և գործողության մեջ դրվեցին մարտական պատրաստության նոր, արդիական ծրագրեր, ինչպես նաև մարտական կանոնադրություններ, հրահանգներ, սպաների և ենթասպաների հրամանատարական պատրաստության ծրագրեր, հրաձգային և մարտական մեքենաների վարման դասընթացներ:

2009 թ. անցկացվեցին դաշտային երթեր, շտաբային զորավարժություններ ու մարտավարական մարզումներ, որոնք զինված ուժերի պատմության մեջ ծավալով առաջինն էին: Աննախադեպ էր նաև զորամիավորումների մարտական պատրաստության բաժինների և զորամասերի հրամանատարների ստուգողական հավաքը: 2010 թվականը համարվեց «Գիտելիքների տարի»: Այդ տարում մեծ ուշադրություն դարձվեց զինծառայողի անհատական պատրաստությանը՝ կարևորելով մասնագիտական որակների

[871] Տե՛ս Օհանյան Ս., նույն տեղում, էջ 346:

կատարելագործումը՝ մարտական վարպետության աստիճանը, ունակություններն ու հմտությունները, ֆիզիկական և հոգևոր պատրաստվածության մակարդակը[872]:

Չափազանց կարևոր է, որ վերջին տարիներին, հատկապես ուսումնական գործընթացում, զորավարժությունների ժամանակ ձեռք բերված գիտելիքները օգտագործվում են սահմանների պաշտպանության, մարտական խնդիրների կատարման ժամանակ: Սրա վկայությունը 2010 և 2011 թթ. տեղի ունեցած մի շարք դեպքերն են, երբ սահմանը խախտած դիվերսանտները անմիջապես վնասազերծվեցին հայ զինծառայողների կողմից: Օրինակ, 2010 թ. հուլիսի 13-ին Քարվաճառում տեղակայված զորամասի պահպանության գոտում պետական սահմանը խախտած հակառակորդի զինված խումբը հայկական ուժերի կողմից ստացավ արժանի հակահարված և ստիպված եղավ նահանջել: Նույն թվականի սեպտեմբերի 4-ին ՊՔ 49971 զորամասի պահպանության գոտի ներխուժած հակառակորդը՝ շնորհիվ մեր զինծառայողների աչալրջության և քաջության, ստացավ մահացու հարված: Այդ նույն ժամանակ մեր զինվորը ձեռնամարտում հաղթելով հակառակորդի հատուկ ստորաբաժանման դիվերսանտին՝ ձերբակալեց նրան: Նույն տարում N70179 և N51191 զորամասերի հայ զինվորները վտանգելով իրենց՝ փրկեցին համածառայակիցների կյանքը, վնասազերծեցին աղրբեջանցի դիվերսանտներին: 2011 թ. հոկտեմբերին ՀՀ նախագահն այցելեց ԼՂՀ-ում մարտական հերթապահության ժամանակ աղրբեջանական դիվերսանտներին վնասազերծած Արտակ Ղաբուզյանին և նրա հերոսության համար իբրև նվեր ընտանիքին հատկացրեց երեքսենյականոց բնակարան[873]:

Պաշտպանական բարեփոխումների շրջանակում չափազանց կարևորվում է հայկական բանակի սպառազինության մակարդակը: 2000-2012 թթ. տեխնիկական ապահովման ջանքերն ուղղվեցին սպառազինության և ռազմական տեխնիկայի հուսալի ու ան-

[872] Տե՛ս նույն տեղում:
[873] Տե՛ս նույն տեղում:

խափան շահագործմանը, տեխնիկական համակարգի կատարելագործմանը, հրթիռների, զենքի, զինամթերքի, պահեստամասերի և ռազմատեխնիկական ունեցվածքի պաշարների կուտակմանը: Պետական պատվերի ձևով հայկական ռազմաարդյունաբերական համալիրի ձեռնարկություններում սկսվեց պաշտպանական նշանակության արտադրատեսակների մշակման, արտադրական տեխնոլոգիաների ստեղծման և արտադրության նպատակային ֆինանսավորման գործընթացը: Ռազմաարդյունաբերական համալիրի կազմակերպություններն իրականացրին պետական պաշտոնական պատվերների կատարման աշխատանքներ՝ նպատակ ունենալով ՀՀ զինված ուժերը մատակարարել սեփական արտադրության զինատեսակներ և նյութատեխնիկական պաշարներ, նորոգել, արդիականացնել շահագործվող սպառազինությունը և ռազմական տեխնիկան, ստեղծել նոր փորձանմուշներ: Մասնավորապես մեծ են հաջողությունները օպտիկա-էլեկտրոնային և ռադիոտեխնիկական հետազոտման ու խոցման համալիր նմուշների պատրաստման գործում: 2010-2012 թթ. շարունակվեց հայոց բանակը տեխնիկայով համալրելու գործընթացը: ՀՀ ՋՈՒ-ն համալրվեց հակաօդային պաշտպանության համակարգերով, կրակային խոցման նորագույն միջոցներով, հաջողվեց ստեղծել զինամթերքի լուրջ պաշարներ: Շարունակվեց սպառազինության և ռազմական տեխնիկայի արդիականացումը հայրենական արտադրության միջոցներով: Սպառազինության և ռազմական տեխնիկայի շահագործման ու մարտական կիրառման ուսուցման և հմտությունների ձեռքբերման նպատակով մշակվել ու արտադրվել են տարբեր վարժասարքեր, ստեղծվել է ուսումնական հայրենական նյութատեխնիկական բազա, մշակված և արտադրության մեջ ներդրված սպառազինության և ռազմական տեխնիկայի որոշ տեսակներ ցուցադրվել են արտերկրյա ցուցահանդեսներում: Որոշ համակարգեր և համալիրներ հիմք են հանդիսացել արտերկրի հետ կոոպերացիոն կապերի ստեղծման և ռազմատեխնիկական համագործակցության խորացման համար: 2011 թ. նոր թափով ընթացան հայրենական արտադրության արտադրատեսակների մշակումն ու վարժասարքերի նորոգումը: Առաջին անգամ ՀՀ ար-

տաղրատեսակները հաջողությամբ ներկայացվեցին արտերկրում, մասնավորապես Ռուսաստանի Դաշնությունում և Հունաստանում կազմակերպված «Ժուկովսկու մեքենաշինական տեխնոլոգիաներ» և Սալոնիկի «Defences-2010» միջազգային ցուցահանդեսներում: Տարին նշանավորվեց նաև Ռուսաստանի Դաշնության, Լեհաստանի, Բելոռուսի, Խորվաթիայի հետ ռազմատեխնիկական կապերի ամրապնդմամբ[874]:

2011 թ. սեպտեմբերի 21-ին Հայաստանի Հանրապետության անկախության 20-ամյա հոբելյանին նվիրված զորահանդեսի ժամանակ ի ցույց աշխարհի հանրապետության հրապարակում առաջին անգամ ցուցադրվեցին 9472 «Էլբա» օպերատիվ մարտավարական և 9479-1 «Տոչկա» հրթիռային համալիրները, ինչպես նաև Ս-300 ՋՀՀ-ները: Բացի այդ որպես նորություն ցուցադրվեցին հայկական արտադրության «Կոռնեկ»-25 անօդաչու թռչող ապարատները (ԱԹԱ-ները և տեխնիկական այլ նմուշներ) և այլն: Այս զորահանդեսին առանձին շարասյունով մասնակցեցին հատուկ նշանակության ստորաբաժանումները, սահմանապահները, ներքին զորքերը, ոստիկանությունը, Ռուսաստանի Դաշնության զորքերը և այլն[875]:

Բանակ-հասարակություն կապի ու ժողովրդական համախմբվածության առումով խիստ խորհրդանշական էր հոգևորականների, ազատամարտիկների առանձին շարասյուների անցումը հանրապետության հրապարակով: Անչափ կարևոր էր, որ ժողովուրդը զգար բանակի ուժը, իսկապես համոզված լիներ, որ ինքը պաշտպանված է հուսալիորեն: Այս տեսակետից նույնպես սեպտեմբերի 21-ի զորահանդեսն իր դերը կատարեց:

Պաշտպանական ոլորտի բարեփոխումների շրջանակում բավականին մեծ աշխատանք կատարվեց բանակ-հասարակություն կապերի զարգացման ուղղությամբ: 2009 թ. այդ նպատակով ստեղծվեց հասարակական խորհուրդ, որը ակտիվ աշխատանք տարավ գիտության և կրթության ոլորտի մասնագետների կողմից

[874] Տե՛ս նույն տեղում, ՀՀ Պաշտպանության նախարար Ս. Օհանյանի 2012 թ. տարեմուտի ուղերձը, էջ 12, 13:
[875] Տե՛ս նույն տեղում:

«Պատմություն և մշակույթ» խորագրով հայկական զորամասերում դասախոսություններ կարդալու, զինվորների ռազմահայրենասիրական, դաստիարակության բարձրացման համար: Նույն տարում ՀՀ պաշտպանության և ԿԳ նախարարների մայիս ամսվա համատեղ հրամանով վերանայվեց նախկինում ՀՀ հանրակրթական դպրոցները ՀՀ զինված ուժերին կցագրելու վերաբերյալ հրամանը, և հանրապետության 450 կրթօջախներ կցագրվեցին զինված ուժերի զորամասերին: Կահավորվեցին ռազմագիտական լսարաններ, մեծ աշխատանք կատարվեց նաև բանակ-բուհեր կապերի ամրապնդման ուղղությամբ, հանրապետության առաջատար բուհերը կցագրվեցին ՊՆ ղեկավար անձանց: Այդ համագործակցությունը կարևոր էր մանավանդ ռազմական ոլորտում հանրապետության գիտական ներուժի օգտագործման տեսանկյունից: 2011 թվականի առաջին կիսամյակը հայոց բանակում հայտարարվեց «Կարգապահության ամրապնդման կիսամյակ»: Գրանցվեց կարգապահական խախտումների հետևանքով պատահարների քվի զգալի նվազում: 2011 թ. ընթացքում բանակում տեղի ունեցած հանցագործությունների քիվը նվազել է 10%-ով: Միաժամանակ առավել հուսադրող է այն, որ 2011 թ. 33.3%-ով նվազել է մահվան ելքով հանցագործությունների քիվը: 2010 թ. 54 դեպքի համեմատ 2011 թ. արձանագրվել է մահվան ելքով 36 դեպք, որոնցից 30-ը հանցագործության հետևանք են, նշված 30-ից 10-ը կատարվել են հակառակորդի կողմից: Հատկապես նկատելի է ծառայության անցնելու հետ կապված սպանության դեպքերի նվազում. 2011 թ. արձանագրվել է երկու դեպք՝ 2010 թ. 17-ի համեմատ[876]: Այսինքն՝ այս ցուցանիշը նվազել է 80%-ով: Իհարկե, բանակում մահվան մեկ դեպքն էլ մտահոգիչ է: 2010-2012 թթ. ՀՀ զինվորական դատախազությունը քննչական ծառայության հետ և հասարակության աջակցությամբ շարունակեց հանցագործությունների կանխարգելման, բացահայտման և հանցագործություն կատարած յուրաքանչյուր անձին համարժեք պատասխանատվության ենթարկելու գործընթացը: Դա էլ իր հերթին նպաստեց կարգապա-

[876] Տե՛ս Օհանյան Ս., Նշվ. աշխ., էջ 249:

հության բարձրացմանն ու հանցավորության նվազմանը: Քանակում կարգապահությանը նպաստեցին նաև ՊՆ զանգվածային լրատվամիջոցներում պարբերական անդրադարձերը, դատական նիստերի լուսաբանումը և այլն:

Չնայած ունեցած ձեռքբերումներին՝ գրանցվեցին նաև կարգապահական կոպիտ խախտումների հետևանքով տեղի ունեցած արտակարգ դեպքեր, որոնց մի մասը, ցավոք, մահվան ելքերով ավարտվեց: Թվում է՝ չնչին խախտումներ են, ծառայողական մանրուքներ, օրինակ՝ երթևեկության, զենքի օգտագործման կանոնների խախտումներ և այլն: 2010 թ. տեղի ունեցան ցավալի դեպքեր, երբ հրամանատարը ոչ կանոնադրական փոխհարաբերությունները բացառելու, առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ հաստատելու փոխարեն ինքը դիմեց ծայրահեղ միջոցների՝ ենթակայի նկատմամբ կիրառելով բռնություն և ծեծ: 2010 թ. Վայքում, Մատաղիսի զորամասերում, տեղի ունեցան ողբերգական դեպքեր, որոնք համապատասխան պետերի ոչ կանոնադրական ու բռնի գործողությունների հետևանքով ուղեկցվեցին պարտադիր ժամկետային զինծառայողների մահվամբ: Նույն տարում Քարվաճառի զորամասում տեղի ունեցավ ցավալի դեպք, երբ ժամկետային զինծառայողը բռնություն գործադրեց համածառայակցի նկատմամբ: Կարգապահական խախտումների բացառմանն ուղղված աշխատանքում իրականացվեցին համալիր միջոցառումներ:

2009-2012 թթ. զինվորական կարգապահության կտրուկ բարձրացմանն ու արտակարգ դեպքերի ու պատահարների կանխարգելմանն ուղղված ցուցումները ՉՈՒ անձնակազմին հասցնելու համար ՀՀ բանակում մեծածավալ աշխատանքներ կատարվեցին: Մահվան ելքով պատահարները հանգեցրին նրան, որ որոշում ընդունվեց 2012 թ. առաջին կիսամյակում կարգապահությունը խթանող միջոցառումներ իրականացնելու վերաբերյալ: Ընդգծվեց, որ միջադեպերի կրկնության պատճառ են հանդիսանում նաև զենքի օգտագործման կանոնների խախտումները և միջանձնային հարաբերությունները, որի մեջ առկա է նաև զինվորի ինքնահաստատման խնդիրը: Պատահական չէ, որ 3,5 տարվա ընթացքում ՀՀ պաշտպանության նախարար Ս. Օհանյանի հրամանով կանոնադրական խախտումների ու ծառայողական կոպիտ սխալների

համար աշխատանքից հեռացվել են զորամասերի 30 հրամանատարներ, որոնք փոխարինվել են ավելի բարձրակարգ կադրերով: Աշխատանքից հեռացվել են վարչության պետերի աստիճանից բարձր 10 հոգի, իսկ ևս 10 հոգի ստացել են խիստ նկատողություն: Սակայն չնայած ձեռնարկված վճռական միջոցառումներին, այնուամենայնիվ բանակային ծառայության հիմնական թերությունները շարունակում են մնալ հովանավորչությունն ու բանակային ծառայությունից խուսափելու դեպքերը[877]:

Բավական աշխատանքներ տարվեցին նաև քիկունքում: Այստեղ հիմնական խնդիրներն էին բանակին վառելիքաքսուքային նյութերով և պարենով ապահովելը, մարտական գործողություններ վարելու համար, ինչպես նաև ճգնաժամային իրադրություններում նյութատեխնիկական միջոցների պաշարներ ստեղծելը, գնագոյացման ընդհանուր քաղաքականություն ձևավորելը:

2000-2011 թ. նշանավորվեց ՀՀ զինված ուժերի սպայական կազմի երիտասարդացման և հմուտ կադրերի պատրաստման գործընթացով: ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտը ընդլայնելով գործունեության ոլորտը՝ իր մեջ ներառեց սպայական կադրերի որակավորման բարձրացման կենտրոնը:

Ա. Խանփերյանցի անվան ռազմաավիացիոն ինստիտուտը սկսեց վերապատրաստել նախկինում միջնակարգ զինվորական կրթություն ստացած սպայական կազմը և զուգահեռ պատրաստել երկու նոր մասնագիտություններով սպաներ՝ հակաօդային պաշտպանության և կապի գծով: Վերոնշյալ տարիներին հայ կուրսանտները ուսումնառության են մեկնել ոչ միայն Ռուսաստանի, Հունաստանի, ԱՄՆ-ի, Չինաստանի, այլ նաև Իտալիայի ու Գերմանիայի ռազմական ուսումնական հաստատություններ:

Վերը նշված ժամանակահատվածում ռազմական ակադեմիաներ ավարտեցին ՀՀ զինված ուժերի 700-ից ավելի սպաներ՝ 46 զինվորական մասնագիտությամբ: Ռազմաուսումնական հաստատություններ են ավարտել 4 հազարից ավելի սպաներ՝ 35 մասնագիտությամբ, որոնցից 3007-ը ՀՀ ՊՆ ռազմական ուսումնական հաստատություններում: Արտերկրի ՌՈՒՀ-ներում ուսումնառել և

[877] Տե՛ս նույն տեղում:

այսօր շարունակում են իրենց ուսումը ավելի քան 3 հազար սպա և կուրսանտ[878]:

2000-2012 թթ. զգալի աշխատանք է կատարվել ինչպես զինծառայողների, այնպես էլ հաշմանդամ դարձած, զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների անդամների սոցիալ-կենցաղային պայմանները բարելավելու ուղղությամբ:

Մասնավորապես, բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող թվով 1152 հաշմանդամ դարձած զինծառայողների և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների անդամներին բնակարաններ ձեռք բերելու համար տրվել է անհատույց պետական ֆինանսական աջակցություն[879]:

Սկսած 2004 թ. հունվարի 1-ից՝ ՀՀ պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու հետևանքով, ինչպես նաև ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ հաշմանդամ դարձած շարքային կազմի զինծառայողների ընտանիքների անդամների՝ սահմանված կարգով հաշվարկված կենսաթոշակները ըստ տարիների համապատասխանաբար ավելացել են 20%-ով: Բացի հաշմանդամներից տարեցտարի բարելավվել է զինծառայողների ծառայության, կենցաղի և հանգստի պայմանները: Ուշադրություն է դարձվում զինծառայողների սոցիալական և հատկապես բնակարանային խնդիրներին: 2011 թ. 273 զինծառայողների ընտանիքներ ապահովվել են բնակարաններով:

Հայոց զինված ուժերի համալրումը շարունակում է իրականացվել խառը սկզբունքով՝ ժամկետային ծառայությամբ, նաև պրոֆեսիոնալ հատվածի ընդլայնմամբ և այդ առումով դրանց զուգակցմամբ: Միշտ էլ Հայաստանի Հանրապետության անկախության պայմաններում ՀՀ զինված ուժերի կարևորագույն խնդիրն է հանդիսացել ՀՀ և ԼՂՀ սահմանների հուսալի պաշտպանությունը, ինչի համար մեծածավալ աշխատանքներ են իրականացվել՝ մարտական հերթապահության, ինժեներական սարքավորումների կատարելագործումից մինչև հակառակորդի ոտնձգությունների կան-

[878] Տե՛ս Օհանյան Ս., նշված աշխ., էջ 235, 236:
[879] Տե՛ս նույն տեղում, էջ 232:

խարգելում: Չնայած ադրբեջանական կողմի սպառնալիքներին՝ հայոց զինված ուժերը միշտ էլ պատրաստ են արժանի հակահարված հասցնելու թշնամուն:

Այսպիսով, ընդհանուր առմամբ նախորդ տարիներին սկսված և ակտիվորեն ընթացող պաշտպանական բարեփոխումները նախատեսված են մինչև 2015 թվականը: Դրանց արդյունքում Հայաստանի Հանրապետությունը կունենա մարտական ու բարոյահոգեբանական բարձր պատրաստվածությամբ օժտված, արդիական սպառազինությամբ զինված, Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը պաշտպանելու ունակ զինված ուժեր:

3. ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տնտեսության զարգացմանը և պաշտպանական հզորության ամրապնդմանը զուգահեռ՝ Հայաստանի Հանրապետությունն անցած երկրորդ տասնամյակում արժանացավ ոչ միայն միջազգային լայն ճանաչման, այլև միջազգային հարաբերություններում ձեռք բերեց կայուն, հուսալի ու կանխատեսելի գործընկերոջ համարում: ՀՀ-ն անդամակցեց Եվրախորհրդին, կանխորոշեց երկրի զարգացման ուղին ու անշրջելի դարձրեց ժողովրդավարական զարգացումները: Հայաստանի Հանրապետությունը դարձավ Միավորված ազգերի կազմակերպության մի շարք հանձնաժողովների ու կոմիտեների անդամ: Ավելացան Հայաստանի Հանրապետության հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատած երկրների թիվը՝ դառնալով 160: Աշխարհի ավելի քան չորս տասնյակ երկրներում գործում են մեր երկրի դեսպանությունները, ներկայացուցչություններն ու հյուպատոսությունները, որոնք ակտիվորեն լծված են Հայաստանի արտաքին քաղաքականության հիմնախնդիրների լուծմանը, տարբեր պետությունների հետ քաղաքական երկխոսությանը, առևտրատնտեսական հարաբերութ-

յունների, մշակութային և այլ կապերի զարգացմանը: 2000 թվականից սկսած՝ որոշակի հայեցակարգային ու մարտավարական փոփոխություններ մտցվեցին արտաքին քաղաքականության մի շարք ուղղություններում՝ պահպանելով հիմնական գերակայությունների շարունակականությունը: Մասնավորապես, երկրի անվտանգության ապահովման առաջնահերթ խնդրի լուծումը խարսխվեց բազմամակարդակ համակարգի վրա, որը պահանջում է հայ-ռուսական ռազմական համագործակցության հետագա խորացում, համագործակցության ակտիվացում:

Հավաքական անվտանգության պայմանագրի շրջանակներում, ԵՍԶՈՒ-ի և ՆԱՏՕ-ի ԳՀԽ պայմանագրի շրջածիրում (եվրոպական ուղղություն), ինչպես նաև երկկողմ մակարդակներում նշելի է հաջողությամբ զարգացող հայ-ամերիկյան և հայ-հունական ռազմական համագործակցությունը: Կարևորելով համագործակցության հետագա ծավալումը ԱՊՀ երկրների հետ և ՀԱՊԿ շրջանակներում՝ Հայաստանի Հանրապետությունը միաժամանակ շեշտը դրել է ամերիկյան ու եվրոպական ուղղությունների վրա: Ընդարձակվել են առևտրատնտեսական կապերն ու բազմաբնույթ համագործակցությունը Մերձավոր Արևելքի երկրների, Ճապոնիայի, Չինաստանի, Հնդկաստանի, Լատինական Ամերիկայի, աշխարհի բազմաթիվ այլ երկրների հետ: Հայաստանի Հանրապետության հարաբերությունները աշխարհի տարբեր տարածաշրջանների բազմաթիվ պետությունների հետ զարգանում են դինամիկորեն, աստիճանաբար՝ ավելի ու ավելի լիարժեքորեն բացահայտելով այդ հարաբերությունների զանազան ուղղություններում առկա ներուժը:

ա. ՀՀ հարաբերությունները ՌԴ-ի հետ

ՀՀ արտաքին քաղաքականության մեջ առանձնահատուկ կարևորություն ունեն հայ-ռուսական հարաբերությունները: ՀՀ և ՌԴ ռազմավարական համագործակցության դրական արդյունքները ակնհայտ են. 180-ից ավելի միջպետական, միջկառավարական և միջգերատեսչական պայմանագրեր ու համաձայնագրեր

կնքվել են վերջին տասից ավելի տարիների ընթացքում: Հայ-ռուսական երկկողմ հարաբերությունները նոր որակ ստացան ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի ՌԴ կատարած առաջին պաշտոնական այցից հետո, որն իրականացվեց 2000 թ. սեպտեմբերի 25-ից 28-ը: Քննարկված և համաձայնեցված մի շարք խնդիրների և ստորագրված փաստաթղթերի շարքում հիշատակելի է առանց մուտքի արտոնագրերի ՀՀ և ՌԴ քաղաքացիների փոխայցելության մասին համաձայնագիրը, որով ՀՀ-ն դարձավ ՌԴ-ի հետ նման համաձայնագիր կնքած առաջին պետությունն այն պահից ի վեր, երբ Ռուսաստանը միակողմանիորեն դադարեցրեց իր մասնակցությունը Բիշքեկի պայմանագրին[880]: ՀՀ նախագահի այցի կարևորագույն արդյունքը դարձավ «21-րդ դարում ՀՀ-ին ՌԴ-ի միջև ռազմավարական համագործակցության մասին» հռչակագիրը, որով հայ-ռուսական ռազմավարական գործընկերությունը թևակոխեց նոր հանգրվան: Երկու բարեկամ երկրների միջև ստեղծվեց տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողով, որի աշխատանքի շնորհիվ հայ-ռուսական տնտեսական համագործակցությունը տարեցտարի առավել արդյունավետ է դառնում: Շարունակվում են ՌԴ-ից ՀՀ բնական գազի առաքումը, ՌԴ-ի կողմից ՀԱԷԿ-ի միջուկային վառելիքի մատակարարումը: ՌԴ-ից Հայաստանի Հանրապետություն են ներկրվում նաև բնական ալմաստներ, որոնց մշակումը ՀՀ տնտեսության կարևոր ճյուղերից է:

2001 թ. սեպտեմբերի 15-ին ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի հրավերով ՌԴ նախագահ Վ. Պուտինի ՀՀ կատարած պաշտոնական այցի ժամանակ ստորագրվեցին մի շարք պայմանագրեր ու համաձայնագրեր, որոնցից կարելի է առանձնացնել «Երկու երկրների կառավարությունների միջև մինչև 2010 թ. երկարաժամկետ տնտեսական համագործակցության», «Կրթության, գիտական աստիճանների և գիտական կոչումների վերաբերյալ փաստաթղթերի փոխադարձ ճանաչման», «Ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության» ու «ՀՀ մարզերի և ՌԴ վարչա-

[880] Տե՛ս Մինասյան Է., Վարդանյան Ա., Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության հարաբերությունները (1991-2001 թթ.), էջ 17:

կան միավորումների միջև համագործակցության սկզբունքների վերաբերյալ»՝ հնարավորություն տալով այդ ուղղությամբ իրականացնել լայնածավալ գործունեություն[881]:

Հայ-ռուսական փոխշահավետ համագործակցությունը շարունակվեց նաև հետագայում և հատկապես 2002-2012 թթ.: 2002-2004 թթ. ընթացքում ռուսական խոշոր ընկերությունների վերահսկողության տակ անցավ Հայաստանի Հանրապետության էներգետիկ համակարգը: Ռուսական «Գազպրոմ» ընկերությանն է պատկանում ՀՀ գազաբաշխիչ ցանցի վերահսկիչ փաթեթը, «Ռուսգազ» ռուսական ընկերությունը ձեռք բերեց տարածաշրջանում ալյումին արտադրող ամենախոշոր «Արմենալ» ձեռնարկությունը և այլն:

Հատկանշական է, որ մինչև 2004 թ. ՀՀ-ում գործում էին 400-ից ավելի ձեռնարկություններ ռուսական կապիտալի մասնակցությամբ, դրանց թվում նաև այն 5 համատեղ ձեռնարկությունները, այդ թվում նաև «Հայռուսգազարդը», որոնք «գույք պարտքի դիմաց» նշանաբանով տրվել էին Ռուսաստանին[882]:

Հայաստանի Հանրապետության տնտեսության մեջ կատարած ներդրումների ծավալով Ռուսաստանի Դաշնությունը շարունակում է զբաղեցնել առաջնակարգ դիրք: ՀՀ տնտեսության մեջ ռուսական ներդրումների ծավալը 2007 թ. առաջին 9 ամիսների ընթացքում (2006 թ. նույն ժամանակահատվածի համեմատ) աճեց ավելի քան 5 անգամ, ինչը ՀՀ պետական վիճակագրական ծառայության տվյալներով կազմել է ՀՀ տնտեսություն մտած օտարերկրյա ներդրումների 37,4%-ը և ուղղակի ներդրումների 32,6%-ը: Միայն 2008 թ. ՀՀ և ՌԴ ապրանքաշրջանառության ծավալները հասան 1 մլրդ դոլարի[883]:

2011 թ. ՀՀ-ում գործում էր ռուսական կապիտալով 1500 ընկերություն: ՀՀ տնտեսության մեջ ՌԴ-ի ներդրումները վերջին տասը տարիներին կազմել են 2,5 մլրդ դոլար: ՀՀ-ում ներդրումների 57 տոկոսը ռուսական ներդրումներ են[884]: 2008 թ. օգոստոսին ռուս-

---

[881] Տե՛ս նույն տեղում, էջ 15, 16:
[882] Տե՛ս նույն տեղում, էջ 18:
[883] Տե՛ս նույն տեղում:
[884] «Հայաստանի Հանրապետություն», 17.01.2012, էջ 4:

վրացական 5-օրյա պատերազմի հետևանքով Հարավային Կովկասում ձևավորվեցին ևս 2 ինքնիշխան, սուվերեն հանրապետություններ ի դեմս Աբխազիայի և Հարավային Օսիայի: Դրանով ՌԴ-ի համար ստեղծվեց նոր իրավիճակ:

Չնայած ռուս-վրացական 5-օրյա պատերազմը լիովին փոխեց իրերի դասավորությունը Հարավային Կովկասում, սակայն հայ-ռուսական հարաբերությունների ընդհանուր ուղեգիծը փոփոխության չենթարկվեց[885]:

ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդևի 2008 թ. հոկտեմբերի 21-ին ՀՀ պաշտոնական առաջին այցի շրջանակներում երկու երկրների միջև ստորագրվեցին մի շարք նոր առևտրատնտեսական, գիտատեխնիկական ու մշակութային համագործակցության համաձայնագրեր: Միաժամանակ երկու երկրների նախագահները մասնակցեցին Երևանում Ռուսաստանի անվան հրապարակի բացման արարողությանը:

Հայ-ռուսական հարաբերությունները շարունակվեցին վերընթաց ուղիով զարգանալ նաև հետագայում: ՀՀ նախագահ Ս. Սարգսյանի ու ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդևի փոխայցելությունների ընթացքում ստորագրվեցին բազմաթիվ պայմանագրեր ռազմավարական, առևտրատնտեսական, գիտատեխնիկական և մշակութային համագործակցության վերաբերյալ[886]:

2009 թ. ապրիլի 23-ին ՀՀ նախագահ Ս. Սարգսյանի այցը Ռուսաստան և հանդիպումը ՌԴ նախագահ Դ. Մեդվեդևի հետ կրկին հաստատեցին երկու երկրների ռազմավարական համագործակցության նշանակությունը, որն ուղղված էր նրանց անվտանգության ապահովմանը և անչափ կարևոր Հարավային Կովկասում կայունություն հաստատելուն: Նույն նշանակությունը ունեցավ ՌԴ նախագահ Դ. Մեդվեդևի՝ 2009 թ. հոկտեմբերի 12-ի պաշտոնական այցը Հայաստանի Հանրապետություն[887]: Բարձր մակար-

---

[885] Օսկանյան Վ., Անավարտ տասնամյակ, ելույթների ընտրանի, Երևան, 2009, էջ 227:

[886] ՀՀ Արտաքին գործերի նախարարության ընթացիկ արխիվ, «ՀՀ արտաքին քաղաքական գործունեության 2008 թ. ամփոփումը», թ. 7:

[887] Տե՛ս նույն տեղում, «ՀՀ արտաքին քաղաքական գործունեության 2009 թ. ամփոփումը», թ. 3:

դակի նման հանդիպումները, փոխադարձ այցելությունները շարունակվեցին նաև 2010 թ. կրելով փաստորեն մշտական բնույթ: Այդ տեսակետից հատկապես կարևորվում է 2010 թ. օգոստոսի 19-ից 21-ը ՌԴ նախագահ Դ. Մեդվեդևի պաշտոնական այցը Հայաստանի Հանրապետություն, որի արդյունքում, բացի բազմաթիվ այլ հարցերի քննարկումից, կարևորվեց «ՀՀ-ի և ՌԴ-ի միջև Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմակայանի մասին պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին» (թիվ 5) արձանագրությունը, որը համապատասխանում է երկու երկրների ռազմավարական հետաքրքրություններին և բխում է տարածաշրջանային մակարդակով անվտանգության և կայունության ամրապնդման շահերից: Ըստ այդ արձանագրության ՀՀ-ի և ՌԴ-ի միջև 1995 թ. մարտի 16-ին կնքված պայմանագրի ժամկետը երկարաձգվեց մինչև 2044 թվականը[888]:

ՌԴ-ի հետ դաշնակցային ռազմավարական հարաբերությունները 2011թ. նույնպես նշանավորվեցին երկուստեք ձեռնարկած մի շարք քայլերով, որոնք միտված էին փոխգործակցության առավել ամրապնդմանը, նոր հեռանկարային ծրագրերի մշակմանն ու իրագործմանը:

2011 թ. ապրիլին Երևանում կայացավ «Հայ-ռուսական դաշնակցային հարաբերություններում միջտարածքային համագործակցության նոր նվաճումներին ընդառաջ» խորագրով հայ-ռուսական միջտարածաշրջանային առաջին համաժողովը, որի շրջանակներում ստորագրվեցին շուրջ երկու տասնյակ երկկողմ փաստաթղթեր, հիմնականում ռազմական համագործակցության վերաբերյալ[889]:

Երկկողմ և բազմակողմ ձևաչափերում ՀՀ և ՌԴ նախագահները ունեցել են շուրջ մեկ տասնյակ հանդիպում: 2011 թ. հոկտեմբերի 23-25-ը տեղի ունեցավ ՀՀ նախագահի (հայ-ռուսական XXI դարասկզբի հարաբերությունների պատմության մեջ առաջին անգամ) պետական այցը Ռուսաստան, որի շրջանակներում ՌԴ նա-

---

[888] Տես նույն տեղում, «ՀՀ արտաքին գործերի նախարարություն. 2010 թ. գործունեության ամփոփումը», թ. 8:
[889] Տես նույն տեղում, թ. 10:

խագահ Դմիտրի Մեդվեդևի հետ ստորագրվեցին սոցիալ-տնտեսական և ռազմավարական բնույթի յոթ երկկողմ փաստաթղթեր[890]:

Այսպիսով, հայ-ռուսական հարաբերությունները զարգանում են բոլոր ուղղություններով, աճում են ներդրումները, ապրանքաշրջանառությունը, ռազմական, ռազմատեխնիկական, քաղաքական և այլ ոլորտներում համագործակցությունը: 2012 թ. նույնպես ՀՀ և ՌԴ բարձրագույն ղեկավարության միջև կայացել են շուրջ մեկ տասնյակ հանդիպումներ: Օգոստոսի 8-ին ՀՀ նախագահ Ս. Սարգսյանը այցելեց Մոսկվա և հանդիպում ունեցավ ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի հետ: Այդ հանդիպման շրջանակներում պայմանավորվածություն ձեռք բերվեց տնտեսական համագործակցության զարգացման, ապրանքաշրջանառության ծավալների ընդլայնման, ռազմատեխնիկական փոխգործակցության առավել ամրապնդման և հումանիտար կապերի խորացման ուղղությամբ[891]:

բ. ՀՀ հարաբերությունները ԱՄՆ-ի հետ

Հայ-ամերիկյան հարաբերություններն անցած տասնամյակում շարունակել են դինամիկ զարգացում ապրել: Դժվար է գերագնահատել ԱՄՆ-ի՝ Հայաստանի Հանրապետությանը տրամադրած պետական օգնությունը, որի ծավալներն առանձին տարիներին հասել են մինչև 100 մլն դոլարի, ինչպես նաև այն աջակցությունը, որն ամերիկյան կողմը ցուցաբերել է մեր երկրում իրականացվող տնտեսական և ժողովրդավարական բարեփոխումների գործընթացին: Իր հերթին, ԱՄՆ-ը գնահատում էր 2001 թ. սեպտեմբերի 11-ի դեպքերից հետո Հայաստանի Հանրապետության մասնակցությունը միջազգային ահաբեկչության դեմ պայքարին: ԱՄՆ-ը Հայաստանի Հանրապետությանը ցույց է տվել նաև ռազմական օգնություն, ինչպես նաև նպաստել է զինվորական կադրերի վերապատրաստմանը: Կարևոր աջակցություն են ամեն տարի Ամերի-

[890] Տե՛ս նույն տեղում, թ. 10, 11:
[891] Տե՛ս նույն տեղում, «ՀՀ ԱԳՆ 2012 թ. գործունեության հաշվետվությունը», թ. 7, 8:

կայի Կոնգրեսի որոշմամբ Հայաստանի Հանրապետությանը հատկացվող ֆինանսական միջոցները:

Դեռևս 2000 թ. հունվարին ստեղծվեց տնտեսական հարցերով հայ-ամերիկյան միջկառավարական աշխատանքային խումբ, որը կոչված էր աջակցելու ԱՄՆ-ի և Հայաստանի կառավարություններին տնտեսական համագործակցության խորացման համար ձեռնարկվող ջանքերի համակարգմանը, ինչպես նաև անցումային շրջանում Հայաստանին օժանդակություն ցուցաբերելուն: Աշխատանքային խմբի տարեկան երկու անգամ գումարվող նստաշրջանները կանոնակարգում էին հայ-ամերիկյան առևտրատնտեսական համագործակցությունը[892]:

2004 թ. ԱՄՆ Սենատն ընդունեց օրինագիծ, ըստ որի ՀՀ-ին շնորհվեց մշտական կանոնավոր առևտրային հարաբերությունների կարգավիճակ, որը հնարավորություն տվեց էլ ավելի զարգացնելու առևտրատնտեսական կապերը երկու երկրների միջև[893]:

2004 թ. ԱՄՆ-ի կառավարությունը հայտարարեց հազարամյակի մարտահրավերներին դիմագրավելու նպատակով աջակցության կարիք ունեցող երկրներին հատուկ ֆինանսական օժանդակության հիմնադրամ ստեղծելու մասին: Հայաստանի Հանրապետությունը ներառված է այդ երկրների խմբում[894]: 2006 թ. մարտի 27-ին Հազարամյակի մարտահրավեր կորպորացիան 235,65 մլն ԱՄՆ դոլարի հնգամյա համաձայնագիր ստորագրեց ՀՀ կառավարության հետ: 2006 թ. սեպտեմբերի 29-ին համաձայնագիրը պաշտոնապես ուժի մեջ մտավ[895]: Դրանից հետո 2006-2010 թթ. ակտիվ աշխատանքներ տարվեցին երկկողմ քաղաքական ու առևտրատնտեսական կապերի ամրապնդման ուղղությամբ:

2011 թ. մայիսին տեղի ունեցավ ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի այցը ԱՄՆ: Այցի ընթացքում նախարարը հանդիպեց ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնին: Քննարկվեցին

---

[892] Տե՛ս Մելիքյան Ս., նշված աշխ., էջ 89:
[893] Տե՛ս Օսկանյան Վ., նշված աշխ., էջ 243:
[894] Տե՛ս, ՀՀ ԱԳՆ ընթացիկ արխիվ, «ԱԳ նախարար Վ. Օսկանյանի կողմից ՀՀ արտաքին քաղաքականության 2004 թ. ամփոփումը», 12.01.2005, թ. 3:
[895] Տե՛ս նույն տեղում, «ՀՀ արտաքին քաղաքականության 2006 թ. ամփոփումը», թ. 4, 5:

բազմաբնույթ հարցեր, որոնք վերաբերում են Ղարաբաղյան հիմնահարցին, հայ-ամերիկյան ռազմական համագործակցությանը ՆԱՏՕ-ի շրջանակներում և այլն[896]:

2011 թ. սեպտեմբերին Նյու Յորքում ՄԱԿ-ի ԳԱ 66-րդ նստաշրջանի շրջանակներում ՀՀ արտգործնախարար Է. Նալբանդյանը հանդիպում ունեցավ ԱՄՆ պետքարտուղարի առաջին տեղակալ Ուիլյամ Բըրնսի հետ, ով հոկտեմբերին այցելեց Հայաստան: Նրանք քննարկեցին ՆԱՏՕ-ի շրջանակներում ռազմական համագործակցության բազմաթիվ հարցեր[897]:

2011 սեպտեմբերի 26-ին Վաշինգտոնում կայացավ Հայաստան-ԱՄՆ միջկառավարական հանձնաժողովի ամենամյա նիստը, որը որոշեց մեծացնել Հայաստանին հատկացված օժանդակության ծավ՛ալը: 2011 թ. վերջին Հայաստանի Հանրապետությանը հատկացված օժանդակության ծավալը կազմեց 45 մլն ԱՄՆ դոլար[898]:

Հայ-ամերիկյան տնտեսական հարաբերությունների զարգացման նպատակով ստորագրվեցին առևտրային կապերի ամրապնդման, երկկողմ ներդրումների և դրանց խրախուսման մասին համաձայնագրեր:

2012 թ. հունիսի 4-ին Հայաստան այցելեց ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնը, որը հանդիպում ունեցավ ՀՀ նախագահի հետ: Նույն տարում հոկտեմբերի 18-ին Երևանում տեղի ունեցած հայ-ամերիկյան միջկառավարական հանձնաժողովի նիստի ավարտին ստորագրվեց ՀՀ և ԱՄՆ կառավարությունների միջև էներգետիկայի ոլորտում համագործակցության վերաբերյալ փոխըմբռնման հուշագիր[899]:

---

[896] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 17.01.2011, էջ 4:
[897] Տե՛ս նույն տեղում:
[898] Տե՛ս ՀՀ ԱԳՆ ընթացիկ արխիվ, «ՀՀ ԱԳՆ 2011 թ. գործունեության հաշվետվությունը», թ. 11:
[899] Տե՛ս նույն տեղում, «ՀՀ ԱԳՆ 2012 թ. գործունեության հաշվետվությունը», թ. 8, 9:

գ. ՀՀ հարաբերությունները Եվրամիության հետ

Եվրաինտեգրման խնդիրները և եվրոպական երկրների հետ հարաբերությունների զարգացումն ու խորացումը եղել և մնում են Հայաստանի արտաքին քաղաքական առաջնայնությունների թվում:

2001 թվականից ի վեր զգալի առաջընթաց է գրանցվել Հայաստանի և Եվրոպական միության անդամ պետությունների հարաբերություններում: Քաղաքական երկխոսության զարգացման տեսանկյունից հատկապես հիշարժան են Հայաստանի փոխհարաբերությունները ԵՄ այնպիսի անդամ պետությունների հետ, ինչպիսիք են Ֆրանսիան, Գերմանիան, Իտալիան, Բելգիան, Շվեդիան, Հունաստանը և այլն:

ԵՄ-ն օժանդակության բազմաթիվ ծրագրեր է իրականացրել մեր երկրում, ինչպես նաև ֆինանսական զգալի օգնություն է ցույց տվել ՀՀ-ին: Եվրամիությունը աստիճանաբար դարձել է Հայաստանի խոշորագույն առևտրային գործընկերը, որի հետ առևտրաշրջանառությունը միայն 2007 թ. հունվար-ապրիլ ամիսների ընթացքում կազմել է 441,933.7 հազար դոլար[900]:

2000 թվականից ուժի մեջ մտավ Եվրոպական համայնքների և դրանց անդամ երկրների ու Հայաստանի միջև կնքված Գործընկերության և համագործակցության համաձայնագիրը: ԳՀՀ-ն իրավական հիմք ստեղծեց ՀՀ-ԵՄ համագործակցության համար՝ կանոնակարգելով ԵՄ-ի կառույցների ու ԵՄ-ի անդամ պետությունների հետ Հայաստանի հարաբերությունների ողջ համալիրը:

Հայաստան-Եվրամիություն քաղաքական երկխոսության օրակարգում ներառված էին երկկողմ հետաքրքրություն ներկայացնող բազմաթիվ հարցեր: Եվրոպայի հարևանության քաղաքականության շրջանակներում Գործողությունների ծրագրի ստորագրման արդյունքում այդ հարցերի շրջանակը զգալիորեն ընդլայնվել է՝ ներառելով ավանդական դարձած ժողովրդավարության, մարդու իրավունքների, տնտեսական զարգացման, աղքատության նվա-

[900] Տես ՀՀ ԱԳՆ ընթացիկ արխիվ, «ՀՀ արտաքին քաղաքական գործունեության 2007 թ. ամփոփումը», թ. 12, 13:

զեցման, տարածաշրջանային համագործակցության զարգացման, գիտության, կրթության, սոցիալական ապահովության և այլ հարցերի ոլորտներ:

Եվրամիության հետ հարաբերություններում կարևոր տեղ է զբաղեցնում Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման խնդիրը: ԵՄ-ի աճող հետաքրքրությունը Հարավային Կովկասի հանդեպ հանգեցրեց Եվրամիության ակտիվությանը տարածաշրջանի հակամարտությունների հանդեպ:

Եվրոպայի Խորհրդում Հայաստանի անդամակցության գործընթացը հաջողությամբ ավարտվեց 2001 թ. հունվարի 25-ին պաշտոնական լիիրավ անդամակցության հանդիսավոր արարողությամբ՝ նախագահ Ռոբերտ Քոչարյանի և ՀՀ բարձրաստիճան պատվիրակության մասնակցությամբ[901]: 2001 թ. ապրիլից գործում է ԵԽ-ում ՀՀ մշտական ներկայացուցչությունը: 2003 թ. հուլիսի 8-ից Երևանում պաշտոնապես գործում է ԵԽ գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցչի գրասենյակը և ԵԽ տեղեկատվական գրասենյակը[902]:

Հայաստանն անցած տասնամյակում մեծապես աշխուժացրել է իր աշխատանքը Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) հետ: Համաձայնեցվել են անդամ պետությունների համար քաղաքական պարտադիր որոշումներն ու նորմերը: Եվ, իհարկե, ԵԱՀԿ-ի նշանակությունը Հայաստանի համար հսկայական էր Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի կարգավորման առումով, որի միջնորդական առաքելությունն ստանձնել են ԵԱՀԿ-ի Մինսկի խումբը և նրա համանախագահները՝ Ռուսաստանը, ԱՄՆ-ը և Ֆրանսիան:

Դեռևս Ստամբուլի գագաթնաժողովում ընդունվեցին մի շարք փաստաթղթեր, որոնք վերաբերում էին Եվրոպայի անվտանգությանը, ինչպես նաև ԵԱՀԿ տարածաշրջանային հիմնահարցերին: Կարևորագույն փաստաթուղթը դարձավ Եվրոպական անվտանգության խարտիան, որում հատուկ ուշադրություն դարձվեց ենթատարածքային համագործակցությանը: Առաջարկվեց ԵԱՀԿ-ն օգ-

[901] Տե՛ս Օսկանյան Վ., Նշվ. աշխ., էջ 434:
[902] Տե՛ս նույն տեղում, էջ 500, 501:

տագործել նաև որպես ենթատարածքային համագործակցության վեհաժողով: Իր ելույթում ՀՀ նախագահն առաջարկեց Հարավային Կովկասում ստեղծել կայունության գոտի[903]:

Արդյունավետ համագործակցություն ծավալվեց նաև ԵԱՀԿ-ի երևանյան գրասենյակի հետ, որի միջոցով իրականացվեցին մի ամբողջ շարք ծրագրեր: Կարևոր աշխատանք իրականացրեց նաև ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցչի գրասենյակը ԼՂ հակամարտության գոտում զինադադարի ռեժիմի պահպանման ուղղությամբ:

21-րդ դարասկզբին առանցքային էր միջազգային կազմակերպություններում մեր երկրի դերակատարության ակտիվացման առումով: Հայաստանի դիվանագիտության առջև խնդիր դրվեց ապահովել մեր երկրի եռանդուն մասնակցությունն ու գործուն ներգրավվածությունը միջազգային կազմակերպություններին, համաշխարհային և տարածաշրջանային գործընթացներին: Միջազգային տարբեր ատյաններում նպատակ դրվեց պաշտպանել մեր երկրի անվտանգության, պաշտպանունակության, տնտեսության և այլ ոլորտներին առնչվող կենսական շահերը:

Հայաստանն անցած տարիներին շարունակել է միջազգային կոնվենցիաներին միանալու գործընթացը: Դրանցից կարևորագույններից մեկը «Միջուկային ահաբեկչության գործողությունների խափանման մասին միջազգային կոնվենցիան» էր, որին Հայաստանը միացավ 2005 թվականին[904]:

ՄԱԿ-ում և միջազգային այլ կազմակերպություններում Հայաստանը մշտապես ակտիվ աշխատանք է տանում չեզոքացնելու Աղրբեջանի, ՎՈՒԱՄ-ի երկրների այն նախաձեռնությունները, որոնք կարող են սպառնալ Լեռնային Ղարաբաղի անվտանգությանը կամ համահունչ չեն հակամարտության կարգավորման գործընթացի տրամաբանությանը:

Հաջողված համագործակցություն է ծավալվել ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության, Արդյունաբերության

---

[903] Տե՛ս Օսկանյան Վ., Նշվ. աշխ., էջ 385,Հայաստան 1998-2007, էջ 84:
[904] Տե՛ս Հայաստան 1998-2007, էջ 85:

զարգացման կազմակերպության, Եվրոպական տնտեսական հանձնաժողովի, Արժույթի միջազգային հիմնադրամի, Համաշխարհային բանկի, Եվրասիական տնտեսական ընկերակցության (ԵվրԱզԷԱ), ինչպես նաև Սևծովյան տնտեսական համագործակցության (ՍԾՏՀԿ) շրջանակներում, որտեղ Հայաստանի ներգրավվածությունն զգալիորեն աճել է:

2001 թվականից Ստամբուլում գործեց Սևծովյան տնտեսական համագործակցության կառույցում (ՍԾՏՀԿ) ՀՀ մշտական ներկայացուցչությունը, իսկ 2002-ին Հայաստանն արդեն երկրորդ անգամ էր ստանձնել կազմակերպության նախագահող երկրի պարտականությունները[905]: ՀՀ ղեկավարությունը պարբերաբար հանդիպումներ էր ունենում կազմակերպության ղեկավարների հետ՝ ստուգելով նրա շրջանակներում տեղի ունեցող գործընթացների զարկերակը, քննարկելով համագործակցության նոր հնարավորություններն ու ծրագրերը:

Անցած տասնամյակում Հայաստանը տարբեր միջազգային ատյանների ու կազմակերպությունների շրջանակներում համագործակցային լայնածավալ գործունեություն է իրականացրել այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են անվտանգության և ռազմական բնագավառները, սպառազինությունների վերահսկումը, միջուկային էներգետիկան և միջուկային անվտանգության հարցերը՝ ներառյալ ՀԱԷԿ-ի պաշտպանությունը՝ ատոմային էներգետիկայի միջազգային գործակալության հետ համագործակցության շրջանակներում, զանգվածային ոչնչացման, քիմիական, կենսաբանական զենքերի, բալիստիկ հրթիռների և այլ զինատեսակների, վտանգավոր և երկակի օգտագործման նյութերի չտարածման խնդիրները և այլն:

Հավաքական անվտանգության մասին պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո անդամ պետությունների գործունեության առաջին փուլում դրվեցին հավաքական անվտանգության համակարգի ձևավորման հայեցակարգային ու նորմատիվ իրավական հիմքերը, կատարելագործվեց պայմանագրի մարմինների կառուցվածքը:

---

[905] Տե՛ս նույն տեղում, էջ 85, Օսկանյան Վ.,նշված աշխ., էջ 387:

Դինամիկորեն են զարգացել նաև Հայաստան-ՆԱՏՕ հարաբերությունները: 2002 թվականից Հայաստանը ՆԱՏՕ-ի խորհրդարանական վեհաժողովի թղթակից անդամ է և նույն թվականին միացել է Պլանավորման և վերանայման գործընթացին, ինչպես նաև ՆԱՏՕ-ի «Ահաբեկչության դեմ գործընկերության գործողությունների ծրագիր» փաստաթղթին, որն ուղղված է գործընկեր պետությունների հետ տվյալ բնագավառում համագործակցության զարգացմանը[906]: 2003-ին Հայաստանը ստորագրել է «PfP SOFA» պայմանագիրը, որն ՀՀ Ազգային ժողովի կողմից վավերացվեց 2004-ի մարտի 30-ին: 2004-ի փետրվարից Հայաստանի 34 հոգանոց խաղաղապահ դասակը հունական ուժերի կազմում մասնակցեց Կոսովոյում ՆԱՏՕ-ի կողմից իրականացվող KFOR գործողությանը[907]:

2004 թ.-ից Հայաստանը մասնակցում է «Գործընկերության գործողությունների պաշտպանության հաստատությունների կառուցում» ծրագրին, որը նպատակաուղղված է ՆԱՏՕ-ի գործընկեր պետությունների պաշտպանական համակարգի կառույցների արդիականացմանն ու կատարելագործմանը և, մասնավորապես, վերաբերում է պաշտպանական համակարգի նկատմամբ ժողովրդավարական և խորհրդարանական վերահսկման, պաշտպանական համակարգին առնչվող իրավական դաշտի, ֆինանսավորման թափանցիկության և այլ նմանատիպ խնդիրներին, որոնք որոշակի առնչություն ունեն օրենսդիր իշխանության գործունեության հետ[908]: 2004-ի ամռանը ՀՀ-ն դեսպան նշանակեց ՆԱՏՕ-ի առաքելությունում[909]: 2005-ի հունիսի 16-ին Հյուսիսատլանտյան խորհրդին պաշտոնապես հանձնվեց Հայաստանի Անհատական գործընկերության գործողությունների ծրագրի ներկայացման փաստաթուղթը, որն արժանացավ այդ ատյանի հավանությանն ու բարձր գնահատականին[910]: 2005-ի դեկտեմբերի 16-ին Հյուսի-

---

[906] Տես Օսկանյան Վ., նշված աշխ., էջ 368:
[907] Տես ՀՀ ԱԳՆ ընթացիկ արխիվ, «ԱԳ նախարար Վ. Օսկանյանի կողմից ՀՀ արտաքին քաղաքականության 2004 թ. ամփոփումը», թ. 3, 4:
[908] Տես նույն տեղում, թ. 4, 5:
[909] Տես նույն տեղում:
[910] Տես Օսկանյան Վ., նշված աշխ., էջ 264:

սատլանտյան խորհուրդը հաստատեց Հայաստանի Անհատական գործընկերության գործողությունների ծրագիրը, իսկ 2006 թ. հունվարից սկսվեց ՀՀ ԱԳԳԾ-ի իրականացումը, որն այսօր ՀՀ ՆԱՏՕ հարաբերություններում կենտրոնական նշանակություն ունի[911]: Ծրագիրը համապարփակ բնույթի փաստաթուղթ է և ընդգրկում է Դաշինքի հետ համագործակցության բոլոր հնարավոր ոլորտները: Մասնակցելով ծրագրին՝ Հայաստանը որակական նոր մակարդակի վրա էր բարձրացնում իր հարաբերությունները ՆԱՏՕ-ի հետ: Դրանով ՀՀ-ն կարողացավ առավելագույնս օգտվելու դաշնակիցների հետ գործընկերությամբ ձեռքբերված բոլոր հնարավորություններից ու քաղել համագործակցության օգուտները:

Ելնելով իր արտաքին քաղաքականության մեջ եվրոպական ինտեգրացման գերակայությունից՝ Հայաստանը 21-րդ դարասկզբից շարունակում էր զարգացնել փոխհարաբերությունները եվրոպական երկրների հետ: Դրանց շարքում էին ինչպես ԵՄ կորիզը կազմող տերությունները, որոնց ջանքերն ակնառու էին հարավկովկասյան տարածաշրջանային զարգացումներում, այնպես էլ 2000 թվականի սկզբներին ԵՄ-ին անդամագրված արևելաեվրոպական պետությունները, որոնք Եվրոպայի ընտանիքի մաս կազմելու ճանապարհին կուտակել են Հայաստանի Հանրապետության համար ուսանելի փորձ: 2000 թվականի սկզբներից շարունակվեցին Հայաստանի Հանրապետության հարաբերությունների սերտացումն ու ամրապնդումը Ֆրանսիայի, Գերմանիայի, Մեծ Բրիտանիայի, Իտալիայի, Նորվեգիայի, Ավստրիայի, Շվեդիայի, Լեհաստանի, Բուլղարիայի, Լատվիայի, Հունգարիայի, Լիտվայի, Կիպրոսի և այլ երկրների հետ: 2004, 2006, 2008, 2009, 2010, 2011 և 2012 թթ. ՀՀ և թվարկված երկրների նախագահների, վարչապետերի, նախարարների փոխադարձ այցելությունների արդյունքում ստորագրվել են բազմաթիվ պայմանագրեր գիտատեխնիկական, կրթության, սոցիալ-տնտեսական ոլորտների համագործակցության վերաբերյալ: Քաղաքական երկխոսությունների միջոցով համագործակցության շրջանակներում տեղի ունեցան միջկառավարական բազմաթիվ խորհրդակցություններ, որտեղ հաստատվեցին

[911] Տե՛ս ՀՀ ԱԳՆ ընթացիկ արխիվ, «Հայաստանի արտաքին քաղաքական գործունեության 2006 թ. ամփոփումը», թ. 7, 8:

երկկողմանի համագործակցության զարգացման բազմաթիվ ծրագրեր[912]:

դ. Հարաբերությունները հարևան երկրների հետ

Հայաստանի Հանրապետության և Վրաստանի միջև երկկողմ հարաբերությունները հանդիսանում են տարածաշրջանային կայունության կարևոր բաղադրիչներից մեկը: Այդ հարաբերությունները 21-րդ դարասկզբի տասնամյա ժամանակահատվածում շարունակել են զարգանալ, խորացել է քաղաքական երկխոսությունը, բարելավվել են առևտրատնտեսական կապերը: Երկու երկրների միջև ձևավորվել է իրավապայմանագրային դաշտ, որն ընդգրկում է համագործակցության գրեթե բոլոր ոլորտները: Գործում են հայ-վրացական 100-ից ավելի համաձայնագրեր ու պայմանագրեր, որոնցից առանձնանում է 2001 թ. կնքված «Բարեկամության, համագործակցության և փոխադարձ անվտանգության մասին» պայմանագիրը[913]:

Երկու երկրների միջև աշխատում են միջխորհրդարանական և միջկառավարական համագործակցության հանձնաժողովներ, որոնք գործունեություն են ծավալում օրենսդիր և գործադիր մարմինների սերտ համագործակցությունն ապահովելու և զարգացնելու ուղղությամբ: Տնտեսական բնագավառում 2001-2012 թթ. երկու երկրների միջև կնքվեցին ազատ առևտրի, երկակի հարկումից խուսափելու, փոխադարձ ներդրումների պաշտպանության և այլ նպատակով պայմանագրեր: Առավել սերտ համագործակցություն հաստատվեց էներգետիկ բնագավառում: Այսպես, կառուցվեց և գործում է «Աշոցք-Նինոծմինդա» 110 կվ գիծը, պայմանավորվածություն է ձեռք բերվել 330-400 կվ լարման հաղորդակցման նոր գիծ կառուցելու մասին, որից հետո երկու երկրների էներգետիկ համակարգերը կարող են անցնել զուգահեռ աշխատանքի ռեժիմի[914]:

Թուրքիայի և Ադրբեջանի կողմից կիրառվող տրանսպորտային

---

[912] Տե՛ս ՀՀ ԱԳՆ ընթացիկ արխիվ, «Հայաստանի արտաքին քաղաքական գործունեության 2002-2012 թթ. հաշվետվությունների ամփոփումը»:
[913] Օսկանյան Վ., նշված աշխ., էջ 284, Հայաստան 1998-2007, էջ 80:
[914] Տե՛ս նույն տեղում:

շրջափակման պայմաններում Վրաստանի տարանցիկ դերը Հայաստանի համար բացառիկ է: Այս ուղղությամբ հաջողվել է սահմանել որոշակի զեղչեր հայաստանյան երկաթուղային բեռնափոխադրումների համար:

Կարևոր նշանակություն ունի Վրաստանի ցամաքային և օդային տարածքով իրականացվող ռազմական նշանակության բեռնափոխադրումների անխափան իրականացումը: Երկու երկրների բարձրաստիճան շփումների օրակարգում քննարկվել են Վրաստանի հայ համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավման հարցերը: ՀՀ միջոցներով վերանորոգվել է Թբիլիսիի պետական հայկական թատրոնի շենքը:

Թատրոնի թատերախումբը և հայերեն հրատարակվող «Վրաստան» թերթը ստացան Հայաստանից որոշակի օժանդակություն, վերակառուցվեց Թբիլիսիի հայ նշանավոր գործիչների պանթեոնը: Շարունակվեց դասագրքի անհատույց տրամադրման գործընթացը Թբիլիսիում, Ջավախքում, Բաթումում և Ծալկայի շրջանում գործող շուրջ 150 հայկական դպրոցներին, որոնցում սովորում էր մոտ 25 հազար աշակերտ[915]: Արդյունավետ համագործակցություն է հաստատվել երկու երկրների միջև տարածաշրջանի քննապահպանական անվտանգության ապահովման հարցում: Հետևողական աշխատանքներ են տարվել և փոխադարձ համաձայնագրեր են կնքվել Հայաստանի և Վրաստանի միջև ապրանքաշրջանառության ու փոխադարձ ներդրումների ածի, ինչպես նաև օտարերկրյա ներդրումների համար ընդհանուր գրավիչ դաշտի բարելավման նպատակով: Բաթումում հիմնվեց ՀՀ գլխավոր հյուպատոսություն: 2001-2012 թթ. հայ-վրացական հարաբերությունները շարունակում են վերընթաց զարգացում ապրել: Երկու երկրների միջև զգալիորեն աշխուժացան տարբեր մակարդակի փոխայցելությունները ու քաղաքական երկխոսությունները:

2011 թ. հունվարի 22-23-ին կայացավ Վրաստանի նախագահ Միխայիլ Սահակաշվիլիի այցը Հայաստան: Երկու պետությունների նախագահները քննարկեցին հայ-վրացական սահմանի անցու-

[915] Տե՛ս նույն տեղում, էջ 81:

մը դյուրացնելու, էներգետիկ, առևտրատնտեսական և հումանիտար ոլորտներում համագործակցությունը խորացնելու, Վրաստանի հայ համայնքին առնչվող հարցեր[916]:

Նույն տարվա նոյեմբերի 29-30-ին կայացավ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի պաշտոնական այցը Վրաստան: Այցի շրջանակներում ստորագրվեց 4 փաստաթուղթ[917]: Հունիսի 10-ից 15-ը կայացավ Ամենայն Հայոց կաթողիկոսի՝ Գարեգին 2-րդի այցը Վրաստան: Տեղի ունեցան հանդիպումներ համայն Վրաստանի պատրիարք Իլյա 2-րդի, Վրաստանի նախագահ Միխայիլ Սահակաշվիլիի հետ: ՀՀ և Վրաստանի վարչապետների և արտգործնախարարների փոխայցելությունների շնորհիվ պայմանավորվածություններ ձեռք բերվեցին սոցիալ-տնտեսական համագործակցությունը աշխուժացնելու համար[918]:

2012թ. ընթացքում երկու հարևան երկրների միջև տեղի են ունեցել տարբեր մակարդակների բազմաթիվ փոխայցելություններ, այդ թվում նոյեմբերի 30-ին Երևանում տեղի ունեցավ ՀՀ-ի և Վրաստանի նախագահների հանդիպումը, որտեղ քննարկվել են նաև գիտակրթական և էներգիայի ոլորտներում համագործակցությունն ամրապնդելու ու զարգացնելու հարցեր[919]:

21-րդ դարասկզբի առաջին տասնամյակում հայ-իրանական հարաբերությունները շարունակեցին իրենց զարգացման բնականոն ուղին լիակատար փոխվստահության և փոխըմբռնման մթնոլորտում: Երկու երկրների բարձրաստիճան ղեկավարների պարբերական շփումների և տարբեր մակարդակների փոխայցելությունների շնորհիվ Հայաստան-Իրան բազմաբնույթ համագործակցությունը որակապես նոր փուլ թևակոխեց:

2001 թ. դեկտեմբերի 25-27-ը ՀՀ նախագահ Ռ.Քոչարյանը երկօրյա պաշտոնական այցով մեկնեց Իրան: Տեղի ունեցան հանդիպումներ ԻԻՀ հոգևոր առաջնորդ Ալի Խոմեյնիի, ԻԻՀ նախագահ

---

[916] Տե՛ս ՀՀ ԱԳՆ նախարարության ընթացիկ արխիվ, «ՀՀ ԱԳՆ 2011 թ. գործունեության հաշվետվությունը», թ. 16:
[917] Տե՛ս նույն տեղում, թ. 16, 17:
[918] Տե՛ս նույն տեղում, էջ 17:
[919] Տե՛ս ՀՀ ԱԳՆ ընթացիկ արխիվ, «ՀՀ ԱԳՆ 2012 թ., գործունեության հաշվետվությունը», թ. 11:

Մոհամմադ Խաթամիի և այլ պաշտոնատար անձանց հետ: Հանդիպումների ժամանակ քննարկվեցին երկկողմ և տարածաշրջանային հետաքրքրություն ներկայացնող հարցեր[920]: Այցի ավարտին ստորագրվեցին 10 փոխըմբռնման հուշագրեր և համաձայնագրեր Իրան-Հայաստան գազամուղի շինարարության, Քաջարանի թունելի կառուցման և այլ բնագավառներում համագործակցության շուրջ: 2004թ. սեպտեմբերի 8-9-ը երկօրյա պաշտոնական այցով Հայաստան ժամանեց ԻԻՀ նախագահ Մոհամմադ Խաթամին: Պաշտոնական այցի արդյունքներով ստորագրվեց Համատեղ կոմյունիկե, Դաշնագիր Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջև՝ համագործակցության սկզբունքների և հիմունքների մասին: Այցելությանը զուգահեռ սեպտեմբերի 8-ին Երևանում գումարվեց հայ-իրանական կապերի համակարգման միջկառավարական հանձնաժողովի 5-րդ նիստը՝ մասնակցությամբ երկու երկրների նախագահների[921]:

2006 թ. հուլիսի 5-ից 6-ը երկօրյա աշխատանքային այցով ԻԻՀ մեկնեց ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի գլխավորած պատվիրակությունը: ՀՀ նախագահը հանդիպումներ ունեցավ ԻԻՀ նախագահ Մ. ԱհմադիՆեժադի, Ազգային անվտանգության բարձրագույն խորհրդի քարտուղար Ա. Լարիջանիի հետ: Այցի արդյունքում ստորագրվեց երկու երկրների նախագահների համատեղ հայտարարություն համագործակցության ամրապնդման և անվտանգության ապահովման վերաբերյալ[922]:

2007 թ. մարտի 19-ին ՀՀ նախագահ Ռ.Քոչարյանը և ԻԻՀ նախագահ Մահմուդ Ահմադինեժադը պաշտոնապես բացեցին Իրան-Հայաստան գազատարը: Նույն օրը ստորագրվեց «Հայաստանի Հանրապետության կառավարության և Իրանի Իսլամական կառավարության միջև Արաքս գետի վրա հիդրոէլեկտրակայաններ կառուցելու և շահագործելու բնագավառում համագործակցության մասին» համաձայնագիրը[923]: Ուսումնասիրվեցին Մեղ-

---

[920] Բաղալյան Գ., Հայաստան-Իրան հարաբերությունները 20 տարեկան են, էջ 257:
[921] Տե՛ս նույն տեղում, էջ 264:
[922] Տե՛ս նույն տեղում, էջ 273:
[923] Տե՛ս նույն տեղում, էջ 277:

րիում նավթավերամշակման գործարանի կառուցման հնարավորությունները: Երկու երկրների միջև իրականացվեցին օպտիկամանրաթելային մոլուխային գծի միացման աշխատանքները, ՀՀ - տարածքում անցկացվեցին սահմանային մոլուխային մանրաթելի գծեր և այլն:

2007 թ. հոկտեմբերին կայացավ ԻԻՀ նախագահի պաշտոնական այցը Հայաստանի Հանրապետություն: Ստորագրվեցին սոցիալ-տնտեսական, այդ թվում ապրանքաշրջանառության ծավալների ավելացման վերաբերյալ բազմաթիվ փաստաթղթեր[924]: 2007-2012 թթ. նույնպես տեղի ունեցան երկու երկրների նախագահներ Սերժ Սարգսյանի և Մահմուդ Ահմադինեժադի փոխադարձ պաշտոնական այցելություններ, որոնց ընթացքում ստորագրվեցին սոցիալ-տնտեսական, առևտրային և շինարարական ոլորտի համագործակցության բազմաթիվ փաստաթղթեր: Դրանց շնորհիվ ավարտվեցին ՀՀ - Իրան այլընտրանքային ավտոճանապարհների բարեկարգված նոր հատվածների շինարարությունները, ընթացքի մեջ դրվեցին երկաթգծի կառուցման, ինչպես նաև «Ագարակ-Չինուհայր» էլեկտրահաղորդման օդային երրորդ գծի աշխատանքները: Երկու երկրների միջև ապրանքաշրջանառության ծավալները 2000 թ. 100 մլն դոլարից 2005 թ. հասան 175 մլն-ի, իսկ 2011 թ. 300 մլն դոլարից ավելի և շարունակվում են աճել: Իրականացվեցին և ընթացքի մեջ են մի շարք կարևոր ռազմավարական նշանակություն ունեցող ծրագրեր[925]:

2000-2012 թթ. ընթացքում տեղի ունեցան հայ-իրանական կապերի համակարգման միջկառավարական համատեղ հանձնաժողովների 11 նիստեր (10-րդը կայացավ 2011 թ. մայիսի 29-30-ը՝ Թեհրանում ՀՀ էներգետիկայի նախարար, հանձնաժողովի համանախագահ Արմեն Մովսիսյանի գլխավորությամբ): Կողմերի միջև ստորագրվեցին 7 տասնյակից ավելի միջպետական և միջգերատեսչական տարբեր բնույթի փաստաթղթեր[926]:

2011 թ. մարտի 27-ին ԻԻՀ նախագահ Մ. Ահմադինեժադի հրա-

---

[924] Տե՛ս նույն տեղում, էջ 280:
[925] Տես նույն տեղում, էջ 296, 297:
[926] Տես ՀՀ ԱԳՆ ընթացիկ արխիվ, «ՀՀ ԱԳՆ 2011 թ. գործունեության հաշվետվությունը», թ. 17, 18:

վերով ՀՀ նախագահ Ս.Սարգսյանը այցելեց Թեհրան, իսկ նույն թվականի դեկտեմբերի 23-ին տեղի ունեցավ ԻԻՀ նախագահի այցելությունը Երևան: Փոխադարձ այցելությունների շնորհիվ ստորագրվեց տարբեր ոլորտների համագործակցության վերաբերյալ վեց փաստաթուղթ[927]:

Հայ-իրանական քաղաքական հարաբերությունների բարձր մակարդակը ապահովեց Իրանի հավասարակշռված դիրքորոշումը Լեռնային Ղարաբաղի հիմնահարցում: Միջուկային ծրագրերի պատճառով Իրանի շուրջ առաջացած լարվածությունը, որը սպառնում էր տարածաշրջանի կայունությանն ու անվտանգությանը, մտահոգություն էր առաջացրել նաև Հայաստանի Հանրապետությունում: Այդ կապակցությամբ Հայաստանը հստակ դիրքորոշում արտահայտեց, ըստ որի ճանաչում է խաղաղ նպատակներով միջուկային էներգիայի օգտագործման Իրանի իրավունքը և վստահ է, որ բոլոր վիճելի հարցերը հնարավոր է լուծել խաղաղ դիվանագիտական եղանակով:

2012 թ. հոկտեմբերի 23-ից 25-ը Երևանում կայացավ հայ-իրանական միջկառավարական հանձնաժողովի 11-րդ նիստը, իսկ նոյեմբերի 8-ին ՀՀ նախագահ Ս.Սարգսյանի մասնակցությամբ տեղի ունեցավ Մեղրիի ՀԷԿ-ի շինարարական աշխատանքների հիմնարկեքի պաշտոնական արարողությունը: Տեղի ունեցան նաև քաղաքական, իրավական, մշակութային և այլ ոլորտներում համագործակցությանը նվիրված մի շարք միջգերատեսչական փոխայցելություններ և հանդիպումներ[928]:

21-րդ դարասկզբին Թուրքիայի և Հայաստանի միջև դիվանագիտական հարաբերությունների բացակայության պայմաններում, այնուամենայնիվ, հանդիպումներ ու շփումներ ժամանակ առ ժամանակ տեղի էին ունենում երկու երկրների բարձրաստիճան պաշտոնյաների, հատկապես միջազգային կառույցների (ԵԱՀԿ, ՍԾՏՀ) և այլն շրջանակներում: Թուրքիայի և Հայաստանի միջև քաղաքական հարաբերությունների և դիվանագիտական շփումնե-

[927] Տե՛ս նույն տեղում:
[928] Տե՛ս նույն տեղում, «ՀՀ ԱԳՆ 2012 թ. գործունեության հաշվետվությունը», թ. 12:

րի համատեքստում բավականին ուշագրավ էր 2000 թ. Կովկասում անվտանգության և կայունության մեխանիզմ հիմնելու շուրջ երկու երկրների նախագահների միջև ընթացող նամակագրությունը: Թուրքիայի հանրապետության նախագահ Ս. Դեմիրելը նշեց, որ «Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատումը կախված է Հայաստանի և Ադրբեջանի միջև հակամարտության լուծումից, մասնավորապես հայտարարեց, որ ԼՂ հիմնահարցի խաղաղ լուծման արդյունքում Հայաստանը կարող է ներառվել տարածաշրջանի նավթամուղային նախագծերում»: Դրան ի պատասխան Ռ. Քոչարյանը ընդգծեց. «Ոչ մեկը չունի որևէ պատրանքներ, որ մենք կարող ենք զիջումներ անել այդ տարածաշրջանային նախագծերի կապակցությամբ»[929]:

Չնայած թուրքական իշխանությունների՝ Հայաստանի հետ հարաբերությունների բարելավման մասին հայտարարություններին և հայկական իշխանությունների պատասխան քայլերին, ինչպես նաև երկու երկրների պաշտոնատար անձանց միջև կայացած հանդիպումներին և նամակագրական շփումներին, այնուամենայնիվ, հայ-թուրքական մերձեցման միտումները որևէ էական արդյունքի չհանգեցին:

Ինչպես 1990-ական թթ., այնպես էլ 21-րդ դարասկզբին Թուրքիան հայ-թուրքական հարաբերությունները շարունակում էր պայմանավորել հիմնականում ադրբեջանական տարածքային ամբողջականության, ԼՂ հիմնահարցի կարգավորված չլինելով, Ցեղասպանության միջազգային ճանաչման ուղղությամբ ՀՀ-ի ծավալած ջանքերով՝ ժխտելով Հայոց ցեղասպանության փաստը, պահանջելով, որ Հայաստանի Հանրապետությունը ամեն կերպ չեզոքացնի սփյուռքահայության հակաթուրքական գործունեությունը, միաժամանակ ջանալով պահպանել երկկողմ շփումները և երկխոսության հնարավորությունները: Հայաստանի Հանրապետությունը մերժեց միջազգային պրակտիկային անհարիր այս նախապայմանները:

2001 թ., անդրադառնալով երկկողմ հարաբերությունների զար-

[929] Տե՛ս Հայաստան 1998-2007, էջ 91:

գացումներին՝ ՀՀ նախագահը երկխոսության ձախողման հիմնական մեղքը վերագրեց թուրքական կողմին: «Թուրքիան մնում է անզիջողական աղրբեջանամետ կեցվածքի և Հայաստանի շարունակվող շրջափակման պատանդը: Մենք Թուրքիային կոչ ենք արել և շարունակում ենք կոչ անել Հայաստանի հետ հարաբերությունները սկսել առանց նախապայմանների: Քանի դեռ Թուրքիան շարունակում է մերժել անցյալը՝ Հայոց ցեղասպանության փաստը, մեր հաշտեցումը մնում է անվստահության պատանդ»[930]:

Հայ-թուրքական միջպետական հարաբերություններում կարևոր նշանակություն ունեցավ Օսկանյան-Ջեմ-Գուլիև առաջին եռակողմ հանդիպումը՝ 2002 թ. մայիսի 14-15-ին Ռեյկյավիկում՝ արտգործնախարար Իսմայիլ Ջեմի նախաձեռնությամբ: Վերադարձից հետո Ջեմը հրապարակեց Հայաստանի հետ հարաբերություններ հաստատելու հիմնական նախապայմանները, որոնք ըստ էության վերը թվարկվածներն էին, ավելացված այն, որ Հայաստանը պետք է միջանցք տրամադրի Աղրբեջանի և Նախիջևանի կապն ապահովելու համար:

Դարասկզբին Անկարայի և Բաքվի միջև ռազմական համագործակցության ընդլայնման շուրջ միտումներ նկատվեցին, որոնք ունեն հակահայկական ուղղվածություն: Դրա վառ օրինակներից էր այն, որ թուրքական ուսումնական հաստատություններում սովորում էին ավելի քան 400 աղրբեջանական զինծառայողներ, իսկ աղրբեջանական բանակում ծառայում էին մինչև 70 թուրքական սպաներ: Միաժամանակ, պաշտոնական Բաքուն կողմ էր արտահայտվել աղրբեջանական բանակի՝ հյուսիս-ատլանտյան դաշինքի չափանիշների համապատասխանեցմանը: Ըստ էության, այդ երկու պետությունների ռազմական համագործակցությունը գնալով ստանում էր ռազմական դաշինքի ձև՝ իր վրա կրելով համաթուրքականության կնիքը: Այս առումով պատահական չէր դեռս 2000 թ. ապրիլին Անկարայում Աղրբեջանի նախկին նախագահ Ա. Էլչիբեյի ելույթը, որը թուրք եղբայրներին կոչ արեց աջակցել Բաքվին «Լեռնային Ղարաբաղը ազատագրելու հայկական ագրեսիա-

[930] Տե՛ս նույն տեղում:

յից և Հարավային Ադրբեջանը իրանական օկուպացումից»: Նա նորից հայտարարեց «Բոլոր թուրքերի բնական իրավունքի» մասին՝ ստեղծելու համար միասնական պետություն, որում, ըստ նրա համոզման, պետք է մտներ ժամանակակից Թուրքական հանրապետությունը, Ադրբեջանական հանրապետությունը և Հարավային (Իրանական) Ադրբեջանը: «40 մլն ադրբեջանական և 70 մլն անատոլիական թուրքերը պետք է միավորվեն և ստեղծեն 110 միլիոնանոց պետություն՝ տարածաշրջանային հսկա, որի կարծիքը հաշվի կառներ ամբողջ աշխարհը»,- հավաստիացնում էր Ա. Էլչիբեյը:

Հայ-թուրքական հարաբերությունների հետագա ընթացքը ցույց տվեց, որ Թուրքիայի արտաքին քաղաքականության օրակարգում դրված չէր ՀՀ-ի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու հարցը, թեև արտաքին ճնշումներին տեղիք տալով՝ վերջինս մի քանի ձևական քայլեր, այնուհանդերձ, կատարեց: Դրանցից կարելի է նշել 2001 թ. ԱՄՆ-ի նախաձեռնությամբ թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովի ստեղծումը: Հանձնաժողովի գործունեությունը վերապահումով կարելի է անվանել հասարակական երկխոսություն: Հանձնաժողովը ստեղծման պահին միավորում էր վեց թուրք և չորս հայ գործիչների: Նրա ծպտյալ աշխատանքը և նրա շուրջ ստեղծված բարոյահոգեբանական մթնոլորտը խորացրին հետագա ձախողումները: Հայտարարելով, թե քննարկումների համար «տաբուներ չկան», հանձնաժողովականները հաճախ ձեռք էին մեկնում այնպիսի հարցերի, որոնք վեր էին իրենց իրավասությունից, պահանջում էին պատասխանատու մոտեցում և մասնագիտական հմտություններ: Ավելին, հանձնաժողովի գործունեությունը սկսեց շահարկվել ի վնաս Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի: Հանձնաժողովի հայ անդամները այդպես էլ չհասկացան, որ իրենց թուրք գործընկերներն ի զորու չեն հրաժարվելու տարիներ շարունակ որդեգրած ժխտման բարդույթից: Թուրքերը չեն հաղթահարում պատմության սեփական թյուրըմբռնումը: Հավելյալ խոչընդոտ էր հանձնաժողովի աշխատանքներում ԱՄՆ Պետդեպարտամենտի ներգրավվածությունը: Ամերիկյան տեսանկյունից՝ հայ-թուրքական հաշտեցումը կթուլացներ պաշտոնական Երևանի կախվածությու-

նը մոսկովյան թելաղրանքից: Շուտով առանց որևէ լուրջ արդյունքների (2004թ.) հաշտեցման հանձնաժողովը հայտարարեց ինքնալուծարման մասին:

2004 թ. ընթացող հայ-թուրքական հարաբերություններում ակտիվություն նկատվեց. հատկապես հաճախացան արտգործնախարարների շփումները[931]: Ակնհայտ է, որ Հայոց ցեղասպանության միջազգայնացումը Թուրքիայի կողմից ընկալվում է որպես իրական վտանգ: 21-րդ դարասկզբի առաջին տասնամյակի երկրորդ կեսից ցեղասպանության դեմ պայքարը բարձրացվեց Թուրքիայի արտաքին քաղաքականության օրակարգ՝ առաջնային խնդրի վերածվելով, հայ-թուրքական հարաբերություններում ԼՂ հիմնահարցը ետին պլան մղելով:

2005-2008 թթ. որևէ առաջընթաց չնկատվեց հայ-թուրքական հարաբերությունների ոլորտում: Մի քանի անգամ մերժվեց Թուրքիայի անդամակցությունը Եվրամիությանը՝ նրա կողմից Հայոց ցեղասպանության ժխտման պատճառով[932]:

Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման ուղղությամբ քայլեր ձեռնարկեց ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը՝ Թուրքիայի նախագահ Աբդուլահ Գյուլին 2008 թ. սեպտեմբերի 6-ին հրավիրելով Հայաստանի և Թուրքիայի ֆուտբոլային հավաքականների հանդիպմանը[933], իսկ հաջորդ տարի 2009 թ. հոկտեմբերին նա հրավիրվեց Թուրքիա՝ պատասխան խաղը դիտելու: ՀՀ նախագահի նախաձեռնությունը միջազգային հանրության կողմից անվանվեց «ֆուտբոլային դիվանագիտություն»: Աշխարհի շատ երկրներում հետաքրքրությամբ հետևում էին, թե «ֆուտբոլային դիվանագիտությունն» ինչ արդյունք է տալու:

2009 թ. հոկտեմբերի 10-ին Ցյուրիխում Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի միջև ստորագրվեցին «Երկկողմ դիվանագիտական հարաբերությունների հաստատման և զարգացման

---

[931] Տե՛ս ՀՀ ԱԳՆ ընթացիկ արխիվ, «ԱԳ նախարար Վ. Օսկանյանի կողմից ՀՀ արտաքին քաղաքականության 2003, 2004 թթ. ամփոփումը», թ. 3, 4:
[932] Տե՛ս Օսկանյան Վ., նշված աշխ., էջ 506:
[933] Տե՛ս ՀՀ ԱԳՆ ընթացիկ արխիվ, «ՀՀ արտաքին քաղաքական գործունեության 2008 թ. ամփոփումը» թ. 6:

մասին» արձանագրություններ[934]: Դրանցով նախատեսվում էր բացել երկու երկրների սահմանը և կարգավորել միջպետական հարաբերությունները: Արձանագրություններն ուժի մեջ պետք է մտնեին միայն երկու երկրների խորհրդարանների կողմից վավերացվելուց հետո: Թուրքիայի խորհրդարանն անհարկի ձգձգումներով չէր վավերացնում արձանագրությունները, իսկ երկրի ղեկավարները հանդես էին գալիս նախապայմանների մասին հայտարարություններով: Ելնելով իրավիճակից՝ ՀՀ նախագահը 2010 թ. ապրիլի 22-ի հրամանագրով կասեցրեց արձանագրությունների վավերացման գործընթացը[935]: Հիմնական պատճառն այն էր, որ թուրքական կողմը հրաժարվում էր առանց նախապայմանների, խելամիտ ժամկետում արձանագրությունները վավերացնելու պարտավորությունից՝ խնդիրը կապելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն-Ադրբեջան հակամարտության և Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի հետ:

Թուրքիայի ապակառուցողական մոտեցումը համապատասխան վերաբերմունքի է արժանացել միջազգային հանրության կողմից, որը բազմիցս նշել է, թե ժամանակն է, որ թուրքական կողմը գործնական քայլ կատարի՝ առանց նախապայմանների արձանագրությունների վավերացման և իրականացման ուղղությամբ:

2011 թ. հոկտեմբերի 23-ին Թուրքիայում տեղի ունեցած երկրաշարժից տուժածներին Հայաստանը տրամադրեց 40 տոննա մարդասիրական օգնություն[936]:

2012 թ. Թուրքիայի ոչ կառուցողական դիրքորոշման պատճառով Հայաստան-Թուրքիա հարաբերություններում որևէ զարգացում տեղի չի ունեցել:

Փաստորեն արդի պայմաններում վերահաստատվել է միջազգային հանրության աջակցությունը հայ-թուրքական հարաբերություններում, առանց նախապայմանների կարգավորման գործընթացում Հայաստանի Հանրապետության սկզբունքային դիրքորոշման:

---

[934] Տե՛ս նույն տեղում, «ՀՀ արտաքին քաղաքական գործունեության 2009 թ. ամփոփումը», թ. 10:
[935] Տե՛ս նույն տեղում, «ՀՀ արտաքին քաղաքական գործունեության 2010 թ. ամփոփումը» թ. 15:
[936] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 17.01.2012:

ե. Ղարաբաղյան բանակցությունների նոր փուլը

20-րդ դարավերջին ղարաբաղյան ընդհատված բանակցությունները շարունակվեցին 2001 թվականի սկզբին, որի արդյունքում 2001 թ. ապրիլին ստեղծվեց Քի Վեստի փաստաթուղթը, որը որոշակի առաջընթաց արձանագրեց[937]: Այն հստակորեն ամրագրում էր Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման փաստը, քննարկում էր առաջնային կարևորություն ունեցող հարցերի շրջանակ: Դրանցից էին Հայաստան-ԼՂՀ և Ադրբեջան-Նախիջևան կայուն հաղորդակցության հարցերը: Կարճ ժամանակ անց Ադրբեջանը հրաժարվեց բանակցություններից և առաջադրեց նորանոր պահանջներ. Ադրբեջանի նոր ղեկավարությունը իշխանության գալով՝ սկզբում մտադիր էր սպառնալիքի լեզվով խոսել, բայց դա կարճ տևեց: Շուտով 2004 թ. սկսվեց «Պրահայան բանակցությունները» ուղղված կողմերի երկխոսության աշխուժացմանը: Նախագահները շարունակում էին հանդիպել, թեև ոչ նախկին հաճախականությամբ: Ջուգահեռաբար ընթանում էին արտգործնախարարների հանդիպումները, որոնց ժամանակ օրակարգային խնդիր էր ԼՂՀ կարգավիճակը: 2007 թ. առաջ եկան Մադրիդյան հիմնական սկզբունքները[938], որոնք ներառում էին երեք կարևորագույն միջազգային նորմեր՝ տարածքային ամբողջականություն, ազգերի ինքնորոշման իրավունք և ուժի կիրառման բացառում: Համաձայն այդ սկզբունքների նախատեսվում էր, որ Ղարաբաղը պետք է ունենա միջանկյալ կարգավիճակ, որը թույլ կտա արցախցիներին անվտանգ ապրել: Փախստականները պետք է վերադառնային իրենց նախկին բնակության վայրերը, պետք է տեղակայվեին միջազգային խաղաղապահ ուժեր և անցկացվեր Արցախի կարգավիճակի վերաբերյալ հանրաքվե: Այստեղ առաջ էր քաշվում նաև ազատագրված տարածքների վերադարձի և այլ հարցեր, որոնք բնականաբար ընդունելի չէին ՀՀ-ի և ԼՂՀ-ի հա-

---

[937] Տես Օսկանյան Վ., նշված աշխ., էջ 190, 198, 199:
[938] Տես նույն տեղում, էջ 200:

մար: Մադրիդյան սկզբունքները, որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում վարվող բանակցությունների հիմք, ընդունվեցին 2008 թ. նոյեմբերի 2-ի Մոսկովյան հռչակագրով[939]: Հռչակագիրը հաստատում էր, որ հակամարտությունը պետք է լուծվի միայն քաղաքական բանակցությունների ճանապարհով: 2009 և 2010 թթ. շարունակվեցին ՀՀ և ԱՀ նախագահների միջև ուղղակի շփումները[940], նաև ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների այցելությունները տարածաշրջան: 2010 թվականից բանակցությունների քննարկման փուլում է ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում մշակված Մադրիդյան սկզբունքների նորացված տարբերակը[941]: Հարկ է նշել, որ Ղարաբաղյան խնդրով ցանկացած բանակցությունների, այդ թվում նախագահների երկխոսության ժամանակ Հայաստանի Հանրապետությունը շարունակում է պաշտպանել այն սկզբունքը, որ ցանկացած վերջնական համաձայնություն կամ փաստաթուղթ անվիճելիորեն պետք է ստանա նաև Ղարաբաղյան հակամարտության կարգավորման առանցքային կողմի՝ ԼՂՀ-ի հավանությունը: Միայն այդ դեպքում է հնարավոր սկսել խնդրի կարգավորումը: ՀՀ-ի համար խնդրի կարգավորման հիմքը շարունակում է մնալ ԼՂՀ ժողովրդի ինքնորոշման իրավունքի ամրագրումն ու դրա միջազգային ճանաչումը, ԼՂՀ բնակչության անվտանգության միջազգային երաշխիքների ապահովումը, ՀՀ-ի հետ կապը ցամաքային սահմանի առկայությամբ՝ բացառելով անկլավը: Միայն նման փաստերի ընդունումն ու դրանց ամրագրումը հնարավոր կդարձնի խնդրի կարգավորումը:

Ի դեպ միայն 2008-2011 թթ. ընթացքում Հայաստանի և Ադրբեջանի նախագահները եռակողմ ձևաչափով (նկատի ունենք Ռուսաստանի Դաշնության նախագահին) հանդիպել են երեք անգամ Սանկտ-Պետերբուրգում, երկուական անգամ՝ Մոսկվայում և Սո-

---

[939] ՀՀ ԱԳՆ ընթացիկ արխիվ, «ՀՀ արտաքին քաղաքական գործունեության 2008 թ. ամփոփումը», թ. 4, 5:

[940] Տես նույն տեղում, «ՀՀ ԱԳՆ 2009 թ. գործունեության հաշվետվությունը», թ. 2, 3:

[941] Տես նույն տեղում, «ՀՀ ԱԳՆ 2010 թ. գործունեության հաշվետվությունը», թ. 7, 8:

չիում, մեկ անգամ՝ Աստրախանում, որոնց ընթացքում ընդունվել են մի շարք փաստաթղթեր. 2008-ին Մայենդորֆի հռչակագիրը, 2010-ին՝ Աստրախանի հայտարարությունը և 2011-ին՝ Սոչիի հայտարարությունը[942]:

Իսկ այն փաստը, որ 2009 թ. հուլիսի 10-ի Ակվիլայի, 2010 թ. հունիսի 26-ի Մուսկոկայի և 2011 թ. մայիսի 26-ին Դովիլում Մեդվեդևի, Օբամայի և Սարկոզիի հանդիպումներն ու հայտարարությունները նպատակ ունեին ամեն ինչ անել խաղաղ ճանապարհով կարգավորելու ղարաբաղյան հակամարտությունը և վերջին հաշվով խնդրի լուծման ուղղությամբ հասնել որոշակի արդյունքների ու բեկման, խոսում է այն մասին, որ այդ հակամարտությունը գտնվում է մեծ տերությունների ուշադրության կենտրոնում: Խնդրի լուծման ուղղությամբ հատկապես որոշակի հույսեր էին կապված 2011 թ. հունիսի 24-ին Թաթարստանի մայրաքաղաք Կազանում եռակողմ՝ Ռուսաստանի նախագահ Դ. Մեդվեդևի, Հայաստանի նախագահ Ս. Սարգսյանի և Ադրբեջանի նախագահ Ի. Ալիևի հանդիպման հետ, որը, սակայն, չարդարացրեց այդ հույսերը՝ բավարարվելով միայն հայտարարությամբ այն մասին, որ հանդիպելով Կազանում՝ երեք պետությունների նախագահները արձանագրեցին մի շարք հարցերի շուրջ փոխըմբռնման ձեռքբերում, որոնց լուծումը կնպաստի հիմնական սկզբունքներին հավանություն տալու համար պայմանների ստեղծմանը[943]:

Միաժամանակ Հայաստանի և Ադրբեջանի նախագահները երախտագիտություն են հայտնում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների առաջնորդներին և բարձր են գնահատում պայմանավորվածությունների ձեռքբերմանն օժանդակելու ՌԴ նախագահի անձնական ջանքերը:

Սակայն այդ բոլորով հանդերձ, որևէ համաձայնություն հիմնարար սկզբունքների շուրջ Կազանում ձեռք չբերվեց, որն էլ ի չիք

---

[942] Տե՛ս նույն տեղում, «ՀՀ ԱԳՆ 2011 թ. գործունեության հաշվետվությունը», թ. 8, 9:

[943] Տե՛ս նույն տեղում, թ. 8, 9, «Հայաստանի Հանրապետություն», 25.06.2011:

դարձրեց այն ակնկալիքները, որ Կազանյան հանդիպումը կարող էր դառնալ բեկումնային: Դժվար չէ համոզվել, որ դարաբաղյան հիմնախնդիրը դեռ երկար ու երկար քննարկումների նյութ կարող է դառնալ: Բոլոր դեպքերում բանակցությունները շարունակվում են՝ հույս ներշնչելով, որ դրանք կարող են երկուստեք ընդունելի տարբերակների հանգեցնել և հակառակորդ կողմը ի վերջո կհասկանա, որ ինքը որևէ իրավունք չունի Ղարաբաղի նկատմամբ:

2011 թ. դեկտեմբերին Վիլնյուսում կայացած ԵԱՀԿ արտգործնախարարների խորհրդի շրջանակներում ընդունվեց ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների պատվիրակությունների ղեկավարների և Հայաստանի ու Ադրբեջանի արտաքին գործերի նախարարների հայտարարությունը, որով վերահաստատվեց բացառապես խաղաղ միջոցներով ու միջազգային իրավունքի հիման վրա ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման այլընտրանքի բացակայությունը, շփման գծում միջադեպերի քննության մեխանիզմի ստեղծման կարևորությունը և դիպուկահարների դուրսբերումը[944]:

2012 թ. հունվարի 23-ին ՌԴ նախագահի հրավերով Սոչիում տեղի ունեցավ Հայաստանի, Ռուսաստանի և Ադրբեջանի նախագահների եռակողմ հանդիպում, որտեղ քննարկվեցին ԼՂՀ հակամարտության կարգավորման ընթացքն ու հեռանկարները: Երեք երկրների ղեկավարներն ընդգծեցին ԼՂ հակամարտության կարգավորման ուղղությամբ իրականացված աշխատանքի մեծ ծավալը՝ սկսած 2008 թ. նոյեմբերի 2-ի հանդիպումից, երբ ընդունվեց Մոսկովյան հռչակագիրը: Նախագահները հայտարարեցին, որ ինտենսիվ բանակցությունների շնորհիվ առաջընթաց ձեռք բերվեց ԼՂ կարգավորման հիմնարար սկզբունքների համաձայնեցման շուրջ[945]:

Ի զարգացումն 2011 թ. մարտի 5-ին Սոչիում արված համատեղ հայտարարության, ՀՀ, ՌԴ և Ադրբեջանական հանրապետության

---

[944] Տե՛ս նույն տեղում:

[945] Տե՛ս նույն տեղում, «ՀՀ ԱԳՆ 2012 թ. գործունեության հաշվետվությունը», թ. 4, 5, 6, «Հայաստանի Հանրապետություն», 24.01.2012:

նախագահներն ի գիտություն ընդունեցին համանախագահների և ԵԱՀԿ-ի գործող նախագահի անձնական ներկայացուցչի շփման գծերի երկայնքով դիպուկահարների հեռացման, միջադեպերի հետաքննության անցկացման մեխանիզմի վերաբերյալ համատեղ զեկույցը, փաստաթուղթ, որը սակայն աղրբեջանական կողմը միշտ անտեսում էր: Հայտարարության մեջ ընդգծվեցին ՀՀ-ի և ԱՀ-ի նախագահների պատրաստակամությունը նպաստել մտավորականության, գիտական ու հասարակական շրջանների ներկայացուցիչների միջև հետագա երկխոսության հաստատմանը: Հանդիպումը մեկ անգամ ևս փաստեց Մինսկի խմբի համանախագահների ջանքերով վարվող բանակցությունների և հարցը խաղաղ ճնով լուծելու կարևորությունը:

Սակայն Աղրբեջանը, չնայած Սոչիի պայմանավորվածությանը, նորից շարունակում է խախտումները: Ուստի պատահական չէ ՀՀ նախագահ Ս. Սարգսյանի հայտարարությունը 2012 թ. մարտի 6-ին Բրյուսելում Եվրոպական խորհրդի նախագահի և ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի հետ հանդիպումների ժամանակ, երբ քննարկվեցին նաև ԼՂ հակամարտության կարգավորման բանակցային գործընթացի վերջին զարգացումները: Նա ընդգծեց, որ «Աղրբեջանը կտրականապես մերժում է վստահության կառուցման ցանկացած առաջարկ՝ ուղղված լինի դա թե՛ տարածաշրջանային համագործակցության խթանմանը, թե՛ շփման գծում լարվածության թուլացմանը: Օրինակ՝ Աղրբեջանը (չնայած պայմանավորվածությանը) ցավոք դեմ է միջադեպերի հետաքննությանը: Ավելին, ոչ մի րոպե չեն դադարել Աղրբեջանի կողմից պատերազմի կոչերը: Աղրբեջանի ղեկավարությունը շարունակում է հայերի նկատմամբ ատելության սերմանումը: Բանակցություններն անհամատեղելի են պատերազմի քարոզչության, ազգատյացության և աննախադեպ չափերի սպառազինությունների ձեռքբերման հետ: Նրանք, ովքեր պատերազմ են «խաղում», պետք է արդեն վաղուց սովորած լինեին պատմության դասերը: Աղրբեջանի նախագահը ընդամենը մի քանի օր առաջ հայտարարեց, որ աղրբեջանցիների թիվ մեկ թշնամին աշխարհասփյուռ հայությունն է: Այս հանգամանքը պետք է արժանանա միջազգային հանրության

գնահատականին: Գլխավոր քարտուղարի հետ համամիտ ենք, որ հակամարտությունը պետք է կարգավորվի բացառապես խաղաղ միջոցներով և բանակցությունների ճանապարհով՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում: Համոզված ենք, որ ԼՂ հակամարտության վերջնական կարգավորումը հնարավոր է միայն ժողովուրդների ինքնորոշման իրավունքի հարգման և անվտանգության համակողմանի երաշխիքների ապահովման միջոցով: Մենք բազմիցս շեշտել ենք, որ ԼՂ ժողովուրդը եվրոպական ընտանիքի մաս է, նույն արժեքների կրողը: Հայաստանը մշտապես շեշտել է ԼՂ իշխանությունների հետ ուղիղ շփումների անհրաժեշտությունը»[946]:

Այսպիսով, Հայաստանը միշտ էլ հավատարիմ է մնացել իր սկզբունքներին և պատրաստ է հարցի արդարացի լուծմանը:

2012 թվականը նշանավորվեց ԱՄՆ Ռոդ Այլընդ և Մասաչուսեթս նահանգների, ինչպես նաև Ավստրալիայի Նոր Հարավային Ուելս նահանգի խորհրդարանների կողմից Արցախի Հանրապետության անկախության ճանաչման վերաբերյալ որոշումներով[947]:

գ. Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ուղղությամբ գործադրված ջանքերը

Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության գլխավոր ուղղություններից մեկը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումն է: Այդ գործընթացը XX դարի վերջին և XXI դարի սկզբին ծավալվեց նոր ուժով: 1998 թվականից ՀՀ արտաքին քաղաքականության օրակարգում հաստատուն տեղ զբաղեցրեց Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցը: ՀՀ-ի մոտեցումը հստակ է. նման ոճիրը ոչ թե մի ժողովրդի ողբերգություն է, այլ մարդկության դեմ կատարված ծանրագույն հանցանք: Դրա անպատժելիությունը խրախուսել է հետագա նման ողբերգությունները: ՀՀ-ի նման դիրքորոշումը լայն ճանաչում ու աջակցություն է ստացել տարբեր երկրների ու միջազգային կազմակերպությունների կողմից ընդունված բանաձևերում:

---

[946] Տե՛ս նույն տեղում:
[947] Տե՛ս նույն տեղում, թ. 6:

Եթե մինչև Հայաստանի անկախությունը Հայոց ցեղասպանությունը ճանաչել ու դատապարտել էին ընդամենը մի քանի երկրներ ու միջազգային կազմակերպություններ, ապա 1990-ական թվականներին դրանց թիվն ավելացավ: 1998 թ. ապրիլի 24-ին Եվրախորհրդի խորհրդարանական վեհաժողովը Հայոց ցեղասպանությունը համարեց XX դարի առաջին ցեղասպանություն: 2000 թ. նոյեմբերի 10-ին Վատիկանը իր հայտարարության մեջ Հայոց ցեղասպանությունը համարեց XX դարի հետագա բոլոր ցեղասպանությունների սկիզբ:

1990-ական թթ. երկրորդ կեսին մի շարք երկրներ, այդ թվում՝ Ռուսաստանը, Կանադան, Կիպրոսը, Հունաստանը, Բելգիան, Լիբանանը, Արգենտինան և այլք, իրենց խորհրդարանների որոշումներով ճանաչեցին ու դատապարտեցին Հայոց ցեղասպանությունը, իսկ 2000-ական թթ. նման որոշումներ կայացրին Ֆրանսիայի, Արգենտինայի, Շվեյցարիայի, Իտալիայի, Սլովակիայի, Նիդերլանդների, Լեհաստանի, Գերմանիայի, Լիտվայի, Վենեսուելայի, Չիլիի, Շվեդիայի խորհրդարանները: Մի քանի երկրներում Հայոց ցեղասպանության ճանաչումը օրենքի ուժ ստացավ[948]:

Ցեղասպանությունը ճանաչած և դատապարտած պետությունների թիվը շուրջ 2,5 տասնյակ է: Այն ճանաչել են նաև ԱՄՆ-ի 4 տասնյակից ավելի նահանգները և տարբեր քաղաքների քաղաքապետարանները: ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովը 2010 թ. մարտին, ինչպես որ 2000, 2005 և 2007 թթ., ընդունել է Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձև, սակայն Կոնգրեսը, Սենատը, քաղաքական խնդիրներից ելնելով, վճռականություն չեն ցուցաբերել և ճանաչման որոշում չեն կայացրել[949]:

Նախկինում Հայոց ցեղասպանությունը ճանաչելու գործընթա-

---

[948] Տե՛ս Մինասյան Է., Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը, «Հայոց Մեծ Եղեռն 90» հոդվածների ժողովածու, Երևան, 2005, էջ 289-301:

[949] Տե՛ս Մինասյան Է., Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման նոր փուլի առանձնահատկությունները, «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, Ա, Երևան, 2011, էջ 323-331:

ցում ակնհայտ էր տվյալ երկրի հայ համայնքի ազդեցության հանգամանքը: Լիտվայի, Սլովակիայի ճանաչումից հետո սկսվեց մի նոր փուլ, երբ Հայոց ցեղասպանությունը ճանաչում են այնպիսի երկրներ, որտեղ հայ համայնք գրեթե բացակայում է: Պետությունները հետևում են մարդկության դեմ գործած ծանրագույն հանցագործությունը դատապարտելու առաջադեմ մոտեցմանը[950]: Կարևորվում է 2005 թ. ապրիլին Գերմանիայի Բունդեսթագի՝ Հայոց ցեղասպանության դատապարտման վերաբերյալ որոշումը, քանզի այդ երկիրը մեղքի իր բաժինն է ունեցել Մեծ եղեռնի իրագործման հարցում:

Ներառելով ցեղասպանության ճանաչման հարցն իր արտաքին քաղաքականության օրակարգում՝ Հայաստանի Հանրապետությունն աշխատանք տարավ երեք ուղղություններով: Առաջին՝ երրորդ երկրներում երկկողմ հարաբերությունների համատեքստում, երկրորդ՝ միջազգային տարբեր ատյաններում, Թուրքիա - ԵՄ անդամակցության գործընթացում, երրորդ՝ Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման ուղղությամբ:

Հայոց ցեղասպանության ճանաչման անհրաժեշտությունն ավելի հստակեցվում է Եվրամիությանը Թուրքիայի լիիրավ անդամակցության գործընթացում՝ որպես սեփական պատմության հետ հաշտվելու պահանջ: Այս դրույթն ամրագրվել է 2005 թ. սեպտեմբերի 28–ին Եվրախորհրդում Թուրքիայի զեկույցում, ուր հստակ նշվում է, թե որպես ԵՄ լիիրավ անդամակցության նախապայման Թուրքիան պետք է ճանաչի Հայոց ցեղասպանության փաստը[951]:

Վստահ լինելով, որ Թուրքիայի կողմից 1915 թ. ցեղասպանության ճանաչումը կվերացնի երկու երկրների միջև առկա անվստահության մթնոլորտը և ի պատասխան 20-րդ դարասկզբի իրադարձությունների ուսումնասիրման համար պատմաբանների համատեղ հանձնաժողով ստեղծելու՝ Թուրքիայի վարչապետ Ռ. Թ. Էրդողանի առաջարկին՝ ՀՀ նախագահը հանդես եկավ հարաբերությունների կարգավորմամբ զբաղվող միջպետական հանձնաժողով

[950] Տե՛ս նույն տեղում:
[951] Տե՛ս Հայաստան 1998-2007, էջ 90:

ստեղծելու առաջարկով: Ի հակակշիռ իշխանությունների և ցեղասպանությունների փաստը ժխտողների, Թուրքիայում մի շարք պատմաբաններ ու գիտնականներ ոչ միայն ճանաչում են Հայոց ցեղասպանությունը, այլև հանդես են գալիս այն պաշտոնապես ճանաչելու կոչերով:

2006 թ. սեպտեմբերի 4-ի ԵԽ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի Թուրքիային վերաբերող զեկուցման մեջ նույնպես տեղ է գտել Հայոց ցեղասպանության ճանաչման անհրաժեշտության դրույթը[952]:

Հայաստանի առաջարկությամբ ՄԱԿ-ի գլխավոր վեհաժողովի 53-րդ նստաշրջանի օրակարգում ընդգրկվեց «Ցեղասպանության հանցանքի կանխման և պատժի մասին կոնվենցիայի 50-ամյակը» վերտառությամբ հարցը: Արդյունքում ՄԱԿ-ի գլխավոր վեհաժողովն ընդունեց համապատասխան բանաձև, որի համահեղինակ դարձան 86 երկրներ: ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի 57-րդ նստաշրջանի ընթացքում (2002 թ.) Հայաստանը ներկայացրեց «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և պատժի կոնվենցիայի մասին» բանաձև, որի համահեղինակ դարձան 22 երկրներ և այն ընդունվեց կոնսենսուսով[953]:

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը որոշակի ազդեցություն ունեցավ նաև Թուրքիայում հասարակական կարծիքի փոփոխման վրա: Այդ հարցը դադարեց տաբու՝ արգելված թեմա լինելուց այդ երկրում և դարձավ ամենաքննարկվող հիմնահարցերից մեկը՝ սերտորեն կապվելով Թուրքիայի ընդհանուր ժողովրդավարացման գործընթացի հետ: Այդ գործընթացի ջատագովներից էր 2007 թ. հունվարի 19–ին Ստամբուլում ահաբեկչության զոհ դարձած «Ակոս» թերթի խմբագիր, հայտնի հասարակական գործիչ Հրանտ Դինքը: Նրա թաղման արարողությունը վերածվեց բազմահազարանոց ցույցի: Կատարվածը մեծ ազդեցություն ունեցավ թե՛ Թուրքիայի, թե՛ միջազգային հասարակական կարծիքի վրա: Թուրք հանրության առաջադեմ ներկայացուցիչնե-

[952] Տես Սինասյան Է., նշված աշխ., էջ 326:
[953] Տես Հայաստան 1998-2007, էջ 91:

րը փողոց դուրս եկան «Մենք հայ ենք», «Մենք Հրանտ Դինքն ենք» կարգախոսներով:

Սակայն պաշտոնական Թուրքիան շարունակում է Հայոց ցեղասպանության ժխտողական քաղաքականությունը: 2006 թ. Թուրքիայի կառավարությունը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման դեմ պայքարը հռչակեց երկրի արտաքին քաղաքականության կարևորագույն ուղղություններից մեկը: Թուրքերը նյութական և մարդկային մեծ միջոցներ են ծախսում ԱՄՆ-ում և Հայոց ցեղասպանությունը չճանաչած այլ երկրներում այդ գործընթացը կասեցնելու համար:

Չնայած Թուրքիայի գործադրած ջանքերին, Բելգիան օրենք ընդունեց նաև Հայոց ցեղասպանությունը մերժող անձանց դատապարտելու մասին, որին 2007 թ. միացավ նաև Արգենտինան:

Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ժխտողականության դեմ պայքարի ու ցեղասպանությունների կանխարգելման տեսանկյունից կարևոր քայլ էր 2011 թ. դեկտեմբերի 22-ին Ֆրանսիայի Ազգային ժողովի, իսկ 2012 թ. հունվարի 23-ին Սենատի կողմից Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրենքի նախագծի ընդունումը, որը 45 հազար եվրո տուգանք և մեկ տարվա բանտարկություն էր նախատեսում երկրի օրենքով ճանաչված ցեղասպանությունների ժխտման համար:

Հունվարի 30-ին նախագիծը պետք է ներկայացվեր Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզիի ստորագրությանը, որից հետո կհրապարակվեր պաշտոնաթերթում ու օրենքի ուժ կստանար: Սակայն ինչպես միշտ, նման դեպքերում Թուրքիայի հանրապետության ղեկավարությունը սվիններով դիմավորեց նախագծի ընդունումը՝ հանդես գալով Ֆրանսիայի հետ կապերը խզելու սպառնալիքով, Հայաստանի Հանրապետության քննադատությամբ, ֆրանսիացիներին ամոթանք տալով, նախագահ Սարկոզիի հասցեին ամենասանձարձակ արտահայտություններով նրան անձնական վիրավորանք հասցնելով: Շուտով, հակառակ ենթադրության, հունվարի 30-ին Սենատի ընդունած օրինագիծը 77 սենատորների ստորագրությամբ, որոնց միացել էին նաև Ֆրանսիայի Ազգային

ժողովի 65 պատգամավորներ, բողոքարկվեց Սահմանադրական դատարանում:

2012 թ. փետրվարի 28-ին Ֆրանսիայի Սահմանադրական խորհուրդը խոսքի ազատությունը սահմանափակելու պատճառաբանությամբ հակասահմանադրական ճանաչեց ու չեղյալ հայտարարեց ցեղասպանությունների, այդ թվում Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրինագիծը, որը բխում է ՄԱԿ-ի ցեղասպանությունը պատժելու և կանխարգելելու կոնվենցիայից[954]:

Ֆրանսիայի նորընտիր նախագահ Ֆրանսուա Օլանդի հայտարարությունը ու նպատակադրվածությունը ցեղասպանությունների ժխտումը քրեականացնելու վերաբերյալ օրենքի նոր տեքստ մշակելու վերաբերյալ հույս է ներշնչում, որ կգա այդ օրը, երբ Ֆրանսիայի Սենատը կընդունի Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրենքը:

Այսպիսով, Թուրքիան ոչ միայն չի ճանաչում Հայոց ցեղասպանության փաստը, այլև հանդես է գալիս նրա միջազգային ճանաչման դեմ՝ անտեսելով նաև հայ ժողովրդին պատճառած վնասների (նյութական և տարածքային) փոխհատուցման խնդիրը:

Հայոց ցեղասպանության 95-րդ և 96, 97, 98-րդ տարելիցների կապակցությամբ շուրջ հինգ տասնյակից ավելի երկրներում անցկացվեցին ոգեկոչման և հիշատակի հարյուրավոր միջոցառումներ, որոնց իրենց աջակցությունը ցուցաբերեցին ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունները:

ՀՀ նախագահի հրամանագրով ստեղծվել է Հայոց ցեղասպանության 100-ամյակի միջոցառումների կազմակերպման պետական հանձնաժողով, որը ՀՀ ԱԳՆ և ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների հետ միասին աշխատանքներ է տանում 2015 թ. այն պատշաճ և արժանավայել ձևով նշելու համար:

---

[954] Տե՛ս ՀՀ ԱԳՆ ընթացիկ արխիվ, «ՀՀ ԱԳՆ 2012 թ. գործունեության հաշվետվությունը», թ. 6:

ՎԵՐՋԱԲԱՆ

1990-ական թվականների սկզբին Հայաստանի ազգային անկախության վերականգնումը, հայկական զույգ հանրապետությունների՝ Հայաստանի երրորդ Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ստեղծումը պատմական նոր շրջափուլ նշանավորեց հայոց նորագույն պատմության մեջ:

ԽՍՀՄ համակարգում սերտաճած և նրա օրգանական մաս կազմող Խորհրդային Հայաստանի անկախացումը բազմաթիվ դրական նվաճումների հետ նաև բազում դժվարություններ ու ծանր փորձություններ բերեց հանրապետությանը: 1980-ական թվականների վերջին նախկին ԽՍՀՄ-ում տեղի ունեցած քաղաքական բուռն զարգացումների հետևանքով Հայաստանը, խորհրդային մյուս հանրապետությունների հետ միասին, կանգնեց համակարգային բարեփոխումներ իրականացնելու անհրաժեշտության առջև: Այդ բարեփոխումներն ընդգրկում էին հասարակական կյանքի բոլոր ոլորտները՝ քաղաքական, տնտեսական, իրավական, սոցիալական ու մշակութային և իրենց բնույթով ավելի ծավալուն էին ու խորը:

Վերլուծելով քսանից ավելի տարիների ընթացքում Հայաստանի Հանրապետության ներքին կյանքի բարեփոխումներն ու դրանց արդյունքները՝ կարող ենք միանշանակ եզրակացնել, որ չնայած դրական ձեռքբերումներին, հնարավոր էր անել ավելին, որ չարվեց մի շարք օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառներով: Հանրապետության սոցիալ-տնտեսական հիմնական վերափոխում պետք է համարել առաջին հերթին շուկայական միջավայրի ձևավորումը: Գործում են քաղաքացիական ու քրեական նոր օրենսգրքեր, ընդունվում են բյուջետային, հարկային, մաքսային ու բանկային համակարգերի ու տարբեր ընկերությունների գործունեությունն ու այլ խնդիրներ կարգավորող բազմաթիվ օրենքներ ու օրենսդրական ակտեր: Սկսած 1994 թ. վերը թվարկված բարեփոխումների և ներդրումների շնորհիվ երկրում արձանագրվել է տարեկան միջին հաշվով 5,9 % տնտեսական աճ, ըստ որում 2001 թ.

գրանցվել է 9,6 %, որը շարունակվել է մինչև 2008 թ. համաշխարհային տնտեսական ճգնաժամը, իսկ հետճգնաժամային շրջանում՝ հատկապես 2012թ. 7%:

Չնայած այս ամենին՝ անցած քսանից ավելի տարիներին Հայաստանի Հանրապետությանը չհաջողվեց վերականգնել սոցիալ-տնտեսական զարգացման, բնակչության կենսամակարդակի մինչանցումային մակարդակը: Ավելին, պաշտոնական տվյալներով բնակչության 35 տոկոսից ավելին համարվում է աղքատ, ընդ որում մոտ մեկ քառորդը՝ ծայրահեղ աղքատ, բնակչության եկամուտների բևեռացումը ամենամեծն է նախկին Խորհրդային Միության երկրների շարքում: Արմատական փոփոխություններ չեն արձանագրվել նաև տնտեսական ճյուղային կառուցվածքում և համաշխարհային շուկաներում մրցունակ արտադրանք արտադրելու ոլորտում:

1990-ական թթ. սկզբներից սկսած՝ կտրուկ խզվեցին հատկապես արտադրական կոոպերատիվ կապերը, փակվեցին ապրանքների արտահանման ուղիները և տնտեսությունն ու հասարակությունը հայտնվեցին խոր ճգնաժամի մեջ: Այդ բոլորին գումարվեցին պատերազմը, շրջափակումը, 1988 թ. երկրաշարժը, բռնագաղթը և այլն: Այդ ճգնաժամն ուներ ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ պատճառներ:

Հայաստանում բարեփոխումները չիրականացվեցին համալիր և առավել հետևողականորեն, ինչը կբարձրացներ բարեփոխումների գործընթացի կառավարման որակն ու արդյունավետությունը: Ի տարբերություն բարեփոխումների շոկային տարբերակ ընտրած երկրների, Հայաստանում գների և արտաքին առևտրի ազատականացումը չուղեկցվեց ֆինանսական կայունությամբ, մակրոտնտեսական հավասարակշռության, լայնամասշտաբ մասնավորեցման ծավալման գործընթացներով: Հանրապետությունում կենսագործվող սոցիալ-տնտեսական վերափոխումները հաճախ մեխանիկական ընդօրինակումն էին այս կամ այն երկրում կատարվող ընդհանուր գործընթացների առանց հաշվի առնելու տեղական առանձնահատկություններն ու ավանդույթները:

Առանց լուրջ նախապատրաստական աշխատանքների սկսվե-

ցին հողի սեփականաշնորհման աշխատանքները: Արդյունքում՝ տարեցտարի կրճատվեցին ցանքատարածությունները, անասնագլխաքանակը, գյուղացիությունը զանգվածաբար հրաժարվեց իր երազած մասնավոր սեփականությունից՝ բռնելով արտագաղթի և արտագնացության կործանարար ուղին: Անկազմակերպ և չմտածված ձևով կենսագործվեց արդյունաբերության սեփականաշնորհումը: Անկախացումից հետո օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով զրկվելով հումքից և էներգիայից արդյունաբերության մի շարք ճյուղեր դադարեցին գործելուց: ԱՊՀ երկրներից ամենաբարձր արդյունաբերական զարգացում ունեցող Հայաստանը 1990-ականների կեսերին հայտնվեց ամենացածր մակարդակի վրա: Այս բնագավառի սեփականաշնորհումը նույնպես կատարվեց արագացված տեմպերով՝ ավելի շուտ քանդելով նախկին հզոր արդյունաբերությունը, քան կառուցելով:

Որոշ բարեփոխումներ կատարվեցին դրամավարկային և բանկային համակարգերում ժամանակակից պահանջներին համապատասխանեցնելու նպատակով: Սակայն այստեղ ևս նկատվեցին խոշոր չափերի հասնող վարկերի ու բնակչության միջոցների յուրացումներ: Դրամավարկային վերափոխումները ըստ էության քիչ նպաստեցին հատկապես միջին և փոքր ձեռնարկությունների ամրապնդմանն ու զարգացմանը: Փաստորեն պետությունն իր ֆինանսական վիճակը բարելավեց մանր ու միջին արտադրողի հաշվին՝ կամա թե ակամա հովանավորելով ստվերային տնտեսությունն ու նպաստելով բևեռացման խորացմանը:

Անկախացումից հետո հայտարարելով, որ ՀՀ-ն սոցիալական պետություն է, չմշակվեց հասարակության բոլոր շերտերի շահերը հաշվի առնող սոցիալական ամբողջական քաղաքականություն: Այս բնագավառում ևս չգործարկվեցին հասարակության հատկապես անաշխատունակ և սակավազոր խավերի շահերը պաշտպանելու մեխանիզմներ: Իրականացվող սոցիալական բարեփոխումները չնպաստեցին բնակչության հիմնական կենսախնդիրների լուծմանը: Սոցիալ-տնտեսական ճգնաժամը քայքայիչ ազդեցություն ունեցավ նաև առողջապահության, գիտակրթական բնագավառներում: Պետական հատկացումների տարեցտարի նվազումը,

վճարովի սպասարկումները հասարակության աղքատ մեծամասնությանը զրկեցին այդ բնագավառներից օգտվելու հնարավորությունից: Դա իր բացասական ազդեցությունն ունեցավ գիտության, գիտակրթական հիմնարկների գործունեության վրա: Արդյունքում մոտ 4 անգամ կրճատվեց գիտական աշխատողների քանակը: Հայտնվելով համատարած ճգնաժամային վիճակում՝ թերագնահատվեց գիտության դերը, չգիտակցվեց, որ նա ազգային հարստություն է, նպաստավոր պայմաններ չստեղծվեցին գիտական հետազոտությունների համար: Շուտով անկախության առաջին շրջանի դժվարություններին ու թերություններին փոխարինեցին հաջողությունները: Հետագա տարիներին դրությունն աստիճանաբար շտկվեց: Վերելքի ուղին բռնեցին արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը, աշխուժացավ հոգևոր-մշակութային կյանքը: Հաջողություններ արձանագրվեցին հասարակական-քաղաքական կյանքի մյուս ոլորտներում ևս: Կառուցվեցին հայկական երկու անկախ պետությունների հիմքերը, կայացան Հայաստանի զույգ հանրապետությունները՝ ՀՀ-ն և ԼՂՀ-ն, դրական քայլեր են իրականացվել ժողովրդավարության, ազատ տնտեսության, քաղաքացիական հասարակության ստեղծման, ներքին կյանքի կայունության, խաղաղության ապահովման, մեր երկրի անվտանգության գլխավոր երաշխիքի՝ ազգային բանակի ստեղծման ու ամրապնդման, հավասարակշռված արտաքին քաղաքականություն վարելու և միջազգային հանրությանը ինտեգրվելու գործում: Պատմության համար ակնթարթ համարվող, իսկ մեր ժողովրդի համար երկար, բարդ ու ծանր փորձություններով լի քսանից ավելի տարիները եղան կորուստների, փնտրտուքի, հաջողությունների ու նվաճումների տարիներ: Այսօր ունենք կայացած պետական կառավարման համակարգ՝ ժամանակակից պետության բոլոր հատկանիշներով հանդերձ, ունենք ազգային բանակ և սեփական ռազմական արդյունաբերություն, որը մեր ժողովրդի հզորության ու երկրի պաշտպանության գրավականն է:

Պատահական չէ, որ 2011 թ. սեպտեմբերի 21-ին Հայաստանի Հանրապետության անկախության 20-ամյակին նվիրված զորահանդեսի ժամանակ Հանրապետության հրապարակով անցան

հայկական արտադրության ռազմական հզոր տեխնիկան՝ զրահապատ մեքենաներ, անօդաչու թռչող սարքեր, ինչպես նաև խրոխտ շարքերով հայրենիքի պաշտպանները՝ աշխարհին ցուցադրելով իրենց մարտական պատրաստվածությունը, անկոտրում կամքն ու ոգին: Այդ օրերին հայ ժողովուրդն ապրեց հպարտության հուզիչ պահեր՝ գալիքին նայելով վստահությամբ և նորանոր հաղթանակներ կերտելու վճռականությամբ: Սեփական բանակի նկատմամբ հպարտությունը, խանդավառ տրամադրությունը իշխող էր նաև հայոց բանակի կազմավորման 20-ամյակի օրերին (2012թ. հունվարի 28-ին): Իբրև անկախության ամենամեծ ձեռքբերում նշվեց հայոց ազգային բանակի կազմավորումը և նրա համաժողովրդական սխրանքով ձեռք բերած հաղթանակը: Այդ հաղթանակով կերտված Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը մեր ժողովրդի հպարտությունն է: Այն կայացած պետություն է իր բոլոր կառույցներով: Նույնիսկ պատերազմի սպառնալիքի պայմաններում նա անհամեմատ ավելի ժողովրդավարական երկիր է, քան այն պետությունը, որ անընդհատ սպառնալիք է հնչեցնում հայության դեմ:

Այսպիսով, հանրապետության տնտեսության փլուզման կասեցումը, երկրի պաշտպանունակության ամրապնդումը, հասարակական-քաղաքական կյանքի զարգացման և այլ բնագավառների ձեռքբերումները վկայում են անկախության ուղին որդեգրած ժողովրդի իրոք անսպառ հնարավորությունների մասին:

ՀԱՎԵԼՎԱԾ

Հայաստանի երրորդ Հանրապետության նախագահներ*

1. Տեր-Պետրոսյան Լևոն Հակոբի - 16.10.1991 (11.11.1991) - 3.11.1998
2. Քոչարյան Ռոբերտ Սեդրակի - 30.03.1998 (10.04.1998) - 19.04.2008
3. Սարգսյան Սերժ Ազատի - 19.02.2008 (9.04.2008)-ից

ՀՀ Գերագույն Խորհրդի (ՀՀ ԳԽ), Ազգային ժողովի (ԱԺ) նախագահներ

1. Տեր-Պետրոսյան Լևոն Հակոբի - 4.08.1990-16.10.1991 (11.11.1991)
2. Արարքցյան Բաբկեն Գուրգենի -
   ՀՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար - 11.11.1991թ.,
   ՀՀ ԳԽ նախագահ - 24.12.1991թ.-5.07.1995,
   ԱԺ նախագահ - 22.07.1995 - 4.02.1998
3. Հարությունյան Խոսրով Մելիքի - 9.02.1998 - 7.06.1999
4. Դեմիրճյան Կարեն Սերոբի - 17.06.1999 - 27.10.1999
5. Խաչատրյան Արմեն Ավագի - 2.11.1999 - 12.06.2003
6. Բաղդասարյան Արթուր Վահանի - 12.06.2003 - 21.05.2006
7. Թորոսյան Տիգրան Սուրիկի - 1.06.2006 - 26.09.2008

* Նախագահների համար առաջին թվականը ցույց է տալիս ընտրության տարին և օրը, իսկ երկրորդը՝ պաշտոնավարման տարին և օրը:

8. Աբրահամյան Հովիկ Արգամի - 29.09.2008 - 21.11.2011, 31.05.2012-13.04.2014
9. Նիկոյան Սամվել Պարգևի - 6.12.2011-31.05.2012
10. Սահակյան Գալուստ Գրիգորի - 29.04.2014-ից

Վարչապետեր

1. Մանուկյան Վազգեն Միքայելի - 6.08.1990 - 22.11.1991
2. Հարությունյան Գագիկ Գարուշի - պաշտոնակատար 22.11.1991-30.07.1992
3. Հարությունյան Խոսրով Մելիքի - 30.07.1992 - 2.02.1993
4. Բագրատյան Հրանտ Արարատի - 12.02.1993 - 19.09.1996
5. Սարգսյան Արմեն Վարդանի - 20.09.1996 - 20.03.1997
6. Քոչարյան Ռոբերտ Սեդրակի* - 20.03.1997 - 9.04.1998
7. Դարբինյան Արմեն Ռազմիկի - 20.04.1998 - 11.06.1999
8. Սարգսյան Վազգեն Ջավենի - 11.06.1999 - 27.10.1999
9. Սարգսյան Արամ Ջավենի - 2.11.1999 - 2.05-2000
10. Մարգարյան Անդրանիկ Նահապետի - 12.05.2000 - 25.03.2007
11. Սարգսյան Սերժ Ազատի - 4.04.2007 - 9.04.2008
12. Սարգսյան Տիգրան Սուրենի - 9.04.2008 - 3.04.2014
13. Աբրահամյան Հովիկ Արգամի - 13.04.2014-ից

* Վարչապետի պաշտոնը ստանձնել է 10.06.1997թ.:

ՀՀ Արտաքին գործերի նախարարները

1. Եղիազարյան Աշոտ Երեմի - պաշտոնակատար - 1990 - 1991
2. Հովհաննիսյան Ռաֆֆի Ռիչարդի - 1991- 1992
3. Կիրակոսյան Արման Ջոնի - պաշտոնակատար - 1992 - 1993
4. Փափազյան Վահան Հակոբի - 1993 - 1996
5. Արզումանյան Ալեքսանդր Ռոբերտի- 1996-1998
6. Օսկանյան Վարդան Սինասի - 1998 - 2008
7. Նալբանդյան Էդուարդ Աղվանի - 2008 - ից

ՀՀ Պաշտպանության նախարարները

1. Սարգսյան Վազգեն Ջավենի - 1991 - 1992, 1995 - 1999
2. Տեր-Գրիգորյանց Նորատ Գրիգորի - պաշտոնակատար- 1992-1993
3. Մանուկյան Վազգեն Միքայելի - 1992 - 1993
4. Սարգսյան Սերժ Ազատի - 1993 - 1995, 2000 - 2007
5. Հարությունյան Վաղարշակ Վառնազի - 1999 - 2000
6. Հարությունյան Միքայել Հարությունի - 2007 - 2008
7. Օհանյան Սեյրան Մուշեղի - 2008-ից

Минасян Эдик Гарегинович

Исстория третьей Республики Армения

(РЕЗЮМЕ)

В работе впервые на основе архивных документов, печатных источников и с использованием научной литературы и прессы по возможности цельно и систематично анализируется история более чем двадцатилетней внутренней и внешней политики двух независимых армянских республик - РА и НКР.

Это первая попытка обобщения принципиальных подходов к самым разным сферам общественной жизни, а также освещения основных процессов развития переходной экономики республики. В отдельных главах работы рассматриваются процессы провозглашения независимости и становления государственности, государственно-правовые и административные реформы, экономические и социальные преобразования, особенности перехода к рыночным отношениям. В исследовании особое внимание уделено преобразованиям государственных структур, изменениям в сферах индустрии и сельского хозяйства, процессам приватизации, ее особенностям и последствиям. Важное место уделено финансово-банковской системе, финансово-кредитной и налогово-бюджетной политике, порожденным переходной экономикой особенно болезненным социальным проблемам, месту и роли социальных реформ, выбору социальных приоритетов, передвижениям населе-

ния, вопросам занятости, безработицы, социальной стратификации общества, подходам улучшения уровни жизни населения, реформам в здравохранительной, культурной и научно-образовательной области. Анализируются общественно-политическая жизнь, итоги президентских и парламентских выборов, деятельность партий двух армянских республик, основные направления внешней политики РА, отношения Республики Армения с соседними странами, с Россией и с другими странами СНГ, с Евросоюзом и США. Представлен процесс международного признания геноцида армян. Отдельная глава посвящена отношениям родина-спюрк (диаспора). Также в отдельной главе представлены начало и течение национально-освободительной борьбы, арцахского движения, военно-дипломатическая помощь армянского народа воевавшему Арцаху, итоги героической арцахской борьбы, провозглашение и становление НКР, обсуждение вопроса НКР в международных организациях и переговорах.

В каждой главе даются научно обоснованные практические и реалистические предложения, которые вытекают из всестороннего анализа данной проблемы.

В работе сделана попытка также обосновать место и роль Армении в регионе и в международных организациях путем анализа социально-экономических процессов и обсуждения вопросов внешней политики РА.

Minasyan Edik Garegin

The History of the third Republic of Armenia

(RESUME)

The work presents for the first time a critical analysis of the history of domestic and foreign policies of both independent Armenian republics (RA and NKR) on the basis of archival documents, published sources, scientific literature and press.

It is the first attempt to summarize the fundamental approaches to the different spheres of social life, to show the major processes of development of the transition economy of the republic. The chapters of the book discuss the processes of declaration of independence and the accomplishment of statehood, the state, legal and administrative reforms, the economic and social reorganisations, the peculiarities of turning to market relations. Special attention is given to the reorganisation of government institutions, the changes in the industrial and agricultural spheres, the processes of privatization, its peculiarities and consequences. Due attention is paid to the financial and banking system, monetary and fiscal policy, to the more painful social problems created by the transition economy, to the place and role of social reforms, the social preferences, the transposition of the population, the issues of employment, unemployment, social stratification of the society, the approaches to the problem of improvement of the living standard of the population, the reforms of the health service, cultural life, scientific and educational fields. The analysis covers the social-political life of both Armenian republics, the results of presidential and parliamentary

elections, tha activity of the parties, the major directions of the foreign policy of RA, the relations of the Republic of Armenia with the neighbour countries, with Russia and countries of CIS, with EU and USA. The process of the international recognition of the genocide of Armenians is presented. A separate chapter is devoted to the relationships of motherland-diaspora. Another chapter presents the beginning and run of the Artsakh movement and the liberation struggle, the military and diplomatic aid of Armenian people to the struggling Artsakh, the results of the heroic Artsakhian struggle, the announcement and accomplishment of the NKR, the consideration of NKR issue in the international institutions and negotiations.

Each chapter presents scientifically reasoned practical and realistic suggestions which proceed from the detailed analysis of the problem. The work attempts to justify the role of Armenia in the region and in the international institutions through the analyses of social economic processes and consideration of issues of foreign policy of RA.

ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Արխիվային նյութեր

1. Հասարակական-քաղաքական կազմակերպությունների փաստաթղթերի կենտրոնական պետական արխիվ (այսուհետև՝ ՀՀ ՀՔԿՓԿՊԱ) ֆ. 1, ց. 82, գ. 25, թ. 81, ց 84, գ.1, թ. 68-69, ց 128, գ. 3, թ. 1, Ֆ 4516, ց. 1, գ. 13, թ. 1-4, գ 25, թ. 66, 68, գ. 27, թ. 8-20,27, 30, գ. 47, թ.89գ. 50, թ. 7-8:

Հայաստանի ազգային արխիվ

2. Ֆ.113, ց 119, գ. 161, թ. 1-3, ց 163, գ. 185, թ 1-2, 12-14, գ. 202, թ. 1, 3գ. 232, թ. 3, գ. 341, թ. 3, գ. 406, թ. 6-9, գ.418, թ .3, գ. 426, թ. 12, 13, ց 164, գ. 323, թ. 1-4, գ. 669, թ. 1-4, գ. 716, թ. 1,2, գ. 717, թ 1-2, ց. 165, գ. 41, թ. 1,3, գ. 42, թ.1-6, գ. 127, թ.1,2, գ. 141, թ. 21, գ.152, թ.14,գ. 156, թ. 256,257, գ. 162, թ.1, գ.163, թ.1,գ. 167, թ. 6-8, 71, գ. 170, թ.1-2, գ. 171, թ 1-2, 4, 5,12, գ. 172, թ. 2,3, գ.174, թ.1, գ. 175, թ. 3, գ.201, թ. 1-3, գ.205, թ. 3,4, գ.247, թ. 1-6, գ. 252, թ.14, գ.255, թ.24, գ. 256, թ.1-2, գ. 259, թ. 1, 2, գ. 274, թ. 3-7, գ. 276, թ.1-2, գ. 283, թ.7-14, գ. 293, թ. 1,4, գ. 298, թ.1, գ. 317, թ.1,2, գ. 318, թ. 1, գ.325, թ. 4,5, գ.326, թ.2, գ. 327, թ. 1-5, գ. 331, թ. 1-2, գ. 334, թ.2-4, գ. 346, թ .2,3, գ. 357, թ.2,1, գ. 363, թ. 1-3, գ. 374, թ.2, գ. 389, թ. 1-7, գ. 393, թ. 3, գ. 400, թ.4-8, գ. 401, թ. 5-8, գ. 402, թ.1-2, գ.403, թ.1, գ. 407, թ.3-7, գ. 409, թ. 1-7, գ.411, թ. 1-2, գ. 412, թ.1, գ. 415, թ. 42, գ. 448, թ.1-3,13, գ. 484, թ.1,3, գ. 486, թ. 2,5,8, գ. 487, թ. 1,3,9, 223-226, 241-243, 257-258, գ.496, թ.1, գ. 511, թ. 1, 2, գ. 519, թ.2, գ. 521, թ. 2, գ. 562, թ. 21, ց 167,գ62,թ1,2, գ.123, թ.8, գ 318, թ 11, ֆ. 119, ց. 1 5, գ. 12ա թ. 40, 41, 56, 58, 59, 61, գ. 16, թ. 134, 152, գ. 19, թ. 70, 71, գ. 23, թ, 228, 244, գ. 26, թ. 7, 9, 11, 12, 19, 20, 82, 83, 146, գ. 28, թ. 153, 157, 160, 171, 177, գ. 49, թ. 141, 150, գ. 53, թ. 1, 21,45,49, գ. 79, թ. 1,9, գ. 80, թ. 2, 3, 20, գ. 82, թ. 1,3, 12, գ. 87, թ. 1,3, գ. 84, թ. 16, գ. 91, թ. 3, 4, գ. 98, թ. 73, 74, գ. 258, թ. 34, 35, 123, 126:
3. ՀՀ կառավարության ընթացիկ արխիվային նյութեր և որոշումների ժողովածուներ 1991 թ., գ. 23, հ. 19, թ. 24-25, 223-242, 27, 28, թ. 257, գ. 4, հ. 35, 36, թ. 438-439, 1996թ. գ. 7, հ. 8, թ. 402,403, 1997թ. գ. 3. հ. 2. թ. 26, 1998թ., գ. 10, հ. 3, թ. 648-650, թ. 673-674, թ. 724, գ. 11, հ. 5. թ. 58, 1999թ., գ. 2, հ. 8 թ. 506, գ. 6, հ. 23-24, թ. 68, գ.7, հ. 2, թ. 424, 425, գ. 8, հ. 3, թ. 497, 2001թ., գ. 6, հ. 9, թ. 72,

73,74, 1993. № 5, հ. 35, թ. 5, №6, Ի 45, թ. 23-25, 1994 № 1,2, հ. 5-6, թ. 19-20, №4, հ.29-34, թ. 15-63, №6, հ. 49, թ. 3-8, հ. 51, թ. 18-19, № 7, հ. 68, թ. 92-103, № 8, հ. 76, թ. 39-69, 1995 թ., № 1, հ. 11, թ. 42-59, №2, հ. 18, թ. 22, №3, հ. 19, թ. 3, № 6, հ. 63, թ. 53-54, հ. 90, թ. 91-101, № 8, հ.88, թ. 3-36, № 11-12, հ. 100, թ. 9, 1996 №2, հ. 16, թ. 11-16, 24-25, № 7-8, հ. 69, թ. 10-12, 38, 39, հ. 70, թ. 27-33, № 9, թ. 34-35, հ. 86, թ. 37-44:

4. ՀՀ վիճակագրության, պետական ռեգիստրի և վերլուծության նախարարության ընթացիկ արխիվ, 2001 թ.,.գ. 20, հ. 15-99, թ. 2:
5. ՀՀ ԱԳՆ ընթացիկ արխիվ, «ՀՀ արտաքին քաղաքական գործունեության 2002-2012 թթ. հաշվետվությունների ամփոփում»:

Տպագիր աղբյուրներ

1. Ազգ, օրաթերթ, 1990-2012թթ.
2. Արդյունաբերություն 1990-1997թ.թ., վիճակագրական ժողովածու, Երևան, 1999թ.,
3. Արդյունաբերություն 1998-2003, վիճակագրական ժողովածու, Երևան, 2004:
4. Բանբեր Երևանի համալսարանի, հ. 2, Երևան, 2000:
5. Բանկային լրատու, ՀՀ ԿԲ, Երևան, 2000:
6. Բարձրագույն կրթություն, պրակ 2, կրթության ազգային ինստիտուտ, Երևան, 2007:
7. Բարձրագույն կրթություն, պրակ 5, ՀՀ ԿԳՆ, կրթության ազգային ինստիտուտ,Երևան, 2012:
8. Գյուղատնտեսությունը Հայաստանի Հանրապետությունում 1990-1999թթ., վիճակագրական ժողովածու, Երևան, 2001:
9. Դատաիրավական բարեփոխումներն ապահովող օրենսդրություն («ՀՀ օրենքը միջնորդ դատարանների և դատավարության մասին», «ՀՀ դատախազության մասին», «ՀՀ դատարանակազմության մասին», «Վճռաբեկ դատարանի գործունեության մասին», «Փաստաբանական գործունեության մասին»), Երևան, 1998:
10. Դրօշակ, թիվ 3, Երևան, 1999:
11. Ձեկույց իրական ակտիվներում իրականացված ներդրումների ընտրանքային հետազոտություն, Երևան, 2002:
12. էլեկտրոնային զարգացումը և Հայաստանը, Գլոբալ մարդկային զեկույց 2001, Երևան, 2001:
13. էկոնոմիկա, հ. 1-3, Երևան, 1996:
14. էկոնոմիկա, հ 1-3, Երևան, 1999:
15. էկոնոմիկա, հ. 7, Երևան, 2001:

16. ԽՄԿԿ XIX համամիութենական կոնֆերանսի որոշումները, Երևան, 1988:
17. Խորհրդային Հայաստան, օրաթերթ, 1988-1990 թթ.
18. Կայուն զարգացման համաշխարհային գագաթնաժողով, Յոհաննեսբուրգ, 2002:
19. Կրթություն, N1-15, Երևան, 2002:
20. Կրթությունը, աղքատությունը և տնտեսական ակտիվությունը Հայաստանում, իրավիճակային վերլուծության զեկույց, Երևան, 2002:
21. Համաշխարհային բանկ, Երևան, 2006:
22. Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով 2003-2007թթ., վիճակագրական ժողովածու, Երևան, 2008,
23. Հայաստան 2001, վիճակագրական գրքույկ, Երևան 2001:
24. Հայաստան 2002, վիճակագրական գրքույկ, Երևան 2002:
25. Հայաստանը թվերով. 1992թ., Երևան, 1994,
26. Հայաստանի ազգային մրցունակության զեկույց 2010, բարձրագույն կրթության մարտահրավերները, Երևան, 2010:
27. Հայաստանի զարգացման ուրվագծեր, սեմինարի նյութեր, Երևան, 2002:
28. Հայաստանի ժողովրդագրական և առողջության հարցերի հետազոտություն 2000, նախնական զեկույց, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, ՀՀ առողջապահության նախարարություն, Երևան, 2001:
29. Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, Երևան, 2004:
30. Հայաստանի ժողովրդագրական ժողովածու 2005թ., Երևան, 2005,
31. Հայաստանի ժողովրդագրական ժողովածու 2009թ., Երևան, 2009:
32. Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, Երևան, 2013:
33. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով, 1996թ., Երևան, 1996:
34. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով, Երկրորդ գումարում, Երևան, 2001:
35. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով, Երրորդ գումարում, Երևան, 2004:
36. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով, Չորրորդ գումարում, Երևան, 2007:
37. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով, Հինգերորդ գումարում, Երևան, 2012:

38. Հայաստանի Հանրապետության Աշխատանքի և Սոցիալական հարցերի նախարարություն 2003-2006թթ. ամփոփ հաշվետվություն, Երևան, 2007:
39. Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 1999, Երևան, 2000:
40. Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2000, Երևան, 2001:
41. Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2009, Երևան, 2010:
42. Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2011, Երևան, 2012:
43. Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2012, Երևան, 2013:
44. Հայաստանի Հանրապետության բնակարանային ֆոնդը և կոմունալ տնտեսությունը 1999 թվականին, վիճակագրական վերլուծական ժողովածու, Երևան, 2001:
45. Հայաստանի Հանրապետության բնակարանային ֆոնդը և կոմունալ տնտեսությունը 2012 թվականին, վիճակագրական վերլուծական ժողովածու, Երևան, 2013:
46. Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր. N 16 (972), 31 օգոստոսի 1990թ.:
47. Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, 15 մայիսի, 1995թ.:
48. Հայաստանի Հանրապետության ԿԲ-ի 2001թ. տարեկան հաշվետվություն, Երևան, 2001:
49. Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով 2005-2009թթ., վիճակագրական ժողովածու, Երևան, 2010:
50. Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով՝ 1998-2001, Երևան, 2002:
51. Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով՝ 1999-2003, վիճակագրական ժողովածու, Երևան, 2004: Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով 2000-2004թթ. վիճակագրական ժողովածու, Երևան, 2005:
52. Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով 2001-2005թթ., վիճակագրական ժողովածու, Երևան, 2006:
53. Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով 2003-2007թթ. վիճակագրական ժողովածու, Երևան, 2008:
54. Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով 2005-2009թթ., վիճակագրական ժողովածու, Երևան, 2010:

55. Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, թիվ 26 (201), 19 հուլիսի 2002:
56. Հայաստանի Հանրապետության պատմության ամփոփ ժամանակագրություն 1996, 1997, 1998, 1999, 2000, Երևան, 2002:
57. Հայաստանի Հանրապետության պետական ժողովրդագրական քաղաքականության հայեցակարգ, Երևան 2006:
58. Հայաստանի Հանրապետության պետվիճվարչության գյուղացիական տնտեսությունների հետազոտություն, Երևան,1997:
59. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, Երևան, 1995:
60. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, Երևան, 2005:
61. Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 1999թ., վիճակագրական վերլուծական ժողովածու, Երևան, 2001:
62. Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2001թ., վիճակագրական ժողովածու, Երևան, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2003:
63. Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2004թ., ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2004:
64. Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2006թ., ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2006:
65. Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը, 2002թ. վիճակագրական ժողովածու, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2003:
66. Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը, 2010թ., ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2010:
67. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 1995թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 1996
68. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 1996թ., հունվար-դեկտեմբերին, Երևան, 1997:
69. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 1997թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 1998:
70. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 1998թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 1999:
71. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 1999 թվականի հունվար-դեկտեմբերին, Երևան, 2000:
72. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2000թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 2001:
73. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2001թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 2002:

74. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2002 թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 2003:
75. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2004 թ. հունվար-դեկտեմբերին, Երևան 2005:
76. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2005 թ. հունվար-դեկտեմբերին, Երևան 2006:
77. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2006 թ. հունվար-դեկտեմբերին, Երևան 2007:
78. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2007 թ. հունվար-դեկտեմբերին, Երևան 2008:
79. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2008 թ. հունվար-դեկտեմբերին, Երևան 2009:
80. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2009 թ. հունվար-դեկտեմբերին, Երևան 2010:
81. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2010 թ. հունվար-դեկտեմբերին, Երևան 2011:
82. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2011 թ. հունվար-դեկտեմբերին, Երևան 2012:
83. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2012 թ. հունվար-դեկտեմբերին, Երևան 2013:
84. Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը մշակութային արժեքների արտահանման և ներմուծման մասին, Երևան, 2001:
85. Հայաստանի Հանրապետություն, օրաթերթ, 1991-2013:
86. Հայաստանի Հանրապետություն, Ազգային գնահատման զեկույց, Երևան, 2002:
87. Հայաստանի Հանրապետությունում մասնավոր հատվածի զարգացման մասին վերջնական զեկույց (ամփոփագիր) CRC Արտերկրյա համագործակցության ԲԸ Տոմացու և ընկ., Տոկիո, Ճապոնիա, 1999:
88. Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, վիճակագրական վերլուծական զեկույց, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 1999:
89. Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, վիճակագրական վերլուծական զեկույց, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2000:
90. Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, վիճակագրական վերլուծական զեկույց, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2001:

91. Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, վիճակագրական վերլուծական զեկույց, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2002:
92. Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, վիճակագրական վերլուծության զեկույց, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2004թ.
93. Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, վիճակագրական վերլուծության զեկույց, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2008:
94. Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, վիճակագրական վերլուծության զեկույց, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2009:
95. Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, վիճակագրական վերլուծության զեկույց, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2010:
96. Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, վիճակագրական վերլուծության զեկույց, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2013:
97. Հայաստանի վիճակագրական տարեգիրք (1997, 1998), Երևան, 2001,
98. Հայաստանի վիճակագրական տարեգիրք (1999, 2000), Երևան, 2001:
99. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 1990թ., Երևան, 1991:
100. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 1991թ., Երևան, 1994,
101. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 1993-1994, Երևան, 1995,
102. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 1995, 1996, Երևան, 1998,
103. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2005, Երևան, 2005,
104. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2010, Երևան, 2010,
105. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2011, Երևան, 2011,
106. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2012, Երևան, 2012,
107. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2013, Երևան, 2013:
108. Հայաստան-ՆԱՏՕ: Առաջընթացի 10 տարիներ 1999-2008 /Կազմող և առաջաբանի հեղինակ Թադևոսյան Ս., Երևան, 2008:
109. Հայկական բանակ, հ. 1-2 (31-32), 2002թ, հ. 3 (37), 2003:
110. Հայկական ժամանակ, օրաթերթ, 2000-2013:

111. Հայոց ցեղասպանություն: Աշխարհի պետությունները, ազգային խորհրդարանները և միջազգային կազմակերպությունները դատապարտում են և ճանաչում: (Նյութերի ժողովածու) (կազմող՝ Բարսեղյան Լ.). Երևան, 2005:
112. Հանրակրթությունը Հայաստանում 2012-2013 ուս.տարում, վիճակագրական տարեգիրք, Երևան, 2013:
113. Հինգ տարի անց. նախագահ Ռ. Քոչարյանի հաշվետվությունը, Երևան, 2003:
114. ՀԽՍՀ Գերագույն խորհրդի տեղեկագիր, № 2 (958), 31 հունվարի 1990թ.
115. ՀԽՍՀ Գերագույն խորհրդի տեղեկագիր, № 3 (959), փետրվարի 1990թ.
116. ՀԽՍՀ Գերագույն խորհրդի տեղեկագիր, № 4 (960). փետրվարի 1990թ.
117. ՀԽՍՀ Գերագույն խորհրդի տեղեկագիր, № 5-6 (961-962), մարտի 1990թ.
118. ՀԽՍՀ Գերագույն խորհրդի տեղեկագիր. №. 7 (987), 15 ապրիլի 1990թ.
119. ՀԽՍՀ Գերագույն խորհրդի տեղեկագիր, № 9 (965). 15 մայիսի1990թ.
120. ՀԽՍՀ Գերագույն խորհրդի տեղեկագիր, № 10 (966), 31 մայիսի 1990թ.
121. ՀԽՍՀ Գերագույն խորհրդի տեղեկագիր, № 11 (967), 15 հունիսի 1990թ
122. ՀԽՍՀ Գերագույն խորհրդի տեղեկագիր, № 12 (968), 30 հունիսի 1990թ
123. ՀԽՍՀ Գերագույն խորհրդի տեղեկագիր, №13 (969), 2 հուլիսի 1990թ.
124. ՀԽՍՀ Գերագույն խորհրդի տեղեկագիր, № 14 (970), 31 հուլիսի 1990թ.
125. ՀԽՍՀ Գերագույն խորհրդի տեղեկագիր, № 15 (971), 23 օգոստոսի 1990թ.
126. ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքները (Հայաստանի Հանրապետության ցուցանիշները), ՀՀ Ազգ. վիճ. ծառայություն, Երևան, 2003
127. ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքները (ՀՀ Արարատի մարզի ցուցանիշները), ՀՀ Ազգ. վիճ. ծառայություն, Երևան, 2003,
128. ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքները (ՀՀ Արմավիրի մարզի ցուցանիշները), ՀՀ Ազգ. վիճ. ծառայություն, Երևան, 2003:

129. ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքները (ՀՀ Արագածոտնի մարզի ցուցանիշները), ՀՀ Ազգ. վիճ. ծառայություն, Երևան, 2003,
130. ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքները (ՀՀ Գեղարքունիքի մարզի ցուցանիշները), ՀՀ Ազգ. վիճ. ծառայություն, Երևան, 2003,
131. ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքները (ՀՀ Լոռու մարզի ցուցանիշները), ՀՀ Ազգ. վիճ. ծառայություն, Երևան, 2003,
132. ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքները (ՀՀ Կոտայքի մարզի ցուցանիշները), ՀՀ Ազգ. վիճ. ծառայություն, Երևան, 2003,
133. ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքները (ՀՀ Շիրակի մարզի ցուցանիշները), ՀՀ Ազգ. վիճ. ծառայություն, Երևան, 2003,
134. ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքները (ՀՀ Սյունիքի մարզի ցուցանիշները), ՀՀ Ազգ. վիճ. ծառայություն, Երևան, 2003,
135. ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքները (ՀՀ Վայոց ձորի մարզի ցուցանիշները), ՀՀ Ազգ. վիճ. ծառայություն, Երևան, 2003,
136. ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքները (ՀՀ Տավուշի մարզի ցուցանիշները), ՀՀ Ազգ. վիճ. ծառայություն, Երևան, 2003,
137. ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքները (ք.Երևանի ցուցանիշները), ՀՀ Ազգ. վիճ. ծառայություն, Երևան, 2003,
138. ՀՀ առևտուրը և մարդկային զարգացում, Միավորված ազգերի զարգացման ծրագիր, Երևան, 2011:
139. ՀՀ Գերագույն խորհուրդ 1990-1995թ.թ., Երևան, 1995:
140. ՀՀ Գերագույն խորհրդի տեղեկագիր, № 18, 30 սեպտեմբերի 1990թ.
141. ՀՀ Գերագույն խորհրդի տեղեկագիր, №.17(973), 15 սեպտեմբերի 1990թ.
142. ՀՀ Գերագույն խորհրդի տեղեկագիր. № 19, 15 հոկտեմբերի 1990թ.
143. ՀՀ գործող օրենքների ժողովածու (1990-1995թթ.), Երևան, 1995:
144. ՀՀ գործող օրենքների ժողովածու (1995-1999թթ.) գիրք Ա, Երևան, 1999:
145. ՀՀ գործող օրենքների ժողովածու (1995-1999թթ.), գիրք Բ, Երևան, 1999:
146. ՀՀ գործող օրենքների ժողովածու (1999-2000թթ.), գիրք Գ, Երևան, 2000:
147. ՀՀ գործող օրենքների ժողովածու (2001թ.) գիրք Դ, Երևան, 2001:
148. ՀՀ գործող օրենքների ժողովածու (2002թ.) գիրք Ե, Երևան, 2003:

149. ՀՀ իրավիճակային վերլուծության զեկույց, Երևան, 2002:
150. ՀՀ կառավարության 2008-2011թթ. գործունեության արդյունքները, Երևան, 2012:
151. ՀՀ կառավարության որոշումների ժողովածու N 1-12, 1991-1996:
152. ՀՀ կրթությունը, աղքատությունը և տնտեսական ակտիվությունը Հայաստանում, Երևան, 2005:
153. ՀՀ հողային օրենսդրությանը վերաբերող իրավական ակտերի ժողովածու, Երևան, 2001:
154. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի զեկույցը, Երևան, 2008:
155. ՀՀ Միջազգային պայմանագրերի ժողովածու 1991-1995թթ., Երևան, 2002:
156. ՀՀ Միջազգային պայմանագրերի ժողովածու 1999-1998թթ., Երևան, 2002:
157. ՀՀ Միջազգային պայմանագրերի ժողովածու 1999-2001թթ., Երևան, 2002:
158. ՀՀ Միջազգային պայմանագրերի ժողովածու. Անկախ պետությունների շրջանակներում կնքված պայմանագրեր, Երևան, 2004:
159. ՀՀ Միջազգային պայմանագրերի ժողովածու. Միավորված ազգերի կազմակերպության շրջանակներում կնքված պայմանագրեր, Երևան, 2004:
160. ՀՀ պաշտոնական տեղեկագիր 3 սեպտեմբերի N 19(52) 1998:
161. ՀՀ պաշտոնական տեղեկագիր N 17(115) 1 օգոստոսի 2000:
162. ՀՀ պաշտոնական տեղեկագիր h. 29 (95) 19 նոյեմբերի 1999:
163. ՀՀ պաշտոնական տեղեկագիր, «ՀՀ քաղաքացիական օրենսգիրք» 17(50), 10 օգոստոսի 1998:
164. ՀՀ պաշտոնական տեղեկագիր, «Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքը», թիվ 21(196), 21 հունիսի 2002:
165. ՀՀ պաշտոնական տեղեկագիր, №. 6, 31 մարտի 1997:
166. ՀՀ պաշտոնական տեղեկագիր, №. 11, 20 մայիսի, 1997:
167. ՀՀ պաշտոնական տեղեկագիր, № 12, 5 հունիսի 1997:
168. ՀՀ պաշտոնական տեղեկագիր, № 12 (45), 15 հունիսի 1998:
169. ՀՀ պաշտոնական տեղեկագիր, № 14, 20 հունիսի, 1999:
170. ՀՀ պաշտոնական տեղեկագիր, № 2 (100), 14 փետրվարի 2000:
171. ՀՀ պաշտոնական տեղեկագիր, №. 23, 28 փետրվարի 2000:
172. ՀՀ պաշտոնական տեղեկագիր, № 1 (176), 9 հունվարի 2001:
173. ՀՀ պաշտոնական տեղեկագիր, № 3 (135), 31 հունվարի 2001:
174. ՀՀ պաշտոնական տեղեկագիր, №. 17 (149), 15 հունիսի, 2001:
175. ՀՀ պաշտոնական տեղեկագիր, № 5 (180), հունվար 2002:

176. ՀՀ պաշտոնական տեղեկագիր, № 55 (230), 17 դեկտեմբերի, № 34 (209), 15 օգոստոսի, 2002:
177. ՀՀ պաշտոնական տեղեկագիր, թիվ 6(181), 5 փետրվարի, 2002, թիվ 3-18, թիվ 32 (207), 8 օգոստոսի 2002:
178. ՀՀ սոցիալական ոլորտի իրավական ակտերի ժողովածու, Երևան 2004:
179. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2003 թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 2004:
180. ՀՀ Վիճակագրական գրքույկ, Երևան, 2001:
181. ՀՀ վիճակագրության պետական ռեգիստրի և վերլուծության պետական վարչություն, զեկուցագիր հ. 1, (ՀՀ տնտեսությունը 1992թ. հունվարին-դեկտեմբերին), Երևան, 1993:
182. ՀՀ վիճակագրության, պետական ռեգիստրի և վերլուծության պետական վարչություն, զեկուցագիր հ. 1, (ՀՀ տնտեսությունը 1993թ. հունվարին-դեկտեմբերին) Երևան, 1994:
183. ՀՀ Տնտեսական աճը, անհավասարությունը և աղքատությունը Հայաստանում, Երևան, 2002:
184. ՀՀ տնտեսական աճն արդարացի բաշխման պայմաններում, Աղքատության կրճատմանն ուղղված տնտեսական քաղաքականության ընտրություն, Երևան, 2002:
185. ՄԱԿ-ի Հանրային տեղեկատվության վարչության երևանյան գրասենյակ. Միավորված ազգերի կազմակերպությունը Հայաստանում 15 տարի. Երևան, 2007:
186. Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան 1995, Երևան, 1995:
187. Մարդկային զարգացման զեկույց Հայաստան, 1996, Երևան, 1996:
188. Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան 1997, Երևան, 1997:
189. Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան 1998, Երևան, 1998:
190. Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան 1999, Երևան, 1999:
191. Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան 2000, Երևան, 2000:
192. Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան 2001, Երևան, 2001:
193. Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան 2004, Երևան, 2004:
194. Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան 2006թ., կրթությունը Հայաստանում, Երևան, 2006:

195. Մեծ Բրիտանիայի խորհրդարանական քննարկումները լորդերի պալատում Հայոց ցեղասպանության մասին (14 ապրիլի 1999թ.) /խմբագիր՝ Բարսեղյան Լ., Երևան 2000թ.:
196. Միացյալ Նահանգների օգնությունը Հայաստանին. Նվիրումի և համագործակցության տասնամյակ, Երևան, 2001:
197. Միգրացիա և մարդկային զարգացում, հնարավորություններ և մարտահրավերներ 2009, Երևան, 2009:
198. Սովետական Միության կոմունիստական կուսակցության 27-րդ համագումարի նյութերը, Երևան, 1986:
199. Սոցիալական բարեփոխումները Հայաստանում, Երևան, 2011:
200. Սոցիալական պետության հայեցակարգեր հայկական իրողություններ և հեռանկարներ, Միջազգային գիտաժողովի նյութեր, փետրվար 2006, Երևան, 2007:
201. Տնտեսական բարեփոխումների առանձնահատկություններն ու փուլերը Հայաստանում 1991-1998թթ.: Վիճակագրական ժողովածու. Երևան, 1999:
202. Ֆինանսներ և էկոնոմիկա, Հայաստան, հ. 3, սեպտեմբեր 2001:
203. Ֆինանսներ և էկոնոմիկա, Հայաստան, հ. 6, Երևան, 2001:
204. Ֆինանսներ և էկոնոմիկա, Հայաստան, 1(21), հունվար, 2003:
205. 2008թ. մարտի 1-2-ին Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների և դրանց պատճառների ուսումնասիրման ՀՀ Ազգային ժողովի ժամանակավոր հանձնաժողովի եզրակացությունը, Երևան, 2008:

Գրականություն
Հայերեն

1. Աբրահամյան Հ., Խորհրդային և հետխորհրդային հասարակությունը, Երևան, 2011:
2. Աբրահամյան Հ., Ժողովրդավարությունը և քաղաքական կուսակցությունները, Երևան, 2009:
3. Աբրահամյան Հր., Մարտնչող Արցախ, գիրք Գ, 1985-2000, Ստեփանակերտ, 2007:
4. Աբրահամյան Հր., Արցախյան գոյամարտ, Երևան, 1991:
5. Աբրահամյան Հր., Երբ հայրենիքը վտանգի մեջ է, Երևան, 1997:
6. Աբրահամյան Հր., Ճակատագրին ընդառաջ, Երևան, 2001:
7. Աբրահամյան Հր., Մկրտչյան Շ., Արցախի համար զոհված դիզակցիներ, Երևան, 2000:

8. Աբրահամյան Հր., ԼՂՀ-ի սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական և մշակութային կյանքը (2000-2008թթ.), Երևան, 2013:
9. Ադրբեջանի հակահայկական տեղեկատվական համակարգը, Երևան, 2009:
10. Ազիզբեկյան Ռ., Հայաստանը վերակառուցումից մինչև անկախություն, համառոտ ակնարկ, Երևան, 1992:
11. Աթայան Ի., Ընդմիշտ քեզ հետ, Ստեփանակերտ, 1995:
12. Ալվրցյան Հ., Ընդդեմ՝ Ադրբեջանի հայատյաց քաղաքականության, Երևան, 2007:
13. Աղասյան Ա., Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում, Երևան, 2009:
14. Աղետի գոտին երեկ և այսօր (շին.վերականգնողական աշխատանքներ) 1989-2008, Երևան, 2008:
15. Աղքատության հաղթահարման ուղիները գյուղում և քաղաքում /Խմբագիր Շահումյան Ա.: Մարդու իրավունքների և ժողովրդավարության ինստիտուտ՝ ՄԻԺԻ, Երևան, 2001:
16. Աղքատությունը և ժողովրդավարությունը Հայաստանում, Երևան, 2000:
17. Անանյան Լ. Հայաստանի տնտեսական պատմության ուրվագծեր, Երևան, 2003:
18. Անանյան Լ., Հայկական ՍՍՀ արդյունաբերությունը զարգացած սոցիալիզմի ժամանակաշրջանում, Երևան, 1982:
19. Առաքելյան Վ., Ազիզյան Գ., Նրանք փառքով անմահացան, Երևան, 1996:
20. Առուստամյան Գ., Իմ սերը քեզ հետ է, ողջեր և նահատակներ, Երևան, 1998:
21. Առուստամով Ս., Ճշմարտությունը Լեռնային Ղարաբաղի մասին, Երևան, 1999:
22. Ասատրյան Ա., ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ-50, Երևան, 2010:
23. Ավագյան Ա., Ղարաբաղյան հակամարտության կարգավորումը և Հայաստանի ռազմավարական անվտանգությունը, Երևան, 1998:
24. Ավագյան Գ., Հայաստանի տնտեսությունը, անցած ուղին, այսօրը և զարգացման ուրվագիծը, Երևան, 1998:
25. Ավագյան Հ. Հայաստանի լեռնահանքային արդյունաբերության զարգացման հիմնախնդիրները, Երևան, 2003:
26. Ավետիսյան Ա., Հայոց ազգային բանակ, Աբովյան, 2001:
27. Արշակյան Ա., Արցախյան գոյապայքար (1985-1992թթ.), Երևան, 2004:

28. Արշակյան Ա., Մահ չիմացյալ՝ մահ, մահ իմացյալ՝ անմահություն, Երևան, 1993:
29. Արտագաղթը Հայաստանից (Խմբ. Հ. Խառատյան). Ազգաբանական հետազոտությունների կենտրոն, Երևան, 2003:
30. Բագրատյան Հ., Հայաստանը դարերի սահմանագծին, Երևան, 2003:
31. Բագրատյան Հ., Հայաստանում առկա քաղաքական ու սոցիալ-տնտեսական իրավիճակի և դրանից դուրս գալու ելքերի մասին, Երևան, 2000:
32. Բագրատյան Հ., Հասարակությունը և պետությունը, Երևան, 1999:
33. Բադալյան Գ., Հայաստան-Իրան հարաբերությունները 20 տարեկան են, Երևան-Թեհրան, 2012:
34. Բալայան Զ., Բժիշկ Մարությանը և նրա «Պատերազմի հետքը երկար է մնում», Երևան, 1999:
35. Բալայան Զ., Դժոխք և դրախտ, Երևան, 1995,
36. Բալայան Վ., Արցախի պատմությունը, Երևան, 2002:
37. Բաղդասարյան Դ., Դիմակայություն, Երևան, 1998:
38. Բայբուրդյան Վ., Իրանի հայ համայնքը. Արդի հիմնախնդիրներ, Երևան, 2013:
39. Բայբուրդյան Վ., Իրանն այսօր, Երևան, 1999:
40. Բարսեղյան Լ., Ֆրանսիան հայոց ցեղասպանությունը օրենսդրությամբ ճանաչած առաջին պետությունն է աշխարհում: Երևան, 2002:
41. Բարսեղյան Լ., Տարեգրություն հայոց ցեղասպանության պաշտոնական դատապարտման և ճանաչման (1915-2000թթ.) Երևան, 2004:
42. Բարսեղյան Լ., Ֆրանսիան հրապարակայնորեն ճանաչում է հայոց ցեղասպանությունը Երևան, 1998:
43. Բեգլարյան Հ., Արցախ-Նամե. Ղարաբաղյան շարժում, գիրք 3-րդ, Ստեփանակերտ, 2006,
44. Բունիաթյան Ա., Արյունոտ օրեր. Մարտակերտ. վավերագրություն, գիրք 1, Երևան, 2000:
45. Գաբրիելյան Մ., Աղքատության հաղթահարման ուղիները գյուղում և քաղաքում, Երևան, 2001:
46. Գաբրիելյան Մ., Հայաստանի Հանրապետության արդի գյուղացիությունը, Երևան, 2001:
47. Գալչյան Ռ., Հորինված պատմություն, Ադրբեջան և Հայաստան. կեղծիքներ ու փաստեր, Երևան, 2010,
48. Գալստյան Հ., Չուղարկված նամակներ, Երևան, 2013:

49. Գալստյան Ս., Հայացք մեր կինոյին, պատմությունը և ներկան, Երևան, 2011:
50. Գեղամյան Ա., Եվրասիական Միությունը մեր ապագան է, Երևան, 2012:
51. Գեղամյան Գ., Ազիզբեկյան Ռ., Հայաստանը 1945-1990-ական թթ., Երևան, 1994:
52. Գրիգորյան Գ., Ղարաբաղյան օրագիր (1988-1992), Երևան, 2005:
53. Դավոյան Ս., Մարկոսյան Ա., Սարգսյան Հ., Վերափոխումները անցումային երկրների տնտեսություններում, Երևան, 2003:
54. Դռնոյան Լ., Երրորդ Հանրապետության ողբերգությունը և աստեղային ժամը, Երևան, 2002:
55. Եղիազարյան Բ., Սարդարյան Լ., Մանթարլյան Ս., Հայաստանի Հանրապետությունում սերտիֆիկատային սեփականաշնորհման հիմնախնդիրների փորձագիտական հետազոտություն (1997թ. հունվար-փետրվար), Երևան, 1997:
56. Եսայան Է., Բույլ նահատակաց, Երևան, 1996:
57. Երևանի պետական համալսարանը Արցախյան գոյապայքարում, կազմեց Ժ. Մանուկյանը, Երևան, 2011:
58. Եվրոպայում անվտանգության համագործակցության կազմակերպություն (ԵԱՀԿ), պատմությունը, գործունեությունը և հեռանկարները, Երևան, 2006:
59. Ջաքարյան Լ., Խորհրդահայ գյուղի մայրամուտը, Երևան, 2007:
60. Թադևոսյան Ա., Աղքատության համակարգային հիմքերը և հաղթահարման ուղիները Հայաստանում, Երևան, 2001թ.:
61. Թադևոսյան Ռ., Դրվագներ հայոց ռազմական պատմությունից XIX-XX դարեր, Երևան, 2012:
62. Թովմասյան Վ., Աթաջանյան Վ., Ներսիսյան Յու., Ղարաբաղյան հարց, Ստեփանակերտ, 1991:
63. Թորոսյան Տ., Լեռնային Ղարաբաղ և Կոսովո. հակամարտություններ, բանակցություններ, աշխարհաքաղաքականություն, Երևան, 2012:
64. Թորոսյան Տ., Հասարակական համակարգի հետխորհրդային տրանսֆորմացիա, Երևան, 2006:
65. Թուրքիա-ԵՄ-Հայաստան, մարտահրավերները և հնարավորությունները, Երևան, 2009:
66. Իսպիրյան Մ., Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պատմություն, Երևան, 2002:
67. Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն (1991 թ. օգոստոս-1992 թ. հունվար) փաստաթղթեր, կազմող՝ պատմ. գիտությունների դոկտոր Աբրահամյան Հ., Երևան, 2011:

68. Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիր, կարգավորման ուղիներ, խորհրդարանական լսումներ, 29-30 մարտի, 2005թ., Երևան, 2006:
69. Լիպարիտյան Ժ., Պետականության մարտահրավերը. Հայ քաղաքական միտքը անկախությունից ի վեր, Երևան, 1999:
70. ԼՂՀ Ազգային Ատլաս, Երևան, 2009:
71. Խաչատրյան Հ., Հայաստանի Հանրապետության առաջին սահմանադրությունը, Երևան, 1977:
72. Խաչատրյան Հ., Ղազարյան Գ., Մարգարյան Ս., Հաղթանակներն ինչպես եղել են. «Ազդականչ 44», Երևան, 2008:
73. Խոջաբեկյան Վ., Աղետ և մտահոգություն, Երևան, 1989:
74. Խոջաբեկյան Վ., Արցախը փորձության ժամին, Երևան, 1991:
75. Խոջաբեկյան Վ., Զբաղվածության հիմնախնդիրները Հայաստանում անցման շրջանում, Երևան, 1998:
76. Խոջաբեկյան Վ., Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX-XX դարերում XXI դարի շեմին, Երևան, 2001:
77. Խոջաբեկյան Վ., Հայաստանի բնակչությունը և նրա զբաղվածությունը (1828-1978), Երևան, 1979:
78. Խոջաբեկյան Վ., Հայկական ԽՍՀ բնակչությունը և աշխատանքային ռեսուրսների վերարտադրության արդի հիմնախնդիրները, Երևան, 1976:
79. Կարապետյան Բ., Անգլուհու արցախյան ոդիսականը, Երևան, 1994:
80. Կարապետյան Բ., Եվ նրա շուրջ., Երևան, 1990,
81. Կիրակոսյան Ա., Մայրամուտի շեմին, Երևան, 2002:
82. Կիրակոսյան Գ., Անցումային տնտեսության վերափոխումները, տեսության հարցեր, Երևան, 2002:
83. Հակոբյան Թ., Կանաչ ու սև, Արցախյան օրագիր, Երևան-Ստեփանակերտ, 2000-2008:
84. Հակոբջանյան Ա., Արցախյան ազատամարտի ակունքների մոտ, Երևան, 2001:
85. Համազասպյան Վ., Ալեք Մանուկյան, Երևան, 1994:
86. Հայագիտության արդի վիճակը և զարգացման հեռանկարները, Երևան, 2004:
87. Հայաստան 1998-2007 (Խմբագիր Վարդանյան Ա.), Երևան 2008:
88. Հայաստան 2020. զարգացման և անվտանգության ռազմավարություն, Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոն, Երևան, 2003:

89. Հայաստանը կայուն մարդկային զարգացման հայեցակարգի տեսանկյունից: Հասարակական կազմակերպությունների գնահատականը («Հանուն մարդկային հասարակության կայուն զարգացման» ասոցիացիա «Ռիո+5»), Երևան, 1997:
90. Հայաստան-Թուրքիա. բաց խոսակցություն (Հասարակական երկխոսություն և զարգացումներ կենտրոն), Երևան, 2005:
91. Հայաստանի Հանրապետության արժեթղթերի շուկայի զարգացման ռազմավարություն, Երևան, 1998:
92. Հայաստանի Հանրապետության կառավարության 2008-2011թթ. գործունեության արդյունքները, Երևան, 2011:
93. Հայաստանի Հանրապետության տրանսպորտը և կապը (1999-2003թթ.), Երևան, 2004:
94. Հայաստանի Հանրապետություն քաղաքական կուսակցություններ: Տեղեկագիր (Քաղաքական և սոցիալական զարգացման հիմնադրամ), խմբ. Մխիթարյան Ս., Անուշյան Մ. և ուրիշներ, Երևան, 2007:
95. Հայ-թուրքական հարաբերություններ.հիմնախնդիրներ և հեռանկարներ, խորհրդարանական լսումներ, 19-20 դեկտեմբերի, 2007թ., Երևան, 2011:
96. Հայկական Սփյուռք տարեգիրք, Երևան, 2009:
97. Հայկական Սփյուռք տարեգիրք, Երևան, 2010:
98. Հայկական Սփյուռք տարեգիրք, Երևան, 2011:
99. Հայոց պատմություն, Դասագիրք բուհերի համար, խմբագրությամբ պրոֆեսոր Հր. Սիմոնյանի, Երևան, 2012:
100. Հայության պայքարը ԼՂԻՄ-ը Խորհրդային Հայաստանի հետ միավորելու համար (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), կազմողներ՝ Խաչատրյան Կ., Աբրահամյան Հ., Երևան, 2011:
101. Հայրիկյան Պ., Անկախության ճանապարհի երեք վավերագրեր, Երևան, 1997:
102. Հայրիկյան Պ., Ժողովրդավարությունը խոսքով և գործով, Երևան, 2002:
103. Հայրիկյան Պ., Սեպտեմբեր, Երևան, 1997:
104. Հարությունյան Կ., Դավթյան Ն., Կրթությունը Հայաստանում, Երևան, 2004:
105. Հարությունյան Ս., Անցյալի և ներկայի մասին, Երևան, 2011:
106. Հարությունյան Ս., Վալերի Չիթչյան. Հաղթական հրամանատարը, Երևան, 2012:
107. Հինգ տարի անց, նախագահ Ռ. Քոչարյանի հաշվետվությունը, Երևան, 2003:
108. ՀՀ արժեթղթերի շուկա. ՀՀ արժեթղթերի շուկայի տեսչության տեղեկագիր, 1998:

109. ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, Հայությունը սկանդինավյան երկրներում. հայ-սկանդինավյան պատմամշակութային առնչությունները, Երևան, 2010:
110. ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիան 70 տարում, Երևան, 2013:
111. Հովհաննիսյան Ն., Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունը Անդրկովկասյան-Մերձարևելյան աշխարհաքաղաքական տարածաշրջանում, Երևան, 1998:
112. Հովսեփյան Ս., ՀՀՇ-ն և հայ ժողովրդի մեծ ողբերգություն, Երևան 2002:
113. Ղահրամանյան Կ., Արցախ. Խեղաթյուրված և անտեսված հարցեր, Երևան, 2013:
114. Ղահրամանյան Կ., Հյուսիսային Արցախ, գոյության պայքար, գիրք Բ, Երևան, 2003:
115. Ղարաբաղյան ազատագրական պատերազմ (1988-1994 թթ.), հանրագիտարան, Երևան, 2004:
116. Ղարիբյան Գ., Արթուրը: Արծվի թռիչք էր նա, Երևան, 1999:
117. Մամիկոնյան Հ., ՀՀ գյուղատնտեսական արտադրության զարգացման հիմնախնդիրները, Երևան, 1997:
118. Մանասերյան Թ., Նոր տնտեսական քաղաքականության ուրվագծեր, Երևան, 2000:
119. Մանասերյան Ն., Ագրարային հարցը երեկ և այսօր, Երևան, 2005:
120. Մանուկյան Վ., Գնացքից թռչելու ժամանակն է (հոդվածների ժողովածու), Երևան, 2002:
121. Մանուկյան Վ., Հայկական երազանքը գոյատևման փակուղում, Երևան, 2002:
122. Մարգարյան Ն., Մարդու իրավունքների պաշտպանությունը և ժողովրդական արժեքների դերը աղքատության հաղթահարման գործում, Երևան, 2001:
123. Մարգարյան Ս., Մարտակերտը չհայտարարված պատերազմի կիզակետ (փաստագրություն), Ստեփանակերտ, 1999:
124. Մարկոսյան Ա., Գեղամյան Ն., Սոցիալական քաղաքականության պետական կարգավորման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում, Երևան. 2006:
125. Մարկոսյան Ա., Հայաստանը 21-րդ դարի մարտահրավերների առջև. Երևան, 2004:
126. Մարկոսյան Ա., Մաթևոսյան է., Տնտեսության պետական կարգավորման միջոցներն ու ձևերը, Երևան, 2001:

127. Մարկոսյան Ա., Պետական ձեռնարկությունների ապապետականացման կառավարում, մեթոդաբանություն, ռազմավարություն և արդյունքներ, Երևան, 1997:
128. Մարկոսյան Ա., Պետությունը և շուկան, Երևան, 2000:
129. Մարկոսյան Ա., Սաֆարյան Ռ., Շուկայական տնտեսության հիմունքները, Երևան, 2002:
130. Մարկոսյան Ա., Սեփականաշնորհման և ապապետականացման գործընթացը, տեսության և պրակտիկայի հարցեր, Երևան, 1995:
131. Մարկոսյան Ա., Սեփականաշնորհման սերտիֆիկատների մասին, Երևան, 1995:
132. Մարկոսյան Ա., Տնտեսագիտության բոլորի համար, Երևան, 2001:
133. Մարտիկյան Գ., Ապրելու բանաձև, գիրք 1-6, Երևան, 2012, 2013:
134. Մարտիկյան Գ., Սա Հայաստանն է, և վերջ. Լեոնիդ Ազգալդյան, Երևան, 2012:
135. Մելիքյան Ս., Հայաստանի Հանրապետություն-Ամերիկայի Միացյալ Նահանգներ հարաբերությունները 1991-2000թթ., Երևան, 2010:
136. Մելիք-Շահնազարյան Լ., Ադրբեջանի ռազմական հանցագործությունները Լեռնային Ղարաբաղի Հանրապետության խաղաղ բնակչության դեմ, Երևան, 1988:
137. Մելքոնյան Ա., Հայաստանի պատմության և ժողովրդագրության հիմնահարցեր (հոդվածների ժողովածու), Երևան, 2011:
138. Մելքոնյան Ա., Հայոց պատմության դասերն ու պատգամները, Երևան 2013:
139. Մելքոնյան Է., Հայկական բարեգործական ընդհանուր միության պատմություն, Երևան 2005:
140. Մելքումյան Ա., Աշխատանքի շուկայի ձևավորման և զբաղվածության հիմնախնդիրները, աղքատության հաղթահարման ՀՀ ռազմավարությունը, Երևան, 2002:
141. Մելքումյան Ս., Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, Երևան, 1997:
142. Մելքումյան Ս., Հայաստանի Հանրապետության արտաքին տնտեսական կապերը, Երևան, 2002:
143. Միգրացիա և մարդկային զարգացում. Հնարավորություններ և մարտահրավերներ, Մարդկային զարգացման ազգային զեկույց 2009թ., Հայաստան, 2009:

144. Մինասյան Է., Արցախյան ազատագրական շարժումը և «դեպի երկիր» կարգախոսը, ՀՅԴ հիմնադրման 115 և 120-ամյակներին նվիրված գիտաժողովների նյութեր, Երևան, 2011:
145. Մինասյան Է., Արցախյան ազատամարտի պատմության ուսումնասիրության վիճակն ու արդի խնդիրները, Լրատու, Ստեփանակերտ, 2012, N 2(13), էջ 72-85:
146. Մինասյան Է., Արցախյան շարժման և ԼՂՀ պատմության կեղծարարությունն ու նենգափոխումը ադրբեջանական գրքերում, Միջազգային գիտաժողովի (Խաղաղ Կովկասի տարածաշրջանի զարգացման գործոն) (1991-2011թթ.) նյութեր, Երևան, 2011, էջ 4-22:
147. Մինասյան Է., Բաքվի 1990թ. հունվարյան ջարդերը և դրանց իրավաքաղաքական գնահատականը, «Տարեգիրք Բ», Երևան, 2010:
148. Մինասյան Է., Հայ առաքելական եկեղեցին անկախության վերականգնման և հանրապետության կայացման ժամանակաշրջանում, «Տարեգիրք Գ», ԵՊՀ Աստվածաբանական ֆակուլտետ, Երևան, 2008,
149. Մինասյան Է., Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության հարաբերությունները (1991-2001թթ.), «Պատմություն և մշակույթ», հայագիտական հանդես, Ա, Երևան, 2011:
150. Մինասյան Է., Հայ-բուլղարական հարաբերությունները ՀՀ անկախության շրջանում (1991-2008 թթ.), «Հայ-բուլղարական հարաբերություններ. անցյալը, ներկան և ապագան», միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, 2009:
151. Մինասյան Է., Հայոց ցեղասպանության ճանաչման միջազգային նոր փուլի առանձնահատկությունները, «Պատմություն և մշակույթ», հայագիտական հանդես, Ա, Երևան, 2011:
152. Մինասյան Է., Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացները վերջին չորս տասնամյակում, Մեծ եղեռն-90, Հանրապետական գիտական նստաշրջանի նյութեր, Գյումրի, 2005:
153. Մինասյան Է., Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը, Հայոց մեծ եղեռն 90, հոդվածների ժողովածու, Երևան 2005,
154. Մինասյան Է., Սոցիալ-տնտեսական վերափոխումները Հայաստանի Հանրապետությունում (1990-2003թթ.), Երևան, 2003:
155. Մինասյան Է., Վարդանյան Ա., Հայրենիք-Սփյուռք առնչությունները ՀՀ անկախության տարիներին (1991-2009թթ.), Ստեփանակերտ, 2010:

156. Մինասյան Է., Վարդանյան Ա., ՀՀ ներքին դրությունը, տնտեսական վիճակը (2001-2011 թթ.), Լրատու, Ստեփանակերտ, 2012:
157. Միրզոյան Վ., Սարգսաշեն, Ստեփանակերտ, 1997:
158. Մկրտչյան Ա., Ի՞նչ է տեղի ունեցել Հադրութում, Երևան, 1992:
159. Մկրտչյան Լ., Արցախ-Ղարաբաղը իր անցյալով և ներկայով, Աթենք, 1988:
160. Մկրտչյան Հ., Հողային հարաբերությունները և արդի ագրարային քաղաքականության հիմնական ուղղությունները ՀՀ-ում, Երևան, 1977:
161. Մկրտչյան Շ., Արցախ, Երևան, 1991:
162. Մոսեսովա Ի., Հովնանյան Ա., Բաքվի ջարդերը, Երևան, 1992:
163. Մովսիսյան Վ., Հողի ճակատագրով. Մտորումներ տքնության, Երևան, 2001:
164. Մուսայելյան Բ., Հանուն Արցախի և հայրենի Մարտունու, Ստեփանակերտ, 1998:
165. Նանագուլյան Ս., Արծիվները բարձունք են տենչում, գիրք Ա, Բ, Գ, Երևան, 1992, 1993:
166. Նանագուլյան Ս., Շահեն, Երևան, 1993:
167. Չաքրյան Հ., Ղարաբաղյան հիմնահարցը հայ-թուրքական հարաբերությունների համատեքստում, Երևան, 1998:
168. Պատմություններ աղքատության մասին, գիրք I, Երևան, 2001, գիրք II, Երևան, 2007:
169. Պետրոսյան Ա., Արթուր Մկրտչեան, Երևան, 2004:
170. Պետրոսյան Ռ., Արցախ, պատերազմ, զինադադար, Երևան, 2001:
171. Պետրոսյան Ռ., Արցախի պաշտպանության դիրքերում, Երևան, 1997:
172. Պետրոսյան Ռ., Մեծն Շահեն, Երևան, 2011:
173. Պետրոսյան Ք., Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները 1988-2001թթ., Երևան, 2011:
174. Պողոսյան Գ., Բնակչության վերաբերմունքը Հայաստանում ընթացող տնտեսական բարեփոխումների նկատմամբ: «Հայաստանի տնտեսությունը» 20 մարտի, 2000:
175. Պողոսյան Գ., Հայ հասարակությունը 21-րդ դարասկզբին, Երևան, 2006:
176. Պողոսյան Է., Անկախ պետականության հաստատման գործընթացը Հայաստանում (1990-2001թթ.), Երևան, 2013:
177. Սահակյան Ռ., Արծվապաշտ երկիր, Փաստագեղարվեստական, Երևան, 2004,
178. Սարգսյան Հ., Անտոնյան Ք., Խաչատրյան Կ., Միգրացիայի միտումներ, հետևանքներ, Երևան, 2013:

179. Սարգսյան Հ., Հարությունյան Խ., Մանասյան Վ., Ագրարային հատվածի և գյուղի կայուն զարգացման սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները, Երևան, 2011:
180. Սարգսյան Հ., Տնտեսական քաղաքականությունը Հայաստանում, պետության դերը, Երևան, 2001:
181. Սարգսյան Վ., Սամցխե-Ջավախք-Թռեխք, Հայ-վրացական հարաբերությունների հոլովույթում, Երևան, 2006:
182. Սարգսյան Ֆ., Կյանքի դասերը, հ. 1, Երևան, 2013:
183. Սարգսյան Ֆ., Հոդվածներ, հ. 2, Երևան, 2013:
184. Սարգսյան Ֆ., Հուշեր, հ. 3, Երևան, 2013:
185. Սարդարյան Կ., Պետական սկիզբ և ազգային շարունակություն, Երևան, 1999:
186. Սարուխյան Ն., Լեռնային Ղարաբաղի Ինքնավար մարզը 1960-1988 թթ., Երևան, 2008:
187. Սաֆրաստյան Ռ., Հնարավոր չէ 21-րդ դարում պատնեշներ ստեղծել հարևանների միջև, Երևան, 2003:
188. Սերտիֆիկատային սեփականաշնորհման հիմնախնդիրների փորձագիտական հետազոտություն (1997թ. հունվար-փետրվար), Երևան, 1997:
189. Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, հանրապետական գիտաժողովի նյութեր, Երևան, 2007:
190. Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, հանրապետական գիտաժողովի նյութեր, Երևան, 2008:
191. Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, հանրապետական գիտաժողովի նյութեր, Երևան, 2009:
192. Սոցիալ-տնտեսական վերափոխումները Հայաստանի Հանրապետությունում անկախության 10 տարիներին (գիտական հոդվածների ժողովածու), Հայաստանի Հանրապետության 10 և տնտեսագիտական հետազոտությունների ինստիտուտի 35-ամյա հոբելյաններին նվիրված գիտաժողովի նյութեր (հոկտեմբեր 2001թ.), Երևան 2002:
193. Ստուպիշին Վ., Իմ առաքելությունը Հայաստանում 1992-1994թթ., Հուշեր, Երևան, 2005:
194. Սուվարյան Յու., Ռազմավարական կառավարում, մեթադաբանությունը և արդի հիմնահարցերը, Երևան, 1996:
195. Տարածքային կառավարման արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները ՀՀ-ում, հանրապետական գիտաժողովի նյութեր, Երևան, 2009:

196. Տարեգիրք 2012թ., ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետ, Երևան, 2013:
197. Տեղական ինքնակառավարման բարեփոխումները Հայաստանում (1996-2004թթ.), քաղաքականության տարբերակները և ուղիները, գիրք 1, Դ. Թումանյանի խմբագրությամբ, Երևան 2004:
198. Տեղական ինքնակառավարման բարեփոխումները Հայաստանում (2004-2006թթ.), գիրք 2, Դ. Թումանյանի խմբագրությամբ, Երևան, 2008:
199. Տեղական ինքնակառավարման բարեփոխումները Հայաստանում (2007-2008թթ.), գիրք 3, Դ. Թումանյանի խմբագրությամբ, Երևան, 2009:
200. Տեղական ինքնակառավարման բարեփոխումները Հայաստանում (2009-2010թթ.), գիրք 4, Դ. Թումանյանի խմբագրությամբ, Երևան 2011:
201. Տնտեսական վերափոխումները անցումային շրջանում, տեսություն և արդյունքներ, խմբագրական կոլեգիա, Աղանբեգյան Ա., Մկրտչյան Մ., Գևորգյան Մ., Երևան, 1999:
202. Ուլուբաբյան Բ., Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, Երևան, 1994:
203. Ուլուբաբյան Բ., Արցախյան գոյապայքարի տարեգրություն, Երևան, 1997:
204. Փաշայան Ա., Հարությունյան Լ., Ծոցի արաբական երկրների հայ համայնքները. Արդի հիմնախնդիրներ, Երևան, 2012:
205. Փաշայան Ա., Հարությունյան Լ., Սիրիայի հայ համայնքը. Արդի հիմնախնդիրներ, Երևան, 2011:
206. Փափազյան Վ., ՀՀ արտաքին քաղաքականության հիմնական ուղղություններն ու գերակայությունները, տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 18 սեպտեմբերի, 1996:
207. Քեռյան Գ., Հայաստանի երրորդ հանրապետության կուսակցության համակարգը և քաղաքական կուսակցությունները, Երևան, 1996:
208. Քեռյան Գ., Քաղաքական կուսակցությունների տիպաբանությունը, Երևան, 2002:
209. Քոթանյան Մ. Շուկայական էկոնոմիկա, Երևան, 1998:
210. Քոթանջյան Հ., Անվտանգության քաղաքագիտական պրոբլեմներ. ԽՍՀՄ վերակառուցում - Ղարաբաղ, Հայաստան, Անդրկովկաս-Աֆղանստան, Երևան, 2009:
211. Օհանյան Ս., 21-րդ դարի բանակը, Երևան 2011:
212. Օհանյան Ս., Հայկական բանակի 20-ամյա տարեգրությունը, Երևան, 2012:

213. Օսկանյան Վ., Անավարտ տասնամյակ. ելույթների ընտրանի, Երևան, 2009:
214. Օսկանյան Վ., Անկախության ճանապարհով, Երևան, 2013:
215. Ֆահրադյան Հ. Ագրարային արմատական վերակառուցումներ, անհրաժեշտություն, արդյունքներ և խնդիրներ ՀՀ-ում, Երևան, 2003:

Օտարալեզու (ռուսերեն, անգլերեն) գրականություն

1. Агабабян А., (составитель) Всесоюзные газеты о проблеме Нагорного Карабаха, библиография на русском языке (1988-1991 гг.), Ереван, 2010.
2. Аграрная политика в развивающихся странах Азии и Африки, М., 1975:
3. Азербайджанская аргументация и ее опровержение, Ереван, 1989.
4. Амбарцумян С., Размышения о науке в Армении, Ереван, 2005.
5. Аналитический журнал, "Рынок капитала в Армении", № 7,8 (65, 66), 2001:
6. Ананян Ж., Хачатрян В., Армянские общины России, Ереван, 1993,
7. Анексия и депортация, Степанакерт, 1998.
8. Армения: проблемы независимого развития (под ред. Е. Кожокина), Российский институт статистических исследований, М., 1998:
9. Арутюнян В., События в Нагорном Карабахе: Хроника, Часть 1. Февраль 1988г.-Январь 1989г., Ереван, 1990.
10. Арутюнян В., События в Нагорном Карабахе: Хроника. Часть 3. Январь-декабрь 1990 г., Ереван, 1990.
11. Арутюнян В., Собития в Нагорном Карабахе: Хроника, Часть 4: январь 1991г.-яанварь 1993г., Ереван, 1994.
12. Арцах-Карабах, библография на русском языке (1988-2010 гг.), Составители Симонян А., Бабаян Э., Ереван, 2011.
13. Бабаян И., Воеводский К., Карабахский кризис, Санкт-Петербург, 1992,
14. Багратян Г., Земельная реформа вопросы теории и практики, Ереван, 2003:
15. Барсегов Ю. Народ Нагорного Карабаха-субЪект права на самоопределение, Москва, 1993.
16. Вермишева С., Депортация населения армянских сел НКАО и прилегающих районов: апрель-июнь 1991 года, Ереван, 1995:

17. Геноцид армян в Азербайджане, Степанакерт, 1998.
18. Григорян В., История Армянского бесовства, Ереван, 2002:
19. Григорянц В., Армяне Средней Азии, История, современное положение, перспективы, Ереван, 1994, Арутюнян Ю. Об армянской диаспоре в России, Ереван, 2011,
20. Григорянц В., Возрождение армянской общины Крыма: достижения и проблемы, Симферополь, 2004,
21. Демоян Г., Мелик-Шахназарян Л., Ходжалинское дело: Особая папка, Ереван, 2003.
22. Демоян Г., Карабахская драма: Скрытые действия, Ереван, 2003.
23. Дневник судебного процесса о преступлениях против армянского населения Сумгаита, Степанакерт, 1998.
24. Заключение комитета Верховного Совета РСФСР по правам человека по итогам слушаний, посвещенных конфликтам в ряде районов Азербайджанской республики и республики Армения (конец апреля-мая 1991 года), Ереван, 1992.
25. Золян С., Нагорный Карабах: проблема и конфликт, Ереван, 2002.
26. Иванов Э., Армения: особенности экономических отношений с Россией и перспективы их развития, Москва, 2001:
27. Ильин С.С, Бабанов А.М., Крестьянское фермерское хозяйство и рынок, Москва, 1995:
28. Казакевич И., Аграрный вопрос в Южной Корее, Москва, 1964:
29. Керолайн К., Айбнер Джон, Этническая чистка продолжается. Вайна в Нагорном Карабахе, Ереван, 1998.,
30. Курс переходной экономики (под редакцией академика Л.И. Абалкина), Москва, 1997:
31. Манасян А., Карабахский конфликт: ракурсы правового подхода, Ереван, 1997:
32. Манов В., Реформы в пост-социалистическом обществе, Москва, 2000:
33. Марутян В., У войны долгий след (Записи военврача), Ереван, 1996.
34. Мелик-Шахназарян Л., Военные преступления Азербайджана против мирного населения Нагорно-Карабахской республики. факты и комментарии, Ереван, 1992.
35. Мелик-Шахназарян Л., Гандзак неутраченный мир (воспоминания очевидца), Степанакерт, 1996.
36. Нагорный Карабах в 1918-1923 гг.,
37. Нагорный Карабах и вокруг него. Глазами независимых наблюдателей, Ереван, 1991.

38. Нагорный Карабах, весна-осень 1990, Документы и материалы, Ереван, 1990,
39. Нагорный Карабах. Историческая справка, Ереван, 1988.
40. Новая Евразия: Россия и страны ближнего зарубежья, сборник статей 11, (под редакцией, Е.М. Кожокина), Москва, 2001:
41. Об армянской диаспоре в России, (Етносоциологическое исследование армян Москвы и Краснодара), Ереван, 2011.
42. Оганесян С. и др."Системи здравоохранения в переходный период, Армения, 2001г. Европейская обсерватория по системам здравоохранения, 2001:
43. Основные показатели по государстяам Содружества, Статкомитет СНГ, Статический ежегодник Южно-Кавказских стран, 2001.
44. Развитие рынка ценных бумаг в России,, Третий аналитический доклад Федералная комиссия по рынку ценнйх бумаг, Москва, 1997.
45. Реструктуризация промышленности в европейских странах с переходной экономикой (накопленный опыт и перспективы), М., 2002:
46. Рыжков Н., Перестройка, История предательств. Москва,, 1992:
47. Российский статистический ежегодник, статистический сборник, Москва, 1994:
48. Сахаров А., О Нагорном Карабахе, Ереван, 1996:
49. Серова Е., Хромова И., Карлова Н., Тихонова Т., Аграрная реформа в странах с переходной экономикой, Москва, 2000:
50. Содружества независимых государств в 1995 году, статистический ежегодник, Москва, 1996:
51. Социальная политика: Учебник, под общ. ред. Н.А. Болгина, Москва, 2002:
52. Статус Нагорного Карабаха в политико-правовых документах и материалах, Ереван, 1995:
53. Ступишин В., Карабахский конфликт, 1992-1994, Москва, 1998.
54. Тер-Саркисян А., Худавердян В., Армянская диаспора Юга России, Москва, 1993:
55. Труд в СССР. Финансы и статистика. 1988:
56. Улубабян Г., Золян С., Аршакян А., Сумгаит... Геноцид... Гластность, Ереван, 1989,
57. Ходжабекян В., Асатрян В., Демографические аспекты урбанизации в Армянской ССР, Ереван, 1990:
58. Ходжабекян В., Вазе Ю., Шефер Р., Демографические проблемы и воспроизводство трудовых ресурсов, Ереван, 1983.

59. Чальян М., Освещение Арцахского движения в армянской англоязычной прессе США (февраль 1988-август 1990 гг.), Ереван, 2006,
60. Чобанян С., Государственный терроризм, Геноцид армян 1988-1991 гг., Ереван, 1992.
61. Этническая принадлежность в политическом и общественном дискурсе современного Азербайджана, по примеру антиармянских материалов, Ереван, 2004.
62. 10 лет содружества независимых государств (1991-2000) статистический сборник, М., 2001:
63. Demoyan H., Melik-Shahnazaryan L., The KHOJALU CASE: A SPECIAL DOOSSIER, Yerevan, 2004:
64. Insurance research Leter, September, 1999.
65. „Small enterprises development, management, and extension,, Sedme N3.1999, A.Salnazaryan "Establishment of Capital Market in the RA".

ԷԴԻԿ ԳԱՐԵԳԻՆԻ ՄԻՆԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԲՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Խմբագիր՝ Հ. Բ. Պետրոսյան
Համակարգչային ձևավորումը՝ Ա. Վարդանյանի
Սրբագրիչ՝ Ա. Վարդանյան

Թուղթը՝ օֆսեթ, 60X84, 1/16, 39 տպ. մամուլ,
տպաքանակը՝ 300 օրինակ,
ԵՊՀ հրատարակչություն

Տպագրված է Գասպրինտ տպագրատանը:
Բուզյանդի 1/3